

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵԼԱԶԱՆԵԸ, ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՐՉԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆԿԱԿՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru



www.freebooks.do.am


www.freebooks.am



ՊԼՈՒՏԱՐԹՈՍ



ԵՐԿԵՐ



ՊՍԳ ՄԿ(Ո)Ց

◆ 700

Ռուսերենից թարգմանեց

ՀԱՄՈ ՀԱՐՅԱՆԸ

4704010000

• $\frac{701(01)-88}{42-07}$

ISBN 5 540 00529 5

© Художественная литература 1983

© Քարգմանկաթ է հայերեն «Հայաստան» հրատարակչի թյուն, 1983



Պլուտարքոսի կյանքի ու ստեղծագործությունը

Պլուտարքոսի կենսագրությունը ի իստ աղբատիկ է և կարող է ո սումնասիրվել առավելապես հենց իր Պլուտարքոսի երկերի հի ման վրա որոնցում նա ընթերցողին հաճախ հուշեր է պատմում իր կյանքից:

Նախ սսույզ շգիտենք նրա կյանքի տարիները և դրանց մասին պատկերացում կարելի է ստանալ միայն կողմնակի տվյալներից: Այդ կողմնակի տվյալների համաձայն կարելի է լիակատար վստա հույժյամբ պնդել, որ Պլուտարքոսը ծնվել է մ թ. I դարի 40-ական թվերին և մահացել 120—125 թթ այսինքն ադրել է մոտ 75 տարի: Նրա հայրը անկասկած ունեոր է եղել, բայց ոչ րիստոկրատ: Նա որոշ կրթություն է ունեցել և նույնիսկ պրաղվել է փիլիսոփայությունը: Դա Պլուտարքոսին հնարավորություն է տվել վաղ տարիքից սկսել դպրոցական պարապմունքները և տակավին պատանի հասակում դառնալ բարձրակիթ մարդ: Զլինելով արիստոկրատ Պլուտարքոսը իր տոհմի ծագումը շէր հասցնում մինչև խոր անցյալը և իր նախնիներից ոչ մեկին նշանավոր հերոս շէր դարձնում Հայանի է միայն, որ նրա նախապապը ականասուն է Էդել Անտոնիոսի զինվորների դաժանությունների՝ Օկտավիանոսի դեմ այդ առաջնորդի մղած պայքարում: Իսկ թե ինչ պաշտոն է ո նեցել այդ նախապապը, անհայտ է: Ըստ երևույթին Պլուտարքոսի ամբողջ տոհմը միշտ պատկանել է կրթված մարդկանց դասին նրանց, ովքեր, սիրել են գրականություն, առասպելաբանություն և դանազան ավանդություններ ու լեդենդներ: կապված ինչպես ընդհանուր առմամբ Հունաստանի ո Հռոմի պատմության այնպես էլ մասնավորապես Պլուտարքոսի հայրենի քաղաք Քերոնեայի պատմության հետ:

Այդ փոքր քաղաքը Քերոնեան միշտ էլ բավականին հետ ընկած ո քիչ հայտնի մի վայր էր եղել: Բայց գտամական մի տարեթի

շնորհիվ այս խորրիկ քաղաքը հուսկվեց լնդմիշտու Բւնն այն է որ 388 թ մ. թ. ա. հուլնեթի ու մակեդոնացիների միջև Քերոնե կալի մտտ տեղի ունեցավ այն նշանավոր հակառակարտը որի հետե վանքով հուլնեթը վերջնական պարտութուն կրեցին, և Հունաստանը առ միշտ մնաց մակեդոնացիների ու նրանց հաջորդած տիրակալների հպատակութան տակ, Հունական մարդ Վեովտիան, որանդ գտնվում էր Քերոնեան, երբեք հոշակված չի եղել իր մշակութով կամ ազնիվ արքերով: Այն բնակեցրած էութացիները միշտ այրի են քնկել բարոյական առումով մեծ ազատությամբ, անգստությամբ ու զգոյական կյանքի նկատմամբ հակումով, ինչպես և կոպտությամբ ոգաժանությամբ: Պետք է ենթադրել, որ Պլուտարքոսի մանկության կուլտուրական պայմաններն ու նրանց ընտանիքի բարքերի խստությունն էին պատճառը, որ Պլուտարքոսը դարձել էր իրեն շրջապատող հասարակայնության այդ բացասական կողմերից բավականին հեռու մի մարդ և նույնիսկ ուղղակի բարոյախոս որն ակտիվորեն պայքարում էր նման գծերի դեմ:

Պլուտարքոսի պատանեկությունից մեզ հասել է միայն մեկ միջադեպ, որը մեծ հոշակ է ստացել, բայց չի ունեցել նշանակալից հետևանքներ: 66—67 թ լերին Ներոն կայսրը եկել է Հունաստան և Գելլիքում ներկա է եղել այն կրոնափրիստիայական գլուխներին որոնց մասնակցում էր Պլուտարքոսի ուսուցիչ Ամոնիոսը, իսկ վերջինիս հետ նաև Պլուտարքոսը: Փրիստիան իր ողջ կյանքի ընթացքում հիշում էր Հունաստանին լիակատար ազատութուն տալու վերաբերյալ Ներոնի որոշումը, որի հետևանքով առանձին մարդերում ու քաղաքներում նորից սկսել էր եռալ հասարակական կյանքը հունական դասականության վաղուց անցած ժամանակների ոճով: Ըլշտ է ներոնյան այդ հանդիսավոր «ազատագրումը» դուրս եկավ դատարկ ազմկարարություն, որովհետև շուտով այն ամբողջովին վերացվեց Վեսպասիանոսի կողմից, որը վախենում էր թե այդպիսի ֆանտաստիկ ազատությունները կհանդեցնեն Հռոմի համար անշահավետ քաղաքական հետևանքների: Ներոնի՝ Հունաստանում եղած ժամանակաշրջանում Պլուտարքոսն արդեն ամենաքիչը 16—17 տարեկան էր:

Խոսելով Պլուտարքոսի կյանքի վաղ շրջանի մասին կարելի է հիշատակել նաև նրա երկու եզրայրներին, որոնց նա ջերմորեն սիրում էր նր նցից մեկը նույնիսկ Արխաոտելյան դպրոցի փրիստիա էր Եզրայրական սիրո թեմային Պլուտարքոսն իր ժամանակին մի ամբողջ տրակտատ է նվիրել: Եվ ընդհանրապես թե՛ վաղ շրջանի, թե՛ հասուն թե՛ ձեր Պլուտարքոսի մասին բոլոր տեղեկությունները կլում են հույժ լսեմ բնույթ որը ժամանակակից հետազոտող-սկեսպտիկի վրա կարող է նույնիսկ ինչ-որ միտումնավորության կամ շափազանցվածության տպավորություն թողնել: Նրա ընտանիքի բոլոր ներկայացուցիչները անպայմանորեն կրթված են

ու կոլտուրական անպայմանորեն ողով բարձր են և աչքի են ընկնում անբասիր վարքով իր կնոջ Տիմոքսենեի մասին Պլուտարքոսը հաճախ է խոսում իր երկերում և միշտ արտահայտվում ամենաբարձր տոնով: Նա ոչ միայն սիրող կին է եղել այլև նրան զգվանք են պատճառել կանացի գանազան թուլությունները, ինչպիսիք զգեստներն են, թեև հենց այդ զգեստներն էլ այն ժամանակվա կանանց համար ընդունված էին հագնել տաճարներ գնալիս, զօհարերուֆյոս ներ կատարելիս և թատրոն հաճախելիս: Նրան սիրում էին իր պարզ բնավորության, վարքի բնականության իր չափավորության և ուշադիր վերաբերմունքի համար:

Պլուտարքոսը շորս տղան է ունեցել ու մեկ աղջիկ որը, ինչպես և տղաներից մեկը, մահացել է մանուկ հասակում: Պլուտարքոսն այն քան է սիրել իր ընտանիքը, որ նրա անդամներին նույնիսկ իր երկերն է նվիրել, իսկ դստեր մահվան ատթիվ նա մի քնքուշ ու վսեմ մխիթարական ուղերձ է հղել իր կնոջը: Զարմանալի չէ, որ Պլուտարքոսի կինը ինչպե՛ս և նա ինքը, նույնպես հազորդակից է եղել Դիոնիսոսի խորհուրդներին: Եվ բնդհանրապես Պլուտարքոսի ընտանեկան հարաբերությունների մասին տեղեկություններն այնչափ վսեմ են, որ կարելի է հավատալ Պլուտարքոսի այն խոսքերին, թե կնոջ հետ սմբողջ կյանքում որևէ վեճ չի ունեցել:

Խոսվում է Պլուտարքոսի բազմաթիվ ճանապարհորդությունների մասին, որոնք անկասկած բնորոշել են նրա առանց այդ էլ ընդարձակ մտահորիզոնը: Այն, որ Պլուտարքոսը, որպես գիտության ու փիլիսոփայության ներկայացուցիչ, յիշում էր Ալեքսանդրիայում իր ժամանակվա կրթության կենտրոնում, որ հավաքվում էր մի մեծ գիտուն հասարակություն ինքնին պարզ է: Եվ այն որ այնպիսի բոցաշունչ հայրենասերը ինչպիսին Պլուտարքոսն էր կրթություն էր ստանում Նաև Աթենքում, սա նույնպես միանգամայն բնական է Աթենքում նա շատ անգամ է եղել և նույնիսկ մեծարվել է Ատտիկայի Անոնգյան Փիլալի քաղաքացիությանը: Նա քիչ էր մնում նույնիսկ Պլատոնյան ակադեմիայի ղեկավարը դառնար: Նա լինոմ էր նաև էլևսիսում՝ Աթենքի նշանավոր արվարձանում որտեղ կատարվում էին ողջ հունական աշխարհում հանրահայտ միտտերիաները: Լինում էր նա, Իճարկե, և Սպարտայում, որն այն ժամանակվա պատմաբանի համար հարուստ էր իր ավանդույթներով ու ավանդություններով և Պլատոնյան, որտեղ արդեն մի քանի հարյուրամյակ անցվում էր հույների նշանավոր հաղթանակը պարսիկների դեմ, և՛ Կորնթոսում՝ Թերմոպիլեի մոտ: Երկու սեզամ նա եղել է Հառմաում, որտեղ ի միջի այլոց, հրապարակաչին դասախոսություններ է անկարդացել և շատ բարեկամներ է ձեռք բերել: Խոսում էին նաև, թե նա, իբր, գատտիարակել և ուսուցանել է Տրայանոսին թեև ճշգրիտ տեղեկություններ չկան:

Տեղեկություններ կան նաև Իտալիայի այլ պատմական վայրեր նրա այցելությունների մասին: Նա գնացել հասել է մինչև վոքրա-

սիական Սարդիես: Նրա բազմաթիվ շրջադասությունները բացատրվում են նրա, որպես պատմաբանի, համար անհրաժեշտությամբ հա վաքելու պատմական նյութեր Հունաստանի ու Հռոմի տարբեր վայրերում ինչպես և՛ նրա դասախոսական դործունեությամբ և ելույթներով փիլիսոփայական, պատմական և հատկապես բարոյսխոսական թեմաներով Տեղեկություններ կան նրա բարոյական հեղինակավորության մասին, որից ելնելով նրա շատ ունկնդիրներ դիմել են նրան իրենց բարոյական դժվարությունների վերաբերյալ խորհուրդ հարցնելու:

Ամենից շատ այնուամենայնիվ, Պլուտարքոսը սիրել է իր Քերոնեան, որտեղ նա սկզբում նույնիսկ զբաղեցրել է քաղաքում հասարակական կարգի և քաղաքի շինտրարության վերակացուի պաշտոնը: Հետագայում նույն այդ Քերոնեայում նա զբաղեցրել է արխոն և անվանահոր պաշտոնը: Սա մենաբարձր պաշտոնն էր եղել քաղաքում, կազմակերպչական-հասարակական, կազմակերպչական կենցաղային իրավաբանական, դատարանական և մարդասիրական բնույթի զանազան ֆունկցիաներով: Նա զոհաբերությունների և գրանց հաշորգող խաղերի կարգադրիչն է եղել:

Բայց կյանքի վերջին Տրայանոսը նրան շնորհել է ոչ ավել ոչ պակաս կոնսուլարի կոչում: Եվ՝ ավանաբար, նա նույնիսկ ամբողջ Հունաստանի պրոկուրատորն է եղել, այնպես որ նրա ենթակայության տակ է դրված եղել հունական ողջ վարչակազմը: Թե որքանով է Պլուտարքոսն այս պաշտոնին գործարար կերպով վերաբերվել և որքանով է դա նրա համար միայն պատվավոր կոչում եղել, դժվար է զատել: Առավել ևս այն պատճառով, որ ծերության հասակում նա Ապոլլոնի 'եկիփյան նշանավոր տաճարի քորմը դարձավ, ընդ որում հսյանի է որ այդ յա տոնում նա մենացել է երկսր ասարինել:

Վերջապես ինչ վերաբերում է կենսագրությանը ասյա տեղեկություններ կան նրա կողմից Քերոնեայում հիմնված փիլիսոփայական բարոյագլտական դպրոցի մասին և անց մաստանշվ մեն մեզ քիչ հայտնի նրա աշակերտների սնունդները:

Նույնիսկ եթե հանենք Պլուտարքոսի կեղծված ո կասկածելի երկերը այնուամենայնիվ լիվին վավերական և միաժամանակ մեզ հասած երկերի ցուցակը այլ գրողների ստեղծագործությունների հետ համեմատած վիթխարի է: Մեզ են հասել, նախ պատմափիլիսոփայական բնույթի երկեր երկ և աշխատություն Պլատոնի մասին 6 ը ընդդեմ ստոիկների և էպիկուրյանների: Բացի այդ, կան երկեր որոնք նվիրված են տիեզերագիտությանն ու ստղագիտությանը հոգեբանությանը բարոյագիտությանը քաղաքականությանը ընտանեկան կյանքին մանկավարժությունը անտիկվարային պատմությանը: Պլուտարքոսը մի քանի տրակտատ է գրել կրոնական և կրոնաառասպելաբանական բովանդակությամբ Մեծ արժեք են

ներկայացնում Դելիայան պատգամախոսարանին նվիրված նրա էրկերը: Մեենուր սփռված ուեսական ու պատմագեղարվեստական թեմաներից զատ Պլուտարքոսն ունեցել է նաև մի հատուկ տրակտատ Երաժշտության մասին: Հատկապես պետք է առանձնացնել բարոյախոսական բովանդակությամբ նրա էրկերը որտեղ նա վերջուժամ է մաշդիլային այնպիսի կրթեր ինչպիսիք են օրինակ արձաթասիրությունը, զայրացկոտությունը, հեռաբերբասիրությունը: Եթե ի նկատի աճեճանք ընդհանրապես բոլոր ս ն էրկերը, որտեղ Պլուտարքոսը մշակում է բարոյախոսական թեմատիկան հարկ կլինի հաշվել էրկու տասնյակից ավելին: Իրենց թեմատիկայով խիստ բարդ գործերի շարքին կարելի է լասել խնջույքի և կերուխումի վերաբերյալ նրա գրույցները որոնք կազմում են կարելի է ասել, հատուկ գրական ժանր, ինչպես և ասույթների ժողովածուները:

Բոլոր այդ էրկերը իրենցից ներկայացնում են մի ընդհանուր բաժին որը սովորաբար կրում է քիչ հասկանալի Moralia անվանումը Այս բաժնում բարոյախոսական էրկերը ճիշտ է ներկայացված են շատ ընդարձակ, և առանց այլ բարոյախոսության յուր շի գնում Պլուտարքոսի համարյա ոչ մի տրակտատ: Չնայած դրան՝ էրկերի վիթխարի բաժնի մատնանշված ընդհանուր անվանումը ավելի լավ է հասկանալ իբրև ընդհանրապես մարդկային մտքի ու կյանքի պրոբլեմների մատնանշում: Անհրաժեշտ է հենց այս կարգի էրկերի թվին դասել նաև Հոմերոսի, Հեսոդոսի, Արատոսի նիջան գրոսի վերաբերյալ բանասիրական մեկնությունները, որոնք մեզ են ասել միայն հատվածաբար:

Պլուտարքոսի էրկերի մի սուանձին բաժինը որ նույնպես վիթխարի է, որ նույնպես խիստ հանրահայտ է եղել բոլոր դարերում և գուցե, ավելի հանրահայտ, քան Moralia-ն՝ «Համեմատական կենսագրություններն» է Պլուտարքոսն այստեղ, աննշան բացառությամբ վերցրել է մեկ հույն հերոս ու մեկ հռոմեացի, դրա համար էլ այս գույգ-գույգ կենսագրություններն անվանել է «Համեմատական կենսագրություններ» Մեզ հասել է լիակատար իմաստով գուզանն 46 կենսագրություն և շորե կենսագրություն՝ միանձնյա: Բացի այդ 8 կենսագրություն և մեզ չի հասել կենսագրությունները ըս իրենց բճի 1 մեթոդիկայի շախազանց բարդ բնույթ ունեն ինչպես 1 անամենը, ինչ գրել է Պլուտարքոսը: Այստեղ կարելի է գուեսել և ճշգրտալրասմական ովյալներ, և՛ բարոյաբանություն և գիմապատկերի րվեստով հափշտակված թյ Ի և իլիսո ի յ յթյո ս և վիդուգրություն:

Պլուտարքոսի այս ամբողջ վիթխարի ժառանգությունն իր լսփերով գերազանցում է այն ամենին ինչ որ մնացել է ամենաբնջուն հույն գրողներից: Պետք է առավել ևս ուշադիր ու հանգամանորեն ջանալ գոնե ճիշտ կողմնորոշումը Պլուտարքոսի աշխարհս

յացքի ու ստեղծագործութիան բոլոր այդ բազմերանց սրբունների մեջ:

Պլուտարքոսի ստեղծագործությունը ի նկատի ունենալով դրա ինքնատիպությունը բազմազանությունը և ընդարձակ շափերը, բավականին բարդ առարկա է ոչ միայն ուսումնասիրության այլև մի հասարակ փաստական սկնարկի համար: Առանձնապես դժվար է դասնել կարճ ակնարկի շրջանակներում: Կարելի է ուրվագծել այդ ստեղծագործությունը, բացի միայն դրա որոշ միտումներից սրունք կարող են բոլորովին այլ տեսք ունենալ, առավել ընդարձակ վերլուծության պայմաններում: Բացի այդ նույնիսկ կարճ ակնարկի համար էլ դիտական անհրաժեշտություն է տեղորոշել Պլուտարքոսին ոչ միայն ընդհանրապես արտասահմանյան զրականության պատմության մեջ, այլև հենց միայն անտիկ դրահանության սահմաններում, առանց ոչի, այնուամենայնիվ Պլուտարքոսին վերաբերող յուրաքանչյուր բնութագիր կարող է շափից ալիելի ընդանուր և շափաչանց մակերեսային ստացվելու վտանգին ենթարկվել:

Պլուտարքոսը անտիկ գրող է: Ռայց ի՞նչ բան է անտիկ գրահանությունը: Բոլորին հայտնի է, որ անտիկությունը երևան է եկել առաջին երկու սոցիալ-պատմական կացութաձևերում սկզբում համ յնատոհմային և հետագայում սուրկատիրական: Սակայն քչերը կարող են անտիկ մշակույթը կապել այդ երկու կացութաձևերի հետ: Այնուամենայնիվ այդ կապը և անատրակուսելի է և ակնհայտ:

Սասնանշված երկու կացութաձևերը լիակատար սպատություն չեն տալիս անհատի ու հասարակության դարգացման համար: Եվ անհատը, և հասարակությունը այստեղ շափազանց կապված են մարդկային հնարավորությունների գուտ ֆիզիկական օգտագործման հետ ինչը ստեղծան, անտիկ մշակույթի ոչ միայն թերությունն է այլև մեծ առավելությունը: Անտիկ մշակույթի ստեղծագործությունները գիշում են եվրոպական նոր մշակույթի ստեղծագործություններին իրենց անբավարար դիտական մշակվածությամբ և դատողական կառուցվածքների համար լիակատար սպատության բացակայությամբ: Բայց, մյուս կողմից անտիկ մշակույթը դերազանցում է նոր ժամանակին, մարդու ու բնության ամբողջ գործունեության նկատմամբ պարզ դիտողականությամբ և կոնկրետ-կենսական մոտեցմամբ: Այդ մասին համադիր դատողություններ է անում Էնգելսը և անտիկ մշակույթի նման բնութագրումը մեզ համար արտոմա է:

Բայց եթե անտիկ ախարհայացքի բովանդակության կոնկրետ հարցը զննեք, ապա այդ ֆիզիկական մարդկային մոտեցումը կհանգեցնի ամբողջ իրականության հենց նույնպիսի մարդկային, այսինքն և բանական, և շնչավոր, բայց միևնույն ժամանակ նաև գուտ ֆիզիկական հիմնավորմանը հատուկ կարգի, տիեզերաբանության ուղիներում: Անտիկ մարդիկ ամեն ինչի հիմքն ընդունում էին տեսանելի, լսելի, շոշափելի և ընդհանրապես զգացմունքազգայական տիեզերքը այսինքն անշարժ երկիրը և դրա վրայի վիթխարի երկ

նակամարը՝ իր երկնային լուսատուների ճշգրիտ շարժմամբ ո հավերժ անփոփոխ թեև միաժամանակ նաև շարժական սիեզերքի գեղեցկություններ: Միայն անտիկ մատերիալիստները չէին որ ամեն մի մարդկային բան համարում էին լոկ նյութեղեն ու ճշգրիտ-շարժական տիեզերքի արտադրանքը, իդեալիստ Պլատոնը նույնպես մարդկային հոգու ճիշտ կառուցվածքի համար անհրաժեշտ էր համարում հավիտենական և անխախտելի, միշտ ներդաշնակ նմանակումը երկնակամարի շարժումներին: Կենդանի, շնչավոր, բանական, բայց անպայմանորեն զգացմունքանյութեղեն տիեզերք ահա թե ինչով է հարուստ անտիկ փիլիսոփայությունը և ընդհանրապես անտիկ աշխարհայացքը: Եվ դա ամբողջ աշխարհայացքի վրա մեկընդմիշտ գրել է սուր բայց և միաժամանակ կենդանի ուրվանկարների կնիքը, այսինքն ամբողջ իրականության ճարտարապետական-քանդակագործական ըմբռնման կնիքը:

Անտիկ տիեզերաբանությունը սակայն այդպիսի ուղիապիծ ու սկզբունքային տեսքով կարող էր լինել միայն հույժ խոտաշունչ և մարդկային ոեալ պահանջմունքներից հեռու սուբյեկտի աշխարհայացքը: Եվ այդքան հիասքանչ ու միաժամանակ այդքան խոտաշունչ տիեզերքը անտիկ աշխարհայացքի ոչ բոլոր ժամանակաշրջանների սեփականությունն է եղել իր օբյեկտիվ մշակմամբ նա մեր առջև ներկայացված է անտիկ մշակույթի այն դարերում ուր սովորաբար համարվում են անտիկ դասականություն և որոնք իրենցով բնորոշում էին մոտավորապես մ. թ. ա. VI—IV դդ. ժամանակաշրջանը Արդեն IV դարում նշմարվում էին հունական ջն պոլիսի անկման գծերը, որի սահմաններում զարգանում էր հին հունական դասականությունը: Իսկ այդ պոլիսը քայքայվում էր նկատ առնելով մասնազոր նախաձեռնության սասակացող զարգացումը, որն իլ համար և իր արտադրական թսփի համար պահանջում էլ արդեն ընդարձակ ուսմամբ իտալեոտական կազմակերպություն ըրի սկիզբը դրեց Ալեքսանդր Մակեդոնացին՝ ամենից սուաչ նվաճելով Հունաստանը լսկ հեսագայում նաև մյուս բոլոր երկրները՝ ընդհուպ մինչև Հնդկաստան: Այդպիսի կայությունների կազմավորման համար հավասարապես անհրաժեշտ էին և՛ վիթխարի մասնավոր նախաձեռնությունը այսինքն առանձին սահաաի խորացված զարգացում, և՛ վիթխարի ազասությունները, որոնք ապահովեին նրա անհատական ընդունակությունների բավականաափ լայն զարգացումը:

Մ թ ա IV դարի վերջից սկսվում է այն բազմաբովանդակ դարաշրջանը, որը պիտություն մեջ կոչվում է ոչ թե հելլենության, այլ՝ հելլենակոնության (հելլենիզմի) դարաշրջան: Այսինքն այնպիսի մի գարաշրջան, երբ և՛ բազմաթիվ նվաճված ժողովուրդները, և Հունաստանն ինքը վերստին ստեղծում էին դասականության մշակույթը, որա մեջ ներդնելով հենց այդ նախկինում դասականության

ձեռք չբերած սուբյեկտիվ զարգացման սարրերը: «Հելլենիզմ» տեր միներ ոմանք հասկանոմ են շատ նեղ իմաստով, այն վերագրելով միայն մ թ ա 1—11 դարերին Որիշները հելլենիզմ են անվանում ընդհանրապես անտիկ աշխարհի բոլոր դարերը՝ հին հունական դասականության սնկումից հետո մինչև Միջին դարերի սկսվելը մ թ. V—VI դարերը: Պետք է ասել, որ այսպիսի պատմական տեր միաս բանությ: նը միշտ գայմանական կլիսի եվ մենք հագիվ թե մեղանչենք, եթե մ թ ա 111—1 դդ հաշվենք վաղ հելլենականութուն, իսկ մ. թ. 1—V դդ ուշ հելլենականությոն: Այս տեսակե տից Պլուտարքոսին ակնհերարար պետք է դասել ուշ հելլենիզմի ամենասկզբին

Հելլենիզմը հոն սկսն դասականության խստաշունչ-օբյեկտիվիս տական իղեալների անձնականորեն վերարտադրումն է: Բայց զանշանակում է ր հելլենիզմի կողմից, բպես սոցիալ-պատմական ո ժ առաջին սլան քաշված սուբյեկտը բնավ չէր կարող վերարտադրել և մարմնավորել ողջ հին պատմությունը որը հեռավոր անցյալի սեփականությունն էր դարձել Այդ հեռավոր անցյալին նատի բապետում էր միայն աստիճանաբար և վերջնականապես տիրապետեց անտիկ պատմության վերջում, րը հենց այս պատճառով էլ դուրս եկավ մարսիմալ հասարակական քաղաքական և փիլիսոփայական ռեակցիայի դարաշրջան: Ընդ որում հելլենիզմին բնորոշ սուբյեկտիվիզմը ոչ մի դեպքում չպետք է հասկանալ նոր եվրոպական ձևով: Անտիկ մարդը դաստիարակված լինելով օբյեկտիվ և մլ ս ժամանակ նույնիսկ զգայանյութեղեն տիեզերաբանությամբ, երբեք չէր կարող դրանից հրաժարվել ամբողջովին այլ կարող էր դասուսկ տարբեր կերպ մեկնաբանել՝ մարդկային սուբյեկտի մերթմեկ, մերթ մյուս ընդունակության հիման վրա: Օբյեկտիվ տեղե բաբանությունը երբեք չէր մեռնում անտիկ աշխարհում: Բայց անտիկ սուբյեկտը տարբեր ժամանակներում կարող էր ոտարբեր կերպ մեկնաբանել այն՝ առսջ քաշելով տիեզերաբանության մերթմեկ, մերթ մյուս կողմերը: Դա ոչ մի շափով չի եղել հին օբյեկտի վիզմի կործանումը: այլ միայն սբա ստտիճանական փոխանցումը մարդկային այս կամ այն ըմբռնման ռելսերի վրա:

Ենչ բան է վաղ հելլենիզմը: Դս օբյեկտիվ տիեզերաբանությունը ինտիմորեն-նեքնապես, աֆեկտիվորեն-ինտիմորեն, հոգեբանորեն-ազատամտորեն հասկանալու առաջին փորձն է եղել: Այդ ապատամտությունը, իհարկե, եղել է խիստ բազմազան: Մարդկային սուբյեկտը որ ցանկանում էր ամեն ինչում տեսնել իր ինտիմ կյանքի արտացոլումը սկսեց պատկերել այդ կյանքը նույնպես խիստ բազմազանորեն բայց միշտ մարդկային ապրումայնության ու ներքին զգացմունքայնության հետ միասին: Բավական է միայն համեմատել էսքիլևսի ու Սոփոկլեսի խստաշունչ հեր սներին օրինակ Քեոկրիտեսի գեղեցիկ նրբագեղ ու միշտ մտերմության հավակնող հովիվների հետ Այդ վաղ հելլենիզմի ժամանակաշրջա

սաստալ ս ռոսասարկ գորսարսորը արկասայրս ս սուլսրսս քաս տաստիկ ներկայացումները: Մնունդ է առնում ստոիկ փիլիսոփայի աննկուն ո ամրապինդ բնավորութիւնը որը ցանկանում է պահպանել իր անհատականութիւնը և դրա ներքին անդորրը այն ժամանակվա կուլտուր-սոցիալական կյանքի անասելիորեն ընդարձակված անկաշկանդութիւններին: Միայն այս ժամանակաշրջանում կարող էր ծնունդ առնել նաև այնպիսի մի դպրոց ինչպիսին էր էպիկուրականը, որը նույնպես ձգտում էր պաշտպանել առանձին ինտիմ-զգացող անհատին ծալալվ ծ կայսրութիւնների խստաբար ս պահանջմունքներին:

Բայց դս հելլենիզմի շենց առաջին ժամանակաշրջանն է եղել երբ մարդկային սուբյեկտը առաջին անգամ իրեն հակադրելով տի եզերական ամբողջին դիուս շէր կարողանում ամբողջ այդ տիեզերաբանութիւնը թարգմանել սուբյեկտիվ ասրումների լեզվով: Օբյեկտիվ տիեզերքում առաջին պլանի վրա դնելով այն, ինչը ան հրաժեշտ էր իր սուբյեկտիվ ու խորացած ինքնազգացումները պահպանելու համար այդ ժամանակվա մսածոյը բնության մեջ իսկ ընդգծում էր այն միայն, ինչն իրեն պետք էր սուբյեկտի պահպանման համար: Այսպես ստոիկները վերականգնեցին Հերակլիտին իր նախակրակով, այդ նախակրակի անվերջ վերամարմնավորումներով և այդ վերամարմնավորումների այն օրինաչափությամբ որը Հերակլիսն էլ արգեն կոչում էր լոգոս Բայց ստոիկները մոտ այդ լոգոսը ինտելեկտուալորեն կշտադատված և քերականորեն ճշր գրիտ համակարգի էր հասցված: Իսկ այդպիսի լոգոսը որն առաջ էր քաշվում տիեզերքում, արգեն շէր կարող այնպես ամենազոր լինել ինչպիսին Հերակլիտի մոտ էր եղել, այլ դարձավ այնպիսի լոգոս, այն այլևս շէր կարող հավակնել բացարձակության ինչը և ստոիկներին ստիպեց լոգոսի հետ միասին առաջին պլան մղել նաև ճակատագիրը այնպես որ ճակատագիրը առաջին անգամ այստեղ դարձավ փիլիսոփայորեն հիմնավորված հասկացութիւն: էպիկուրյանները խորասուզված իրենց ինտիմ-ներքին զեղազիտական ինքնավայելքի մեջ նույնպես ինչպես անտիկ մարդիկ, շէին կարող ժխտել օբյեկտիվ ռեալութիւնը: Բայց Իրանք պետք է պաշտպանեին իրենց վայելքի տեսութիւնը իսկ դա նշանակում է որ նրանց ամենից ավելի մոտիկ էր հին ատոմիստիկան, որը մարդուն ազատում էր միայն մի սնահավատութիւնից: Նույնիսկ աստվածներին էլ էպիկուրյանները շէին ժխտում, բայց ինտիմազգացական սուբյեկտից ազատվելու նոյատեկով նրանք այդ աստվածներին գրկել էին մարդկային կյանքին մասնակցելու իրավունքից, և նրանք միայն իդեալների էին վերածվել ինքնավայելող էպիկուրյանների համար:

Այսպիսին էր հելլենիզմի դարերի այս առաջին ժամանակաշրջանը Ակնել և էր Պլուտարքոսը նույնպես ապրել է և գործել

այդտեղ որովհետև նա ասելու ու գործել է հելլենականության մեր հիշատակած դարաշրջանից զոնե մի երկու հարյուր տարի հետ Այդ ցեղերում ո՞րն է Պլուտարքոսի աշխարհայայբի ու ստեղծագործության էությունը

Ամենից առաջ հետաքրքիր է այն, որ Պլուտարքոսը այն կերպ գտնում է նմանակել դասական մտածելակերպին, և հատկապես դրա ավարտուն ձևին, որն ստեղծեցին Պլատոնն ու Արիստոտելը Պլուտարքոսը շատ բան ունի նեոպլատոնականությանից ինչը և խիստ վնասականորեն նրան կտրում է հունական, զուտ օրյեկտիվ և տական դասականությունից և դրա մասին մենք հետագայում եխտսենք Բայց նախքան Պլուտարքոսի յուրահատկության մասին դատելը՝ կապված նրա ժամանակաշրջանի հետ, անհրաժեշտ է առաջին հերթին մատնանշել նրա նվիրվածությունը գլխավորապես հունական դասական փիլիսոփայությանը: Այդ նվիրվածության առարկան, ակներևորեն չի կարելի պարզապես անվանել դասականություն, քանի որ վերջինս արդեն Պլուտարքոսից 200—300 տարի առաջ էր եղել-անցել: Իս դասականության վերականգնման մի փորձ էր, այլ ոչ թե բուն դասականությունը այսինքն՝ զա կլասիցիզմ էր այլ ոչ թե կլասիկա Հետագայում մենք կտեսնենք որ մեր թվարկության ամբողջ երկրորդ դարը նույնպես կլասիցիզմ է եղել նույնպես եղել է վերականգնումը հին հունական վաղուց անցած դասականության Այստեղ կային խոշոր շատ անուններ, որոնց մասին մեզ զեռ հարկ կլինի խոսել հետագա շարադրանքում: Բայց Պլուտարքոսին չի կարելի գրանցել դասականության վերականգնման այդ դարում հին դասականության բովանդակության ու ոճի վերականգնման բարձրագույն փորձերի ալդ դարում: Պլուտարքոսը և ոչ միայն նա որպես մ թ I դարի գրող, իրենից ներկայացնում էր անցման օղակ հելլենիզմի ամենավաղ աստիճանից որի մասին մենք խոսել ենք վերևում, դեպի հենց այդ կլասիցիստական վերածնությունը հունական գրականության մեջ մ թ II դարում: Աստի մեր կողմից այժմ արտահայտված լնդումը դասականության փիլիսոփայության և ամենից առաջ Պլատոնի նկատմամբ Պլուտարքոսի հակման մասին, բխում է այն առանձնահատուկ հանգամանքներից, որ ամբողջ մ. թ. I դարը հենց անցում է եղել հելլենիզմի նախնական շրջանից դեպի հելլենիզմի հունական վերածնությունը մ. թ. II դարում: Այսպիսով, հասկա ՚րն է Պլուտարքոսի այդ պլատոնական դասականությունը: Իսկ այդ հարցի պատասխանն արդեն առաջին անգամ մեզ համար հնարավորություն է ստեղծում պատմականորեն դնահատել նաև անցումնային կողմերը Պլուտարքոսի ստեղծագործության մեջ:

Պլուտարքոսի կենսագրություններում, հատկապես Բրուտոսի կենսագրության մեջ խոսվում է Բրուտոսի պլատոնիզմի մասին, բայց պլատոնիզմի մասին այդ խոսքերը շատ ավելի կերտելի են հենց

իր՝ Պլուտարքոսի վերաբերմամբ: Պլուտարքոսը Բրուտոսի մասին գրում է, թե նա համախոհություն դադարով Պլատոնի հետևորդների նկատմամբ՝ առանձնապես զմայլվում էր ասկալոնցի Անտիոքոսով Սակայն ասկալոնցի Անտիոքոսը հենց այնպիսի պլատոնական է եղել, որը ջանում էր հաշտեցնել պլատոնիզմը մյուս փիլիսոփայական դպրոցների հետ և ամենից առաջ՝ ստոիկների: Բայց այս մասին հետո, Իսկ հիմա մեզ անհրաժեշտ է նշտել թե Պլուտարքոսն ինչ էր գտնում դասական պլատոնիզմի մեջ

Պլուտարքոսը դառական պլատոնիզմի մեջ առաջին հրթին գրտնում էր ուսմունք աստվածություն մասին, բայց ոչ թե նախ դավանարանության տեսքով, այլ՝ կեցության էշոտդատված տահանջմունքների ընդամին միաբնական կեցության, որը յուրաքանչյուր մասնակի կեցության և յուրաքանչյուր բազմակիություն համար հանդիսանում է սահման ու հնարավորություն: Պլուտարքոսը խորապես համոզված է որ եթե լինում է մասնակի, փոփոխական ու ոչ կատարյալ կեցություն, ապա դա նշանակում է որ լինում է միասնական ու ամբողջական, անփոփոխ ու ամենակատարյալ կեցություն: «Չէ՞ որ աստվածայինը բազմաքանակությունը չէ ինչպես մեզանից յուրաքանչյուրը, որը ներկայացնում է հազարավոր տարբեր մասնիկների գանաղանակերպ ամբողջություն, մասնիկներ բոնք փոփոխության մեջ են գտնվում և արհեստականորեն խստնված են Իայց անհրաժեշտ է որ գոյը մենակ լինի, քանի որ գոյություն ունի սոսկ միակը: Իսկ բազմազանությունը զոյից տարբեր լինելու պատճառով վերածվում է չգոյության («Ն-ի մասին Դելփիքում», 20), «Հավերժ անփոփոխին ու մաքուրին ներհատուկ է լինել եղակի ու անխառն» (նույն տեղում): «Որքան որ հնարավոր է համապատասխանություն գտնել փոփոխական գլացողության 1 մտահասանելի ու անփոփոխելի զաղափարի միջև, նույնքան այդ սրտացույցը այսպես թե այնպես ինչ-որ խաբուսիկ պատկերացում է տալիս աստվածային սղորմածության ու երջանկության մասին» (նույն տեղում, 21): Աստվածային կատարելության ալդպիսի արտացոլում է հանդիսանում ամենից առաջ տիեզերքն ինքը: Այս մասին է արգեն խոսվում նաև մեր հենց Նոր մեջբերած տրակատում (21) «Այն սմենը, ինչ այ կամ այն կերպ ներհատուկ է տիեզերքին, աստվածությունը միավորում է իր էության մեջ և մարմնական թոյլ ուրստանցիան պահպանում է ոչնչացո մից»

Բայց տիեզերաբանական պրոբլեմին Պլուտարքոսը նվիրում է երկու լրիվ տրակատա՝ պլատոնյան «Տիմեոսի» իր մեկնությունների կապակցությամբ: «Հոգու ծագման մասին ըստ Պլատոնի «Տիմեոսի» տրակատատում Պլուտարքոսը մաքուր պլատոնական ոգով ուսմունք է զարգացնում իդեայի ու մատերիայի մասին մատերիայի հավիտենական, բայց անկանոն գոյության մասին, աստվածային Դեմոնորգի կողմից այդ մատերիան այժմ գոյություն ունեցող տիեզերքի գեղեցկության, կարգ ու կանոնի վերափոխվելու մասին համաշ

խարհային հոգու կարգավորող գործունեության օգնությամբ երկնա կամարի հավիտենական ու անփոփոխ շարժումն ստեղծելու մասին, կենդանի, շնչավոր ու բանական տիեզերքի հավիտենական գեղեցկության մասին: Իրոք, Պլատոնն ինքն էլ իդեալականորեն գեղեցիկ տիեզերքի իր Շորինվածքի մեջ ինչպես մենք դա գտնում ենք նրա «Տիմեոս» երկխոսությունում եղել է տիեզերքի վերաբերյալ հենց դասական պատկերացման բարձունքում: Եվ այդպիսի դասական պատկերացումն էլ երազանքն է հանդիսանում Պլուտարքոսի որը բոլոր կողմերով փաստաբանում է կատարյալ թեկզկ և զգայանյութեղեն տիեզերքի գեղեցկությունները:

Իայց արդեն այստեղ էլ՝ իր սեսական աշխարհայացքի բարձունքում Պլուտարքոսն սկսում է որոշել անկայունություն ու նույնիսկ երկվություն չորսուրեք իր ընդհանուր իիլիսոփայական դիրքերում Երբ Պլատոնը կատարում էր իր տիեզերքը, նրա մտքով շէր էլ անցնում հակադրել շարն ու բարին: Նրա համար միայն այն էլ բավական էր, որ հավիտենական աստվածային Միտքը իր ավիտենական գաղափարներով մեկընդմիջա ձեւավորել էր անձն անկանոն մասերիան, սրանդից և հայտնվել էր նույնպես հավիտենական ու նույնպես հավերժ գեղեցիկ տիեզերքը Միանգամայն նոր երանգ է մտցնում Պլուտարքոսը այս դասական լավատեսության մեջ: Մատնանված արակատաում՝ հոգու ծագման մասին ըստ «Տիմեոսի», և հանկարծ սկսում է յատուկություն անել այն մասին, թե բնավ էլ ոչ ամբողջ անկանոն մատերիան է Դեմիուրգի կողմից կարգի բերված, թե դրա նշանակալից բնագալառներ մինչև այժմ էլ մնում են անկանոն և որ այդ անկանոն մատերիան (լինելով, ակներևաբար, նույնպես հավիտենական) այժմ և միշտ էլ սկզբնապատճառն է լինելու ամենայն անկանոնության, ամեն մի աղետի՝ և բնության մեջ և հասարակության օլլաինքն զարգացես ասած օլլ խաբեի շար հոգին է դա Այս իմաստով է Պլուտարքոսը մեկնում նաև բոլոր ամենագլխավոր հին իիլիսոփաներին՝ Հերակլիտին, Պարմենիդեսին Էմպեդոկլեսին նույնիսկ Պլատոնին և նույնիսկ Արիստոսելին: Ի միջի այլոց, Պլատոնի վերաբերմամբ Պլուտարքոսը միանգամայն իրավացի է, թեև նա հենվում է Պլատոնի ամենաուշ շրջանի երկելի վրա հատկապես «Ծրենքների» (V 896e—897a): Բանն այն է որ ուշ շրջանի Պլատոնը, ինչպես ընդհանրապես շատ բաներում, նահանջում էր բարձր դասականությունից մոտենալով հելլենիզմին, այդպես էլ հոգու մասին ուսմունքի բնագավառում, երբ որ համաշխարհային հոգին նրան պատկերացավ բացարձակորեն բարի ու շար հանկարծ սկսեց սովորեցնել աշխարհի շար հոգու մասին գրանով իսկ ընկնելով հակապլատոնական կամ ավելի ճիշտ հակադասական դուալիզմի մեջ:

Ինչ վերաբերում է այլ հարցի առնչությամբ մեր պատմական զնա՛տատականին, ապա ուշ շրջանի Պլատոնի այդպիսի նոր դիրքավորումը և Պլուտարքոսի այդպիսի արմատական համ ղմունքը

ունեն միանգամայն բնական հիմնավորում: Հելլենիզմի դարաշրջանում ծնունդ առած քմահաճ ու կամակոր սուբյեկտը ոչ մի կերպ չէր կարող հաշտվել շարի ու մի օրինականության կամ բնականության հետ էպիկուրականները դրա վրա բուլտրովին ուշադրություն չէին դարձնում: Իսկ ինչ վերաբերում է սոփիկներին ապա նրանց սա կավագոր լոգոսը արդեն պարտադիր կարգով պահանջում էր ճակատագրի կատեգորիան որքանով որ ինքը ամեն ինչ կարող էր բացատրել միայն տրամբանորեն բայց ոչ վերջնականորեն ոչ սուբստանցայնորեն: Ընդուն է սոփիկներն այստեղ էլ ելք դուսն իրենց սուբյեկտիվիզմի համար նրանք սկսեցին քարոզել ու պահանջել «սեր ճակատագրի հանդեպ» Բայց այդ «amor fati»-ն նրանց մոտ հնարավոր է եղել շնորհիվ այն հրեշավոր պահանջների որ նրանք ներկայացնում էին անհատ մարդուն՝ նրան լիակատար անվրդովության ու անզգայության հասցնելու նպատակով: Պլուտարքոսը դա անել չէր կարող իր մեղմության ւ բարեհոգության սլառճառով, ուստի նրան հատուկ չէր այդպիսի դյուցազնական սերը ճակատագրի հանդեպ: Նա այդպես էլ, շնայած իր ողջ կրոնափիլիսոփայական լավատեսությանը մնաց չափազանց զգայուն մի մարդ, որը շատ խորն ու ողբերգականորեն տառապում էր իր դավանած համաշխարհային շարիքից և վերջնականապես լավատեսական եզրակացություն չէր հանգում:

Վիթխարի թեմա է Պլատոնից Պլուտարքոսի կախման լուսարան մը: Այդ թեմայի վրա ծանրանալը այս ակնարկում մեզ համար իհարկե անհնար է: Այնուամենայնիվ անհրաժեշտ է բնդգծել որ պլատոնյան նյութերը Պլուտարքոսի մոտ արտակարգ լայն են ու բազմազան: Իր բազմաթիվ երկերում Պլուտարքոսը շարունակ մատնանշում է Պլատոնին, նրա կենսազրույթյունը և զանազան առանձին դատողություններ: Պլուտարքոսը մի ամբողջ տրակտատ ունի «Պլատոնյան նյութեր» վերնագրով որտեղ քննարկվում են և Պլատոնն ամբողջովին և՛ շատ ու շատ առանձին հարցեր:

Եվ այնուամենայնիվ Պլատոնի մոտ եղած շատ բաներ Պլուտարքոսը ոչ մի կերպ չի կարողացել հաղթահարել: Հենց այն ժամանակաշրջանը որի մեջ ապրել է Պլուտարքոսը որպես անցումային ի դորու չի եղել հասկանալու պլատոնյան ուսմունքը սուղնամիակի մասին որ վեր է ոչ միայն ամեն բանից այլև վեր է տիեզերական բանականությունից այսինքն վեր է տիեզերքի բոլոր իմաստային օրինաչափություններից: Եվ դա հավանաբար, դատահական չէր այլ լրիվ բնականորեն կասկած էր մեր կողմից վերևում նշված բառի և շար համաշխարհային հոգո դուալիզմը հաղթահարելու անկարողության հետ: Սրա հետ է կապված էսե այն, որ Պլուտարքոսը, որն այնպես սիրո մ էր դատել, այլ դեպքերում նույնիսկ ավելորդ շատախոսությամբ ոչ մի տեղ որևէ կենդանի հետաքրքրություն չի դրսևորել պլատոնյան դիալեկտիկայի նկատմամբ: Եվ բնդհանրապես պլատոնիզմը Պլուտարքոսն ապրել է մեղմացրած

ձեռով ինչը ի միջի այլոց երևում է Պլատոնյան ակադեմիայի ամենատուշ շրջանի պատմության նկատմամբ նրա ունեցած համա կրանքից երբ այնպիսի ակադեմիականներ, ինչպիսիք Արքեսիլա յոսն ու Կարնեագոսն էին, ուղղակիորեն քարոզում էին սկեպտիցիզմ ու հավանականության տեսություն՝ հակառակ իդեաների վերաբեր յալ պլատոնյան ուսմունքի արսույլուտիզմին: Այս առումով հետա քրքրիչ է Պլուտարքոսի այսպիսի դատողությունն իր մասին (ՎԵ-ի մասին Գելփիքում», 7) «Չէ՞ որ այդ ժամանակ ևս կրթող կերպով մաթեմատիկա էի ուսումնասիրում մտադիր լինելով, սակայն, ամեն ինչում նախաստիպությունը տալ «ոչինչ՝ չափից ավելի» սկզբունքին, քանի որ ես աշակերտ էի ակադեմիայում»: Եթե դա իրոք այդպե՛ս է եղել, ապա հասկանալի է թե ինչու պլատոնյան «Պարմենիդեսի» վիրտուոզային կատեորիալ դիալեկտիկան Պլուտարքոսին թվում էր ինչ-որ բանով «չափազանց» և թե ինչու էր նրա համար չափա զանց թվում աննախագրյալ սկզբունքի մասին պլատոնյան ուս մունքը Պլատոնի «Պետություն» VI գրքում:

Հուսահան դասական փիլիսոփաներից Պլուտարքոսը, իհարկե չէր կարող անտարբեր սնցնել Արիստոտելի կողքով: Բայց ըստ երևույթին, Արիստոտելի մեջ էլ շատ բան նրան թվում էր ծայրա հեղ Բանասերները վաղուց արդեն հաշվարկել են, որ Պլուտարքոսն իր երկերում Արիստոտելի տեքստերը վկայակոչում է ընդամենը 6 անգամ ինչը, անկասկած, ցույց է տալիս Պլուտարքոսի թույլ կա խումը Արիստոտելից, նույն այն Պլուտարքոսի, որը մի բանի հա զար էջ է գրել: Արիստոտելի «Մետաֆիզիկայի» հանդեպ Պլուտարք օսը որոշակի հակակրանք էր տածում: Կենսագրություններում («Ալեքսանդր» 7) Պլուտարքոսը ուղղակիորեն դրո՞ւմ է. «Իրոք բնություն մասին ել կը լկգրից ևեթ նախատեսված է եղել կոթված մարդկանց համար և բոլորովին լիտանի չէ ոչ դասավանդման, ո՛չ էլ ինքնուր յն ո սումնասիրման համար»: Եվ դժվար չէ գլխի ընկնել թե ինչու Արիստոտելի «Մետաֆիզիկան» չէր համապա տասխանում Պլուտարքոսի ճաշակին: Ինչպես բաղմիցս կհամոզվենք ներքևում, Պլուտարքոսը եղել է ավելի հանրամատչելի ուղղության քան թե պաճուճապատ ւ նրբամիտ արիստոտելյան ոխյի վիլի ւ ոխա: Իրոշակիորեն կարելի է խոսել միայն Արիստոտելի բարո յականության հարցեր շոշափող երկերի նկատմամբ: Պլուտարքոսի համակրանքի մասին, առ սնձնապես նրա յնպիսի տրակուտո մ ինչպիսին «Բարոյական առարինության մասին» երկն է:

Որպեսզի ավարտենք դասականների իդեալներին Պլուտարքոսի նվիրվածության վերաբերյալ մեր խոսքը անհրաժեշտ է հիշատա կել նաև այլուրագորակաճութունը որի առնչությամբ Պլուտարքոսի գործերու մ կսբելի է գտնել համակրական շատ ո շատ կարծիք ներս: Չի կարելի ասել, թե այլոթագորականության նկատմամբ ինչ որ կական հափշտակվածություն է եղել, բայց համենայն դեպս

Պլուտոս բքուն ունի մի ամբողջ դատողություն մոնադի և սևո բոշ երկրորդության մասին որսեղ մոնադը ամեն մի միասնության ու կարգի սկզբունքն է իսկ երկրորդությունը միշտ սկզբունքն է երկաման բաժանելիության, աճի ու նվազման և ընդհանրապես լինելության («Պատգամախոսարանների անկման մասին», 35)։ Պլուտագործյան տեսությունը, ըստ երևույթին, Պլուտարքոսի մոտ կիրառվում էր լրջորեն, ինչպես նա լրջորեն խոսում է անկանոն մատերիայից կանոնավոր տիեզերք արարելիս թվերի օգտագործման մասին («Հոգու ծագման մասին ըստ Պլատոնի «Տիմեոսի» 33)։ Կարելի է լիակատար վստահություն ցուցնել, որ, ինչպես ամբողջ անտիկ այս թագորականության մեջ այնպես էլ Պլուտարքոսի մոտ, անհրաժեշտ է հայանաբերել ոչ այնքան պարզապես ուսմունք թվերի մասին որքան ընդհանրապես որոշակի ասված մտքի անտիկ մեթոդ, միտք, որը ցանկանում էր ամեն մի իրականություն պատկերացնել անպայման կառուցվածքային ձևով, առանձին կամ ավելի լավ է ասել, առանձնամիասին Ոչ մի անձնական ու քաղցրենիական համակրանք, որ մենք կգտնենք Պլուտարքոսի մոտ, նրան չեն խանգարել բնության ու հասարակության մեջ ամենուրեք տեսնելու ճշգրիտ կառուցվածքային ամբողջականություն։ Դա համասանտիկ գիծ է և դասական, և հելլենիստական, ընդ որում և վույ և ոչ շրջանի հելլենիզմի գիծ։

Սակայն Պլուտարքոսի մտածողությունը աչքի չէր զարնում այն պիսի խիստ վարժվածությամբ, որպեսզի շղթաներ սյա կամ այն թիվը բուրյովին սրատահական բնագավառներում ու հանդամանքներում, Մեր էսզմից լիբեում մեջբերված տրակտատում՝ «Ծ»-ի մասին ձեզիբում», կան ամբողջական դիտվներ այն մասին, թե որքան վիթխարի նշանակություն է արվում հինգին (5—16)։ Եվ իբրև դրա լուսաբանություն մասնանշվում են օրինակ, հինգ կանոնավոր երկրաչափական մարմինները, հինգ զրաչարանները, հինգ ֆիզիկական տարրերը (հող, ջուր, օդ, կրակ, էթեր) և այլն։ Առանձին թվերի նման կարգի ծիծաղաշարժ դասակարգումը հազիվ թե պետք է տսոացի հասեանալ նույնիսկ պլուտագորականների վերաբերմամբ որոնց մոտ սա եղել է պարզապես նրանց տեսողական ու մտավոր պատկերացումների պարզ ու որոշակի բնույթի վկայությունը Առավել ևս անհրաժեշտություն չկա այդ տսոացիությունը վերագրել Պլուտարքոսին որը համենայն դեպս անցել էր հելլենիստական սկեպտիցիզմի միջով։ Եվ այնուամենայնիվ այդ թվաբանական գործողությունները շարունակ շանդիպում են Պլուտարքոսի մոտ

Տալ վ դ սսս կան այն վիլիսո իաների համտոտ տեսությունը, որոնց Պլուտարքոսը մեծ եռանդով ընդունում էր այժմ անհրաժեշտ է մի քանի խոսք ասել փիլիսոփայության նաև այն ժամանակաշրջանի մասին, որն անմիջականորեն նախորդել է Պլուտարքոսին։

Վասականությունը Պլուտարքոսին չի նախորդել անմիջականորեն Վասականության և Պլուտարքոսի միջև անցել էր ոչ պակաս քան երեք հարյուր տարի որի ընթացքում արդեն զարգացել էր Ռելիգիոզը, ինչի մասին մենք հիշատակել ենք վերևում, ընդ որում հելլենիզմի վաղ շրջանը՝ ստոիցիզմի, էպիկուրիզմի ու սկիպտիցիզմի աստիճանը: Վաղ հելլենիզմի այդ երեք կարևորագույն դպրոցները ծագել էին այն պատճառով որ դասական պոլիսի քայքայումից հետո սոցիալ-պատմական բեմի վրա այժմ հանդես էր եկել անհատական սուբյեկտը, որի հիմնական նպատակը խորացած ներքին կյանքի պաշտպանութունն էր, նրա հանգստի ու ներքին ազատության պաշտպանութունը հելլենիստա-հռոմեական ռազմամիապետական կազմակերպության աճող վիթխարի զանգվածի հանդեպ:

Ստոիկներն իրենց հակադրեցին այդ վիթխարի զանգվածին մարդկային անհատի անվրդովության և անդգայության վերաբերյալ ուսմունքի օգնությամբ: Կարո՞ղ էր արդյոք շափավոր ու մեղմ Պլուտարքոսը կանգնել այդպիսի բարոյական խստակեցության դիրքերում: Իհարկե ոչ: Նա ոչ մի կերպ չէր ուզում մարդկային անհատից զուրս վանել նրա ողջ ինտիմ կյանքը և այն սահմանափակել շրջապատող աշխարհի բոլոր ողբերգությունները հանդարտորեն և առանց որևէ հուզումի սանել կարողանալով միայն Պլուտարքոսին այստեղ հարկեղավ ընդունել արիստոտելյան մետրիոպատիայի նման մի բան այսինքն ուսմունք մարդկային կրթերի շափավորության և դրանք մշտապես մանկավարժորեն զարգացնելու բայց ոչ ամենևին դրանց լրիվ արմատախիլ անելու վերաբերյալ: Ել ի՞նչ խոսք կարող էր լինել էպիկուրյանների ու սկիպտիկների մասին: Այն ներքին ազատութունը որ հետապնդում էր էպիկուրյան վայելքամոլութունը կամ սկեպտիկյան «էպոխե» ն («ժուժկալութուն ամեն մի դատողության հանդեպ») Պլուտարքոսն ապրում էր որպես հրեշավոր միակողմանիություն և մերժում էր առանց այլևայլության: Ավելի զրժ վար էլ բանը ստոիկների հետ:

Այն որ ստոիկյան բարոյախոս վիճյունը իր հրեշավոր խստաշընչությամբ ձեռնտու չէր Պլուտարքոսին, դա պարզ է և հասկանալի: Բայց ինչ վերաբերում է տեսական փիլիսոփայությանը, այստեղ արդեն առանց խառնաշփոթության, ընդ որում՝ հույժ էական գործը յուրա չէր գնում: Ստոիկները որոնք տիեզերքը հասկանում էին որպես իրենց սուբյեկտիվ հայացքների արտացոլում սկսեցին տիեզերական իրականության մեջ էլ քարոզել նույնպիսի թուլացած լոգոս որպիսին պատկերանում էր այդ մեկուսացած անհատապաշտությանը, որն ստիպված էր հենվել մարդկային ոգու սահմանափակ ընդունակությունների վրա: Այդ լոգոսը, ըստ ստոիկների ուսմունքի իրենով համակում էր կրակե տարերքը որը դեռևս հին ուսմունքների համաձայն ընկած էր աշխարհի հիմքում և ոչ ի արտահոսումներից էին այժմ պատկերացվում բոլոր իրերը Պլատոնական Պլուտարքոսին այդպիսի լոգոսն ամենևին ձեռնտու չէր նախ՝ նրա

համար դու շափազանց մարմնական էր և այլ բան չէր քան պար
ապես իրերի սերմը, որտեղից էլ ծագում է ստոիկների նշանավոր
ուսմունքը սպերմատիկ (այսինքն՝ «սերմնային») լոգոսների մասին:
Ընդունելով պլատոնյան գաղափարները, Պլուտարքոսը, իհարկե ոչ
մի կերպ չէր կարող դրանք ստոիկների հետ միասին հասկանալ
որպես սպերմատիկ լոգոսներ Երկրորդ էթե տիեզերքում ոչինչ չի
եղել բացի սպերմատիկ լոգոսները ապա հետևաբար աշխարհի
ողջ շարիքն էլ հենց դրանցից է դուրս եկել Իսկ այդ դեպքում
ստացվում էր ըստ Պլուտարքոսի ր ստովածները շարիքի մեղա
վորներն են քանի որ ստովածներն ավելին չեն քան այլարանու
թյունները հենց այդ բոլոր լոգոս-գաղափարների Գուրս էր գալիս
որ Պլուտարքոսը դեմ էր և ստոիկների մատերիալիզմին և նրանց
պանթեիզմին, և՛, իհարկե ֆատալիզմին, որը չէր կարող շքիել
կրակե լոգոսների ամենագորությունից: Մակայն, իրոք Պլուտար-
քոսը բնավ էլ չէր տիրապետում դիալեկտիկական մտքի այնպիսի
ուժի որպեսզի հաղթահարեր այդ ստոիկյան հակասությունները թեև
նա ամբողջ տրակտատներ էլ է նվիրել դրանց

Ստոիկների մատերիալիզմից աղատվելը Պլուտարքոսի համար
լծվար էր, որովհետև նա ինքն այնքան էլ որոշակիորեն չէր պատ
կերացնում իդեալի ու մատերիալի դիալեկտիկան: Պլատոնը չու
րովի կարողանում էր միավորել գաղափարներն ու մատերիան մեկ
գեղեցիկ տիեզերքում, որը և զգայանյութեղեն էր, և իդեալակա
նորեն գեղեցիկ: Բայց Պլուտարքոսը սպերմատիկ լոգոսներում տե
սով մեն-միայն նյութեղեն տարերքը, մոռանալով, որ լոգոսները
ինքնին վերցրած, թեկուզև գտնվում են մատերիայի մեջ, բայց
դեռևս բուն մատերիան չեն: Դիալեկտիկայից օգտվել չկարողանա
լու մեջ նշանակալի շափով մեղավոր էին և իրենք ստոիկները:
Բայց ստոիկները պլատոնականներ չէին, Իսկ Պլուտարքոսը պլա
տոնական էր: Իսկ այդ դեպքում ո՛ր է ինճվում սպերմատիկ լո
գոսների պրոբլեմի մեջ Պլուտարքոսը, թե՞ ստոիկները: Մեզ թվում
է ավելի շատ Պլուտարքոսը, քան ստոիկները: Չե՞ որ Պլուտարքոսը,
ինչպես և ամբողջ անտիկ հեթանոսությունը, չէր կարողանում չհենվել
լիակատար պանթեիզմի վրա: Բայց պլատոնական պանթեիզմը դիա
լեկտիկական է, բազմաստիճան ստորակարգորեն օգտագործված
Իսկ ստոիկների մ ո ամբողջ համաշխարհային իրականությունը
պարզապես տարաշարված անընդմեջ բխումն էր միևնույն սկզբնա
կեցություն հատկապես նախակրակի: Թե որքանով է Պլուտարքոսն
ինքն էլ շանդիսանում այդպիսի նյութաբխողականորեն մտածող
փիլիսոփա, վկայում է օրինակ, նրա այս շատ կտրուկ դատողու
թյունը հոգու մասին Մասնակից լինելով մտքին գոտողությանը
և ներդաշնակությանը (հո լին) հանդիսանում է չ միայն աստճու
ստեղծածը, այլև նրա մասը: Եվ հոգին ծագել է ոչ թե նրա մի
ջոցով այլ նրանից ո նրա միջից» («Պլատոնյան հարցեր» 11 2):

Այսպիսով համաշխարհային հոգու մասին Պլուտարքոսն ինքը, համենայն դեպս դատում է լիովին պանթեիստորեն: Գիալեկտիկան Պլուտարքոսին ստիպում էր առարկել ստոիկների պանթեիզմի ու մատերիալիզմի դեմ: Բայց նա չկարողացավ ըլտ էության առարկել ընդդեմ ստոիկների պանթեիզմի:

Ստոիցիզմի պլուտարքոսյան քննադատության մեջ կան և այլ կողմեր: Գրանք նույնպես չեն վկայում ստոիկների նկատմամբ նրա շատ խորը և անաչառ վերաբերմունքի մասին: Այսպես, ստոիկյան աստվածները, ըստ Պլուտարքոսի, ոչ միայն բարու այլև չարի տալածողներն են, իսկ այն, որ ամեն մի գոյություն ունեցող բան միայն սպերմատիկ լոգոսների արտահոսումն է, վկայում է ըստ Պլուտարքոսի, Ֆատալիզմի մասին, սրն սնհամառեղելի է և աստվածային նախախնամության հետ և մարդու ազատ կամքի Պլուտարքոսն այստեղ մոռանում է, որ ստոիկների մոտ կար դեռևս ինտենսիվ մի ուսմունք՝ ճակատագրի մասին, որը նրանք մեկնաբանում էին նույնիսկ ոչ թե որպես հաշվառի առարկա այլ որպես փիլիսոփայություն անհրաժեշտ կատեգորիա: Եթե մի կողմ նկատվի այդ ուսմունքը՝ ճակատագրի մասին ապա ստոիկյան աստվածները իսկապես կդառնան վերջնական պատճառը ամեն մի գոյի և՛ բարու, և՛ չարի: Իսկ եթե ամբողջ շարիքը համարենք ճակատագրի արդյունք ապա լրիվ հնարավորություն կունենանք աստվածներին մեկնաբանել որպես միայն բարու տարածողներ: Նույնը պետք է ասել նաև Ֆատալիզմի մասին, եթե ճակատագիրը առանձնացնենք աստվածներից ապա ստոիկների աստվածները, որպես բանական սբարածներ, ոչնչով չեն հակասի մարդու ազատ կամքին: Բայց այդ, իր աշխարհայացքի մեղմության աստճառով խուսափելով ճակատագրի շափազանց խիստ գաղափարից, Պլուտարքոսը, ինչպես տեսանք, բուլորովին չի վախենում աշխարհի չարի հոգու կողքին ճանաչել նաև աշխարհի չար հոգուն: Իսկ սա ոչնչով ավելի լավ չէ չար աստվածների ու Ֆատալիզմի ըմբռնումից:

Չարի կլինի, սակայն ասել, որ այստեղ բնավ էլ բանը ստոիկյան փիլիսոփայության առանձին մանրամասների մեջ չէ: Բանն այն է, որ ստոիցիզմի այդ ամբողջ քննադատությունից ինչպես և երբևէ շատ ազդեցություններից, երևում է որ Պլուտարքոսը բնահանրապես խուսափում էր փիլիսոփայական մտքի խիստ ուրվագծերից լինի դա գասականության դարաշրջանում թե հելլենիզմի ժամանակաշրջանում: Հելլենիզմի սկզբնական ժամանակաշրջանը իր երեք փիլիսոփայական դպրոցներով՝ ստոիցիզմով, էպիկուրականությամբ և սկեպտիցիզմով, նրան թվում էր շափազանց խստաշունչ փիլիսոփայական դիրքավորում: Որպես հելլենիզմի փիլիսոփա՝ Պլուտարքոսը իհարկե, նույնպես առաջին սլան էր մղում մարդկային անհասը և նույնպես ուզում էր սույլ օրջեկտիվ տիեզերաբանության առանձնապես մասձված և ինտիմորեն ապրված պատկերը՝ Սկզբնական հելլենիզմի մատենանշված երեք նոր դպրոցները՝ սկնհայտու-

րեն նրա համար եղել են շափազանց խիստ ու պահանջկոտ չափազանց վերացական և անփոխելի։ Բայց գրանով դեռ բնավ էլ չի լուծվում հելլենիզմի սկզբնական ժամանակաշրջանի նկատմամբ Պլուտարքոսի վերաբերմունքի հարցը։ Վերևում մենք արդեն ասել ենք, թե այն ժամանակներում հանդես եկած ինտիմ մարդկային սուբյեկտը այնքան խստաբարո չէր, ինչպես ստոիկների մոտ, այն քան սկզբունքային չէր ինչպես էպիկուրյանների մոտ, և այնքան անհուսալիորեն անարխիկ չէր, ինչպես սկեպտիկների մոտ։ Մարդկային սոբյեկտը իրեն զրոնորել էր խիստ բազմազանորեն՝ սկսած իր անօրյա-կենցաղային դիրքորոշումներից և վերջացրած սենտիմենտալիզմի ու ումանտիզմի ու ցանկացած հոգեբանական քմահաճությունների բազմազան ձևերով, Վաղ հելլենիզմի այդպիսի երկու միտումներ կային, որոնք ոչ միայն գրական ազդեցություն էին ունենում Պլուտարքոսի վրա, այլև հաճախ նույնիսկ գերազանցում էին Պլուտարքոսի մոտ մարդու սուբյեկտիվ կողմնորոշման ձևերը։

Առաջին այդպիսի միտումը Պլուտարքոսի մոտ կենցաղագրությունն է և միանդամայն էալֆենիական անձնական կողմնորոշումը։ Այս կենցաղագրությունները էր լցված լինում Պլուտարքոսի անխտիր բոլոր տրամադրությունները և դա հասնում էր մինչև լիակատար անբունագրոսիկոսթյան, մինչև անբովանդակ շատախոսության և, կարելի է ուղղակի ասել մինչև դատարկաբանության։ Անտիկ գրականությունը ծանոթ և առաջին անգամ Պլուտարքոսի այնպիսի երկ իր ձեռքն առած ընթերցողը, ինչպիսին «Յոթ իմաստունների խնջույքն» է անտարակույս, իսկույնենթ կտրտմազրվի սլատոնյան ոճով։ Նա կսպասի որևէ խորը թեմայի մեթոդիկ մշակման, այդ թեմայով ճառերի ներդաշնակ մի շարքի այստեղ արտասանվող ճառերի կախարդիչ հետադարձական արվեստին և ճշմարտության ու գեղեցկության ձգտող մարդկային հոգիները սոկրատյան արվեստի ցնցող սրտկերներով բարուրելուն։ Նման ոչ մի բան հնարավոր չի գտնել Պլուտարքոսի «Խնջույք»-ում։ Այստեղ չկա ոչ մի գեղեցիկ ու խորիմաստորեն կառուցված ճառ, այստեղ նույնիսկ յժվար է ճշգրտորեն ձևակերպել որևէ թեմատիկա։ Այստեղ ամեն ինչ կառուցված է խոսակցությունների վրա, անսահմանորեն բազմազան գրույցների վրա և հաճախ՝ պարզապես ինչ որ դատարկաբանության որևէ ամեն քայլափոխի խանգարում է զանազանել գլխավորը երկրորդականից։ Երբ վաղ հելլենիզմի շրջանում հանդես եկավ նորատիկյան գուտ կենցաղային կատակերգությունը ապա այնտեղ դա, համենայն դեպս, հանգեցրեց բարքերի ու բնավորությունների պատկերման, և, ի տարբերություն Արիստոփանի խիստ սկզբունքային կատակերգություն, բիրեց գուտ կենցաղային իրադրությունների վերլուծություն ու քաղքենու ներքին հոգեբանություն։

Բայց Մենանդրոսից մինչև Պլուտարքոս անցել էր համենայն դեպս մի քանի հարյուրամյակ, և գուտ կենցաղային վերլուծություն-

ները Պլուտարքոսի ժամանակ արդեն հնացել էին: Մյո դեպքում էլ ինչ իմաստ ունեւ տասնյակ ու հարյուրավոր էջեր հատկացնել աուրյա թեմաներով սլարապ շատախոսությանը ո պատահական անհկոտներին: Իսկ Պլուտարքոսի համար այստեղ թաքնված է նույնիսկ շատ մեծ իմաստ: Այդպիսի համատարած կենցաղագրության հողի վրա հանդես էր գալիս մանր մաքրու հոգեբանությունը, հանդես էր գալիս վիթխարի ու շահագանց սուր պրոբլեմներից իրեն վտանգադերժելու միտումը: Կամ սվելի ճիշտ կլիների ասել սուր պրոբլեմներն այստեղից չէին վերանում այլ հոգեբանական հնարավորություն էր ստեղծում զրանք ալրեւ շատ հիվանդագնորեն և ոչ շատ ողբերգականորեն Մենանդրոսը պլատոնական էր ալ կենցաղի կենդանագրիչ: Բայց Պլուտարքոսը պլատոնական էր և պլատոնիզմի հետ մեկտեղ նրա առջև ուրվագծվում էին բազմ խորը հաճախ ողբերգական ու հաճախ անսանելի պրոբլեմներ: Նա ճարտարամտորեն տանում ու դիմանում էր այդ մեծ պրոբլեմներիս որոնք հաճախ իր համար նշանակալից և նույնիսկ հանդիսավոր էին բայց միշտ պահանջկոտ ու պատասխանատու: Մանր մարդու կենցաղագրությունն էլ հենց օգնում էլ Պլուտարքոսին պահպանելու իգու անդորրը և սնելուծելի ու անհնարին բաների առջև ծունկի չգալ Ահա թե ինչու նույնիսկ իր «Համեմատական կենսագրությունն էլում» Պլուտարքոսը պատկերելով մեծ մարդկանց ոչ միայն չի խուսափում որևէ կենցաղային մանրամասնությունից այլև հաճախ զրանց խորը նշանակություն է տալիս:

Հելլենիզմի սկզբնական ժամանակ սշրջանի կենցաղագրությունը ուներ վիթխարի նշանակություն Պլուտարքոսի և աշխարհայեցողության և գրողական յուրաձևության համար Բայց այդ սկզբը իական հելլենիզմի մեջ կար մի նույնպես նոր ու նշանավոր և նույնպես իր ոժով վիթխարի միտում, որը Պլուտարքոսի կողմից քննալված էր խորը կերպով, մեկընդմիշտ: Այդ միտումը կամ, ալելի լսվ է ասել, այդ հոգևոր տարերթը այն էր ինչ մենք այսօր պետք է անվանենք բարոյաբանություն:

Հունական վիլիստիայություն և գրականության համար դա սն այժման նորություն էր նրանով, որ ողջ դասականը և մանավանդ մինչդասականը երբեք չի իմացել ոչ մի հատուկ բարոյագիտություն: Բանն այն է, որ ողջ դասականությունն ապրում է հերոսականությամբ իսկ հերոսականությունը հնարավոր չէր սովորել հերոսությունը տրվում էր միայն բնությունից, այսինքն աստվածներից: Բուր հերոսներն էլ եղել էին աստվածների կամ ուղղակի, կամ անուղղակի սերունդները միայն Հերոսական սխրանքներ կասուել կարելի էր իհարկե միայն նախնական հերոսական նախադասություն անցնելուց հետո: Բայց հերոս դառնալն անհնար էր: Կարելի էլ միայն հերոս ծնվել և կատարելագործվել հերոսության մեջ: Բայց հին հունական դասական հերոսությունը մին կամարժական դաստիարակչական բնագավառ չէր հետևապես և ոչ

բարոյաբանական Հերոսութիւնն այն ժամանակներում բնամարդ կային բնութենամարդկային կամ, որ նույնն է աստվածային երեւոյթ էր Բայց ահա դասականութիւնը վերջացել էր: Եվ ի՞նչ:

Եվ այն որ հիմա՝ հելլենիզմի ժամանակաշրջանում, արդեն հանդես էր եկել ամենասովորական մարդը ոչ աստվածների ժառանգը ոչ բնածին հերոսը այլ ասարակ մարդը: Այդ սովորական մարդուն պետք էր շատ բան սովորեցնել անվերջ սովորեցնել: Իր առօրյա գործերի համար այդպիսի մարդը պետք է հատուկ դաստիարակվեր հատուկ սովորեր ու մարդկեր միշտ խորհուրդներ ստանար ալազներից ու ամենափորձառուներից: Եվ ահա հենց սչստեղ էլ ծնունդ ստավ այն բարոյագիտութիւնը որը անհայտ էր դասական հերոսին: Կարգին ու արժանավոր մարդ դառնալու համար պետք էր իմանալ հազարավոր անձնական հասարակական և ընդհանրապես վերցրած բարոյական կանոններ: Պետք էր միշտ մարդկել կյանքի ճիշտ ձևերին համապատասխան արժանիքների մեջ: Նույնիսկ պոեզիան ինքն էլ այն ժամանակներում հաճախ դառնում էր գիտական պոեզիա կարողանալով պահպանել հարյուրավոր ու հազարավոր հույժ գիտական կանոններ Հույները միշտ սիրել են հոեաորութիւնը՝ շքացառելով Պլատոնին ու Արիստոտելին: Նույնիսկ հոեաորութիւնն ձեռնարկներ էլ էին շարունակ հրապարակ գալիս արդեն դասականութիւնն ժամանակաշրջանում Բայց ինչի՞ վերածվեց այդ հոեաորութիւնը հելլենիզմի ժամանակաշրջանում:

Այն վերածվեց մանրախնդիր ու մանրակրկիտ գիտակարգի տեղի միանրանական անվերջ տարբերութիւններով և նրբագոյն ոճաբանական հրահանգներով: Եվ այդ խրթին մանկավարժութիւնը հոեաորական գործերում նույնպես գերազանցորեն հելլենիզմի սկզբնական շրջանի ստեղծածն էր, որքանով որ գիտութիւնը նույնպես վաղ հելլենիստական սոբյեկտիվիզմի միտումներից մեկն էր:

Եվ արդ, Պլուտարքոսը բարոյախոս է: Եվ ոչ միայն պարզապես բարոյախոս: Բարոյախոսութիւնը նրա ի կական սարերքն է, նրա ողջ ստեղծագործութիւնն անվերսպահ միտումը երբեք չմարող սերը և ինչ-որ մանկավարժական վայելքասիրութիւնը: Միայն թե սովորեցնի միայն թե խրստի միայն թե բացատրի դժվարին հարցերը, միայն թե իր լնթերցողին կանդենցնի մշտական ինքնավերլուծութիւն, մշտական ինքնաշտկման և աննահանջ ինքնակատարելագործման ճանապարհի վրա: Շատերը կարծում են թե նույնիսկ Կլոտարքոսի «Համեմատական կենսագրութիւնները» գրվել են բաց սուպես հանուն բարոյական նպատակների: Հետագայում մենք կօնենենք, որ դա է լորովին էլ այդպես չէր «Համեմատական կենսագրութիւններում» եղել են բազում այլ միտումներ ու մեթոդներ, այլ կերպարներ գրողական այլ հնարքներ: Բայց որ բարոյաբանութիւնը են տողորված բոլոր այդ «կենսագրութիւնները» (ուրիշ շատ գործերի հետ միասին) — այդ մասին վիճելն անիմաստ է:

իր սրտաբաց վերաբերմունքով ու նրանով, որ մանկական կամ փոքրանշանակ ոչ մի հարց չտվեց այլ հարցուփորձ արեց ճանապարհների երկարութեան, Պարսկաստանի խորքերում ճամփորդելու միջոցների մասին, իրենից՝ արքայից հարցրեց, թե իՆչպիսին է նա թշնամիների դեմ պայքարելիս, նաև թե ինչ ուժ ու հղորություն ունեն պարսիկները, — որ նրանք բավականին զարմացան և եկան այն եզրակացութեան, թե Փիլիպոսի փառաբանված ընդունակութունները խամբում են այդ տղայի մտքերի ու ձգտումների վեհութեան հանդեպ: Ամեն անգամ երբ լուր էր գալիս, թե Փիլիպոսը նվաճել է որևէ նշանավոր քաղաք կամ փառավոր հաղթանակ է տարել, Ալեքսանդրը լսելով, մռայլվում էր, և իր հասակակիցներին ասում (Տղանե՛ր, հայրս կհասցնի գրավել ամեն ինչ, այնպես որ ինձ ու ձեռ չի հաշտվելու որևէ մեծ ու փայլուն գործ կատարել): Զգտելով ոչ թե հաճույքի ու հարստութեան, այլ արիւթյան ու փառքի, Ալեքսանդրը կարծում էր, թե որքան ավելին ստանա հորից, ինքն այնքան քիչ բան կկարողանա անել: Մակեդոնյան հղորութեան աճը Ալեքսանդրի մեջ հրկյուղ էր ծնում, թե մինչև իր հանդես գալը բոլոր մեծ գործերը կատարված կլինեին, իսկ ինքն ուղում էր ժառանգել մի իշխանութուն, որը հղի լիներ ոչ թե պերճանքով, հաճույքներով ու հարստությամբ այլ՝ ճակատախալտերով պատերազմելու ու փառքի հար մղվող պայքարով:

Ինքնին հասկանալի է որ Ալեքսանդրի կրթությամբ զբաղվում էին բազում դաստիարակներ և ուսուցիչներ, որոնց գլխավորում էր Օլիմպիադաի ազգական Լեոնիդասը՝ խստաբարո մի տյուր: Թեև Լեոնիդասն ինքը չէր էլ ամաչում դաստիարակի ու դայակի իր կոչման համար, ըստ էութեան գեղեցիկ ու արժանավոր մի կոչման, բայց նրա և նրա ալ հակցական կապերի հանդեպ ունեցած հարգանքից՝ ամենքը Ալեքսանդրի դեկավար ու դաստիարակ էին սնվանում նրան: Իսկ իր դիրքով ու կոչումով դայակը Լիսիմաքոսն էր ծագմամբ ակարնանցի: Այս մարդու մեջ նրբութեան նշույլ իսկ չկար բայց միայն նրա համար, որ նա իրեն Փինիկե էր անվանում Ալեքսանդրին Աքիլլես, իսկ Փիլիպոսին Պելլոս նրան բարձր էին գնահատում և դաստիարակների մեջ հրկրորդ տեղն էր բռնում:

VI Թեսալացի Փիլոնիկոսը Փիլիպոսի մոտ բերեց Բուկեֆալոսին առաջարկելով գնել տասներեք տաղանդով, և, որպեսզի փորձեին, դաշտանեցին: Բուկեֆալոսը վարի ու անսաստ նժույզ դուրս եկավ Փիլիպոսի շրախմբից ոչ ոք չէր կարողանում դրան ստիպել, որ իրեն լսի ոչ ոքի թույլ չէր տալիս հեծնել և ամեն անգամ ծառս էր լինում: Փիլի

պոսը բարկացավ և հրամայեց տանել Բուկեֆալտսին, մտածելով, որ դրան ընտելացնելն անհնար է: Այնժամ Ալեքսանդրը, որ ներկա էր, ասաց. «Ինչպիսի նժույզ են կորցնում այս մարդիկ միայն նրա համար որ սեփական վախկոտության ու անճարակության պատճառով չեն կարողանում սանձահարել»: Փիլիպոսն սկզբում լռեց, բայց երբ Ալեքսանդրը մի քանի անգամ վշտացած կրկնեց այդ խոսքերը, թագավորն ասաց «Ինչ հանդիմանում ես ավագներին, իբր թե նրանցից ավելի շատ բան ևս հասկանում կամ ավելի լավ ես կարողանում ձեռ հետ վարվել»: — «Սրա հետ, համենայնդեպս, ես ավելի շատ լեզու կգտնեմ, քան ուրիշ որևէ մեկը» — պատասխանեց Ալեքսանդրը: «Իսկ եթե չգրտնես, ի՞նչ պատիժ ես կրելու հանդգնությանդ համար», — հարցրեց Փիլիպոսը: «Երդվում եմ Ձևսով, — ասաց Ալեքսանդրը — ևս կվճարեմ այն քան, որքան ձին արժե»: Ծիծաղ բարձրացավ, իսկ սպա հայր ու որդի գրազ կկան՝ ձեռ գնի շափով: Ալեքսանդրն իսկույն ձեռ մոտ վազեց, բռնեց սանձը և ինուժը դարձրեց դեպի աջը քսո երևույթին, նա սկսեց էր, որ ձին վախենում է՝ իր առաջ տեսնելով իր տատանվող տավերը: Ալեքսանդրը որոշ ժամանակ ձեռ հետ կողք կողքի վազեց՝ շոյելով նրան: Համոզվելով, որ Բուկեֆալտսը հասզարտվել է և շնչում է լիաթոք, Ալեքսանդրը վրայից նետեց թիկնոցը ու թեթև թոփշբով ցատկեց ձեռ մեջքին: Սկզբում մի փուր ձեռ տալով երեսանակը, նա զբսպում էր Բուկեֆալտսին՝ շափելով ձեռն և սանձը լիափահարելով: Իսկ երբ Ալեքսանդրը տեսավ, որ ձեռ բարքն աչկա չի սպառնում որևէ դժբախտությամբ և որ Բուկեֆալտսը առաջ է նետվում նա ձեռն աղատություն տվեց և նույնիսկ սկսեց բարձր բացահայնչություններ արձակելով ու ոտքերով խփելով բշեղ: Փիլիպոսն ու իր շքախումբը, սազնապով հախակված սեղվել մնացել էին, բայց երբ Ալեքսանդրը բոլոր կանոններով ձեռ գլուխը շուռ տալով՝ հպարտ ու հրճագին վերադարձավ նրանց մոտ բոլոր ներկաները գոռում գոչչունով դիմավորեցին: Հայրը ինչպես ասում են, ուրախությունից նույնիսկ արտասվեց, հասքուրեց ձեռց իջած Ալեքսանդրին ու ասաց «Ձավա կս, քեզ վայել մի այլ թագավորութուն փնտրիր քան զի Մակեդոնիան շափսզանց իոթը է քեզ համար»:

VII Փիլիպոսը տեսնում էր, որ Ալեքսանդրը բնականից համառ է, իսկ երբ բարկանում է, ապա չի դիչում ոչ մի բանության առաջ, բայց դրա փոխարեն խելացի խոսքով կարելի է նրան միտել դեպի ձիշտ որոշման ընդունումը. ուստի հայրը ձգտում էր ավելի շատ համոզել, քան հրաժայել նրան: Փիլիպոսը չէր համարձակվում որդու ուսուցումն

ու դաստիարակութիւնը լիովին վստահել երաժշտութեան ու հանրակրթական ալ դիտութիւններին ուսուցիչներին, համարելով որ դա շահագանց բարդ գործ է և ինչպես Ս փոկլեան է ասում

Ղեկ է պետք այդտեղ և ամբողջ սանձ

Ուստի արքան կանչեց Արիստոտելին հուշի փիլիսոփաներից ամենանշանավորին ու գիտունին, իսկ ուսուցման համար նրան վարձահատույց եղավ գեղեցիկ ու արժանավոր ձևով Փիլիսոսը վերականգնեց իր իսկ կողմից ավերված Ստագիրան՝ Արիստոտելի հայրենի քաղաքը, և այնտեղ վերադարձրեց փախած կամ ստրկութեան մեջ գտնվող քաղաքացիներին Պարապմունքների ու զրույցների համար նա Արիստոտելին և Ալեքսանդրին հատկացրեց Միեզայի մոտի նիմֆերին նվիրված պուրակը, որտեղ մինչև հիմա էլ ցույց են տալիս այն քարն նստարանները որոնց վրա նստել է Արիստոտելը, և այն սավերոտ տեղերը, որ տեղ նա գրոսնել է իր աշակերտի հետ: Ալեքսանդրն, ըստ երևույթի ոչ միայն յուրացրել է բարոյականութեան ու պետութեան լերաբերջալուսմունքները, այլև հաղորդակցվել է խորհրդավոր առավել խորը ուսմունքներին, որոնք փիլիսոփաներն անվանում էին «բանավոր» կամ «թաքուն» և չէին ենթարկում լայն հրապարակման Ալեքսանդրը, երբ արդեն Ասիայում էր, իմացավ, որ Արիստոտելը այդ ուսմունքներից մի բանիսը հրապարակել է դրքերում և ի պաշտպանութուն փիլիսոփայութեան, նրան սրտաբաց մի նամակ գրեց, որի տեքստում ասված է «Ալեքսանդրն Արիստոտելին դանկանում է բարեհաջողութունն Դու ճիշտ շեռ վարվել՝ հրապարակելով միայն բանավոր դասավանդման համար նախատեսված գիտութիւնները: Մէք էլ ինչո՞վ պիտի տարբերվենք մնացած մարդկանցից եթե հենց այն գիտութիւնները, որոնց վրա դաստիարակվել էք դառնում էք ընդհանուր սեփականութիւն: Ես կուզենայի գերազանցել ուրիշներին ոչ այնքան հզորութեամբ, որքան բարձրագույն առարկաների մասին իմ գիտելիքներով: Ողջ լեր»: Հանգստացնելով Ալեքսանդրի խոցված փառասիրութիւնը, Արիստոտելն արդարանում է պնդելով, թե այդ գիտութիւնները թեև հրապարակված են, բայց դրա հետ միասին ասես թե չեն հրապարակված Եվ իրոք, բնութեան մասին աշխատութիւնը սկզբից և՛ թ նախատեսված է կրթված մարդկանց համար և բոլորովին պիտանի չէ ո՛չ դասավանդման ո՛չ էլ ինքնուրույն ուսումնասիրման համար:

VIII Ինձ թվում է, թե բուժարարութեան նկատմամբ սերն էլ Ալեքսանդրին ներշնչել է ոչ այլ ոք քան Արիստոտելը Արքան հետաքրքրվում

էր այդ գիտութեան ոչ միայն վերացական կողմով այլ, ինչպէս կալելի է հզրակացնել նրա նամակներից, օգնութեան էր Վասնում հիվանդ բարեկամներին՝ նշանակելով բուժման տարբեր եղանակներ ու բուժակ, նուստում: Ալեքսանդրը բնականից հակված էր դեպի գիտութեանն երկուսումնասիրումն ու գրքերի ընթերցանութեանը նա կարծում էր, և հաճախ էր խոսում այդ մասին թե «Իլիականի» ուսումնասիրումը լավ մէջոց է ուղղական արիւթեան հասնելու համար: «Իլիականի» ձեռագիրը, որը շտկված էր Արիստոտելի կողմից և հայտնի է «Արկղիկի Իլիական» հորշորջմամբ միշտ հետն էր և սրահում էր բարձի տակ դաշուլնի կողքին, ինչպէս հաղորդում է Օնեսիկրիտեսը Քանի որ Ասիայի խորքերում Ալեքսանդրը ձեռքի տակ ունէ այլ գիրք շունկը Հարպալոսը արքայի հրամանով նրան ուղարկեց Փիլիստոսի երկերը, Եվրիպիդեսի Սոփոկլեսի և էսքիլեսի ողբերգութեաններից շատերը, ինչպէս և՛ Տելեստոսի և Փիլոքսենեսի ներբողները: Ալեքսանդրն սկզբում հապուրվել էր Արիստոտելով և, նրա ասելով ուսուցչին սիրում էր ոչ պակաս, քան իր հորը, և ասում էր թե Փիլիպոսին է պատաճան, որ ապրում է իւր Արիստոտելին որ ապրում է արժանապատվութեամբ: Հետագայում արշան սկսեց Արիստոտելին վերաբերվել կասկածամտութեամբ սակայն ոչ այնքան, որ նրան որեւէ լիսա պատճառը, բայց փիլիսոփայի հանդեպ նրա սիրո ու կապվածութեամբ թուլացումն արդեն իսկ խորթացման վկայութեան էր: Այնուամենայնիվ փիլիսոփայութեան հանդեպ բնածին և մանկութեանից պատվաստված եռանդն ու կիրքը շմարեցին Ալեքսանդրի Վոլում ինչպէս դա ապացուցում են այն պատիվները, որ նա ցույց էր տալիս Անաքսարքոսին, այն հիսուն տաղանդը, որ ուղարկեց Քսենոկրատեսին և հոգացութեանը Դանդամիսի ու Կարանոսի նկատմամբ:

IX Եւր Փիլիպոսն արշավանքը դուրս եկավ լյուզապոսիների դեմ, Ալեքսանդրը, որը դեռ տասնվեց տարեկան էր, մնաց որպէս Մակեդոնիայի տիրակալ և նրան էր վստահված պետական կնիքը Այդ ժամանակաշրջանում Ալեքսանդրը հնադանդիցրեց ապստամբած մեղերին, գրավեց նրանց քաղաքը, այդտեղից դուրս քշեց բարբարոսներին և քաղաքը բնակեցնելով տարբեր տեղերից եկած դաղթականներով՝ անվանեց Ալեքսանդրոպոլիս: Ալեքսանդրը նաև մասնակցեց հույների դեմ մղված ճակատամարտին Քերոնեայում և ասում են առաջինը կովի նետվեց թերեացիների սրրազան շոկատի դեմ: Մեր օրերում էլ ցույց են տալիս Կեփիսոս գետի ափի այն հին կաղնին այսպէս կոչված Մլեք անդրի

կազմին, որի մոտ խփված է եղել նրա վրանց քիչ հեռվում մակեդոնացիների շիրիմներ են: Այդ բոլորի համար Փիլիպոսը, բնականաբար, շատ էր սիրում որդուն, այնքան, որ նույնիսկ ուրախանում էր, երբ մակեդոնացիք Ալեքսանդրին անվանում էին իրենց ալքան, իսկ Փիլիպոսին՝ գորավարը:

Այնուամենայնիվ Փիլիպոսի ամուսնությունների ու սիրալին արկածների պատճառով արքայական ընտանիքում տեղի ունեցող անախորժությունները նրա տան կանացի կեսի սահմաններն անցնում էին և սկսում ազդել պետական գործերի վիճակի վրա: Դա ծնունդ էր տալիս բազմաթիվ բողոքների ու դաժան երկպառակությունների, որոնք սովելի էին սաստկանում Ալեքսանդրին անընդհատ հոր գեմ ըմբոստության մկոզ իանդոտ ու կովաղան Օլիմպիադայի ծանր բնավորության պատճառով: Ամենասուր վեճը նրանց միջև տեղի ունեցավ Ատտալոսի մեղքով, Կլեոպատրայի հարստների ժամանակ, մի երիտասարդ ազգկաորի հետ Փիլիպոսը ամուսնանում էր, սիրահարվելով նրան՝ շնայած իր տարիքին: Ատտալոսը՝ հարսանացուի քեռին, խնջուլքի ժամանակ հարբելով, սկսեց երիտասարդներին կոչ անել աղոթելու աստվածներին, որ պեսզի Փիլիպոսն ու Կլեոպատրան անենան դահի օրինական ժառանգորդ: Ալեքսանդրը, գրանից կատաղած գոռաց «Սրիկա՛, այդ ինչպե՛ս, ուրեմբն քո կարծիքով ես բի՞ճ եմ, հա՞» — և դավաթը շարտեց Ատտալոսի վրա: Փիլիպոսը նետվեց դռալի որդին՝ մերկացնելով սուրը, բայց ի երջանկություն երկուսի գալլուլթն ու գինին իրենց գործն արեցին արքան սալթաքեց ու բնկավ: Այլ բանդրը հորը ձեռ աննելով՝ ասաց «Տեսեք, մարդի՛կ Այս մարդը, որը պատրաստվում է Եվրոպայից Սսիա անցնել, փռվել է մս հճից մահին անցնելիս»: Հարբած հոր հետ տեղ ունեցած վեճից հետո Ալեքսանդրը Օլիմպիադային առավ տարավ էպլրոս այնտղ ապրելու, իսկ ինքը հաստատվեց Իլլիրիայում: Այդ ժամաւակ կորնթացի Դեմարատոսը որն արքայական տան հետ կապված էր հյււրընկալության կապերով և դրա համար օգտվում էր թագավորի հետ աղատարեն խոսելու իրավունքից, եկավ Փիլիպոսի մոտ: Ողջույնի խոսքերից ու հաճոյախոսություններ փոխանակելուց հետո, Փիլիպոսը հարցրեց նրան թե ինչպե՛ս են հույները միմյանց հետ: «Ի՛նչ ասել կուզի Փիլիպո՛ս, ուրիշ ոչ այլ որ քան դո՛ւ ես մտահոգվում Հունաստանի վիճակով, — պատասխանեց Դեմարատոսը — դո՛ւ որ սեփական տունդ գծտությունների ու դժբախտությունների բուլն ես դարձրել»: Սյս խոսքերը Փիլիպոսին ստիպեցին խելքը դուրսը հավաքել և նա Ալեքսանդրի

մտտ մարդիկ ուղարկեց Դեմարատոսի միջնորդութեամբ համոզելով, որ տուն վերադառնա:

X Երբ Պիկտոգարոսը Կարիաչի սատրապը, ձգտելով ուղղմական դաշինք կնքել Փիլիպոսի հետ՝ մտածեց խնամիութեամբ կապվել և իր սվազ դստերն առաջարկեց արքայազն Արիդեոսին, նա այդ նպատակով Մակեդոնիա ուղարկեց Արիստոկրիտոսին: Նորից ասեկոսեհներ ծայր առան Ալեքսանդրի բարեկամներն ու մաշրը սկսեցին շարախոսել նրա որ հասցեին, պնդելով, թե Փիլիպոսը փայլուն ամուսնութեամբ և ամուր կապերով ուղում է Արիդեոսի համար, արքայական իշխանութիւնն ապահովել: Երանից խիստ անհանգստացած՝ Ալեքսանդրը սղբերգակ գերասան Թեսալոսին ուղարկեց Կարիս հանձնարարելով, որ նա համոզի Պիկտոգարոսին մերժել ապօրինածին¹, բացի այդ, տկարամիտ Արիդեոսին, իսկ դրա փոխարեն բարեկամանալ իր Ալեքսանդրի հետ: Այս ծրագիրը չախորդից շատ ավելի դուր եկավ Պիկտոգարոսին: Իմանալով այդ Փիլիպոսը...՝ մտավ Ալեքսանդրի սենյակը նրա մտերիմ բարեկամներից մեկի՝ Փիլոտոսի՝ Պարմենիոնի որդու հետ Սրբան դառնորեն նախատեց որդուն և թոնգ անպատվեց նրան՝ անվանելով ստոր, իր լարձը դիրքին անարժան, քանի որ ուղում է փեսան դառնալ կարիացու, որը բարբարոսների թագավորին է ենթակա: Իսկ կորնթացիներին էլ Քիլիպոսը նամակ գրեց, որպեսզի նրանց Թեսալոսին շղթայելով, ուղարկեն Մակեդոնիա Ալեքսանդրի մնացած լարեկամներից Փիլիպոսը Մակեդոնիացից արատարեց Հարպալուին, Ստարքոսին, ինչպես և էրիզիոսին ու Պաղմոնոսին: Հետագայում Ալեքսանդրը հետ վերադարձրեց նրանց ու մեծա իժ պատիվների արժանացրեց:

Երբ Պալսանիասը, որը ծանր վիրաւորանք էր ստացել Ատտալոսի ու Կլեոպատրաչի պատճառով, արդարութիւն չգտալ Փիլիպոսի մտտ և սպանեց նրան, ապա այս հանցագործութեան մեջ ավելի շատ մեղաւորում էին Օլիմպիադաչին, պնդելով, թե իբր նա է մուկեղնած երիտասարդին նախապատրաստել ու դրդել այդ գործողութեանը: Մեղադրանքի իր բաժինն ստացավ նաև Ալեքսանդրը ասեկոսեհներ կաշին, թե, վիրավորվելուց հետո, երբ Պալսանիասը հանգիպել է Ալեքսանդրին և տրրտրնջացել իր բախտից սա նրան պատասխանել է «Մեղեա»-ի մի տողով

Վրեժ լո՛ ծել բոլորից հորից հարսից փեսայից

¹ Տեքստը վնասված է

Չնայած դրան, գտնելով դավադրության մասնակիցներին Ալեքսանդրը պատժեց նրանց և շատ էր վրդովվել, որ Օլիմպիադան իր բացակայութեամբ դաժան դատաստան է տեսել Կլեոպատրայի հետ:

XI Այսպես ուրեմն քսան տարեկանում Ալեքսանդրը ստացավ թագավորութունը, ու ին հարեանների ուժովն նախանձի ու սարսափելի ատելութեան պատճառով բոլոր կողմերից վտանգ էր սպառնում: Բարբարոս ցեղերը շէին ցանկանում ստրուկ լինել, այլ ձգտում էին վերականգնել ի սկզբանե գոյութիւն ունեցած իրենց թագավորական իշխանութիւնը: Իսկ ինչ լերաբերում է Հունաստանին ապա Փիլիպոսը, որը զենքի ուժով հպատակեցրել էր այն, շէր հասցրել սակայն հույներին ստիպել որ հաշտվեն ու հնազանդորեն կրեն իրենց լուծը Փիլիպոսը միայն տակնուվրա էր արել ու խառնել այնտեղ ամեն ինչ՝ երկիրը թողնելով մեծ մասնատվածութեան և ալեկոծութեան մեջ, որն առաջացել էր իրերի անսովոր ընթացքի պատճառով: Այս ամենը մակեդոնացիներին երկչուղ էր ներշնչում և նրանք կարծում էին թէ Ալեքսանդրը բնավ չպետք է խառնվի Հունաստանի գործերին և բռնութիւն գործադրի այնտեղ, այլ պետք է ապստամբած բարբարոսներին հնազանդութեան բերի շղիմելով դաժան միջոցների և ջանալով ոչնչացնել հեղաշրջման փորձերը: Ալեքսանդրը հակառակ կարծիքի էր և ձգտում էր անվտանգութիւն ձեռք բերել ու դրութիւնը փրկել հանդգնութեամբ և քաջութեամբ, քանզի ենթադրում էր թէ իր կողմից նվազագույն զիջողութիւն թույլ տալու դժպտում իսկ, բոլոր թշնամիները տեղնուտեղը իր վրա կթափվեն: Բարբալոսների հուզումներին ու նրանց հողերում մղվող պատերազմներին նա իսկույննեթ վերջ սովեց զորքով արագորեն անցնելով մինչև Իստրուգիտը, որտեղ մեծ ճակատամարտում ջախջախեց տրիբալների թագավոր Սիրմոսին: Իմանալով, որ թերևոցիներն ապստամբել են և որ աթենացիները դաշինքի մեջ են նրանց հետ, Ալեքսանդրն անհապաղ իր զորքն անցկացրեց Թերմոպիլեով և հայտարարեց, որ ինքն ուզում է, որպեսզի լեմոսթենեսը, որը նրան երեխա էր անվանել երբ կուլում էր իլլիրիացիների ու տրիբալների դեմ, և պատանի, երբ հասել էր Թեսալիա Աթենքի պարիսպների տակ տղամարդ տեսներ իրեն: Թերեին մոտենալիս, Ալեքսանդրը, ցանկանալով մի անգամ ևս բնակիչներին հնարավորութիւն տալ զղջալու կատարվածի համար, պահանջեց իրեն հանձնել միայն Փյունիկեին ու Պրոտիտեսին և խոստացավ չպատժել նրանց, ովքեր որ իր կողմը կանցնեին: Թերեացիներն իրենց կողմից պահանջեցին հանձնել Փիլոտասին և Անտիպատրոսին ու կոչ արեցին իրենց կողմն անցնել բոլոր նրանց ովք՛ր ուզում են օգնել հույների ազատա

գրմանը: Այնժամ Ալեքսանդրը մակեդոնացիներին հրամայեց սկսել ճակատամարտը Թեբեացիները կռվում էին արիությամբ ու խիզախորեն, ավելին քան իրենց ուժն էր պատում դիմադրություն ցույց տալով բազում անգամ մեծաքանակ թշնամուն: Բայց և այնպես, երբ մակեդոնական կայազորը որ գրավել էր Կադմեան, դուրս գալով բերդից հարձակվեց նրանց վրա Թեբեացիների մեծամասնությունը շրջապատման մեջ ընկավ և զոհվեց ճակատամարտում, Քաղաքը գրավվեց կողոպտվեց ու շնչվեց էրկրի էրեսից: Ալեքսանդրը հույս ուներ, որ հույները, ցնցված այդպիսի ատեփից, այսուհետև սարսափից հանգստություն կպահպանեն: Բայց այդ, նա իր գործողություններն արդարացնում էր նրանով որ բալարարեւ էր դաշնակիցներին քանդի փոկեյացիները և պլատացիները մի շարք մեղադրանքներ էին առաջ քաշում ընդդեմ Թեբեացիների: Ինչպես լուր միայն քրմերին և այն քաղաքացիներին որոնք մակեդոնացիների հետ կապված էին հյուրընկալության կապերով, Պինդարոսի սերունդներին, ինչպես և նրանց ովքեր քվեարկել էին ընդդեմ ապստամբության, Ալեքսանդրը մնացած բոլորին ստրկության վաճառեց, իսկ գրանք երեսուն հազարից ավել դուրս եկան Սպանվածները վեց հազարից ավել էին:

XII Քաղաքի գլխին եկած բազմաթիվ աղետների և դժբախտությունների շարքում տեղի է ունեցել նաև հետեյալը: Մի քանի թրակացիներ ներխուժել են Տիմոկլեայի՝ առաքինի ու բարի համբավի տեր մի կնոջ, տուն: Մինչ թրակացիք թալանելիս են եղել Տիմոկլեայի ունեցվածքը, գրանց իմբապետը բռնություններ տիրացել է այդ կնոջը իսկ հետո հարցրել նրան թե որևէ տեղ չի՞ թաքցրել ոսկի կամ արծաթ: Տիմոկլեան դասկան պատասխան է տվել և թրակացուն տանելով այդի ցուց է տվել ջրհորը, րտեղ, իր ասելով, քաղաքը գրավելիս, զցել է իր գանձարանի ամենաթանկագին բաները: Թրակացին կոացել է ջրհորի վրա որ մեջը նայի, իսկ ևսուր կանգնած Տիմոկլեան նրան ներքև է հրել ու վրան քարեր շարտել այնքան մինչև որ սպանել է թշնամուն: Երբ կապկաված Տիմոկլեային բերել են Ալեքսանդրի մոտ արդեն քաջվածքից ու կեցվածքից կարճի էր դատել այդ կնոջ ոգու վեհություն մասին՝ այնքան հանդարտ ու աներկյուղ է հետևել նա իրեն տանող թրակացիներին: Արքայի այն հարցին, թե ով է նա Տիմոկլեան պատասխանել է, որ ինքը գուստրն է զորավար Թեագենեսի, որը կրովել է Փիլիպոսի դեմ հանուն հույների ազատության և ընկել Քերոնեայի մոտ: Ապշած նրա պատասխանից ու նրա արարքից Ալեքսանդրը հրամայել է ազատ արձակել և՛ կնոջը և իրա երեխաներին:

XIII Ալեքսանդրը խաղաղության դաշինք կնքեց աթենացիների հետ, ընայած նրանք մեծ կարեկցանք էին արտահայտում Թերեին հասած դժբախտության առթիվ թեև արդեն սկսվել էին կրոնաժխտակատարությունները, բայց նրանք ի նշան սգո՝ չկատարեցին տոներ և ամեն կերպ աջակցեցին Թերեից եկած փախստականներին: Կամ այն պատճառով, որ Ալեքսանդրը, առույծի նման արդեն հագուրդ էր տվել իր զայրույթին, կամ էլ, որ նա ուզում էր դաժանագույն և անմարդկային գործունեությանը հակադրել դժասիրտ արարք այնուամենայնիվ արքան ոչ միայն ներեց աթենացիներին նրանց բոլոր հանցանքները, այլև նույնիսկ նրանց հրահանգ տվեց հետևել երկրի գործերի վիճակին նրա միտքն այն էր, որ եթե իրեն մի բան պատահի, հատկապես աթենացիներին սպասվում է շունաստանի կառավարման գործը: Ասում են, հետագա ում Ալեքսանդրը շատ անգամ է ափսոսանք հայտնել թերեացիների դիտին եկած աղետի առթիվ, և դա նրան ստիպում էր թերեացիներից շատերի հետ դժաստությունք վերաբերվել: Դեռ ավելին, Կլիտոսի սպանությունը որ նա կատարել էր հարբած վիճակում և հնդիկների դեմ արշավանքից մակեդոնացիները վախկոտ հրաժարումը, հրաժարում սրբ նրա արշավանքը անկատար թողեց, իսկ փառքը՝ թերի,— այս բոլորն Ալեքսանդրը վերագրում էր Դիոնիսոսի զայրույթին ու վրեժխնդրությանը, Կենդանի մնացած թերեացիներից չէր զրկում ոչ մեկը, որը հետագայում զար արքայից որևէ բան խնդրելու և մերժում ստանար: Ահա այն, ինչ վերաբերում է Թերեին:

XIV Հավաքվելով Բստմոսի ափին և որոշելով Ալեքսանդրի հետ պատերազմի գնալ պարսիկների դեմ՝ հունները Նրան իրենց առաջնորդը հռչակեցին: Այս կապակցությամբ շատ պետական գործիչներ ու փիլիսոփաներ գալիս էին և արքային արտահայտում իրենց ուրախությունը Ալեքսանդրը ենթադրում էր, թե նույնկերպ կվարվի նաև սինոպցի Դիոգենեսը, որն այն ժամանակ ապրում էր Կորնթոսի մոտերքը: Սակայն Դիոգենեսը բոլորովին մտքովը շանցիս ցնելով Ալեքսանդրին հանգիստ ապրում էր Կրանիոնում, և արքան ինքը գնաց նրա մոտ: Դիոգենեսը պառկած տաքանում էր արևի տակ իրեն մոտեցող այդքան մարդկանց բազմությունը տեսնելով՝ փիլիսոփան տեղից մի քիչ բարձրացավ, սենուն նայեց Ալեքսանդրին: Բարևելով, թագավորը Դիոգենեսին հարցրեց թե շունի՞ արդյոք որևէ խնդրանք: «Մի քիչ գե՛նը քաշվիր,— պատասխանեց նա,— արևի դեմը մի՛ փակիր»: Ասում են Դիոգենեսի խոսքը վիթխարի տպավորություն է թողել Ալեքսանդրի վրա և նա հիացել է այդ մալղու հոգու հպարտությամբ ու վսեմությամբ որ այդպիսի ար

համարհանքով է վերաբերվել իրեն: Վերադարձի ճանապարհին նա ասել է իր ուղեկցիներին՝ կատակելով ու ծիծաղելով փիլիսոփայի վրա «Ծթե ես Ալեքսանդրը շինեի, կուզենայի Դիոգենեսը լինել»:

Յանկանալով հարցում անել աստծուն առաջիկա արշավանքի մասին, Ալեքսանդրը ժամանեց Դելփիք Այնպես պատահեց, որ նրա ժամանումը համընկավ դժբախտ օրերից մեկի հետ, երբ օրենքը չի թույլատրում կանխագուշակում անել: Սկզբում Ալեքսանդրը մարդ ուղարկեց գուշակուհու հետևից, բայց քանի որ նա, ըստ օրենքի հրաժարվեց գալ, Ալեքսանդրն ինքը գնաց նրա մոտ, որպեսզի գոռով քարշ տար բերեր տաճար: Այնժամ քրմուհին, զիջելով թագավորի համառությանը, բացականը «Դու անպարտելի՛ ես, տղա՛ս»: Հսելով այս: Ալեքսանդրն ասաց, թե էլ կարիք չունի գուշակության, քանի որ արդեն ստացել է այն գուշակությունը, որ պակասում էր ւտահալ

Երբ Ալեքսանդրը արշավանքի դուրս եկավ այլ նախանշանակների շարքում, որ ցույց էր տվել աստվածությունը, կար և այսպիսին այդ օրերին Լիբեթրայում գտնվող Օրփևսի փայտե քանդակից (կերտված էր նոճու փայտից) առատորեն քրտինք էր կաթում: Բոլորը վախենում էին այդ նախանշանակից, բայց Ալեքսանդրոսը կոշ արեց լիորցնել արիությունը, ասելով, թե Ալեքսանդրը երգերի ու ասերի արժանի սխրանքներ կգործի, և դրանով իսկ երգիչներին ու հիմներ հարիսուղներին կստիպի քրտնել ու շարշարվել

XV Ալեքսանդրի գորգը բաղկացած էր, ըստ նրանց հաղորդումների, ովքեր մատնանշում էն նվազագույն թիվ, Էրեսուն հազար հետևակից ու շորս հազար հեծյալից, իսկ ըստ նրանց տեղեկությունների, ովքեր առավելագույնն են հաշվում՝ քառասուն հազար հետևակից ու հինգ հազար հեծյալից: Զորքը պահելու համար Ալեքսանդրն ունի, ինչպես հաղորդում է Արիստոբուլոսը, ոչ ամելի քան յոթանասուն հազար տաղանդ: Դուրիսի ասելով, ուներ միայն երեսուն օրվա լյարես Բացի այդ Օնե սիկրիտոսի տեղեկությունների համաձայն, թագավորը պարտք էր վերցրել երկու հարյուր տաղանդ: Չնայած, որ Ալեքսանդրը արշավանքի դուրս գալիս ձեռքի տակ այսքան քիչ բան ուներ և միջոցները սուղ էին բայց էլի նախքան նավ բարձրանալը տեղեկանում էր իր բարեկամների նյութական դրություն մասին և մեկին կալվածք էր շնորհում, մյուսին գյուղ, երրորդին՝ եկամուտներ որևէ բնակավայրից կամ նավահանգստից: Երբ, վերջապես, համարյա բոլոր թագավորական ունեցվածքը բաժանված էր, Պերդիկասը հարցրեց նրան «Արքա իսկ քե՞զ ինչ ես թողնում»: «Շույ-

սեր», — պատասխանեց Ալեքսանդրը «Այդ դեպքում, — ասաց Պերուի կասը, — մենք էլ, որ մեկնում ենք քեզ հետ, ցանկանում ենք դրանց մեջ մեր բաժինն ունենալ»: Պերդիկասը հրաժարվեց իրեն ջնարհված ունեցվածքից, և Ալեքսանդրի բարեկամներից մի քանիսը հետևեցին սրա օրինակին: Իսկ նրանց էլ, ովքեր խնդրում էին և ընդունում նրա բարեբարությունը, Ալեքսանդրը սիրով էր նվիրում, և այդպիսով բաժանեց համարյա այն ամենը, ինչ ուներ Մակեդոնիայում

Այսպիսի վճուպանությունը և այսպիսի մտածելակերպով Ալեքսանդրը անցավ Հելլեսպոնտոսը ժամանելով Իլիոն՝ Ալեքսանդրը Աթենասին զոհեր մատուցեց և հեղում կաաարեց հերոսների պատվին: Աքիլլեսի շիրմաքարի մոտ սովորության համաձայն, սա օժեց մարմինը և հուշարձանի շուրջը մերկ վիճակում վազքի մրցման մտավ ընկերների հետ Ապա պսակ դնելով նա ասաց որ Աքիլլեսին երջանիկ է համարում որովհետև կենդանության օրոք՝ անձնվեր բարեկամ իսկ մահից հետո իր փառքը տարածող մեծ մունետիկ է ունեցել: Երբ արքան անցնում էր Իլիոնի միջով և դիտում տեսարժան վայրերը, ինչ որ մեկը նրան հարցրեց, թե չի՞ ցանկանում տեսնել Ալեքսանդրի քնարը: Թագավորը պատասխանեց, թե դա իրեն բոլորովին չի հետաքրքրում, ինքն Աքիլլեսի քնարն է փնտրում որի նվազի տակ նա էրգում էր փառքն ու սխրանքը խիզախ այրերի:

XVI Այդ ընթացքում Գարեհի զորավարները մեծ զորք էին հավաքել և շարել Գրանիկոնի գետանցման ճանապարհին: Ճակատամարտն անխուսափելի էր, քանզի այդ տեղը ա ես թե Ասիայի դարպասն էր, և որպեսզի ներխուժումն սկսեին, պետք է կովեն մուտքի իրավունքի համար: Սակայն շատերին վախեցնում էր գետի խորությունը, դիմացի ժեռուտ ու գիրթ ափը որը պետք էր կովով գրավել: Ոմանք ենթադրում էին նաև որ պետք է հաշվի առնել գետինն ամսվա վերաբերյալ սահմանված սովորույթը այդ ամսին Մակեդոնիայի թագավորները սովորաբար արշավանք չէին սկսում: Սակայն Ալեքսանդրը շտկեց գործը հրամայելով այդ ամիսը կոչել երկրորդ արտեմիսիոն: Պարմենիոնին, որը պնդում էր թե օրվա այսպիսի ուշ ժամի դիտանցումը լափազանց վտանգավոր է Ալեքսանդրը պատասխանեց թե ինքը ամոթով կմնա Հելլեսպոնտոսի առջև, եթե նեղուցն անցնելուց հետո վախենա Գրանիկոնից, և արքան ձիավորների տասներեք իլեով նետվեց գետը Նա հակառակորդի նիզակների ու նետերի հանդիման, զորքը տարավ դեպի գիրթ ժայռերը, որոնք բռնված էին թշնամու հետևակի ու հեծելազորի կողմից տարավ գետի միջով որի հոսանքը քշում էր ձիերին և ջուրը հեծ

յալնորին ծածկում էր մինչև գլուխները, ու թվում էր, թե Ալեքսանդրին ոչ թե բանականութունն է ղեկավարում, այլ՝ խելահեղութունը և որ նա գործում է խենթի պես: Ինչ էլ որ լիներ, Ալեքսանդրը շարունակեց գետանցումը և ուժերի ահռելի լարման գնով տիրեց հակադիր՝ թաց ու լպրծուն կավահող ափը: Հարկ եղավ անմիջապես սկսել անկանոն մի ճակատամարտ. զորականները առանձին-առանձին ձեռնամարտի էին չհավում հարձակվող թշնամու դեմ մինչև որ, վերջապես հաջողվեց զորքը գոնե որևէ մարտակարգով շարել թշնամիները վրա էին տալիս աղաղակով հեծելազորը հեծելազորի գեմ ուղղելով: Հեծյալները գործի էին գնում նիզակները, իսկ երբ նիզակները ջարդվեցին, սկսեցին սրերով կռվել: Շատերն էին նետվում դեպի Ալեքսանդրը, որին հեշտ էր ճանաչել վահանից ու սաղավարտի ցցունքից, որի կողքերին մեկական փետուր կար զարմանալի մեծության ու ճերմակության: Արքայի վրա նետված տեղը ծակեց զրահի ծալքը բայց մարմնին չդիպավ: Սյդ պահին երկու պարսիկ զորապետ՝ Հոխակոսը և Սպիթրիդատեսը, միաժամանակ նետվեցին Ալեքսանդրի վրա: Արքան մեկից խուլս տվեց, իսկ Հոխակոսի վրա ինքը հարձակվեց ու նիզակահարեց, բայց նիզակը զրահին դիպչելով կոտրվեց, և Ալեքսանդրը քաշեց սուրը: Սպիթրիդատեսը ձին կողքանց կանգնեցնելով մարտնչողների մոտ և արագ կանգնելով ասպան դակին Ալեքսանդրին հարվածեց պարսկական սրով: Սաղավարտի կատարը փետուրներից մեկի հետ մի կողմ թռավ և սաղավարտը հաղիվ դիմացավ հարվածին, այնպես որ թրի շեղքը քսվեց Ալեքսանդրի մազերին: Սպիթրիդատեսը նորից մի փոքր բռնձրացավ, բայց պարսիկին կանխեց Սև մազանվանյալ Կլիտոսը նիզակով թափանց հարվածելով նրան: Միաժամանակ ընկավ և Հոխակոսը՝ Ալեքսանդրի արից խոցված:

Մինչ Ալեքսանդրի հեծելազորը այս վտանգավոր մարտն էր վարում մակեդոնական փաղանգը գետն անցավ և մարտի մտնով հակառակորդի հետևակի հետ: Պարսիկները դիմադրում էին ծուլաբար և ոչ երկարատև: Շուտով բոլորը, բացի հույն վարձկաններից, փախուստի դիմեցին: Վերջիններս մի բլրի ստորոտում սեղմելով իրենց շարքերը, պատրաստ էին շանձնվել այն պայմանով, որ Ալեքսանդրը խոստանար իրենց անվտանգութունն ապահովել: Սալայն ղեկավարվելով ավելի շուտ զայրույթով բան հաշվարկով, Ալեքսանդրը առաջինը հարձակվեց նրանց վրա և այդ ընթացքում կորցրեց իր ձին, որը կողից սրով խոցվեց (դա ոչ թե Թուկեֆալոսն էր այլ մի ուրիշ ձի): Հատկապես այս գոտեմարտում ամենից շատ մակեդոնացիք վիրավորվեցին, ու սպանվեցին քանի որ հարկ եղավ

մարտնչել ուսումնառուները և փրկութեան հուշը կորցրած մարդկանց հետ Ասում են, բարբառոսները կորցրեցին քսան հազար հեռակ ու երկու հազար հինգ հարյուր ձիավոր: Արիստոբուլոսը հաղորդում է, որ Ալեք սանդրի գործից ընդամենը երեսունչորս հոգի զոհվեց, դրանցից ինը հեռակ Ալեքսանդրը հրամայեց զոհվածների բրոնզե արձանները կանգնեցնել այդ արձանները կերտեց Լիսիպոսը: Հագթանակի պատիվը բաժանելով հույների հետ՝ արքան հատկապես աթենացիներին բաժին հանեց թշնամուց խլված երեք հարյուր վահանը իսկ մնացած ուսումնական վրա հրամայեց բոլոր հայթոհների անունից անել այս հպարտ մակագրությունը. «Ալեքսանդրը՝ որդին Փիլիպոսի, և հույները, բացառությամբ լակեդեմոնացիների, վերցրին Ասիայում բնակվող բարբառոսներից»: Գավաթներ, ծիրանագույն կտորներ և նման այլ բաներ, որոնք գրավված էին պարսիկներից, շնչին բացառությամբ, Ալեքսանդրը ուղարկեց մորը:

XVII Այս ճակատամարտն իսկույն փոխեց գործերի վիճակը հօգուտ Ալեքսանդրի, և նա գրավեց Սարգեսը՝ բարբառոսների ծովափնյա տիրույթների գլխավոր ամրությունը: Շատ քաղաքներ ու մարզեր նույնպես հպատակվեցին նրան, դիմադրություն ցույց տվին միայն Հալիկաոնասը և Միլետը: Ուժով տիրելով այդ քաղաքներին և հպատակեցնելով շրջակա հողերը Ալեքսանդրն սկսեց մտածել, թե ինչ անի այնուհետև մերթ էա ուզում էր շուտով հանդիպել Իարեսին վճռական ճակատամարտի համար, մերթ կանգ էր ստնում նախ ծովամերձ մարզերի հարստություններն օգտագործելու և նոր միայն ուժեղանալով արքայի դեմ գնալու մտքի վրա:

Լիկիայում Քսանթիոն քաղաքից ոչ հեռու, կա մի աղբյուր, որը ասո մ են, հենց ճիշտ այդ ժամանակ առանց որևէ տեսանելի պատճառի, սկսեց ծփալ, ամբերից ելավ ու խորհից դուրս բերեց պղնձե մի աղյուսակ՝ հին գրերի հետքերով: Այնտեղ գրված էր, թե պարսկական պետության վերջը կգա և որ այն կործանվելու է հույների ձեռքով: Այս գուշակությամբ ոգեշնչված Ալեքսանդրն շտապեց պարսիկներից ազատագրել ծովափնյա մարզերը ընդհուպ մինչև Փյունիկիա և Կիլիկիա: Մակեդոնացիների արագ առաջընթացը Պամփիլիայի միջով շատ պատմաբանների գեղեցիկ նյութ է տվել մոգոնումների ու շափաղանցությունների համար: Ինչպես նրանք պատմում են, ծովը ասավածային բարեհաճությամբ հետ քաշվեց Ալեքսանդրի առջևից թեև այն սովորաբար սբընթացորեն գլորում էր իր ալիքները դեպի ափը միայն հազվադեպ մերկ թողնելով գիրթ վիհերով կտրատված լեռնաշղթայի սառրտի ու

մեծ ժայռերը, Անկասկած, հենց այս անճշմարտանման պատմութիւնն է ծաղրում Մենանդրոսը իր կատակերգութիւններէ բից մեկում.

Ամեն բան ճիշտ ու ճիշտ Ալեքսանդրի նեան հաշտովում է ինձ
Ծրք ուզում եմ գտնել որեւէ մեկին, նա իսքն է իսկույն գտնվում:
Եթե ուզում եմ ծովից դենը գ'ալ քայլ մտնեմ եմ ծովի վրայով

Այնինչ Ալեքսանդրն ինքը իր նամակներում չի հիշատակում այդ կարգի որեւէ հրաշք, այլ ասում է թէ ինքը շարժվում էր այսպես կոչված «Սանդուղքով» և, անցնելով այն, դուրս է եկել Փասսիլիսից: Այս քաղաքում նա անցկացրել է մի քանի օր և այդտեղ շուկայի հրապարակում տեսել է վերջերս վախճանված Թեոդեկտոսի արձանը (նա ծագումով փասսիլիսցի էր): Ընթրիքից հետո Ալեքսանդրը հարբած ու բախ ընկերախմբի ուղեկցութեամբ, գնացել է դեպի հուշարձանը և սլաովան դանին շատ պսակներ է դրել Այսպես, զվարճանալով, նա Լրախտիքի ոտըք է մատուցել այն մարդուն, որի հետ ծանոթացել էր Արիստոտելի և փիլիսոփայութեամբ պարապելու շնորհիվ

XVIII Դրանից հետո թագավորը հնազանդեցրեց Պիսիդիայի՝ իրեն դիմադրութիւն ցույց տված բնակիչներին և դրամից Փուլուզիան: Վերցնելով Գորդիոն քաղաքը, որի մասին ասում էն թէ եղև է հին արքա Միդասի հայրենիքը, Ալեքսանդրը տեսավ այն նշանափայ սաղմակաքքը, որի առեղը լծի յետ ամրացված էր թշնու կղզիով և լակց այն գրույցը (գրաւ ճշմարտութեան մեջ լարբարոսները լիովին համոզված էին), թե իբր նրան, ով որ կբացի հանգույցը, որով ամրացված է լուծը, վիճակված է դառնալու ամբողջ աշխարհի թագավորը: Դրողների մեծ մասը պատմում է, թե հանգույցը խճճված է եղել այնպես, որ Ալեքսանդրը չի կարողացել քանդել և կտրել է սրով, այդ ժամանակ կտած տեսում հայտնարերվել են ամբակապերի բազմաթիվ ծույրեր: Բայց Արիստոտելոսի սրամածի համաձայն, Ալեքսանդրիս հեշտութեամբ է հաշտվել լուծել խնդիրը և ազատել լուծը, առեղի առջև ծայրից հանելով կեռը՝ այսպես կոչված «հետորք», որին ամբանում է լծափոկը:

Դրանից քիչ անց, հպատակեցնելով Պափլագոնիան ու Կսպաղովկիան Ալեքսանդրն իմացավ Մեմնոնի մահվան մասին, որից, ծովափ նյա մարզերի Դարեհի զորավարներից առավել բան որեւէ մեկից կարելի էր սպասել անթիվ գլխացավանքներ ու դժվարութիւններ: Այդ լուրը էլ ավելի ամրապնդեց երկրի խորքը արշավելու Ալեքսանդրի մտադրութիւնը

Այդ ժամանակ Դարեհը Սուզայից շարժվում էր ծովի ուղղութեամբ:

Նա հույսը դնում էլ իր գորթի բազմամարդութեան վրա (իրա հրամանատարութեան տակ կար վեց հարյուր հազար հոգի), և բացի այդ, թագավորին ոգևորել էր այն երազը, որը մոգերը մեկնաբանել էին՝ ելնելով ավելի շատ նյան սիրաշահելու, քան թե դրա իսկական նշանակությունը լացահայտելու ցանկությունից: Դարեհը լրագում տեսել էր որ մակեդոնական փառանգը ամբողջովին կրակով է բռնված և որ Ալեքսանդրը սպասավորում է իրեն՝ Դարեհին, իսկ Ալեքսանդրի հագին նույն այն ստույան է, որ Դարեհն ինքն էր հագնուա դեռևս թագավորական սուր հանդակ եղած ժամանակ շատ Ալեքսանդրը մտել է Բելի տաճարը և անհետացել: Ստալածությունը ըստ երևույթին, այս երազով ավետել էր որ մակեդոնացիք վայլուն սխրանքներ են գործելու, որոնց համբավը ասարածվելու է ամենուրեք, և որ Ալեքսանդրը տիրելու է Ասիային, ինչպես տիրել էր Դարեհը որը եղել էր սուրհանդակ, բայց դարձել էր թագավոր, և որ դրանից բիշ անց մակեդոնացի թագավորը փառքով կա վարտի իր կյանքը

XIX Իմանալու է իլիկիայում Ալեքսանդրի երկարատև մնալու մասին՝ Դարեհը դա վախկոտություն նշան համարեց, ինչն էլ ավելի սրբապանդեց նրան: Իսկ իրականում այդ հստակման պատճառը թագավորի հիվանդությունն է եղել, որն առաջացել է, ոմանց կարծիքով, գերհոգնածությունից, իսկ ուրիշների կարծիքով՝ կիզնոս դետի սառցաչրում է և այն չի կարելի հաղթահարել ոչ մի դեղով: Բժիշկները վախենում էին անում բուժել Ալեքսանդրին, համարելով, որ վտանգը շափաղանց մեծ է և այն չի կարելի հաղթահարել ոչ մի դեղով Բժիշկները վախենում էին որ անհաջողության դեպքում իրենց դեմ կհարուցեն մակեդոնացիների մեղադրանքը և զայրույթը: Սեն-միայն ակարմանցի Փիլիպոսն էր որ անսնելով հիվանդի ծանր լիճակը բարեկամությունը վեր դասեց ամեն ինչից և հանցավոր բան համարեց Ալեքսանդրի հետ չկիսել վտանգը և մինչև վերջ, — թեկուզև դա իր համար վտանգավոր լիներ — ի սպաս չդնել բոլոր միջոցները Նա դեղ նախապատրաստեց և թագավորին համոզեց թողնել բոլոր կասկածանքները ու խմել, եթե ուշում է վերականգնել իր ուժերը պատերազմը շարունակելու համար: Հենց այդ նույն ժամանակ մակեդոնացիների ճամբարում գտնվող Պարմենիոնը թագավորին նամակ ուղարկեց՝ նրան խորհուրդ տալով զգուշանալ Փիլիպոսից, քանի որ Դարեհը բժշկին իբր թե մեծ նվերներ ու իբր ազնկաձեռքն է խոստացել և դրանով նրան համոզել է սպանել Ալեքսանդրին: Արքան կարգաց նամակը և բարեկամներից ոչ մեկին ցույց չտալով գրեց իբր բարձի տակ նշանակված ժամին Փիլիպոսը արքայի բարեկամ

ների ուղեկցութեամբ մաավ նրա վրանը բերելով դեղով լի գավաթը։ Ալեքսանդրը նրան ավեց նամակը, իսկ ինքն առանց տատանվելու, նրա ձեռքից վստահորեն վերցրեց դեղը։ Դա մի զարմանալի, դիտարժան տեսարան էր։ Մինչ Փիլիպոսը կարդում էր նամակը Ալեքսանդրը խմում էր դեղը ապա երկուսն էլ միաժամանակ նայեցին իրար, բայց տարբեր էր նրանց վարքը։ Ալեքսանդրի պայծառ անկեղծ դեմքի վրա արտացոլվում էր Փիլիպոսի հանդեպ նրա բարյացակամութունը և վստահութունը, մինչդեռ բժիշկը, զրպարտութունից վրդովված, մերթ ձեռքերն էր երկինք կարկառում և աստվածներին վկա կանչում, մերթ նեւովելով արքայի մահճին՝ նրան աղերսում էր արիանալ ու վստահել իրեն։ Կեղև սկզբում շատ ուժգին աղոթեց Ալեքսանդրի վրա և ասես թե դեպի խորքերը մղեց նրա մարմնական ուժերը կորցնելով խոստելու կարողությունը հիվանդն ուշաթափվեց և հաղիվ էր կենդանության նշաններ ցուցաբերում։ Շուտով, սակայն, Փիլիպոսն Ալեքսանդրին ուշքի բերեց, իվանդն արագ ամրապնդվեց և վերջապես, երևաց մակեդոնացիների սուր որոնց վհատությունը չէր անցնում, մինչև որ տեսան արքային։

XX Գործիսի գործում հայրենիքից փախած մի մակեդոնացի կար, Ամինտաս անունով, որը լավ գիտեր Ալեքսանդրի բնավորությունը։ Տեսնելով որ Դարեհը մտադիր է Ալեքսանդրի վրա դնալ լեռնային նեղ ճամփաներով՝ Ամինտասը պարտից արքային խորհուրդ տվեց մնալ տեղում որպեսզի հակատամարտ տար լսյն բաց հարթավայրերում և օգտագործեր իր թվային զգալի զորակազմությունը։ Դարեհը սրտախանց թե վախենում է, որ շիների թե հանկարծ թշնամիները փախուստ տան և Ալեքսանդրը դուրս պրծնի։ «Դրանից, արքա,— ասաց Ամինտասը,— դու կարող ես շփախենալ Ալեքսանդրն անպայման կզաքո դեմ և, հավանաբար արդեն գալիս է»։ Այնուամենայնիվ Ամինտասը շկարողացավ թագավորին համոզել և Դարեհը, թողնելով ճամբարը, ճամփա ընկավ դեպի Կիլիկիա, իսկ Ալեքսանդրը հենց այդ ժամանակ իր գործերը շարժեց դեպի Ասորիք՝ պարսիկների դեմ։ Դիշերը երկու գործերն իրար կողքով, միմյանց շնկատելով անցան և յուրաքանչյուրն իսկույն հեռավերադարձավ։ Ալեքսանդրը, ուրախացած երջանիկ պատահականությամբ, շտապեց պարսիկներին հասնել լեռնանցքներում, իսկ Դարեհը ձգտում էր իր բանակը դուրս բերել կիրճերից ու վերադառնալ նախկին ճամբարը։ Նա արդեն հասկացել էր, որ սխալ է գործել՝ մտնելով այս խիստ կտրատված տեղանքը, որը սեղմված էր ծովի ու լեռների արանքում մեջտեղից Պինարոն գետով բաժանված ու հեծելագործի համար անհարմար, բայց թշնամու փոքրաթիվ ուժերի գոցողությունների համար՝

շատ ձեռնառու Այդ լավ դիրքը Ալեքսանդրին ճակատագիրը բաժին հա-
նեց, բայց նրա հաղթանակն ապահովեց ավելի շուտ հմուտ ղեկավա-
րումը, քան թե կույր բախտը: Չնայած այն բանին, որ նրա ուժերը
քանակապես նշանակալի չափով գիշում էին բարբարոսների ուժերին,
Ալեքսանդրը թույլ չտվեց, որ իրեն շրջապատեն, ընդհակառակը՝ իր
աջ թևով շրջանցելով թշնամու գործի ձախ թևը, պարսիկներին հարվա-
ծեց թևից և փախուստի մատնեց իր առաջ կանգնած բարբարոսներին:
Մարտնչելով առաջին շարքերում՝ Ալեքսանդրը սրով վիրավորվեց ազդ-
ւոյց, ինչպես հաղորդում է Քարեհը հենց Դարեհի ձեռքով, քանզի նրանց
միջև բանը հասավ ձեռնամարտի, Բայց այդ ճակատամարտի մասին Ան-
տիպատրոսին ուղղված նամակում պատմելիս Ալեքսանդրը չի տալիս
նրա անունը ով վիրավորել էր իրեն՝ նա գրում է, թե դաշույնով վի-
րավորվել է ստրեյց բայց վերքը վտանգավոր չի եղել:

Ալեքսանդրը փայլուն հաղթանակ տարավ ոչնչացրեց հարյուր տասը
ազարից ավելի թշնամիների, բայց շկաբողացավ բռնել Դարեհին, որը
փախուստով փրկվել է նրանից սուաջ էր անցել շորս կամ հինգ աս-
լարեղ: Հետապնդման խմանակ Ալեքսանդրին հաջողվեց գրավել ար-
լայի մարտակառքն ու աղեղը: Վերադառնալիս սա տեսավ, որ մակե-
դոնացիք կողոպտում են բարբարոսների շամբարը ւշնամիլից դուրս տա-
նելով ամեն կարգի թանկագին բաներ, որոնք վիթխարի քանակությամբ
էին, չնայած գումակի մեծ մասը պարսիկները թողել էին Դամասկոսում
և ճակատամարտի վայրն էին եկել թեթև: Զորականներն Ալեքսանդրին
հատկացրել էին Դարեհի՝ թանկարժեք իրերով լեցուն վրանը, բազում
ծառաներով ու կա՛կարասիով հանդերձ: Ալեքսանդրն իսկույն հանեց
զենէ ու զրա՛ը և գնալով դեպի լողարանը՝ ասաց. «Գնանք ճակատ ս
մարտի քրտինւը լվանանք Դարեհի լողարանում» — «Ոչ թե Դարեհի
այլ՝ Ալեքսանդրի, — բացականչեց թագավորի բառեկամներից մեկը: —
Չէ՞ որ պարտվածների սեփականությունը պետք է ոչ միայն պատկանի
հաղթողներին այլև նրանց անունով կոչվի»: Երբ Ալեքսանդրը տեսավ
ամեն կարգի ամանները կոնքեր կժէր, քսուբների սրվակներ, բոլոյը
հմտորեն շինված մաքուր ոսկուց, երբ նա զգաց հոտավետ խոտերի և
այլ անուշահոտությունների զարմանալի բուրմունքը, երբ, վերջապես,
մտավ վրանը, որը զարմացնում էր իր չափսերով, բարձրությամբ, ան-
կողինների ու սեղանների արդուզարդով — արքան նայեց իր բարեկամ-
ներին ու ասաց. «Հոտ էրևույթին թագավորելը սա է որ կա»:

XXI Ալեքսանդրն արդեն պատրաստվում էր ճաշելու երբ նրան
հայտնեցին թե Դարեհի գերի վերցված մայրը կինը և շամուսնացած

երկու դուստրը, տեսնելով նրա կառքն ու աղեղը հեկեկացին և սկսեցին կուրծք ծեծել ենթադրելով թե թագավորն սպանված է: Երկար ժամա նակ Ալեքսանդրը լռում էր Դարեհի ընտանիքի դժբախտությունը նրան ավելի էր հուզում քան սեփական ճակատադիրը: Վերջապես նա լեռնա տասին ուղարկեց հանձնարարելով հայտնել կանանց, որ Դարեհը ողջ է, իսկ իրենք թող չվախենան Ալեքսանդրից քանզի պատերազմը բարձրագույն տիրապետությամբ համար նա մղում է միայն Դարեհի դեմ, իսկ իրենց կտրամադրվի այն ամենը, ինչից օգտվել են նախկինում, երբ դեռ կառավարում էր Դարեհը: Այս խոսքերը կանանց թվացին գթալի ու բարյացակամ, բայց էլ ավելի մարդկային եղան Ալեքսանդրի արարքները: Նա սրանց թույլատրեց թաղել ընկած պարսիկներին՝ բուլորին, ում նրանք կուղենան՝ այդ նպատակի համար ռազմավարից վերցնելով դիտաներ ու դարդեր, Դարեհի ընտանիքին շարկեց այն պատիվներից, սրանցից օգտվում էր նախկինում չպակասեցրեց ծառաների թիվը, իսկ գրանց պահելու ծախսերը նույնիսկ ավելացրեց: Այնուամենայնիվ, Ալեքսանդրի ամենաարքայական ու գեղեցիկ բարեբարությունն այն եղավ, որ այդ ասիի / ու սղջախոհ կանանց օտոնք գերի էին ընկել նրա ձեռքը, շփուտ կլից Երկուսը, Երկուսը / ու չսպասել այնպիսի մի բան, որը կարող էր տնտրել նրանց: Այս սուտ շուներ նրանց վրանները, շեր տեսնում նրանց, և նրանք այնպիսի կյանք էին վարում, կարծես ոչ թե թըշնամու համբարում, այլ սուրբ ու մաքուր օրիորդական սենյակում էին դառնում: Իսկ չէ՞ որ Դարեհի կլներ ինչպես պատմում են, բուլոր թագուհիներից ամենագեղեցիկն է եղել ճիշտ այնպես ինչպես Դարեհն է ամենից գեղեցիկն ու բարձրահասակը եղել տղամարդկանց մեջ: Նրանց դուստրերն էլ նման էին ծնողներին: Ալեքսանդրը, որը ըստ երևույթին, կարծում էր թե ինքն իրեն տիրապետելու կարողությունը արքաների համար ավելի կարևոր է, քան թշնամիներին հաղթել կարողանալը, ձեռք շաղկեց գերուհիներին: Ընդհանրապես, մինչև ամուսնանալը, նա, Բարսենից բացի ոչ մի կնոջ հետ չեղավ: Բարսենեն՝ Մեմնոնի այրին, գերի էր վերցված Գամասկոսի մոտ՝ նա հունական դաստիարակություն էր ստացել: Առջի էր ընկնում լավ բնավորությամբ: Նրա հայրը Արտաբազն էր եղել՝ թագավորի դստեր որդին: Ինչպես Արիտոբուլոսն է պատմում, Ալեքսանդրը հեռուց Պարմենիոնի խորհրդին, որն առաջարկել էր մերձենալ այդ գեղեցիկ ու ազնվազարմ կնոջ հետ: Նայելով մյուս գեղեցիկ ու բարեկազմ գերուհիներին՝ Ալեքսանդրը կատակով ասում էր,

1. Տեքստը վնասված է:

Թե սպասկուհիների տեսքը տանջալի է աչքերի համար յանկանալով նրանց գրավչությանը հակադրել իր ինքնատիրապետման ու ողջախոհության գեղեցկությունը, Թագավորը նրանց վրա ոչ մի ուշադրություն չէր դարձնում ասես թե նրանք ոչ թե կենդանի կանայք էին այլ՝ անկյանք արձաններ

XXII Մ| ս ս հ ա մ Փիլոքսեն սը, ոլլ ծ վաիկնյա զորքի հրամանատարըն էր, Ալեքսանդրին գրել էր, թե իր մոտ է գտնվում տարեկանացի ոմն Թևոդորոս որը ցանկանում է վաճառել հիանալի գլղեցկության տեր տղաների, և Թագավորից տեղեկանում էր՝ չի՞ ուղում արդյոք գնել նրանց Ալեքսանդրը ծայրա՝ղորենն վրդովվել էր այդ նամակից և հաճախ էր բարեկամների մոտ տրտնջում, հարցնելով՝ մի՞թե Փիլոքսենոսն այդքան վատ է մտածում իր մասին, որ այդպիսի դազիր բան է առաջարկում Լրեն՝ Փիլոքսենոսին սա դաժանորեն անպատվել էր նամակով և հրամայել էր վոնգել Թևոդորոսի՝ իր ապրանքի հետ միասին Ոչ պակաս Լ ստությամբ է անպատվել նաև Հադնոնին, որը նրան գրել էր թե մտադիր է գնել ու նրա համար լերել Կորնթոսում հռչակված մի տղաչի կրորյուլոսին: Իմանալով որ Լրկու մակեդոնացիներ, որոնք ծառայում էին Պարմենիոնի ձեռքի սակ Դամոնն ու Տիմոթեոսը, պատվազրկել էին ինչ-որ վարձկանների կանանց, Թագավորը նախակով հրամայել է Պարմենիոնին, որ եթե դա ապացուցվի սպանել տա նրանց, որպես վայրի դավանների, որոնք ստեղծված են որպես աղետ մարդկանց: Այդ նույն նամակում արքան իր մասին գրում է բառացիորեն հետևյալը «Ոչ որ չի Կ սրող ասել որ Լ ու տուսել եմ Դարեհի կնոջը, ցանկացել եմ նրան սեանել ևամ թվկուզ ականջ արլլ նրանց ովքեր սրատմելիս Լն հղել նրա գեղեցկության մասին»: Ալեքսանդրն ասում էր, թե կնոջ հետ քնելն ու մերձենալը ամեն բանից ավելի է իրեն զգացնել տալիս իր մահկանացու լինելը, քանզի հոգնածությունն ու հեշտասիրությունը բխում են մարդկային բնության միևնույն թուլությունից:

Ալեքսանդրն աչքի էլ ընկնում նաև ծայրահեղ ժլտկալությամբ սննդի հարցում և այդ առումով բազում ապացույցներ է տվել: Այդպիսի ապացույցներից մեկը նրա այն խոսքերն էին՝ ասված Ալալին որին նա իր մայրն էր անվանում և որին դարձրեց Կարիայի թագուհին: Ի նշան սիրո Ադան ամեն օր նրան ընտիր կերակուր ու թխվածք էր ուղարկում իսկ ապա նրա մոտ ուղարկեց իր ամենահմուտ խոհարարներին ու հաց թուխներին: Թագավորը հրամայեց Ադալին հաղորդել, որ ինքը նման ոչ մի բանի կարիք չի զգում քանի որ իր դաստիարակ Լեոնիդասն իրեն լալադույն Լ ոհարարներ է տվել նախաճաշի համար՝ գիշերալին չը

խորթ լսկ ճաշի համար՝ աղքատիկ նախաճաշ: «Իմ դաստիարակը — սակ է նա — սովորություն ունեւր պրպակլ իմ անկողինն ու շորերը, որ շինի թէ մայրս անտեղ ինչ որ անուշեղեն կամ սահմանվածից զատ որեէ լսն թարցրած լինի»:

XVIII Գինիով էլ Ալեքսանդրն ավելի քիչ էր տարլում քան կար յետ Լին լսկ այդպէս էին կարծում, որովհետեւ նա էրկար էր նստում խնջուքի սեղանի մոտ: Բայց իրականում Ալեքսանդրն ավելի շատ զրու լում էր, քան խմում և յուրաքանչյուր գազաթի հետ երկար ճառ էր ասում: Խնջուք էլ անում էր միայն այն ժամանակ, երբ որ ազատ ժա մանակ էր ունենում: Իսկ ճիւղ քանք սալիս էր գործին, Ալեքսանդրին շինլ լտ պահէլ շէր կարող, ինչպէս լաճախ էր լինում այլ զորավարների կա. ու զգինին, ո՛չ քուեր, ու զվարճությունները, ո՛չ կանայք, ո՛չ հե սարքրաշարժ տեսարանները: Այդ է վկայում նրա ողջ կյանքը, որը ինչ լսն էլ կարճ եղած լինի, նա կարողացավ լցնել բազմաթիվ ու մեծամեծ լրանքներով: Ազատ օրերին Ալեքսանդրը, քնից վեր կենալով, ամենից սուտ էր մասուցում աստվածներին, իսկ դրանից անմիջապէս հետո նստած նախաճաշում էր նա օրն անց էր կացնում որս անելով, դատա կամ լրանել էր բնուել կարգալրություններ անում զորքին կամ կար լուր էր մտղմբի լսմանակ եթե լայկ կար շատուելու Ալեքսանդրը յետ սուղալլյան էլ վարկով էր կամ լրանքի լսմանակ մաքսակապից յետ էր լրանել էր լրանք յատակ զրոս մեջ: Լաճախ Ալեքսանդրը, լրանք լրանում էր օրուրերից, զվարճանում էր ազվու կամ թռչուն լրանքով կաշտման տեղերում արքան լվացում էր կատարում կամ լրանքին ծուր էր Այդ ժամանակ նա հարցուփորձ էր անում նրանց լրանել կա լվարում էին խոհարարներին կամ հացթուխներին թե՛ նա լրանքալրանում էր այն ամէնը ինչ պետք է ճաշի համար: Այդէն ուշ էր լինում ու մի՛նած երբ Ալեքսանդրը, լահճին ընկողմանած սկսում էր ճաշել շացկերուլթի ժամանակ արքան զորմանալի խոգատարություն էր ցուցաբերում սեղանակիցների նկատմամբ և ուշագիր հսկում էր, որ ու որ վիրավորված կամ իր բաժնից զրկված լինէր: Իր զրուցասիրության գատնառով թագավորը, ինչպէս արդեն ասված է շատ ժամանակ էր անցկացնում գինու սեղանի շուրջ: Մնացած ժամանակ Ալեքսանդրն սմենասիրալիրն էր բոլոր թագավորներից և կարողանում էր ամենքին լրանքացակամ տրամադրել իր հանդեպ, բայց խնջուքի սեղանի մոտ նրա սլարծենկոտությունը ճնշող էր դառնում: Նա կ' ինքն էր անգսպորէն պար լնում, և ազահորեկ լսում էր իրեն քծնողներին՝ դրանով անհարմար վիճակի մեջ զնկլով ներկա եղող առավել կարգին հյուրերին որոնք

չէին ուզում ո՛չ մրցել քծնողների հետ ո չ էլ նրանցից հետ մնալ Ալեք սանդրին գովաբանելու մեջ առաջինը ամոթալի էր թվում, իսկ երկրորդը վտանգներով հղի տնջույթից հետո Ալեքսանդրը լվացում էր կատարում և հաճախ քնում մինչև կեսօր իսկ երբեմն էլ անկողնում էր անյկացնում հաջորդ ամբողջ օրը:

Ալեքսանդրն անտարրեր էր քաղցրավենիքի ու նրբընտիր կերակուրների նկատմամբ: Հաճախ երբ նրա համաս ծովափից բերում էին շատ հազվագյուտ մրգեր կամ ձկներ, նա բոլորը նվիրում էր բարեկամներին՝ ոչինչ լիթողնելով իրեն: Սակայն այն ճաշկերույթները, որ կամակերպում էր Ալեքսանդրը, միշտ լինում էին հոյակապ և դրանց ծախսերը աճեցին նրա հաջողութուններին զուգընթաց մինչև որ հասան տասը հազար դրախմի թագավորը երբևէ դրանից ավելի չէր ծախսում և նրանց էլ թույլ չէր տալիս վատնել, ովքեր ընդունում էին իրեն:

XXIV. Իստոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Ալեքսանդրը զորքեր ուղարկեց Դամասկոս և գրավեց պարսիկների դրամները, եղած շեղածը կանանց ու երվխաներին: Ավարի մեծ մաւը բաժին հասավ թեսալացի հեծյալներին որոնք առաւ.ձնապես աչքի էին ընկել ճակատամարտում Ալեքսանդրը գիտավորյալ էր Դամասկոս ուղարկել հատկապես նրանց՝ ցանկանալով հնարավորութուն տալ հարստանալու: Ալեքսանդրի մնացած զորքն էլ ամեն ինչ ունեւր առատորեն: Մակեդոնացիէ այդ ժամանակ առաջին անգամ սովորեցին դնահատել ոսկին, արծաթը, կանանց, ճաշակեցին բարլ արոսնլրի ապրելակերպի գեղեցկութունը և ճիշտ շների նման, հլ տքն առնելով, շտապում էին որոնել-գտնել ու հափըշտակել պարսիկների բոլոր հարստութունները

Ալեքսանդրը, սակայն, որոշեց նախ հպատակեցնել ծովափնյա մարզերը, նրա մոտ իսկույն հնազանդութուն հայանելու եկան Կիպրոսի թագավորները: Հնազանդվեց ամբողջ Փլունիկիան նուլնպես, Տյուրոսի թացի: Ալեքսանդրը յոթ ամիս պաշարել էր Տյուրոսը նա հողով լցրեց խրամատները ուղամական մեքենաներ շինեց և քաղաքը ծովի կողմից փակեց երկու հարլււր թիանավերից քաղկացած նավատորմով: Շրջապաման ժամանակ Ալեքսանդրը երազում տեսավ, որ Հերակլեսը պարլւպի վրայից ձեռքը մեկնել է իրեն ու կանչում է Այդ նույն ժամանակ Տյուրոսի բնակիչներից շատերը երազում տեսան իբր, Ապոլլոնն ասում է թե ինքը կանցնի Ալեքսանդրի կողմը, քանի որ իրեն դուր չի գալիս այն, ինչ տեղի է ունենում քաղաքում: Այնժամ, ինչպես թշնամու կողմնանցնելիս բռնված մարգուն կանեին տլուրոսցիները պարակով կապ

կպեցին աստծու վիթխարի արձանը ու գամեցին պատվանդանին՝ Ապուլ լոնին անվանելով «Ալեքսանդրական»:

Ալեքսանդրը մի երազ էլ տեսավ. նա տեսավ այժամարդուն, որը հեռվից հաճոյախոսում է արքայի հետ, բայց խույս տալիս ու փախլում, հենց որ արօան փորձում էր բռնել նրան և թույլ տվեց իրեն բռնել միայն երկարատև հետապնդումից ու հորդորանքից հետո: Գուշակները համոզիչ կերպով մեկնաբանեցին այս երազը, «սատիր» (այժամարդ) բառը բաժանելով երկու մասի՝ «Սա»՝ և «Տիր»: Հիմա էլ ցույց են տալիս այն աղբյուրը որի կողքին Ալեքսանդրը երազի մեջ հետախնդում էր սատիրին:

Պաշարման ընթիս ցքում Ալեքսանդրը արշավանք կատարեց Անտիլի անանի լեռներում ապրող արաբների դեմ: Այս արշավանքի ժամանակ թագավորը իր դաստիարակ Լիսիմաքոսի պատճառով լուրջ վտանգի ենթարկեց իր կյանքը: Այս Լիսիմաքոսը ամենուրեք ուղեկցում էր Ալեքսանդրին պատճառաբանելով, թե ինքը տարիքով աժելի մեծ և ավելի թույլ է Փենիքսից: Երբ Ալեքսանդրի զորականները մտաեցան լեռնովին թողեցին ձիերը և ասաջ շարժվեցին ոտքով: Բոլորը բավականին սաջ էին անցել լուրջ արքան չէր վստահանում թողնել հողնս ծ Լիսիմաքոսին՝ մանավանդ որ իրիկնանում էր և թշնամիները մոտ էին: Սիրտուարով Ներակին և նրա հետ կույր կողմի բայելով Ալեքսանդրը մի քանի գիծփորներով աննկատելիորեն հետ մնաց զորքից և էրբ մթնեց ու ստաիկ ցրտեց. կանգ առավ լիշերելու տեսչուրընկալ ու մտանդավոր կատարեց: Ետում այստեղ ու այնտեղ թշնամու վառած խարույկներն էին երևում Ալեքսանդրը, որն աղետի պահին միշտ կարողանում էր անփական քինակով խրախուսել մակեդոնացիներին, հույսը դնելով իր լուրջ խաղախաղալիքի մոտ, վաղեց դեպի ամենամոտիկ խարույկը: Խաղալի կողմին նստած ևրկու բարբարոսի արքան սրախողխող արեց, որտեղ խարույկից մի իսանձող առնելով, վերադարձավ յուրայինների մոտ: Մակեդոնացիներն այնպիսի մի խարույկ սարքեցին, որ բարբարոսների մի մասը սարսափեց ու փախուստի դիմեց, իսկ ովքեր էլ սիրտ արեցին մոտենալ, նրանք հետ մղեցին և գիշերվա մնացած մասն անցկացրին անդիստ: Այս դեպքը պատմում է Քարեսը:

XLV. Տյուրոսի պաշարումն այսպես վերջացավ բազմաթիվ ճակատամարտերից հետո Ալեքսանդրն իր հիմնական ուժերին հանգիստ տվեց բայց, որպեսզի թշնամին շունչ չբաշեր, փոքր շոկատներ էր ուղար

կում դեպի քաղաքի պարիսպները: Այդ օրերին գուշակ Արիստապրոսը զոհը փողոտեց և փորոտիքը նայելով, ներկաներին համարձակորեն հայտարարեց թե քաղաքն անպայման կգրավվի այս ամսին: Գուշակի խոսքերը ծաղրի ու կատակի տվեցին չէ՞ որ անցնում էր ամսվա հինգ վերջին օրը: Տեսնելով որ գուշակը դժվար դրուժյան մեջ է ընկել Ալեքսանդրը որը միշտ հովանավորում էր գուշակութունները հրամայեց այդ օրը համարել ոչ թե Լրեսունը այլ քսանութը: Այնուհետև հրամայելով հարձակման փող հնչեցնել՝ նա սկսեց գրոհել Տյուրոսի պարիսպների վրա ավելի վճռականորեն, քան նախապէ՛ մտադիր էր Գրոհն այնպես կատաղի էր որ նույնիսկ ճամբարում թողնվածները նստած շմնացին տեղներում և նետվեցին օգնութեան: Տյուրիոսցիները դադարեցրին գիմադրութունը, և քաղաքը գրավվեց հենց նույն օրը:

Գրանից քիչ անց երբ Ալեքսանդրը պաշարում էր Դադան Ասորիքի ամենամեծ քաղաքը նրա ուսին մի հողակոշտ ընկավ, որ նետել էր մոտով անցնող մի թռչուն: Այդ թռչունը հետո նստելով պաշարման մեքենաներից մեկի վրա՝ խճճվեց ջիւերի մեջ որոնցով ամրացվում են ճոպանները Այս նախանշանակը կարողացավ ճիշտ մեկնաբանել Արիստանդրոսը Ալեքսանդրը վիրավորվել է լաից իսկ քաղաքն այնուամենայնիվ գրավել է

Այստեղ գրավված ավարի նշանակալի մասը Ալեքսանդրն ուղարկեց Օլիմպիադային, Կլեոպատրային և բարեկամներին: Դաստիարակ Լեոնի դասին, հիշելով իլ մանկական երազանքներից մեկը, նա ուղարկեց հինգ հարյուր տաղանդ խունկ և հարյուր տաղանդ զմուռս Մի ժամանակ Լեոնիդասը հանդիմանել էր Ալեքսանդրին, որը բոհրով անուշահոտութուններ էր առել գցել կրակի մեջ «Դու անուշահոտութուններն այսպես առատաձեռնորեն կայրես», Երբ որ գրավէս դրանցով առատ երկրները: Առայժմ այն, ինչ որ ունես, խնայողաբար ծախսիր»: Այժմ Ալեքսանդրը գրեց Լեոնիդասին «Ես քեզ ուղարկել եմ բաշականաչափ խունկ ու զմուռս որպեսզի դու զոհաբերութուն կատարելիս այսուհետև ժլատութուն չանես»

XXVI Մի անգամ Ալեքանդրին բերեցին ՚ի արկղիկ որը հասկացող անձանց թվում էր Դարեհից գրավված ունեցվածքի մեջ ամենաթանկագինը որ ընկել էր հաղթողների ձեռքը: Ալեքսանդրը իր բարեկամներին հարցրեց, թե ինչ թանկագին բան խորհուրդ կտան պահել այդ արկղիկի մէջ: Ոմանք մի բան ասացին, մուսները՝ մի այլ բան, բայց արքան ասաց, թե դրա մեջ «Իլիականն» է պահելու: Սա վկայում են վատահալի շատ անձինք: Եթէ ճիշտ է այն ինչ վկայակոչելով Հե

լ սկիզբն հաղորդում լն ալեքսանդրիացիք Հոմերոսը պետքական և օգտակար ուղեկից է եղել Ալեքսանդրի համար իր արշավանքներում: Պատմում են օրինակ, որ, գրավելով Ծգիպոսը, Ալեքսանդրն ուզում էր այնտեղ հիմնել մեծ, բազմամարդ հունական քաղաք և դրան տալ իր անունը: Ճարտարապետների խորհրդով նա արգեն հատկացրած է եղել տեղը և ցանկապատել ապագա քաղաքի համար բայց գիշերը զարմանալի մի երազ է տեսել: Նա երազում տեսել է որ մի պատկանելի ծերունի՝ ճերմակ մսվերով կանգնելով իր կողքին կարդացել է հետևյալ տողելը.

Աղմկոտ ու լայն ծովում գտնվում է մի կղզի՝
Եգիպտոսի դժաց Բնակիչները դրան Փարոս են անվանում:

Բակույն վեր կենալով՝ Ալեքսանդրը գնացել է Փարոս որը Կանոբյան հրվանդանից մի քիչ վերև է: Այն ժամանակ դա դեռ կղզի է եղել, իսկ հիմա մայր ցամաքին է միացած հողաթմբով: Ալեքսանդրը տեսել է դարմանալիտուն հարմար տեղանքը: Դա ընդարձակ լիճը ծովից բաժանուր, բավականին երկար մի պարանոցի նման մի հողաշերտ է եղել, որը հենց ճիշտ այդ տեղում գոյացնում է մեծ ու հարմար մի նավահանգիստ: Սրբան բացականչել է, թե Հոմերոսը, որը հիացմունքի է արժանի բոլոր առումներով, ի լրումն այդ ամենի իմաստնագույն ճարտարապետ է: Ալեքսանդրը տեղնուտեղը հրամայել է գծել քաղաքի հասակագիծը՝ համապատասխանեցնելով տեղանքի բնույթին: Ձեռքների տակ կավիճ շի եղել է ճարտարապետները վերցնելով գարու ալյուրը դրանով սև հողի վրա նշագծել են մի մեծ կեռ, որը հակադիր կողմերից հավասարաչափ ուղիղ գծերով բերել միացրել են իրար այնպես որ ստացվել է մի գծագիր, որը հիշեցրել է սինվորական հրապարակ: Սրբան գոհ է եղել պլանալորումից, բայց հանկարծ թուխպի նման, լճից ու գետի թռել եկել են անթիվ-անհամար մեծ ու փոքր թռչուններ ու կտցել կերել են ամբողջ ալյուրը: Ալեքսանդրը անհանգստացել է այս յախանշանակից, բայց սրտապնդվել է ևրր գուշակները բացատրել են, թե դա ինչ է նշանակում նրա հիմնադրած քաղաքը, բացատրել են նրանք կբարգավաճի և կկրակրի ամենատարբեր երկրների մարդկանց: Դրանից հետո, լեբակացուներին հրամայելով հետևել շինարարությանը՝ Ալեքսանդրը ճանապարհվել է դեպի Սմոնի տաճարը: Այնտեղ տանող ճանապարհը երկար էր, ծանր և հոգնեցուցիչ: Ճանապարհորդներին ամենից շատ սպառնում էր երկու վտանգ չրի բացակայությունը քանդի օբերով նրանք գնում էին անապատի միջոց, և հարավային կատաղի քամին,

որը վրա էր տալիս սորուն, անծայր ավազուտների մեջ, Ասում են հնում երբեք այս քամին Կամբոջուտեսի զորքի շուրջը հսկա ավազաթումբ է բարձրացրել և շարժման մեջ դնելով ամբողջ անապատը ավազով ծածկել ու կործանել է հիսուն հազար մարդ: Սյա ամենը նախապես հայտնի է եղել համարյա բոլորին, բայց երբ Ալեքսանդրն իր առաջ որեւէ նպատակ էր դնում նրան հետ պահելն անհնար էր: Քանզի ճակատագիրը, հովանավորելով նրա ձգտումները՝ նրան անհողողող էր դարձրել: Եւ ոչ միայն ոչ մի անգամ չէր պարտվել թշնամիներից, այլև նույնիսկ տարածութունից ու ժամանակից ավելի ուժեղ էր դուրս գալիս: Դա խրախուսում էր նրա առանց այդ էլ բուռն փառասիրութունը և հրապուրում իրագործելու աճեց ավազ մտահղացումները:

XXVII Այն օգնութունը որ աստվածութունը ցույց էր տալիս Ալեքսանդրին այս դժվարին երթի ժամանակ, մարդկանց ավելի շատ նրան կատմամբ էր հավատ ներշնչում քան պատգամախոսների: Սկսենք այն բանից, որ Զևսի ուղարկած առատ ու երկարատև անձրևները մարդկանց ազատեցին ծարավի տանջանքների հանդեպ եղած վախից: Անձրևները դովաքրին շիկացած ավազը՝ դարձնելով խոնավ ու պինդ, և մաքրեցին օդը այնպես որ շնչելը հեշտացավ: Այնուհետև, երբ պարզվեց, որ այն նշանաձողերը որոնք տնկված էին ուղեցույցներին օգնելու համար ոչնչացված են և մակեդոնացիները թափառում էին առանց ճանապարհի՝ կորցնելով միմյանց, հանկարծ հատնվեցին ագռավները և սկսեցին ճանապարհը ցույց տալ: Նրանք արագ թռչում էին առջևից, երբ մարդիկ գնում էին նրանց հետևից և ւպասու՛ էին դանդաղողներին ու հետ մնացողներին: Ամենազարմանալին, ինչպես պատմում է Կալլիսթենեսը, այն էր, որ գիշերը թռչունները կռկոտցով կանչում էին ճամփից շեղվածներին և կռկոտում այնքան ժամանակ իհնչև որ մարդիկ նորից գտնում էին ճանապարհը:

Երբ անապատը հետևում մնաց և սրբան մոտեցավ տաճարին, Ամնի քուրմը դիմելով Ալեքսանդրին՝ ասաց, թե Ամոն աստվածը ողջունում է նրան որպես իր որդուն: Արքան հարցում արեց, թե արդյոք իր հորն սպանողներից որեւէ մեկը չի՝ խուսափել պատժից: Բայց քուրմն Ալեքսանդրին արգելեց սրբապղծութուն անել և ասաց, թե նրա հայրը մահկանացուների դասից չէ: Այնժամ թագավորը փոխեց հարցի ձևը և տեղեկացավ թե Փիլիպոսի բոլո՞ր սպանողներն են պատիժ կրել, ասա հարցրեց իր մասին՝ իրեն վիճակվելո՞ւ է դառնալ բոլոր մարդկանց տիրակալը: Աստված պատասխանեց, որ դա կվիճակվի նրան և որ Փիլի

յոսի վրեժը լուծ լսծ է լինվին: Արքան աստծուն մատուցեց հոյակապ լծաներ, իսկ մարդկանց դրամ բաժանեց:

Այսպես է գրում պատգամախոսի պատասխանների մասին պատմա լուսնների մեծամասնությունը: Ալեքսանդրն ինքն էլ մորը գրած նամա կում ասում է թե ինչ-որ գաղտնի դուշակություններ է ստացել, որոնք վերացարձին կպատմի միայն նրան: Ոմանք պատմում են թե քուրմը ցանկանալով բարեկամաբար ողջունել Ալեքսանդրին՝ իր բարբարոսա կան արտասանությամբ «ն»-ի փոխարեն «ս» է ասել, այնպես որ ստաց վել է՝ Օ, Ջեսի որդի»¹ Ալեքսանդրի սրտովն էր այդ սխալասությունը իսկ այստեղից էլ սկիզբ է առնում այն սյամությունը, թե աստված նրան անվանել է Ջեսի որդի: Ասում են նաև, թե Ալեքսանդրը Եգիպտո սում յալ է Պսամմոնին: Փիլիսոփայլ ամբողջ աշածից նրան ամենից շատ գուր է Լեկել այն միտքը, թե բոլոր մարդկանց աստված է կառավա լում յանգի յուրաքանչյուր մարդու մեջ եղած ղեկավարող սկզբնապատ հառը աստվածային ծագում ունի: Ալեքսանդրն ինքը այս առիթով էլ ավելի իմաստուն էր դատում և ասում էր, որ աստված բոլոր մարդկանց րնդհանուր հայրն է բայց աստված իրեն առանձնապես մոտեցնում է մարդկանցից ամենալավերին

XXVIII Ընդհանրապես Ալեքսանդրը բարբարոսների հանդեպ իրեն շատ հպարտ էր պահում, այնպես որ ասես կատարելապես համոզված էր, թե ինքն աստվածներից է ծագում և աստծո որդին է: Իսկ հույների Վտ նա իրեն պահում էր ավելի զուսպ և ավելի պակաս համառորին Եր պահանջում, որ իրեն աստված ճանաչեին: Ճիշտ է Սամոսի առիթով հույներին ուղղած նամակում նա գրում է «Ես ձեզ չէի տա այդ ազատ սփառաբանված քաղաքը, բայց դե տիրեցեք դրան քանի որ դա դոք տացել եք նրանից, ով որ այն ժամանակ Լեկել է ձեր տիրակալը և իմ հայրն էր կոչվում»: Ընդ որում նա ի նկատի ուներ Փիլիպոսին: Չի տադայում, սակայն նևտից վիրավորված, դաժան տառապանքներ ապ րլիս, Ալեքսանդրն ասել է «Այդ, բարեկամներս, արձուն է հոսում, այլ չէ թե

Ավիշ, որ ծորո մ է երկնքի երջանիկ բնակիչների մարմնից»

Մի անգամ Լյբ ամպլ ուժղին որ տացել է և յուրը վախեցել Լն ւլտեղ ներկա եղած սոփեստ Անաքսարքոսը դարձել է Ալեքսանդրին սլ «Ջէ՞ որ դու սյգպիււի բան շես կարող անել Ջեսի որդի»: — «Ջէ մ

Հունարեն «Օ պայլիոն» — Օ զավակս» «Օ՞, պայ Դիոս» — «Օ Ջեսի որդի»:

էլ ուզում: Ինչո՞ւ սարսափ ներշնչում իմ բարեկամներին, ինչպէս դու
ես խորհուրդ տալիս,— պատասխանել է Ալեքսանդրը ծիծաղելով:— Ձե՞-
որ քեզ դուր չի գալիս իմ ճաշը, որովհետև սեղաններին ձուկ ես տես-
նում, այլ ոչ թէ սատրապների գլուխներ»: Եվ իրոք, ասում են, տեսնելով
այն մանր ձկները, որ ուղարկել էր թագավորը Հեփեստիոնին՝ Անաքսար-
քոսը նման մի բան է ասել, ցանկանալով ծաղրել նրանց, ովքեր իրենց
վտանգների ենթարկելով, մեծ ջանքերի գնով փառքի են հասնում, բայց
հաճույքների ու բավականութունների հարցում քիչ կամ համարյա բո-
լորովին չեն տարբերվում սովորական մարդկանցից: Ասված այս ամենից
պարզ է, որ Ալեքսանդրն ինքը չէր հավատում իր աստվածային ծաղ-
մանը և չէր պարծենում դրանով՝ այլ այդ մտացածի՛ բանից օգտվու՛
էլ նրա համար, որպէսզի ստրկացէր ուրիշներին:

XXIX Եգիպտոսից վերադառնալով Փլունիկիա Ալեքսանդրը զոհեր
մատուցեց աստվածներին և հանդիսավոր երթեր շուրջպարային ու ող-
բերգական խմբերի մրցումներ կազմակերպեց: Այս մրցումները նշանա-
վոր էին շ միայն կահավորանքի շքեղութեամբ, այլև կաղմակերպիչնե-
րի՝ մրցակցութեամբ, քանզի խորեգոսները Կիպրոսի թագավորներն էին:
Սակայն վիճակահանութեամբ ըստ ֆիլաների ընտրված աթենական քա-
ղաօացիները վարմանալի փութաջանութեամբ էին մրցում միմյանց հետ:
Սուանձնապէս համար էր պայքարը սալամիցի Նիկոկրեոնի և սուլիացի
Պասիկրատեսի միջև: Հստ վիճակահանութեան նրանց վիճակվել էին ամե-
նանշանավոր գերասանները՝ Պլուսիկրատեսին՝ Սթենոդորոսը, իսկ՝ Նիկո-
կրեոնին՝ Թեսալոսը, որի աջողութեամբ շահագոգոված էր ինքն՝ Ալեք-
սանդրը: Սակայն նա շղթանորեց իր համակրանէր այդ գերասանի նկատ-
մամբ, մինչև որ քվերակութունը հաղթանակը շնորհեց Աթենոդորոսին
և միայն այդ ժամանակ, ինչպէս հաղորդում են արդեն թողնելով թատ-
րոնը, ասաց որ հավանություն է տալիս դատավորներին, բայց ինքը
կգերադասէր տալ իր թագավորութեան մի մասը, որպէսզի շտեսներ
Թեսալոսին պարտված Սակայն երբ Աթենոդորոսը, որը աթենացիների
կողմից տուգանվել էր Պիոնիսոսյան օտերի մրցումներին շնորհայանալու
համար արքային խնդրէց մի նումակ ուղարկել՝ ի պաշտպանութուն
իրեն, Ալեքսանդրը թէև այդ բանը շարեց էլ բայց մուծեց տուգանքը
նրա փոխառէն: Լիկոնես Սկարփիոսցին, որը հիանալի խաղալիս է եղել
բեմում իր դերին ինչ որ կատակերգութեան մեջ ավելացրել է մի տող,
որը տասը սաւանդի խնդրանք է ամփոփել Ալեքսանդրը ծիծաղել է և
գերասանին այդքան դրամ նվիրել:

Այդ ժամանակ Դարեհն իր բարեկամներին նամակով Ալեքսանդրի մտ ուղարկեց, առաջարկելով տասը հազար տաղանդ՝ որպես գերիների փրկագին, Եփրատից այս կողմ եղած հողերը, իր դուստրերից մեկին՝ Ալեքսանդրին կնութլան, ինչպես նաև իր բարեկամութունն ու դաշինքը: Այդ Ալեքսանդրը այս առաջարկութունը հայտնեց մերձավորներին, Պարսիներն ասաց «Եթե ես Ալեքսանդրը լինեի, կընդունեի պայմանները»:

«Երդվում եմ Զեսով, ես էլ այդպես կանեի,— բացականչեց Ալեքսանդրը,— եթե Պարսիներն լինեի»: Իսկ Դարեհին Ալեքսանդրը գրեց, թե նա կարող է հուսալ ամենասրտագին ընդունելութուն եթե գա մակեդոնացիների մոտ: Հակառակ դեպքում ինքը կգնա պարսից արքայի լ'մ:

XXX Շուտով, սակայն, նա զղջաց այս պատասխանի համար քանի որ Դարեհի կինը մահացավ ծննդաբերութունից Ալեքսանդրը չէր ինքնուրու բարեպատեհ առիթը: Նա հրամայեց թագուհուն թաղել ամբողջ ճոխությամբ՝ շինայելով ոչ մի ծախս: Տիրեոսը սլարսիկ կանանց հեղձարված ներքինիներից մեկը փախավ մակեդոնացիների ճամբարից և ձիով երկար ճանապարհ կարելով՝ հասավ Դարեհին որպեսզի հաղու գեր նրա կնոջ մահը: Բարձրաձայն հեկեկալով՝ արքան սկսեց գլուխը ձեռնել և բացականչել «Օ՛ պարսից շար ճակատագիր: Արքայի կինն ու բույրը ողջ-ողջ ընկել է թշնամու ձեռքը, իսկ վախճանվելիս՝ զրկվել է արքայական թաղումից» — «Բայց, արքա, — ընդհատեց նրան ներքինի,— ինչ վերաբերում է թաղմանը և թագուհուն վախել մեծարանքներին, դու հիմք չունես տրտնջալու ընդդեմ պարսից շար բախտի: Ոչ իմ տիրուհի Ստատիրեն, քանի դեռ կենդանի էր, ո՛չ մայրդ, ո՛չ դուստրերդ որևէ բանի կարիք չեն ունեցել նրանք օգտվում էին բոլոր այն բարիքներից և արտոնութուններից, ինչ նախկինում ունեին, բացառությամբ քեզնից ճառագող լույսը տեսնելու հնարավորության լույս որը տիրակալ Որմիզդի կամքով նորից սկսել է շողշողալ նախկին փայլով: Իսկ երբ Ստատիրեն մեռավ, չի եղել այնպիսի մի մեծարանք, որ նրան մատուցած շինեն, և նույնիսկ թշնամիներն էին ողբում նրան: Զէ՞ որ Ալեքսանդրը նույնքան գթասիրտ է պարտվածների հանդեպ, որքան ահեղ և ճակատամարտում»: Երբ Դարեհը լսեց այս պատմութունը, հուզմունքն ու խիշտը նրա մեջ հրեշավոր կասկած հարուցեցին, և, ներքինուն վրանի խորքը տանելով, ասաց «Եթե դու ինքդ, ինչպես պարսից ռազմական լախտը չես անցել մակեդոնացիների կողմը, առաջվա պես ինձ՝ Դարեհին համարում ես քո տղը երդվեցնում եմ քեզ Միթրայի լույսով և

Թագավորիդ աջով, ասա ինձ, արդյոք ես այժմ լե՞մ ողբում Ստատիրեին հասած դժբախտություններից փոքրագույնը լոկ և մեր գլխին լե՞ն եկել ավելի դաժան դժբախտություններ քանի դեռ կենդանի է եղել նա: Ավելի լավ լե՞ր լինի մեր պատվի համար, որ մեր շարաբախտությունների մեջ հանդիպած լինեինք արյունարբու և դաժան մի թշնամու: Մի՞թե երի տասարդն աչդպիսի պատիվներ կտար թշնամու կնոջը, եթե նրա հարաբերությունը սրա հետ մաքուր լիներ» Արքան դեռ չէր հասցրել արտասանել այս խոսքերը էրբ Տիրեոսն ընկավ նրա ոտքերը՝ աղերսելով զուր տեղը շնորհակցել Ալեքսանդրին ու շնորհակցել իր հանգուցյալ կնոջն ու բրոջը Չպետք է ասում էր նա դժբախտության մեջ ընկնելիս մարդ իրեն զրկի ամենամեծ սփոփանքից՝ այն գիտակցությունից, որ դու պարտվել էս մի մարդուց որն օժտված է գերմարդկային բնությամբ: Տիրեոսը Գարեհին կոչ էր անում հիացմունքի տուրք տալ այն մարդուն, ուրի պարկը շտությունը պարսիկ կանանց հետ վերաբերվելիս նույնիսկ գերազանցում է այն խիզախությանը, որ նա դրսևորել է պարսիկ տղամարդկանց հետ ընդհարվելիս: Իր խոսքերի ճշմարտացիությունը ներքինին հաստատեյ ահեղ երդումներով, ինչպես և բերեց Ալեքսանդրի ժաժկալությունն ու մեծահոգության շատ օրինակներ: Այնժամ, զուրս գալով իր մերձալորների մոտ, Գարեհը ձեռքերը հրկինք կարկառեց և աղերսանքով դիմեց աստվածներին. «Աստվածն ք, դու ք որ հովանավորում եք իմ տոհմն ու թագավորությունը, տվե՛ք ինձ հաջողություն՝ վերականգնելու պարսից հզորությունը, որպեսզի իմ տերությունը նորից լինի նույնքան ևրջանիկ, որքան որ էր, երբ ևս այն ստացա, և որպեսզի, դառնալով հաղթող Լս կաշողանամ երախտահատույց լինել Ալեքսանդրին այն ամենի համար, ինչ նա արեց իմ մերձավորներին, երբ ևս ընկել էի դժբախտության մեջ: Իսկ եթե հատուցման ու մեծ փոփոխությունների ճակատագրական ժամը գա երբ ընկնի պարսից տերությունը, թող ոչ ոք, բացի Ալեքսանդրից, չնստի Կյուրոսի գահին»: Գրողների մեծ մա

ր հենց այսպես է հաղորդում այս իրադարձություններն ու խոսքերը: XXXI Երբ Ալեքսանդրն արդեն նվաճել էր բոլոր հողերը մինչև Նաբատ գնաց Գարեհի վրա, որը նրան ընդառաջ էր գալիս մեկ միլիոնի հասնող բանակով: Ճանապարհին մերձավորներից ինչ-որ մեկը ցանկանալով ծիծաղեցնել թագավորին, նրան պատմեց, թե ինչ խաղ են խաղացել գումակայինները բաժանվելով երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առաջնորդն ու ղորավարը, նրանք մեկին անվանել էին Ալեքսանդր, իսկ մյուսին՝ Գարեհ: Նախ նրանք միմյանց վրա հողակոտորել էին նետում, ապա սկսվեց բռնցքամարտը, և, վերջապես պալքա-

11 ատար սլահին նրանք դիմեցին քարերի ու մահակների: նրանցից շատերին անհնար էր հնազանդեցնել: Լսելով այդ, արքան հրամայեց, որ սուաջնուղները մենամարտի դուրս գան: Նա ինքը զինեց «Ալեքսանդրին», իսկ Փիլոտասը՝ «Դարեհին»: Սմբողջ զորքը հետևում էր մենամարտին՝ փորձելով տեղի ունեցող իրադարձության մեջ տեսնել ապագան: Հստակ մարտում հաղթեց նա, ում անվանում էին Ալեքսանդր: Թագավորը նրան նվիրեց տասներկու գյուղ և իրավունք վերապահեց հագնելու պարսկական զգեստ: Այս բանը պատմում է էրատոսթենեսը:

Դարեհի հետ մեծ ճակատամարտը տեղի ունեցավ ոչ թե Արբելայի մոտ ինչպես գրում են շատերը, այլ՝ Գավգամելայի Սյս անվանումը տեղական բարբառով նշանակում է «Ուղտի տուն» քանի որ հին թագավորներից սեկը, միասապատ ուղտով թշնամուց փրկվելուց հետո ուղ ուղտին տեղավորել է այստեղ և դրա սլահելու համար եկամուտ է նշտակել մի քանի գյուղերից:

Բոնգրոմիան ամսին, մոտավորապես այն ժամանակ, երբ Սթենքում յոս 1 են կազմակերպել կրոնածեսերը տեղի ունեցավ լուսնի խավալում: Խավարումից հետո տասնմեկերորդ օրը, երբ Լրկու զորքն արդեն իմյանց աչքի առաջ էր, Դարեհը իր զորականներին հրամայեց շարված մնալ և ջահերի լույսի տակ դորատես կատարեց: Սլեքսանդրն էլ, քանի գես մակեդոնացիք չնած էին, գուշակ Արիստանդրոսի հետ իր վրանի առաջ կատարեց ինչ որ գաղտնի սրբազան ծեսեր և գոհեր մատուցեց Պորոս աստծուն: Ամբողջ հարթավայրը՝ Նիֆատոնի և Գորդինացոց լեռների միջև լուսավորված էր բարբարոսական գուլքի կրակներով պարսիկների համբարից անորոշ ղժվժոց էր գալիս անեղր ծովի խշշոցի ղ լան: Ալեքսանդրի մերձավորներից ավագագույնները, և հատկապես արմենիոնը, ապշած էին թշնամու բազմամարդությանը և միմյանց ասում էին, թի այդպիսի զորքին բաց մարտում հաղթելը լափազանց դժվար էլինի: Մոտենալով Ալեքսանդրին որը հենց նոր էր ավարտել սահաբերությունը նրանք խորհուրդ տվին դիշերով հարձակվել թշնամու վրա ու պետքի մթան մեջ թաքցվի այն, ինչը առաջիկա ճակատամարտում կարող է ամենամեծ վախը ներշնչել մակեդոնացիներին: Ալեքսանդրի նշանավոր պատասխանը՝ «Ես հաղթանակը շեմ գողանում», ումանց ափազանց թեթևամիտ և անտեղի թվաց այդպիսի վտանգի հանդիման: Մյուսներն էլ այն կարծիքի էին, թե Ալեքսանդրը հաստատ է աս ավինում իր ուժերին և ճիշտ է կանխատեսում ապագան: Նա լեր ուզում, որպեսզի Դարեհը, որը նախկին անհաջողության համար ղ ղադրում էր լեռներին, կիրճերին ու ծովին, այժմյան պարտություն

պատճառը գիշերն ու մթությունը համարեր և հանգդներ ևս մի ճակատամարտ: տալ: Ալեքսանդրը հասկանում էր, որ Դարեհը, որի ձեռքին կային այդքան ուժեր ու այդքան ընդարձակ երկիր, մարդկանց կամ զէրուզրահի պակասության պատճառով պատերազմը չի դադարեցնի, սլ դա կանի միայն այն ժամանակ, երբ, բաց ճակատամարտում պարտվելով՝ կորցնի արիությունը և հույսը կտրի:

XXVII Մերձավորները մենակ թողին թագավորին և Ալեքսանդրը սլառկեց Վանգոտանալու իր վրանում: Ասում են նա այնպես պինդ է քնել գիշերվա մնացած յասը, որ, հակառակ իր սովորությանը, չի արթնացել լուսաբացին: Դրանից զարմացած զորավարներն իրենք են զինվորներին տվել առաջին հրամանը՝ անցնել նախաճաշի: Ժամանակը խուչլ չէր տալիս երկար սպասել, և Պարմենիոնը մտնելով վրան ու կանգնելով Ալեքսանդրի մահճի կողքին երկու թե երեք անգամ ձայն է տվել նրան: Երբ Ալեքսանդրը արթնացել է, Պարմենիոնը հարցրել է, թե ինչու է չնում հաղթողի քնով, թեև առջևում մեծագույն ճակատա սարտ ունի: Ալեքսանդրը ժպտալով ասել է «Իսկ ի՞նչ է դու շե՞ս հա մարում թե մենք արդէն ղաղթանակ ենք տարել թեկուզև նրա համար, որ շպեռք է այլևս թափառենք աչս վիթխարի և ամայի երկրում հետա պնդելով ճակատամարտից խուսափող Դարեհին»

Ոչ միւսն ճակատամարտից առաջ այլև մարտի թեժ պահին Ալեքսանդրն իրեն զրսւտրում էր որպես մեծ ոսպմիկ, որը չի կորցնում արիությունն, ու սառնասրտությունը Մարտի ժամանակ ձախ թևը որը պտնվում էր Պարմենիոնի հրամանատարության տակ, սկսեց անկանոն յահանջել սղմելով բաղտրիական հեծելազորի կողմից, ուն աղմուկաղաղակով սրընթաց արվածեց մակեդոնացիներին, մինչդեռ Մազևոսի հեծյալները շրջանցեցին փաղանգը և հարվածեցին գումակի պահազորի վրա: Պարմենիոնը սուրհանդակների միջոցով տեղեկացրեց Ալեքսանդրին, թե ճամբարն ու գումակը ձեռքից կգնան, եթե թիկունքի շոկատներին սրքան ուժղ օգնական զորամասեր շուղարկի անհապաղ դրա հա մար առաջասլա՝ մարտական գծից զորքի մի մասը հանելով: Հենց ճիշտ այդ ժամանակ Ալեքսանդրը իրեն շրջապատած զորականներին աղղանշան էր տալիս հարձակվելու: Լսելով օգնության խնդրանքը՝ նա բացականչեց, թե, հավանաբար, Պարմենիոնի խելքը տեղը չէ, եթե թոհուրհի մեջ մոտացել է, որ հաղթողներին է հասնում թշնամիների ամբողջ ունեցվածքը, իսկ պարտվածները պետք է հոգան ոչ թե ունեցվածքի մասին, այլ որ քաջաւար մարտնչելով՝ փառքով մ սհ ընդունեն:

Հրամայելով սա հաղորդել Պարմենիոնին Ալեքսանդրը գլխին դրեց սաղավարտը: Մնացած բոլոր զենքուզրա՞ր նա դեռևս վրանում էր հագելու: Սիցիլիայում դործված հիպենդիման՝ գոտիով, իսկ դրա վրալից վուշե կրկնակի գրա՞ը որը վերցրել էր Իսսոսի մոտ գրալած ոսպմավարից: Երկաթե սաղավարտը, որը Թլոփիլոսի ձեռքի աշխատանքն էր, սչնպես էր շողշողում, ասես զուտ արծաթից լիներ: Սաղավարտին ամրացված էր թսնկագին քարերով ընդելուզված երկաթե մի վահանակ, սրլ պարանոցն էր պաշտպանում: Ալեքսանդրը զարմանալի թեթև ու հիանալի կոփվածքով մի սուր էր կրում որը կիտիս ցինիբի նվերն էր, ճակատամարտերի ժամանակ սուրը սովորաբար սրա գլխավոր զենքն է եղլ Ամենաշքեղը թիկնոցն էր, որ սրբան հաղնում էր գրահի վրայլց: Այս գզևտը, որը Հելիկոն մվագի ձեռքի գործն էր, Ալեքսանդրին՝ ի նշան հարգանքի, նվիրել էին Հսոգոս քաղաքի բնակիչները և նա մարտի պատրաստվելիս միշտ հաղնում էր: Սահմանելով մարտական կարգը, հրամաններ տալով, քաջալիրելով զորականներին և ստուգելով նրանց սպասարատականությունը Ալեքսանդրը շրջանցելով պիտեց պորաշարքերը ու թլ Բուկեֆալոսին նստած, այլ մի ուրիշ ձիու, քանգի Բուկեֆալոսն սրղին ջա՞ել շէր և նրա ուժերը պետք էր խնայլլ: Բայց հենց մարտից առաջ թագավորի մոտ լերեցին Բուկեֆալոսին և գտակելով նրա մեջ լին Ալեքսանդրն իսկույն սկսեց արձակումը:

XXXIII Երկ ր խոսակցությունը թևաշացիներելի և մնացած հույ յլլի ետ, ոլ սնր լարձը գոշյուններով նրան կոշ էին անում իրենց տալլլ բարբարոսներելի դում, Ալեքսանդրին էլ ավելի հուստատակամություն ուղեց և, նիզակը ձախ ձեռքով բռնած, իսկ աջը վիր բարձրացնելով, յտ, ինչպես պատմում է Կալլիսթենեսը, դիմեց աստվածներին ուղերսելով, որպեսզի նրանք, էթև ինքն իսկապես Չևսի որղին է օգնեն հույներին և արիություն ներշնչլն: Գուշակ Արիստանդրոսը՝ շիրմակազգեստ ու սոխլ պսակը գլխին, թագավորի հետ կողք կողքի արշավելիս, ցույց ուղեց մի արծիվ, որը ճախրում էր Ալեքսանդրի գլխավերևում ու թռավ ողիզ պեպի թշնամին: Ամենքը ովքեր որ դա տեսան, սգեշնչվեցին: Մարտիկները խրախուսում էին միմյանց և փաղանգը, հեծելազորի շևտից, հորդում էր գեպի թշնամին: Բարբար սները նահանջեցին, նախրան առաջապահ շարքերը կհասցնեին մարտն սկսել Կատաղորեն հետապնդելով ջախջախված թշնամուն՝ Ալեքսանդրը պարսիկներին սեղմեց պեպի հակառակորդի դասավորության կենտրոնը, որտեղ գտնվում էր Դարեսն ինքը: Ալեքսանդրը հեռվից նշմարեց նրան պարսկական գինլորների առաջին շարքերի միջով — Դարեսը կանգնած էր բարձր մար-

տակառքի վրա թագավորական ջոկատի կենտրոնում բարձրահասու և ու գեղեցիկ, շրջապատված զինավառ հեծյալների բազմությամբ, որոնք կիպ միավորվել էին մարտակառքի շուրջը և պատրաստ էին դիմադրավել թշնամուն։ Սակայն որքան ավելի էր մոտենում Ալեքսանդրը նրանք այնքան ավելի էին իրարանցման մեջ ընկնում իր առջևից քշելով նա հանջողներին, ջարդելով շարքերը նրանց, ովքեր դեռևս դիմանում էին, նա սարսափեցրեց և ցրիվ տվեց Դարեհի համարյա բոլոր թիկնապահներին։ Միայն ամենից համարձակներն ու աղնիվներն էին իրենց թագավորի համար կռվում մինչև վերջին շունչը։ Ընկնելով միմյանց վրա՝ նրանք դժվարացնում էին հետապնդումը ջղաձգորեն կառչելով հեծյալներից ու նրանց ձիերից։ Սյս ահավոր գործողությունը ծավալվում էր Դարեհի աչքի առաջ և թագավորին շրջապատող պարսիկ զորականներն արդեն կործանվում էին հենց նրա օտքերի մոտ։ Բայց կառքը հետ դարձնել ու դրանով դնալն անհնար էր քանի որ բազում դիակները շէին թողնում որ անիվները շարժվեն տեղից, իսկ ձիերը, դիակների կույտերի տակ համարյա, ծածկված ծսոս էին լինում՝ կառապանին միանգամայն անազնական դարձնելով։ Զենքն ու դասքը լքելով՝ Իարեհը, ինչպես պատմում են, իրեն նետեց վերջերս ծնած զամբիկի վրա ու փախաւ։ Լստ հրևույթին նրան այս անգամ չէր հսջողվի անհետանալ, եթե նորից Պարմենիոնից սուրհանդակներ չհասնեին օգնության կանչելով Ալեքսանդրին քանդի նրանց թևում թշնամյների զգալի ուժեր դեռևս քայքայված չէին և դիմադրություն էին ցույց տալիս։ Ընդհանրապես Պարմենիոնին մեղադրում են, որ այս ճակատամարտում նա զանդադկոտ է եղել և անգործունյա — կամ այն է որ ծերության դուանը հասած լինելով՝ իրա մեջ արդեն չկար նախկին խիզախությունը, կամ ի ինչպես պնդում է Կալլիսթենեսը՝ նա նեղվում էր Ալեքսանդրի աճող իշխանությունից ու հզորությունից և նախանձում էր նրան։ Սրտենդված այն բանից, որ Պարմենիոնը օգնություն է պահանջում Սլեքսանդրը, լորա կաններին գործի ճշմարիտ էությունը չհայտնելով, ազդանշան տվեց դա դարեցնել հետապնդումը, իբրև թե մութն ընկել է և ժամանակն է վերջ տալ արյունահեղությունը։ Սլանալով դեպի զորքի այն մասը, որը վտանգի տակ էր՝ Ալեքսանդրը ճանապարհին իմացալ որ թշնամիները լրիվ ջախջախվս ծ են և փախուստի մատնված։

XXXIV. Ճակատամարտի այսպիսի վախճանը, թվում էր, թե վերջ նակահապես կոտրել էր պարսիկների հզորությունը։ Հուշակվելով Ասիայի թագավոր Ալեքսանդրը ճոխ զոհաբերություններ էր անում, բարեկամ

նելին բաժանում հարստություններ պալատներ, նրանց կառավարելու էր տալիս ամբողջ մարզեր: Չգտելով շահել հույների հարգանքը՝ Ալեք սանդրը նրանց գրեց թե բռնապետների իշխանո թյունն ամենուրեք պետք է ոչնչանա և բոլոր պետություններն ազատ ու անկախ դառնան: Պլատացիներին էլ հատուկ ուղերձ հղեց՝ խոստանալով նորից կառուցել նրանց քաղաքը քանզի նրանց նախնիները մի ժամանակ իրենց հողերը տրամադրել են հանուն Հունաստանի մղվող ճակատամարտի: Ուղարկելով մի մասը արքան ուղարկեց Իտալիա Կրոտոնի բնակիչներին ցանկանալով մեծարել արիությունն ու փութաջանությունը ըմբիշ Ֆալուսի, որը պարսից պատերազմների ժամանակ, շնայած մնացած բոլոր իտալիոտներն արդեն հուլաները կտրել էին հույների հաղթանակից, սխիական ծախսով նազ սարքալորել է Լիավ Սալամբա՝ ցանկանալով վտանգը կրել բոլորի հետ միասին: Ալեքսանդրն աշտպես էր գնահատում արիությունը, այսպես ջերմեռանդ էրախ օազիւությամբ էր հիշում փառավոր գործերը

XXXV. Բարեկտնի տարածքով անցնելիս, սրն ամբողջովին իսկույն գատակվեց նրան Ալեքսանդրն ամենից ավելի դաշմացած էր այն սնդունդով:՝ որտեղից ասես խնդր աղբյուրից, անվերջ կրակ էր լայթքում, և նավթի սուսա հոսանքով սրբ լիճ էր հոսում սնդունդի մոտերքում: Նավթը շատ է հիշեցնում լճանային ձյուլքը, բայց այնքան քնկարծուակ է կրակի նմանակ սյրվում է դեռ բոցին շփպած՝ հենց միայն ու լն յուշեից, ու կրակէն է արձակում, և հաճախ բոցավառվում է շրջակա սղբ: Ցանկանալով Ալեքսանդրին ցույց տալ նավթի բնական ուժը՝ շարրարտաներն այդ հեղուկով ցողեցին փողոցը որը տանում էր գեպի ա ն տունը, որտեղ իջել էր թագավորը: Այնուհետև, երբ մթնել էր, նրանք կանգնեցին այդ փողոցի մի ծայրում և ջահերը մոտեցրին թրք ված տեղերին: Նավթն իսկույն բոցավառվեց. բոցը կայծակնաչին արագությամբ տարածվեց մի ակնթարթում հասալ վողոցի հակառակ ծայրը, այնպես որ փողոցն ամբողջովին կրակով էր բռնված: Նրանց մեջ ովքեր սովորաբար լվանում և օծում էին արքային, զվարճացնելով նրան դանազան կատակներով ու ձգտելով աշխուժացնել նրա արամադրությունը, կար ուն Աթենոփանես: Մի անգամ, երբ թագավորի հետ լողարանում էր Ստեփանոս անունով մի տղա, որը հինալի ձայն ուներ, բայց ինքը շատ տղեղ էր ու ծիծաղելի Աթենոփանեսն ասաց

«Արքա, շե՞ս ուզում, որ այս նյութը փորձենք Ստեփանոսի վրա:

՝ Տեքստը վնասված է:

Եթե դա նույնի կ նրան կալի ու շահնալի ապա ես առանց տատան վելու կընդունեմ, որ այս նշութի ուժն ահալոր է և անհաղթահարելի: Ստիփանոսը սիրով համաձայնեց այդ փորձութեանը, բայց հենց որ նալթը քուցին տղային և կրակը մոտեցրին վառ բոցը ոտից գլուխ բռնեց նրան, ինչը Ալեքսանդրին սաստիկ շփոթութեան ու սարսափի մեջ դցեց: Եթե այնտեղ, բարերախտաբար, չլինեին այն մի քանի ծառաները որոնք ձեռքներին ջրով լի ամաններ ունեին վացման համար բոլորովին հնարալոր չէր լինի կանպնեցնել բոցը, բայց նույնիսկ այդ ծառաներն էլ Ս.Ժ դժվարութեամբ կարողացան հանգցնել տղայի մարմինը բռնած կրակը, և նա դրանից հետո շատ ծանր վիճակում էր

Որոշ մարդիկ ձգտելով հաշտեցնել ավանդադրուցը իսկոթեան հետ վովին ճշմարտանման պնդում են, թե հենց նալթն է եղել այն թույնը, որով Մեղեան օժէլ է ողբերգութեանն հրում երգված պսակն ու պէպոսը: Երանց Լնթադրութեան աժաձայն կրակը դուրս չի պրծել այդ առարկաներից ու ինքնիրեն չի ծագել: Սոսկ այն ժամանակ, երբ բոցը մոտեցրել է ն, պսակն ու պէպոսը իսկույնեթ այն ձգել են դեպի իրենց և ակնթարթորեն վառվել, քանդի հեռվից հոսող-եկող կրակի ճառագայթներն ու շիթերը որոշ մարմինների բերում են միայն լույս ու տաքութեան, իսկ ուրիշ՝ չոր ու ծակոտեկեն կամ յուղացին հեղուկներով ներծծված մարմիններում կուտակվում է վերածվում կրակի և արագ փոփոխում է նշութը

Նալթի առաջացման հարցի մասին վեճեր են ծագել թե դա արդյո՞ք եղել է կամ, ավելի շուտ վառվող հեղուկ, որ դուրս է հոսում ընդերքից այնտեղ, որտեղ հողն իր բնույթով յուղ տ է ու հրեղեն: Բարելոնիան շատ շոգ էր կիր է, այնպես որ դարու հատիկները հաճախ ցատկոտում թռչկոտում են հողից որն այդ տեղերում տոթի աղոցութեան տակ մշտապես տատանվում է: Բարելոնիացի բնակիչներն էլ շոգ եղա սակին էնում են ջրով լցված կաշվի տիկերի վրա: Հարապալոսը որ կուտակալ էր թողնված այս երկրում, ցանկացել է Քաղալորական պալատը վարդարել ունական բույսերով և հասել է հաջողութեան Հողը միայն բաղեղը չի քնդունել: Կլիման այդտեղ շոգ է իսկ բաղեղը մի բույս է որ գովութեան է սիրում, դա համառեղեն անհնար է, և այդ պատճառով լողեղը մշտապես ոչնչանում է: Ես նարծում եմ, որ այսպիսի շեղումները, եթե դրանք, իհարկե շափաւաւց ընդարձակ չլինեն նույնիսկ բժախնդիր ընթերցուների կշտամբանքը չեն հարուցի:

XXLVІ Ալեքսանդրը տիրեց Սուզային, որտեղ թագավորակ սնւլա լատում գաավ քառասուն հազար տաղանդ հատած դրամ, ինչպես և զսնաղան իրեղեն ու անհամար գանձեր: Այնտեղ հայտնաբերեցին, ինչպես պատմում են, նաև հինգ հազար տաղանդ հերմիոնցան ծիրանի, որը դանձատանն ընկած էր մնացել արյուր իննսուն տարի, բայց դեռ պահպանել էր թարմութունն ու պայծառութունը Դա հնարավոր է լղել, ինչպես ենթադրում են, շնորհիվ այն բանի, որ ծիրանագույն գործվածքների ներկերը պատրաստում են մեղրով, իսկ սպիտակներինը՝ սպիտակ ձկնով, իսկ մեղրն ու ձկնը գործղածքներին երկար ժամանակով մաքուր ու պայծառ տեսք են տալիս: Դիմոնը պատմում է, թե պարսից արքաները իրենց գանձատներում պահպանում էին նեղոսից և Լատրոսից բերված ջրով լեղուն ամաններ, ինչը պետք է վկայեր պարսից տերության վիթխարի շտիերի և ամբողջ աշխարհն իրեն Լնթարկող իշխանության հլորության մասին:

XXXVII Պերսիս ներխուժումը սեծ դժվարութունների հետ էր կապված, անի որ այնտեղ տեղանքը լեռնոտ է, սակավամատչելի: Բացի այդ, էրկիրը պաշտպանում էին ամենանշանավոր պարսիկները (Դարեհն լնրը փախուստի էր դիմել): Բայց Ալեքսանդրի մոտ ուղեցույց հարվեց, որը զորքը տարավ այլ՝ ամենակարճ ճանապարհով: Այդ մարդը տիրադատում էր երկու լեղվի քանի որ հոլ կողմից լիկիացի էր իսկ մարկողմից պարսիկ: Հենց այս էլ լնչպիսի ասում են, ի նկատի է ունեցել Պլուտարխոսը՝ որն Ալեքսանդրի լսխաը գուշակելիս, երբ նա դեռ Լրեխա է լղել, ասել է լլ մի լիկիացի նյա համար ուղեցույց է լինելու պարսիկների դեմ կատարվելիք արշավանքում: Սյատեղ շատ գերիների են կոտորել: Ալեքսանդրն ինքը գրում է, թէ հրամաս է տվել մլոցնել գերիներին քանզի դա իր համար օղոակար էր համարում: Պատմում են, թե այնտեղ այնքան գրամ են գուլ որքան Սուլայում, իսկ գանձերն ու թանկագին իրերն այնտեղից գլսու են հանլ տաը Բուշար զորե սլլով ու հինգ հազար ուղտով:

Տեսնելով Քսերքսեսի մեծ արձանը սլրը տապալել էր խառսիխուն կլրպով թագավորական պալատը լցվող ամբոխը, Ալեքսանդրը կանգ է առել և, դիմելով արձանին, ինչպես կենդանի մարդու, ասել է «Թող նե՞մ քեզ պառկած մնաս այստեղ նրա համար որ դու պատերազմի էիր լկել հույների վրա թե՞ բարձրացնեմ հանուն ոգու վսեմության և այն արիության, որ դու գրսևորել ես այլ բաներում»: Երկար ժամանակ մտա-

¹ Տեքստը վխաված է

սույզ կանգնած մնալուց հետո, Ալեքսանդրը լուռ հեռացել է: Յանկա նալով հանգիստ տալ իր զորականներին,— իսկ ժամանակը ձմեռային էր,— նա այնտեղ անց է կացրել շորս ամիս:

Պատմում են որ երբ առաջին անգամ նստեց թագավորական դահին՝ ոսկեհյուս ամպհովանու տակ, կորնթացի Դեմարատոսը՝ Փիլիպոսի և Ալեքսանդրի նվիրյալ ծառան ծերունավարի լաց եղավ և ասաց, «Ինչպիսի՞ մեծ ուրախությունից զրկվեցին այն հույները որ նք մեռան՝ շտեմանելով Ալեքսանդրին Դարեհի դահին բազմած»:

XXXVIII Մի անգամ նախքան նորից Դարեհին հետապնդման դուրս գալը, Ալեքսանդրը խրախճանում էր և ուրախանում բարեկամների հետ: Իրենց սիրեցյալների հետ ընդհանուր ուրախությանը մասնակցում էին նաև կանայք: Սրանց մեջ առանձնապես աչքի էր ընկնում ատտիկացի Թախսը՝ ապագա թագավոր Պտղոմեոսի ընկերուհին: Մերթ խելացիորեն փառաբանելով Ալեքսանդրին, մերթ ձեռ առնելով նրան այդ կինը, խմիչքի իշխանության տակ, համարձակվեց արտասանել այնպիսի խոսքեր որոնք լիովին համապատասխանում էին նրա հայրենիքի բարձրին ու սովորույթներին, բայց շափազանց վսեմ էին անձամբ իր համար: Թախսն ասաց թե այս օրը, ծաղր ու ծանակի ել թարկելով պարսից արքաների գոռոզ ապարանքները՝ ինքն իրեն վարձատրված է զգում այն բոլոր զրկանքների համար, որ ինքը կրել է Ասիայում թափառելիս Բայց իր համար է՛լ ավելի հաճելի կլինեք որ հենց հիմա խրախճանող ների այս աշխույժ բազմությամբ գնաք և սեփական ձեռքով թագավորի աչքի առաջ հրի մատներ Քսերքսեսի պալատը որն Աթենքը մատնեց կործանարար հրդեհի: Թող մարդիկ ասեն, թե կանայք, որոնք ուղեկցում էին Ալեքսանդրին, կարողացել են պարսիկներից Հունաստանի վրեժը լուծել առավել լավ քան զորքի ու նավատորմի նշանավոր առաջնորդները: Այս խոսքերն ընդունվեցին հավանության գոշյունով և ուժգին ծափահարություններով: Բարեկամների համառ թախանձանքներից գրողված Ալեքսանդրը տեղից ոստնեց և պսակը գլխին ու ջահը ձեռքին գնաց ամենքի առաջն ընկած: Նրան հետևողների ամբոխն աղմկելով շրջապատեց թագավորի պալատը: Իմանալով տեղի ունեցածը մեծ բերկրանքով, ջահերը ձեռքներին, վազելվազ եկան նաև մյուս մակեդոնացիները: Նրանք հույս ունեին, թե քանի որ Ալեքսանդրն ուղում է հրդեհել ու ոչնչացնել թագավորական պալատը, նշանակում է, մտածում է հայրենիք վերադառնալ և մտադիր չէ ապրել բարբարոսների մեջ: Ոմանք այսպես են պատմում, մյուսներն էլ պնդում են, թե, իբրև, պալատի հրկիզումը նախապես լավ կշռադատված է եղել: Բայց բոլորը համամիտ

նն մի բանում Ալեքսանդրը շուտով միտքը փոխել է և հրամայել հանգ
ղընել կրակը:

XXXIX Անսովոր առատաձեռնությունը որ բնորոշ էր Ալեքսանդրին
ի ծնե էլ ավելի մեծ շափով, քան առաջ գրսևորվեց այժմ, ևրբ նրա
հղորությունն այդքան աճել էր: Ընդամին առատաձեռնությանը միշտ
ուղեկցում էր բարուցակամությունը, որն էլ հենց ընծաներին իսկական
արժեք է տալիս: Բերեմ սոսկ մի քանի օրինակ Արիստոնը՝ պետնացի-
ների առաջնորդը մի անգամ սպանել է թշնամու զորականներից մեկին
և սրա գլուխը ցուցց տալով Ալեքսանդրին ասել «Այսպիսի ընծան մե-
յանում համարվում է ոսկե գավաթին արժանի մի բան»:— «Բայց միայն
դատարդ գավաթին,— պատասխանել է Ալեքսանդրը ծիծաղելով — և ես
բեղ գավաթ կընծալմ բայց նախ գինով կլցնեմ և քո կենացը կխմեմ»:
Մի մակեդոնացի, շարքային զորականներից մի անգամ քշելիս է եղել
թագավորական ոսկով բարձված ջորի: Կենդանին հոգնել է, և լորականը
բեռն իր մեջքին առնելով ինքն է շալակ սծ գնացել Երբ արքան տե-
ւել է նրա շարշարանքները է իմացել, թե ինչն ինչոց է ասել է մակե-
դոնացուն, որը մտադիր է եղել բեռն ուսից վար գնել «Ղիմացի ր հոգ-
նությունը, անցի ր մ'ացած ճանապարհն էր և դա լու վրունը տես : Ել
լնդհանրապես էլ նու սվելի շ : Երկամում էր նրանց վրա, ովքեր
հրաժարվում էին իր բնածաններից քան նրանց ովքեր նվեր էին խնդրում:
Այսպիսի Ալեքսանդրը համակում մի անգամ գրել է Փոկիոնին, թե նրան
այլևս իր լծկերը չի համարի, եթե առաջիկայում էլ մերժի իր բարեբա-
ությունները: Սերապիոնին՝ այն պատանիններից մեկին, որոնց հետ նա
հնդակ էր խաղում, ոչինչ չի տվել, քանի որ սա նրանից ոչ մի բան չի
խնդրել: Մի անգամ իտալի ժամանակ Սերապիոնը ոչ մի անգամ գնդակը
ի գցել Ալեքսանդրին: Արքան նրան հարցրել է «Ինչո՞ւ ինձ գնդակ չես
տուում»: Սերապիոնը պատասխանել է «Ախր դու ինքդ չես խնդրում»:
Այնժամ Ալեքսանդրը ծիծաղել է և առատորեն ընծաներ տվել պատանուն:
Պրոտևասը՝ մեկը նրանցից ով կարողանում էր կատակներով զվար
ւոցնել թագավորին, կարծես թե Ալեքսանդրի աչքից ընկել էր: Երբ
լարեկամներն սկսւցին բարեխոսել նրա համար և նա ինքն էլ լաց
լզավ, Ալեքսանդրն ասաց, թե ներում է նրան «Ով արքա,— խնդրեց
Պրոտևասը,— գե ինձ որևէ երաշխիք տուր քո բարեհաճության վերա
բերյալ»: Դրան ի պատասխան Ալեքսանդրը հրամայեց տալ նրան հինգ
տաղանդ:

Թե որքան վիթխարի են եղել այս արստությունները որ Ալեքսանդրը բաժանում էր բարեկամներին և թիկնապահներին, կարելի է հասկանալ Օլիմպիադայի՝ որդուն գրած նամակներից «Քո բարեկամներին բարերարություններ արա և որևէ այլ կերպ հարգանք դրսևորիր նրանց հանդեպ ախր դու նրանց բոլորին ավուսար ես յարձնում թագավորին, դու նրանց հնարավորություն ես տալիս շատ բարեկամներ ունենալ իսկ քեզ էլ դատապարտում Էս մենակության»։ Այսպիսի նամակներ Ալեքսանդրն Օլիմպիադայից հաճախ էր ստանում բայց թաքուն էր սլաճում։ Միայն մի անգամ, երբ Հեփեստիոնն ուզում էր, ըստ սովորության, նրա հետ միասին կարդալ կնիքը պոկված նամակը, Ալեքսանդրը շքնդղիմացավ, բայց մատուց հանելով մատանին՝ կնիք դրեց Հեփեստիոնի շքթունքներին։

Սազեոսի որդուն Գարեհի արքունիքի ամենաազդեցիկ մարդկանցից մեկին, Ալեքսանդրը շնորհեց երկրորդ սատրապությունը, էլ ավելի ընդարձակ, քան այն, որ նա արդեն կառավարում էր, բայց սատրապը պարզև շքնդունել և թագալորին ասաց «Մի ժամանակ միայն մի Գարեհ կար, իսկ դու հիմա մի քանի Ալեքսանդր էս ստեղծել»։ Պարմենիոնին Ալեքսանդրը նվիրել էր Բագոչյասի սլաշտը, որտեղ, ինչպես ասում են, հազար տաղանդի հազուստեղեն է եղել։ Անտիպատրոսին գրած նամակում նա հրամայում է թիկնապահներ պահել, որպեսզի նրանք իրեն պաշտպանեն շարամիտներից։ Ալեքսանդրն իր մորը շատ ընծաներ էր ուղարկում, բայց նրան թույլ չէր տալիս խառնվել պետական ու ռալմական գործերին և հեղուրեն էր տանում այդ առթիվ մոր արած կշտամբանքները։ Մի անգամ կարդալով Անտիպատրոսի երկար նամակը, որտեղ նա մեղադրում էր Օլիմպիադային, Ալեքսանդրն ասել է «Անտիպատրոսը չգիտի, որ մոր մի կաթիլ արցունքը կստիպի մոռանալ հազար այսպիսի նամակ»։

XL Ալեքսանդրը տեսնում էր որ իր մերձավորները բոլորովին փափկակցաց են դարձել, որ նրանց պերճանքն անցել է ամեն շափ ու սահման. տեոսցի Հադնոնը արծաթե մեխերով կոշիկներ Էր հագնում, Լեոնատոսի գիմնասիոնի համար Եգիպտոսից ուղտերով ավագ էին բերում, Փիլոտասի մոտ այնքան որսացանցեր էին հավաքվել, որ դրանք կարելի էր ձգել մինչև հարյուր ասպարեզ։ Լողանալիս և տրորելիս թագավորի բարեկամները հաճախ անուշարուչք քուրք Էին օգտագործում այլ ոչ թե ձիթենու յոզ ամենուրեք իրենց հետ բաղնիսպաններ ու նրնջարանապետեր էին տանում։ Այս ամենի համար թագավորը մեղմորեն և խելա Էտորեն հանդիմանում էր իր մերձավորներին։ Ալեքսանդրը դար-

մանք էր արտաւայտում, թի նրանք ովքեր այդքան դաժան մարտերում են եղել, այդ ինչպե՞ս չեն հիշում, որ նեղութուն կրածներն ու հաղթածներն ավելի քաղցր են քնում, քան պարտվածները: Մի՞թե նրանք չեն տեսնում՝ իրենց ապրելակերպը համեմատելով պարսիկների ապրելակերպին որ չկա ավելի ստրկական մի բան, քան պերճանքն ու զրգանքը, և չկա ավելի արքայական բան, քան աշխատանքը: Չեզնից որևէ մեկը կարո՞ղ է արդյոք, — ասում էր նա, — անձամբ ձի խնամել, իր նիզակը կամ սաղավարտը մաքրել, եթե ձեռք ամար արդեն խորթ է ձեռք տալ այն բանին, ինչն ամենից թանկն է՝ սեփական մարմնին: Մի՞թե դուք չգիտեք որ հաղթանակի վերջնական նպատակը մեզ համար այն է, որ շանենք այն, ինչ անում են պարտվածները»: Նա ինքն էլ ավելի շատ, քան նախ կիներում, երթերի կամ որսի ժամանակ իրեն կենթարկում էր դրկանքների: Մի անգամ լակոնացիների պատվիրակը տեսնելով, թե ինչպես Ալեքսանդրն սպանել էր սուլուսին՝ բացականչել է «Ալեքսանդր դու հիանալի մարտնչեցիր առյուծի դեմ հանուն թագավորական իշխանության»: Այս որսը վերարտագրող պատկերը Կրատերոսը քնծայաբերեց Դելփիքին: Առյուծի, շան, թագավորի որսը պաշքարի միջ է մտել առյուծի դեմ և իր՝ օգնության վաղուց Կրատերոսի պղնձե քանդակները ստեղծված են յասամբ կիսիպոսի մասամբ էլ Լեսարոսի կողմից:

XLI. Իր վրա ասնելով հույները և արիամից ն մզլու էլ արիշներին՝ Ալեքսանդրը չէր խուսափում ոչ մի վտանգից ինչ նրա բարեկամները հարստանալով ու մեծամասնալով ձգտում էին միացն պրճանքի ու տնտրծուլյան, տհաճութուն էին զգում թափառումներից ու ռազմեր թերից և աստիճանարար աջնտեղ հասան, որ համարձակվում էին հանդիմանել թագավորին ու վատ արտահայտվել նրա հասցեին: Սկզբում Ալեքսանդրը դրան շատ հանգիստ էր վերաբերվում նա ասում էր, թե թագավորների համար դարմանալի բան չէ պարսավանք լսել իրենց լա սերսարություններին ի պատասխան: Իրոք, նույնիսկ ամենափոքր բաները այն ամենից ինչ նա արել է իր մերձավորների համար, վկայում են վերջիններիս նկատմամբ նրա մեծ սերն ու հարգանքը Նա կբերեմ լոկ էի բանի օրինակ: Պակեստասին որը վիրավորվել էր արջից, Ալեքսանդրը նամակում նախատում էր, որ այդ մասին իրեն լուր չի ուղարկել, թեև վիրավորվելու վերաբերյալ շատ բարեկամների է հայտնել: «Բայց հի մա — խնդրում էր Ալեքսանդրը, — գրիր ինձ, թե ինչպես ես քեզ զգում ինչպես և հաղորդիր, թե քո ուղեկիցներից ովքեր են որսի ժամանակ քեզ լքել դժբախտության պահին, քանզի այդ մարդիկ պետք է պատիժ կրեն»: Հեփեստիոնին ուր գործով ինչ որ տեղ էր գնացել, Ալեքսանդրը

հաղորդում է, թե Պերդիկկասը նիզակով պատահաբար Կբատերոսին վիրավորել է ազդրից, երբ նրանք գազազեցնելիս են եղել մանգուստին: Մի անգամ երբ Պեկեստասը ապաքինվել էր հիլանդությունից, Ալեքսանդրը նրա բժիշկ Ալեքսիպոսին շնորհակալական նամակ է գրել: Մի անգամ լրագրում տեսնելով, որ Կրատերոսը հիվանդ է, Ալեքսանդրն ինքն էլ է գոհեր մատուցել նրա համար, և Կրատերոսին պատվիրել է որ նա էլ նույնն անի: Բժիշկ Պալսանիասին որը մտադիր էր Կրատերոսին բուժել զանձլամերով Ալեքսանդրը նամակ գրեց, որի մեջ իր տազնապն էր հայտնում և խորհուրդ տալիս, թե ինչպես ավելի լավ կիրառի այդ միջոցը: Էփիալտեսին ու Կիսսոսին որոնք առաջինը հաղորդեցին Հարպալոսի դավաճանությունը և փախուստի լուրը Ալեքսանդրը հրամայեց շղթայի վարկել որպես գոսյարտիչներ: Երբ Ալեքսանդրը հայրենիք էր ուղարկում հիվանդ ու ծեր զինվորներին, եզեացի ոմն Եվրիլոբոս գրվել էր հիվանդների ցուցակում: Բայց հետագայում պարզվեց, որ նա ոչնչով հիվանդ չէ, և Եվրիլոբոսն ինքս էլ խոստովանեց, թե ինքը ջերմորեն սիրում է Տելեսիպեսին և ուզում էր նրա հետ ծով գնալ: Ալեքսանդրը այն ժամանակ հարցրեց նրան՝ ո՞վ է այդ կինը, և, լսելով, պատասխանը, թե նա ազատ հետերա է ասաց «Մենք համակրում ենք քո սիրուն, Եվրիլոբոս, բայց չէ՞ որ Տելեսիպեսն ազատածին է, դու էլ աշխատիր լեզու թափելով կամ նվերներով նրան համոզել որ այսանդ մնա»:

XLII Կարելի է լոկ զարմանալ թե ինչքան ուշադրություն էր նա հատկացնում իր բարեկամներին: Նա ժամանակ էր գտնում նամակներ գրելու նույնիսկ ամենաանշան բաների մասին, եթե դրանք վերաբերում էին իր մոտիկ մարդկանց: Մի նամակում նա հրամայում է որ փնտրեն դտնեն Սելեկոսի՝ Կիլիկիա փախած ստրուկին: Պեկեստրասին նամակում շնորհակալություն է հայտնում, որ նա բռնել է ոմն Նիկոնի, որը Կրատերոսի ստրուկն էր եղել: Մեզաբիզոսին Ալեքսանդրը գրում է տաճարում ապաստան գտած ստրուկի մասին, նա Մեզաբիզոսին խորհուրդ է տալիս առաջին իսկ հնարավորության դեպքում այդ ստրուկին հրապուրելով հանել ապաստանից և բռնել տաճարից դուրս բայց տաճարի նեքսում ձեռք շտալ նրան: Պատմում են, թե թագավորելու առաջին տարիներին, քրեական հանցագործությունների համար դատապարտվածների գոթեր քննելիս Ալեքսանդրը մեղադրողի ճառի ժամանակ ձեռքով փակում էր մի ականջը, որպեսզի լսողությունն անաշառ և անկանխակալ պահեր մեղադրյալի նկատմամբ: Հետագայում, սակայն, նրան դաժանացրին բազմաթիվ հերյուրանքները որոնք կեղծիքը ծածկում էին ճշմարտության

լիժակի տակ և այդ ժամանակ, եթե նրան հասնում էին վիրավորական խոսքեր իր հասցեին, նա բոլորովին համբերութունից զուրս էր գալիս, դառնում անողորմ և անզուլթ, քանի որ փառքն սվելի շատ էր գնահատում, քան կյանքն ու թագավորական իշխանութունը:

Մտադիր լինելով նորից ճակատամարտ տալ Դարեհի դեմ Ալեքսանդրն արշավանքի ելավ Լսելով, որ Դարեհը գերի է վերցված Բեսսոսի կողմից՝ Սլեքսանդրը թեսալացիներին բաց թողեց տուն գնան նրանց որպես ընծա տալով, ոռձիկից բացի, երկու հազար տաղանդ: ՀI ոսպնդումը ծանր ու երկարատև եղավ. տասնմեկ օրում նրանք ձիով անցան երեք հազար երեք հարյուր ասպարեզ, շատ ռազմիկներ հյուծվել էին մինչև վերջ՝ գլխավորապես ջրի բացակացության պատճառով: Այդ տեղերում Ալեքսանդրը մի անգամ հանդիպել է ինչ-որ մակեդոնացիների, որոնք ջորիներին բարձած սկիբով գետից ջուր էին տանում: Տեսնելով ծարավից տոչորվող Ալեքսանդրին, — արդեն կեսօր է եղել, — նրանք սս զալարտն արագ լցրել են ջրով ու մատուցել արքային: Ալեքսանդրը նրանց հարցրել է, թե ջուրն ո՞ւմ են տանում, և մակեդոնացիք պատասխանել են «Մեր որդիներին Բայց էթե դու ապրես մենք ուրիշ որդիներ կծնենք թող նույնիսկ կորցնենք նրանց»: Լսելով այդ՝ Ալեքսանդրը ձեռքն է առել սազավարածը, բայց, նայելով ջուրչն ու տեսնելով, որ իրեն շրջապատած բոլոր զինվորները շատ եկել ջրին Լն նայում Ի ա սազավարտը հետ Լ տվել մի կում Ի կ շամբելով: Գովելով նրանց, ով լեր իրեն ջուր էին բերել սա ստել է «Եթե ես մենակ խմեմ, կընկնի նրանց ոպին: Տեսնելով արքայի ինքնասիրապետումն ու մեծահոգու թյունը Վ ծյալները ձիերին մտրակելով՝ լացականչել են, թե նա առանց ատամնվելու թող իրենց ավելի հեռուն տանի, որովհետև իրենք շեն կարող հոգնածութուն զգալ շեն կարող քաղցել և նույնիսկ շեն կարող բրենց մահկանացու զգալ, քանի դեռ աչգպիսի թագավոր ունեն

XLIII Բոլորը նույնչափ եռանդ դրսևորեցին, բայց միայն վաթսուն ձիավորներ ներխուժեցին թշնամու ճամբարը թագավորի հետ միասին: Թաղապարտություն չգարձնելով ամենուրեք առատորեն շաղ եկած արծաթին ու ոսկուն, քշելով անցնելով բազմաթիվ սալլերի մոտով որոնք լեցուն էին երկխաներով ու կանանցով և աննպատակ ու անուղի գլորվում գնում էին՝ սայլապաններից զրկված մակեդոնացիները սլանում էին նրանց հետևից ովքեր փախչում էին առջևից, ենթադրելով, թե Դարեհը նրանց մեջ է վերջապես նրանք գտան ռազմակառքի մեջ պառկած Դարեհին, որը խոցվել էր բազում նիզակներով ու մեռնում էր արդեն: Դարեհը ջուր խնդրեց և Պոլիստրատոսը ջուր բերեց: Դարեհը ծարավը,

հագեցնելով ասաց Սյն, որ ես չեմ կարող ելախտիքս հատուցել ինձ ցուցաբերված բարեբարութեան համար, դա իմ դժբախտութեան գազաթն է ըստ Ալեքսանդրը կփոխհատուցի քեզ, իսկ Ալեքսանդրին աստված ներք կփոխհատուցէն այն բարութեան համար, որ նա դրսևորել է իմ մոր, իմ կնոջ ու իմ երեխաների նկատմամբ Հաղորդիր նրան իմ ողբունները»։ Այս ասելով նա բռնեց Պոլիստրատոսի ձեռքը և իսկույն վախճանվեց։

Ալեքսանդրը մոտեցավ գիակիւն և շթաքցված վշտով իր վրայից հանեց թիկնոցն ու ծածկեց Գարեհի մարմինը։ Հետագայում Ալեքսանդրը դատվ Ռեսոսին և մահապատժի ենթարկեց։ Երկու ուղիղ ծառեր ծոցին ու գազաթները մոտեցրին իրար գազաթներին կապեցին Բեսոսին իսկ սպա ծառերը լաց թողեցին, և լոռով ուզղ լեւիս՝ դրանք ճղեցին Բեսոսին Գարեհի մարմինը, արքայավայել դարդարւած, Ալեքսանդրն ուղարկեց նրա մորը, իսկ էկստորոսին՝ Գարեհի եղբորը ընդունեց իր շրջապատում։

XLIV Այնուհետև Ալեքսանդրը զորքի լալսգույն մասի հետ ճանապարհ ընկավ դեպի Հիրկանիա։ Այնտեղ նա տեսավ ծովածոցը, որի ջուրը շատ ավելի բիշ էր աղի, քան մյոս ծովերինը։ Այս ծովածոցի մասին, որը, թվում էր իր մեծութեամբ շէր պիշում Պոնտոսին Ալեքսանդրին չհաջողվեց ոչ մի որսչակի բան իմանալ և թագավորը վճռեց, որ դա Սեոտիդայի ծայրն է։ Այնինչ բնախույզներն արդեն իմացած են եղել Շմարտութունը, Ալեքսանդրի արշավանքից շատ տարիներ առաջ նրանք պրել են, թե Հիրկանիայի ծովածոցը կամ Կապից ծովը Օվկիանոսի շորս ծովածոցերից և իննահարսիստիստինն է։

Սյդ տեղերում լինջ որ բարբարոսներ հափշտակեցին թագավորի Բուկեֆալոս ձին՝ անսպասելի հարձակվելով ձիււպանների վրա։ Ալեքսանդրը մոլեգնեց և մունետիկի միջոցով հայտարարեց որ, եթե շվերադարձնեն իր ձին, կկոտորի տեղի բոլոր բնակիչներին՝ իրենց կանանց ու երեխաների հետ Բաց լրբ ձին բերեցին և քաղաքները կամավորապես հնազանդվեցին նրան, Ալեքսանդրը բոլորի հետ գթասրտորեն վարվեց և նույնիսկ հափշտակողներին փրկագին վճարեց Բուկեֆալոսի դիմաց։

XLV Հիրկանիայից Ալեքսանդրը զորքով գուրս եկավ Պարթևստան և այնտեղ հանդիստ աննելով՝ առաջին անգամ հագավ բարբարոսի շորեր արդյոք նրա՞ համար, որ դիտավորյալ նմանակում էր տեղական բարբերը, լավ հասկանալով, թե որքան է մարդկանց համակրանքը շարժում իրենց սովորական ու հարազատ ամեն ինչը, թե՞ նրա համար որ պատրաստվելով սեփական անձի պաշտամունք հիմնել ուզում էր այդ

Լ գտնադով մակեդոնացիներին աստ/ճանաչար շնտէլացնել նւր սոլո
 բուլթներին: Ս յնուամենայնիվ, նա շցանկացաւ լրիվ զգեստավորվել մի
 ղլական հագուստով, որը շափազանց բարբարոսական էր և անսովոր
 շհագաւ ս՛շ տարատը ս՛շ քանդիումը, ս՛շ խուլը, այլ՝ այնպիսի զգես
 տավորում ընտրեց որի մեջ հաջողութչամբ զուգակցվում էին ինչ սր
 բան միդիական տարադից և ինչ-որ բան պարսկականից ավելի հա
 մեստ լինելով քան առաջինը այն ավելի շէէդ էր Երկրորդից: Սկզբու
 նա այդ շորը հագնում էր այն ժամանակ, երբ հանդիպում էր բարբա
 բոսների հետ կամ տանը գրուցում էր բարեկամների հետ բայց հետա
 լացում էրան կարելի էր տեսնել այդ զգեստավորմամբ նույնիսկ ձիո
 սրէտ տէղ մեկնելիս և ընդունելութչուններ կատարելիս: Սյդ տեսարանը
 տհաճ էր մակեդոն սցիներին համար քայց հիանալով այն առաքինո
 թչամբ որ նա գրսնորում էր մնացած բոլոր բաներում, ներողամտորեն
 լին վերաբերվում նրա այնպիսի թուլութչունների հանդէպ, ինչպիսիք էին
 սերը վաշելքների ու ցուցադրական փայլի նկատմամբ: Չէ՞ որ, շխոսելով
 տրդեն այն մասին, ինչ նա կրել էր նախկինում, այստեղ նկարագրվող
 լեպքերից հենց քիչ առաջ նա նետով վիրավորվել էր սրունքից, և
 սչնպէս ուժգին որ ոսկորը կոտրվել ու գուրս էր եկել, մի ուրիշ սն
 դամ նա քարի հարված էր ստացել վզին և Երկար ժամանակ մշուշոտ
 շղարշը փակում էր նրա հաշայրը: Եվ այնուամենայնիվ նա լրեն շէր
 խնայում, այլ անբնդ՛ատ ընդատաջ էր նետվում ամեն կարգի վտան
 ների: Այսպէս լուծւով տառապելիս՝ նա անցաւ Օրեկսարտեսս վետը, ուր
 նա Տանայիսի տեղը գրեց և վախուստի մատնելով սկչութչներին ձիո
 նրանց հետապնդեց ամբողջ հարչուր ասպարեզ:

XVI Շատերը, զբանց թվում և կլիտարքոսը Պոլիկլիտոսը Օնեսիկ
 բիտոսը, Անտիգենեսը և Հիստրոսը, սրատում են, թե այդ տեղերու
 Ալեքսանդրին ամազոնուհի է հանդիպել բայց Արիստոբուլոսը, Ալեք
 սանդրի քարտուղար Քարեսը, Պալոմէոսը Անտիկլիդեսը, Փիլոն թե
 բևացի՝ տանգելացի Փիլիպոսը ինչպէս և Հեկատեոս էրետրիացին,
 Թիլիպոս Քաղկեդոնցին և Գուրիս Սամոսացին պնդում են թե սա մտա
 յածին բան է: Նրանց կարծիքը կարծես թե հաստատում է նաև Ալեք
 սանդրն ինքր: Անտիպատրոսին գրած մանրամասն նամակում նա առում
 է, թ) սկչութչների արքան դստերը կնութչան է տվել իրեն՝ Ալեքսանդ
 րին իսկ ամազոնուհու մասին նույնիսկ շի էլ հիշատակում: Պատմում
 են, թե, Երբ շատ ժամանակ անց, Օնեսիկլիտոսը Լիսիմաքոսին, որն այ՛
 տամանակ արդեն թագավոր էր, կարգացել է իո էրկերի շորորդ գիրքը,
 սրտեղ գրված է ամազոնուհու մասին Լիսիմաքոսը մեղմ քմծիծաղով

հարցրել է պատմաբանին. «Իսկ այն ժամանակ ևս որտե՞ղ եմ եղել»։
Բայց մենք ինչպես էլ վերաբերվենք այս պատմությանը, — որպես ճշ
մարտացի թե որպես մտացածին մի բանի — մեր հիացմունքը Ալեքսանդ
րով դրանից ո՛չ կպակասի ո՛չ կավելանա.

XLVII Ալեքսանդրը վախենում էր, որ մակեդոնացիները կվհատվեն
ու շեն ուզենա շարունակել արշավանքը։ Սոժամանակ շանհանգստաց
նելով մնացած զորքին՝ «ա դիմեց այն լավագույններից լավագույննե
րին որոնք իր հետ եղել էին Հիրկանիայում՝ քսան հազար հետևակնե
րին և երեք հազար ձիավորներին։ Նա ասում էր, թե մինչև այժմ բար
բարոսները մակեդոնացիներին տեսել էն ասես թե երազում, իսկ եթե
հիմա, հազիվ խառնաշփոթության մեջ գցելով Ասիան, մակեդոնացի
ները վճռեն հեռանալ այս երկրից, բարբարոսներն իսկույնեթ կհար
ձակվեն նրանց վրա, ինչպես կահանց։ Ասենք ովքեր ուզում են հեռա
նալ, ինքը չի էլ պատրաստվում հետ պահել։ Բայց թող վկա լինեն աստ
վածները, որ մակեդոնացիները լքեցին իրեն՝ մի քանի բարեկամների
ու կամավորների հետ լալտի քմահաճույքին թողնելով, իրեն, որ ձգտում
է մակեդոնացիների համար ամբողջ աշխարհը ձեռք բերել։ Մտաւորա
սէւս այսպիսի արտահայտություններով էլ Ալեքսանդրը վերապատմում
է այդ ճառը Սնտիպատրոսին զրաժ իր նամակում։ Հենց այդտեղ էլ
թագավորը գրում է, որ երբ ինքը վերջացնում էր խոսքը, բոլոր զինվոր
ները գոչեցին, թե սա իրենց թող թեկուզ աշխարհիս ծայրը տանի։ Երբ
որ Ալեքսանդրը հաշողության հաւաք վորքի այդ մասի մեջ, արդեն զրժ
վար չէր համողել մնացած բաղմությանը որը կամավոր կերպով պատ
յաստակամություն հայտնեցի հետևել արքային

Այս ժամանակներից նա սկսեց իր ապրելակերպը ավելի շատ հար
մարեցնել տեղական սովորույթներին՝ միաժամանակ զրանք էլ մեր
Նեցնելով մակեդոնականներին, քանզի էնթադրում էր թե այդպիսի միա
խառնման ու մերձեցման շնորհիվ բարությամբ այլ ոչ թե զոռով կամ
րապնդի իր իշխանությունը երբ որ մեկնելիս լինի հեռավոր առշավան
քի։ Այս նպատակով էլ նա ջոկեց երեսուն հազար տղաներ ու նրանց
վրա բաղմաթիվ դաստիարակներ դրեց որպեսզի նրանց հունարեն գրել
կարդալ ու մակեդոնական դենքի հետ վարվել սովորեցնեն։ Եվ նրա
ամուսնությունը Հոքսանայի՝ գեղեցիկ ու ծաղկափթիթ մի աղջկա հետ,
որին մի անգամ խնջույքում, շուրջպարի մեջ տեսնելով, սիրահարվել
էր, լիովին համապատասխանում էր նրա մտազրություններին, քանզի
այս ամուսնությունը Ալեքսանդրին մերձեցրեց բարբարոսների հետ և
նրանք վստահությամբ համակվեցին թագավորի հանդեպ ու ջերմու են

սիրեցին նրան այն բանի համար որ մեծագույն զսպված լիցուն էր դոր սևորեչ և շէր ցանկացել ս պօրինաբար տիրել նույնիւկ այն միակ կնոջը որը գերել էր իրեն:

Երբ Ալեքսանդրը տեսավ որ իր մերձավոր բալեկամներից մեկը Հեփեստիոնը հավանություն է տալիս բարբարոսների հետ իր մերձեցմանը և իրեն ընդօրինակում է այդ բանում իսկ մշուսը Կրատերոսը համատարիմ է մնում հայրենական բարբերին նա սկսեց օտարարույնի հետ գործերը վարել Հեփեստիոնի միջոցով, իսկ հույների ու մակեդոնացիների հետ՝ Կրատերոսի: Չէրմտրեն իրելով առաջինին և խորացեա հարգելով երկրորդին՝ Ալեքսանդրը հաճախ ասում էր թէ Հեփեստիոնը Ալեքսանդրի բարեկամն է, իսկ Կրատերոսը՝ թագավորի: Այս պատճառով Հեփեստիոնն ու Կրատերոսը թաքուն թշնամանք էին տալու: Եւ միմյանց նկատմամբ ի աճախ վիճում էին Մի անգամ Հնդկաստանում նշանց փեճն այնտեղ հասավ, որ մերկացրին սրերը: Եվ մեկին և մշուսին շնուլիան նետով ցին լարեկամները, բայց Ալեքսանդրը, խթա նելով ձին, մտակցավ նրանց և բոլորի ներկայութեամբ անպատվեց Հեփեստիոնին, նրան անվանեց տխմալ ու խենթ, որը շի հասկանում, որ ինքը ոչինչ կլինէր, եթէ որեէ մեկը նրանից խլեր Ալեքսանդրին: Կրատերոսին խստորեն հանգիմանեց իրիս առ երես, իսկ սպա իրկուսին էլ բերելով իր վրանը և հաշտեցնելով երգվեց Ամսնով ու մշուս բոլոր Աստվածներով թե մարդկանցից ոչ իր այնպես շի սիրում, ինչպես նրանց երկուսին: Բայց եթէ նրանք նորից վիճեն ապա անպայման կըստ Վի կամ նրանց երկուսին էլ, կամ այդ կովի հեղինակին: Պատմում են, թէ գրանից հետո նրաօր նույնիսկ կատակելիս ո՛չ ի ոտքով ո՛չ գործով չէին փորձում գիպել կամ խոցել միմյանց:

XLVIII Փիլոտասը Պարմենիոնի որդին, մեծ հեղինակութեան ունեւր մակեդոնացիների մեջ: նրան համարում էին անվեհեր ու ամբակամ մարդ: Ալեքսանդրից հետո շկար մեկը, որ այդքան առատաձեւն ու կարեկից լիներ ուրիշների հանդեպ: Պատմում են, թէ մի անգամ բարեկամներից մեկը նրանից դրամ է խնդրել և Փիլոտասն իր լնտեսին կարգադրել է տալ գումարը: Տեսեսը հրաժար լի է՝ պատճառ բերելով, թէ դրամ չկա, բայց Փիլոտասն ասել է՝ «Ի նշ էս խոսում: Մի՞թե քեզ մոտ որեէ գավաթ կամ զգեստ չկա»: Սակայն իր մեծամտութեամբ ու շտիպազանց հարստութեամբ իր մարմնի նկատմամբ շափից ավելի հոգատարութեամբ, մասնավոր անձի համար անսովոր ապրելակերպով ինչպես և նրանով, որ իր հպարտութիւնը դրսևորում էր առանց շափը հանաչելու, կոպտորեն ու զայրացուցիչ կերպով, — Փիլոտասն իր հան-

դեպ անվստահութիւնն ու նախանձ էր հարուցել Նույնիսկ նրա հայրը Պարմենիոսը մի անգամ նրան ասել էր «Տղա մի քիչ ցած իջիր»: Նա վաղուց արդեն Ալեքսանդրի աշքից ընկած էր: Երբ Դաւթասկոսում գրալեցին Կիլիկիայույ պարտութիւնն կրած Դարեհի հարստութիւնները, ճամբար բերեցին շատ դերիների: Նրանց մէջ էար իր գեղեցկութեամբ աշքի ընկածը Անտիգոնէ անունով մի եին, ծագումով Պիդնայից: Փիլոտասը սրան վերցրեց իրեն: Ինչպես բնորոշ է էրիտասաբղներին Փիլոտասը հաճախ գինի խմելի սիրուհու առջև պարծւցել էր իր ուղղմական սիրանքներով՝ մի ծամեծ գործերն իրեն ու իր հորը վերագրելով և Ալեքսանդրին անվանելով մի երեխա, որն իրենց երկուսին է պարտական իր հղորութեամբ: Կինն այդ բանը պատմել էր իր մտերիմներէից մեկին, սա էլ, ինչպես լինում է սովորաբար, ուրիշին էր ասել, և այսպես լուրը հասել էր Կրատերոսին, որը կանչել էր այդ կնոջը ու թաքուն բերել Ալեքսանդրի մոտ խելով նրա պատմածը Ալեքսանդրը նրան պատվիրել էր շարունակել հանդիպումները Փիլոտասի հետ և այն ամենը ինչ որ կիմանար, պէտք է հայտնէր անձամբ իրեն՝ Ալեքսանդրին:

էր, իսկ մյուսը Կասսոզը սը, Ալեքսանդրի մոտ էր եկել հենց վերջերս: Այս Կասանդրոսը մի անգամ տեսել էր ինչ որ բարբարոսների, որոնք բերանքսիվայր փովել էին թագավորի առաջ, և որպես մի մարդ, որ դաս տիրակվել էր հելլենական ոգով ու նման բան երբեք չէր տեսել ակամա ծիծաղել էր: Զայրահնած Ալեքսանդրը երկու ձեռքով բռնել էր Կասանդրոսի մազերից և սկսել զուլին ուժգին խփել պատին: Մի այլ անհամ երբ Կասանդրոսը փորձել էր ինչ որ բան առարկել այն մարդկանց ուղբեր մեղադրանք էին բարդում Անտիպատրոսի վրա, Ալեքսանդրը ընդհատել էր նրան և ասել «Սյդ ինչ ես առում: Մի՞թե դու կարծում ես, թե այս մտոգիկ, ոչ մի վիրավորանք չկրելով այսպիսի կրկար ճանապարհ են անցել միայն հանուն այն բանի, որ զրպարտե՞ն»: Կասանդրոսն առարկել էր, թե՛ ա՛յ հենց դա էլ ապացուցում է մեղադրանքի արդարացիությունը նրանք իբր թե այն բանի համար են հեռվից եկել, որպեսքի ավելի դժվար լինի իրենց սուտը բռնել: Այդ խոսքի լրա Ալեքսանդրը ծիծաղելով ասել էր «Իսկ ձեզ վրա թա՛նկ կնստեն այդ արիստոտելյան սոփեստությունները՝ միևնույն բանի մասին այդ թեք ու դեմ խոսել կարողանալը, եթե հանկարծ հայտնաբերվի, որ դուք դեթ ինչ որ բանով վիրավորել եք այս մարդկանց»: Ընդհանրապես, ինչպես պատմում են Ալեքսանդրի հանդեպ անհաղթահարելի վսիսը այնպես խորն էր թափանցել Կասանդրոսի հոգին և այնպես ամուր էր արմատավորվել այնտեղ, որ շատ տարիներ անց երբ Կասանդրոսը այն ժամանակ արդեն մակեդոնացիների թագավորը և Հունաստանի տիրակալը, մի անգամ Դելփիքում զբոսնելով արձաններն է դիտելիս եղել և անսպասելիորեն տեսել է Ալեքսանդրի կերպարանքը, գլխապտույտ է զգացել, դողացել ամբողջ մարմնով և հազիվ է կարողացել ուշքի գալ:

LXXV Տազնապով ու երկշոտութամբ համակված Ալեքսանդրը գարձել էր սնահավատ բոլոր ինչ որ շահով անսովոր ու տարօրինակ բաները նրան հրաշք էին թվում, վերուստ տրված նախանշան: Թագավորի պալատում հայտնվել էին բաղմաթիվ մարդիկ որոնք դսհեր էին մատուցում քավության ծեսեր կատարում և ապագան գուշակում: Որ բան կործանարար է անհավատությունը աստվածների նկատմամբ և արհամարհանքը նրանց հանդեպ, նույնքան էլ կործանարար է սնահավատությունը որը միշտ դեպի ցածրադիր վայրերը հասող ջրի նման

Բոլոր այլ բաների հետ միասին, Ամոնից Հեփեստիոնի վերաբերյալ գուշակություն ստանալով Ալեքսանդրը վերացրեց սուրբ և նորից սկսեց


մասնակցել կրոնական տոնախմբություններին ու խնջույքներին: Մի անգամ Նեարքոսի և նրա ուղեկիցների պատվին տրված հոյակապ ընդունելությունից հետո Ալեքսանդրը լողանք ընդունեց ինչպես սովորաբար անում էր քնելուց առաջ, և արդեն պատրաստվում էր պանկելու բայց, անսալով Մեդիոսի խնդրանքին՝ գնաց նրա մոտ խնջույքի: Այնտեղ նա եղավ ամբողջ հաջորդ օրը, իսկ օրվա վերջում սկսեց ջերմություն ունենալ: Որոշ գրողներ պնդում են, թե, իբր, Ալեքսանդրը ջմրուր խմել է Հերակլեսի դավաթը և մեջքին հանկարծակի մի սուր ցավ է զգացել՝ ինչպես նիշակի հարված — այս ամենը նրանք անհրաժեշտ են համարում հորինել, որպեսզի մեծ դրամային ողբերգական և հուզիչ վերջավորություն տան: Արիստոբուլոսը հաղորդում է, թե ծանրորեն տառապելով ջերմից Ալեքսանդրը ուժգին ծարավ զգաց և շատ գինի խմեց, որից հետո քնկավ տենդային դառանցանքի մեջ և դեսիոն ամսվա երեսուներորդ օրը մահացավ:


LXXVI «Օրագրերում» Ալեքսանդրի մահվան լասին ասված է հետևյալը: Դեսիոն ամսվա տասնութերորդ օրը նա լողարանում շատ սաստիկ գոռ է զգացել և քնել է այնտեղ: Հաջորդ առավոտյան լվացվել է, դիպցել ննջարանը և օրն անցկացրել Մեդիոսի հետ ճան խաղալով: Երեկոյան նա լողանք է ընդունել աստվածներին դահլիճ մատուցել և քնթրել, իսկ գիշերն ուժգին սերմել է: Քսաներորդ օրը նա լողանք է ընդունել, սովորական դահլիճային կատարել է լողարանում պատկած՝ զրուցել Նեարքոսի հետ որը նրան պատմելիս է եղել Մեծ ծովով իր նավարկության մասին: Քսանմեկերորդ օրը նա էլի նույն կերպ է անցկացրել, բայց ջերմությունը սաստկացել է, իսկ գիշերը վատ է զգացվել և հաջորդ ամբողջ օրը ջերմել է: Տարել են մեծ լողարանը, այնտեղ նա զորապետների հետ զրուցել է բանակի ազատված պաշտոններում արժանավոր մարդկանց նշանակելու մասին: Քսանչորսերորդ օրը Ալեքսանդրը ուժեղ տենդի նոսր է ունեցել Հարլ է եղել նրան գոհասեղանի մոտ տանել, որպեսզի զոհաբերություն կատարի: Ըարձրագույն զորապետներին նա հրամայել է մնալ պալատում, իսկ տաքսիարքոսներին ու պինտակոսիարքոսներին՝ գիշերը մոտակայքում անցկացնել: Քսանհինգերորդ օրը, էրբ նրան տարել են պալատի մյուս մասը, մի փոքր քնել է, բայց տենդը լի թուլացել: Երբ նրա մոտ են եկել զորապետները, նա լի կարողացել ոչ մի բառ արտասուսել, նույնը կրկնվել է նաև քսանվեցերորդ օրը: Մակեդոնացիները կասկածել են թե արքան արդեն մեռած է, գոչյուններով ու սպանակիքներով թիկնապահներին պահանջել են, որպեսզի իրենց թույլ տան պալատ մտնել: Վերջապես նրանք հասել են

իրենց ուզածին. պալատի գոնիքը բացվել են և մակեդոնացիները միայն խիտոն հագած, մեկական շարքով անցել են թագավորի մահճի մոտով: Հենց այդ նույն օրը Պիթոնն ու Սելևկոսը ուղարկվել են Սերապիսի տաճարը որպեսզի աստծուց հարցնեն՝ արդյոք պետք չէ՞ Ալեքսանդրին տեղափոխել նրա տաճարը: Աստված հրամայել է Ալեքսանդրին թողնել տեղում: Քսանուֆերոդ օրը իրիկնադեմին Ալեքսանդրը վախճանվել է: (LXXVII) Այս ամենը համարյա բառ առ բառ կարելի է կարդալ «Օրագրերում»:

Այն ժամանակ ոչ ոքի մեջ կասկած չի ծագել թե Ալեքսանդրին թու նավորել են, բայց, ինչպես պատմում են, հինգ տարի անց, Օլիմպիական հավատացել է մատնությանը և շատերին մահապատժի ենթարկել: Յուլոսի աճյունը որը հենց այդ ժամանակ էր մեռել, Օլիմպիական հրամայել է դուրս նետել գերեզմանից, որովհետև նա, իբր, թույն էր տվել Ալեքսանդրին: Նրանք ովքեր պնդում են թե թույլն ուղարկված է եղել Անտիպատրոսի կողմից և որ այդ բանն արել է Արիստոտելի խորհրդով, վկայակոչում են ոմն Հագնոթեմիսի պատմածը, որը հազորդում է թե այդ բանը լսել է Մնտիգոնոս թագավորից Որպես թույն, ինչպես ասում են ծառայել է այն շատ սառը ջուրը, որը կաթիլ-կաթիլ, ցողի նման հոսում է Նոնակրիսի մոտի ինչ որ ժայռից: Դա հավաքում ու լցնում են էշի սմբակի մեջ: Այդ հեղուկը ու մի այլ բանի մեջ պահել չի կարելի քանի որ լինելով շատ սառը և կծու, քայքայում է ցանկացած ամանը: Գրողների մեծ մասը, սակայն կարծում է, որ ընդհանրապես այդ ամբողջը հերյուրանք է և որ ու մի թունավորում էլ չի եղել Որպես համուղիչ փաստարկ հօգուտ այս կարծիքի կարող է ծառայել այն որ շատ օրերի ընթացքում, մինչ զորապետները վիճելիս են եղել միմյանց հետ շոգ ու հեղձուկ տեղում առանց հսկողության թողնված Ալեքսանդրի մարմնի վրա չի երևացել որևէ մի նշան, որը վկայեր թունավորման մասին այդ ամբողջ ժամանակ գիակը մնացել է մաքուր ու թարմ: Հոռոսանին այն ժամանակ հղի է եղել և վայելել է մակեդոնացիների մեծ հարգանքը: Լինելով ծայրահեղ խանդոտ ու կրօնա կերպով ատելով Մտատիրեին՝ նա սարքովի նամակի օգնությամբ սրան ու սրա քրոջը հրապուրել տարել է իր մոտ երկուսին էլ սպանել ղիակաները նետել ջրհորը և հողով ծածկել, ընդ որում Պերգիկկասն իմացել է և նույնիսկ օգնել նրան: Ալեքսանդրի մահից անմիջապես հետո Պերգիկկասը վիթխարի իշխանություն էր ձեռք բերել, նրանով, որ ամենուրեք իր հոտից քսրը էր տալիս Արիդևոսին արքայական գահին ղրված այդ տիկնիկին:

Արիդոսը, Փիլիպոսի՝ անառակ սիրուհի Փիլինից ունեցած որդին, թույլամիտ է եղել մարմնական ախտի պատճառով Այդ ախտը բնածին չէր և չէր ծագել ինքնիրեն: Պատմում են, թե երբ Արիդոսը երեխա է եղել, նրա մեջ դրսևորվել են բարի և ազնիվ հակումներ, բայց հետո Օլիմպիա դան ամեն կարգի դեղերի օգնությամբ նրան հասցրել է այնտեղ, որ զրկվել է բանականությանից





Կ Ե Ա Մ Ր

Ի Երբ Սուլան իշխանութիւնը զավթեց, շկարուղացավ ոչ պառնալիքներով, ո՛չ խոստումներով Կեսարին դրդել ապահարզան տալու Կոնստանդին՝ Տիմոսի գետերը, Տիմոսի, որը մի ժամանակ Հոռոմի միանձնյա տիրակալն էր Լոնդոն։ Ուստի Սուլան պետականացրէց Կոնստանդինի օժիտը։ Իսկ Կեսարի նկատմամբ Սուլանի ատելութեան պատճառը Կեսարի ազգակցական կապն էր Մարիոսի հետ, քանզի Մարիոս Ավագը ամուսնացած էր Հուլյանի՝ Կեսարի հորաքրոջ հետ։ Այդ ամուսնութեանից ծնվել էր Մարիոս Կրտսերը, որը, հետևաբար, Կեսարի հորաքրոջ որդին էր։ Սկզբում դրազոված լինելով բազմաթիվ սպանութեաններով և անհասանելի գործերով՝ Սուլան ուշադրութեամբ չէր դարձնում Կեսարին, բայց սա, դրանով չբավարարվելով, հրապարակորեն ելույթ էր ունենում՝ ձգտելով քրմական պաշտոն ձեռք բերել, թէև հաշիվ էր հասել պատանեկան տարիքի։ Սուլան ընդդիմացավ դրան և այնպես արեց, որ Կեսարն անհաջողութեամբ կրեց։ Նա մտադիր էր նույնիսկ ոչնչացնել Կեսարին և, երբ նրան ասել էին, թե անիմաստ բան է սպանել այդպիսի երիտասարդ պատանիներին էր «Դուք ոչինչ չեք հասկանում, եթե չեք տեսնում, որ այդ լակոտի մեջ շատ Մարիոսներ կան»։ Երբ Կեսարն իմացավ Սուլանի այդ լուրերը՝ երկար ժամանակ թաքնվում էր՝ թափառելով սաբինացիների հողում։ Բայց մի անգամ, երբ տկարացել էր և մի տեղից մյուսն էին պահանջում, նա գիշերը դեմ հանդիման ելավ Սուլանի գորաջոկատին, որը գննում էր այդ տեղանքը, որպեսզի բռնեք բոլոր թաքնվողներին։ Զոկատի հրամանատար Կոնստանդին երկու տաղանդ տալով՝ Կեսարը

հասավ այն բանին, որ բաց թողեցին և խսկույնով մոտենալով ծովին նավեց գնաց Բուխանիա Նիկոմեդես թագավորի մոտ

Որոշ ժամանակ այստեղ անցկացնելուց հետո, նա վերադարձի ճառագարհին Փարմակուսսա կղզու մոտ գերի բռնվեց ծովահենների կողմից, որոնք այն ժամանակ արդեն մեծ նավատորմ ունեին և իրենց անթիվ նավերի միջոցով իշխում էին ծովի վրա: (II) Երբ ծովահենները նրանից քսան տաղանդ պահանջեցին որպես փրկագին, Կեսարը ծիծաղեց հայտարարելով, թե նրանք չգիտեն ում են գերի վերցրել, և ինքն առաջարկեց տալ հիսուն տաղանդ: Այնուհետև իր մարդկանց ուղարկելով տարբեր քաղաքներ՝ դրամ բերելու, նա մնաց այդ կատաղի կիլիկիա գիների մեջ միայն մի ընկերոջ ու երկու ծառայի հետ: Չնայած դրան, նա իրեն այնպես ամբարտավան էր պահում, որ ամեն անգամ հանդրստնալ ուղենալիս մարդ էր ուղարկում հրամայելու ծովահեններին որ շաղմկեն: Երեսուներթ օր մնաց ծովահենների մոտ, իրեն այնպես պահելով, ասես թե նրանք իր թիկնապահները լինեին, այլ ոչ թե ինքը նրանց գերին և առանց դուշըն ինչ վախի, զվարճանում ու կատակում էր նրանց հետ: Նա պոեմներ ու ճառեր էր գրում, արտասանում դրանք ծովահենների համար և նրանց ովքեր իրենց հիացմունքը չէին արտահայտում, երեսներին անվանում էր տգետ ու բարբարոս, ծիծաղելով հաճախ սպառնում կախ՛լ նրանց: Երանք էլ սիրով լսում էին այդ աղատ խոսքերը՝ դրանցում բարեհասցույթյան և կատակասիրույթյան արտահայտություն տեսնելով: Սակայն հենց որ Միլեթից փրկագնման դրամներն էկան, հասան և Կեսարը, վճարելով ազատվեց, խսկույնով հանդերձավորեց նավերը և միլեթյան նավահանգստից դուրս եկավ ծովահենների դեմ: Նա դրանց գտավ կղզու մոտ դեռ խարիսխ պցած, և մեծ մասին գերի վերցրեց Գրավված հարստույթյունը վերցրեց իրեն իբրև ուղմավար իսկ մարդկանց փակեց Պերգամոնի բանտում: Ինքն անձամբ մեկնեց Հունկոսի՝ Ասիայի փոխարքայի մոտ դանելով, որ նրան է պատշաճ որպես պրիտորի, պատժել գերի վերցրած ծովահեններին Սակայն Հունկոսը, նախանձով նայելով գրավված դրամներին (քանսի դրանք քիչ չէին) հայտարարեց, թե կպբաղվի գերիների գործի քննությամբ, երբ որ ժամանակ ունենա: Մյնժամ Կեսարը հրաժեշտ տալով նրան՝ ճանապարհվեց դեպի Պերգամոն, հրամայեց ծովահեններին դուրս բերել և բոլորին մինչև վերջին մարդը խաշել, ինչպես ինքը կղզում հաճախ կանխագուշակելով ասում էր նրանց երբ նրանք այդ խոսքերը կատակ էին համարում:

III Նույն այդ ժամանակ Սուլլայի հզորութունն սկսեց նվազել և Կեսարի բարեկամներն սկսեցին նրան Հռոմ կանչել: Սակայն Կեսարն սկզբում մեկնեց Հռոդոս՝ Ապոլլոնիոսի՝ Մուլոնի որդու, դպրոցը, որի մոտ սովորել էր նաև Յիցերոնը և որը հռչակված էր ոչ միայն հռետորական արվեստով այլև իր բարոյական արժանիքներով: Կեսարը ինչպես պատմում են և բնությունից էր վերին աստիճանի օժտված ճարտասանական ընդունակութուններով պետական ասպարեզում և՛ հռանդագին մարզում էր իր ձիրքը այնպես որ անվրձելիորեն նրան էր պատկանում երկրորդ տեղն այդ արվեստում: Սակայն ճարտասանության մեջ առաջինը լինելուց նա հրաժարվեց, ավելի շատ հոգալով, որ առաջինը դառնա իշխանության ու զենքի ուժի շնորհիվ: Զբաղված լինելով ռազմական ու քաղաքացիական ձեռնարկումներով, որոնց միջոցով նա իրեն հեթանոսներից պետութունը, հռետորական արվեստում նա չհասավ մինչև այն սահմանը, որը նրան տրված էր բնությունից: Հետագայում, իր այն երկում, որն ուղղված է Կատոնի մասին Յիցերոնի աշխատության դեմ, նա ինքը խնդրում է չհամեմատել զորականի այս խոսքը օժտված հռետորի ճարտար ճառի հետ, որը շատ ժամանակ է նվիրում իր ձիրքի կատարելագործմանը:

IV Հռոմ ժամանելուց հետո Կեսարը դատի տվեց Գոլաբելային՝ մեղադրելով նրան պրովինցիալում կատարած կաշառակերութունների մեջ, և հունական քաղաքներից շատերը նրան վկաներ ներկայացրին: Գոլաբելան, սակայն սրդարացվեց: Որպեսզի երախտահաաույց լիներ հույներին իրենց ջանքերի դիմաց, Կեսարը հանձն առավ վարել նրանց գործը որ նրանք սկսել էին Մակեդոնիայի պրետոր Մարկոս Լուկուլյոսի մոտ ընդդեմ Պուբլիոս Անտոնիոսի՝ մեղադրելով սրան կաշառակերության մեջ: Կեսարն այնպես եռանդով վարեց գործը, որ Անտոնիոսը բողոքով դիմեց ժողովրդական տրիբուններին Հռոմ վկայակոչելով այն, որ Հունաստանում ինքը չի գտնվում հույների հետ հավասար դրուժյան մեջ:

Հենց Հռոմում էլ Կեսարը շնորհիվ դատարաններում իր պերճախոս սլաշտպանական ճառերի, փայլուն հաջողութունների հասավ, իսկ իր քաղաքավարութչամբ ու քաղցր վարվեցողութչամբ շահեց հասարակ ժողովրդի սիրը, քանզի նա շատ ավելի ուշադիր էր յուրաքանչյուրի հանդեպ, քան կարելի էր սպասել նրա տարիքում: Եվ նրա ճաշկերույթներն էլ, խնջույքներն ու ընդհանրապես ապրելակերպը օժանդակեցին պետության մեջ նրա ազդեցության աստիճանական աճին: Սկզբում Կեսարին նախանձողները դրա վրա ուշադրութչուն չէին դարձնում, մտածելով, թե

նա կմոռացվի իսկույն, հենց որ սպառվեն նրա միջոցները Միայն երբ արդեն ուշ էր, երբ այդ ուժն այնպես էր աճել, որ դրան դժվար էր որևէ լան հակադրել, և ուղղվել էր գոյություն ունեցող կարգերի ուղղակի տապալմանը, նրանք հասկացան որ չի կարելի աննշան համարել ոչ իր գործի սկիզբը: Այն, ինչը չի խափանված սաղմի մեջ, արագ աճում է քանզի հենց քամահրանքի մեջ նա պայմաններ է գտնում անարգել գալգացման համար: Ճիցեբոներ, ինչպես թվում է, առաջինն է հղել, որ կէտարի գործունեությունը կասկածելի ու երկյուղ ներշնչող է համարել, որն արտաքուստ հանդարտ էր, ծովի պես հարթ, և այդ մարդու մեջ ճանաչել է համարձակ ու վճռական մի բնավորություն՝ թաքնված սիրալիրության ու աշխուժության տակ: Եւ ասում էր, թե կէտարի բուրբ գիտավորություններում ու գործելակերպում ինքը տեսնում է բնական կան մտադրություններ, «Բայց — սովելացնում էր նա — էրբ էս տեսնում է՞ թէ ինչպիսի ջանասիրաբար սանրված են նրա մաղերը և լնչպես է նա քորում գլուխը մեկ մատով ինձ միշտ թվում է թե այդ մարդը չի կարող հղանալ այնպիսի ոճրագործություն ինչպիսին հոռմեակ սն պե տական կարգի տապալումն է»: Բայց այս մասին՝ հետո

V Իր նկատմամբ ժողովրդի սիրո առաջին ապացույցը կեսարն ստացավ այն ժամանակ, երբ, Գայուս Պոմպիլիոսի հետ միաժամանակ ձգտելով ձեռք բերել ռազմական արիւնքի պաշտոնը լնտրվեց ձայների ավելի մեծ քանակով, քան նա, իսկ երկրորդն էլ, և էլ ավելի ակնհայտորեն, էր իր հորաբույր Հուլյայի Մարիոսի կնոջ մահից հետո նա ոչ միայն գովաստանական ճառ արտասանեց հանգուցյալի մասին ֆորումում այլև համարձակվեց թաղման ժամանակ ցուցադրել Մարիոսի պատկերները որոնք առաջին անգամ էին ցուցադրվում Սուլլայի իշխանության զլուխ անցնելուց հետո, քանի որ Մարիոսն ու նրա կողմնակիցները հայտարարված էին պետության թշնամի: Ունեք ձայն բարձրացրին այդ արարքի դեմ, բայց ժողովուրդը գոչյուններով և ուժգին ծափահարություններով ցույց տվեց իր հավանությունը կեսարին, որն այդքան երկար ժամանակ անց ասես թե Աիդից Հոռմ էր վերադարձնում Մարիոսի պատիվը:

Մեր կանանց թաղման ժամանակ դամբանական ճառ արտասանելը հոռմեացիների մեջ սովորություն էր իսկ երիտասարդ կանանց նկատմամբ այդպիսի սովորություն չկար և դա առաջինը կեսարն արեց երբ մահացավ իր կինը: Եվ դա ժողովրդի հավանությանն արժանացավ ու համակրանքով լցրեց կեսարի հանդեպ իբրև հեզահամբույր ու ազնվաբարո մարդու: Կնոջ թաղումից հետո նա մեկնեց Իսպանիա որպես քվես-

տոր պիտար վատերոսի օրոք, որին նա միշտ հարդում էր և որի որդուն հետագայում, երբ ինքը պրեստոր դարձավ դարձրեց քվեստոր: Այս պաշտոնից վերադառնալուց հետո, նա երրորդ անգամ ամուսնացավ, այս անգամ՝ Պոմպեայի հետ, Կոռնելյայից ունենալով մի աղջիկ որին հետագայում մարդու տվեց Պոմպեոս Մեծին:

Շուտով Վատնելով իր դրամները և թվում էր, մեծ ծախսերի գնով, գնելով կարճատև ու անկայուն փառք, իսկ իրականում էժան գնով ձեռք բերելով մեծ գույն բարիք նա ինչպես ասում են նախքան առաջին պաշտոնը կատանար, ունի հազար երեք հարյուր տաղանդ պարտք: Նշանակված լինելով Ապպյան ճանապարհի վերակացու նա սեփական շատ դրամ ծախսեց, այնուհետև էդիլ եղած ժամանակ դուրբերեց երեք հարյուր քսան գույգ գլադիատոր, իսկ թատրոնների արարողութունների և ճաշկերույթների վրա շուտով ծախսումներով նա ստվերում թողեց իր բոլոր նախորդներին: Բայց ժողովուրդն էլ իր կողմից այնքան լավ էր տրամադրված նրա նկատմամբ որ յուրաքանչյուրը պահում էր նորանոր պաշտոնների ու պատվերի որոնցով հնարավոր լինելով վարձատրել նրան:

VI Հոռոմն այն ժամանակ բաժանված էր երկու բանակի՝ Սուլլայի և դմնակիցների, որոնք մեծ ուժ ունեին և Մարիոսի կողմնակիցների, որոնք լրիվ ջախջախված էին, ստորացված ու խղճուկ գոյություն էին բարձր տալիս: Որպեսզի նորից ամրապնդեր ու իր հետևից տաներ մարիոսականներին Կեսարը երբ դեռ թարմ էին հիշողութունները էդիլի պաշտոնում էղած ժամանակ նրա առատաձեռնության մասին, գիշերով Կապիտոլիում բերեց և այնտեղ դրեց Մարիոսի ու Հադթուլիան աստվածուհու գաղտնի կերտված քանդակները որտեղ նրանք պատկերված էին ազմալար տանելիս: Հաջորդ առաջտոշյան պատակարգ հմտորեն կերտված և ոսկեփայլ Լյդ արձանների տեսքը, որոնց մակադրութունները պատմում էին կիմբրների դեմ տարած հաղթանակները, նայողների մեջ հիացմունք էր հարուցում այն մարդու խիղախության հանդեպ, ով որ կանգնեցրել էր դրանք (ևրա անունը, իհարկե, շմնաց անհայտ): Այդ լուրը շուտով տարածվեց, և հոռոմեացիները հավաքվում գալիս էին քանդակները նայելու: Ընդ որում սմանք գոչում էին թե Կեսարը բռնապետութուն ստեղծելու միտք ունի՝ վերականգնելով այն պատիվները, որոնք թաղված են սենատի օրենքներով ու որոշումներով և որ նա ժողովրդին է փորձում, ցանկանալով իմանալ, թե պատրաստ է արդյոք՝ Կեսարի առատաձեռնությամբ կաշտոված հնազանդորին տանել նրա կատակներն ու քմաչքները: Մալիոսականներն էլ ընդհակառակը, իս-

կայն հայտնվելով բաւոյթամբ, միմյանց սիրտ էին տալիս և ծափս
որություններով լցրին Կապիտոլիումը: Նրանցից շատերի աչքերին
ուրախութեան արցունքներ էրևացին՝ Մարիոսի պատկերը տեսնելով և
սրանք Կեսարին փառաբանում էին մեծագույն գովեստներով, որպէս
միակ մարդուն, որն արժանի է Մարիոսի ազգակէտնը լինելու Սյդառ
թիւ սենատի նիստ հրավիրուէց և Լուտացիոս Կատուլոսը որն այն
Լամանակ հռոմեացիների մեջ ամենամեծ ազդեցութեան ունէր, մեղա-
բանքով հանդես եկավ ընդդէմ Կեսարի նետելով հայտնի դարձված
լր. «Այսպիսով, Կեսարը հանցաւորը է կատարում պետութեան դեմ ար-
դեն ոչ թե ական փորելով այլ՝ պաշարողական մեքենաներով» Բայց
Կեսարն այնպէս հստորեն ելույթ ունեցավ ի պաշտպանութեան իրեն, որ
ունատը քաղաքարված զգաց, և Կեսարի կողմնակիցներն էլ ավելի սիրտ
տան ու նրան կոչ արեցին ոչնչի առաջ չնահանջել իր մտադրութեան:
Ելն իրսուցործիւս ոլովհետև ժողովրդի աջակցութեանը կապահովի նը-
ստաջնութեանն ու հաղթանակը ընդդէմ հակառակորդների:

VII Այդ միջոցին մեռավ գերագույն քուրմ Մետելլոսը, և երկու
ամենահայտնի մարդիկ, որոնք վիթխարի ազդեցութեան ունեին սենա-
տում՝ Սերվիլիոս Իսավրացին և Կատուլոսը, պայքարում էին միմյանց
դեմ, ձյտելով ձեռք բերել այդ պաշտոնը: Կեսարը շնահանջեց նրանց
առաջ և ժողովրդական ժողովում նույնպէս ներկայացրեց իր թեկնածու-
թեանը Թվում էր, թե յուր մրցակիցները հավասար աջակցութեան
էին վայելում, բայց Կատուլոսը, այն բարձր դիրքի պատճառով որ նա
ունէր, ամենքից շատ էր վախենում պայքարի անորոշ կլբից, ուստի և
սխտեց բանակցութեաններ վարել Կեսարի հետ նրան առաջարկելով մեծ
գումարի դրամ եթե նա հրաժարվի մրցակցութեանից: Կեսարը, սակայն,
պատասխանեց, թե շարունակելու է պայքարը նույնիսկ եթե դրա հա-
մար հարկ լինի էլ ավելի մեծ գումար պարտք վերցնել: Ընտրութեան
ներքի օրը, հրաժեշտ տալով իր մորը որն արտասուէց՝ նրան ուղեկցե-
լով մինչև դուռը, Կեսարն ասաց «Սյուսը, մայր, դու որդուդ կտեսնես
կամ գերագույն քուրմ դարձած, կամ արտաքսված»: Ընտրութեանների
Լամանակ Կեսարը հաղթանակ տարավ և դրանով սենատին ու ավագա-
նան երկյուղ ներշնչեց, թե նա կարող է ժողովրդին հրապուրել տանել
ձէն մի հանդգնութեան:

Այդ պատճառով էլ Պիզոնն ու Կատուլոսը հաջողմանում էին Յի-
ցերոսին Կեսարին խնայելու համար, որը խառնվել էր Կատիլինայի
դավադրութեանը: Ինչպէս հայտնի է, Կատիլինան մտադիր էր ոչ միայն
տապալել զոյութեան ունեցող կարգը այլև ոչնչացնել ամէն մի լշու-

նություն և լիակատար հեղաշրջում կատարելու նա ինքը լքեց քաղաքը, երբ ընդդեմ նրա ի հայտ էին եկել սոսկ չնչին հանցանշաններ, իսկ կարևորագույն մտադրությունները դեռ ծածկված էին մնում, լինաուլուսին ու Յլ տեղոսին էլ թողեց Հոռմում, որպեսզի նրանք շարունակեին դավադրություն նշուփելու: Անհայտ է, Կեսարը գաղտնի կերպով որևէ աջակցություն ցույց տալի՞ս էր և համակրանք արտահայտո՞ւմ էր այդ մարդկանց նկատմամբ, բայց սենատում երբ նրանք լրիվ մերկացված էին և կոնսուլ Ցիցերոնը յուրաքանչյուր սենատորից կարծիք էր հարցնում մեղավորներին պատժելու մասին, բոլորն արտահայտվում էին հօգուտ մահապատժի, մինչև որ հերթը հասավ Կեսարին, որը հանդես եկավ նա ի սպես լավ մտածված ճառով, հայտարարելով, թե առանց դատարանի սպանել այնպիսի մարդկանց որոնք նշանավոր են իրենց ծագմամբ ու տիտղոսով, անարդարացի է և հոռմեացիների սովորույթին անհարիր, և թե դա չի արվում ծաշրահեղ անհրաժեշտությունից դրդված: Իսկ և թե հետագայում մինչև Կատիլինայի դեմ լրիվ հաղթանակ տանելը նրանք կարանքի տակ պահվեն իտալական քաղաքներում, որոնք կարող է ընտրել Ցիցերոնն ինքը, ապա հետագայում սենատը կկարողանա խաղաղ ու անդորր իրադրության մեջ որոշել նրանցից յուրաքանչյուրի ճակատագիրը:

VIII Այս առաջարկությունն այնքան մարդասիրական թվաց և այն պես ուժեղ ու համոզիչ էր հիմնավորված որ ոչ միայն նրանք ովքեր ելույթ ունեցան Կեսարից հետո միացան նրան, այլև նախապես ելույթ ունեցածներից շատերը սկսեցին հրաժարվել իրենց կարծիքներից և պաշտպանել Կեսարի առաջարկությունը, մինչև որ հերթը հասավ Կատոնին ու Կատուլոսին: Սրանք էլ սկսեցին տաք տաք առարկել իսկ Կատոնն իր ճառում նույնիսկ կասկածանք հայտնեց Կեսարի վերաբերյալ և ահրողջ սրությամբ ելույթ ունեցավ ընդդեմ նրա: Վերջապես որոշվեց զլխատել դավադիրներին, իսկ երբ Կեսարը դուրս էր դալիս սենատի շենքից, մերկ սրերը ձեռքներին նրա վրա հասան այն ժամանակ Ցիցերոնին պահպանողների խմբից փախած շատ պատանիներ: Բայց, ինչպես պատմում են, Կուրիոնն իր տողալով ծածկելով Կեսարին, նրան բարեհաջող դուրս բերեց և Ցիցերոնն ինքն էլ, երբ պատանիները հետ նայեցին նշան անելով դսպեց նրանց կամ վախենալով ժողովրդից, կամ ընդհանրապես այդպիսի սպանությունը համարելով անարդարացի ու անօրինական: Եթե այս ամենը ճիշտ է, ապա ես չեմ հասկանում, թե ինչու Ցիցերոնը իր կոնսուլության վերաբերյալ երկում այս մա լին ոչինչ չի խոսում: Հետագայում նրան մեղադրում էին, որ չի

դավիչ այն ժամանակ իրեն ընծեոված Կեսարից ազատ լելու հիանալի հնարավորութիւնից, այլ վախօցիչ է Կեսարին արտակարգ համակրող սողովորդից: Այդ համակրանքը դրականովեց մի քանի օր անց, երբ Կեսարը եկավ սենատ՝ պաշտպանվելու իր դեմ առաջ քաշված կասկածանքներից, և դիմավորվեց թշնամական աղմուկով: Տեսնելով որ նիստը երկարում է սովորականից ավելի, ժողովուրդը աղմուկով վազեց ու շրջուպտեց շենքը՝ համառորեն պահանջելով բաց թողնել Կեսարին:

Այդ պատճառով էլ Կատոնը, սաստիկ վախենալով շքավորների պատամբութիւնից, որոնք հուշաները Կեսարի վրա դրած՝ բորբոքում էին նաև ամբողջ ժողովրդին, սենատին համողեց աղքատների համար ամենամսյա հացաբաշխում սահմանել: Սա պետական մյուս ծախսերին նույն ավելացրելով՝ տարեկան յոթ միլիոն հինգ հարյուր հազար դրախտ լուծարով բայց դրա փոխարեն խափանելով անմիջականորեն սպառնալից մեծ վտանգը, քանի որ Կեսարին զրկեց նրա ազդեցութեան մեծ մասից ճիշտ այն ժամանակ, երբ սա պատրաստվում էր պրետորի պաշտան գրավել և դրա հետևանքով պիտի դառնար էլ ավելի վտանգավոր:

IX Սակայն Կեսարի պրետորութեան առաջին տարին խաղաղ անցավ, և միայն նրա սեփական տանը տեղի ունեցավ անհաճո մի դեպք: Կար մի մարդ հին ավագանուց մնացած, որը հայտնի էր իր հարստութեամբ ու պերճախոտութեամբ՝ բայց և սանձարձակութեամբ ու հանդգնութեամբ չէր դիպում ոչ մի հարակից անառակի: Նա սիրահարված էր Պոմպեային Կեսարի կնոջը և սիրվում էր փոխադարձաբար: Բայց կանացի սենյակները խոտորեն պահպանվում էին, իսկ Կեսարի մայր Ավրելյան պատկառելի մի կին հարսի նկատմամբ իր մշտական հսկողութեամբ դժվար ու վտանգավոր էր դարձնում սիրահարների տեսակցութիւնը: Հոռմեացիներն տնեն մի աստվածուհի որին նրանք անվասում են Բարի, իսկ հուշները՝ Կանանց: Փոշուղացիները նրան իրենցն էն հաշվում՝ համարելով իրենց արքա Սիդասի կինը, հոռմեացիները պնդում են, թե դա Դրիադա հավերժահարսն է՝ Չավնոսի կինը, հուշների լսելով էլ՝ Դիոնիսոսի մայրերից այն մեկն է որի անունը չի կարելի տալ: Ուստի նրա տոնին մասնակցող կանայք վրանը պատում են խաղաղի որթերով, իսկ աստվածուհու ոտքերի տակ, առասպելի համաձայն, սրբաշան օձն են դնում: Ոչ մի տղամարդ իրավունք չունի ներկա լինելու տոնակատարութեանը և նույնիսկ դտնվելու այն տանը, որտեղ կազմակերպվում է հանդեսը: Միայն կանայք են կատարում սրբազան ծեսերը, որոնք մեծ մասամբ, ասում են, նման են օրփեյականների: Սրբ գալիս է տանի օրը, կոնսուլը կամ պրետորը, որի տանը կատարվում

է այն, պարտավոր է բոլոր տղամարդկանց հետ դուրս գալ տնից, իսկ նոա կինն էլ, ընդունելով տունը, կատարում է սրբազնագործությունները Դրանց մեծ մասը կատարվում է գիշերը՝ խաղերի ու երաժշտության ուղեկցութեամբ

X. Այն տարին տօնը կազմակերպել էր Պոմպեան, և Կլոդիոսը որը գեռ բեղ մորուք շուներ և դրա համար էլ հուսալով աննկատ մնալ, գալիս է այնտեղ տավազարուհու հադուստով՝ շտաբերվելով ջահել կնոջից, նա դռները փակ է գտնում և բարեհաջող կերսյով գնում մտնում է աղախիններից մեկի տունը որը գաղտնիքին իրազեկ էր, և սա գնում է հայտնելու Պոմպեալին: Քանի որ աղախինը երկար ժամանակ չի վերադառնում Կլոդիոսը չի համբերում սպասել նույն տեղում, ուր նրան թողել էին և սկսում է առաջ շարժվել մեծ տան մեջ՝ խուսափելով վառ լուսավորված տեղերից: Բայց նրան դեմ հանդիման է դուրս գալիս Ավրելյայի աղախինը և, ենթադրելով, թե իր առաջ կին է, սկսում է հրավիրել մասնակցելու խաղերին և, չնայած Կլոդիոսի դիմադրութեանը՝ նրան տանում է մյուսների մոտ, հայցնելով, թե ո՞վ է և սրտեղի՞ց: Երբ Կլոդիոսը պատասխանում է, թե սպասում է Սրբալին (այսպես էր Պոմպեայի աղախին անունը) ձայնը նրան մատնում է և Ավրելյայի աղախինը նետվում է լույսի կողմը՝ դեպի բազմութունը և սկսում ճշալ թև ներսում տղամալդ է հարտնաբերել: Բոլոր կանայք դրանից ահաբեկվում են, Սվրելյան էլ, ընդհատելով խորհուրդների կատարումը և ծածկելով սրբությունները՝ հրաժայում է դռները փակել և ջահերն առած սկսում է շրջել ողջ տունը՝ փնտրելով Կլոդիոսին: Վերջապես նրան գտնում են այն աղախինի սենյակում թաքնված, որը նրան օգնել էր տուն մտնել, և հայտնաբերող կանայք նրան դուրս են վռնդում: Կանայք ցրվելով իրենց տները՝ պատահածը հենց նույն գիշերը պատմում են էրենց ամուսիններին: Հաջորդ օրը Հոմոսով մեկ տարածվում է այն լուրը, թե Կլոդիոսը սրբապղծութուն է կատարել և հանցավոր է ոչ միայն իր կողմից վիտավորվածների, այլև ողջ քաղաքի ու աստվածների հանդեպ: Ժողովրդական արիբուններից մեկը հրապարակորեն մեղադրում է Կլոդիոսին սրբապղծութեան մեջ և, այլ գարշելի անառակությունների շարքում, նրան մեղադրելով նաև իր հարազատ քրոջ՝ Լուկուլլոսի կնոջ հետ ունեցած կապի մեջ: Բայց ժողովուրդը հակառակվում է նրանց ջանքերին և Կլոդիոսին պաշտպանութեան տակ առնում, ինչը նրան մեծ օգուտ է բերում դատարանում, քանզի դատավորներն ահաբեկված էին և դողում էին ամբոխից: Կեսարն իսկույննեթ բաժանվում է Պոմպեայից: Սակայն դատարանը հրավիրվելով որսվես վէպ՝ նա հայտարարում է թե իրեն ոչինչ

այսինի շէ այն առնչութեամբ, ինչի մեջ մեղադրում են Կլոդիոսին: Այս հայտարարութիւնը շատ տարօրինակ է թվում, և մեղադրողը նրան հարցնում է «Բա.ց այդ դեպքում էլ ինչո՞ւ ես բաժանվել կնոջիցդ»: «Նրա համար — պատահա՞նում է Կեսարը — որ իմ կնոջ վրա շպետք է կասկածանքի սովեր իսկ ընկնի»: Ոմանք ասում են թե նա պատասխանել է «ոչնպէս, ինչպէս իրոք մտածել է ուրիշներն էլ թե՛ նա դա արել է նողովրդին շիրաշահելու համար սրբ ցանկանում էր փրկել Կլոդիոսին: Կլոդիոսն սրգարւցվում է քանի որ դատավորների մեծ մասը քվեարկութեան ժամանակ աղչուսիկները ավել էր անընթեռնելի ստորագրութեամբ որպէսզի դատապարտումով իր վրա շհարուցեր ամբոխի զայրուշքը իսկ արդարացմամբ էլ՝ շխայտառակվեր ազնվականների մեջ:

XI. Պրետուրաշից հետո Կեսարն Իսպանիա պրովինցիաշի կառախարսն պաշտանն ստացավ: Քանի որ նա շէր կարողացել համաձայնութեան սով իր պարտատերերի հետ, որոնք աղմկելով շրջապատում էին նրան ու բնդդիմանում նրա մեկնմանը, նա դիմեց Կրասոսի՝ հոռմեպինեշից ամենահարուստի օգնութեանը: Կրասոսին պետք էին Կեսարի ու մն ու եռանդը՝ Պամպլոսի դեմ պայքարելու համար: Ուստի նա բավարարեց Կեսարի առավել համարու անողոք պարտատերերին և, երաշխախարսութեան տալով ութ հարյուր երեսուն տոլանդ գումարով՝ Կեսարին հարափարսութեան ընձեռեց մեկնելու պրովինցիա:

Պատմում են, թե, երբ Կեսարն անցել է Ալպլլը 1 զնալիս է եղել իր ստ սակափարստի բարբարոսական բնակչութեամբ մի խղճուկ քաղաքի մասով, նրա մտ ըլմները ծիծաղելով հարցրել են Մի՞թե այ տեղ էլ մրցութեան կա պաշտոնների համար, վե՛ճեր՝ առաջնութեան համար, գժտութեաննէլ մ՝ ազնվականութեան մեջ»: — «Ընչ վերաբերում է ինձ — դատասխանել է Կեսարը բոլորովին լուրջ — ապա ես կգերադասի ւռաշինը լինել այ տեղ, քան երկրորդը Հոռմում»:

Մի այլ անգամ, արդեն Իսպանիայում պարապ ժամանակ ինչ-որ լան կարդալով Ալիքսանդրի գործերի մասին Կեսարը երկար ժամանակ խորասուզվել է մտքերի մեջ, իսկ հետո նուշնիսկ արտասվել է: Երբ զարմացած ընկերները հարցրել են պատճառը նա պատասխանել է «Մի՞թե տխրելու համար ձեզ անբավարար պատճառ է թվում այն, որ իմ տարիքում Ալիքսանդրն արդեն այդքան ժողովուրդներ էր կառավարում, իսկ ես մինչև այժմ ոչ մի նշանավոր բան շեմ արել»:

XII Իսպանիա հասնելուց անմիջապէս հետո նա եռանդուն գործունէութեան ծավալեց: Մի քանի օրվա մեջ իր քսան կոհորտային միացնելով ևս տասը՝ նա կովի ելավ ընդդեմ կալիականների ու լուզիտացիների,

որոնց և հաղթեց հասնելով այնուհետև մինչև Արաաքին ծովը ու հպատակեցնելով մի քանի ցեղերի որոնք անցյալում ենթակա չէին հոռմեացիներին Ռազմական գործերում հասնելով այսպիսի հաջողության՝ Կեսարը վատ չէր դեկավարում նաև քաղաքացիականները նա համերաշխություն հաստատեց քաղաքներում և ամենից առաջ հարթեց վեճերը պարտատերերի ու պարտապանների միջև այն է սահմանեց, որ պարտապանի տարեկան հկամուսների մեկ ևրրորդը թողնվի նրան իսկ մնացածը տրվի պալատատերերին, մինչև որ այդ կերպ պարտքը մարվի Կատարելով այս գործերը, որոնք համընդհանուր հավանության էին արժանանում, Կեսարը մեկնեց պրովինցիալից, որտեղ և ինքն էր հարչստացել և արշավանքի ժամանակ հնարալորություն էր ավել հսրրատանալու իր զինվորներին որոնք նույն իմպերատու (գերագույն հրամանատար) էին հռչակել՝

XIII Այն անձանց համար ովքեր հետամտում էին հաղթահանդեսուալ, սահմանված էր, որ մյան Հոռմից դուրս իսկ կոնսուլական պաշտոն ակնկալողները՝ ներկա լինեն քաղաքում, Կեսարը, որը վերադարձավ հենց կոնսուլական ընտրությունների ժամանակ, չգիտեր թե որը գերադասեր, ուստի դիմեց սենատին՝ խնդրելով թույլատրել լրեն հեռակա կարգով, բարեկամների միջոցով նկրտելու կոնսուլական պաշտոնին: Կատոնն առաջինը հանդես եկավ ընդդմ այդ պահանջի՝ պնդելով, որ պետք է պահպանվի օրենքը: Իսկ երբ տեսավ, որ Կեսարը շատերին իր կողմն է տրամադրել ասլա որպեսզի ձգձգվեր հարցի լուծումը, արտասանեց մի ճառ որը տևեց մի ամբողջ օր: Այնժամ Կեսարը որոշեց հրաժարվել հաղթահանդեսից և կոնսուլության պաշտոնի հավակնությունից

Այսպիսով, նա Հոռմ ժամանեց և իսկույնեկեթ ձևոնարկեց մի ճարպիկ քաջ՝ մոլորության մեջ գցելով Կատոնից բացի, բոլորին: Նրան հաջողվեց հաշտեցնել Պոմպեոսին ու Կրասոսին՝ երկու մարդու, որոնք ամենամեծ ազդեցությունն ունեին Հոռմում: Այն, որ Կեսարը նախկին թրշնամության փոխարեն, նրանց միացրեց բարեկամությամբ, դրանով այդ երկուսի հզորությունն ի սպաս դրեց հենց իրեն և այդ մարդասիրական արարքի ծածկոցի տակ, բոլորի համար աննկատելի, կատարեց իսկական պետական հեղաշրջում: Քանզի քաղաքացիական պատերազմների պատճառը եղավ ոչ թե Կեսարի ու Պոմպեոսի թշնամանքը, ինչպես մտածում է մեծամասնությունը, այլ ավելի մեծ շափով՝ նրանց բարեկամությունը, երբ նրանք սկզբում միացան արխտոկրատիայի իշխանությունը ոչնչացնելու համար, իսկ ապա միմյանց դեմ ելան: Կատոնն էլ, որը

հաճախ էր ճշտորեն կանխագուշակում իրադարձությունների վախճանը, դրա համար սկզբում անհաշտ ու կովարար մարդու համբավ ձեռք բերեց, իսկ հետագայում խորհրդատուի փառք թեկուզև խելացի բաց դժբախտ խորհրդատուի:

XIV Սյսպիսով, Կեսարը, աջակցություն ստանալով երկու կողմից, շնորհիվ Պոմպեոսի ու Կրասոսի բարեկամության, ընտրություններում հաջողության հասավ և պատվավոր կերպով հուշակվեց կոնսուլ՝ Կալպուրնիոս Բիրուլոսի հետ միասին: Դեռ նոր էր անցել իր պաշտոնին, երբ ամբոխին սիրաշահելու ցանկությունից դրդված՝ օրինազներ մտցրեց, որոնք ավելի կվայելեին որևէ հանդուդն ժողովրդական տրիբունի, քան թե կոնսուլին, — օրինազներ, որոնք առաջարկում էին գաղութներն վերաբնակեցում և հողայաժամություն: Սենատում բոլոր լավագույն քաղաքացիներն արտահայտվեցին ընդդիմ դրա, և Կեսարը, որը վաղուց այդին այդ առիթն էր որոնում, բարձրաձայն հրդվեց, թե սենատորների անհոգիությունն և լարձրամտությունը իրեն ստիպում են հակառակ իր կամքի դիմել ժողովրդին՝ միասնական գործողությունների համար: Սյսպիսով նա դուրս եկավ Ֆորում: Այստեղ, իր հետ նույն շարքում կանգնեցնելով մի կողմից Կրասոսին, մյուս կողմից Պոմպեոսին՝ նա հարցրեց, թե հավանություն տալի՞ս են առաջադրված օրինազներին: Երբ պատասխանեցին դրականորեն Կեսարը դիմեց նրանց՝ խնդրելով օգնել իրեն բնդվել այն մարդկանց ու վեր սուրբ ձեռքներին սպառնում են հակադրել այդ օրինազներին: Երկուսն էլ խոստացան աջակցել իսկ Պոմպեոսն ավելացրեց, թե ընդդիմ լարձրացված սրերի ինքը ոչ միայն սրով դուրս կգա, այլև վահանով: Այս խոսքերը վշտացրին արխատուհրատներին որոնք այս ելույթը համարեցին ցնդած մանկամիտ մի ճառ որը լէր պատշաճում իրեն՝ Պոմպեոսի արժանապատվությանը և գցում էր տենատի հանդեպ հարգանքը բայց փոխարենը դրանք ժողովրդին շատ դուր եկան:

Որպեսզի էլ ավելի ազատորեն օգտագործեր Պոմպեոսի հզորությունն իր նպատակների համար, Կեսարն իր դստերը Հուլյային կնություն տվեց նրան, թեև աղջիկն արդեն նշանված էր Սերվիլիոս Յեպիոնի հետ, Կեսարը վերջինիս էլ խոստացավ տալ Պոմպեոսի աղջկան, որը նույնպես ազատ չէր, որովհետև նշանված էր Փավստոսի՝ Սուլլայի որդու հետ: Քիչ անց, Կեսարն ամուսնացավ Պիզոնի դստեր՝ Կալպուրնյայի հետ: Պիզոնին նա հաջորդ տարվա համար կոնսուլ էր առաջադրել: Դա սաստիկ վրդովմունք պատճառեց Կատոնին, որը հայտարարել էր, թե ուժ չունի

տանելու այդ մարդկանց, որոնք ամուսնական գաշինքներով բարձրա-
ուշն իշխանություն են ձեռք բերում պետութեան մեջ և կանանց օգնու-
թյամբ զորք, պրովինցիաներ ու պաշտոններ են փոխանցում իրար:

Բիրուլոսը կոնսուլութեան գծով Կեսարի ընկերը ամբողջ ուժով
ընդդիմանում էր նրա օրինագծերին բայց քանի որ ոչնչի չհասավ
և նույնիսկ Կատոնի հետ սպանվելու վտանգին ենթարկվեց Փորումում
ապա փակվեց իր տանը և չէր ներկայանում մինչև որ իր պաշտոնի ժամ
կեսը լրանար: Պոմպեոսը իր հարսանիքից շատ շանցած Փորումը լքեց
րեց զինված ռազմիկներով ու դրանով ժողովրդին օգնեց հասնել և
օրենքների հաստատմանը, իսկ Կեսարին ստանալու երկու՝ Այսրալու-
յան և Անդրալույան Գալլիաները (Իլլիրիկեսի հետ) հինգ տարով կառա-
վարելու իրավունք և շորս լեզեոն: Կատոնին, որը սիրտ արեց հանդի-
գալ դրա դեմ, Կեսարը բանտ ուղարկեց, հուսալով, թե նա բողոքով
կգլմի ժողովրդական տրիբուններին Սակայն տեսնելով, որ Կատոնը ոչ
մի խոսք չասելով թույլ է տալիս, որ տանեն իրեն և որ ոչ միայն լա-
վագույն քաղաքացիներն Լն ճնշված դժանից ալև ժողովուրդը Կա-
տոնի առաքինութեան հանդեպ ունեցած հարգանքից, լուռ ու վհատ հե-
տևում է նրան, Կեսարն ինքը թաքուն խնդրել ժողովրդական սրիբուն-
ներից մեկին, որ Կատոնին սպառի:

Մնացած սենատորներից շատ քչերն էին Կեսարի հետ հաճախում
սենատի նիստերին մյուսներն էլ, իրենց արժանապատվութեանը հասցը-
ված վիրավորանքից դժգոհ՝ ձեռնպահ էին մնում գործերին մասնակցե-
լուց: Երբ Կոնսիդիուր ամենաձերերից մեկը մի անգամ ասաց թե նրանք
չեն գալիս գեներալի ու զորականների վախից, Կեսարը նրան հարցրեց «Սյդ
գեպքում դո՞ւ ինչու չես վախենում ու տանը նստում Կոնսիդիուսը պա-
տասխանեց «Վախից ինձ ազատում է իմ ծերութունը, քանզի կյանքի
այն կարճ ժամկետը, որ մնացել է ինձ չի պահանջում մեծ զգուշու-
թյուն»:

Իսկ այն ժամանակ լա յուր իրադարձություններից առավել ամո-
թալին համարում էին այն, որ Կեսարի կոնսուլութեան օրոք ժողովրդա-
կան տրիբուն էր ընտրվել Կլոդիոսն ինքը, սրը պղծ էր և՛ Կեսարի
ամուսնությունը, և՛ գիշերային սրբազնագործության խորհուրդը: Իսկ
Նա ընտրվել էր Տիցերոնին կործանելու նպատակով: Կեսարն ինքն էլ
իր պրովինցիան մեկնեց միայն այն բանից հետո, երբ Կլոդիոսի օգնու-
թյամբ տապալեց Ցլցերոնին և հասավ Իտալիայից նրա սրտալսմանը

XV Այսպիսիք էին այն դործերը, որ նա կատարեց Գալլական պատերազմներից առաջ: Իսկ ինչ վերաբերում է այն ժամանակին երբ Կլոսարը վարում էր այդ պատերազմները և արշավանքի էր գնում, հպատակեցնելով Գալլիան, սպա աշստեղ նա ասես թե սկսեց մի այլ կյանք՝ ստք դնելով նոր գործունեության ուղի և ապացուցեց, որ չի զիջում մեծագույն, ամենազարմանալի զորավարներից ու ռազմական գործիչներից ոչ մեկին: Քանզի եթե նրա հետ համեմատենք Փարիոսներին, Սկիպիոններին ու Մետելլոսներին կամ իր հետ միաժամանակ ապրած և իրենից ոչ շատ առաջ ապրած Սուլլային Մարիոսին, երկու Լուկուլլոսներին և նույնիսկ իրեն՝ Պոմպեոսին, որի ռազմական փառքն այն ժամանակ մինչև երկինք էր հասել ապա Կեսարը իր սիրանքներով ոմանց հետ կթողնի տեղանքի դաժան ու դժվարին լինելու սուսմով, ողտեղ նա վարել է իր կռիվները, մյուսներին երկրի շափերի առումով, որ նա նվաճել է, Լորսոզներին՝ նկատի ունենալով հակառակորդի քանակն ու հզորությունը որին նա հաղթել է, չորրորդներին՝ հաշվի առնելով այն վայրենությունն ու նենգավորությունը որոնց հետ նրան վիճակվել է բախվել, հինգերորդներին՝ գերիների հանդեպ մարդասիրությամբ ու ներողամտությամբ, վեցերորդներին՝ զինվորներին տված նվերներով ու նրանց հանդեպ իր առատաձեռնությամբ և, վերջապես յոյորին՝ նրանով, որ նա բոլորից ավելի շատ ճակատամարտեր է տվել ու ոչնչացրել ավելի մեծ թվով թշնամիների: Բան չէ այն ս լրիվ տասը տարվա մեջ որի ընթացքում լուսերայն Լուկուլլոսը Գալլիայում, նա գրոհով վերցրել է ավելի լայն ու չհարցուր քաղաք, հպատակեցրել երեք հարյուր ժողովուրդ մարանչել է երեք միլիոն մարդու դեմ, որոնցից մեկ միլիոնին ոչնչացրել է ճակատամարտի ընթացքում և նույնքան էլ գերի է վերցրել:

XVI Ես իր զինվորների կողմից այնպիսի սիրու և նվիրվածության էր արժանացել, որ նույնիսկ այն մարդիկ, ովքեր այլ պատերազմներում ոչնչով աչքի չէին ընկել, անհաղթահարելի խիզախությամբ իրենց նետում էին ցանկացած վտանգի մեջ ի փառս Կեսարի: Օրինակ կարող է ծառայել Սկիլիոսը որը ծովային ճակատամարտում Մասսիլիայի մոտ, ցատկեց թշնամու նավի վրա և, երբ նրա աչ թևը թրատեցին, ձախով բռնեց վահանը, իսկ ապա այդ վահանով հարվածներ հասցնելով թշնամիների դեմքերին, նրանց փախուստի մատնեց և տիրեց նավին:

Մի այլ օրինակ է Կասիոս Սցևան, որը Դիրրաքիոնի ճակատամարտում, զրկվելով աչքից, որ ծակվել էր նետով, ուսն ու ազդրը տեղերով վիրավորված և իր վահանին հարյուր երեսուն նետ ընդունելով ըղավել

էր թշնամիներին, թե իբր ուզում է հանձնվել, բայց երբ նրանցից երկուսը մոտեցել էին ապա մեկի թեև էր թրատել, մյուսին փախուստի էր մատնել՝ դեմքին հարվածելով իսկ ինքը փրկվել էր օգնության հասած յուրայինների շնորհիվ

Բրիտանիայում մի անգամ առաջապահ ցենսուրիոններն ընկել էին ճաճոտ, ջրով լի տեղանք և այստեղ թշնամու հարձակման էին են թարկվել: Եվ ահա մեկը Կեսարի աչքի առաջ, որն ընդհարումն է գիտելիս հղել առաջ է նետվել և, բազմաթիվ, համարձակությամբ զարմանալի սխրանքներ կատարելով՝ ցենսուրիոններին փրկել է բարբառոսների ձեռքից, որոնք ցրիվ են հկել, իսկ ինքը վերջինն է ընկել վտակի մեջ և մերթ լողալով, մերթ ծանծաղուտով անցնելով դուրս է եկել մյուս կողմը, մեծ դժվարությամբ հաղթահարելով բոլոր խոչընդոտները և այդ ընթացքում կորցնելով իր վահանը: Կեսարն ու իր շուրջը կանգնածները նրան դիմավորել են հիացմունքի և ուրախության կանչերով, իսկ զորականը շփոթահար և դած արցունքն աչքերին, Կեսարի ոտքերն է ընկել ներում խնդրելով վահանը կորցնելու համար:

Միջրկայում Սկիպիոնը գրավել էր Կեսարի նավերից մեկը որով նավում էր քվեստոր նշանակված Գրանիոս Պետրոնը: Գրավողները նավի ամբողջ անձնակազմը ռազմավար էին հայտարարել, քվեստորին էլ խոստացել էին ազատութուն տալ: Բայց նա պատասխանել էր թե Կեսարի զինվորները սովոր են գթութուն պարգևել այլ ոչ թե ուրիշներից սաանալ, և այս ասելով՝ նետվել է իր սրի վրա:

XVII Նման արիությունն ու սեր փառքի հանդիպ Կեսարն ինքն էր ւնուցել ու դաստիարակել իր զինվորների մեջ ամենից առաջ նրանով որ առատաձեռնորեն պատիվներ ու նվերներ էր բաշխում նա ուզում էր ցույց տալ, որ արշավանքների ժամանակ ձեռք է բերված հարստությունները ոչ թե իր համար է կուտակում, ոչ թե նրա համար, որ իրեն խեղ գի պերճանքի ու վայելքների մեջ, այլ դրանք պահպանում է որպես ընդհանուր ունեցվածք ու պարգև զինվորական ծառայությունների համար՝ իրեն թողնելով միայն աչքի ընկածներին պարգևներ բաշխելու իրավունքը: Զորքի դաստիարակման երկրորդ միջոցն այն էր որ նա ինքը կամավոր կերպով նետվում էր ցանկացած վտանգին ընդառաջ և չէր հրաժարվում կրել ամեն մի դժվարություն: Նրա սերը վտանգների հանդիպ չէր հարուցում նրանց զարմանքը, ովքեր գիտեին նրա փառասիրովյունը, բայց բոլորին ապշեցնում էր, թե ինչպես էր տանում այն զրկանքները, որոնք, թվում էր, գերազանցում էին նրա ֆիզիկական ուժերը, քանզի նա թույլ կազմվածք ուներ, ճերմակ ու նուրբ մաշկ ս ա

առայրում էր գլխացավերով և ընկնավորությամբ որի առաջին նուպան,
 ինչպես ասում են պատահել էր Կորգուբայում: Սակայն նա իր հիվան-
 դագնությունը չէր օգտագործում որպես պատրվակ փափկասուն կշանք
 վարելու համար, այլ, ռազմական ծառայությունը միջոց դարձնելով
 ապաքինման համար ջանում էր անդադար անցումներով աղքատիկ
 սննդով մշտապես բաց երկնքի տակ լինելով և գրկանքներով հաղթա-
 հարել իր թուլությունը ու ամրապնդել իր մարմինը: Մեծ մասամբ նա
 քնում էր սայլի կամ պատգարակի վրա որպեսզի գործին ծառայեց
 ներ նաև հանգստի ժամերը: Յերևկը նա շրջում էր քաղաքները պահա-
 կային ջոկատներն ու բերդերն էր նայում, ընդամին նրա կողքին նստում
 էր մի ստրուկ որը կարողանում էր գրի առնել նրա ասածները, իսկ
 հետևում՝ սուրբ ձեռքին մի գինովոր: Նա այնպիսի արագությամբ էր տե-
 պից ակզ շարժվում որ առաջին անգամ Հոռմից Հոռդանոս ճանապար
 հը կտրեց անցավ ութ օրում: Ձի հեծնելը մանկությունից նրա համար
 սովորական բան էր եղել: Սա կարողանում էր ձեռքերը մեջքին գրած
 ձին քշել ամբողջ թափով: Իսկ այս արշավանքի ժամանակ նա վարժվել
 էր նաև ձին հեծած նամակներ թելագրել, միաժամանակ գրադեցնելով
 երկու կամ եռչնիսկ, ինչպես պնդում է Օպիոսը ավելի շատ գրագիր
 ներք: Ասում են Կեսարն առաջինն է եղել, որ հանգել է այն մտքին,
 թե կարելի է բարեկամների հետ անհետաձգելի գործերի մասին խոսել
 նամակով երբ քաղաքի մեծությունը և բացառիկ գրադվածությունը
 թույլ չէին տալիս անձամբ հանգիպել: Որպես ապացույց նրա սննդի
 շափափորության՝ բերում են հետևյալ պատմությունը: Մի անգամ Մեդիո-
 լանում նա ճաշելիս է եղել իր հյուրընկալ Վալերիոս Լեոնի մոտ և սա-
 ծնեքեկ է մատուցել՝ համեմված ոչ թե սովորական ձիթենու յուղով, այլ
 դմոնենիով: Կեսարը հանգիստ կերել է առ կերակուրը, իսկ իր ընկե-
 ներին, որոնք դժգոհություն են արտահայտել կշտամբել է «Եթե ձեզ
 որևէ բան դուր չի գալիս — ասել է նա, — ապա լիովին բալական է, որ
 դուք հրաժարվեք ուտելուց: Բայց եթե որևէ մեկը փորձում է նման ան-
 բարեկրթությունը պարսավել, ապա անբարեկրթն ինքն է, որ կա՞: Մի
 անգամ ճանապարհին եղանակի վատացման պատճառով նա մի աղքա-
 տի խրճիթ է ընկել: Այնտեղ մին մի սենյակ տեսնելով, որը հազիվ մեկ
 մարդու կտեղավորեր, նա դիմել է իր բարեկամներին. «Պատվավորը
 գետք է ամենաուժեղներին իսկ անհրաժեշտը՝ ամենաթուլերին», — և
 Օպիոսին է առաջարկում հանգստանալ սենյակում իսկ ինքը մնացած-
 ների հետ պառկում է քնելու դռան առջևի ծածկի տակ:

XVIII Գալլական պատերազմներից առաջինը, որ նրան վիճակ-

վեց վարել, հելվետների ու տիգուրիների դեմ էր Այ ցելիքը հրդեհեցին իրենց տասներկու քաղաքները և շորս հարչուր գյուղերը ու շարժվեցին հոռմեացիներին ենթակա Գալլիայի միջով, ինչպես մինչ այդ կիմ վրրներն ու տևտոններն էին արել, որոնց սրանք, թվում էր, չէին դիջում ոչ համարձակությամբ ոչ բազմամարդութամբ, քանզի սրանք ընգամենը երեք հարչուր հազար էին, ի թիվս որոնց կռվելու ընդունակ հարչուր իննսուն հազար: Տիգուրիներին հաղթեց չ թե Կեսարն ինքը այլ՝ կաբիենոսը որին նա ուղարկել էր սրանց դեմ և ՚որ սրանց ջախջախեց Արարա դեռի մոտ: Իսկ հելվետները հարձակվեցին Կեսարի վրա, երբ նա գորքով գնում էր դեպի դաշնակից քաղաքներից մեկը: Համե՛ն այն դեպս նա հասցրեց հուսալի դիրք գրավել և ալդտեղ հսկաքելով իր ուժերը՝ մալտակարգով շարեց նրանց: Երբ մոտեցրին ձին, Կեսարն աւաց Վս դրանից կօջտվեմ հաղթանակից հետո, երբ գործը հասնի հլտապնդմանը: Իսկ հիմա առա՛ջ դ՛պի թշնամին» — և այս ասելով սկսեց հարձակումը հետևակայիտների շարքում: Երկար ու համս ո հակատամարտից հետո նա ջախջախեց յարբարոսների գորքը բայց ումենամեծ գծվարությունները հանդիպեցին ճամբարում՝ սայլերի մոտ, որովհետև այդտեղ մարտնշում էին ոչ միայն նորից միավորված սաղմիկները այլև կանայք ու էրեխաները, որոնք տաշտպանվում էին նրանց հետ միասին մինչև արշան վերջին կաթիլը: Բոլորը կոտորվեցին, և ճակատամարտը հաղիվ կեսգիշերին վերջացավ: Այս նշանավոր հաղթանակին Կեսարը միացրեց մի սոավլլ փառավոր գործ ևս ստիպելով ճակասամարտից հետո կենդանի մնացած յարբարոսներին (իսկ այդպիսիք հարչուր հազարից ավելի էին) միավորվել և նորից բնակեցնել այն հողը, որ նրանք լքել էին, և այն քաղաքները, որ նրանք ամայացրել էին: Իսկ սա էլ նա արեց երկշուղելով թե գերմանները կանցնեն ա յա յա յս ծ յս րդ էլ ը ու կգրավեն դրանք:

XIX Երկրորդ պատերազմը նա վարեց արդեն գալլերի կողմից ընդ դեմ գերմանների, թեև մինչ այդ նրանց թագավոր Արիովիստոսին շոռմում հայտարարել էր հոռմեական ժողովրդի դաշնակից Բայց գերմանները անտանելի հարեաններ էին Կեսարի հպատակեցրած ժողովուրդների համար, և պարզ է որ նրանք չէին գոհանա իրերի գոյություն ունեցող ժիճակով այլ ս ուաջին իսկ հարմար առիթի դեպքում, կգրավեին ուջ Գալլիան և կամբանային այնտեղ: Երբ Կեսարը նկատեց, որ իր գորքի պետերը երկնշում են, մանավանդ արիստոկրատական ընտանիքներից սերած այն երիտասարդները, որոնք նրան հետևում էին հարստանալու և պերճանքի մեջ ապրելու ցանկությունից նա դրանց խորհուրդի կանչեց և հայտա

րարեց, թե ովքեր որ վախկոտ են ու փոքրագի, կարող են վերագառնալ տու՛ն և իրենց վճանգի շենթարկել հակառակ իրենց ցանկության: «Իսկ ես,— ասաց նա — բարբարոսների դեմ կգնամ մեն-միայն, տասներորդ լեգեոնով, քանզի նրանք, ում դեմ սպասվում է ինձ մարտնշելու, կիմ վրլներից ուժեղ չեն, իսկ ես ինքս ինձ չեմ համարում ավելի թույլ գոյավար, քան Սարիոսը»: Իմանալով այդ, տասներորդ լեգեոնը նրա մոտ պատ լիրակ ուղարկեց, որպեսզի իր շնորհակալությունը հայտնի, մնադած լեգեոններն էլ դատապարտում էին իրենց պետերին և վերջապես, ամենքը, համարձակությամբ ու ոգևորությամբ լեցուն, հետևեցին Կեսարին և բազմօրյա ճանապարհից հետո, ճամբար դրեցին հակառակորդից երկու հարյուր ասպարեզ հեռու Արդեն Կեսարի գալուստն իսկ որոշ շափով խախտեց Սրիովիստոսի հանդուգն ծրագրերը, քանզի նա երբևր չէր սպասում, թե հոտմեացիք, որոնք, թվում էր, չեն գիմանա գերմանների ճնշմանը, իրենք կհամարձակվեն հարձակման անցնել: Նա հիանում էր Կեսարի խեղախությամբ ու միևնույն ժամանակ տեսավ, որ իր լանակը իրարանցման մեջ է: Բայց գերմանների արիությունը էլ ավելի ուղտորեց սրբազան կանանց գուշակությունը, սրոնք դիտելով գետերի չրասյությունները և ունկնդրելով գետակների խշշոցը, աղդարարեցին, թե չի կարելի սկսել ճակատամարտը նորալուսնից առաջ: Երբ Կեսարն իմացավ այդ և տեսավ, որ գերմանները խուսափում են հարձակումից որոշեց, որ ավելի լավ է հարձակվել, քանի գձ նրանք կովի տրամադրված չեն, քան թե պարտա մասը նրանց հնարավորություն տալով սպասել իրենց համար ավելի արմար ժամանակի: Հարձակումներ գործելով բլուրների շուրջը եղած ամրությունների վրա, որտեղ նրանք իրենց ճամբարն էին դրել, նա այնպես գաղաղեցրեց գերմաններին, որ նրանք վարույթով դուրս եկան ճամբարից և մարտի մտան: Կեսարը նրանց ջախջախիչ պարտություն տանեց և, հետ փախցնելով, քչեց ուղղակի մինչև Հռենոս՝ շորս հարյուր ասպարեզ հեռու՝ այդ ամբողջ տարածությունը ծածկելով թշնամիների դիակներով ու նրանց զենքերով: Սրիովիստոսը մի քանի հոգու հետ հասցրեց այնուամենայնիվ Հռենոսի այն ափն անցնել: Սպանվածների թիվը ինչպես տղեկացնում են հասնում էր ութսուն հազարի:

XX Դրանից հետո իր զորքը թողնելով ձմեռային բնակարաններում սեկվանների հողում Կեսարն ինքը, որպեսզի զբաղվեր Հոտմի գործերով, ճամփա ընկավ դեպի Գալլիա, որն ընկած է Պադոս գետի հրկայնքով և մտել է նրան հատկացված պրովինցիայի մեջ, որովհետև Ալարալյան Գալլիայի 3 բուն Իտալիայի միջև իբրև սահման ծառայում է

Թուրքիոն գտար: Այստեղ Կեսարի մոտ շատեոն էին գալիս Հոռոմիյ, և նա հնարավորութիւն ունէր մեծացնելու իր ազդեցութիւնը, կատարելով յուր բարանչուրի խնդրանքը այնպէս որ ամենքը նրանից հեռանում էին կամ ստացած այն, ինչ ցանկանում էին, կամ հուսալով որ կստանան: Այսկերպ էր նա գործում ամբողջ պատերազմի ընթացքում մերթ թշնամիներին էր յաղթում համաքաղաքացիների դէնքով, մերթ էլ իրենց քաղաքացիներին էր գրաւում թշնամուց գրաւած դրամով Իսկ Պոմպեոսը սչինչ չէր նկատում:

Այդ միտցին բելգերը գալլերից առավել հզորները, որոնք տիրու էին ամբողջ Գալլիայի մեկ երրորդին անջատվել էին ռոմեացիներից և բազմահազարանոց բանակ հավաքել: Կեսարը նրանց դիմելով հապճեպորեն և արձակվեց թշնամիների վրա, մինչ նրանք ամայացնում էին հոռոմեացիների դաշնակից ցեղերի հողերը: Նա դեն շարտեց թշնամիների բազմամբոխ զորքը որը շնչին դիմադրութիւն ցույց տվեց, և Կեսարն այնպիսի կոտորած սարքեց, որ ճահիճներն ու խոր գետերը բազում դիակներով լցված, դշուրանցանելի դարձան հոռոմեացիների համար: Դրանից հետո Օմելիոնոսի ասին ապրող բոլոր ժողովուրդները կամավոր կերպով հպատակեցին նորից բայց ներվիներին՝ բելգերի երկրում ապրող ցեղերին միջ այդ առավել վայրենիների ու ոսպմատենչների յեմ Կեսարը պետք է սրշավանքի գնար: Ներվիները, որոնք բնակվում էին խիտ թափուտանում իրենց ընտանիքները և ունեցվածքը թաքցրել էին թշնամուց հեռու տեղերում, իսկ իրենք անտառի խորքում վաթսուն հազար հագով հարձակվեցին Կեսարի վրա հենց այն ժամանակ, երբ նա գրաւված լինելով ճամբարի շուրջը հողապատենչ շինելով բնավ չէր սպասում հարձակման: Բարբարոսները հետ շարտեցին հոռոմեական հեծելազորը և, շրջապատելով տասներկուերորդ ու յոթերորդ լեգեոնները կոտորեցին բոլոր ցենտուրիոններին: Եթե Կեսարը ճեղքելով կովոդների ամենահոծ տեղը, վահանը ձեռքին շնտվր բարբարոսների վրա և լիք տեսնելով այն վտանգը որ սպստնում էր գորավարին՝ տասներորդ լեգեոնը բարձունքից շնտվր թշնամու լրա և շխառնշտեր ու շարդեր նրա շարքերը, հագլով թե ողջ մնար գեթ մի հոռոմեացի գինվոր: Բայց Կեսարի համայնակութիւնը հանդեցրեց այն բանին, որ հոռոմեացիները կովեցին կարելի է ասել իրենց ուժից վեր և քանի որ ներվիները այնուամենայնիվ փախուստի շղիմեցին, նրանց ոչնչացրին՝ շնայած կատաղի դիմադրութիւնը: Վաթսուն հազար բարբարոսներից կենդանի մնացին միայն հինգ հարյուրը, իսկ նրանց շորս հարյուր սենստորներից՝ միայն երեքը:

XXI Երբ այդ ամենի լուրը եկավ հասավ Հոռոմ սենատը որոշեց տասնհինգօրյա տոնակատարութիւն կազմակերպել ի պատիվ աստվածների մի քան որ անցալուծ շէր եղել ոչ մի հազթանակի առթիվ: Բայց մյուս կողմից, բուն վտանգն էլ Երբ միաժամանակ ապստամբել էին այլքան շատ թշնամական ցեղեր, թվում էր վիթիարի և Կեսարի հանդեպ ժողովրդի սերը նրա հազթանակները պսակել էին առանձնապես վառ փայլով:

Գործերը Գալլիայում կարգի բերելով Կեսարը նորից ձմեռեց Պաղոսի հովտում ամրապնդելով իր ազդեցութիւնը Հոռոմում, որովհետև նրանք, ովքեր նրա օգնութեամբ ձգտում էին պաշտոններ ձեռք բերել, մողովրդին կաշառում էին նրա փողերով իսկ պաշտոն ստանալով, անում էին ամեն բան, ինչը կարող էր մեծացնել Կեսարի հզորութիւնը: Բայց այդ առավել ասվանի ու ականավոր մարդկանց մեծամասութիւնը նրա մոտ Լուկա եկավ ի թիվս դրանց և Պոմպեոսը, Կրասոսը, Սարդինիայի պրետոր Ապպիոսը և Իսպանիայի փոխարքա Նեպոսը այնպես ր այնտեղ հավաքվեցին ընդամենը հարյուր քսան լիկտոր ու երկու հարյուրից ավելի սենատոր: Խորհրդակցութեանում որոշվեց հետևյալը Պոմպեոսն ու Կրասոսը պետք է ընտրվեն Կոնսուլ, Կեսարին էլ, բացի Կոնսուլական լիազորութիւնները ևս հինգ տարով երկարաձգելուց, պետք է արվի նաև դրամական, սրտչակի գումար Այս վերջին պայմանը շատ ասորօրինակ թվաց լուր որչամիտ մարդկանց: Քանզի հենց այն ան ձինը ովքեր Կեսարից այդքան պրամ էին ստացել, սենատին առաջարկում էին կամ, ավելի շուտ ստիպում էին, հակառակ նրա ցանկութեանը պրամ տալ Կեսարին, Էսթեա թե Կեսարը դրամ շուներ: Կատոնն այն ժամանակ չկար նրան դիմամբ ուղարկել էին Կիպրոս Փավոնիոսն էլ որը Կատոնի համախոհն էր, սենատում սրած իր առարկութիւններով ոչնչի շահանելով կուրիայի դռներին պուրս վաղեց բարձրաձայն կան շէլով ժողովրդին: Բայց ոչ ոք նրան չէր լսում բմանք վախենում էին Պոմպեոսից ու Կրասոսից իսկ մեծ մասը լուծ էր, սիրաշահելով Կեսարին, սրի վրա նա իր ողջ հուշանքն էր դրել:

XXII Կեսարն էլ նորից վերադառնալով իր գործերի մոտ Գալլիա, վրա հասավ մեծ մի պատերազմի գերմանների երկու ցեղեր ուղիպետները և տենկտերները անցել էին Հոննոսը՝ նոր հողեր փնտրելու Դրանց դեմ մղած պատերազմի մասին Կեսարը իր «Հիշատակարանում» պատմում է հետևյալը: Բարբարոսները նրա մոտ դեպաններ ևս ուղարկել բայց զինադադարի ժամանակ ճանապարհին անսպասելի հարձակվել

են նրա վրա, դրա համար էլ ութ հարյուր հոգանոց ՚րանց ջոկատը փախուստի է մատնել Կեսարի հանկարծակիի եկած հինգ հազար հեծյալ ներին: Ապա նրանք վերստին դեսպաններ են ուղարկել նրան նորից խարելու Շամար, բայց նա բռնել է դեսպաններին և զորքը տարել գերմանների դեմ, մտածելով որ հիմարություն է հավատալ այդքան ուխտադրուծ ու նենգ մարդկանց: Ճանաչիուր ճիշտ է լլատմում է, թե երբ սենատը որոշում հանեց հաղթանակի պատվին սոն ու գոհաբերություն կատարելու, Կատոնը հանդես եկավ առաջարկելով Կեսարին տալ բարբարոսների ձեռքը, որպեսզի Հռոմը մաքրվի երդմնազանցության արատից և անեծքը նրա գլխին թափելով, անձամբ մեղավոր էլ Նրանցից, ովքեր անցել էին Հռենոսը, շորս հարյուր հազարը կոտորվել էր: Վերադարձած քչերին գերմանների սուղամբր ցեղը բնդունել էր լարեկամաբար: Ցանկանալով ձեռք բերել զորքով Հռենոսն անցած առաջին մարդու փառքը, Կեսարը դա իբրև պատրվակ օգտագործեց սուղամբրների վրա արշավելու համար և սկսեց կամուրջ կառուցել լայն վտակի վրա, որը հենց այդ տեղում առանձնապես ջրառատ էր ու սրընթաց և հոսանքն այնպես ուժգին էր որ ջրի բիրս զերանների հարվածներով դետն սպառնում էր խորտակել կամուրջը պահող սյուները: Բայց Կեսարը հրամայեց գետի հատակին խփել վիթխարի ու Շատտ ցցազերաններ և, ասես սանձահարելով հորձանքի բւժը, տասն օրվա ընթացքում կապեց կամուրջը, որի տեսքը գեղազանցուա էր ամեն սպասելիքը (XXIII) Այնուհետև նա իր զորքերն անց կացրեց մյուս ափը չհանդիպելով ոչ մի դիմադրության որովհետև նույնիսկ սվինները գերմաններից ամենազորեղները թաքնվել էին ետավոր թափտաներում: Ուստի նա կրակով ամառացրեց թշնամիների հողը, ոպեպնդեց նրանց ովքեր մշտապես էղել էին հոռմեացիների դաշնակիցները և լերագործավ Գալլիա Գերմանիայում անցկացնելով տասնութ օր

Բրիտանների դեմ կատարած արշավանքը ապացուցեց Կեսարի բացառիկ Շամարձակությունը: Քանզի նա առաջինն էր որ դուրս եկավ Արևմտյան օվկիանոսը և զորքով նավեց անցավ Ատլանտյան ծովը, որ ընդլայնեց հոռմեական ախրապետությունը երկրները հայտնի շրջանակի սահմաններից դուրս՝ փորձելով տիրել այնքան աներևակայելի շափերով այդ կղզին որը շատ դրողներ պնդում են, թե իբր, գոյություն իսկ չունի, իսկ դրա մասին պատմությունները և դրա անունն անգամ սոսկ հերյուրանք են Կեսարը երկու անգամ նավեց անցավ այդ կղզին՝ Գալլիայի հակադիր ափից, բայց այն բանից հետո, երբ ավելի շատ վնաս հասցրեց հակառակորդին բան օգուտ բե

րեց իր զորքերին (այդ աչքատ ու նեզ ապրող մարդիկ ոչինչ չունեին, որ արժենար գրավել), նա այս պատերազմն ավարտեց ու այնպես, ինչպէս ուզում էր պատանդներ վերցնելով ըարբարոսների թագավորից և հարկ դնելով, նա թողեց հեռացավ Բրիտանիայից:

Գալլիայում նրան մի նամակ էր սպասում, որ լէին հասցրել տա նել հանձնել նրան Բրիտանիայում: Հոռոմում գտնվող նրա բարեկամները հայտնում էին նրա դատեր՝ Պոմպեոսի կնոջ մահը, որ վախճանվել էր ծննդաբերութեան ժամանակ: Ինչպես Պոմպեոսին, այնպես էլ Կեսարին խորը վիշտ համակեց, նրանց բարեկամներին էլ համակեց շփոթութունը, որովհետև այժմ քայքայվում էին ազգակցական կապերը որոնք դեռևս խաղաղութունն ու համերաշխութունն էին պահպանում երկպառակութուններով տառապող պետութեան մեջ: Երեսնան էլ շուտով մահացել էր՝ մորից միայն մի քանի օր ավել ապրելով: Հուլյայի դիակը Լողովուրդը շնայած ժողովրդական տրիբունների ընդդիմութեանը տարավ Մարսյան դաշտը և այնտեղ թաղեց:

XXIV. Մրպեսդի իր սաստիկ մեծացած բանակը ձմեռային կացարաններում տեղավորեց, Կեսարն ստիպված եղավ այն բաժանել շատ մանրի, իսկ ինքը սովորականի պես, մեկնեց Իտալիա: Բայց այդ ժամանակ Գալլիայում նորից բռնկվեց համընդհանուր ապստամբությունը, և ապստամբների մեծ հորդաները, շրջելով երկրով մեկ ավերում էին հռոմեացիների ձմեռային կացարանները և հարձակվում նույնիսկ հռոմեական ամրացված ճամբարների վրա: Ապստամբների ամենամեծ ու ամենաուժեղ մասը Ամբիորիգոսի գլխավորությամբ ջարդեց Կոտտայի ու Տիտուրիոնի ջոկատները: Այնուհետև վաթսունհազարանոց բանակով Ամբիորիգոսը շրջապատեց Ցիցերոնի լեզեոնը և քիչ մնաց ճամբարը գրոհով վերցնեց, որովհետև հռոմեացիները բոլորը վիրավոր էին և դիմունում էին ավելի շուտ իրենց խիզախության, քան թե ուժի շնորհիվ:

Երբ Կեսարը, որն արդեն գտնվում էր հեռվում ստացավ այդ լուրը, ի կույն հետ դարձավ և հավաքելով յոթ հազար զորական օգնության շտապեց պաշարված Ցիցերոնին: Պաշարողներն իմանալով, որ նա մոտենում է, ընդառաջ ելան արհամարհանքով վերաբերվելով փոքրամիկ հակառակորդին և հուսալով, որ ի կույնեթ կոչնչացնեն: Կեսարը շարունակ հմտորեն խուսափելով նրանց հետ հանդիպելուց՝ հասավ այնպիսի մի վայր, որտեղ կարելի էր հաջողությամբ պաշտպանվել թշնամու գերակշիռ ուժերից, և այդտեղ ճամբար դրեց: Նա զսպում էր իր զորականներին գալլերի հետ ամեն մի ընդհարումից և հոգապատենչ կանգնեց նելով ու դարպասներ դնելով ցույց տվեց թե իբր վախենում է թըշ

Նամուց՝ ու խրախուսւց նրա ամբարտաւանութիւնը: Իսկ երբ թշնա ի ներք, հանդիմութեամբ լցված, սկսեցին հարձակիլ առանց որևէ կարգուկանոնի, նա արտագրոհ տվեց նրանց փախուստի մատենեց և շատ բին ողնչացրեց:

XXV Այս հաղթանակը այդտեղի գալլելի ապստամբութիւններէ առաջն առավ, և Կեսարն ինչն էլ ձմեռվա ընթացքում շրջագայում էր ամենուրեք՝ եռանդուն կերպով ճնշելով անկարգութիւնները: Բացի այդ, գոհված լեզեոններին Իտալիայից փոխարինելու եկավ երեք լեզեոն դրանցից երկուսը Պոմպեոսը տրամադրել էր անցյալում իր հրամանատարութեան տակ եղածներից իսկ երրորդը նոր էր հալաքված Պադսս գետի ափերի գալլական խորհրդից:

Բայց շուտով ի հայտ եկան առաջին նշանները ասէնից մեծ և վտանգավոր պատերազմի, որպիսին երբեք մղվել էր Գալլիայում: Դրա մտադրութիւնը վաղուց արդեն թաքուն հասունացել էր և ամենաազդեցիկ մարդկանց միջոցով տարածվում էր ամենից ուղիղաշունչ ցեղերի մէջ: Նրանց տրամադրութեան տակ կային և բալմաթիվ գինված ուժեր, և՛ պատերազմի համար հավաքած դրամական մեծ գումարներ և՛ ամբողջված քաղաքներ և՛ դժվարանցանելի տեղանքներ: Էսկ քանի որ ձմեռային եղանակի պատճառով գետերը սառած էին, անտառները՝ ձյունապատ հովիտները՝ ջրածածկ, արահետները որոշ տեղերում անհետացել էին ձյունե հաստ քողի տակ, այլ տեղերում անհուսալի էին դարձել ճահիճների և վարարած ջրերի պատճառով, ապա միանգամայն ակնհայտ էր թվում, որ Կեսարը ուրիշ շի կարողանա անել ապստամբներին: Շատ ցեղեր էին ըմբոստացել, բայց ապստամբութեան օջախը արվերևների ու կարնուտների հողերն էին: Ապստամբները բնդհանուր գրոխավոր հրամանատար էին ընտրել Լերցինգտորիգոսին՝ սրի հորը գալլերը մինչ այդ գլխատել էին՝ կասկածելով, թե ձգտու՞մ ունի բռնապետութիւն հաստատել:

XXVI Վերցինգտորիգոսը իր ուժերը բաժանել էր շատ ու շատ շոկատների, դրանց գլխավորներ նշանակելով բազմաթիվ պետերի, և իր կողմն էր թեքել Ալարոսի շուրջը գտնվող ամբողջ մարզը: Նա հուշումներ ոտքի հանել ամբողջ Գալլիան, մինչդեռ Հռոմում սկսել էին միավորվել Կեսարի հակառակորդները: Աթե նա դա աներ մի քիչ ավելի ուշ, երբ Կեսարն արդեն ներգրավված էր քաղաքացիական պատերազմի մէջ, ապա Իտալիային ոչ պակաս վտանգ կսպաննար, քան կիմբրների արշավանքի ժամանակ: Բայց Կեսարը, որը, ինչպես ուրիշ ոչ ոք, կարողանում էր պատերազմում ձգտովի ցանկացած առավելութիւնից և

ամենից առաջ հանգամանքների բարեհաջող դասավորութիւնից, իր ղորքով արշավանքի ելլով իսկույնեւթ, հենց որ ապստամբութեան լուրն ստացավ Այն մեծ տարածութիւնը, որ նա անցավ կարճ ժամանակում, առաջարժման արագութիւնն ու սրընթացութիւնը ձմեռային անձանապարհայնութեան պայմաններում, բարբարոսներին ցույց տվին, որ իրենց վրա է գալիս անհաղթահարելի և անպարտելի մի ուժ: Քանզի այնտեղ, ուր թվում էր խեղճ լրատարն իսկ իր նամակով չէր կարողանա թափանցել նույնիսկ երկար ժամանակվա ընթացքում նրանք հանկարծ տեսան իրեն՝ Կեսարին, իր ամբողջ զորքով: Կեսարն անցնում էր՝ ամայացնելով ոչընչացնելով ամբուրթյունները, հպատակեցնելով քաղաքները, իր ղորքին յիացնելով հանձնվողներին, մինչև որ նրա դեմ էլավ էղունների ցեղը: Էղունները անցյալում հռոմէական ժողովրդի եղբայրնէ՛ր էլին հռչակված և հասունի հարգանք էին վայելում ուստի և հիմա հարելով ապստամբներին, նրանք Կեսարի զորքը ծանր վհատութեան մատնեցին: Կեսարն ստիպված եղավ մարտել նրանց երկիրը և լինգոնների մարզի միջով ուղղվեց դեպի սեկվանները, որոնք նրա դաշնակիցներն էին և որոնց հողը ապստամբած գալլական մարդերը բաժանում էր Իտալիայից: Այս արշավանքի ժամանակ նա ենթարկվեց թշնամիների հարձակմանը, որոնք ահռելի զորքով շրջապատել էին նրան, և նա որոշեց ճակատամարտ տալ Երկար և արյունալի ճակատամարտից հետո, նա վերջիվերջո, հաղթահարեց ու ջարդեց բարբարոսներին: Սկզբում, սակայն, նա, ըստ Լեուլիթին, կորուստ էր ունենում, — համենայն դեպս հիմա էլ արվիրները ցույց են տալիս Կեսարի՝ տաճարում կախված սուրը, որ խլված է եղել մարտում: Սա ինքն էլ հետազայում տեսնելով այդ սուրը՝ ծիծաղել է և, երբ նրա ընկերները ցանկացէլ էն վերցնել այդ սուրը, նա թուղ շի տվել՝ ընծան համարելով սրբազան:

XCVII Մինչդեռ ճակատամարտում կենդանի մնացած բարբարոսների չե՛ծ մասը իրենց թագավորի հետ թաքնվել էր Ալեգրիա քաղաքում: Այդ քաղաքի շրջապատման ժամանակ որն անառիկ էր թվում բարձր պարի պների և շրջապատվածների բազմամարդութեան պատճառով, Կեսարը ահռելի վտանգի ենթարկվեց, քանզի գալլական բոլոր ցեղերի ընտիր ուժերը՝ հրեք հարյուր հազար մարդ միացել իրար, եկել լցվել էին Ալեգրիայի շուրջը, մինչդեռ քաղաքում փակվածների թիվը հարյուր յոթաչասուն հազարից պակաս լէր: Սեղմվելով ու կուշ գալով այդքան մեծ երկու ուժերի միջև՝ Կեսարն ստիպված էր երկու պարիսպ կանգնեցնել մեկը՝ ընդդեմ քաղաքի, մյուսը եկած գալլերի, որովհետև պարզ էր, որ էթե թշնամիները միանան, ուրեմն իր վերջն է: Ալեգրիայի մոտ մզված

ւլայքարը արժանի հռչակ է վայելում, քանի որ ոչ մի աչլ պատերազմ
այդպիսի համարձակ ու հմուտ սխրանքների օրինակներ չի տալիս Բայց
ամենից ավելի վարձանալին այն էր որ Կեսարը քաղաքի պարիսպների
տակ մարտնչելով մեծաքանակ զորքի դեմ և ջախջախելով այն, դա արեց
ոչ միայն պաշարվածների համար աննկատելի, այլև նույնիսկ այն
հոռմեացիների, որոնք քաղաքի կողմի պարիսպն էին պահպանում: Վեր-
ջրններս հաղթանակի լուրն իմացան ոչ ավելի վաղ քան լսեցին Ալե-
զիայից իրենց հաւնող ողբն և հեկեկանքը այն տղամարդկանց ու
կանանց, որոնք տեսել էին, թե հոռմեացիներն ինչպես էին հակառակ
կողմից իրենց շամբարը տանում քաղմաթիվ վահաններ՝ դարդարված
աքծս թով ու օսկով, զրահներ՝ արյունով օծված, բազմաթիվ սկահակ
ներ ու գալլական վրանների Այսպես ակնթարթորին, երազի կամ տեսիլ-
քի նման, ոչնչացվեց ու ցրիվ տրվեց այդ անհաշիվ ուժը, ընդ որում
բարբարոսների մեծ մասը ընկավ ճակատամարտում: Վերջապես, այն
բանից հետո, երբ արդեն շատ հոգս էին պատճառել և՛ Կեսարին և
իշենք իրենց, հանձնվեցին ևս Ալեզիայի պաշտպանները: Վերցինգե-
տորինգոսը՝ ամբողջ պատերազմի ղեկավարը, ամենալավ զենքուզրահը
վրան և ղուզած վարդարած ձիով գուրս եկավ դարպասից: Շրջանցելով
այն բարձունքը որի վրա նստած էր Կեսարը, նա ձեռք վար ցատկեց
ւրակեց վրայից ամբողջ զենք ու զրահը և նստելով Կեսարի ոտքերի մոտ
մայց այնտեղ, մինչև որ կալանավորեցին նրան որպէսզի պահպանեին
հաղթահանդեսի համար

XXVIII Կեսարը վաղ ւյ ա, դեն որոշել էր տապալել Պոմպեոսին,
ինչպես և, իհարկե, Պոմպեոսն էլ՝ նրան: Երբ Կրասոսը, որին նրանցից
ամեն մեկը, հաղթանակի դեպքում, կհամարեր իր թշնամին, զոհվեց
պարթևների դեմ մղվող պատերազմում, Կեսարին, եթե նա ուզում էր
սուաջինը լինել, ուրիշ ոչինչ չէր մնում անելու քան ոչնչացնել նրան,
ում որ արդեն պատկանում էր առաջնութունը իսկ Պոմպեոսը, որպեսզի
այդպիսի վախճան թույլ շտար պետք է ժամանակին վերացներ նրան
ումից վախենում էր: Պոմպեոսը միայն վերջերս էր սկսել երկյուղել Կե-
սարից իսկ առաջ նրա հետ վերաբերվում էր արհամարհանքով, մտա-
ծելով, թե դժվար չի լինի ոչնչացնել նրան ու իր բարձրացմամբ հենո
Պոմպեոսին է պարտական: Կեսարն էլ, որն սկզբից եթ աչդ մտադրու-
թյուններն էր փայփայում, մարդկիկի նման երկար ժամանակով հեռացել
էր իր մրցակիցների տեսողաշտից: Գալլական պատերազմներում նա
մարդում էր և՛ իրեն և իր զորքը, ու խրանքներով այնքան մեծացրեց

իր իս ոքը որ այն հավասարվեց Պոմպեոսի հաղթանակների փառքին: Սյժմ նա օգտվում էր բուրբ առիթներից ինչ որ տալիս էին և՛ Պոմպեոսն ինքը, և ժամանակի պայմանները, և Հռոմում քաղաքացիական կյանքի անկումը որը հանգեցնում էր այն բանին, որ պաշտոնների հետամտող սնձինք նստում էին հրապարակում իրենց սեղանիցի մոտ՝ վրան դրամներ կիսած 1 անամոթաբար կաշառում էին ամբոխին, իսկ վարձված ժողովուրդը ժողով էր գալիս որպեսզի պայքարեր հօգուտ նրա, ով որ իրեն դրամ էր տվել, պայքարէր ոչ թե քվերակության միջոցով սյլ աղեղներով, պարսատիկներով ու սրերով: Հս ախ հավաքվածները ցրվ էին գալիս այն լանից հետո միայն, 1 որ արդեն հոտորի բառձոնքը պղծվում էր դիակներով և արատավորվում նրա ալյամբ: Պատուխոնք խորասուլում էր անարխիայի հարձանքի միջ ման այն նավին, որն ընթանում է առանց կառավարման այնպես որ ողջամիտ մարդիկ երջանիկ ելք էին համարում այն, որ իրադարձությունների ընթացքը այդպիսի խելահեղություններից և աղետներից հետո հանգեցնեի մենիշխանության այլ ոչ թե ինչ որ սվելի վատ բանի: Շատերն արդեն համարձակվում էին բացէիրաց խոսել, թե պետությունը լի կարող ապաքինվել այլ կերպ, քան մենիշխանությամբ 1 պետք է այդ դեռն ընդունել առավել հեզաբարո բժշկից, որպիսին ի նկատի էր առնվում Պոմպեոսը Պոմպեոսն էլ, ս ուրևս խոսքով իր հանձն շանելով այդ դերը, իրականում ամենից շատ ձոտում էր հասնել հենց այն բանին, որ իրեն հոշակեին դիկտատոր: Կատոնն ու իր բարեկամները հասկացել էին այդ և սենատում առաջարկություն անցկացրին Պոմպեոսին միակ կոնսուլ ընտրելու վերաբերյալ, որպեսզի նա, բավարարվելով այդպիսի քիչ թե շատ օրինական մենիշխանությունից չձգտեր դիկտատուրայի: Որոշված 1 որ նաև երկարածղել պրովինցիանների կառավարման նրա ժամկետը, որոնցից Երկուսն էին նրանը՝ Իսպանիան և Աֆրիկան նա դրանք կառավարում էր լեզատների օգնությամբ՝ իր ղորքերը պահելու համար պետական գանձարանից չուրաքանչյուր տարի ստանալով հազար տաղանդ:

XXIX Այնինչ Կեսարը, միջնորդներ ուղարկելով Հռոմ, ձդտում էր հասնել կոնսուլության և պահանջում էր Երկարացնել իր լիազորությունները պրովինցիաներում: Եվ մինչ Պոմպեոսը սկզբում լոություն էր պահպանում Մարցելլոսն ու Լենտուլոսը, որոնք միշտ ատել էին Կեսարին, հանգես եկան ընդդեմ նրա խնդրանքի իրազորման: Այն նկատառումներին, որոնք թելադրվում էին հանգամանքների կողմից, նրանք առանց կարիքի ալելացրին և բազում ուրիշները որոնք միտված էին Կեսարին

վիրավորելուն և անվանարկելուն: Աւապէս, օրինակ նրանք պահանջում էին վերացնել Գալլիայի Նոր Կոմի բնակիչների քաղաքացիութեան իրաւունքը, մի դադուիթ, որը նոր էր հիմնադրվել Կեսարի կողմից գրանից ոչ շատ առաջ, իսկ այնտեղի խորհրդի անդամներից մեկին, որը Հոռմ էր եկել, կոնսուլ Մարցելլուսը նույնիսկ ճիպտատահարեց ասելով՝ «Մաքեզ ի նշան այն բանի որ դու հոռմեական քաղաքացի չես, հիմա տուն վերադարձիր և սպիներդ ցույց տուր Կեսարին»: Իսկ իր Կեսարը Մարցելլուսի այդ վրդովեցուցիչ արարքից հետո գալլական հարստութեանը և առատ հեղեղի պէս ուղարկեց պետութեան դեկավարմանը մասնակից ամեն մեկին և ոչ միայն ժողովրդական տրիբուն Կուրիոնին ազատեց մեծ պարտքերից այլև կոնսուլ Պոլոսին տվեց հազար հինգ հարյուր տաղանդ որի միջոցով սա Ֆորումը զարգարեց նշանավոր մի շինութեամբ՝ բազիլիկայով, ուր նա կանգնեցրեց Փուլվիոսի բազիլիկայի տեղում, այնժամ Պոմպեոսը անարեկված այդ խարդավանքներից՝ արդեն բացահայտորեն, և անձամբ և բարեկամների միջոցով սկսեց պայքարել հանուն այն բանի որ Կեսարին փոխարինող նշանակվի պրովինցիալները կառավարելու պծով: Միա՛մանակ նա Կեսարից հետ պահանջեց այն լեգեոնները որ ինքը արամադրել էր նրան Գալլիայում պատերազմելու համար: Կեսարն իսկույննեթ ևս ուղարկեց այդ զորքերը յուրաքանչյուր զինվորի պարգևատրելով երկու հարյուր հիսուն դրախմով:

Նրանք, ովքեր այդ լեգեոնները բերեցին Պոմպեոսի մոտ, ժողովրդի մեջ վատ լուրեր էին տարածում Կեսարի մասին՝ միաժամանակ Պոմպեոսին շլացնելով սին հույսերով. այդ մարդիկ նրան հավատացնում էին, թե Կեսարի զորքը կարոտում է Պոմպեոսին և էթե այստեղ պետութեան մեջ, որը տառապում է ծածուկ ախտից նա հագիվ թե ի պորու է պայքարելու նախանձորդների դեմ ապա այնտեղ նրա տրամադրութեան տակ զորք կա որը պատրաստ է իսկույննեթ հենց որ այն ոտք դնի Իտալիա հանդես գալ նրա՝ Պոմպեոսի կողմում, — իբր ահա այս պիսի անբարյացակամութեան է իր դեմ հարուցել Կեսարը անընդհատ արշավանքներով, այսպիսի անվատահութեան՝ մենիշխանութեան իր ձգտումներով, Լսելով նման խոսքեր՝ Պոմպեոսը մի կողմ թողեց ամեն էրկյուղ, շնորհաց զինվորական ուժեր ձեռքբերելու մասին և մտածում էր Կեսարին հաղթել ճառերի և օրինագծերի միջոցով: Բայց Կեսարին բոլորովին չէին մտահոգում այն որոշումները, որ Պոմպեոսը հանում էր իր դեմ: Պատմում են, թե Կեսարի զորականներից մեկը, որին նա Հոռմ է ուղարկած եղել, սենատի շինքի առաջ կանգնած լսելով, թե սենատը հրաժարվում է երկարացնել Կեսարի հրամանատարութեան ժամկետը՝

սսել է ձեռքը սյի կոթին դիւած «Դէ ի նշ ալած այդ դեպքում սա՛րքան ժամկետի երկարացում կտա :

XXX Ասենք, Կեսարի պահանջներն աւտաքուտ արդարացի էին թվում: Այսինքն՝ նա առաջարկում էր, որ ինքը կարծակի իր զորքերը, եթե Պոմպեոսն էլ նույնն անի, և իրենք երկուսով որպէս մասնավոր անձինք համաքաղաքացիներից փոխ՝ ստուգում սպասեն իրենց արած գործերի դիմաց Չէ՞ որ եթե իր զորքն առնեն ձեռքից, իսկ Պոմպեոսին թողնեն և ամրացնեն նրա ուժերը ապա մեկին մեղադրելով բռնապետութեան ձուտման մեջ, մյուսին բռնապետ կղարձեն: Կուրիոսին, որը Կեսարի այս առաջարկութեանը հաղորդել էր սենատին, ողջունել էին ազմկալի ծափահարութեաններով, նրա վրա նույնիսկ լյսակներ էին նետել, ինչպէս իտալերի մեջ հազիթանակ տանուլի վրա: Ժողովրդական տրիբուն Անտոնիոսը շուտով ժողովրդական ժողով բերեց Կեսարի նամակը այդ առաջարկութեան արթիվ և, շնայած կոնսուլների դիմադրութեանը կարգաց Բայց սենատում Պոմպեոսի աներ Սկիպիոնը առաջարկութեան մտքից Կեսարին հայլ ենիքի թշնամի հայտարարել եթե նա որշակի ժամկետում գենքը վայր շնի: Կոնսուլներն սկսեցին հարցում կատարել թէ ով է քվեարկում հոգուտ այն բանի որ Պոմպեոսն արձակի իր զորքերը, և ով՝ հոգուտ նրա, որ Կեսարն արձակի իրենը: Առաջին առաջարկի օգտին շատ քչին արտահայտվեցին, իսկ հոգուտ երկրորդի՝ համարյա բոլոր: Սյնժամ Անտոնիոսը առաջարկ մտքից որ երկուսն էլ միաժամանակ վայր գնեն իրենց լիազորութեանները, և այս առաջարկութեանը միահամուտ կերպով միացավ ամբողջ սենատը: Բայց բանի որ Սկիպիոնը վճռահանորեն հանդես եկավ ընդդիմ դրա իսկ կոնսուլ Անտուոսը գոչեց թե ավագակի դիմ պետք է գենքով գործել, և լուր թե որոշումներով, սենատորները ցրվեցին և լզո զգեստներ հագան այդպիսի երկպառակութեան անթիվ:

XXXI Դրանից հետո Կեսարից նամակներ եկան շատ շափավոր առաջարկութեաններով: Ես համաձայնութեան էր հայտնում որ կհրոժարվի բոլոր պահանջներից, եթե իրեն տան Այսրալայան Գալիան և Իլլիրիկեն՝ երկու լեգեոնների հետ մինչև այն ժամանակ երբ ինքը կկարողանա երկրորդ անգամ որպէս հալցորդ հանդես գալ կոնսուլական ըստութեաններում: Հոնտոր Յիցերոնը որը հենց նոր էր եկել Կիլիկիայից և ջանում էր հաշտեցնել թշնամացածներին, փորձեց մեղմացնել Պոմպեոսին, բայց սա, զիջելով մնացած բաներում չէր համաձայնում չորք թողնել Կեսարին: Այնժամ Յիցերոնը Կեսարի բարեկամներին համոզեց սահմանափակվել հիշս տակված պրովինցիաներով ու վեց հա

զար գինվորով և թշնամությանը վերջ տալ: Սլան Պոմպեոսն էլ էր հաճաճայնում: Բայց կոնսուլ Լենտուլոսը և նրա բարեկամները հակառակվեցին և մինչև այնտեղ հասան որ խայտառակ ու անարգ ձևով սենատից դուրս վոնդեցին Անտոնիոսին ու Կուրիոնին: Դրանով իսկ նրանք Կեսարին գինվորների զարույթը բոլորելու լավագույն միջոցը տվեցին պետք էր նրանց մոտ սոսկ մատնանշել այդ արարքը, որ սեռական բարձր պաշտոններ զբաղեցնող հարգարժան այրերը ստիպված լինեին փսխել ստրուկի շորեր հուզած՝ վարձու սայլով (թշնամիների ահից նրանք այդ բանին էին դիմել, որպեսզի գաղտնի Շողոպրեին Հոոմից):

XXXII Կեսարն ուներ ոչ ավելի քան երեք հարյուր ձիավոր ու հինգ հազար հետևակացին: Նրա մնացած գինվորները Ալպերից այն կողմ էին, և նա արդեն իր լեզատներին ուղարկել էր նրանց ետևից: Բայց քանի որ տեսնում էր, թե իր հզացած ձեռնարկն սկսելու և առաջին գրոհի համար ավելի շատ անհրաժեշտ են սխրանքի հրաշքներ ու շմեցուցիչ արագությամբ հարված քան թե բազմամարդ զորք (քանզի նրան թվում էր, որ ավելի հեշտ է թշնամուն վախեցնել անսպասելի հարձակումով, քան հաղթել լավ գինված զորքով), ուտի իր հրամանատարներին ու ցենտուրիոններին հրամայեց որ դաշույններով գինված, առանց որևէ այլ գեների, հնարավորին շտի խուսափելով ազմուկից ու արյունահեղութունից գրավեն Արմինիոնը նշանակալից մի քաղաք Գալլիայում: Ջորջի հրամատարութունը նա թողել էր Հորտենսիոսին, ինքն էլ ամբողջ օրն անցկացրեց բոլորի աչքի առաջ և նույնիսկ ներկա եղավ գլադիատորների վարժութուններին: Սրեկոլան կողմ, լուգանք ընդունելով, նա ուղղվեց դեպի ճաշասրահ և այստեղ որոշ ժամանակ մնաց հյուրերի հետ: Երբ արդեն մթնել էր վեր կացավ և հյուրերին քաղաքավարի առաջարկեց սպասել այստեղ, մինչև որ ինքը վերադառնա Իսկ մի քանի վստահելի մարդկանց մինչ այդ ասել էր, որ հետևելն իրեն բայց բոլորը միանգամից դուրս չեկան այլ մեկ մեկ: Նա ինքը նստեց վարձու մի սայլ և մեկնեց սկզբում ուրիշ ճանապարհով, իսկ ապա շրջվեց դեպի Արմինիոն: Երբ մոտեցել էր Ռուբիկոն անունով գետակին որը բաժանում է Ալսրալպյան Գալլիան բուն Իտալիայից նա վերահաս քուպելի առթիվ խորը մտորումների մեջ ընկավ, և երկմտում էր իր հանդրգնության մեծության հանդեպ: Կանդնեցնելով սայլը՝ նա նորից երկար ժամանակ լսին ծանրութեթև արևց իր մտադրութունը բոլոր կողմերից, մերթ մեկ, մերթ մի այլ որոշում ընդունելով: Ապա իր երկմտանքը հայտնեց ներկա գտնվող բարեկամներին, որոնց մեջ էր նաև

Աշխիոս Պոլիոնը Նա հասկանում էր թե ինչպիսի աղետների սպիտակ կլինի այս գետն անցնելը բոլոր մարդկանց համար և այդ քայլն ինչպես կգնահատի գալիք սերունդը: Վերջապես ասես թե դեն շարտելով խորհրդածութունները և խիզախորեն նետվելով գալիքին ընդառաջ՝ նա արտասանեց այս խոսքը, որը սովորական է այն մարդկանց համար ովքեր խիզախ մի բան էն ձեռնարկում որի վախճանը կասկածելի է «Վիճակը նետված է», — և շարժվեց դեպի անցումը: Ճանապարհի մնացած մասը առանց դադար առնելու սլանալով՝ նա ուն լույսը շքացված ներխուժեց Արմինիոն, որը և գրավ՛ դ: Ասում էն այդ անցման նախորդ օրվա գիշերը Կեսարը մի շար երազ է տեսել նա տեսել էր, իբր ինքը մի սարսափելի արունապղծություն է կատարում՝ կենակցելով հարադաս մոր հետ:

XXVIII Արմինիոնի առումից չէր սեսս թե պատերազմի առջև լայնորեն բացվել էին դարպասները բոլոր երկրներում ու բոլոր ծովերում, և պրովլենդիայի սահմանի հետ միասին խախտվել էին ու ջրնշվել հռոմեական բոլոր օբենքները: Թվում էր, թե ոչ միայն տղամարդիկ ու կանայք էն սարսափա ար թափառում իտալիայով մեկ, ինչպես դա լինում էր և անցյալում ալե քաղաքներն իրենք, տեղներից վեր կացած, միմյանց թշնամի բարձա՞ փախչում էին: Հռոմում իսկ որը լեփլեցուն էր շրջակա գյուղերից էկած-հավաքված փախտապանների հեղեղով, իշխանությունները չէին կարողանում կարգ պահպանել ոչ համոզելով ոչ հրամայելով: Եվ քիչ էր մնում, որ քաղաքն ինքն իրեն կործաներ այդ մեծ խառնաշփոթության և փոթորկի մեջ: Ամենուրեք տիրում էին հակամարտ կրքեր ու կատաղի շուզումներ: Քանզի նույնիսկ այն կողմը, որը ինչ որ մի ժամանակ հաղթանակում էր, հանդարտ չէր մնում, ալ, նորից վիթխարի քաղաքում բախվելով ահաբեկված ու տապալված հակառակորդին՝ հանդգնորեն նրան էլ ավելի սարսափելի ապագայով էր սպանում, և պայքարը նորոգվում էր: Պոմպեոսին որն իրիշներից պակաս չէր զլուխը կորցրել, այժմ շրջապատում էին բոլոր կողմերից: Ոմանք նրա վրա էին դնում պատասխանատվությունն այն բանի, որ նա աջակցել է Կեսարի ուժեղացմանը ի վնաս և իրեն, և պետությանը մյուսները մեղադրում էին նրան որ կենտուղոսին թույլ է տվել վիրավորելու Կեսարին, երբ նա արդեն գիշումներ էր անում և առաջարկում հաշտության արդարացի պայմաններ: Փավոնիոսն էլ նրան առաջարկում էր ոտքը գետնին խփել որովհետև Պոմպեոսը մի անգամ պարծենալով ասել էր սենատորներին, թե կարիք չկա, որ նրանք իրարանցման մեջ ընկնեն և պատերազմի նախապատրաստություններ հոգան հենց որ Կե-

սարը գա, ապա բավական է, որ ինքը ոտքը գետնին խփի և խսկուչն ամբողջ Իտալիան գորքերով կլցվի: Ասենք, հիմա էլ դեռ Պոմպեոսը զինված մարտիկների թվով գերադանցում էր Կեսարին: Սակայն ոչ ոք նրան թույլ չէր տալիս գործելու իր հաշվարկներին համապատասխան: Առաջի նա հավատաց այն կեղծ լուրերին, թե պատերազմն արդեն դար պասների մոտ է, թե այն ընդգրկել է ողջ Լրկիրը և տեղի տալով ընդհանուր տրամադրությունը՝ հրապարակորեն հայտարարեց, թե քաղաքում ապստամբություն է և ասիշխանություն, իսկ ապա լքեց հեռացավ քաղաքից՝ հրամայելով, որ իրեն հետևեն սենատորները և բոլոր նրանք ովքեր հայրենիքն ու ազատությունը գերադասում են բռնապետ թյունից:

XXXIV Այսպիսով, կոնսուլները փախան՝ չկատարելով նույնիսկ ճամփա ընկնելուց առաջ առվող սովորական զոհաբերությունը Փախավ և սենատորների մեծ մասը, այնպիսի հապճեպությամբ որ նրանք իրենց կայք կարողությունից հետևե՛րը վերցրին առաջին իսկ ձեռքն ընկած բանը, ասես թե գրե՛ծ ունե՛լն ուրիշի ունեցվածքի հետ: Սղան և այնպիսիները, որոնք նախկինում ջերմորեն պաշտպանում էին Կեսարին իսկ հիմա էլ, սարսուփից կորցնելով դատելու կարողությունը առանց տրե՛կ անհրաժեշտության թույլ տվին որ այդ համընդհանուր փախվախի ալիքը իրենց էլ վերցնե՛ր տաներ: Բայց ամենատխուր տեսարանը հենց քաղաքի տեսքն էր, որ մեծ փոթորկի նախօրյակին նման էր հուսալքված նավավարներով նավի, որը սլանում է ալիքների վրայով և նետված է կույր բախտի քմահաճույթին: Սվ այնուամենայնիվ, որքան էլ մեծ ցավ պատճառեր աւո՛ր փախեփախը, հոռմեացիները Պոմպեոսի հանգեպ ունեցած սիրուց աքսորավայրը համարում էին իրենց հայրենիքը, և լքեցին Հռոմը ասես թե այն դարձել էր Կեսարի ճամբարը: Նույնիսկ Լարիենոսը Կեսարի ամենամոտիկ բարեկամներից մեկը, որը նրա լեզատն էր եղել և նրա ամենից լռանդազին օգնականը գալլական պատերազմներում, այժմ փախչում էր նրանից և անցել էր Պոմպեոսի կողմը: Կեսարն էլ նրա հետևից ուղարկեց նրա գրամներն ու եղած չեղածը:

Կեսարն ամենից առաջ շարժվեց Դոմիցիոսի դեմ, որը երեսուն կոհորտայով գրավել էր Կորփինիոնը, և ճամբար դրեց այդ քաղաքի մոտ: Դոմիցիոսը, հաջողությունից հույսը կտրած իր բժիշկ սարուկից թույն վերցրեց ու խմեց՝ ցանկանալով վերջ տալ իր կյանքին: Բայց շուտով լսելով, որ Կեսարը զարմանալիորեն ողորմած է գերիների հանգեպ նա սկսեց ողբալ ինքն իրեն և դատապարտել իր շափազանց հապճեպ որոշումը: Սակայն բժիշկը նրան հանգստացրեց հավատացնելով, որ թույնի փոխարեն քնաբեր դեղ է ավել Դոմիցիոսը, ոգեպնդվելով, շտապեց Կե-

սարի մոտ, ներումն ստացավ նրանից և նորից փախավ Պոմպեոսի մոտ։ Այս նորութիւնները հասնելով մինչև Հռոմ՝ հանգստացրին բնակիչներին և փախածներից ոմանք հետ վերադարձան։

XXXV Կեսարն իր զորքի կազմի մեջ մտցրեց Դոմիցիոսի ջոկատը, ինչպես և Պոմպեոսի համար հավաքված բոլոր զինվորներին, որոնց նա բռնել էր իտալական քաղաքներում և այդ ուժերով, արդեն բազմամարդ և ահեղ, շարժվեց ուղիղ Պոմպեոսի դեմ։ Բայց սա շապատեց մինչև նրա գալը, փախավ Բրունդիզիոն և սկզբում կոնսուլներին զորքով ուղարկելով Դիրրաքիոն, շուտով երբ Կեսարն արդեն բոլորովին մոտիկ էր, ինքն էլ նավ նստեց, անցավ նույն տեղը։ Սա մանրամասն կպատմվի նրա կենսագրութիւն մեջ Կեսարն ուղում էր իսկույննեթ շտապել նրա հետևից, բայց նավ շուներ, ուստի և վերադարձավ Հռոմ՝ վաթսուն օրվա ընթացքում առանց արշակահաճութեան գառտալով տերը համայն Իտալիայի։ Նա Հռոմը գտավ առավել հանգարտված վիճակում, քան սպասում էր, և քանի որ շատ սենատորներ տեղում էին մնացել, նա դիմեց նրանց աշտարար ճառով, առաջարկելով ղեկավարութիւն ուղարկել Պոմպեոսի մոտ, որպէսզի համաձայնութիւն ձեռք բերեն խելամիտ պայմաններով։ Սակայն նրանցից ոչ ոք չընդունեց այդ առաջարկը՝ կամ Պոմպեոսի հանդեպ ունեցած վախից որին նրանք լքել էին վտանգի գահին կամ շփոթահելով Կեսարին և նրա շատը համարելով ոչ անկեղծ

Ժողովրդական տրիրուն Սետելլուսը ցանկանում էր արգելել Կեսարին դրամ վարձնել պետական գանձարանից վկայակոչելով օրենքները։ Կեսարը դրան պատասխանեց «Ձեռքն ու օրէնքը միմյանց հետ չեն հարմարվում։ Եթէ դու դժգոհ ես իմ գործողութիւններից ավելի լավ է կորի գնա քանզի պատերազմը ոչ մի առարկութիւն չի հանդուրժում։ Իսկ երբ հաշտութիւն կնքելուց հետո ես զենքս մի կողմ դնեմ դու կարող ես նորից հայտնվել ու հռետորութիւն անել ժողովրդի առաջ։ Արդևն այն,— ավելացրեց նա,— որ ես սա ասում ես, դրանով դիջում եմ իմ իրավունքները չէ՞ որ և՛ դու, և՛ իմ բոլոր հակառակորդները, որոնց ես այստեղ բռնել եմ ամբողջովին գտնվում եք իմ իշխանութիւն տակ»։ Մետելլոսին այս խոսքերն ասելով՝ նա ուղղվեց դեպի գանձատան դուռը և, քանի որ բանալիները չէր գտել, մարդ ուղարկեց վարպետների հետևից ու հրամայեց ջարդել դուռը։ Մետելլոսը, քաջալերված ներկաներից մի քանիսի գովեստներից, նորից սկսեց ընդդիմանալ։ Այնժամ Կեսարը վճռականորեն սպառնաց Մետելլոսին թե կսպանի ևթև շղաղարի վրդովմունք պատճառելու «Իմացի՛ր տղա — ավելացրեց նա — որ ինձ

համար շատ ավելի դժվար է ասելը քան անելը : Այս խո քերը Մետել-
յասին ստիպեցին վախից թողնել հեռանալ և պատերազմի համար բոլոր
անհրաժեշտ բաները տրամադրվեցին Կեսարին արագ և առանց որևէ
| ոչընդոտ |

XXXVI Կեսարը ճանապարհ ընկավ դեպի Իսպանիա որոշելով ամե
նից առաջ այդտեղից վտարել Ափրանիոսին ու Վարրոնին՝ Պոմպեոսի
լեզատներին և իրեն ենթարկելով այնտեղի լեգեոններն ու պրովինցիա-
ները, որպեսզի թիկունքում հակառակորդ շունենար ասպա դուրս գալ հենց
իր՝ Պոմպեոսի դեմ : Իսպանիայում Կեսարը հաճախ էր շրջապատման
մեջ ընկնում, այնպես որ նրա կյանքը վտանգի մեջ էր, նրա զինվորները
սովի էին մատնվում, և սնուամենայնիվ նա անընդհատ հետապնդում
էր հակառակորդներին՝ ճակատամարտի էր կանչում, փոսերով էր շրջ-
ջապատում մինչև որ վերջապես տիրեց և ճամբարներին՝ և՛ բանակ
էներին : Առաջնորդները փախան Պոմպեոսի մոտ

XXXVII Կեսարի Հոռոմ վերադառնալուց հետո նրա աներ Պիզոնն
սկսեց նրան շամոզել, սր Պոմպեոսի մոտ տատվիրակներ ուղարկի խա-
ղաղության բանակցությունների համար, բայց Սերվիլիոս Իսավրացին
| հաճույս Կեսարի առարկեց դրան : Սկսած Կեսարին նշանակեց դիկ
ս ստոր, որից հետո ևս հետ վերադարձրեց սրտաքսվածներին և վերա-
կանգնեց քաղաքացիական իրավունքները այն անձանց գավակների,
ովքեր Սուլլայի ժամանակ օրենքից դուրս էին հայտարարված, ինչպես և
զեղջման տոկոսի որոշ իջեցման ճանապարհով թեթևացրեց պարտապան
ների դրությունը : Հրապարակելով ևս մի քանի նման կարգադրություն-
ներ՝ նա տասնմեկ օր հետո հրաժարվեց դիկտատորի միանձնյա իշխա-
նությունից, իրեն կոնսուլ հայտարարելով Սերվիլիոս Իսավրացու հետ
և դուրս եկավ սրջավանքի : Հունվարի սկզբին սրբ մատավորասլես
հստապատասխանում է ավենական պոսեյդեոն ամսվան, ձմեռային
արևադարձի մոտ նա նավերով ճանապարհ ընկավ վեց հարյուր հոգա-
նոց ընտիր հեծելազորով ու հինգ լեգեոնով՝ մնացած զորքը թողնելով
հետևում որպեսզի ժամանակ չկորցնելու : Հոնիական ծովը կտրել անցնե-
լուց հետո, նա գրավեց Ապոլլոնիան և Օրիկոնը, իսկ նավատորմը նորից
ուղարկեց Իրոնդիպոն՝ զորքի հետ մնացած մասին բերելու : Զինվորները
դեռ ճանապարհին էին : Նրանց ջահելության տարիներն անցել էին և
անվերջ պատերազմներից հոգնած, բարձրաձայն տրանջում էին Կե-
սարի դեմ ասելով «Իսկ մեզ ո՞ւր, ո՞ր երկիրն է տանելու այս մարդը
մեզ հետ վարվելով այնպես ասես թե մենք հոգնություն ենթակա կեն
գանի մարդիկ չենք : Բայց չէ՞ որ սուրն էլ է մաշվում հարվածներից

և գրահին, և վահանին պետք է հանգստութիւնն սալ այսքան երկարա-
տե ծառայութիւննից հետո: Մի՞թե նույնիսկ մեր վերքերը Կեսարին չեն
հասկացնում, որ ինքը հրամանատարութիւնն է անում մահկանացու
մարդկանց վրա և որ մենք գրկանք ու տառապանք ենք գգում, ինչպէս
մյուս բոլոր մալ գիկ: Հիմա ծովում փոթորիկների ու հողմերի ժամանակն
է և նույնիսկ աստծու հրամանով անհնար է սաստել տարերքի ուժը, իսկ
նա ուրիշ հաշվի չի առնում ասես ոչ թե թշնամիներին է հետապնդում,
ալ ինքն է փրկվում նրանցից»: Այսպիսի խոսքեր ասելով՝ նրանք դան-
դազ շարժվում էին գեպի Երունդիգիոն: Բայց երբ, հասնելով այնտեղ,
նրանք իմացան որ Կեսարն արդեն նավել գնացել է, նրանց տրամա-
գրութիւնն արագ փոխվեց: Նրանք հայհոյում էին իրենց իրենց անվա-
նելով դավաճաններ գորավարի հանդեպ հայհոյում էին նաև պետերին,
որ ճահապարհին չեն շտապեցրել իրենց: Տեղավորվելով բարձունքի վրա,
զինվորները նույն ժամին էպիրոսի կողմը, սպասելով նավերի,
որոնցով իրենք պիտի անցնեն գնալին Կեսարի մոտ:

XXXVIII Մինչդեռ Կեսարը Սպուլոնիայում շունենալով պատերազ
մելու համար բավականաչափ ուժեր և տեսնելով, որ զորքերն Իտալիա-
ից հապաղում են նավել գալ բնկել էր դժվարին դրութեան մեջ: Ուստի
նա մճոռեց շախաղանց հանդուսն մի բան ձեռնարկել՝ տասներկու թիա-
նոց նավով բոլորից թաքուն վերադասնալ Բրունդիգիոն, թեև թշնամա-
կան բազում նավեր ակոսում էին ծովը: Նա գիշերով, սարուկի հագուս-
տով, բարձրացավ ետև և՝ լուվում նստած որպէս ամենից աննշան մի
մարդ, սակից մնաց: Առջա գետի հոսանքով նավը գնաց գեպի ծովը,
բայց առավոտյան բամին, որը սովորաբար հանդարտեցնում էր ալեկո-
ծումը գետաբերանում ալիքները թշելով դեպի ծովը, տեղի տվեց գի-
շերը փշոց ծովային ուժգին քամու ճնշման տակ Դետը կատաղիորեն
պաշարում էլ ծովային մակընթացութեան դեմ: Դիմադրելով ալեբա-
խութեանը, գետն սուշում էր ու աղմկում՝ անսավոր ջրապատույտներ կալ
մելով: Նավավարը, անկարող սիրապետելու տալերքին, նավաստիներին
հրամայեց նավը հետ դարձնել: Այդ լսելով, Կեսարը առաջ էկավ, և բրո-
նելով ապշահար նավավարի ձեռքը՝ ասաց «Սոա ջ, սիրելի՛ս, ավելի՛
համարձակ եղիր, ոչնչի՛ց մի վախ՛ցիր դու Կեսարի՛ն ես տանում և
նրա երջանկութիւնը»: Նավաստիները մոռացան փոթորիկը և, ասես թե
ձուլված-կպած լինելով թիակներին՝ մեծագույն փութաշանութեամբ պայ-
քարում էին հոսանքի դեմ: Սակայն անհնար եղավ ավելի հեռուն գնալ
քանի որ նավամբարը շատ ջուր էր լցվել և նավը գետաբերանում աճեղ
վտանգի էր ենթարկվում: Կեսարը թեև ռժկամութեամբ սակա ն համա

ձայնեց՝ Տէտ դառնալու Վերագառնալիս Կեարին զինվորները բազմու
թշամբ ընդառաջ ելան՝ կշտամբելով այն բանի համար, որ նա հուշ
չունի թե մենակ իրենց հետ հազթեկ կկարողանա ալ վշտանում է հետ
մնացածները պատճառով և իրեն վտանգի ենթարկում՝ ասես թե շվատա
հելով այն լեգեոններին, որոնք ափ են իջել իր հետ միասին:

XXXIX Վերշապու Բրունդիգիոնից զորքերի հետ ժամանեց Անտո
նիոսը Կեսարը, սիրտ առնելով, սկսեց Պոմպեոսին ճակատամարտի կոչ
անել: Պոմպեոսը ճամբալը դրել էր մի հարմար տեղում՝ հնարավորու
թյուն ունենալով սռա ոտրեն մատակարարել իր զորքին ծովից ու ցա
մաքից, այնինչ Կեսարի զինվորները սկզբից կէթ արդեն կարիք էին
զգում պարենա էթերքի, իսկ ապա նույնիսկ ամենաանհրաժեշտ բանելի
բացակայութիւն պատճառով սկսեցին ինչ որ արմտիք ուտել՝ դրանք
մանրելով ու խառնելով կաթին: Երբեմն նրանք այդ խառնուրդից հացի
բլիթ էին թիում և, հարձակվելով հակառակորդի առաջընթաց պահակ
ների վրա շարտում էին այդ բլիթները, գոչելով, թե չեն դադարեցնի
Պոմպեոսի շրջապատումը մինչև որ հողը նորից այսպիսի արմտիք ծնի
Պոմպեոսն աշխատում էր իր զինվորներից թաքցնել և՛ այդ բլիթները
և՛ այդ իոսքերը, քանզի նրանք սկսել էին ընկճվել՝ սարսափելով թըշ-
նամինների անզգայությունից և նրանց համարելով ինչ-որ վայրենի գա-
ղաններ:

Պոմպեոսի ամրությունների շուրջը մշտապես հստուկենտ ընդհա
րումներ էին տեղի ունենում: Այդ բոլոր բախումների ժամանակ հազթա-
նակը Կեսարի կողմն էր լինում, բացի մի դեպքից, երբ անհաջողութուն
կրելով՝ Կեսարը քիչ մնաց զրկվեք իր ճամբարից: Պոմպեոսը հարձակում
գործեց, որին դիմանալ չկարողացավ ոչ ոք փոսերը դիակներով լցվե-
ցին, Կեսարի զինվորները ընկնում էին իրենց հողաթմբի ու ցցապատ
նեշի մոտ՝ հապշտապ փախչելիս թշնամուց խոցվելով: Կեսարն ընդառաջ
եղավ իր զինվորներին՝ ապարդյուն կերպով փորձելով հետ դարձնել փախ-
լողներին: Նա ձեռքը մեկնում էր դրոշներին բայց դրոշակակիրները
դրանք ցած էին նետում, ա նպես որ թշնամիները գրավեցին երեսուն
երկու դրոշ: Այդ ընթացքում քիչ էր մնում Կեսարն ինքն էլ սպանվեք
Բոնելով իր կողքից փախչող պարթևահասակ և ուժեղ մի զինվորի՝ նա
սրան հրամայեց կանգ առնել և շուռ գալ դեպի թշնամին: Սա սարսա
փելի վտանգի հանդիման շփոթահար բարձրացրեց սուրը որ հարվա
ծեք Կեսարին, բայց Կեսարի զինակիրը ժամանակին վրա հասավ ու
թրատեց նրա ձեռքը: Սակայն Պոմպեոսը կամ ինչ որ անվճռականու-

թշունից, կամ էլ պատահականորեն, մինչև վերջը շօտագործեց իր հա-
 ջողությունը, այլ՝ նահանջեց, փախստականներին քշելով իրենց ճամ-
 բարը: Կեսարը որև արդեն կորցրած է եղել ամեն մի հույս՝ դրանից
 հետո ասել է իր բարեկամներին «Այսօր հաղթանակը հակառակորդնե-
 րինը կլիներ, եթե նրանք իրենց դեմ թշնամիներ ունենային»: Ինքն էլ,
 գալով իր վրանը և պառկելով գիշերն անցկացրեց տանջալի տազնապի
 և ծանր մտատանջությունների մեջ աչն հապակցությամբ, թե որքան
 անմիտ ձևով է գորքը ղեկավարում: Եւ իրեն սասում էր թի իր առջև
 փռված են ընդարձակ հարթություններ և մակեդոնական ու թեսալա-
 կան հարուստ քաղաքներ, իսկ ինքը փոխանակ սաղմական գործողու-
 թյունները փոխադրի աչնտեղ, լամբար է դրել ծովի մոտ որտեղ գլ-
 լակշոությունը հակառակորդի կողմն է, աչնպես որ նա ինքն է պաշար-
 լածի դրկանքներ կրում էւմ թե շրջապատում թշնամուն: Սչսպիսի
 տանջալի հոգի կան վիճակում պարլնամթերքի պակասությունից և հան-
 բամանքների անբարենպաստ գասավորությունից ընկնված՝ Կեսարը որո-
 շում ընդունեց շարժվել դեպի Մակեդոնիա՝ Սկիպիոնի դեմ, հուսալով
 եւ մ Պոմպեոսին հրապուրել տանել աչնտեղ, որտեղ նա ճակատամարտ
 կտա իր հետ միանման պայմաններում՝ աջակցություն շ տանալով ծո-
 վից կամ կջախջախի Սկիպիոնին որը թողնված է իր կամքին:

XL Պոմպեոսի զորքի ու պետերի մեջ դա լ ու ն ցանկություն առա-
 ջացրեց նետվել հետապնդելու, բանի որ լվում էր թե Կեսարը պարտ-
 ված փախչում է Բայց Պոմպեոսն ինքը աչն աստիճանի դպուշ էր, որ
 շէր համարձակվի մանել մի ճակատամարտի մեջ որը կարող էր վճռել
 ամբողջ գործի ելքը Երկար յամանակվա համար ամեն ինչով ասլահով-
 ված լինելով նա գերադասում էր սպասել մինչև որ հակառակորդն
 սպառի իր ուժերը: Կեսարի զորքի լավագույն մասը մարտական փորձ-
 ուներ և անհաղթահարելի խիզախություն ճակատամարտերում: Սակայն
 իրա դինվորները ծեր տարիքի պատճառով հոգնում էին երկարատև ան-
 ցումներից, ճամբարային կյանքից, շիսարարական աշխատանքներից և
 գիշերային արթնություններից: Մարմնական թուլության պատճառով տա-
 ուպելով ծանր աշխատանքներից՝ նրանք կորցնում էին նաև ոգու կայ-
 տառությունը Իրան ավելացրած, ինչպես աչն ժամանակ ասում էին,
 վատ սնունդը Կեսարի բանակում առաջացրել էր ինչ-որ տարափոխիկ
 հիվանդություն: Բայց ամենակարևորը Կեսարը ո՛չ դրամ ուներ, ո՛չ
 պարենի պաշար, և թվում էր, թե կարճ ժամանակի ընթացքում նրա բա-
 նակն ինքնիրեն կկազմալուծվի

XLI Միսյն Կատունն Լի ոլլ ահանելով ռարտում լնկած թշնա մինիբին (դրանք մոտ հազար հոգի էին) հեռացավ՝ գեմքը ծածկելով Լեշան տիրութեան, և լաց եղավ գովեց Պոմպեոսին, որ նա խուսափում էլ ճակատամարտից և խնայում համարադարացիներին: Այնուամենայնիվ մնացածները Պոմպեոսին մեղադրում էին վախկոտութեան մեջ և ծաղրանքով նրան կոչում էին Աղամեմնոն ու արքայից արքա. շքանկան սլով հրաժարվել միանձնյա իշխանութունից և, իբր թե, հղարտանում է, որ աչքան շատ զորավարներ կան իր Լեթակայութեան սակ Լ իր վրանն են գալի: Կարգադրութեաններ ստանալու, Փավոնիոսը նմանակելով Կատունի անկեղծ խոսակերպը, տրանջում էր, թի Պոմպեոս իշխելատիրութեան պատճառով իրենք սյս տարի շին ճաշակում տուս կուլյան թուզ: Ափանիոսը որը վերջերս էր ժամանել Իսպանիայից այնքան անհաջող հրամանատարութեան անելուց և Կեսարին իր բանակը դրամով վաճառելու մեջ կասկածվելուց հետո, հարցնում էր՝ իսկ ինչո՞ւ լեն մարանչում մտճառահանի գեմ, որն իրենից գնել է պրովինցիաները: Այս ամենի ճնշման ու կ Պոմպեոսը իր կամքին հակառակ սկսեց հետ պնդել Կեսարին:

Իսկ Կեսարը ճանապարհի մեծ ալը կալեց անցավ ծանր պալ մաններում՝ ոչ մի տեղից պարեն ստանալով այլ՝ ամենուրեք տեսնելով ասկ արհամարհանք վերջերս ունեցած իր անհաջողութեան պատճառով: Սակայն թեսալական Գոմփոս քաղաքը զբաղելուց հետո նրան ոչ միայն հասողվեց կերս կրել իր բանակը այլև անսպասելիորեն դինվորների համար հիփանդութունից աղտավելու ճար գտնել Պարզվեց, որ քաղաքում շատ գինի կա, և դինվորներն ուղածի շափ խմում էին՝ տըր վելով անզուսպ կերուխումի: Հարբեցողութեանը ցավը դուր լանեց հիմանդներին նորից վերստարձնելով իրենց առողջութունը:

XLII Նրկու բանակներն էլ մտան Փարսալիա հարթավայրը և այն տեղ ճամբսը դրին: Պոմպեոսը նորից դիմեց իր նախկին ծրագրին մանավանդ որ և նախանշանակները և էրադները անբարենպաստ էին Բալց դրա մոխարեն Պոմպեոսին շրջապատողներն այն աստիճանի անձնապատան էին և հաղթանակի վրա վստահ, որ Գոմիցիոսը, Սպինթերոսը և Սկիպիոնը կատաղի կերպով վիճում էին միմյանց հետ թի իրենցից որն է ստանալու դերադույն քրմի պաշտոնը որը Կեսարին էր պատկանում: Նրանք մարդ ուղարկեցին Հոտմ նախապես այնպիսի տներ վարձելու, որոնք վայել լինեին կոնսուլներին ու պրետորներին՝ հուսալով, որ պատերազմից անմիջապես հետո կգբաղեցնեն այդ պաշտոնները Սոանձնապես անզուսպ կերպով մարտի էին ծարավի հեծյալները: Նրանք

շատ էին ՚պատանում իրենց մարտական արվեստով, զենքերի փայլով ձիերի դեղեցկութեամբ, ինչպես և բանակական գերազանցութեամբ Պոմպեոսի յոթ հազար հեծյալների դիմաց Կեսարն ուներ ընդամենը մեկ հազար: Հեռակալի քանակը նույնպես հավասար չէր Կեսարը գորաշարքում ուներ քսաներկու հազար՝ թշնամու քառասունհինգ հազարի դիմաց:

XLIII Կեսարը հավաքեց իր զորքերը և, նրանց հաղորդելով, որ երկու լեգեոն Կորնիֆիցիոսի հրամանատարութեան տակ գտնվում են ոչ հեռվում, իսկ ասանհինգ կոհորտա Կալենոսի սլիավորութեամբ տեղավորված են Մեգարիսի և Աթենքի մոտ, հարցրեց դանկանու՛մ են սպասել այդ օգնական ուժերի՞ն, թե՞ զերազատում են իրենք մենակ մարտի նետվել: Չինվո, ներք լարձրաձայն կանչերով նրան խնդրեցին շտապել, այլ մարտի տանել և ջանալ, որ իրենք սրբան կարելի է շուտ հանդիպեն հակառակորդին: Երբ Կեսարը կատարում էր բավութեան գոհաբերություն, Լուաջին կենդանուն փողոտելիս քուրմն ի վույն հայտարարեց, թե առաջիկա երկ օրերում պարթարր ոսոխի հետ կվճռվի ճակատամարտով: Կեսարի այն հարցին, թե նա գոհի վրա չի՞ նկատում արդյոք ճակատամարտի բարեհաջող ելքի որևէ նշան, քուրմը պատասխանեց «Դու ինքդ ինձնից ավելի լավ կարող ես պատասխանել այդ հարցին Աստվածները մեծ փոփոխություն են ավետում գոյութուն ունեցող իրադրութեան մեջ: Գրա համար էլ Իթլ գու Ինթադրում Ի որ ներկա իրադրությունը բեց համար բարենպաստ է, տպա անհաջողություն սպասիր, իսկ եթլ անբարենպաստ է, սպասիր հաջողություն»: Ճակատամարտի նախօրյակի կեսգիշերին, երբ Կեսարը շրջազայելիս է եղել պահակակետերը երկնքում տեսել են բոցավառ մի շահ, որը թվացել է, թե սլանալով Կեսարի ճամբարի վրայով ու բռնկվելով վառ լույսով՝ ընկել է Պոմպեոսի ճամբարը իսկ առավոտվա պահակախմբի ժամանակ Կեսարի ճամբարից իրարանցում էր նկատվել թշնամիների բանակում: Սյդ օրը, սակայն, Կեսարը չէր սպասում ճակատամարտի: Նա հրամայել էր դուրս գալ ճամբարից՝ մտադրություն ունենալով շարժվել Սկոտուսսայի ուղղությամբ:

XLIV Երբ արդեն փաթաթել էին ճամբարային վրանները, Կեսարի մոտ արշավեցին եկան հեծյալ հետախույզները տեղեկացնելով, թե հակառակորդը շարժվում է մարտակարգով: Կեսարը շատ ուրախացավ և աղոթելով աստվածներին, սկուց շարել զորքը բաժանելով երեք մասի: Կենտրոնում նա կանգնեցրեց Դոմիցիոս Կալվինոսին ձախ թևի հրամանատարն էր Սնտոնիոսը, ինչ ինքը կանգնեց աջ թևի գլուխը մտադիր լինելով կովել տասներորդ լեգեոնի շարքերում Տեսնելով, սակայն որ այդ լեգեոնի դիմաց լասավորված է թշնամու հեծելազորը, ան

հանգստանալով դրա թվական կազմից ու զենքերի փայլից, Կեսարը շարքի խորքում դասավորված վեց կոհորտային հրամայեց աննկատ լիորեն անցնել իր կողմը և նրանց կանգնեցրեց աջ թևի հետևում, բացատրելով, թե ինչպես պետք է գործեն, երբ հարձակման անցնի թըշ նամու հեծելազորը:

Պոմպեոսը դեկավարում էր իր բանակի աջ թևը ձախը Գոմիցիոսը իսկ կենտրոնում գտնվում էր Սկիպիոնը Պոմպեոսի աները Պոմպեոսի ամբողջ հեծելազորը կենտրոնացած էր ձախ թևում: Սա պետք է շրջանցեր Կեսարի ձախ թևը և թշնամուն վճռական պարտության մատներ հեց այն ճասում, ուտեղ հրամանատարություն էր անում նրանց զորավարը ենթադրում էին թե, ինչ խորություն էլ որ ունենա թշնամու հետևակի զորակարգը, շի կարող ճնշմանը լիմանալ այլ կտապալվի ու կջախջախվի բազմամարդ հեծելազորի մի ածամանակյա փրենյուց գրհից:

Նրվու կողմերն էլ պատրաստվում էին տալ հարձակման ազդանը շան: Պոմպեոսը ծանրազեններին հրամայեց տեղներից շարժվել և տեղերը պատրաստ սպասել, մինչև որ հակառակորդը հասած լինի մեկ սեզրնկեց տարածության: Կեսարի ասելով՝ Պոմպեոսը լխալ թույլ տվեց, շգնահատելով, թե որքանով է գրոհի սրընթացությունը մեծացնում առաջին հարվածի ուժը և ալիություն ներշնչում մարտնչուղներին: Կեսարն արդեն պատրաստ էր իր զորքն առաջ շարժելու, երբ նկատեց ցենտուրիոններից մեկին, որը նվիրված էր նրան և ռազմական գործում փորձառու մարդ էր: Ցենտուրիոնը քաջալերում էր իր զինվորներին և կոչ անում արիության օրինակ յույց տալ: Կեսարը զիմեց ցենտուրիոնին՝ տալով նրա անունը «Գալլոս Կրասինիոս, մենք հաջողության ի՞նչ հույս ունենք և ինչպիսի՞ն է տրամալրությունը»: Կրասինիոսը աջ ձեռքը մեկնելով, բարձրաձայն գոչեց ի պատասխան «Կեսար, մենք փայլուն աղթանակ կտանենք: Այսօր դու ինձ կգովես մեռած լինեմ թե կենդանի»: Այս ասելով՝ նա առաջինը նետվեց ոսոխի վրա հետևից տանելով իր հարյուր քսան զինվորներին թրատելով առաջին հանդիպած թշնամիներին և զոռով մխրճվելով առաջ նա շատերին գետին տապալեց, մինչև որ վերջապես, ինքն էլ սրի զարկով խոցվեց բերանից, այն պես որ շեղբը մտավ թափանց ու դուրս եկավ ծոծրակից:

XLV. Կենտրոնում այսպես մարտնչում էր հետևակը, իսկ այդ միջոցին Պոմպեոսի հեծելազորը աջ թևից գոռողաբար հարձակման էր անցնում, ցրիվ գալով ու ձգվելով, որպեսզի ընդգրկեր հակառակորդի սջ թևը: Սակայն մինչ նա կհասցնեք գրոհել առաջ վաղեցին Կեսարի

կոհորտաները որոնք, հակառակ սովորութեանը, նիզակներ չէին նե տում և չէին խոցում թշնամուն այլ, Կեսարի հրամանի համաձայն նշան էին բռնում թշնամիների աչքերին ու վիրավորում գեմքերից Կեսարը հաշվի էր առնում, որ Պոմպեոսի երիտասարդ զինվորները որոնք պարծենում էին իրենց գեղեցկությամբ, որոնք սովոր չէին պատերազմ չերի ու վերքերի, ամենից շատ կզգուշանան այդպիսի հարվածներից ու լին դիմանա՝ վախենալով ինչպես բուն վտանգից, այնպես էլ այլան գակվելու սպառնալիքից։ Հենց այդպես էլ ելալ Պոմպեոսականները իրենց գեմ ուղղված վերքերի տեսքից կորցնելով արիությունը՝ նահան չեցին վեր պարզած նիզակների առջև։ Գեմքները պահպանելու համար նրանք շուտ էին դալիս ու հարվածից խույս տալիս։ Վերջիվերջո նրանց յայտնալուծելու իրենց շարքերը և դիմեցին խայտառակ փախուստի՝ տա պալլելով ամբողջ դործը, բանդի հաղթողներն անհուպազ սկսեցին շքր շապատել և, թիկունքից հարձակվելով կոտորել թշնամու հետևակը

Երբ Պոմպեոսը հակադիր թևից տեսավ որ իր հեծելազորը ցրվել է կած փախչում է, իսպառ գլուխը կորցրեց, մոռացավ, որ ինքը Պոմպեոս Սեծն է։ Նա ավելի շուտ նման էր մի մարդու, որին աստվածությունը զրկել էր բանականությունից։ Ոչ մի բան չասելով՝ նա քաշվեց իր վրանք և այնտեղ յայտնվեց սեյտսում և թև ինչ է տեղի ունենալու այնուհետև, սեղից շարժվելով այնքան ժամանակ մինչև որ սկսվեց համընդհանուր փախուստիսը և թշնամիները ների ուժելով ճամբար՝ մարտի մասն պահակների հետ։ Հենց այդ ժամանակ նա ասեո ուշքի եկավ և ասաց, ինչպես պատմում են, միայն մի դարձվածք «Մի՞թե արդեն բանը հաւալ ճամբարին։ Հանելով զորալարի մարտական արդուդարդը և այն փոխարինելով փախստականին վայել զգեստով՝ նա աննկատ հեռացավ։ Նրա հետագա ճակատագիրը, թե ինչպես վատահելով եզիպ տացիներին՝ սպանվեց մենք կպատմենք նրա կենսագրության մեջ։

ԸԼՎԻ Իսկ Կեսարը դալով Պոմպեոսի ճամբարը և տեսնելով թշնամիների դիակներն ու շարունակվող կոտորածը՝ հառաչելով բացականչեց «Ահա թե ի՞նչ էին ուղում նրանք, ահա թե ի՞նչ ժայրահողության հասցրին իսձ, Եթե Գայոս Կեսարը մեծագուշն ուղմական գործեր կատարողը, այն ժամանակ հրաժարվե՞ր հրամանատարությունից իմ գեմ, հավանաբար մահվան դատաւիճիւ կարձակվի»։ Ազինիոս Պոլիոնր պատմում է որ Կեսարն այս խոսքերն ասել է լատիներեն, իսկ ինքը դրանք գրի է տռել հունարեն։ Սպանվածների մեծ մասը, ինչպես հաղորդում է նա սարուկներ են եղել, որոնք ընկել էլն ճամբարը գլ սվե-

լու ժամանակ իսկ ղինվորներից Վոհվել էին վեց հազարից ոչ ավելին: Էրիներին մեծ մասին Կեսարն ընդգրկեց իր լիզեոնների մեջ: Բազմաթիվ անվանի հոռմեացիների նա ներում շնորհեց սրանց թվում էր և Բրուսոսը հետագայում նրան սպանողը: Կեսարն ասում են, անհանգստացած է եղել՝ շտեմելով Բրուտոսին, և շատ է ուրախացել, երբ նա գրտելվել է ողջ մնացածների մեջ և եկել է իր մոտ:

XLVII Բազմաթիվ այլ հրաշք նախանշանակների մեջ որոնք կան խաղաղակեղ են Կեսարի հաղթանակը, որպես ամենանշանավորը, ասում են, Տրալլիք քաղաքում պատահածն է եղել Հաղթանակի տաճարում կանգնած էր Կեսարի արձանը: Արձանի շուրջը եղած հողը բնականից անբերրի էր. բացի այդ սալահատակված էր, և այդ հողի վրա էլ, ինչպես հաղորդում են հենց պատվանդանի մոտից աճել էր մի արմավենի:

Պատալիայում ոմն Գայոս Կուսելիոս, դուշակման արվեստի մեջ նշանավոր մի մարդ, գրող Լիբիոսի այրենակիցն ու ծանոթը, հենց այդ օրը նստել ու հետևել է թոշունների թոհրքին: Լիբիոսի պատմելով, նա բոլորից շուտ է իմացել ճակատամարտի ժամանակը և ներկա գտնվող էերին հայտարարել է թե կոհվն արդեն սկսվել է և հակառակորդները չարտի են բռնվել: Այնուհետև նա շարունակել է դիտարկումը և տեսնելով մի նոր նախանշանակ վեր է ցատկել՝ բացականչելով «Ռու հաղթեցի ր, Կեսար»: Ներկաներն ապշած են մնացել, իսկ նա գլխից պսակը հանելով, երգամամբ հավատացրել է որ դա նորից իր գլխին չի դնի, մինչև որ իր գուշակման արվեստը շհաստատվի գործով: Լիբիոսը պնդում է, որ այդ բոլորն հենց այդպիս էլ եղել է:

XLVIII Կեսարը ի նշանավորումն իր հաղթանակի աղատութուն տալով թևալացիներին սկսեց Պոմպեոսի հետապնդումը: Ասիա մըտնելիս նա ազատ հայտարարեց Կնիդոսի քաղաքացիներին ի նշան թեոպոմպոսի նկատմամբ ունեցած բարեհաճ վերաբերմունքի, իսկ Ասիայի բոլոր բնակիչների արկը պակասեցրեց ՚եկ երրորդով: Կեսարը Ալեքսանդրիա հասավ էրբ Պոմպեոսն արդեն մեռած էր: Այստեղ թեոդոտոսը նյան մատուցեց Պոմպեոսի գլուխը բայց Կեսարը դեմքը շուտովեց և ձևքն առնելով նրա կնքամատանին՝ լաց եղավ Պոմպեոսի բոլոր բարեկամներին ու մոտիկներին որոնց Եգիպտոսում թափառելիս գերի էր վերցրել թագավորը, Կեսարն իր մոտ բերել տվեց և բարերարութուն արեց: Կեսարը գրեց Հսոմ՝ իր բարեկամներին, թե հաղթանակի մեջ իր համար ամենահաճելի բանը իր գեմ մարտնշած նսրանոթ քաղաքացիների աղատութուն պարգևելու հնարավորութունն է:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրյան պատերազմին ապա գրողներից մանք դա չեն համարում անհրաժեշտութուն և ասում են, թե այդ վտան- յավոր և Կեսարի համար անփառունակ արշավանքի միակ պատճառը լղել է նրա կիրքը Կլեոպա տրաչի հանդեպ: Ուրիշները պատերազմի հա մար մեղավոր են համարում թագավորի պալատականներին, առանձնա պես Կորավոր ներքինի Պոթինոսին, որը գրանից քիչ առաջ ուպանել էր Պոմպեոսին, արտաքսել Կլեոպատրաչին և զաղտնորեն շարիք էր նյու թում ընդդեմ Կեսարի: Հենց այդ պատճառով էլ որպեսզի իրեն ապահո վեր մահափորձի ենթարկվելուց, Կեսարը ինչպես ասում են, այն ժա մանակ սկսեց գիշերները լուսացնել կերսխումով: Բայց Պոթինոսը բա ցեիրաց էլ դրսևորում էր իր թշնամանքը շատ բուռնի և արարքներվ մեջ, որոնց նպատակն էր անարդել Կեսարին: Եւ պատվիրել էր, որ Կե սարի գլխախորներին կերակրեն ամենարարթու հացով ասելով թէ նրանք պիտի այլբանով ևլ գո լինեն, քանի որ ուրիշի հացն են ուտում: Ճաշին Եւ մատուցում էր կավե ու փայտե ամանեղեն՝ յատճառ բռնելով, թե յուր ոսկե և արծաթե իրերը Կեսարն իրը խլել է պարտքի դիմաց: Հիրա վի, այն ժամանակ թագավորող արքայի հայրը Կեսարին պարտք էր լղել տասնյոթուկես մրլիոն դրախմ, այդ պարտքի մի մասը Կեսարը գիջլ էր նրա զավակներին, իսկ տասը միլիոնն աճմ պահանջեց զորքի կլ յսկրման համար: Պոթինոսը նրան խորհուրդ էր տալիս հեռանալ Եգիպ տոսից և զբաղվել իր մեծամեծ գործերով՝ խոստանալով հետագայում դրամը վերադարձնել շնորհ պարտությամբ: Կեսարը գրան պատասխա նել էր թե ինքը ամենից քիչ է կարիք զգում եգպիտացի խորհրդ սկան ների, և Կլեոպատրաչին զաղտնի կանչեց աքսորավայրից:

XLIX. Կլեոպատրան հետը վերցնելով բարեկամներից Նիայն մե կին Ապոլլոդորոս Սթրիլսցուն նստեց փոքրիկ մի նավակ և մութն ընկ նելուն պես մոտեցավ կառանելց թագավորի պալատի մոտակայքում: Քանի որ այլ կերպ դժվար էր աննկատ մնալ, ապա նա մտավ անկող նու համար նախատեսված պարկի մեջ և մեկնվեց այնտեղ: Ապոլլոդո րոսը պարկը փռելով կապեց և բակի միջով տարավ Կեսարի կացարանը: Ասում են, թե Կլեոպատրաչի այս խորամանկութունն արդեն Կեսարին թվացել է համարձակ մի բան և գերել է նրան: Կլեոպատրաչի սիրալի րությամբ ու ղեղեցկությամբ վերջնականապես հրապուրված՝ Կեսարը նրան հաշտեցրեց թագավորի հետ, սրպեսզի նրանք համատեղ թագա վորեին: Հաշտության պատվին տրված ընդհանուր խնջույքի ժամանակ Կեսարի ստրուկը՝ վարսավիրը որ լախից (այդ բանում նա բուլորին քերազանցում էր) ոչինչ ականջից բաց չէր թողնում, ամեն ինչ ուն

կընդրուած և ամեն ինչից տեղեկանում էք, իմացա՞վ Կեսարի դեմ զորապետ Աքիլլասի և ներքինի Պոթինոսի կողմից նախապատրաստվող դավա դրութեան մասին: Իմանալով դավադրութեան մասին, Կեսարը հրամայեց պահակախմբով շրջապատել խնջույքի սրահը: Պոթինոսն սպանվեց, իսկ Աքիլլասին հաջողվեց փախչել զորքի մոտ և նա սկսեց Կեսարի դեմ վա բել երկարատև ու ծանր մի պատերազմ, որի ընթացքում Կեսարն ստիպ ված եղավ աննշան ուժերով պաշտպանվել վիթխարի քաղաքի բնակչու թյունից և եգիպտական մեծ բանակից: Ամենից սուաջ նա տաանց ջրի մնալու վտանգին ենթարկվեց քանի որ ստոխը հողով լցրել էր ջրանցք ներք: Այնուհետև թշնամիները փորձում էին նրան կտրել նավերից: Կէ ւարն ստիպված եղավ վտանգի առաջն առնել հրդեհ գցելով, որը տա յածվելով նավաշինարանների կողմից ոչնչացրեց վիթխարի գրադա բանը: Վերջապես, Փարոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, երբ Կեսարը հողաթմբից ցատկեց նավակի մեջ որպեսզի օգնութուն ցույց տար յուրայիններին, և նավակի վրա բոլոր կողմերից թափվեցին եգիպ տացիները, նա ծովը նետվեց ու դժվարութեամբ, հաղիվհաղ դուրս լու դաց: Ասում են, նա այդ ժամանակ նետերի տարափի տակ է ընկել և, սուզվելով ջրի մեջ այնուամենայնիւ՛ ձեռքից բաց լի թողել հուշատետ րերը: Մի ձեռքով նա դրանք բարձրացրել է ջրից վեր, իսկ մյուսով լող է տվել, նավակն էլ իսկույն սուզվել է: Վերջիվերջո, երբ թագավորն անցավ հակառակորդների կողմը, Կեսարը հարձակվեց նրա վրա և ճակատա մարտում հաղթանակ տարաւ: Թշնամիները մեծ կորուստներ կրեցին իսկ թագավորն անհետ կորավ: Այնուհետև թողնելով Կլեոպատրային, որը շուտով նրանից մի տղա ունեցավ (ալեքսանդրիացիք սրան անվանում էին Կեսարիոն) Կեսարը ճանապարհ ընկավ դեպի Ասորիք

Լ Այդտեղից ժամանելով Սսիա՝ Կեսարն իմացավ, որ Դոմիցիոսը ջախջախվել է Միհրդատի որդի Փառնակի կողմից և սակավաթիվ շքա խմբով փախել Պոնտոսից իսկ Փառնակը ազահորեն օգտվելով իր հա ջողութունից, գրավել է Բութանիան ու Կապադովկիան հարձակվել այսպես կոչված Փոքր Հասքի վրա և ապստամբութեան է հրահրում այդ տեղի բոլոր թագավորներին ու անտրարքոսներին: Կեսարն իսկույնեթ երեք լեգեոնով դուրս եկավ Փառնակի դեմ և մեծ ճակատամարտում Զելա քաղաքի մոտ գլխովին ոչնչացրեց Փառնակի զորքը և նրան էլ դուրս բշեց Պոնտոսից: Այդ լուրը հաղորդելով Հոոմ իր բարեկամներից մեկին՝ Մատիոսին, Կեսարն այդ ճակատամարտի հանկարծակիութունն արտահայտել է երեք բառով «Եկա, տեսա հաղթեցի»: Լատիներեն այս

լուսերը, որոնք միանձամբ վերջավորություն ունենալու կարողություն ունենալու անհատներն են թողնում:

Ա. Այնուհետև Կեսարը նախքան անցավ Եսալիա և Հոսի Դասավայն տարվա վերջին, Երբ նա երկրորդ անգամ գրկատառոր էր ընտրվել, թեև անցյալում այդ սրաշտոնը երբեք միամյա չէր եղել: Հաջորդ տարի նա կոնսուլ ընտրվեց: Կեսարին հանդիմանում էին ապստամբած գինձորակները հանդեպ ունեցած վերաբերմունքի համար որոնք սպանել էին երկու Եսալիան պրևտորի՝ Կոստոնրոսին և Գալբասին: Կեսարը Նրանց պատժել էր սոսի այն բանով, որ նրանց գիմելիս անվանել էր քաղաքացիներ այլ ոչ թե գինձորներ, իսկ ապա ամեն մեկին տվել էր հագարական գլխամ և մեծ հողամասեր հատկացրել Եսալիայում: Կեսարին մեղադրում էին նաև Գոլաբելլայի խելառություն, Մատիոսի ընշարացություն և Անտոնիոսի խրախճանքների համար: Վերջինս, ի լրումն Նացած այլ բաների, ինչ որ անմաքուր միջոցներով յուրացրել էր Պոմպիլիոսի տունը և հրամայել վերակառուցել, քանի որ այն իրեն թվացել էր ոչ բավականաչափ բնորոշակ, Հոսիացիներով մեջ գծագրություն էր աստիճանում նման արարքների նկատմամբ: Կեսարը սկսում էր այս ամենը, սակայն պետություն մեջ գործերի վիճակը նրան ստիպում էր դադարել այդպիսի օգնականների ծառայություններից:

Ա. Կատոնը և Սկիպիոնը Փարսալիայի ճակատամարտից հետո խախտան Աֆրիկա և այնտեղ Հորաս թագավորի աջակցությամբ նշանակալից ուժեր հավաքեցին: Կեսարը որոշեց կովի ելնել նրանց դեմ: Նա Նիկոաչին արևադարձի օրերին անցավ Միցիլիա և, ցանկանալով իր ցամառատարներին զրկել հապաղման ամեն մի հույսից ու քաշքշուկից, խուսչն հրամայեց վրաններ խփել ուղղակի ծովափին: Հենց որ փշեց համընթաց քամին, նու ծովով ճամփա ընկավ վերցնելով Երեք հազար մահակացիներ ու մի փոքրիկ հեծյալ ջոկատ: Սի հանելով այս գործերը նա աննկատ էա նախքան, վախենալով իր գլխավոր ուժերի համար: Նա դրանց հանդիպեց արդեն ծովում և բարեհաջող կերպով հասցրեց ճամբարը Բոմանալով, որ հակառակորդները հույսները դնում են ինչ-որ հին պատգամախոսություն վրա, որն ասում է, թե Սկիպիոնների առհմին միշտ վիճակված է ապրել Աֆրիկայում, Կեսարը — դժվար է ասել կատակով, որպեսզի Սկիպիոնին՝ իր թշնամիների զորավարին ծիծաղելի վիճակի մեջ դնեք, թե՛ լրջորեն՝ ցանկանալով կանխագուշակությունը մեկնու բանել իր օգտին, — յուրաքանչյուր ճակատամարտում որևէ Սկիպիոնը պատվավոր տեղ էր հատկացնում զորքի առջևում, ասես թե գլխավոր Դրամանաար լին էին (Կեսարի մարդկանց մեջ կար ոմն Սկիպիոն

Մալլուտինոն Սկիպիոն Աֆրիկացիսէրի ընտանիքից մյուս բոլոր առում ներով շնչին ու բոլորի կողմից արհամարհված մի մարդ): Իսկ թշնա մու հետ ընդհարվելու և ճակատամարտ տալու առիթներ հաճախ էին լինում Կեւարի բանակը սլարենամթերքի և ձիերի կէրի պակասութիւնն էր զգում, այնպէս որ զորականները ստիպւած էին ձիերին կէրակրել ծովային մամուռով՝ լվանալով ծովային աղը և իբրև համեմունք հետը խառնելով մի քիչ խոտ:

Նումիդիացիներից կազմված թշնամու հեծելազորը իշխում էր երկրում ամեն անգամ արագորէն հայտնվելով մեծ բազմութեամբ: Մի անգամ, երբ Կեսարի հեծյալ ջոկատը տեղափոխվեց հանգստանալու և մի լիբիացի պարում էր հիանալիորէն նվազակցելով սրինգով, իսկ գինվորներն ուրախանում էին՝ ձիերը ստրուկներին հանձնած, մեկ էլ անկարծ թշնամիները շրջապատեցին նրանց ու գրոհեցին Կեսարի զորականների մի մասը տեղում սպանվեց, մյուսներն ընկան հապշտապ դէպի ճամբար փախչելու պահին Եթէ Կեսարն ինքը և Ագինիոս Պուլիոնը ճամբարից օգնութեան շտապէին, պատերազմը, թերևս, ավարտվեր: Մի այլ ճակատամարտի ժամանակ ինչպէս պատմում են, ոստիք դարձյալ հաղթանակ էր տանելու սկսված ձեռնամարտում, բայց Կեսարը բռնեց ամբողջ թափ վ փախչող դիոշակակի ի վրից ու Լա շրջեց, ասելով. «Այ թէ որտեղ են թշնամիները»

LVIII Այս հաջողութիւնները Սկիպիոնին զրգեցին ուժերը շափել վճռական ճակատամարտում: Ափրանիոսին թողնելով ճամբարում և նրանից ոչ հեռու էլ Շոբասին, նա սկսեց գրադվել նոր ճամբարների դիրքի ամրացմամբ որը հիմնույ էր Տափսակոն քաղաքի մոտ՝ լճի ափին, նկատի ունենալով ալստեղ ապաստարան ստեղծել ու ճակատամարտում նեցուկ իր զորքի համար: Մինչ Սկիպիոնը շարշարվում էր սրա վրա Կեսարը անասելի արագութեամբ անցնելով անտառոտ, ան սպասելի հարձակման համար հալ յար տեղանքով, շրջաւ ստեց նրա զորքի մի մասին իսկ մյուս ին խփեց ճակատից: Թշնամուն վախուստի մատնելով՝ Կեսարն օգտվեց բարեպատեհ և ճակատադի իր հալար բարենպաստ ընթացքից. հենց տուաչին իսկ գրոհի ժամանակ նրան հաջողվեց գրավել Ափրանիոսի ճամբարը և Շոբասի փախուստից հետո բոլորովին ոչնչացնել նումիդիացիների ճամբարը: Մի քանի ժամվա մէջ Կեսարը տիրեց երեք ճամբարի, ընդ որում ընկան հիսուն հալար թըշնամիներու Կեսարն էլ կորցրեց ոչ ավելի քան հիսուն մարդ:

Այսպէս ևն պատմում ալ ճակատամարտի մասին գրողներից ու յանք: Մյուսները պնդում են թէ Կեսարը նույնիսկ ճակատամարտին

ի Ի ս նակցել, այլ որ նա իր սովորական հիվանդությամբ է բռնված
Լ զի Ը իշտ այն ժամանակ, երբ մարտակարգով շարելիս է եղել
իր զորքը Հենց որ նա զգացել է նոպայի մոտենալը ապա նախքան
խվանդությունը կատարելապես կտիրապետեր նրան և գիտակցու
թյունը կկորցնեիր տալել ևն մ տելքում եղած աշտարակը Լ թողել
սյնտեզ:

Փախուստով փրկված նախկին կոնսուլներից ու պրետորներից մի
լ անհար գերի ընկնելով ինքասպանութուն գործեցին իսկ շատերին Կև
սարը հրամայեց մահապատժի Լ նթարկել:

LIV Այրվելով Կատոնին կենդանի բռնելու ցանկությամբ Կեսարն
շտասյեց դեպի Հուտիկե Կատոնը այս քաղաքն էր պահպանում դրս
համար էլ մասնակցութուն շունեցավ ճակատամարտին: Լսելով Կա
տոնի ինքնասպանության լուրը՝ Կեսարը ակնայտորեն տխրեց բայց
ուչ ոք չէր իմանում, թե հատկապես ինչու նա միայն ասաց «Օ, Կս
տոն, ինձ համար ատելի է քո մահը, քանզի քեզ համար ատելի եղավ
փրկութուն ստանալ ինձանից»: Բայց այն աշխատությունը, որ Կեսարը
հետագայում գրել է ընդդեմ Կատոնի, չի պարունակում մեղմ, հաշտա
րար տրամադրության նշաններ: Էլ ինչպե՞ս կաշող էր Կատոնին խնս
վել ու կենդանի թողնել, եթե նրա վլա մեռած վիճակում այդքան շատ
լայրույթ է թափել Մյուս կողմից էլ, այն ներառամտությունը, որ Կև
սարը գրսևորում էր Ցիցերոնի, Բրուտոսի և բազում այլ պարավաժների
հեղատմամբ, ոմանց ստիպում է կզբակացնել, որ վերոհիշյալ երկը ծնունդ
Լ առել ոչ թե Կատոնի հանդեպ ունեցած ատելությունից, այլ պետա
կան ասպարեղում մրցակցությունից և ահա թե ինչ առիթով: Ցիցերոնը
Կատոն» վերնագրով գովասանական երկ էր գրել ի պատիվ Կատոնի:
Այս գրվածքը բնականաբար, շատերի մոտ մեծ հաշտություն էր սնե
ցել, քանզի գրված էր նշանավոր հոեաորի կողմից և արնշապույն մի
թեմայով: Կեսարն այդ գրվածքից խոցվել էր համարելով, թե գովեստը
սլն ուղղված է այն մարդուն ում մահվան պատճառն ինքն է եղել՝
մեղադրանք է իր գլմ: նա հազաքեց շատ մեղադրանքներ ընդդեմ Կա
տոնի և իր պիրքն տնվանեց «Անտիկատոն: Մյս երկու երկերից յուրա
անչուրն ունեցել է շատ կողմնակիցներ՝ կախված այն բանից թե ով
ում էր համակրում Կատոնին՝ թե՞ Կեսարին:

LV Սֆրիկայից Հում վերադառնալույ հետո Կեսարն ամենից առաջ
ժողովրդի սոտ ճառ արտասանեց գովաբանելով իր հալթանակը նա
ասաց թե այնքան շատ հողեր է գրավել, որ յուրաքանչյուր տարի պե

տական պահեստարանը կրերի երկու հարյուր հազար ատտիկյան մե-
դիմն հացահատիկ և երեք միլիոն ֆունտ ձիթայուղ: Այնուհետև նա հազ
թահանդեսներ տվեց՝ եգիպտական, պոնտական, աֆրիկյան, հասկանալի է
ոչ թե ընդգեմ Սկիպիոնի այլ Հոբաս թագավորի: Հոբաս թագավորի որ
գուն Հուբաս անունով, դեռևս շատ փոքր մի տղայի, անցկացնում էին
հաղթահանդեսի թափորի հետ նա երջանկագույն գերության մեջ ըն
կավ, քանի որ բարբարոսից ու նումիդիացուց նա դարձավ հունական
ամենագիտուն գրողներից մեկը: Հաղթահանդեսներից հետո Կեսարն
սկսեց հարուստ նվերներ բաժանել զինվորներին, իսկ ժողովրդի համար
կազմակերպեց հյուրասիրություն ու խաղեր: Քսաներկու հազար սեղան
ների վրա հյուրասիրություն էր սարքված բոլոր քաղաքացիների համար
ևաղէրը՝ գլադիատորական մարտերը և ծովային ճակատամարտերը, նա
տվեց ի պատիվ իր վաղուց մեռած դստեր՝ Հուլյայի: Այնուհետև տեղի
ունեցավ քաղաքացիների մարդահամար: Նախկինում եղած երեք հար-
յուր քսան հազար մարդու փոխարեն, այժմ առկա էր ընդամենը հարյուր
հիսուն հազարը: Այսպիսի կորուստ բերեցին քաղաքացիական պատ-
րադմները՝ ժողովրդի նշանակալի մասը ոչնչացրին գրանք և դեռ մի
կողմ թողած բոլոր այն աղետները որ Լեան մնացած Լուսիայի ու
պրովինցիաների գլխին

LVI Դրանից հետո Կեսարը շորրորդ անգամ կ նսուլ ընտրվեց և
ապա զորքով մեկնեց Իսպանիա՝ ընդդեմ Պոմպեոսի որդիների, որոնք,
չնայած իրենց Լրիտասարդությանը, հավաքել էին զարմանալի մեծ մի
բանակ և զորավարների վայել խիզախություն էին ցուցաբերում, այնպես
որ Կեսարին գրեցին ծայրահեղ վտանգավոր դրության մեջ Մեծ ճա-
կատամարտ տեղի ունեցավ Մունդա» քաղաքի մոտ: Կեսարը, տեսնելով
որ թշնամին նեղում է իր զորքին, որը թույլ զիմազբություն է ցույց
տալիս իր զինվորների շարքերի միջով վաղելով բղավեց, որ եթե նրանք
արդեն ոչ մի բանից չեն ամաշում, թող իրեն բռնեն ու հանձնեն այդ
լակոտներին Միայն մեծ գովարությունը Կեսարին հաջողվեց հաղթել
թշնամուն: Հակառակորդը կորցրեց երեսոն հազարից ավելի, իսկ Կե-
սարի զորքից էլ ընկան հազար ամենալավ զինվորները Ճակատամար-
տից հետո Կեսարն ասաց բարեկամներին թե հաճախ է ինքը մարտնչել
հաղթանակի համար, այժմ էլ առաջին անգամ մարտնչեց կյանքի հա-
մար: Այս հաղթանակը նա տարավ Դիոնիսոսի տոնի ժամանակ՝ հենց
այն օրը, երբ ինչպես պատմում են, պատերազմի մեջ մասավ Պոմպեոս
Մեծը Այս երկու իրադարձությունների միջև ընկած ժամանակամիջոցը

չըր տարի էր, Պոմպեոսի որդիներից կրտսերը փախավ իւկ մի քանի
լ անց Դիդիոսը բերեց ավագի գլուխը

Սա եղավ վերջին պատերազմը, որ Կեսարը վարեց Հալթանակր
տաթիվ տրված հաղթահանողներ հռոմեացիներին վշտացրեց ավելի, քան
որեւէ այլ բան: Կեսարին վայել շէր հաղթահանողես սարքել հայրենի
լծքախտությունների վրա, հպարտանալ նրանով, ինչի արդարացումը
աստվածների ու մարդկանց առջև կարող էր մեն-միայն անհրաժեշտու-
թյունը լինել: Չէ որ Կեսարը հաղթել էր ոչ թե օտարերկրյա առաջնորդ
ներին և ոչ էլ բարբարոս թագավորների, այլ ոչնչացրել էր գավակներին
ու տոհմը մի մարդու, որն ամենանշանավորն էր եղել հռոմեացիներից
և դժբախտության մեջ էր ընկել: Ի լլումն դրա, նախկինում Կեսարն ինքը
ոչ պատվիրակների միջոցով, ոչ գրավոր չէր հայտնում քաղաքացիական
պատերազմներում իւ տարած հաղթանակների լուրը այլ ամաչում էր
այդ լի սի վտորից

LVII Այնուամենայնիվ խոնարհվելով այդ մարդու բախտի առջև
և թույլ տալով, որ իրենց բերանին սանձ դնեն, հռոմեացիք համարում
էին, թե միանձնյա իշխանությունը հանգստություն է քաղաքացիական
պատերազմներից և այլ աղետներից: Նրանք Կեսարին ցմահ դիկտատոր
ընտրեցին: Այս անփոփոխելիությունը, միացած անսահմանափակ միա-
հեծանության հետ, բացահայտ բռնապետություն էր: Յիցերոնի առա-
ջարկով, սենատը նրան նշանակեց մեծարանքներ, որոնք դեռևս մարդ-
կացին մեծության սահմաններում էին մնում բայց ուրիշներն իրար
խոսք կտրելով՝ առաջարկում էին այնպիսի շափից դուրս մեծ պատիվ-
ներ, որոնց անտղիությունը հանգեցրեց նրան, որ Կեսարն անհաճո և
ստեղծի դարձավ նույնիսկ ամենաբարեմիտ մարդկանց: Կեսարին ատող-
ները, ինչպես կարծում են, ոչ պակաս քան նրան շողոքորթողները օգ-
նում էին ընդունելու այդ որոշումները, որպեսզի հնարավորին շափ
ավելի շատ պատրվակներ լինեին դժգոհության համար և որպեսզի իրեն
մեղադրանքները լիովին հիմնավորված թվային: Իսկ մնացած բաներում
Կեսարը քաղաքացիական պատերազմները վերջացնելուց հետո իրեն պա-
հում էր անբասիր: Նույնիսկ որոշում է ընդունված եղել, — և ինչպես
կարծում են, լիակատար հիմունքով, — նրան նվիրել Բարեգթության տա-
ճարը՝ ի նշան նրա մարդասիրության հանդեպ երախտագիտության: Հի-
րավի, նա ներել էր զենքը ձեռքին իր դեմ հանդես եկած շատերին, իսկ
ամանց էլ, ինչպես օրինակ Բրուտոսին ու Կասիոսին, պատվավոր պաշ-
տոններ էր տվել: Կեսարը թույլ չտվեց, որ Պոմպեոսի արձանները պատ-
վանգանից վար գցված մնան, այլ հրամայեց իրենց նախկին տեղերը

գնել: Այս առթիվ Յիցերոնն ասել է թե Կեսարը վերականգնելով Պոմպեոսի արձանները՝ յաստատեց իր սեփականները: Կեսարի բարեկամները խնդրում էին, որ նա իրեն թիկնապահներով շրջապատի և շատերն էին իրենց ծառայությունն առաջարկում: Կեսարը չէր համաձայնում, հայտարարելով, որ, իր կարծիքով ավելի լավ է մեկ անգամ մեռնել, քան մշտապես սպասել մահվան: Իր հանդեպ մարդկանց բարեհաճ վերաբերմունքի մեջ տեսնելով ամենալավ ու հասարի պահպանությունը և ձգտելով հասնել այդպիսի բարեհաճության՝ նա նորից սկսեց ժողովրդին հյուրասիրություններ տալ և այց բաշխել: Զինվորների համար նա զաղութներ էր հիմնում: Դրանցից ամենահայտնիներն են Կարթագենը և Կորնթոսը, քաղաքներ, որոնց անցյալում վիճակված է եղել միաժամանակ կոտորանքի իսկ այժմ միաժամանակ վերականգնվեցին:

LVIII Ինչ վերաբերում է ավազանունն ապա ոմանց նա խոստանում էր կոնսուլության կամ պրետորության պաշտոններ, մյուսն էլ ին հրապուրում էր այլ պաշտոններով ու պատիվներով և ամեն քին հավատարապետ ներշնչում էր մեծ հույսեր, ձգտելով այն բանին, որ իշխեր կամավոր կերպով հպատակվածների վրա: Երբ կոնսուլ Մաքսիմոսը մահացավ, ապա մինչև նրա իշխանության ժամկետի լրանալը մնացած մեկ օրվա շամար կոնսուլ նշանակեց Կանինիոս Բերիլիոսին: Բւտ սովորության, շատերը գնում էին ողջունելու նրան, և Յիցերոնն սասց Շուսպենք, որ հասցնենք նրան կոնսուլի պաշտոնու և տեսնելու»

Կեսարի գերծունյա բնավորության համար լազմաթիվ հաջողությունները դեռևս հիմք չէին որ նա հանգիստ կելույով օգտվեր իր ջանքերի պտուղներից: Բնահակառակը աւելս թե բոցավառելով ու դրդելով դրանք նրա մեջ ծնունդ էին տալիս սպագայում էլ ավելի մեծ ձեռնարկումների և նոր փառքի ձգտման, կարծես թե ձեռք բերվածը նրան չէր բավարարում: Դա մի տեսակ մրցություն էր ինքն իր հետ, աւելս թե ախույանի հետ, և ապագա սխրանքներով նախնիներում կատարածը գերազանցելու ձգտում: Եւ պատերազմի էր նախապատաստվում ընդդեմ պարթևների, իսկ նրանց հպատակեցնելուց հետո մտադրություն ուներ, անցնելով Հիբկանիայով Կասպից ծովի երկայնքով, շրջանցել Պոնտոսը ու ներխուժել Սկյութիա, անուհետև հարձակվել Գերմանիային հարկվան երկրների վրա ու բուն Գերմանիայի վրա և Խտալիա վերստին նալ Գալլիայի միջով հոսմեական տերությունների շրջանը փակելով այնպես, որ կայսրությունը բոլոր կողմերից սահմանակից լինի Օվկիանոսին:

Արշավանդի նախապատրաստութիւնների յիշ Կեսարը մտածում էր բանցր փորել Կորնթոսի պարանոցի միջով և այդ գործի հետադոտումը անձնարարել էր Անիկին: Այնուհետև նա ձեռնարկեց կառուցել մի խոր ջլանցը՝ որը հենց քաղաքի մոտ իր մեջ առներ Տիբերիս գետի ջրերը, դեռի նոսանքը շուտ գար դեպի Յիցլրոնները և Տիբերիսին ստիպեր յո՛վր թափել Տարացինասի մոտ, այդպիսով Հոռո և կող զաճառական ների համար առավել հեշտ ու անվտանգ դարձնելով նավարկումը Բացի այդ նա ցանկանում էր շորացնել Պոմեաիա ու Սեիտիոս քաղաքների մոտ եղած ճահիճները, որպեսզի բերրի հողը մշակելու տային տասնյակ ու տասնյակ հաղարավոր մարդկանց: Այնուհետև, նա ուզում էր պատնէշ կառուցել ծովում՝ Հոռոմի մոտ և, մաքրելով Օստիական ավի մոտ եղած ծանծաղուտները, Շուսալի նավահանգիստը և խարոխակայանները ստեղծել այնքան կարևոր նշանակութիւն ունեցող նավագնացութեան համար: Այսպիսիք էին նրա նախապատրաստութիւնները:

LIX Օրացույցի սրամտորէն մտածված և նրա կողմից ավարտված նառուցվածքը թվարկութեանը վերաբերող լիսալնի ուղղմամբ, վիթխարի օգուտ բերեց. Բանը ոչ միայն այն էր որ շատ հին ժամանակներում հոռոմեացիների լուսնային փոլը համաձայնեցված չէր տարվա իրական տևողութեան հետ որի հետևանքով դոհարերութիւնները և տոները աստիճանաբար առաջ էին շարժվում և սկսել էին ընկնել նախկին տար լա եղանակի հակադիր ծայրը. նույնիսկ էրբ մտցվեց արևային տալին, որը և կիրառվում էր մէր կողմից նկարագրվող խամանակաշրջանում ոչ որ շէր կարողանում հաշվարկել դրա տևողութիւնը՝ և մէն միայն քրի մերը գիտեին, թե որ պահին պետք է ուղղում կատարել, և բոլորի համար անսպասելի մտցնում էին ավելցաց ամիսը, որը նրանք անվանում էին մերցոդոնիում: Ասում են, առաջինը դեռևս Սումասն է սկսել մտնել լրացուցիչ ամիսը դա մի միջոց համարելով օրացուցում եղաւ թլրութիւնը շտկելու համար, միջոց, որը, սակայն, ուժի մեջ է մտնում սոսկ կարճ ժամանակով: Այս մասին խոսվում է նրա կենսագրութեան մեջ: Կեսարը լավագույն դիտնականներին և աւաղագետներին ստաջար կեց վճուղ այս հարցը, իսկ ապա, ուսումնասիրելով առաջարկված մի ջսցները՝ ստեղծեց սեփական, մանտաղին մտածված ու բարելավված օրացույց: Հոռոմեացիները մինչև այժմ օգտվում են այդ օրացույցից և բոտ երևույթին, թվարկութեան մեջ նրանց սխալներն ավելի քիչ են, յան ուրիշ ժողովուրդների: Սակայն Կեսարի իշխանութեան հանդէպ շարադավ ու թշնամարար սրամտորված մարդկանց համար այս վերափոխումն էլ սոիթ լալ ձալ նրա վրա մեղադրանքներ բարդելու: Այս

պես օրինակ հայանի հոտոր Գիցերոնը, երբ ինչ-որ մեկը նկատել է, թե «վաղը կծագի Քնարի համաստեղութունը», ասել է «Այո, ըստ հրամանագրի», իբրև թե այդ երևույթն էլ, որ տեղի է ունենում բնական անհրաժեշտությամբ կարող էր տեղի ունենալ մարդկանց ցանկությամբ:

LX Կեսարի կողմից թագավորական իշխանության հասնելու տենչը ամենից շատ էր բացահայտ ատելություն հարուցում նրա հանդեպ և ձգտում առաջացնում սպանելու նրան: Ժողովրդի համար դա էր Կեսարի գլխավոր մեղքը: Իսկ թաքուն անբարյացակամների համար սա լազուց արդեն նրա նկատմամբ թշնամանքի պատշաճ պատրվակն էր դարձել: Նրանք, ովքեր Կեսարին հորդորում էին, որ այդ իշխանությունն ընդունի, ժողովրդի մեջ տարածում էին լուրեր որոնք իբր հիմնավորված էին Սիբիլական գրքերով, թե պարթևական թագավորության նվաճումը հռոմեացիների կողմից հնարավոր է միայն թագավորի առաջնորդությամբ, այլապես այն անհասանելի է: Մի անգամ, երբ Կեսարը Ալբայից վերադարձավ Հռոմ սրանք համարձակվեցին նրան սղջունել, որպես թագավորի: Կեսարը, տեսնելով ժողովրդի իբրևանցումը, չայրացավ և այդ առթիվ դիտողություն արեց, որ իրեն ոչ թե թագավոր են կոչում, այլ՝ Կեսար: Քանի որ այս բառերը ընդունվեցին համընդհանուր լուծյամբ, Կեսարը հեռացավ խիստ մռայլ ու անողորմ տրամադրությամբ:

Մի այլ անգամ սենատը նրա համար նշանակեց ինչ-որ արտակարգ մեծարանքներ: Կեսարը նստել էր հռետորական բարձունքում: Երբ նրան մոտեցան կոնսուլներն ու պրետորները՝ սենատի ամբողջ կազմն էլ հետներն առած նա տղից շքարձրացավ, այլ, դիմելով նրանց, ինչպես մասնավոր անձանց պատասխանեց, թե մեծարանքները ավելի շուտ պակասեցնել է պետք քան ավելացնել: Այսպիսի վարքով սակայն նա ոչ միայն սենատի դժգոհությունը հարուցեց, այլև՝ ժողովրդի, քանի որ ամենքը համարում էին, որ հանձին սենատի Կեսարը վիրավորանք հասցրեց պետությանը: Նրանք ովքեր կարող էին ավելի երկար շնչալ այն տեղ, սաստիկ վշտացած իսկույնեկթ լքեցին նեւտը: Այնժամ Կեսարը հասկանալով, որ նրանց վարմունքի պատճառն իր արարաքն էր, իսկույն տուն վերադարձավ և բարեկամների ներկայությամբ մի կողմ նստեց զգեստը, գոշելով, թե ինքը պասուրաստ է ամեն մի ցանկացողի թույլ տալ հարվածելու իրեն: Հետագայում նա իր արարքն արդարացնում էր հիվանդությամբ, որը դրանով տառապող մարդկանց զգացմունքներին թույլ չի տալիս հանդարտ մնալ, երբ նրանք, կանգնած, ճառ են տալով ժողովրդի առաջ: Այս հիվանդությունը արագորին ցնցում է բոլոր զգաց

ունքները, սկզբում գլխապտույտ է առաջացնում, իսկ ապա՝ շղաձու-
րյուններու Բայց իրականում Կեսարը հիվանդ չի եղել պատմում են, թե
նա ուղեցել է ինչպես որ պատշաճ էր որտեքի կանգնել սենատի առաջ,
բայց նրան նա է պահել բարեկամներից մեկը, կամ, ավելի ճիշտ քրժ-
ուղիներից մեկը՝ Կոռնելիոս Բալբոսը, որն ասել է «Մի՞թե դու չես հի-
շում որ դու Կեսարն ես: Մի՞թե դու չես պահանջի, որ քո նկատմամբ
արդանք ցուցաբերեն՝ որպես բարձրագույն էակի»:

LXI Այս դեպքին միացավ նաև ժողովրդական տրիբուններին վի-
լ Օլորելը Լուպերկալիանների տոնն էր որի մասին շատերը գրում են
իւ հնում շա եղել է հովվական տոն: Եվ իրոք այն որոշ շափով հիշեց-
նում է արկադական կիկեաները: Թաղմաթիվ աղնվազարմ երիտասարդ-
ները և նույնիսկ բարձրագույն պետական պաշտոններ զբաղեցնող ան-
չինք տոնի ժամանակ մերկ վիճակում վազում են քաղաքի միջով և
մարդկանց ծիծաղի ուրախ կատակների ուղեկցությամբ, փրշոտ մորթի-
ներով խփում են բոլոր նրանց ուլքեր հանդիպում են ճանապարհին:
Նախ կանայք գրանց թվում նաև բարձր հասարակական դիրք ունեցող-
ները ընդառաջ են ելնում նրանց և դիտմամբ, ինչպես դպրոցում, եր-
կու ձեռքն էլ դնում են հարվածի տակ: Նրանք հավատում են թե դա
թեթևացնում է հղինների ծննդաբերությունը, իսկ շրերնելին օգնում է
հղիանալ: Այս տեսարանը Կեսարը դիտում էր հետադարձական բարձուն-
քից ոսկե բաշկաթոռին ստաժ, դուզված-դարդարված, ինչպես հաղթա-
հանգևսի ժամանակ: Մետոնիոսը որպես կոնսուլ նույնպես այդ սրբա-
զան վազքի հանդիսատեսներից մեկն էր: Անտոնիոսը դուրս եկավ ֆո-
բում և, երբ ամբոխը հետ քաշվեց նյա առջևից, նա Կեսարին մեկնեց մի-
թագ՝ դափնու տերևներով պատած: Ժողովրդի մեջ, ինչպես որ կանխա-
պես ստիասայատրաստված էր, հնչեցին հատուկենտ ծափահարություն
ներ: Իսկ երբ Կեսարը մերժեց թագը, ամբողջ ժողովուրդը ծափահարեց:
Երբ Անտոնիոսը երկրորդ անգամ մատուցեց թագը, նորից հնչեցին թույլ
ծափեր: Կեսարի երկրորդ մերժման ժամանակ ծափահարեցին բոլորը:
Երբ այսպիսով դիտավորությունը բացահայտված էր, Կեսարը տեղից վեր-
կացավ և հրամայեց թագը տանել Կապիտոլիում: Այնտեղ ժողովուրդը
տեսավ, որ Կեսարի արձանները պսակված են արքայական թագերով:
Ժողովրդական տրիբուններից երկուսը՝ Փլավիոսը և Մարուլլոսը մոտե-
ցան պսակները հանեցին արձանների վրայից իսկ նրանց, ուլքեր առա-
ջենն էին ողջունել Կեսարին որպես թագավոր տարան բանտ: Ժողովուր-
դը նրանց հետևում էր ծափահարություններով՝ երկու տրիբուններին ան-
վանելով «Բրուտոսներ», որովհետև Բրուտոսը ոչնչացրել էր թագավո-

բական ժառանգական տիտղոսը և ան իշխանությունը, որը պատկանում էր միանձնյա կառավարողներին տվել էր սենատին ու ժողովրդըին: Կեսարը, զայրացած այդ արարքից՝ Փլավիոսին ու Մարուլլոսին գրկեց իշխանությունից Մեղադրական ճառի մեջ նա, ցանկանալով վերավորել ժողովրդին՝ բազմիցս նրանց անվանեց «բրուտոսներ» ու «կիմեոսներ»:

LXII Այդ պատճառով էլ ժողովուրդը իր հույսերն սկսեց կապել Մարկոս Բրուտոսի հետ: Հայրական կողմից նա սերում էր, ինչպես Ենթադրում էին, նշանավոր Հին Բրուտոսից, իսկ մայրական գծով՝ մի այլ անվանի տոհմից՝ Սերվիլիոսներից, և փեսան էր ու ազգականը Կատոնի Այն պատիվներն ու բարեբարությունները, որ մատուցում էր նրան Կեսարը, նրա մեջ քնեցնում էին մենիշխանությունը ոչնչացնելու մտադրությունը: Չէ՞ որ Բրուտոսը Փարսալիայի մոտ Պոմպեոսի փախուստի ժամանակ ոչ միայն փրկվել էր Կեսարի միջոցով և ոչ միայն իր խնդրանքներով փրկել էր իր շատ բարեկամների, այլև ընդհանրապես Կեսարի մեծ լստահությունն էր վայելում Բրուտոսն այդ ժամանակ ստացել էր պրետորական պաշտոններից ամենաբարձրը և երեք տարի հետո դառնալու էր կոնսուլ: Կեսարը նրան դերադասեց Կասիոսից, թեև Կասիոսը նույնպես հավակնում էր այդ պաշտոնին: Այդ առիթով Կեսար ինչպես հաղորդում են, ասել է, որ թեև Կասիոսի նկրուտումները էլ ավելի հիմնավոր են շնայած դրան, ինքը չի կարող արհամարհել Բրուտոսին: Երբ արդեն դավադրության ժամանակ ինչ-որ մարդիկ մատնել էին Բրուտոսին Կեսարը դրան ուշադրություն չէր դարձրել: Չեռքը իր մարմնին դնելով՝ ասել էր մատնիչին «Բրուտոսը դեռ կհետաձգի այս մարմնի հետ հաշիվ տեսնելը» — դրանով ցանկանալով ասել, թե իր կարծիքով Բրուտոսն իր խիղախության համար լիովին արժանի է բարձրագույն իշխանության բայց ձգտումը դրա հանդեպ նրան չի կարող դարձնել անշնորհակալ և ստոր:

Պետական հեղաշրջման ձգտող մարդիկ կամ իրենց հսյացքները դարձնում էին դեպի միայն Բրուտոսը, կամ մյուսների մեջ նրան էին նախապատվություն տալիս, բայց, շհամարձակվելով նրա հետ խոսել, գիշերները մակադրություններ էին անում դատավորական բարձունքի որի վրա նստած՝ Բրուտոսը գործերն էր վճռում պրետորի պարտականությունները կատարելիս: Այս մակադրությունների մեծ մասը մոսավորապես հետևյալ բովանդակությունն ուներ «Դու քնում ես Բրուտոս», կամ՝ «Դու Բրուտոս չես»: Կալիոսը նկատելով, որ այս մակադրություններն ավելի էն դրգոում Բրուտոսին սկսեց առավել համառոտն ստղղել ի բան,

1 1) 1] Կասիոսը Կեսարի հանդեպ անձնական թշնամանք էր տածում արի պատճառները մէնք շարադրել ենք Ռոուտոսի կենսագրութեան մեջ: Կեսարն այդ հարցում կասկածում էր նրա վրա: Ինչ էք կարծում, ի՞նչ է ուզում Կասիոսը: Ինձ դուր չի գալիս նրա շափազանց գունատութիւնը», — ասել էր Նա մի անգամ իր բարեկամներին Մի ալլ անգամ մասնագիր ստանալով, թե Անտոնիոսն ու Դուլբելլան խռովութիւն են նշուածում, նա, Կասիոսին ու Ռոուտոսին ակնարկելով, ասել էր. «Ծառանձնապէս շեմ վախենում այդ երկարամազ թանձրամարմիններից 1 1] ավելի շուտ գունատներից ու վտիտներից եմ վախենում»:

LXIII. Բայց, ըստ երևույթին այն, ինչ նշանակված է ճակատադրի կողմից, լինում է ոչ այնքան անսպասելի որքան անկասելի: Եվ այս դեպքում էլ, ինչպէս սրատմում են հայտնվել են վարմանալի նախանշանակներ ու տեսիլքներ. լույսի բռնկումներ լրկնքում, գիշերները լազմիցս հնչած աղմուկ, Փորում իջած միայնակ թռչուններ — այս բոլորը գուցե, շարժել էլ հիշատակել այսպիսի սուրբափելի իրադարձութեան դեպքում: Բայց մյուս կողմից էլ փիլիսոփա Ստրաբոնը գրում է, թէ Երեւացի են ինչ-որ կողմ սլացող բազմաթիվ հրեղեն ձարգիկ: Մի գորականի ստրուկի ձեռքերից ուժգին բոց է դուրս վիժել տեսնողների թվացել է թե նա վառվում է սակայն էր բոցը չբացել է, ստրուկն անվնաս է մնացել շենց իր Կեսարի կողմից գոհարեութիւն կատարելիս մատաղացու կենդանին սիրտ չի ունեցել: Սա մի ահաւոր նախանշանակ է եղել, քանի որ բնութեան մեջ կա այնպիսի կենդանի որ սիրտ շունենա Շատերը պատմում են նաև, որ ինչ-որ գուշակ Կեսարի համար գուշակել է, թե մարտ ամսվա այն օրը, որը հռոմեացիներն անվանում են լոտոսներ, նա պետք է զգուշանա մեծ վտանգից: Երբ եկել է այդ օրը, Կեսարը ճանապարհվելով սենատ կասկածել է գուշակի վրա և կատակով ասել նրան «Բայց չէ՞ որ մարտյան իլոտոսներն սկսվել են», որին սա հանգիստ պատասխանել է «Այո սկսվել են բայց շեն անցել»:

Դրանից մի օր առաջ ճաշի ժամանակ, որը նրա համար կազմակերպել էր Մարկոս Լեպիդոսը, Կեսարը սովորականի պես, ընկողմանած սեղանի մոտ ինչ-որ նամակներ էր ստորագրում: Խոսում էին, թե մահ լան որ ձեն է ավելի լավը: Կեսարը բոլորից առաջ բացականչեց. «Անպասելիք»: Դրանից հետո, էր Կեսարը հանգստանում էր մահի վրիկ. կնոջ կողքին, նրա ննջարանի բոլոր դռներն ու լուսամուտները միայն շամից բացվեցին: Աղմուկից ու վառ լույսից արթնացած Կեսարը տեսաւ, որ կալպուրնյան հեկեկում է քնի մեջ, արձակելով անորոշ, անհողաբաշխ հնչյուններ: Ես երազում տեսել էր, որ լնքը գլկում բռնել է սպանված

ամուսնուն՝ Ուրիշները, սակայն, հերքում են, թե Կեսարի կինն ս չգալիսի երազ է տեսել: Լիբիոսն ասում է, թե Կեսարի տունը, սենատի որոշմամբ որը ցանկացել էր մեծարել Կեսարին, զարդարված է եղել վերնաճակատով, և այդ վերնաճակատը Կալպուրնյան երազում տեսել է փլված, դրա համար էլ ողբացել է ու լաց եղել: Լույսը բացվելուն պես նա սկսել է խնդրել Կեսարին, որ եթե հնարավոր է, տնից դուրս շղա և հետաձգի սենատի նիստը իւկ էթե նա բոլորովին ուշադրութուն չի գտնվում կնոջ երազներին՝ ապա գոնե այլ նախանշանակների ու զոհաբերութունների միջոցով թող իմանա ապագան: Այստեղ, ըստ երևույթին, Կեսարի հոգում էլ ներս էր սողոսկել տաղնապն ու էրկյուղը որվհետև առաջ նա երբեք Կալպուրնյայի մեջ սնահավատական վախ չէր նկատում որն այնքան հատկանշական է կանացի բնույթին: Իսկ հիմա կնոջը տեսել էր սաստիկ հուզված: Երբ դուշակները բազմաթիվ զոհաբերութուններից հետո նրան անբարենպաստ նախանշանակներ հայտնեցին, Կեսարը որոշեց Անտոնիոսին ուղարկել որ սենատն արձակի:

LXIV. Այդ ժամանակ Գեցիմոս Բրուտոսը Ալբինոս մականունով (որը Կեսարի այնպիսի վստահութունն էլ վալելում, որ նա իր կտակում սրան երկրորդ ժառանգորդ էր գրել), Բրուտոսի և Կասիոսի գալադրության մասնակիցներից մեկը, վախենալով, որ շինի թե դավադրութունը բացվի, եթե Կեսարն ալդ օրը հետաձգի սենատի նիստը, սկսեց ծաղրել գուշակներին ասելով, թե Կեսարն իր անբարյացակամությամբ սենատորների մեղադրանքներն ու կշտամբանքները կհարուցի իր հանդեպ քանի որ այնպիսի տպավորութուն է ստեղծվում, թե նա ձեռ է առնում սենատին: Եվ իրոք, շարունակել է նա, սենատը հավաքվել է Կեսարի առաջարկով, և բոլորը պատրաստ էն որոշում կայացնել, որպեսզի նա հւշակվի արտաիտալական սլրովինցիաների թագավոր և արքայական թագ կրի՝ այլ հողերում և ծովերում գանվելիս: Իսկ եթե որևէ մեկը հավաքված սենատորներին հայտարարի, որ նրանք ցրվեն ու նորից հավաքվեն՝ էրբ Կալպուրնյային վիճակվի տեսնել առավել նպաստավոր երազ — այն ժամանակ ի՞նչ կխոսեն Կեսարի հանդեպ անբարյացակամները: Իսկ եթե սրանից հետո Կեսարի բարեկամներից որևէ մեկը պնդի, թե իրերի այսպիսի դրութունը ստրկութուն չէ, բռնապետութուն չէ, էլ ո՞վ կցանկանա անսալ նրա խոսքերին: Իսկ եթե Կեսարը գեշ նախանշանակների պատճառով այնուամենայնիվ որոշել է այսօրը հաշվել ու առեճական օր, ապա ավելի լավ է, որ նա ինքն անձամբ գնա և, ողջունելով սենատին՝ հետաձգի նիստը Այս ասելով Բրուտոսը բռնեց Կեսարի թևից ու տարավ: Երբ Կեսարը մի քիչ հեռացավ տնից, նրան

րնդառաջ Լկալ ինչ որ ստրուկ և ուզէց նրա հետ խոսել: Սակայն, Կե-
տրին շրջապատած բազմութեան ճնշումից հետ մղվելով, ստրուկն ստիպ-
յաժ եղավ տուն մտնել: Նա իրեն Կալայուրնյայի տրամադրութեան տակ
դրեց և ինդրեց թույլ տալ մնալու նրանց տանը, մինչև Կեսարը վերա-
յառնա, քանի որ ինքը Կեսարին պետք է կարևոր լուրեր հայտնի:

Լ XV Կնիդացի Արտեմիդորոսը՝ հունական գրականութեանը գիտակ-
լի մարդ, այս հողի վրա հանդիպել էր որոշ անձանց, որոնք մասնակցո մ
լին Քրուտոսի դավադրութեանը, և նրան հաջողվել էր իմանալ համարչա-
ւոյն սմեներ, ինչ կատարվում է այնտեղ: Նա մտաւեցել է Կեսարին, ձեռ-
ոին՝ մագաղաթի փաթեթ, որտեղ գրված է եղել այն ամենը, ինչ ինքը
շտադիր է եղել տեղեկացնել Կեսարին դավադրութեան վերաբերյալ:
Տեսնելով, որ բոլոր փաթեթները, որոնք հանձնում են Կեսարին, նա տա-
վա է իրեն շրջապատող ստրուկներին՝ Արտեմիդորոսը բոլորովին մո-
տեցել է, կիպ մերձեցել ու ասել «Կեսար սա ինքդ կարդա, ցույց շտա-
լով ուրիշներին, և՛ անհապաղ: Այստեղ գրված է քեզ համար շատ կա-
րևոր մի գործի մասին»: Կեսարը փաթեթը ձեռքն է առել, սակայն խրնդ-
րարկունների բազմությունը խանդարել է նրան կարդալու, թեև նա մի
յանի անգամ փորձել է դա անել: Այդպես էլ նա մտել է սենատ՝ ձեռ-
քերին բռնած միայն այդ փաթեթը: Ռմանք, սակայն, պատմում են, թե
ինչ-որ մի ուրիշն է այդ փաթեթը փոխանցել Կեսարին և որ Արտեմիդո-
րոսը, ամբողջ ժամանակ ճանապարհին հետ մղվելով բազմութեան կող-
մից, բոլորովին չի կարողացել մոտենալ Կեսարին:

Լ XVI Այնուամենայնիվ սա գուցե, պատահականութեան խաղ է:
Բայց այն վայրը, ուր տեղի է ունեցել կռիվն ու Կեսարի սպանությունը
և ուր այս անգամ հավաքվել է սենատը առանց որևէ կասկածի, ընտրու-
ված ու նշանակված է եղել աստվածութեան կողմից դա էղել է հիանա-
լի զարդարված այն շինքերից մեկը, որ Պոմպեոսն էր կառուցել՝ իր
թատրոնի կողքին: Այստեղ էր գտնվում Պոմպեոսի արձանը: Սպանու-
թյունից առաջ Կասիոսը, ասում են, նայել է Պոմպեոսի արձանին և
նրան լին օգնութեան է կանչել շնայած իրեն խորթ չի եղել էպիկուր-
յան փիլիսոփայութեանը: Այնուամենայնիվ, երբ մոտեցել են այն բո-
ւպեները, որ պետք է տղի ունենար սարսափելի գործը ըստ Լրևուր-
թին, նրան ինչ որ մոլուցք է համակել, որն ստիպել է մոռանալ բոլոր
նախկին մտքերը: Մնտոնիոսին, որը հավատարիմ էր Կեսարին և աչքի
էր ընկնում մարմնական մեծ ուժով, Քրուտոս Ալբինոսը գիտամամբ պա-
հել է փոզոցում՝ զբաղեցնելով երկար բարակ խոսակցութեամբ: Կե-
սարի ներս մտնելուն պէս՝ սենատը տեղից վեր է կացել է նշան հար-

դանքի: Պավագիրներն էլ, Բրուտոսի գլխավորութեամբ, բաժանվել էին երկու մասի ոմանք կանգնել էին Կեսարի բազկաթոռի հետևում, մյուս ներք գիմացը որպեսզի Տուլլիոս Կիմբրոսի հետ ներում խնդրեին նրա արտաքսյալ եղբոր համար: Այս խնդրանքներն անելով դավագիրները Կեսարին ուղեկցել են մինչև իր բազկաթոռը: Կեսարը, նստելով բազկաթոռին՝ մերժել է նրանց խնդրանքը, իսկ երբ դավագիրները սկսել են էլ ավելի համառորեն խնդրել, իր դժգոհությունն է արտահայտել նրանցից յուրաքանչյուրի հանդեպ Այնժամ Տուլլիոսը երկու ձեռքով բռնել է Կեսարի տոզան և սկսել է այն քաշքշել վզից ինչը և նշան է եղել հարձակման Կասկան առաջինն է սրի հարված հասցրել ժոժրակից: Այդ վերքը սակայն խորը և մահացու չի եղել: Կասկան ըստ երևույթիս սկզբում շփոթվել է իր սարսափելի արարքի հանդպնութունից: Կեսարը, շուտ դալով, բռնել է և պահել սուրը: Համարյա միաժամանակ երկուսն էլ բղավել են. վիրավոր Կեսարը՝ լատիներեն «Սրիկա՛, Կասկա՛ լ՛նչ ևս անում», իսկ Կասկան՝ հունարեն, գիմելով եղբորը «Ծղբա՛յր, օգնի՛ր: Պավագրութունից անտեղյակ սենատորները սարսափից ապշած, լեն համարձակվել ոչ փախչել, ոչ պաշտպանել Կեսարին, ոչ էլ նույնիսկ բղավել: Բոլոր դավագիրները սպանության պատրաստ, սրահերկ շրջապատել են Կեսարին որ կողմն էլ որ նա դարձրել է հայացքը որսկաններով շրջապատված վայրի գազանի պես, հանդիպել է դեմքին ու աչքերին ուղղված սրերի զարկերի, բանի որ պայմանավորված էին եղել, որ բոլոր դավագիրները մասնակցութուն ցույց տային սպանությանը և ասևս թե ճաշակեին գոհի արջունից: Ուստի Բրուտոսն էլ է հարված հասցրել աճուկին Որոշ գրողներ պատմում են, թե Կեսարը հետմղելով դավագիրներին՝ դեսուդեն է նետվել և գոռացել, բայց տեսնելով Բրուտոսին մերկ սուրը ձեռքին՝ տոզան դլխին է քաշել և իրեն դրել հարվածների տակ, Կամ մարդասպաններն իրենք են Կեսարի մարմինը հռել Կցել այն սլատվանդանի մոտ որի վրա կանգնած է եղել Պոմպեոսը Լրձանը կամ պատահաբար է ընկել այդտեղ: Պատվանդանը սաստիկ ցողված է եղել արջունով: Կարելի էր երևակայել թե Պոմպեոսն ինքն է հայտնվել հակառակորդից իր վրեժը լուծելու համար, որը փուլած է իր ստքերի տակ՝ վերքերով ծածկված և դեռ ցնցումների մեջ: Կեսարը, ինչպես հաղորդում էն, ստացել է քսաներեք հարված: Շատ դավագիրներ միմյանց են վիրավորել՝ այդքան հարվածներ ուղղելով մեկ մարմնի:

ԼՃVII. Կեսարի սպանութունից հետո Բրուտոսն առաջ է եկել, իբրև թե ցանկանալով խոսել տեղի ունեցածի հարին, բայց սենատորները

լլումանալ վ, փախուստի էն գիմէլ՝ ժողովրդի մեջ տւ բաժնելով ի առնս
փոթությունն ու անհազթահարելի սարսափ: Ոմանք փակել են տները,
ուրիշները անտեր թողել լումայափոխական ու առևտրական շենքերը:
Շատերը վազելաղ գնացել էն սպանության վայրը, որպեսզի տեսնելն
տեղի ունեցածը, շատերն էլ, արդէն տեսած պրծած, այդտեղից են վա-
զելաղ հետ դարձել: Անտոնիոսն ու Լեպիգոսը՝ Կեսարի ամենամտտիկ
րնկերները ծլկելով կո ըիայից, թաքնվել են ուրիշների տներում: Գա-
վաղիրները Բրուտոսի գլխավորութեամբ, սպանությունից հետո դեռ շհան-
դարտված մերկ սրերը շողշողացնելով, հավարվել են մեկտեղ և կու-
րիայից ուղղվել դեպի Կապիտոլիում: Նրանք նման շեն եղել փախըս-
տականների նրանք՝ ուրախ ու համարձակ ժողովրդին կոչ են արել
ազատության իսկ ազնվազարմ մարդկանց, որոնք հանդիպել էն նրանց
ճանապարհին, հրավիրել են մասնակցությունն ունենալու իրենց երթին:
Ոմանք օրինակ Գայոս Օկտավիանոսը և Լենտուլոս Սպինթերոսը, բայ-
լի են նրանց հետ միասին և, ձեռացնելով թէ սպանության համակիր-
ներից են, փառք էն վերագրել իրենց Հետագայում նրանք թանկ վճա-
րեցին իրենց պարծենկոտության համար նրանք մահապատժի ենթարկ-
վեցին Անտոնիոսի և Էրիտասարդ Կեսարի ձեռքով: Այդպես էլ նրանք
շվայելեցին այն փառքը որի պատճառով մեռան քանդի նրանց ոչ ոք
չէր հավստում և նույնիսկ այն մարդիկ, ովքեր նրանց պատժի ենթար-
կեցին, դա արեցին ոչ թե նրանց կատարած արարքի համար այլ՝ շար
դիտավորության

Հաշորդ օրը դա լալիքները Բրուտոսի գլխավորութեամբ գուրս էն
բկել Ֆորում և ճառեր արտասանել ժողովրդի մտտ ժողովուրդը լսել է
հեռտորներին՝ շարտահայտելով ո՛չ դժգոհությունն ո՛չ իրախուսանք, և
լիակատար լութեամբ ցույց է տվել, թե խղճում է Կեսարին, բայց հար-
գում է Բրուտոսին: Սենատն էլ շանալով մոռացնել տալ տեղի ունեցածը
և համբնդհանուր հաշտության հաստատել, մի կողմից, Կեսարի համար
նշանակել է աստվածային պատիվներ և շի վերացրել նույնիսկ նրա սա-
կավանշանակ կարգադրությունները, իսկ մյուս կողմից պրովինցիանե-
րը բաշխել է Բրուտոսի հետևից գնացած դավադիրների միջև՝ նրանց էլ
մեծարելով պատշաճ պատիվներով: Դրա համար էլ ամենքը մտածել են,
թե պետութեան գործերի վիճակը աւրապնդվել է և նորից ձեռք է բերվել
լսվագույն հավասարակշռություն

LXVIII Կեսարի կտակը բացելուց հետո հայտնաբերվեց որ նա
յուրաքանչյուր հոռմեացու թողել է նշանակալից մի նվեր: Տեսնելով, թե

ինչպես նրա դիակը, հարվածներից այլանդակված տանում են ֆորումի միջով ժողովրդական բաղմուժյունը շպա պանեց հանգիտութուն և կարգուկանոն դիակի շուրջը իրար վրա կուտակեցին ֆորումի դրամա փոխների նստարանները, ցանկապատերն ու սեղանները աչք բոլորը վառեցին և այդպիսով դիակը կիզեցին: Սյնուհետև նրանք վառվող խանձողներ առած՝ նետվեցին կրակի տալու կետերին սպանողների տները, մյուսները քաղաքով մեկ վազվզում էին դավադիրներին գտնելու՝ ջանալով բռնել նրանց, որպեսզի տեղնուտեղը կատր-կտոր անելին: Սակայն դավադիրներից ոչ մեկին գտնել չաջողվեց, բոլորը հուսալիտք են թաքնվել էին տնիքում:

Պատմում են, թե ոմն Յիննա՝ Կեսարի բարեկամներից մեկը հենց նախորդ գիշերը տեսել է տարօրինակ մի երատ: Նա տեսել է, թե իբր Կեսարն իրեն Յիննային ճաշի է հրավիրել: Ինքը հրաժարվել է, բայց Կեսարը առարկութուններին ակամջ շղեկով բռնել է ձեռքը և հետք տարել Լուլվոյ, որ ֆորումում այրու է ևն Կեսարի մարմինը՝ Յիննան գնացել է անասնոց որպեսզի սրան իր վերջին առատիվը տուր թեև երբևից սլառձառով սիրտը լեցուն է եղել ահուգոցով: Ամբոխի մրջյն մեկը, սեռ Լեւոյ նրան, հարցրել է իշուսին, թե ո՞վ է նա, սա ով է Էրա անունը, Լրկորդն էլ երրորդին է իոխանցել, և իսկույն լուր է տարածվել, թե սա Կեսարի սպանողներից մեկն է՝ Դավադիրների մեջ իսկապես եղել է ոմն Յիննա՝ սրա անվանակիցը: Որոշելով, թե սա հենց նա է՝ ամբոխը Էւտվել է Յիննայի վրա և իսկույն դժբախտին բզիկ-բզիկ արել բուրի աչքի առաջ: Բրուտոսը, Կասիսը և մնացած դավադիրները, սարսափելի վախեցած այս իրադարձությունից մի քանի օր անց մեկնել են քաղաքից: Նրանց հետագա գործողությունները, պարսությունը և վախճանը մեր կողմից նկարագրված են Բրուտոսի կենսադրությունից մեջ:


LXIX Կեսարը մահացավ լի դամներ հիւունվեց տարեկան հասակում ապրելով Պոմպեոսից ոչ ավելի քան շուրս տարի: Կեսարին շվեճակվեց օգտվել այն հզորությունից ու իշխանությունից, որոնց նա մեծագույն վտանգների դեմ ձգտել է իր ամբողջ կյանքում: Ընդհանուր հասակը այդքան դժվարություններ նրան բաժին հասան միայն տիրակալի սնունդն ու փառքը, որոնք նրան բերեցին համաքաղաքացիների նախանձն ու անբարյացակամությունը: Նրա հզոր պահապան ոգին, որը նրա օգնել է աճող կյանքի ընթացքում մահվան հետո էլ նրան շքեց՝ գտնելով

պանութեան վրիժ սուրն՝ ճատապնդելով մալդասպաններին և հալածու-
մով նրանց ծովերով ու ցամաքներով՝ Ինչև որ նրանցից ոչ մեկը կեն-
յանի շմուց: Նա պատժեց բոլորին, և վ որ գեթ սրեէ բանով մասնակից
էր եղել կա՛ր այանութեան իրականացմանը, կամ դավադիրների ծրար-
քերին:

Մտրդկաչին կյանքի բարձր պատահականութիւններէն ա՛յն ազար-
մանալին Կասիոսին բամբին վիճակվեց: Փիլիպպոսն դաշտում պարտութիւն
կրելով՝ նա վերջ տվեց իր կյանքին, խոցվելով այն նոյն սրով որով
պանել էր Կեսարին:

Իսկ վերջնական ելևութետերից ամենանշանավորը եղալ սե՛ծ երկ-
այարի հայտնութիւնը, որը Կեսարի սպանութիւնից յոթ գիշեր անց
լայծաւորեն փայլափայտեց ու շքացավ ինչպէս և արևի լույսի թուլա-
յումը: Քանի այդ ամբողջ տարին արևի լույսը գունատ եղավ, արևը ծա-
լում էր ազոտ լույսով և քիչ ջերմութիւն էր տալիս: Դրա համար չէ
օդը պղտոր էր ու ծանր, որովհետև արևի տաքութիւնը ուժ չունէր մինչև
երկիր թափանցելու: Մասը օդում պտուղները խամրում էին ու շհասած
ցած թափվում: Կեսարի ուրվականի հայտնվելը Բրուտոսին առանձնա-
հատուկ պարզութեամբ ցույց էր տվել, թե այդ սպանութիւնը հաճո է
աստվածներին: Մհա թե ինչպէս է տեղի ունեցել այդ ամենը: Բրուտոսը
մտազիր էր զԵրբը Աքիդոսից անցկացնել մյուս մայր ցամաքը: Սովո-
րականի պէս նա գրշերը հանգստացել է վրանում, լացը լի բնել այլ
մտածելիք է եղել ապաւաչի մասին: Պատմում են, թե այդ մարդը բո-
լոր գորախարհերից քիչ է բնի կարիք ունեցել և ընդունակ է եղել ա-
թուն մնալ շատ երկար ժամանակ: Նա ինչ որ աղմուկ է լսել վրանի դռան
հոտ՝ վրանի մեջ արդեն հանգող լապտերի լույսի տակ նայելով շուրջը,
նա տեսել է վիթխարի հասակով և ա՛հա տեսելով մարդու սարսափելի
մի ուրվական՝ Սկզբում Բրուտոսն ապշել է, իսկ ապա, հենց որ տեսել է,
թե ուրվականն անշարժ է և նույնիսկ ոչ մի ձայն չի հանում, այլ լռին
կանգնած է իր անկողնու մոտ, հարցրել է, թէ ով է Ուրվականը պա-
տասխանել է «Բրուտո՛ս, ես քո շար ոգին եմ: Դու ինձ կտեսնես Փի-
լիպպոսն դաշտում»: Բրուտոսն անվախ պատաւի անել է «Կտեսնե՛մ», —
և ուրվականն իսկույնիսթ շքացել է: Կարճ ժամանակ անց, Բրուտոսն
իր զորքով կանգնած էր Փիլիպպոսն դաշտում՝ Անտոնիոսի ու Կեսարի
դեմ: Սոաջին ճակատամարտում նա հաղթանակ տարաւ՝ փախուստի
հատնելով իր առաջ կանգնած Կեսարի բանակին, և հետապնդման ժո-
մանակ քարուքանդ արեց նա ճախարհը: Երբ Բրուտոսը մտածեց տալ

երկրորդ ճակատամարտը դիշերը նրան հայտնվեց ուրվականը: Սա
ուշինչ շասաց Բրուտոսին բայց Բրուտոսը հասկացավ, որ իր բախտը
վճռված է, և նետվեց վտանգին ընդառաջ: Սակայն նա չընկավ ճակա
տամարտում: Իր բանակի փախուստի ժամանակ նա, ինչպես պատմում
են, բարձրացել է ինչ-որ զանոթափ և, մերկ կրծքով նետվելով սրի վրա,
ոյր նրա տակն է պահել իր բարեկամներից մեկը վախճանվել է:



ԱԳԵՍԻԱՅՈՒՆ ԵՎ ՊՈՍՏՂԵՐՈՍ



Ա գ Ե ս ի լ յ ա յ ո ս

I Մըքա Արքիզամոսը Զեքսիզամոսի որդին որը մեծ փառքով կառավարում էր լակեդեմոնացիներին իրենից հետո թողեց Ագիս անունով որդուն իր առաջին կնոջից՝ Լամպիդոցից, երեկի և արժանավոր մի կին, և երկրորդին՝ կրտսերին՝ Ադեսիլայոսին Սվալույա կնոջից՝ Մելեսիպիդոսի դստերից: Քանի որ թագավորի իշխանությունը օրենքով պատշ է անցնել Ագիսին, իսկ Ադեսիլայոսին վիճակված էր սպրել որպես սովորական քաղաքացի, սա լտացավ սովորական սպարտական՝ շատ խիստ ու դժվարություններով լեցուն, բայց փոխ բեր պատանիներին հնազանդության ընտելացնող դաստիարակություն: Այդ իսկ պատճառով ինչպես հաղորդում են Միմոնիդեսը Սպարտան սեվանել է «մահկանացուներին սանձահարող» իր կլեսաձևի շնորհիվ նա քաղաքացիներին ուրձնում է օրենքին ու կարգին արտասովոր կերպով հնաշանդ, ինչպես որ ձին են սկզբից ևեթ ընտելացնում սանձին: Իսկ այն երեխաներին որոնց թագավորական իշխանություն է սպասվում, օրենքն ազատում է նման սպարտականություններից: Հետևաբար, Ադեսիլայոսի դրությունը ուրբերվում էր սովորականից նրանով, որ նա իշխանությունն ստացավ, երբ ինքն արդեն ընտելացված էր հնազանդության: Ահա թե ինչու նա կարողանում էր այլ թագավորներից ավելի լավ յուր գնալ իր հպատակների հետ՝ առաջնորդի ու տիրակալի հատկություններին միավորելով դաստիարակության շնորհիվ ստացած պալությունն ու մարդասիրությունը:

II Եվ երբ գտնվում էր այսպես կոչված աղելաներում, մյուսողանների հետ, նրա սիրեցյալն էր Լիսանդրոսը, որը գերում էր ամենից առաջ իր բնածին զսպվածությամբ ու համեստությամբ: Պատանիների մեջ վաչկելով բուռն եռանդով, ամեն ինչում առաջինը լինելու ցանկությամբ օժտված լինելով ամուր մարմնով և աշխույժ բնավորությամբ որը ոչնչով չէր կարելի դասել Սգեսիլայուրը միաժամանակ աչքի էր ընկնում այնպիսի հնազանգությամբ ու հեղոթությամբ որ բոլոր հրամանները կատարում էր ոչ թե վախից, այլ՝ լողճմտանքից նրան ավելի շատ վշտացնում էին հանդիմանությունները, քան դժվարին աշխատանքը: Նրա գեղեցկությունը պատանեկան սուրիներին աննկատ էր դարձնում նրա մարմնական արատը՝ կաղությունը: Այնուամենայնիվ նա այդ բանը թեթև ու կենսուշախ էր տանո՞ւմ միշտ առաջինն էր ծիծաղում իր թերության վրա և դրանով ասես շտկում էր այն: Դրանից է՛լ ավելի նկատելի էր դառնում նրա փառաւիրությունը քանի որ նա երբեք մեղտեղ չէր բերում իր կաղությունը որպես պատրվակ որպեսզի հլածարվեր այն գործից կամ աշխատանքից: Մենք շունենք Ագեսիլայուսի ոչ մի քանգակը քանզի նա ինչը դա չէր ցանկանում սնույնիսկ մահից առաջ արգելել էր նկարել իրեն մեծ ամբիճակում կամ իր արձանը քանդակել: Ծեղեկություններ կան, թե նա ունեցել է ոչ բարձր հասակ և արտաքինով ոչնչով աչքի չի ընկել, բայց կայսառությունն ու կենսուրախությունը ցանկացած հանգամանքներում, աշխույժ բնավորությունը, դրավիչ դիմադծերն ու հաճելի ձայնը ստեպում էին մինչև խոր ծերություն նրան դերադասել գեղեցիկ ու փթթուն մարդկանցից: Ինչպես հաղորդում է թեոփրաստոսը, էֆորները տուգանք են դրել Արքիդամոսի վրա նրա համար, որ նա կին է առել չափազանց փոքրահասակ մեկին «քանզի,— ասել էս նրան իմ ղ համար ոչ թե արվաններ կ՞ծնի այլ արբայիկներ»:

III Ագիսի տիրաւթտության ժամանակ Ալքիբիադեսը Մեցիլայից փախել էր Հակեդամոն: Դեռ չէր հասցրել կարգին հարմարվել Սպարտայում, երբ նրան մեղադրեցին Ագիսի կնոջ՝ Թիմեայի հետ կապի մեջ: Ագիսն ինքն էր ասել թե իր նոր ծնված երեխային չի ընդունում որպես իրենը, այլ դա Ալքիբիադեսի որդին է: Թիմեան, ինչպես հաղորդում է Դուրիսը, դրանրց բնավ վշտացած չէր և տանը աղախիներն ներկայությամբ երեխային շշուկով անվանում էր Ալքիբիադես այլ ոչ թե Լեոտիբիզաս, իսկ Ալքիբիադեսին ինքն ասում էր, թե Թիմեայի հետ կենակցել է՝ նկատի շունենալով պատվազրկել նրան, այլ՝ փառասիրական ցանկությունից դրդված որպեսզի իր սերունդները թագաւորեն սպար

տացիների վրա Տեղի ունեցածից հետո Ալբերիադեսը թաքուն ծլկել է Լոտիդեմոնից՝ վախենալով Սգիսից: Երեխայի հետ էլ Ագիսը միշտ վերաբերվում էր արհամարհանքով, համարելով նրան ապօրինածին: Բայց Ագիսի վերջին հիվանդության ժամունակ Լեոտիքիդասը լացով ու խրնդ բանքներով հասավ այն բանին, որ արքան շատերի նեյ կայությանը նրան ճանաչեց որպես իր սրդին: Սակայն Սգիսի մահից հետո Լիսանդրոսը որն ամենացիների դեմ հաղթանակ էր տարել ծովում 1 մեծ ազդեցություն ուներ Սպարտայում առաջարկեց թագավորական իշխանությունը հանձնել Ագեսիլայոսին, քանի որ Լեոտիքիդասը ապօրինածին է և արժանի չէ այն ստանալու: Ուրիշ շատ քաղաքացիներ էլ հանդես եկան հօգուտ Ագեսիլայոսի և սկսեցին եռանդագին պաշտպանել նրան՝ հարգելով նրան բարոյական բարձր հատկանիշների և մեկ էլ այն բանի համար որ նա դաստիարակվել էր և ուսում առել իրենց հետ միասին: Սակայն Սպարտայում կար ոմն գուշակ Դիոպիթևս, որը դիտեր բալում հինավուրց մարգարեություններ և համարվում էր շատ իրազեկ մարդ ստվածային գործերում: Նա հայտարարեց, որ մեղք կլինի, եթե սպարտացիները թագավոր ընտրեն կադին, և այս գործը վերլուծելիս նա կարգաց հետևյալ մարգարեությունը

Ապարտա 1 շքի եկ հիմա Թեև դու հուրով դուռդ 1 ,
Դնում ես հաստատան քայլվածքով, բայց դու կազ իշխանություն կ ն յանես
Քեզ վիճակված է հաշակելու անուպասելի աղետներ բազում:
Քլ է երկար պիտի շարգացնեն կործանիչ պատերազմի ալիքները:

Այս լեմ առարկեց Լիսանդրոսը, ասելով, որ եթե սպարտացիներն այս պես վախենում են այս գուշակից, ապա նրանք պետք է ավելի շուտ դգուշանան Լեոտիքիդասից: «Քանզի — ասաց նա — աստվածության համար միևնույն է, թե թագավորում է ոտքից կալ ինչ-որ մեկը, բայց 1 թե թագավոր դառնա ապօրինածինը և, հետևապես ոչ Հերակլեսի սերունդը, ապա դա կլինի «կաղ թագավորություն»: Ագեսիլայոսը դրան ավելացրեց, թե Պոսելյոնն ինքն է վկայել Լեոտիքիդասի ապօրինի ծնունդը՝ երկրաշարժի միջոցով Ագիսին դուրս բռնելով ննջարանից իսկ Լեոտիքիդասը ծնվել է դրանից ավելի քան սասն ամիս հետո:

IV շենց այս հիման վրա ու այսպիսի հանդամանքներում Ագեսիլայոսը թագավոր հռչակվեց: Նա իսկույնեթ տեր կանգնեց Ագիսի ունեցվածքին այդ իրավունքից չզրկելով Լեոտիքիդասին՝ որպես ապօրինածը նի: Սակայն տեսնելով, որ Լեոտիքիդասի մոր կողմի ազգակիանները՝ լիովին կարգին մարդիկ խիստ կարիքի մեջ են Ագեսիլայոսը նրանց տվեց

ունեցվածքի կեսը: Այսպես կարգադրելով ժառանգության գործը նա Նախանձի ու անբարեկամության փոխարեն իր համար փառք վաստակեց և համարաշարացիների համակրանքը շահեց: Քսենոփոնի ասելով, Ագեսիլացոսը ամեն ինչում հնազանդվելով իր հայրենիքին՝ մեծագույն իշխանության հասավ և անում էր այն ամենը, ինչ ուզում էր: Ահա թե ինչն է նկատի ունենում Քսենոփոնը: Այն ժամանակ պետության մեջ ամենամեծ ուժը էֆորսներն էին և ավագները: Կռաշիններն իշխանության գլուխ էին լինում միայն մեկ տարի, երկրորդներն էլ իրենց տնտեսը պահպանում էին ցմահ և լիազորություն ունեին թագավորների իշխանությունը սահմանափակելու ինչպես: պատմվում է կիուրգոսի կենսագրության մեջ: Դրա համար էլ հնուց ի վեր թագավորները նրանց հետ բժառության մեջ են այդ Բշնամանքը փոխապես վ հարից ըզի: Բայց Ագեսիլացոսն ընտելց այլ ուղի՝ Վիճելու և թշնամանալու փոխարեն, նա ամեն կերպ սբրաշահում էր նրանց, ոչինչ չձևնարկելով առանց նրանց խորհրդի, իսկ նրանց կողմից կանչվելիս՝ միշտ շահապում էր ներկայանալ սրբան հնարավոր 1 շուտ: Ամեն անգամ, հենց սր էֆորսները հայտնվում էին 1 բրեւ պահին նստած դործեր էր վճռելիս լի Կում, նրանց ընդառաջ էր ելնում: Յուրաքանչյուր նոր ընտրված ավագի նա միշտ տաք թիկնոց և ցուլ էր ուղարկում: Այս արարքներով նա ուզում էլ ցույց տալ թե հարգում է նրանց և դրանով բարձրացնում է նրանց արժանապատվությունը իսկ իրականում, շրջապատողների համար ան նկատ էլ ավելի էր ամբացնում իր հզորությունը և մեծացնում թաւավորական իշխանության նշանակությունը՝ շնորհիվ իր նկատմամբ եղած համբնդհանուր համակրանքի:

V Համարաղաքացիների հետ իր Վարաբերությունն ընդ նա ան լասիր էր, երբ բանը վերաբերում էր թշնամիներին, այլ ոչ թե բարեկամներին: Թշնամիներին նա անարդարացիորեն վնաս լեր պատճառում, իսկ բարեկամներին աջակցում էր նաև անարդարացի արարքներում: Ագեսիլացոսը ամոթալի բան էր համարում շհարդել հակառակորդներին եթե նրանք դործում էին արժանապատվորեն, բայց չէր կարողանում հանդիմանել իր բարեկամներին, երբ նրանք սխալվում էին: Դեռ ավելին էա հպարտանում էր թե օգնել է նրանց դրանով իսկ մասնակցություն ունենալով կատարվող սխալներին, բանդի կարծում էր, թե բարեկամների նկատմամբ ցուցաբերվող ոչ մի օգնություն ամոթալի բան չէ: Երբ նրա թշնամիները դժբախտության մեջ էին ընկնում, նա առաջինն էր առտահայտում իր համակրանքը և սիրով օգնության էր հասնում նրանց եթե նրանք խնդրում էին: Այսպես նա համբնդհանուր սեր

1) նվաճում և լուրրին իր կողմը դրավում: Նկատելով այդ և վախենալով Սգլսիլայոսի հզորացումից էֆորոսները նրա վրա տուգանք դրին այն պատրվակով, թե պետության հպատակներին նա վերածում է իր սեփականության, Քանզի, ինչպես բնախույզները Լնթադրում են, որ եթե տիեզերքում վերանային վեճերն ու թշնամանքը, ապա բոլոր իրերի միջև եղած համաձայնության պատճառով ոչ միայն կանդ կառնեին երկ յայլին լուսատուները, այլև կդադարեր ամեն մի ծնունդ ու շարժում, — այսպես էլ ըստ երևույթին լակեդեմոնացի օրենսդիրն իր պետության մեջ մտցրեց փառասիրություն ու մրցակցություն՝ որպես միջոց առաքի նության հրահրման, ցանկանալով, որ վեճերն ու մրցումները միշտ դոյություն ունենան արժանավոր քաղաքացիների միջև Քանզի փոխադարձ հնադանդությունն ու բարյացակամությունը որին հասնում են առանց նախնական պայքարի անգործունեության ու երկշոտության դրսևորում է և անարյարացիորեն է կրում համախոհություն անունը: Որոշ մարդ կանց ամար ակնհայտ է, որ դա դեռևս Հոմերոսն էր հասկանում նա Ադամեմնոնին լէր պատկերի գոհ այն բանից, որ Ոդիսևսն ու Աքիլլեսը միմյանց անպատվում են «սարսափելի բռներով», եթե շհամարեր, որ լավագույն մարդկանց միմյանց հետ ունեցած նախանձախնդի բանհամաձայնությունները գործին մեծ օգուտ են լերում: Մակայն այստեղ հնարավոր չէ յուր գնալ առանց սրոշ սահմանափակումների, որովհետև շափագանց հետուն գնադոյ մրդությունը վնասում է պետությանը և մեծ ապականեր է բերում

VI Շաղիվ էր Ադեսիլայոսն անցել գարակալության որ Ասիայից յամանած մարդիկ լուր տվեցին թե պարսից արքան մեծ նավատորմիդ է պատրաստում, որպեսզի լակեդեմոնացիներին դուրս մղի ծովից: Լիսանդրոսը ցանկանալով իսկույնեթ ուղևորվել դեպի Ասիա, որպեսզի օգներ իր բարեկամներին, որոնց թողել էր այնտեղ որպես քաղաքների կառավարիչների ու տիրակալների և որոնք այնուհետև դաժանության ու բռնության համար կամ վոնդվել էին համաքաղաքացիների կողմից կամ սպանվել համողէց Ագեսիլայոսին պատերազմ սկսել և հեռավոր արշավանք ձեռնարկել ծովով այն կողմն անցնելով ավելի լաղ, քան բարբարոսը կավարտեր իր նախապատրաստությունները: Միաժամանակ Լիսանդրոսը նամակ գրեց Ասիայի իր բարեկամներին, որպեսզի նրանք դեսպաններ ուղարկեին Լակեդեմոն և Ագեսիլայոսին խնդրեին դառնալ իրենց զորավարը Այսպիսով, Ագեսիլայոսը ներկայացավ ժողովրդական ժողովին և համաձայնեց իր վրա վերցնել պատերազմի դեկավարությունը եթե իրեն տան էրեւոն պալտացի զորապետ էր ու խոլ հրդատու-

ներ, երկու հազար ընտիր ազատարձակյալներ և վեց հազար զինվոր՝ դաշնակիցների կողմից: Շնորհիվ Լիսանդրոսի աջակցութեան, այս պահանջները սիրով ընդունվեցին, և Ագեսիլայոսը երեսուն սպարապեդների հետ ուղարկվեց որոնց մեջ Լիսանդրոսը հիրավի սուաջինն էր ոչ միայն իր փառքով ու ազդեցութեամբ, այլև Ագեսիլայոսի հետ ունեցած իր բարեկամութեան շնորհիվ, որն իրեն է՛լ ավելի սպարապեդ էր զգում նրա հանդեպ այս արշավանքի համար, քան թագավորական իշխանութեան:

Մինչ Ագեսիլայոսի գործը հավաքվում էր Գերեստոն և նա իր բարեկամների հետ ժամանեց Ավլիս և գիշերեց այնտեղ: Երազում նատեսավ, որ ինչ որ մեկը իրեն է դիմում այս խոսքերով «Լակեդեմոնացիների արքա դու հասկանում ես, իհարկե որ անցյալում՝ Սպամեմոնոնից և Այծմ քեզնից բացի դեռևս ոչ ոք չի եղել համայն Հունաստանի սուաջնորդ: Քանի որ դու հիմա ղեկավարում ես այդ նույն ժողովրդի, հանդես ես գալիս այդ նույն թշնամու դեմ և պատերազմի ես մեկնում այդ նույն տեղից ապա պարզ է, որ քեզ անհրաժեշտ է գոհ մատուցել այն աստվածուհուն, որին մատուցեց Ագամեմոնը՝ այստեղից նավելիս»: Ագեսիլայոսը իսկույնեթ հիշեց այն աղջկան, որին հայրը գոհաբերեց հնազանդվելով քրմերին: Սակայն նա չվախեցավ, ավ՛ արթնանալով, պատմեց իր էրազը բարեկամներին և հայտարարեց, որ անհրաժեշտ է աստվածուհուն մատուցել այն մեծարանքները, որոնք նրան րավականութուն են պատճառում, բայց և մտադիր լե՛ հին զորավարի ազիտութունը նմանակել Ագեսիլայոսի պատվերով մի եղջերուի դարգարեցին և նրա քուրմը այդ կենդանուն ղոհաբերեց, սակայն ոչ ըստ բեովտացիների կողմից սահմանված այն ծելի, որին սովորաբար հետևում էր քուրմը: Լսելով այս մասին, բեոտաբոսները սաստիկ բաշկացան և իրենց սպասավորներին ուղարկեցին Ագեսիլայոսին արդելու զոհ մատուցել հակառակ բեովտացիների օրենքների և հինավուրց ժեսերի: Սպասավորներն էլ ոչ միայն կատարեցին հանձնարարութունը, այլև զոհասեղանից մի կողմ նետեցին զոհաբերված կենդանիների մասերը: Սրտնեղված Ագեսիլայոսը նավէց գնաց թեբեացիների վրա վրդովված և միևնույն ժամանակ սաստիկ շփոթահար եղած այս նախանշանակով, մտածելով, թե այժմ արշավանքն իր համար անհաջող է լինելու և ինքը չի կատարի այն ինչ նախանշել էր:

VII Երբ նրանք հասան Եփեսոս Լիսանդրոսի ազդեցութունը և նրա հանդեպ համընդհանուր հարգանքը շուտով ճնշող ու անտանելի

դարձան Ազեսիլայոսի համար: Իրոք ժողովուրդը ամբոխվում էր Լիսանդրոսի դռների մտա և բուրբը նրա հետևից էին դնում՝ միայն նրան յտոայելով, ասես թե Ազեսիլայոսը սոսկ տխրոսով ու գլխավոր հրա յանատարի անունով օժտված լիներ որոնք ստացել էր օրենքի շնորհիվ իսկ իսկական տիրակալը, որն ամեն ինչ կարող է և ամեն ինչ տնօրինում է, Լիսանդրոսն է: Չէ՞ որ Ասիա ուղարկված զորավարներից ոչ ոք չէր կարողացել դառնալ այդքան հզոր ու ահեղ ոչ ոք նրանից ավելի լարիք չէր գործել իր բարեկամներին և շարիք թշնամիներին: Այդ բուրբը դուռն էր թարմ էին մարդկանց հիշողության մեջ: Դրան ավելացրած տեսնելով Ազեսիլայոսի վարվեցողության պարզությունը, բնականությունն ու մարդամոտությունը մինչդեռ Լիսանդրոսն իր խոսքում դրուսերում էր կոպտություն, խստություն և կարճատևություն նրանք հաճկատարություն էին անում Լիսանդրոսի մոտ, ջանալով ամեն կերպ հաճոյանալ նրան միայն Մնացած սպարտացիները ծանր էին տանում ու չն անհրաժեշտությունը որ իրենք ավելի շատ Լիսանդրոսի կամակարարները պետք է լինեն, քան արքայի խորհրդատուները: Վերջապես վիրավորված զդաց Ազեսիլայոսն ինքն էլ, որը, թեև նախանձկոտ էլ չէր և չէր վշտանում այն բանից, որ պատիվներ Լն տալիս իրենից բացի ինչ-որ մեկին ևս այնուամենայնիվ շատ փառու էր էր և չէր ցանկանում ուրիշներից ցածր կանգնել: Ես ամենից շատ փախենում էր, որ Լթե փայլուն գործեր կատարվեն, դրանք վերադրվելու են Լիսանդրոսին՝ նրա նախկին փառքի սլատճառով: Ուտի Ազեսիլայոսն սկսեց իրեն պահել այսկերպ նախ՝ չա դեմ էր դուրս գալիս Լիսանդրոսի բուրբ խորհուրդների ու բուրբ նախաձեռնություններին, որոնց վերջինս արդեն կպած էր լինում առանձնահատուկ փութաջանություններ, ի չիք էր անում դրանք ու դրանց տեղն անց էր կացնում բուրբովին ուրիշ բաներ: Ի, մոտ խընդրանքներով եկողներից նա առանց բավարարության ճաստպարհ էր դնում բուրբ նրանց, ովքեր հատկապես Լիսանդրոսի հետ էին հույսեր կապում: Ճիշտ այդպես էլ դատարանում նրանց, ում Լիսանդրոսը պատաստվում էր վնասել գործը շահում էին և ընդհակառակը, նրանց, ում նա ջերմեռանդորեն հովանավորում էր դժվար էր լինում խուսափել պատժից: Քանի որ սա պատահական բան չէր, այլ կատարվում էր օր ու օր և ասես թե դիտավորյալ կերպով, Լիսանդրոսը վերջապես հաստացավ պատճառը և դա շթաբցրեց իր բարեկամներից, այլ ուղղակի սուսաց թե նրանք շնորհազրկվել են իր պատճառով: Միաժամանակ նա կոչ էր անում այժմ սիրաշահել արքային և նրանց ովքեր ավելի մեծ կշիռ ունեն, քան ինքը՝ Լիսանդրոսը:

VIII. Մակայն շատերին թվում էր թե սյդ վարվելակերպով և այդ պիսի խոսքերով նա ուղում է անբարյացակամություն անաջացնել թագավորի հանդեպ: Ուստի Ադեսիլայոսը ցանկանալով նրան է՛լ ավելի խոցել, նրան հանձնարարեց մսի բաշխումը և ինչպես ասում են, շատերի ներկայությամբ հայտարարեց «Թող հի՛նա այս մարդիկ խոնարհ վերու դնան իմ մտաբաժանի առաջ»: Դրանից վշտայեկ, Լիսանդրոսն ասաց նրան «Գու լա՛վ է, կարողանում ստորացնել բարեկամներիդ Սգեսիլայոս»: — «Այո — սլատասխանեց Ագեսիլայոսը, — նրա՛նց, ովքեր ուղում են լինել սոռավել հոոր, բան ես եմ»: Լիսանդրոսն առարկեց «Գուցե դա ճիշտ է՝ ավելի շատ կիրառելով քո խոսքերի նկատմամբ, բան իմ արարքների Տո՛ւր ինձ, այնուամենայնիվ, որևէ տեղ կամ պաշտոն, ուր էս կարողանամ բղ օգտակար լինել՝ քեզ ըվշտացնելով» Սրանից հետո Լիսանդրոսն ուղարկվեց Հելլեսպոնտոսի մոտերքը և այնտեղ Ագեսիլայոսի կողմը գրավեց Սպիթրիդատեսին՝ Փառնաբազոսի սատրապությանից: Այս պարսիկը մեծ հարստություն ուներ և երկու հարյուր հեծյալ Սալյա ն Լիսանդրոսի սայրույթը շէր մարել թաքցնելով վրավորանքը նա մտադրվեց Նույնիսկ խլել թագավորական իշխանությունը երկու տոհմերից և այն տալ իսկոր սպարապետներին: Եվ, հավանաբար, Ագեսիլայոսի նկատմամբ թշնամանքից նա մեծ հեղաշրջում կկատարեր պետության մեջ, եթե շղոհվեր ավելի վաղ բեռվտական արշավանքի ժամանակ: Փառասեր բնավորության տեր մարդիկ, ևթև պետական ասպարեզի լրելց արարքներում շափր շին պահպանում սովորաբար այսպես դժբախտության են արժանանում սպասվելիք օգուտներն ատանալու փոխարեն: Եթե Լիսանդրոսը կուպիտ էր և շափր շէր ճանաչում իր փառասիրության մեջ սպա Ագեսիլայոսն էլ անշուշտ կարող էր ուրիշ, արժանավաչել միջոցներով ուղղել այդ նշանավոր և իստատենը մարդու սխալները: Բայց, ըստ Լրևույթին, նույն ատկ կիրքը խանգարում էր առաջինին ճանաչել իր պիսի իշխանությունը իսկ երկրորդին՝ առանց բորբոքվելու տանել լր քնկերոջ և խալնլ րը:

IX. Սկզբում Տիտասարլրնեսը, վախենալով Ագեսիլայոսից, նրա հետ պայմանագիր կնքեց, ըստ որի սպարալց արքան հունական քաղաքներին խոստանում էր ազատություն և սեփական օրենքներով սպրելու իրավունք: Հետագայում սակայն, որոշելով որ ինքն արդեն բավականաչափ ուժեր ունի, պատերազմ սկսեց: Ագեսիլայոսը սիրով քնդունեց մարտակոչը քանի որ մեծ հուսեո էր ետպում իր արշավանքի հետ: Բացի դա, նա ամոթալի բան էր համարում որ «տասը հաւարը» Քսենոփոնի դեկավարությամբ մինչև իսկ ծովն էր հատել պարտության մատնելով թա

լավորին, հենց որ դա ցանկացել են, մինչդեռ ինքը, առաջնորդելով լակեղեմոնացիներին, որոնք գերագույն տիրապետութեան են հասել ցամաքում ու ծովում, չի կարող հույներին հիշարժան որևէ արարք ցույց տալ: Որպեսզի Տիսսափերնեսին շուտափուլի փոխհատուցի խորամանկութեամբ կատարած ուխտադրժութեան դիմաց, նա ձևացրեց, թե պատլաստվում է դեռևս Կարիաչի դեմ: Իսկ երբ այնտեղ հավաքվեցին բարբարոսների ուղմական ուժերը, նա անսպասելիորեն ներխուժեց Փոչուզիա: Այստեղ նա նվաճեց շատ քաղաքներ և մեծ հարստութիւններ զավթեց: Իրանով նա իր բարեկամներին ցույց տվեց որ պայմանագրի խախտումը նշանակում է արհամարհանք աստվածների և նկատմամբ, իսկ թշնամուն խաբելը, ընդհակառակը ոչ միայն արդարացի է սչև մեծ փառք է բերում, բավարարութիւն և օգուտ: Քանի որ թշնամին գերազանցում էր նրա հեծելազորին և բացի այդ, զոհաբերութեան ժամանակ նախանշանակներն աննպաստ էին եղել, Ագեսիլայոսը վերադարձավ Յփեսոս և սկսեց հեծելազոր հավաքել հրամայելով, որ յուրաքանչյուր հայուստ մարդ էթէ նա ինքը չի ուլո մ մասնակցել արշավանքին, իր փոխարեն դուրս բերի մեկական ձի և ձիավոր Շատերը դրան համաձայնեցին, և շուտով վախկոտ ծանրազեն զինվորների փոխարեն Ագեսիլայոսը մտտ հավաքվեց բազմամարդ ու մարտունակ հեծելազոր: Նա ատում էր, թե Ագամեմնոնը հրամայի վարժեց, երբ բանակից բաց թողեց վախկոտ հարուստին՝ նրա փոխարեն ստանալով հիանալի մի զամբիկ: Ագեսիլայոսի հրամանով ուղմավարի վաճառականները գերիներին մերկ էին վաճառում: Զգեստները սիրով էին գնում բայց գերիների վրա, որոնց տկուր մարմինները փափկասուն կշանքի պատճառով սպիտակ էին՝ ու զիր բոլորը ծիծաղում էին՝ նրանց համարելով աշխատանքի համար տնօգտակար, ոչ մի գին չունեցող: Տեսնելով այդ՝ Ագեսիլայոսը տեղից վեր կացավ և ասաց «Սրանք մարդիկ են որոնց հետ դուք լուվում եք, իսկ սրանք իրեր, որոնց սլատճառու՛վ դուք պատերազմ ել մղում»:

X Երբ մոտեցավ ուղմական դորժողութիւնները վերսկսելու օր մանակը Ագեսիլայոսը հայտարարեց, թե զորքը տանելու է դեպի Էփիա: Այս անգամ նա չէր խաբում Տիսսափերնեսին, բայց սա շվաստահելով Ագեսիլայոսին այն բանից հետո, երբ ինքը նրա կողմից մոլորութեան մեջ էր դրվել, այժմ ինքն իրեն խաբեց: Սրան թվում էր թե Ագեսիլայոսը որը իր կարծիքով հեծելազորի պակասութիւն էր զգում, հիմա Կարիաչի վրա է գնում ուր տեղանքը բարենպաստ չէ հեծյալների շարժման համար: Իսկ երբ Ագեսիլայոսը ինչպես նախապէս ասել էր հասավ Սարդեսի մոտի հսրթավայրը Տիսսափերնեսն ստիպված եղավ

քաղաքին օգնութեան շտապել: Ընդ որում սա իր հեծելագործով հարձակ-
վեց հակառակորդի զինվորների վրա, որոնք հարթավայրով մեկ ցրիվ
էին եկել կողոպուտի համար և դրանցից շատրին ոչնչացրեց: Ազեսի
լայոսը մտածելով, որ հակառակորդի հետևակը դեռ լի մտեցել, իսկ
ինքն էլ ձեռքի տակ իր ամբողջ զորքն ունի, որոշեց որքան հնարավոր
է շուտ էակատամարտ տալ: Թլթեաղեն հետևակը կանգնեցնելով հեծ-
լալների սիշե, նա դրանց հրամայեց հարձակվել ու հարվածել թշնա-
մուն՝ շիրքցնելով ոչ մի բռակ, ինքն էլ հետևից տարավ ծանր հետևակը:
Լարբարոսները փախուստի մտնովեցին, և հուլները նրանց հետապըն-
դելով՝ շատերին սպանեցին ու գրավեցին թշնամու ճամբարը: Այս ճա-
կատամարտից հետո հուլները ոչ միայն կարողանում էին անարգել կո-
ղոպուտ ձեռք բերել և ստրուկներ ու անասուններ բշել ուսնել արքա-
յական տիրույթներից այլև բավականութեամբ տեսան, որ Տիսսափերեն
ը՝ հուլների լարբարոսն թշնամին արդարացի հատուցում ստացալի
Արքան անհասրազ նրա դամ ուղարկեց Տիթրավատսին, որը Տիսսափեր-
նեսի գլուխը կտրեց և այս դարձավ դեպի Ազեսիլայոսը, խնդրելով վերջ
տալ պատերազմին և հետ նավել դեպի տուն՝ ընդ որում առաջարկելով
դրամ, բայց նա լրատախանեց, թլ իսաղալութեան հարցը կարող է
որոշել միայն Սպարտան, իսկ ինչ վերաբերում է իրեն ապա ինքն ավել
լի շատ բավականություն է ստանում իր զինվորների հարստացման մեջ
քան այն բանի, որ ինքը հարստանա Եվ ընդհանրապես էլ, ասաց նա
հուլների մոտ գեղեցիկ է համարվում ոչ թե թշնամուց նվերներ, այլ
ոսղմա՛լար ստանալը: Մակայն որպէսլի երախտագիտութեան արտա
հայտեր Տիթրավատեսի հանդեպ որը պատժել էր հուլների ընդհանուր
թշնամի Տիսսափերենսին, նա իր զորքով դուրս լկավ Փոլուզիա՝ պար-
սիկից վերցնելով երեսուն տողանդ սրպես ճանապարհածախս:

Ճանապարհին նա սկիտալա սոս ցավ սպարտական իշխանութեան
ներկց, որոնք նրան հրամայում էին վերցնել նաև նավատորմի հրա-
մանատարութեանը Այսպիսի պատիվ ոչ որի նկատմամբ չէին ցուցա-
բերել, Ազեսիլայոսից բացի: Ես, անվիճելիլի բ'ն եղել է, ինչպես ասում
է Թեոպոմպոսը ամենամեծն ու ամենահայտնին իլ ժամանակակիցների
մեջ, բայց և ամենքից ավելի հպարտանում էր իր անձնական հատկա-
նիշներով, քան վիթխարի իշխանութեամբ Այթմ, սակայն, նա, ինչպէս
թվում է, սխալ կատարեց՝ նավատորմի հրամանատարութեանը հանձ-
նարարելով Պիսանդրոսին Չնայած այն բանին, ոլ կային ավելի վոր-
ձառու և բանիլաց մարդիկ, նա հաշ լի սռավ ոլ թե հայրենիքի շահերը

այլ ազգակցական զգացմունքները և ի հաճույս իր կնոջ, որի եղբայրն էր Պիսանդրոսը, վերջինիս նշանակեց ծովային ուժերի պետ:

Ճ1 Ազգեսիրայտուն ինքը գորքով մտնելով Փառնաբազուսին և նթտկա հոյր, ոչ միայն ընկավ այնպիսի տեղեր որոնք լի էին ամեն անհրաժեշտ և սնկրով, այլև շատ դրամ հավաքեց: Անցնելով մինչև բուն Պափլագոնիս նա իր կողմը գրավեց Պափլագոնիայի թագավոր Կոտիսին, որը հիանալով նրա արիութեամբ ու աղնվութեամբ ցանկանում էր բարկամ լինել նրան: Սպիթրիդատեսն էլ, այն ժամանակվանից ինչ բաւանով էր Փառնաբազուսից և անցել Ազգեսիրայտուսի կողմը, մշտապես սպիկեցում էր նրան բոլոր արշավանքներում: Նա մի որդի ունեւ՝ գեղցիկ մի պատանի, Մեգալատես անունով որին Ազգեսիրայտուսը ջերմութեւ սիրում էր: Սպիթրիդատեսը մի գուտար էլ ունեւ՝ գեղեցիկ, հասած ու լի Ազգեսիրայտուսը ամուլեց Կոտիսին ամուսնանալ սրա հետ, իսկ ինքը նրանից լուրջեւելով հազար հեծ ալ ու երկու հազար թեթեալեն՝ Եռեան՝ վերադարձով Փոյուզիա: Նա սկսեց ամայացնել Փառնաբազուսի Երկիրը, որը դիմադրութեւն ցուլց չէր տալիս, չէր ապավինում նույնիսկ բերդերին, այլ հետը վերցնելով իր դրամի ու դանձի մեծ շատը, թափառում էր իր Երկրով մեկ՝ խուսափելով Ազգեսիրայտուսին հանդիպելուց: Վերջուպէս Սպիթրիդատեսը արտրտացի Հերիսիդասի օգնութեամբ գրավեց նրա համբալը Երկիրը նրա սոց արտտութեանը: Սակայն Հերիսիդասը թալ լ ի լ ասկողութեւն կարգեց գրավածի վրա, լարս աս յ յ է ին ստիպելով վերագործնել ավարը և ամեն ինչ մանրամասն դնելով ու քննելով, որ ջղայնացրեց Սպիթրիդատեսին, և սա էլ լսելուցն իր պափլագոնացիներով հեռացավ Սարդես: Դա, ինչպես պատմում են, ծայրահեղորեն տխրեցրեց Ազգեսիրայտուսին: Սա դժգոհ էր ամենից առաջ այն բանից, որ գրկվել էր այնպիսի ազնիւ մարդուց, ինչպիսին Սպիթրիդատեսն էր, իսկ նրա հետ և՛ նշանակալի ազգական ուժերից: Ապա նա ամաշում էր որ իրեն կարող էն նախատել կծծիութեան ու շահամուտութեան համար մինչդեռ ինքը միշտ ձգտում էր դրանցից մաքրել ոչ միայն իր հողին, այլև՝ հայրենիքը: Այս երկու ակնհայտ պատճառներից բացի նրան ոչ պակաս տանջում էր սերը Մեգաբատեսի հանդեպ, թեև, երբ պատանին նրա մոտ էր լինում նա համառորեն, ամբողջ ուժով ջանում էր ճնշել այդ կիրքը: Մի անգամ երբ Մեգաբատեսը մոտեցավ ողջունելու և ցանկացավ գրկել ու համբուրել նրան, Ազգեսիրայտուսը խուլս տվեց համբուլրից: Պատանին շփոթահար եղավ, դս դարեց նրան մոտենալ և ողջունում էր միայն հեռից: Այնժամ Ազգեսիրայտուսը ափսոս-

սալով, որ զբերվել է նրա փառաքշանքից ձևացրած զարմանքով հարց
 բեց, թե ինչ է պատահել Մեզաբատեսին ինչո՞ւ է դադարել համբուրելով
 ողջունելուց: «Դու ինքդ ես մեղավոր,— պատասխանեցին բարեկամնե
 րը,— ջանի որ համբուրյններ շես ընդունում գեղեցիկ տղայից, աչլ վա
 խեցած փախչում էս նրանից: Իսկ նրան հիմա էլ կարելի է համոզել, որ
 քեզ մոտ դա համբուրներով, էթև դու նորից երկշտուություն չդրսևո
 բես»: Արոշ լուսնից ու մտորմունքից հետո Ադլ իլաչոսը պատաս
 խանեց «Պետք չէ, որ դուք համոզեք նրան չանի որ ես ավելի բա
 վականություն եմ զգում, որ նորից ինքս իմ մեջ սկսեմ աչս պաչքա
 րը հանուն նրա համբուրյնների, քան ունենամ բոլոր աչն դանձերը, որ
 ես լրբեք տեսել եմ»: Սյուլես էր իրեն պահում Ադեսիլաչոսը, երբ Մե
 զաբատեսը մոտիկ էր Իսկ երբ տղան հեռացավ, նա աչնպիսի կիրք
 զգաց սրա հանրեպ որ դժվար է ասել՝ իրեն հեռո՞ւ կպահեր համբուր
 ներից եթե նա նորից հայանվեր իր առաջ:

XII Այո՞ղ ժամանակ անց, Փառնաբազոսը ցանկացավ բանակցու
 թյուններ ի մեջ մտնել Ադեսիլաչոսի հետ: Նրանց հանշիպումը հաջողեցրեց
 կիզիկիացի Ապուլոփանեսը՝ հյուրընկալը մեկի և մյուսի: Ադեսիլաչոսը
 առաջինը դալով նշանակված տեղը իր բարեկամների հետ տեղավորվեց
 սովերում խիտ խոտերի վրա՝ սպասելով Փառնաբազոսին: Երբ նա
 եկավ ու տեսալ սրանկած Ադեսիլաչոսին, աղա նրա հանդեպ ունեցած
 հարգանքից, ուշադրություն չդարձնելով իր համար փռված փափուկ մոր
 թիներին ու գույնզգույն գորգերին, ինքն էլ նստեց գետնին, թեև հագած
 էր զարմանալի նուրբ ու շքեղ ասեղնագործված զգեստ: Իրան ողջունե
 լուց հետո, Փառնաբազոսը սի գլուխ նախատինք էր թափում լակեղեմո
 նացիների հասցեին, քանզի նրանք շատ բանով էին իրեն պարտական
 աթենացիների հետ պատերազմելիս, իսկ հիմա էլ իր երկիրն էին կո
 զոպաում: Ադեսիլաչոսը տեսնում էր որ իրեն ուղեկցող սպարապետները
 ամոթից գլուխները քարշ են զցել և անհարսար դրության մեջ ընկել,
 հասկանալով, որ Փառնաբազոսը իսկապես սնարդարացիորեն է վիրա
 վորված: Ուստի նա պատասխանեց «Այո, Փառնաբազոս, առաջ մենք
 թագավորի բարեկամներն էինք և բարեկամաբար էինք վերաբերվում
 ն, ա շահերին: Հիմա մենք դարձել ենք նրա թշնամիները և թշնամաբար
 ենք վարվում նրա հետ: Տեսնելով որ դու ինքդ ցանկանում ես թագա
 վորի սեփականությունը լինել, մենք իհարկե, ջանում ենք վնասել նրան
 հանձին քեզ: Բաչց աչն օրվանից էրբ դու դերադասես կոշվել հույների
 բարեկամ ու դաշնակից աչլ ոչ թե թագավորի սարուկը կարող ես վրս

սահ լինել, որ և այս լորբը և այս զենքը, և նավերը, և մեզանկ ց
չուրաքանչյուրը կդառնան քո ունեցվածքի պաշտպանը ու պաշտպանը քո
տղատութեան առանց որի մարդկանց համար գոյութիւն չունի ոչ մի
զեղեցիկ ու ոչ մի ցանկալի բան»։ Այնժամ Փառնաբազուսը նրա առջև
լացեց իր իսկական մտադրութիւնները «Եթէ թագավորը,—ասաց նա,—
ուղարկի մի ուրիշ զորավարի ասլա ես ձեր դաշնակիցը կդառնամ։ Իսկ
եթէ նա գերագույն հրամանատարութիւնն ինձ տա ասլա ես եռանդի
ոչակաս շեմ դգա, որպեսզի մտքանշեմ ձեր դէմ հանուն իմ արքայի ու
մնասեմ ձեզ»։ Ագեսիլացոսը գոհ մնաց այս պատասխանից և, բռնելով
Փառնաբազուսի ձեռքը և նրա կողքին կանգնելով՝ ասաց «Նա կցանկա
նայի, Փառնաբազուս, որ դու, նման դդայմունքներով լինելիք մեր լա
վազույն բարեկամը, քան թէ թշնամին»։

XIII Փառնաբազուսը իր մարդկանցով հեռացաւ լսկ Նրս որդին,
հետ մնալով մոտ վազեց Ագեսիլացոսին և ժպտալով ասաց «Ագեսի-
լացոս, ևս քեզ իմ հյուրընկալն եմ դարձնում»։ Եվ այս ասելիս նրան
ավելի ձեռքի տեղը Ագեսիլացոսը բիրտով ընդունեց նվերը և, պատանու
զեղեցկութեամբ ու բարեկամական զգացմունքներով հմայված նայլց
շուրջը՝ ներկաներին, որպեսզի նրանց մոտ սրիէ արժանատիոր բան դրա
ներ իրրե պատասխան բնձա զեղեցիկ ու այնպիսիս արարիկի համար
նկատելով գրայիր Եգեսիլ Նաչար՝ լսակազին լա՛ նակները ձիա
սարրի լրս Նա իսկույն ամէլ ուշի լարդարանքը Լ նվիրեց պատանուն
Հետ Լ Սիլ վրայսով մշտապես լիշում էր տպային, և հետագայում երբ
սա լր լրայրների հետ սրտարովել էր հայրենի տե՛ից և ապաստան էր
լնալ ու ճեյտարեն ամ, Ագեսիլացոսը սրա հանդեպ մեծատույն ուշա
լր թլան սրակորեց և օգնում էր նույնիսկ սիրային գործերում։ Սա սի-
լուհարովել Լ, ամենացի մի ըմշշամարտիկ տղայի, և քանի որ վերջինս
սրպէս աշա շափազանց բարձրահ սակ էր և ամրակազմ, նրան կարող
էին շխուչատրել մասնակցելու օլիմպիական մրցումներին։ Պարսիկը
նրա վերաբերյալ խնդրանքով զիմլց Ագեսիլացոսին, որը ցանկանալով
սիրաշահել իր հյուրընկալին ջերմորեն կպավ այդ գործին ու գլուխ
բերեց, թէև՝ մեծ դժվարութեամբ։ Ագեսիլացոսը մնացած բոլոր գործերում
խստորեն հետևում էր օրենքին բայց երբ բանը գալիս էր բարեկամու
թեանը, արդարութեան հանդեպ նվիրվածութիւնը համարում էր դա
տարկ պատրվակ։ Սլսպես, օրինակ՝ պատմում են թե նրա կողմից կա
րիացի Հիդրեասին հետևյալ բովանդակութեամբ գրութիւն է դրված
եղել «Եթէ նիկիասը անմեղ է, բա՛ց թող նրան, Լթէ մեղավոր է բաց
Յող մեր հանդեպ ունեցած քո սիրուց։ Սլսպիսով, նրան բա՛ց թող ամեն

դեպքում»։ Ահա թե բարեկամների հետ մեծ մասամբ ինչպես էր վերաբերվում Ազեսիլայոսը։ Այնուամենայնիվ երբ դա պահանջում էր ընդհանուր գործը, նա ավելի էր հաշվի առնում հանգամանքները։ Այսպես, օրինակ՝ նա մի անգամ դա ապացուցեց, երբ հապճեպ ճանապարհ ընկնելով ճամբարից՝ իր սիրած մարդուն հիվանդ վիճակում լքեց Սա նրան կանչում և խնդրում էր մնալ, բայց Ազեսիլայոսը շուտ եկավ և ասաց «Գժվար է կարեկից ու շրջահայաց լինել միաժամանակ»։ Այս դեպքը պատմում է փիլիսոփա Հիերոնիմոսը

XIV Երեք տարի էր ընդամենը ինչ Ազեսիլայոսը հյամանաս ար էր, իսկ նրա համբավը տարածվել էր հեռուները։ Ընդ որում հասկանալի փառաբանվում էին նրա շրջահայացությունը, պարզությունն ու շարժվող բուժյունը։ Ճանապարհին, իր ուղեկիցներից առանձին, նա կամ գ էր առնում ամենից շատ պաշտվող տաճարներում՝ աստվածներին վկա և սկանատես դարձնելով այնպիսի արարքներէ, որոնք մենք սովորաբար կատարում ենք միաճուրջան մեջ՝ խուսափելով օտար հայացքից։ Հազարավոր զինվորները մեջ դժվաս էր գտնել այնպիսի մեկին, որի անկողինը լիներ ավելի հասարակ ու էժանագին, քան Ազեսիլայոսինը։ Շուգի ու ցրտի նկատմամբ նա այնքան անսարբեր էր ասես միայն ինքն էր ստեղծված տանելու աստվածներից ուղարկված բնութիան ամեն մի փոփոխություն։ Բայց ամենահաճելի տեսարանը Ասիայում բնակվող հույների համար այն է որ տեսնում էին, թե ինչպես են սովորաբար անտանելի գոռոզ, հարստության ու պերճանքի մեջ փափկացած դորավարներն ու կուսակալները դողողալով սիրաշահում հասարակ, մաշված թիկնոցով մարդուն և, նրանից լսելով լաղոնավարի հակիրճ մեն մի դիտողություն, անառարկելիորեն փոխում իրենց վարքը։ Ընդ որում շատերի միտքն էր գալիս Տիմոթևո ի խոսքը

Արեսը բ նակալ է իսկ Հելլադան ոսկոց չի սարսա իո մ

XV Այդ ժամանակ Սւիան ուժգին ալեկոծվում էր և հակված էր անջատվելու պարսիկներից։ Ազեսիլայոսը կարգ հաստատեց ասիական բաղաբներում և դրանց տվեց պատշաճ պետական կառուցվածք շղիմելով քաղաքացիների մահապատիժների և արտաքսումների։ Ապա նա որոշեց շարժվել առաջ, որպեսզի պատերազմը հեռացնելով Հունական ծովից, թագավորին ստիպեր մարտնչել սեփական կյանքի և Սուդայի ու Եկբատանի դանձերի համար, այդպիսով նրան զրկել հույների միջև պատերազմ բորբոքելու հնարավորությունից՝ հանգիստ քաղմած իր գահին և կաշառելով ժողովրդի բարյացակամությունը շահախնդի հետև-

մտողներին: Մակայն այդ ժամանակ նրա մտտեկալ սպարտացի էպիկի-
զիդասը՝ լուր բերելով, թե Սպարտային սպառնում է վտանգավոր մի պա-
տերազմ բուն Հունաստանում և որ էֆորոսները նրան հետ են կանչում՝
հլամաչելով օգնութեան գալ համաքաղաքացիներին:

Օ որքա՛ն ծանր աղետների գատնառ եք դառնում դո՞ք հելլեններ:

Քանզի էլ ի՞նչ խոսքով կարելի է անվանել այդ նախանձը, հուշների այդ
համօխմբվելն ու ուղամական նախապատրաստութիւնները իրենց իսկ՝
հուշների դեմ կովելու համար,— այն ամենը, ինչով նրանք իրենք խա-
փանեցին արդեն իրենց կողմը հակված երջանկութեանը՝ իրենց դեմ շուտ
տալով բարբարոսների դեմ ուղղված գէնքը և Հունաստանից հեռու մղվող
պատերազմը: Ես համաձայն չեմ կորնթացի Գեմարատոսի հետ որն
ուր է թէ բոլոր հուշները որոնք ընն տեսել Ալեքսանդրին Դարեհի
գալով վրա գրկված են ևղել մեծագույն բավականութեանից: Ես կար
ծու՛մ եմ, որ նրանք ավելի շուտ պետք է լաց լինեին այն մտքից, որ հել-
լենների զորավարները, որոնք մարտնչում էին Լեկտրիայի, Կորնեայի,
Կորնթոսի մոտ մեղավորներն են այն բանի, որ այդ պատիվը վիճակ-
վեց Ալեքսանդրին ու Մակեդոնիային: Աղետիլայոսի բոլոր արարքներից
չկա ավելի փառավորը, քան այդ վերադարձը. ի կարելի գտնել արդա-
բացիութեան և իշխանութեաններին հպատակվելու ավելի լավ մի օրի
նակ: Բանցի ելի Հաննիլ ուր երբ նու՛ր արտառ վիճակի մեջ էր և երբ
նրան լուրս լուրս էին Նոկի Լտալիայից միայն մեծ դժվարութեամբ
հասնել վեց Նլանց, սվլեր նրան կանչում էին հայրենիքի պաշտպա-
նութեան համար: Երբ Ալեքսանդրը ստանալով Անտիպատրոսի և Սգիսի
միջև տեղի ունեցած ճակատամարտի լուրը՝ ծագրով ասել է «Բարեկամ-
ներ Լքեում է որ այն ժամանակ երբ մենք հաղթում ենք Դարեհին,
Արկադիայում պատերազմ է մղվում մկների միջև»,— ապա ինչպե՛ս
Լրջանիկ շհամարէնք Սպարտան, երբ Աղետիլայոսը այդպիսի հարգանք
զրսևորեց հայրենիքի նկատմամբ և ակնածանք՝ օրենքների հանդեպ:
Հագիլ Լք սկիտալան նրա ձեռքը հասել, երբ նա հրաժարվեց և՛ փայլուն
հաջողութեաններից և հզորութեանից և գայթակղիլ հուշներից ու
«գործը անկատար թողած՝ իսկույնեթ նավով մեկնեց: Նա իր դաշնա-
կիցներին թողեց խորը տխրութեան մեջ՝ հերքելով էրասիտրատոսի՝
Փեակոսի որդու այն խոսքերը, թե լակեդեմոնացիներն ավելի լավ են
հասարակական ասթենացիներն էլ՝ մասնավոր գործերում: Որովհետև
եթե նա իրեն գրսևորել էր որպես խանալի թագավոր ու զորավար, ապա

էլ ավելի անբասիր ու հաճելի էր որպէս ընկեր ու բարեկամ նրանց համար, ովքեր նրա հետ մտտիկ հարաբերութեան մեջ էին:

Քանի որ սլաւոնական դրամները հատվում էին նևտաձիգի պատ կերով, Ազեսիլայոսը ճամբարից դուրս գալիս ասաց, թե պարսից թագա վորը իբևն Ասիայից դուրս է քշում տասը հազար նևտաձիգների օգնու թլամբ այսօրան էր եղել այն գումարը որ տարել էին Աթենք ու Թեբե և բաժանել ժողովրդի սլաւազուխներին որպէսզի նրանք ժողովրդին գրդեին պատերազմի դուրս գալ սպարտացիների դև:

XVI. Անցնելով Հելլեսպոնտոսը, Ազեսիլայոսը շարժվեց Ժրակիայով թուլլափոթյուն շվերցնելով ոչ մի բարբարոս ցեղից: Նա դրանցից յուրաքանչյուրին միան սուրհանդակ ուղարկեց հարցնելու, թե նրանք ցանկանո՞ւմ են արդոք, որ ինքն անցնի նրանց երկրի միջով որպես բարեկամ կամ թշնամի: Բոլորը նրան բարեկամաբար ընդունեցին և պս հպանութեան համար ուղարկում էին այնքան մարդ, որքան ուժնէլը պատում էր Հենց միայն այսպէս կոչված տրոխալները, որոնց Քսերքսեսն էլ, ինչպէս հազորդում էն պետք է վճարեր՝ նրանց երկրով անցնելու համար Ազեսիլայոսից պահանջեցին հարչուր տաղանդ արծաթ և նույն քան էլ կին: Բայց Ազեսիլայոսը ծիծաղելով նրանց վրա՝ հարցրեց «էլ ինչո՞ւ նրանք միանգամից չեկան որ վարձն ստանան»: Շարժվեց ընդ դեմ նրանց, մարտի բռնվեց և բարբարոսներին փախուստի մատնեց՝ նրանց ծանր կորուստներ պատճառելով: Նույն այդ հարցով նա դիմեց նաև Մակեդոնիայի թագավորին Սա պատասխանեց, թէ դեռ կմտածի, իսկ Ազեսիլայոսն ասաց «կավ, թող նա մտածի, իսկ մենք առայժմ առաջ կգնանք»: Թագավորը զարմացաւ նրա համարձակութեան վրա և, վախենալով հայտնեց, որ նա կարող է անցնել իր երկրով որպէս բարեկամ:

Քանի որ թևալացիները դաշնակից էին Սպարտայի թշնամիների հետ, Ազեսիլայոսն սկսեց ավերել նրանց տիրույթները, միաժամանակ, այնուամենայնիվ, Լարիսա ուղարկելով Քսենոկլէսին ու Սկլոթեսին բարեկամութեան առաջարկով նրանց երկուսին էլ բռնեցին ու բանտ գրեցին: Ամենքը վրդովվում էին դրանից և ենթադր ու էին, թե Ազեսիլայոսին անհրաժեշտ է իսկույն հարձակվել ու պաշարել Լարիսան, սակայն նա ասելով, թե չի ուզում գրավել նույնիսկ ողջ Թեսալիան այդ երկուսից թեկուզ մեկի կլանքի գնով, նրանց երկուսին հետ : տացավ կնքելով խաղաղութեան դաշինք: Բայց դրա վրա, գուցե, շտոժե և զարմանալ չէ՞ որ մի ուրիշ անգամ, էրբ Ազեսիլայոսն իմացավ, որ Լորըն թոսի մոտ մեծ ճակատամարտ է տեղի ունեցել և սպարտացիներից շատ

ըչելն են ընկել, իսկ հակա աղորդի կողմից շատ շատերը նստելուրա խուժյուն արտահատեց, ու հպարտություն և միայն իորը հառաչելով ասաց «Վա՛րքեզ, Հունաստա՛ն որ դու ինքդ կործանեցիր այդքան մարդ կանց, որոնք եթե չլի ապրեին, ընդունակ կլինեին միավորվելով հաղթել բոլոր բարբարոսներին միասին վերցրած»

Երա արշավանքի ժամանակ փարսալիացիները հարձակվեցին նրա վրա և վնաս հասցրին զորքին: Ազեսիլայոսը հինգ հարյուր ձիավորի գլուխ անցած՝ հարձակվեց փարսալիացիների վրա, նրանց փախուստի յանձնեց և հաղթանշան կանգնեցրեց նարիակիոնի մոտ: Այս հաղթա սակի համար նա առանձնապես ուրախացավ, որովհետև սոսկ հեծելա գործի հետ, որը նա ինքն էր սովորեց, հաղթեց այնպիսի մարդկանց, ով- լի սլարժենում էին ամենից առաջ ձիավարութեան իրենց արվեստով:

LVII Այստեղ Սպարտայից նրա մոտ եկավ էֆորոս Դիփրիդասը հրաման բերելով իսկույնեկի Ներիուժել Բեուլտիա: Ազեսիլայոսը հաշ վի առնելով, որ այդ ծրագիրը պետք է ավելի ուշ կատարվի առավել մտերազնին նախապատրաստութեանից հետո, ենթացրում էր սակայն, որ ի կարելի անհնադանդութեան ցուցս բերել իշխանութեանների հաշ լեռ: Եւ իր զորքերին հաշարարեց որ շուտով կգա այն օրը, հանուն որի իրենք էկան Ասիայից, և կանչեց Կորնթոսի մոտ կանգնած ուժերից էրկու մորա: Եւ կելեմանացիները սրպեսզի նրան հասան սպախվ տա վն: Սպալտալ Ն սպարտարեցին, լի սպասանիներից նրանք, ովքեր ցանկոյ լի լի դ յովյան ելնել լիագաւսրին, կարող են ցուցակագրվել Քանի որ սեուլլամլ գրվեցին ամենքը, իշխանութեաններն ընտրեցին իստոն սյու առավել ծաղկուններին և ուժղներին և ուլարկեցին միանալու զորքին:

Այդ միջոցին Ազեսիլայոսը անցնելով Թէրմ պիլեով շարժվեց դեպի Փոկիդէ, որը նրա նկատմամբ բարեկամաբար էր տրամադրված: Բայց հենց որ նա եկավ մտավ Բեուլտիա և Համլար դրեց Քերոնեայի մոտ, ինչպես արևի խավարման օամանակ, որը լուանի ուրվագիծ է ընդունել, ստացավ Պիսանդրոսի մահվան բոթը և Կնիդոնի մոտ Փաոնաբաղոսի ու Կոնոնի կողմից ծովային Հակատամարտում տարած հաղթանակի լուրը: Ազեսիլայոսը սաստիկ սխրեց ինչպէս Պիսանդրոսի մահվան, այնպես էլ այն կորստի համար, որ կրել էր հայրենիքը սակայն, որպեսզի դինվոր ներին շնորշնէր երկշտութեան ու հուսահատութեան, այն ժամանակ, երբ նրանք պատրաստվում էին մարտի հրամայեց ծովից եկած մարդկանց, որ ասեն իրականութեան հակառակը, թե մարտը շահել են սպարաացիները նա ինքը երևաց սլասեր գլխին դոհէր մատուցեց աստված-

ներին բարի լուրի համար և իբր բարեկամներին զոհի կենդանիներից մասեր ուղարկեց

XVIII Այստեղից նա մեկնեց ավելի հեռուն և Կորոնեայի մոտ գեմ գիմաց դուրս գալով հակառակորդին, զորքը մարտակարգով շարեց՝ օրթոմենացիներին հանձնարարելով ձախ թեր, ինքն էլ աջի գլուխ կանգնելով, թշնամու աջ թևում կանգնած էին թերեացիները, ձախում արգիվացիները, Քսենոփոնը որս Ասիայից էր վերագարձել և ինքն էլ Ագեսիլայոսի կողքին մասնակցել ճակատամարտին, պստմում է թե այս ճակատամարտը եղել է շատ ավելի դաժան քան բոլոր նրանք որոնք տեղի են ունեցել այն ժամանակներում, Առաջին բախումը ճիշտ է, շառաչացրեց համառ ու երկարատև պայքար թերեացիները փախուստի մատնեցին օրթոմենացիներին իսկ Ագեսիլայոսը՝ արգիվացիներին, Սակայն և՛ սրանք, և՛ նրանք իմանալով, որ իրենց ձախ թեր հետ է շարժվել ու նահանջում է հետ դարձան, Ագեսիլայոսը կարող էր իր համար ստույգ հաղթանակ ապահովել, եթե թերեացիներին շարվածեր ճակատից այլ նրանց թույլ տար անցնել և հարձակվեր հետևներից Սակայն շարացածությունից և փառամսուրությունից դրդված առ առ ճակատ մարտի բռնվեց հակառակորդի հետ՝ ցանկանալով հետ շարվել նրան իր բուռն գրոհով: Թշնամին հարվածն ընդունեց ոչ պակաս խիզախությամբ: Եվ ճակատով մեկ թեժ մարտ սկսվեց ճակատամարտն առանձնապես լարված էր այնտեղ, որտեղ կանգնած էր Ագեսիլայոսը շրջապատված հիսուն սպարտացիներով, որոնց մարտական ավյունը թվում է այս անգամ ծառայեց արքայի փրկությանը: Քանզի նրանք մարտնչում էին պաշտպանելով նրան մեծագույն խիզախությամբ ու թեև շարողացաւ թագավորին վիրավորվելուց պաշտպանել, այնուամենայնիվ, եբք նրա զրահն արդեն սրերով ու նիզակներով ծակված էր շատ տեղերից, նրան դուրս հանեցին մեծ դժվարությամբ բայց կենդանի: Երբ համախմբվելով նրա շուրջը, նրանք շատ թշնամիների տեղում թողեցին և իրենք էլ շատերին կորցրին: Երբ պարզվեց, որ թերեացիներին ուղիղ հարվածով հաղթահարելը չափազանց դժվար խնդիր է սպարտացիներն ստիպված եղան ընդունել այն պլանը, որ մերժել էին ճակատամարտի սկզբում: Նրանք հետ քաշվեցին և թույլ տվեցին, որ թերեացիները անցնեին իրենց շարքերի միջով, իսկ երբ սրանք տեսան, որ հեղբուն արդեն իրագործված է խախտեցին շարքը, սպարտացիներն ընկան սրանց հետևից և հավասարվելով, հարձակվեցին աջ ու ձախ թևերից Սակայն նրանց շարժողվեց թշնամիներին փախուստի մատնել թերեացիները հետ քաշվեցին դեպի Հելիկոն ընդ որում այս ճակատա-

Իսրայել սրանց համակեց մեծամատութիամբ քանի որ իրենց հաշտովի էլ մնալ չպարտված, շնայած մենակ էին առանց դաշնակիցսերի:

XIX Ադեսիլայոսը թեև տառապում էր բազմաթիվ վերքերից, սակայն իսկույն շմեկուսացավ վրանում, այլ հրամայեց իրեն պատգարակով տանել յուրայինների շարքերի մոտ, որպեսզի համոզվեր, որ սպանվածների դիակները հավաքված են և գտնվում են հասանելիության սահմաններում: Հակառակորդներին, որոնք թաքնվել էին մոտերքում գրտնրվող Բտոնիական Սթենասի տաճարում, նա հրամայեց բաց թողնել Այդ տաճարի մոտ էր գտնվում այն հաղթանշանը որը ժամանակին կասուցել էին բեովտացիները Սպարտոնոսի գլխավորությամբ, երբ նրանք այս տեղում հաղթել էին աթենացիներին և սպանել Թոլմիդեսին: Հաջորդ առավոտյան Ադեսիլայոսը, որպեսզի փորձեր, թե ցանկանում էն արդյոք թերեացիները վերսկսել ճակատամարտը, զորականներին հրամայեց դարդարվել պսակներով և Փլեյտանների հնչյունների ներքո շքեղ հողթանշան կանգնեցնել, ինչպիսին վալել է հաղթողներին: Իսկ երբ հակառակորդները դեսպաններ ուղարկեցին խնդրելով հանձնել գիականը՝ նա սրանց հետ զինադադար կնքեց և, այդպիսով ամրապնդելով հաղթանակը՝ պատգարակով ճանապարհ ընկավ դեպի Դելփի, որտեղ այն մամանակ տեղի էին ունենում Պիթիական խաղերը: Ադեսիլայոսը հաղթական էր կազմակերպեց ի պատիվ Ապոլլոնի և աստծուն նվիրեց Ասիայում գրաված ավարի մեկ աստևերու ի մասը որը կազմո էր հարյուր տաղանդ:

Սպարտա վերադառնալուց հետո նա իսկույն նվաճեց քաղաքացիներ ի համակրանքը և համընդհանուր զարմանք հարուցեց իր սովորույթներով ու կենսակերպով: Քանզի, ի տարբերություն գորավարների մեծամասնության նա օտարութունից վերադարձավ այլ մարդ դարձած օտարերկրյա բարքերի ներգործության տակ վերափոխված, հայրենական ամեն ինչից դժգոհ, համաքաղաքացիների հետ հակասության մեջ: Ընդհակառակը նա իրեն այնպես էր պահում, ասես թե երբեք չէր անցել Սվրոտասի մյուս կողմը հարգում ու սիրում էր հայրենի սովորույթները, ոչինչ չէր փոխել ո՛չ սննդի մեջ, ո՛չ լողանալու, ո՛չ իր կնոջ կենսակերպի մեջ, ո՛չ իր զենքի զարդարման, ո՛չ էլ տնտեսական տնտեսության մեջ: Նույնիսկ սեփական տան դռները, որոնք այնքան հին էին, որ թվում էին, թե դրված են դեռևս Արիստոգեմոսի օրոք, նա թողեց նախկին վիճակում: Քսենոփոնի խոսքերով ասած, նրա դստեր կանատրը ավելի շքեղ չէր, քան ուրիշներինը: Կակեդեմոնացիք կանատր են անվանում արծվառչուծների և կիսաայծ կիսանղջերուների փայտե կերպարանքները:

որոնց մեջ նստեցրած, հանդիսավոր Լրթերի ժամանակ նրանք տանում էին իրենց դուստրերին: Քսենոփոնը գրի շի առել Ագեսիլայոսի դասեր անունը, և Իիկեարքոսը վրդովվում էր այն բանի վրա, որ մենք շփտենք ոչ Ագեսիլայոսի դասեր, ո՛չ Լպամինոնդասի մոր անունը Սակայն յա կեդեմոնյան մակազրություններում մենք գտանք որ Ագեսիլայոսի կնոջ անունը եղել է Կլեորա, իսկ դուստրերինը Եվպոլյա և Իպպոլիտա: Լակեդեմոնում մինչև հիմա էլ պահվում է Ագեսիլայոսի նիզակը, որը ողջն չով շի տարբերվում ուրիշներից:

XX. Նկատելով, թե ինչպես որոշ քաղաքացիներ հպարտանում էն ու գոռոզանում, որ ձիեր են պահում մրցասպարեզի համար, Ագեսիլայոսը հորդորեց իր քույր Քլինիակին կառք ուղարկել օլիմպիական մրցումներին մասնակցելու համար: Դրանով նա ուզում էր հույներին ցույց տալ, թե նման հաղթանակը ոչ մի արիություն չի պահանջում, այլ սոսկ հարստության ու լատնողության նշան է: Իմաստուն Քսենոփոնին որը միշտ նրա մոտ էր լինում ու նրա ուշադրությանն արժանանում, նա խորհուրդ տվեց իր երեխաներին բերել Լակեդեմոն դաստիարակելու համար, որպեսզի նրանք տիրապետեն ամենադեղեցիկ գիտությանը՝ հնազանդվելուն և իշխելուն:

Լիսանդրոսի մահից հետո Ագեսիլայոսը մի մեծ զուգադրություն բացվեց որը Լիսանդրոսը կազմակերպել էր ընդդեմ Ագեսիլայոսի՝ Ստիպից նրա վերագարձից անմիջապես հետո և որոշեց ցույց տալ, թե ինչպիսի բաղաքացի է եղել Լիսանդրոսը իբր կյանքում: Կարդալով Լիսանդրոսի թղթերում սրահպանված մի ճառ, հորինված Կլեոն Հալիկուո Դասցու կողմից որը Լիսանդրոսն իր անունից մտադիր է եղել արժանանել ժողովրդի առաջ, մի ճառ որը կոչ էր անում հեղաշրջում կատարել և պետական կառուցվածքը փոխել Ագեսիլայոսն ուզում էր հրապարակել: Սակայն ավագներից մեկը կարդալով այդ ճառը և սարսափելով համոզման այն ասվեստով, որով դա գրված էր, Ագեսիլայոսին խորհուրդ տվեց գերեզմանից փորել հանել Լիսանդրոսին այլ ավելի լավ է նրա հետ միասին թաղել և այս ճառը: Ագեսիլայոսը հեռուց նրա խորհրդին և հրաժարվեց իր մտադրությունից: Իր հակառակորդներին նա երբեք բացահայտորեն վնաս չէր պատճառում այլ կարողանում էր հասնել այն բանին, որ նրանք նշանակվելին զորավարներ կամ ղեկավարներ, ապա նրանց մերկացնում էր իրենց պարտականությունները կատարելիս դրսևորած անբարեխղճության ու շահասիրության մեջ և վերջապես իրբ լանը ասնում էր դատարանին, առակցում և օգնում էր նրանց Այսպիսով նա թշնամիներին բարեկամներ էր դարձ

նուս ււ նրանց իր կողմն էր գրավում, այնպես որ շուներ ոչ մի հակա-
ռակորդ: Երկրորդ թագավորը՝ Ագեսիպոլիսը, արտաքսվածի որդի էր
Լզիլ և դրանից լացի՝ տարիքով շատ երիտասարդ իսկ բնավորությամբ
հեղ ու փափուկ, ուստի և քիչ մասնակցութուն էր ունենում պետական
գործերին: Սակայն Ագեսիլայոսը անհրաժեշտ համարեց երախտապարտ
դարձնել նաև նրան Երկու թագավորները, երբ քաղաքում էին լինում
հաճախում էին միևնույն ֆիզիոտիային և ուտում միևնույն սեղանից:
Լմանալով, որ Ագեսիպոլիսը, ինչպես որ նա ինքը, շատ է հակված սի-
լային գործերի, Ագեսիլայոսը միշտ նրա մաս խոսք էր բացում գեղե-
ցիկ տղաների մասին: Եւ պատանուն գրավում էր դեպի սիրային հա-
ճույքները և ինքն էլ նրան օգնում էր այդ գործերում Բանն այն է որ
լակոնական սիրային կապերի մեջ ոչ մի կեղտոտ բան չկա ընդհակառա-
կը, դրանք զուգակցվում են մեծ ամոթխածության, փառասիրության և
տուաքինության ձգտման հետ ինչպես ասված է Լիկուրգոսի կենսագրու-
թյան մեջ:

XXI. Դետուիյան մեջ ունեցած իր մեծ ազդեցության շնորհիվ Ագե-
սիլայոսը հասավ այն բանին, որպեսզի նավատորմի հրամանատարու-
թունը հանձնվեր մոր կողմից իր խորթ եղբայր Տելևաիոսին: Այնուհետև
իւր արշավանք ձեռնարկեց դեպի Կորնթոս և ինքը ցամաքից դավթեց
երկար պարիսպները, Տելևաիոսն էլ նավերով Այդ օրերին արգիվիա-
ցիք, բրոնք այն ժամանակ տիրում էին Կորնթոսին կաղմակերպել էին
խթմեյան խաղեր: Հայտնվելով կորնթական հողում երբ նրանք հենց
նոր էին ղոհաբերութուն կատարել, Ագեսիլայոսը նրանց ստիպեց փախ-
չել՝ լքելով տոնակատարության բոլոր նախապատրաստությունները:
Հետք եղած կորնթացի վտարանդիները դիմեցին նրան՝ խնդրելով իր վրա
վերցնել մրցումների տնօրինումը, բայց նա հրաժարվեց և դա թողնելով
հենց իրենց՝ սպասում էր որպեսզի նրանց ասպահովէր հարձակումից
Վինչև որ ավարտվեին ղոհաբերություններն ու մրցումները: Որոշ ժա-
մանակ անց, երբ նա հեռացավ, արգիվիացիք դարձյալ իսթմեյան խաղեր
կաղմակերպեցին, ընդ որում պարզվեց, որ մրցողներից որոշ մաքրիկ
երկրորդ անգամ էին հայտարարվում հաղթողներ, բայց կային և այն
պիսիք որոնք տուաչին անգամ հաղթել էին, իսկ երկրորդ անգամ ընկել
էին պարտվողների ցուցակը: Իմանալով այդ բանը Ագեսիլայոսը հայ-
տալարեց որ արգիվիացիք իրենք լրենց վախկոտ լինեն մեկ կացրին

քանի որ խաղերի տնօրինումը համարելով ինչ որ մեծ ու կարևոր բան՝ շահամարձակվեցին իր դեմ պայքարել այդ պատվի համար: Նա ինքն անհրաժեշտ էր համարում այդպիսի բաներին գուսպ վերաբերվել: Իբ հայրենիքում նա երգչախումբ էր կազմում, մրցումներ էր կազմակերպում և միշտ մասնակցում էր դրանց՝ դրսևորելով մեծ փառասիրություն ու ջերմեռանդություն՝ Նույնիսկ բաց շթողնելով տղաների ու աղջիկների ու մի մոցություն: Բայց այն, ինչ հիացնում էր մնացածներին, նրա համար ասես թե բոլորովին անհատ ու անծանոթ բան լիներ: Մի անգամ նա հանդիպեց ողբերգու դերասան Կալիպիդեսին, որի անունը հռչակված էր հույների մեջ և որը համընդհանուր ճանաչման էր արժանացել: Կալիպիդեսն առաջինը ողջունեց Ագեսիլայոսին, ապա հպարտ կեցվածքով խառն լեց գրոսանքի ժամանակ թագավորին ուղեկցողներին, հուսալով, թե նա իրեն որևէ սիրալիր բան կասի: Վերջապես Կալիպիդեսը շփմացավ և ստացավ Արքա, մի՞թե՞ դու ինձ շես ճանաչում», — ինչին Ագեսիլայոսը դառնալով նրան, պատասխանեց «Ինձ թվում է թե՛ ոու Կալիպիդեսն էս՝ դիկելիդասը»: Այդպես են անվանում լակեդեմոնացիք միմոսներին: Մի ուրիշ անգամ նրան կանչեցին լսելու մի շարդու որը նմանակում էր սոխակի երգը: Ագեսիլայոսը հրաժարվեց, ասելով «Նս սրգեն լսել եմ էոխակին»: Բժիշկ Մենեկրատեսը մի քանի անհուսալի դեպքերում հաջող բուժում կատարելու համար ստացել էր Չևս մակա նունը: Նա անամոթաբար օգտվում էր այդ մականունից և հանդգնել էր նույնիսկ Ագեսիլայոսին գրել. «Մենեկրատես Չևսը ցանկանում է ողջունել Ագեսիլայոսին»: Ագեսիլայոսն ի պատասխան գրել էր «Արքա Ագեսիլայոսը Մենեկրատեսին ցանկանում է առողջ դատողություն»:

XXII Երբ Ագեսիլայոսը դեռ Կորնթոսի մոտ էր գտնվում և Հերևսի շրավումից Լեոն դիտում էր, թե իր զինվորներն ինչպես են տանում դերիներին և ավարը, Թեբեից դեսպաններ եկան՝ առաջարկելով բարեկամութան դաշինք կնքել: Ագեսիլայոսը, որը միշտ ատել էր այդ քաղաքը, այս դեպքը հարմար համարեց, որպեսզի իր արհամարհանքն արտահայտեր թեբեացիների նկատմամբ և ձևացրեց թե չի տեսնում ու չի լսում դեսպաններին: Բայց նա իր գոռոզության համար արժանի հատուցում ստացավ: Քանզի թեբեացիք դեռ չէին հասցրել հեռանալ, երբ նրա մոտ հասան սուրճանդակներ, լուր բեբելով, թե սպարտացիների մի ամբողջ մորա կոտորվել է Իփիկրատեսի ձեռքով: Այսպիսի մեծ դրժ բախտություն վաղուց արդեն չէր եկել լակեդեմոնացիների գլխին նրանք կորցրել էին բաղում քաջ զորականների, ընդ որում ծանրազենները

պարզվեց պարտվել էին թեթև հետևակից և լակեդեմոնացիները վարձկաններից Ազեսիլայոսն խեղույնեթ օգնության շտապեց, բայց երբ իմացավ, որ բանը բանից անցել է, արագ վերադարձավ Հերևս և արդեն լնքն աստջարկեց, որ ներկայանան բեռվտական դեսպանները: Իսկ թերևայիբ, նույն դրամով վճարելով նրան այժմ ոչ մի խոսք չասացին խաղաղության մասին, արև միայն խնդրում էին իրենց թողնել մտնելու Կորնթոս: Ազեսիլայոսը, զայրացած, ասաց «Նթե ցանկանում էք տեսնել, ի՞նչ ձեր բարեկամներն ինչպես են հպարտանում իրենց հաջողություններով, կարող եք հանգիստ սպասել մինչև վաղը»: Եվ, նրանց վերցնելով իր հետ նա հաջորդ օրը ավերեց կորնթական տիրույթներն ու մոտեցավ բուն քաղաքին: Դրանով ապացուցելով, թե կորնթացիք սիրտ չեն անում իրեն դիմադրություն ցույց տալ նա թերտացիների դեսպանությունը բաց թողեց: Իրեն միացնելով այն մարդկանց, որոնք ողջ էին մնացել պարտություն կրած մորայից Ազեսիլայոսը զորքը տարավ Լակեդեմոն: Ճամ ապարհին, դեռ լույսը չբացված, իսկ թողնում էր ճամբարը, շարժվում և կանգ էր առնում միայն մութն ընկնելիս որպեսզի արկադիացիներից ովքեր ատում էին նրան ու նախանձում չկարողանային հիմա ուրախանալ նրա դժբախտության վրա:

Արոշ ժամանակ անց, աբայացիների հանդիպ ունեցած համակրանբից, նոսանց հետ արշավանք ձեռնարկեց զեպի Ակաոնանիա և այնտեղ մեծ ռազմավարի տիրաշաղ ալաոնանցիներին հաղթելով ճակատամարտում: Աբայացիները խնդրեցին որ նա իրենց մոտ մնա մինչև ձմեռ, ու պեսզի հակառակորդին խանգարի ցանել դաշտերը Սակայն Ազեսիլայոսը պատասխանեց թե ինքը կանի հենց հակառակը, քանզի թշնամին ավելի շատ կլախենա պատերազմից, էթե ամռան մոտերքը հողը ցանված լինի Սլզպես էլ եղավ երբ ակաոնանցիներին հասավ Ազեսիլայոսի կողմից նախապատրաստվող նոր արշավանքի լուրը, աբայացիներին Լա հաշտություն կնքեցին:

XXIII. Երբ որ Կոնոնն ու Փաոնաբազոսը թագավորական նավատորմի Եզտիլամբ նվաճելով ծովափն տիրապետությունը սկսեցին ամաչացնել Լակոնիայի տիկերը, իսկ աթենացիք Փաոնաբազոսից ստացած փողերով նորից ամրացրին իրենց քաղաքը լակեդեմոնացիք որոշեցին հաշտություն կնքել թագավորի հետ: Նրանք Անտալկիդասին ուղարկեցին Տիրիբազոսի մոտ, որպեսզի ամենաամոթալի, ամենաանարդար կերպով Ասիայում ապրող հույներին գոտաճանեին պարսից թագավորի մոտ այն հույներին, հանուն որոնց այնքա՞ մարտնչել էր Ազեսիլայոսը: Դա համար էլ այնպես դուրս եկավ, որ արև խայտառակությունն ամենից քիչ

վերաբերվեց իրեն Ազեսիլայոսին: Բացի այդ, Անտալիդասը նրա թըշնամին էր և բոլոր ուժերով աջակցում էր խաղաղությանը ենթադրելով, թե պատերազմը ամրապնդում է Ազեսիլայոսի իշխանությունը, մեծացնում է նրա փառքը և ազդեցությունը: Համենայն դեպս նրան, ով ասել է թե լակեդեմոնացիները դարձել են պարսիկների համախոհները Ազեսիլայոսը պատասխանել է «Իսկ ըստ իս, ավելի շուտ պարսիկները լակեդեմոնացիների»: Բացի այդ նա սպառնում էր պատերազմ հայտարարել նրանց, ովքեր չէին ցանկանում ընդունել հաշտության պայմանները և ալգալիսով բոլորին ստիպում էր ենթարկվել այն պահանջներին, որոնք առաջադրում էր պարսից թագավորը: Ընդ որում Սդեսիլայոսը ամենից շատ ձգտում էր հասնել այն բանին, որ թեքեացիները, Բեովտիային անկախություն տային՝ դրանով իսկ թուլացնեին իրենք իրենց:

Սակայն նրա մտադրությունները լիովին պարզ դարձան նրա հետագա վարվելակերպից միայն: Քանզի երբ Փերիդասը անվայել գործ կատարեց՝ խաղաղ ժամանակ զավթելով Կադմեան բոլոր հույները զայրույթով լցվեցին վրդովվում էին և սպարտացիներն իրենք առանձնապես Ազեսիլայոսի հակառակորդները: Նյանք զայրացած հարցնում էին Փերիդասին՝ ո՞ւմ բամանով է նա այդպես վարվել, և համընդհանուր կասկածանքն ընկնում էր Սդեսիլայոսի վրա: Բայց Ազեսիլայոսն առանց աատանման հանդես եկավ Փերիդասի պաշտպանությամբ, ասելով որ կարևոր է պարզել միայն այն, թե այդ արարքը որևէ օգուտ բերե՞լ է: «Քանզի այն ամենը, ինչ օգուտ է բերում լակեդեմոնին, — ասում է նա, — լիովին թուլատրելի է՝ թեկուզ՝ սարսափի ու վտանգի տակ, նույնիսկ առանց որևէ հրամանի»: Եվ այդ մարդը արդարացիությունը բարձրալույն առաքինություն էր համարում խոսքով ամեն մի հարմար առիթով պնդելով, որ քաջությունը ոչ մի օգուտ չի բերում այնտեղ, որտեղ չկա արդարացիություն, և որ եթե բոլորն արդարացի դառնային, քաջությունն ընդհանրապես պետք չէր լինի: Երբ նրան ասում էին, թե այս կամ այն բանը ցանկալի է մեծ արքային նա պատասխանում էր «Բայց ինչո՞ւ նա պետք է լինի առավել մեծ, քան ես եթե նա առավել արդարացի չէ», — շատ խելամտորեն ենթադրելով, որ մեծության մեջ գերադանցությունը պետք է որոշվի արդարացիությամբ քանզի իսկական արքայական շափանիշը հենց դա է: Նա շքնդունեց այն նամակը որով արքան հաշտություն կնքելուց հետո նրան հյուրընկալություն և բարեկամություն էր առաջարկում, պատասխանելով թե բավական է իրենց պետությունների ընդհանուր բարեկամությունը և անհրաժեշտություն չկա ինչ էր մասնավոր բարեկամության: Սակայն իր արարքներում նա հավատարիմ չմնաց

յ ամսույ մասններին, ի ա շափից ավելի էր տարված փառասիրությամբ ու առաջնության ծարավով, և դա հատկապես պարզ ի հայտ եկավ Թեւրիզն գրավելու պատմության մեջ: Նա ոչ միայն փրկեց Փեքիդասի կյանքը, այլև պետութեանը համոզեց իր վրա վերցնել այդ հանցանքի պատասխանատվությունը, կարգեցաւ պահակազոր տեղավորել և թերեւ կան դործերն ու պետական կառուցվածքը թողնել Սրբիդասի ու Լեոնտիյասի կամքին որոնց օչնությամբ Փեքիդասը քաղաք մտավ ու գրավեց ամրոցը:

XXIV Ահա թե ինչու արդեն առաջիս իսկ ըոպեին բոլորի մեջ այն Իխաքն առաջացավ, թե Փեքիդասը միայն կատարող է, իսկ ամբողջ գործի հրահրիչը Սգեսիլայոսն է: Հետագա իրադարձություններն աներկբա լորեն հաստատեցին այդ կասկածանքը Քանզի երբ թերեացիները դուրս բշեցին սպալ տական ջոկատը և ազատեցին իրենց քաղաքը, Ագեսիլայոսը նրանց մեղադրեց, թե նրանք սպանել են Սրբիդասին ու Լեոնտիդասին (իսկ սրանք սոսկ անունով էին պոլեմարքոսներ, իրականում բռնապետներ էին) և նրանց պատերազմ հայտարարեց: Սյս անգամ գործով Էեոփաիա ուղարկվեց Կլեոմարտոսը որը թագավոր էր դարձել Սգեսիլայոսի մահից հետո: Ագեսիլայոսն էլ, քանզի դեռևս քառասուն տարի առաջ էր դուրս էկել պատանեկան հասակից և ըստ օրենքի կարող էր շմասնակցել արշավանքներին, հրաժարվեց հրամանատարությունից, քանի որ դրանից քիչ առաջ Ֆլիոնաացիների դեմ կռվել էր արքայազանների պատճառով և հիմա նրա համար անհարմար էր բռնություն գործադրել թերեացիների վրա հանուն բռնապետների գործի:

Այդ ժամանակ Թեսպեի հարմոստը սպարտացի Սփոդրիասը էր որը Ագեսիլայոսի թշնամիների թվին էր պատկանում: Սա մի մարդ էր, որ այնքան էլ վախկոտ չէր և ոչ էլ զուրկ էր փառասիրությունից բայց առայլ էլ շատ լեցուն էր սին հույսերով, քան ողջամտությամբ: Հենց նա էր, որ ցանկանալով փառք վաստակել և կարծելով, թե Փեքիդասը թերեւում իր հանդուգն արարքների շնորհիվ է, որ նշանավոր էր դարձել եկավ այն եզրակացության, թե ինքն էլ ավելի մեծ անուն կհանի եթե անսպասելի հարձակումով գլավի Պիրեոսը և զրանով աթենացիներին կտրի ծովից: Հողորդում են նաև, թե դա բևտարքոսների ձեռնարկած գործն է եղել՝ Մելլոսի ու Պլուպիդեսի զլխավորությամբ: Նրանք Սփոդրիասի մոտ են ուղարկել լակեդեմոնացիներին բարեկամ ձեռքով մարդկանց, ովքեր շողում դավաճաններով և այն հավաստիացումներով, թե մեն-միայն նա ինքն է արժանի այդպիսի սխրանքի Սփոդրիասին դրդել են հանձն առնել այն գործը Այս արարքը իր անարդարացիությամբ

և անօրինականութիւնք նման է եղել Փերիդասի արարքին, բայց սլա
իրագործումը չի ունեցել ոչ այնպիսի համարձակութիւն, ոչ էլ այն-
պիսի հաջողութիւն: Քանզի Սփողրիասը հույս ունեւ մի գիշերում հաս-
նել Պիրեոն, բայց լույսը բացվելիս նա դեռ Քրիասյան դաշտավայրում
է եղել: Ասում են, թե տեսնելով Լիւսինյան սրբավայրերի կողմից տա-
րածվող պայծառ լույսը, նրա գինձորները խուճապի ու սարսափի են
մատնվել նա ինքն էլ է կորցրել արիութիւնը, քանի որ իր մտադրու-
թիւնն այլևս գաղտնի մնալ չէր կարող, և, մի փոքր ավար ձեռք գցե-
լով, խայտառակ ու անփառունակ հետ է քաշվել Թեսպե Այն ժամանակ
Սպարտա են ուղարկված եղել աթենացի դեսպաններ, որպեսզի մեղա-
դրեին Սփողրիասին Սակայն Երբ նրանք Լակեդոմոն են հասել պարզ-
վել է, որ սպարտական իշխանութիւնները կարիք չեն զգում ոչ մի մե-
ղադրողի և Սփողրիասին արդէն դատի են տալիս մի մեղադրանքով, որը
մահվան դատապարտման սպառնալիք է պարունակում: Սակայն նա վա-
խենալով ամաքադաքացիների դաշրույթից, դատարան չէր ներկայանում,
իսկ քաղաքացիները՝ ամաշխլով աթենացիներից, ուզում էին վերստի որ-
ված երևալ որպէսզի բրենց չհամարեին հանցակիցներ:

XXV Սփողրիասը Կլեոնիմոս անունով, գեռ շատ սւս յաճի և դսղե-
ցիկ արարքինով, մի որդի ունեւ իր սիրուց տոշորվում էր Ագեսիլա-
յոսի որդի Արքիդամոսը: Վերջինս, անշուշտ, ինչպէս Կլեոնիմոսը, ան-
հանդստանում էր նրա հորն սպաննացող վտանգի առթիվ սակայն չէր
կարող նրա համար բացեիբաց ինչ-որ բան անել և ընդհանրապէս որեէ
կերպ նրան օգնել քսնդի Սփողրիասը պատկանում էր Սգեսիլայոսի
հակառակորդների թմին: Չնայած դրան Կլեոնիմոսը Եկավ Արքիդամո-
սի մոտ և արցունքն աշքին աղերսեց որպեսզի նա շարժեր Ագեսիլա-
յոսի ողորմածութիւնը որից Սփողրիասի բարեկամները ամենից շառ
էին վախենում: Երեք թե շորս օր Արքիդամոսը ամենուրեք գնում էր
Սգեսիլայոսի հետեից, սակայն վախից ու ամսթից չէր համարաակվուս
նրա հետ խոսել գործի մասին Վերջապէս, երբ դատի օրն արդեն մոս
էր, նա վճռեց Սգեսիլայոսին ասել որ Կլեոնիմոսը դիմել է իրեն՝ խընդ
րելու հոր համար Ագեսիլայոսը տեղյակ էր Արքիդամոսի կրքին, բայց
լէք խոշընդոտում դրան, քանի որ Կլեոնիմոսը դեռևս մանկութիւնից ավե-
լի, քան մի ուրիշը հույս էր տալիս, որ նշանավոր մարդ է դառնալու
Չնայած դրան, երբ որդին այդ խնդրանքով դիմեց նբան, Սգեսիլայոսը
ոչնչով չհուսադրեց պատասխանելով միայն որ ինքը կմտածի, թե ինչ
կարելի է անել՝ շխախտելով պատշաճութիւնն ու պարկեշտութիւնը:
Այս ասելով՝ նա հեռացավ: Արքիդամոսը այնպէս ամոթահար էր եղել,

որ գաղտնից լց իլ տեսակցութունները Կլեոնի Լուսի հետ, թեև մինչ այդ սովոր էր նրան օրական մի քանի անգամ տեսնել: Սփողորիասի բարեկամները նրա գործը համարում էին վերջնականապես տանուլ արված, մինչև որ Ազեսիլայոսի մտերիմներից մեկը էտիմոկլեսը, նրանց հայտնեց Ազեսիլայոսի իսկական կարծիքը նրա ասելով Ազեսիլայոսը իրատարին հանդիմանում էր Սփողորիասի արարքը, բայց մնացած այլ բաներում նրան համարում էր քաջարի մարդ և ենթադրում էր որ պետությունը կարիք ունի նման զորականների: Որդու նկատմամբ ունեցած համակրանքից Ազեսիլայոսը ամեն հարմար առիթով այս կարծիքն էր հայտնում Սփողորիասի գործի մասին, այնպես որ Կլեոնիմոսն էլ շուտով իմացավ Արքիդամոսի բարեխոսությունների մասին և Սփողորիասի բարեկամներն սկսեցին ավելի մեծ համարձակությամբ օդնել մեղադրյալին: Ազեսիլայոսն ընդհանրապես շատ էր սիրում իր էրեխաներին, և նրա մասին հաճախ պատմում են մի զվարճալի պատմություն, թե իբր նա տանը խաղալիս է եղել իր երեխաների հետ, երբ սրանք գլու փոքր են էղել, և սրանց հետ ճիպոտ հեծած՝ ձի է բռնել: Երբ բարեկամներից մեկը նրան տեսել է դրանով զբաղված, Ազեսիլայոսը խնդրել է ոչ ոքի լպատել, քանի դեռ տեսնողն ինքը հայր չի դարձել:

XXVI Սփողորիասն արդարացվեց, և աթենացիք իմանալով այդ լճոեցին պատերազմի դուրս գալ: Ազեսիլայոսին խիտ հանդիմանում էին, համարելով, որ նա իր որդու երեխայական անհեթեթ կրքի պատճառով արգելք է հանդիսացել զատարանի արդարացի որոշմանը և այդ պիտով իր հայրենիքը դարձրել մեծագույն անօրինականություն մեջ մեղադրվող հանցավոր՝ բոլոր հույների հանդեպ Սակայն երբ Ազեսիլայոսը տեսավ որ Կլեոմերոտոսը տրամադիր չէ կովել թեբեացիների դեմ հրաժարվեց գործադրել այն օրենքը որից օգտվել էր այդ արշավաների սառչ և ինքն սկսեց ասպատակել Բեոտիան: Նա շատ վնասներ էր պատճառում թեբեացիներին, ինքն էլ, սակայն նրանցից քիչ չէր տուժում այնպես որ երբ նա վիրավորվել էր, Անտակլիդասն ստաց նրան (Այս փատ շվարձատրեցին թեբեացիները քեզ այն բանի համար, որ, հակառակ իրենց տղիտությունն ու սովորել շցանկանալուն, դու, այնուամենայնիվ նրանց սովորեցրիր մարտնչել): Եվ իրոք, ինչպես հաղորդու են, թեբեացիներն այդ ժամանակ առավել հմուտ դարձան ռազմական գործում քան երբեք եղել էին մինչ այդ ասես թե կոփվելով իրենց տիրություն վրա լակեդեմոնացիների կատարած բազմաթիվ արշավանքների ընթացքում: Դրա համար Լիկուրգոսն էլ հնում այսպես կոչված երեք ռեպրերում, արգելում էր շատ անգամ հանդես գալ միևնույն թշնամու

դեմ, որպեսզի նրանք շտովորեին պատերազմ վարելու արվեստը նույնիսկ լակեդեմոնացիների դաշնակիցները շատ դժգոհ էին Ագեսիլայոսից, տեսնելով, որ նա ձգտում է կործանել թեբեացիներին ոչ թե Սպարտայի հանդեպ ունեցած իրենց մեղքի համար, այլ միայն վիրավորված պատվասիրության պատճառով: Ոչ մի անհրաժեշտություն չունենալով ավերել Բեովտիան ասում էին դաշնակիցները, իրենք չգիտես ինչու ամեն տարի մեծ զորքով ամենուրեք պատք է հետևեն լակեդեմոնացիներին, թեև լակեդեմոնացիներն իրենք արշավանքին այլքան սակավաթիվ զորքով են մասնակցում: Դրան ի պատասխան ցանկանալով ցույց տալ թի ինչ արժե նրանց բազմամարդությունը Ագեսիլայոսը արել է, ինչպես ասում են, հետևյալը: Նա հրամայել է որ մի կողմում նստեն բոլոր դաշնակիցները մյուս կողմ՝ միայն լակեդեմոնացիները: Սպա մունետիկի միջոցով առաջարկել է վեր կենալ բոլոր բրուտներին, իսկ էրբ սրանք վեր են կացել, նույնն առաջարկել է դարբիներին այնուհետև՝ հյուսներին շինարարներին և հերթով մյուս արհեստավորներին: Ի վերջո վեր են կացել համարյա բոլոր դաշնակիցները բացյ լակեդեմոնացիներից ու որ, որոնց խստորեն արգելված էր զբաղվել որևէ արվեստով կամ սովորել որևէ արհեստ: Սրնժամ Ագեսիլայոսը ժպտացել է և ասել «Դե՛ տեսե՛ք բարեկամներ՝ թի մեկ ք ձեզնից ոչ քան ավելի դինվոր էնք հանում»:

XXVII Թեբեից վերալառուալու ճանապարհին Մեգարայում երբ Ագեսիլայոսը բարձրանում էր կառավարական տանը կից միջնաբերդը դող և սաստիկ ցավ զգաց առողջ ստչում: Սրունքն ուռեյ արյունով լրցվեց՝ արտաքին տեսքից դատելով, և անսովոր կերպով բորբոքվեց Սիրակուզացի մի բժիշկ կոճից ներքև բացեց երակը: Տանջանքները դալաբեցին, սակայն այնքան արյուն գնաց և այնպես վալար էլ հուում, որ դրան հաջորդեց խոր ընդարմացում և լուրջ վտանգ ծագեց Ագեսիլայոսի կյանքի համար: Վերջապես արյունահոսությունը դադարեցվեց և Ագեսիլայոսին պատգա, ակով տարան Լակեդեմոն, որտեղ նա երկար ժամանակ հիվանդ պառկեց՝ ի վիճակի չլինելով արշավանքի դուրս գալ

Այդ ժամանակաընթացքում սպարտացիները շատ անհաջողություններ կրեցին ցամաքում և ծովում: Դրանցից մեծագույնը Տեգիրքի մոտ տեղի ունեցած ճակատամարտն էր, որտեղ սպարտացիները բաց մարտում առաջին անգամ սարսվեցին թեբեացիներից: Բոլորն արդեն համընդհանուր խաղաղության դաշինք կնքելու անհրաժեշտությանն էին հանգել: Դաշինքի պայմանները քննարկելու համար Հունաստանի բոլոր ծայրերից դեոպանություններ էին գալիս Լակեդեմոն, Դեոպանների թվում

էր Լպամինոնդասը, մի մարդ, որ նշանավոր էր իր կրթվածությամբ ու փիլիսոփայական իմացությամբ, բայց այն ժամանակ նա դեռ իրեն չէր գրանորել սրպես զորավար: Տեսնելով, որ մյուս բոլորը ստորաքարշու-թյուն են անում Ադեսիլայոսի առաջ, նա միայնակ համարձակվեց հան-դես գալ շխտակ ճառով, որի մեջ խոսում էր ոչ միայն թերեացիներ ի շա-հերի, այլև ամբողջ Հունաստանի ընդհանուր բարօրության մասին: Նա մասնանշեց որ պատերազմը մեծացնում է Սպարտայի հզորությունը, որից էլ մնացած բոլորը վնաս են կրում որ խաղաղությունը պետք է հիմնված լինի համընդհանուր հավասարության և արդարության սկզբ-յունքների վրա: Բրգա կայուն կլինի և կայն դեպքում երբ լուրն իրար նկատմամբ հավասար լինեն:

XXVIII Ադեսիլայոսը նկատելով որ Էպամինոնդասը ներկա գրու-նել վոյ հույների ուշադրությունն ու ջերմ համակրանքն է վայելուս, հարց տվեց նրան «Արդյոք համընդհանուր հավասարության և արդարության տեսակետից դու ճիշտ ևս համարում, որ բեովտական քաղաքները ա-կախություն ունենան»: Էպամինոնդասը, առանց ծանրութեթե անելու և առանց շփոթվելու Ադեսիլայոսին պատասխանեց նույնպես հարց տա-լով արդյոք նա արդարացի լի՞ համարում էր Լակոնիայի բնակիչներն էլ անկախություն ստանան Այնժամ Ադեսիլայոսը ահեղ դաշրույթով վեր-թռավ տեղից և պահանջեց, որ Լպամինոնդասը յորոշակիորեն հայտարա-րի, պատրաստ է նա Բնովտլային անկախություն տալու: Լպամինոն-դասն իր երթին հարցրեց նրան թե սպաստացիներն անկախություն կտան և Լակոնիայի բնակիչներին Ադեսիլայոսը վրդովված էր և սիրով և առջեց հարմար պատրվակից, որպեսզի հաշտութան դաշինք կնքածնե-լի ցուցակից անհապաղ ջնջեր թերեացիներին և պատերազմ հայտարա-րեր նրանց: Մնացած բոլոր հույներին նա առաջարկեց՝ խաղաղության դաշինք կնքելով ցրվել իրենց տները Այն սործերը, սրոնք Լեթակա էին խաղաղ լուծման, նա խորհուրդ էր տալիս լուծել խաղաղ ճանապար-հով, իսկ որոնք որ Լեթակա շէին՝ պատերազմով, քանի որ շատ դժվար էր լուր սարաձայնությունները ոչնչացնելու ուղի գտնել:

Այդ ժամանակ Կլեոմբրոտոսը զորքով կանգնած էր Փոկիսում: Էֆորոսն ըր նրան իսկույն հրաման ուղարկեցին կռվի դուրս գալ թերեա-ցիների դեմ՝ միամամանակ ամենուրեք մարդիկ ուղարկելով դաշնակի-ւ-ներ հավաքելու համար որոնք թեև շէին էլ ցանկանում կռվել և տհա-ճություն էին զգում պատերազմից բայց դեռևս շէին համարձակվում հակաճառել լակեդեմոնացիներին կամ հրաժարվել նրանց հնազանդվե-լուց: Կային բազմաթիվ վատ նախանշաններ, որոնց մասին արդեն

պատմված է էպամինոնդասի կենսագրության մեջ, և լակեդեմոնացի Պրոթոսն առարկում էր ընդդեմ արշավանքի Չնայած դրան՝ Ագեսիլայոսը շրաժալվեց իր մտադրությունից և պատերազմ սկսեց, հուսալով, որ ստեղծված հանգամանքներում երբ ամբողջ Հունաստանը իրենց կողմն է և թերևացիներն են միայն դուրս թողնված խաղաղության դաշնադրից հարմար առիթ է ներկայանում վրեժ լուծելու թերեխից: Սակայն իրադարձությունների ընթացքը շուտով ցույց տվեց, որ այս պատերազմի պատճառը ավելի շուտ զայրույթն է եղել, քան սառնարյուն հաշվարկը խաղաղության դաշինքը, իսկապես, ևակեդեմոնում կնքվեց սկիրոֆորիոնի տասնչորսին իսկ արդեն քսան օր անց՝ հեկատոմբեոնի հինգին սպարտացիները պարտվեցին Լևկտրալի ճակատամարտում: Այս ճակատամարտում ընկան հազար լակեդեմոնացի, Կլեոմբրոդոս արքան և նրան շրջապատած ամենախիզախ սպարտացիները: Նրանց մեջ ինչպես ասում են, եղել է գեղեցիկ Կլեոնիմոսը՝ Սփոդրիասի որդին որը երեք անգամ ընկել է թշնամու հարվածներից թագավորի կողքին և նույնքան անգամ էլ վեր կացել մինչև որ սպանվել է՝ մարտնչելով թերեացիների դեմ:

XXIX Այս պարտությունն անսպասելի էր սպարտացիների համար, և նույնքան էլ անսպասելի եղավ թերևացիների հաջողությունը, որի նմանը դեռևս չէր եղել հույների միջև մղվող պատերազմում: Այնուամենայնիվ պարտվածների արիությունը պակաս հիացմունք ու համակրանք չհարուցեց քան հաղթողների արիությունը: Քսենոփոնն ասում է, որ ականավոր մարդկանց վարքն ու խոսակցությունները հիանալի են նույնիսկ զվարճությունների պահին ու գինու սեղանի մոտ և ճիշտ է նախ այց ոչ պակաս այլ ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, թե իսչ են ասում կամ խոսում ականավոր մարդիկ՝ ձգտելով դժբախտության պահին էլ պահպանել արժանապատվություն: Այդ ժամանակ Սպարտայում տեղի էր ունենում Գիմնոպեդիաների տոնը քաղաքը լեցուն էր օտարերկրացիներով և թատրոնում երգչախմբերն էին մրցում, երբ Լևկտրալից պարտության բռնարելունք էկան: էֆորոսները, թեև նրանց համար սկզբից ևեթ պարզ էր որ այս պարտությունը տապալել է Սպարտայի բարեբախտությունը և որ նրա իշխանությունը Հունաստանում կործանվել է, այնուամենայնիվ թույլ շտվեցին ո՛չ երգչախմբերը հեռացնել թատրոնից, ո՛չ որևէ բան փոխել տոնի օրակարգի մեջ: Նրանք միայն զոհվածների անունները հայտնեցին ազգականներին՝ ս ներք սուրհանդակներ ուղարկելով, իսկ իրենք շարունակեցին ղեկավարել հանդիսախաղերն ու երգչախմբերի մրցությունները: Հաջորդ առա-

վուսյան, երբ արդեն բոլորին հայտնի էին դարձել զոհվածների և ողջ մնացածների անունները, սպանվածների հայրերը, ազգականները և մոտիկները հավաքվեցին հրապարակում և շողացող դեմքերով հպարտութամբ ու քերկրանքով լեցուն, ողջունում էին իրար: Ողջ մնացածների ազգականներն էլ ընդհակառակը, իրենց կանանց հետ մնացել էին աներում, առանց թե սգի մեջ էին: Եվ եթե նրանցից որևէ մեկը ստիպված էր լինում դուրս գալ տնից, ապա ըստ նրա արտաքին տեսքի ձայնի և հայացքի երևում էր, թե որքան մեծ է նրա վհատությունն ու ընկճվածությունը: Փա հատկապես նկատելի էր կանանց վրա նրանց, ովքեր սպասում էին հանդիպել իրենց որդուն՝ ճակատամարտից հետո ողջ մնացած, քայլում էին թախծոտ ու լուռ, իսկ նրանք էլ որոնց որդիների մահն արդեն ազդարարված էր, իսկույն տաճարներն էին մտնում ու միմյանց աջ ցելություն տալիս՝ ուրախ հպարտ տեսքով:

XXX. Սակայն, երբ դաշնակիցներն անշատ լեցին Սպարտայից և բոլորն սպասում էին, որ էպամինոնդասը, իր հաղթանակով հպարտ, ներխուժելու է Պելոպոնես, շատ սպարտացիներ նորից վերհիշեցին Ագեսիլայոսի կառույցի մասին կանխագուշակությունը: Նրանք մեծագույն վհատության մեջ ընկան և սարսափով համակվեցին աստվածության հանդեպ լնթադրելով, թե քաղաքի գլխին գծախտություններ են գալիս այն պատճառով, որ իրենք թագավորելուց զրկել են ատղջ օտքերով մարդուն՝ թագավոր ընտրելով կառին ու խեղանդամին, և դրանով իսկ խախտել հրամանը աստվածության, որը նրանց ամենից շատ զգուշացնում էր հենց ընդդեմ այս բանի: Եվ, այնուամենայնիվ շնորհիվ Ագեսիլայոսի փառքի, արիության ու այլ արժանիքների, նրանք շարունակում էին օգտվել սրա ծառայություններից ոչ միայն ռազմական գործելում որպես արքայի ու զորավարի, այլև քաղաքացիական գծություններում՝ որպես միջնորդի ու հաշտարարի: Բանն այն է, որ սպարտացիները շէին համարձակվում, ինչպես սահմանված էր ըստ օրենքի, քաղաքացիական պատվից զրկել այն քաղաքացիներին, որոնք ճակատամարտում վախկոտություն էին դրսևորել (Սպարտայում նրանց անվանում էին «լեղանճարներ»), քանզի այդպիսիք շատ-շատ էին որոնց թվում կային նշանավորագույն մարդիկ, այնպես որ կարելի էր ենթադրել, թե նրանք ապստամբություն կբարձրացնեն: Սյդալիսի «լեղանճարները» ըստ օրենքի ոչ միայն որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից են զրկվում, այլև ամսթալի է համարվում նրանց որևէ ազգակցի հետ ամուսնական կապի մեջ մտնելը: Ամեն ոք, ով հանդիպում է նրանց կարող է խփել նրանք պարտավոր են քայլել խեղճ խեղճ կեղտոտ հին խալտարզես

կարկատաննելով մաշված թիկնոցով և խուզել միայն մորուքի կեւը: Ահա թե ինչու վտանգավոր է եղել քաղաքում այդպիսի շատ բազմաթիւներ թողնելը այն ժամանակ երբ բավականին թվով զինվորների կարիք էր զգացվում: Այս հանգամանքներում սպարտացիները օրենսդիր ընտրեցին Ագեսիլայոսին: Ոչ մի բան չավելացնելով, ոչինչ չընջելով ու չփոխելով օրենքների մեջ նա ժողովրդական ժողով էկավ և ասաց «Սյօր պետք է օրենքներին թէ յլ տալ քնել, բայց վաղվա օրվանից և հետապսու այս օրենքները պետք է լիակատար ուժ ունենան»: Դրանով նա ոչ միայն պահպանեց պետութեան օրենքները այլև՝ բոլոր այլ մարդկանց քաղաքացիական լրատիվը:

Այնուհետև ցանկանալով երիտասարդութեանը դուրս բերել վհատութեան ու տխրութեան փնակից, նա ներխուժեց Արկադիա Այստեղ նա զգուշացավ վճռական ճակատամարտի մեջ մտնել հակառակորդի հետ, լայց Մանտինեայի մոտ լավթեց մի փոքրիկ քաղաք և ամայացրեց դաշտերը: Սրա շնորհիվ նա իր համաքաղաքացիներին ապագայի նկատմամբ նոր, լավսլուլն հայտնի նկընչեց ցոյց տալով ոչ հուսահատվելը դուրս վաղ է:

XXXI Դրանից շատ շանցած է պամինոնդասը դաշնակիցների հետ ներխուժեց Լակոնիա ունենալով ոչ պակաս քան քառասուն հազար ծանրազեններ, որոնց հեռակից կողոպուտի նպատակով գնում էին բազմաթիվ թեթևազեններ կամ բոլորովին անզեններ, այնպես որ ներխուժածների ընդհանուր թիվը հասնում էր յոթանասուն հազարի: Սյդ ժամանակներում գործացիք Լակեդեմոնիոն տիրում էին արդեն վեց հարյուր տարուց ոչ պակաս և այդ ամբողջ ժամանակաշրջանում ոչ մի թշնամի սիրտ չէր արել նրանց երկիրը մտնել բեռվտացիներն առաջին թշնամիներն էին, որոնց սպարտացիները տեսան իրենց հողում և որոնք մինչ այդ անձեռնմխելի մնացած ու չկողոպտված երկիրն այժմ ամայացնում էին հրով ու սրով անարգել առաջ գնալով մինչև գետն ու քաղաքը: Բանն այն էր, որ Ագեսիլայոսը սպարտացիներին շթույլատրեց ինչպես Թեոպոմպոսն է ասում, «պատերազմել այնպիսի հորձանքի ու հեղեղի դիմ» այլ գլավեց քաղաքի կենտրոնն ու ամենակարևոր կետերը, համբերութեամբ տանելով թերևացիների սպառնալիքներն ու ինքնագովութունները, որոնք գոռում էին, տալիս նրա անունը, կոչ անելով՝ որպես պատերազմի հրահրիչի ու բոլոր դժբախտությունների մեղավորի, մարտընչելու դուրս գալ հանուն իր երկրի: Բայց Ագեսիլայոսին քիչ հողս չէին պառճառում քաղաքում տիրող իրարանցոմբ ողբ և վազվզ քը տա

րեց մարդկանց, որոնք վրդովված էին պառաճածի առթիվ և կանանց, որոնք չէին կարողանում հանգիստ մնալ ու բուրբոնները խելքները կորցնել էին թշնամիների գոռում-գոչյուններից ու նրանց խարուչկների սեւերից: Եւ ափառքին ծանր հարված եղավ նաև այն որ, քաղաքն ընդունելով արդէս ամենաուժեղս ու հզորագույնը Հունաստանում, նա այժմ ունենում էր, թե ինչպէս է այդ քաղաքի ուժը երեւացել և անտեղի է դարձել այն գոռոզ պարծենկատութիւնը, — ուն ինքը հաճախ էր կրկնում, — թե, իբր, ոչ մի լակեղեմոնացի կին գեռ չի տեսել թշնամական ճամբարի ծուխը: Ասում են թե Մնատլիդեսն էլ մի անթեմացու հետ քաջութեան մասին վիճելիս երբ սա տեսել է «Իսկ մենք ձեզ հաճախ ենք հետ քշել Կեֆիսից» պատասխանել է «Յայց մենք ձեզ երբեք հետ չենք քշել Եվրոտասից»: Նույն կերպ է ոչնչով աչքի շքնկնող մի արարտացի ի պատասխան արդիվիացու այն դիտողութեանը, թե. «Ձեզնից շատերն են թաղված Արգոտում» Կա տախանել է «Յայց ձեզ չ' ոչ մեկը՝ Լակոնիայում»:

XXXII Պատմում են թե Մնատլիդեսը, որն այն ժամանակ էֆորոս էր, վախից իր երեխաներին նազով թաքուն անց է կացրել Կիթերաս: Ազեսիլայոսն էլ, երբ նկատեց որ թշնամիները միաբռնուն անցնելու եվրոտասը և ուժով սելխուժել քաղաքը թողեց մյուս բոլոր դիրքերը և լակեղեմոնացիներին շարեց քաղաքի կենտրոնական բարձրագիւր մասերի առաջ, Հենց ճիշտ այդ ժամանակ լեռներում ձյան առատութեամբ պատճառով Եվրոտասը դուրս հորդեց անիւրից ու վարարեց փովեց սովորականից ավելի շայն քայց գետանցումը յանձաղուսով դժվարացրեց ոչ այնքան հոսանքի արագութիւնը որքան ջրի սառցային պաղութիւնը: Ազեսիլայոսին մատնացուցց արեցին էպամինոնդասին, որը դուրս էր եկել շարքի առաջ ինչպէս ասում են, նա երկար նայեց թերեացի դորավարին հայացքով ուղեկցելով նրան սակայն միայն ասաց. «Ի՛նչ անհասգիստ մարդ է» Ու քան էլ էպամինոնդասը փառասիրութիւնից ջանաց ճակատամարտ տալ հենց քաղաքի մէջ և հաղթանակ կանգնեցնել, շարտադրեց խորամանկութեամբ դուրս հանել Ազեսիլայոսին կամ մտրախ շրտիլով նրան, ուստի և դուրս ելալ ճամբարից, քաղաքից հետ քաշվեց և սկսեց ամառացնել երկիրը:

Այնինչ Լակեղեմոնիայում մոտ էրկու հարյուր քաղաքացի՝ անարժաններից ու փշադրածներից, որոնք վաղուց արդեն դավադրութիւն էին կազմել զբաղեցին Հիստրիոնը՝ ուժեղ ամրացված ու անմատչելի մի կետ, որտեղ գտնվում էր Արտեմիոսի տաճարը: Լակեղեմոնացիներն ուղեցին իսկույն նետվել նրանց վրա, լայց Սզլսիլայոսը, խռովութիւնից

վսի ենալով, մնացածներին հրամայեց հանգստութիւն պահպանել, ինքըն էլ, թիկնոցը վրան, միայն մեկ ստրուկի ուղեկցութեամբ, մոտեցավ դավադիրներին ասելով, թե նրանք շին հասկացել իր հրամանը. ինքը նրանց այստեղ չի ուղարկել և ոչ էլ բոլորին միասին, այլ ոմանց՝ այնտեղ (նա մատնացույց արեց մի ուրիշ տեղ) մյուսներին՝ քաղաքի այլ թաղամասեր: Դրանք էլ, լսելով նրան ուրախացան կարծելով թե իրենց մտադրութիւնը բացահայտված չէ և բաժանվելով գնացին այն տեղերը որ նա մատնանշել էր: Ազեսիլայոսն անհապաղ մարդ ուղարկեց մյուս զորականների հետեից և նրանց հետ գրավեց Հիսորիոնը: Իսկ գիշերը նա հրամայեց ձերբակալել և սպանել դավադիրներից մոտ տասնը-հինգ հոգու: Շուտով բացահայտվեց սպարտացիների մի ուրիշ, էլ ավելի նշանակալից դավադրութիւն դավադիրները հավաքված էին մի տան մեջ՝ նախապատրաստվելով հեղաշրջում կատարել: Բայց այդ մեծագույն անկարգութեան մեջ նույնքան վտանգավոր էր ինչպես նրանց դատի տալը, այնպես էլ դավադրութիւնն անուշադրութեան մատնելը: Ուստի Ազեսիլայոսը խորհուրդ անելով էֆորոսների հետ, հրամայեց նրանց սպանել առանց դատարանի, թեև առաջ ոչ մի սպարտացի մահապատժի չէր ենթարկվում առանց դատաքննութեան: Պերիեկներից և իլտաներից շատերը, որոնք զորքի կազմում էին, քաղաքից վախան թշնամու մտա: Քանի որ դա ոգու անկում էր առաջացնում զորքի մեջ, Ազեսիլայոսը իր սպասավորներին կարգադրեց ամեն առավոտ շրջել ճամբարում զորականների անկողինների մոտերը, հավաքել փախածների զենքերը և թաքցնել: Դրա շնորհիվ փախստականների թիվը անհայտ էր մնում:

Որոշ մատենագիրներ ասում են թե թերեացիները Լակոնիայից ի սհանջել են ցրտերն ընկնելու պատճառով, ինչպես և այն պատճառով որ արկադացիները սկսել էին անկանոն կերպով հեռանալ և դեսուդեն փախչել, մյուսները, թե՛ նրանք առանց այդ էլ այնտեղ անց էին կացրել ամբողջ երեք ամիս և հասցրել էին ամաչացնել երկրի մեծ մասը: Թեոպոմպոսն էլ այլ կերպ է պատմում բեոտարքոսներն արդես որոշած են եղել նահանջել, երբ նրանց մոտ է եկել սպարտացի Փրիքսոսը՝ նահանջելու համար Ազեսիլայոսի կողմից նրանց որպես վարձ բերելով տասը տաղանդ, այնպես որ կատարելով այն, ինչ որ նախապես որոշված է եղել, նրանք թշնամուց դեռ ճամփի ծախս էլ են ստացել: Բայց ես շեմ հասկանում, թե ինչպե՞ս կարող էր մեն-միայն Թեոպոմպոսն իմանալ այդ մինչդեռ մյուս բոլորի համար դա անհայտ է մնացել:

XXXIII Բայց բոլորը պնդում են, թե իր փրկութեան համար Սպարտան այն ժամանակ պարտական է եղել Ազեսիլայոսին, որն այդ անգամ հրա-

ժարվել է բնականից իրեն բնորոշ հատկություններից՝ փառասիրությունից ու կամակորությունից և գործել է մեծ զգուշությամբ: Չնայած դրան, այդ անկումից հետո նա չկարողացավ իր քաղաքի հղորդությունն ու փառքը բարձրացնել նախկին մակարդակին: Ինչպես ու պատահում է առողջ մարմնի հետ որն ընտելացված է մշտական ու խստագույն ուժիմի, այդպես պատահեց և պետության հետ որպեսզի կործանվեր նրա ողջ լարօրությունը պարզվեց որ բավական է գեթ մեկ սխալ, կշեռքի նծարի գեթ մեկ վայրիվերում Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև պետական կառուցվածքի հետ որը լավագույնս հարմարեցված է եղել խաղաղության, համախոհության ու առաքինության համար, փորձում էին չիացնել բռնի իշխանությունը և տիրապետությունն ուրիշների վրաս: Իսկ ի կիրառությանը բոլորովին ավելորդ էր համարում քաղաքի բարեկեցության ու ծաղկման համար: Հենց դա էլ Սպարտան տարավ դեպի անկում:

Ազդեցիկացրան այնուհետև իր գառամյալ տարիքի պատճառով հրաշարվեց ղեկավարել արշավանքները նրա որդին էլ՝ Արքիդամոսը, այն գորքի հետ, որը նրան օգնության էր եկել Սիցիլիայի բռնապետից, արևադարձներին հաղթեց այսպես կոչված «Անարցունք ճակատամարտում» (այնտեղ Արքիդամոսի զինվորներից ոչ մեկը չէր սպանվել, խկ թշնախներից շատ-շատերն էին ընկել) Այդ ճակատամարտը ամենալավ տպագույցն էր այն բանի թե որքան էր ուժասույառ Լոել Սպարտան: Նախկինում թշնամու գեմ ուարած հաղթանակը այնախի սովորական լան էր համարվում, որ շրա պատվին գոհ չէին մատուցում արքադադից բացի ճանատամարտից վելադարձածներն առանձնապես հպարտություն չէին զգում, և հաղթանակի լուրը նույնիսկ ու որի առանձնապես չէր ուրախացնում Այսպես Մանտինեայի ճակատամարտից հետո որ նկարագրում է Թուկիդիդեսը, նշան, ով հաղթանակի լուրն էր բերել սպարտական իշխանությունները իբրև աշքալու անքի պարզև շուղարկեցին այլ բան, քան մսի մի կտոր ընդհանուր հաջկերույթի սեղանից: Իսկ այս անգամ, երբ ճակատամարտի լուրն ստացվեց ստրա և ժամանեց Արքիդամոսը, ոչ ոք արդեն չկարողացավ գտել իր զգացմունքները: Ուրախության արցունքներն աշքերին, իշխանության բոլոր ներկայությունների հետ առաջինը նրան դիմավորեց հայրը: Բազմաթիվ ծերունիներ ու կանայք իշան գետափ ձևքները երկինք կարկառելով ու գոհություն մաղթելով աստվածներին ասես թե հենց այդ օրը Սպարտան մաքրել էր իր խայտառակությունը և նորից էրավունք ձևք բերել նայելու ճաճանշափայլ արեգակին: Ասում էն թե մինչև այս ճակատամարտ-

տը տղամարդիկ սիրտ չէին անում ուղիղ յայել կանանց աչքերին ամա-
չելով իրենց պարտության համար

XXXIV Երբ Մեսսենեն նորից հիմադրվեց Էպամինոնդասի ձեռքով,
և ՚, ա նախկին քաղաքացիները սկսեցին հավաքվել բոլոր կողմերից,
լակոդեմոնացիները ի վիճակի չէին խանդարել և սիրտ չէին անում զեն-
քով գնալ նրանց վրա բայց վրգովում էին ո ղայրանում Ադեսիլայուսի
գեմ որ նրա թագալորության ժամանակ իրենք զրկվել էին մի երկրից,
ուր Լակոնիային շէր ղիջում իր շափերով և պտղաբերությամբ գերազան-
ցում էր Հունաստանի մյուս մարդերին, մի երկրից, որին նրանք այնքան
ժամանակ տիրել էին: Ահա թե ինչու Սգեսիլայուսը նույնիսկ շընդունեց
թերեացիների առաջարկած խաղաղության դաշինքը Սակայն խոսքով
չցանկանալով զիջել այդ երկիրը նրանց, ովքեր իրականում արդեն իրենց
ձեռքում էին սլահում այն և համառելով նա ոչ միայն հետ շտացավ
այդ մարդը, այլև քիչ մնաց կորցնելու Սպարտան՝ խաբվելով թըշ-
նամու ուղմական խորամանկությունից: Բանն այն ., որ մանտինեացի
ները նորից անշատվեցին Թերեից և օգնության կանչեցին լակոդեմոնա
ցիներին, Էպամինոնդասն իմանալով, որ Ադեսիլայուսը ղորքով դուրս է
եկել և մոտենում է իրեն, գիշերը մանտինեացիներից աննկատ դուրս
եկավ ճամբարից և բանակը տալավ Տեգեայից ուղիղ դեպի Լակոդեմոն:
Շրջանցելով Ադեսիլայուսին, նա քիչ մնաց հանկարծակի հարձակումով
զավթեր քաղաքը, որը դուրկ էր որևէ պաշտպանությունից: Սակայն Ագե-
սիլայուսին լուր տվեց Կալլիսթենեսի ասելով թեսսիացի էվթինոսը իսկ
բատ Քսենոփոնի՝ ինչ որ կրետացի: Ագեսիլայուսն անհապաղ Սպարտա
ուղարկեց հեծյալ մի սուրհանդակ, իսկ կարճ ժամանակ անց հայտնվեց
նաև ինքը: Մի քիչ ավելի ուշ թերեացիները անցան Եվրոտասը և հար-
ձակում գործեցին քաղաքի վրա: Ագեսիլայուսը պաշտպանվեց իր տարի-
քի համար անսովոր վճռականությամբ ու անողորբար քանի որ տես-
նում էր որ փրկությունը հիմա արդեն ոչ թե զգուշավոր պաշտպանու-
թյան մեջ է այլ՝ խենթ խիզախության Այդպիսի խիզախության նա
առաջ երբեք չէր ապավինում և ազատություն չէր տալիս դրան, բայց
հիմա լոկ դրա շնորհիվ հետ մղեց վտանգը, քաղաքը խլեց Էպամինոն-
դասի ձեռքից հազթանշան կանգնեցրեց և երեսաներին ու կանանց
ցույց տվեց որ լակոդեմոնացիք ամենաարժանավոր կերպով փոխու-
տուցում են հայրենիքին այն դաստիարակության համար որ նա իրենց
տվել է Այս ճակատամարտում առանձնապես աչքի ընկավ Արքիդամո-
սը որն անսովոր արիությամբ ու ճարակությամբ արագորեն վազվզում էր
նեղլիկ փողոցներով դեպի առավել վտանգավոր տեղերը և իրեն շոջա

պատած զի վորսերի մի փ քրիկ խմբով ասենուրեք թշնամուն դիմազբ
բություն էր ցույց տալիս: Հոյակապ ու զարմանքի արժանի տեսայաս,
ոչ միայն համաքաղաքացիների, այլև հակառակորդի համար, մասուցեց
նաև Հիսսիդասը՝ Փիբիդասի որդին: Հիանալի կազմվածքի տեր, բարձ-
րահասակ ու սլացիկ Հիսսիդասն այն տարիքում էր, երբ մարդիկ պա-
տանեկությունից աչքանալով, գտնվում են ուժերի ծաղկման շրջանում:
Նա անից դուրս էր թռել բոլորովին մերկ՝ մարմինը շծածկած ոչ զրա-
հով ոչ զգէստով, յուզով օծված, մի ձեռքին՝ նիզակ մյոսում սուր, և
նւտվիլ էլ թշնամիների ամենախիտ տեղը, գետին տապալիչով ու խո-
ցելով բոլոր նրանց, ովքեր դեմն էին դուրս եկել: Նա նույնիսկ չէր վի-
րավորվել դա նրանի՞ց էր արդյոք, որ խիզախության համար որպես
դարգև նրան պահպանում էր աստվածությունը թե՛ նրանից, որ թշնա-
մուն թվացել էր գերբնական մի էակ Ասում են, էֆորոսները նրան սկըզ-
յում պարգևատրել են պսակով, ապա հազար դրախտ տուգանքով պատ-
մել, որ սիրտ է արել վտանգին ընդունաչ գնալ առանց զրահի:

XXXV Մի քանի օր անց տեղի ունեցավ Մանտինեալի ճակատա-
խարտը: Եվ էպամինոնդասն արդեն հետ էր շարժել հակառակորդի առա-
ջին շարքերը, նեղել էր թշնամուն և արագ հալածում էր նրան, հրբ, ինչ-
պես պատմում է Դիոսկորիդեսը նրա դեմ դուրս եկավ լախոնացի Ան-
տիկրատեսը և նիզակահարեց: Մակաչն լակեդեմոնացիները մինչև հիմա
էլ Անտիկրատեսի սերունդներին անվանում են Մախերիոններ, և դա
ապացուցում է որ էպամինոնդասը խոցված է եղել մախերայով կարճ
սրով: Կենդանության ժախնակ միշտ վախենալով էպամինոնդասից՝
սպարտացիներն այնպես էին հիանում Անտիկրատեսի սխրանքով, որ
Փողովրդական ժողովի որոշմամբ նրան ոչ միայն հատուկ պարգևներ ու
զատվերներ էին տալիս, այլև ամբողջ տոհմին ազատեցին հարկերից
որից այժմ էլ դեռ օգտվում է Կալլիկրատեսը՝ Անտիկրատեսի սերունդ
ներից մեկը Այս ճակատամարտից և էպամինոնդասի մահից հետո հույ-
ները միմյանց հետ հաշտություն կնքեցին: Ազեսիլայոսը ցանկանում էր
խաղաղության դաշնագրից դուրս թողնել մեսսենացիներին՝ նրանց չճա-
նաչելով ինքնուրույն պետության քաղաքացիներ: Քանի որ մնացած բո-
լոր հույները կողմ էին մեսսենացիներին պայմանագրի մասնակիցների
թվում ընդգրկելուն և նրանցից երկուսն ընդունելուն, լակեդեմոնացիք հրա-
ժարվեցին մասնակցել հաշտության դաշնագրին և միայնակ շարունակե-
ցին պատերազմը՝ հուսալով հետ դրավել Մեսսենեն: Այդ պատճառով
Սգեսիլայոսին համարում էին հավերժ ազամատենչ, դաժան ու համա-
մարդ. չէ՞ որ նա բոլոր միջոցներով խարդավանում էր և խոչընդոտում

ընդհանուր խաղաղությանը, իսկ մյուս կողմից, դրամի կարիք զգալով՝ պետք է Սպարտայի իր բարեկամներին նեղեր փոխառություններով ու ծանր տուրքերով, փոխանակ, այդպիսի ծանր հանգամանքներում՝ ձեռքից բաց թողնելով այդքան քաղաքներ և այդպիսի իշխանություն ժողովում ու ցամաքում, վերջ տար աղետներին և այդպես ազահորեն չհետամտեր մեսսենական տիրույթներին ու եկամուտներին

XXXVI Է՛լ ավելի վատ համբավ վաստակեց նա երբ ծառայության ընդունվեց Տաքոսի՝ Եգիպտոսի կառավարիչի մոտ: Ոչ ոք հավանություն չէր տալիս այն բանին, որ մի մարդ, որն Հունաստանում առաջինն էր համարվում, որի փառքը տարածվել էր աշխարհով մեկ այժմ իրեն դրել էր տրամադրության տակ մի բարբարոսի, որն անշատված էր իր թագավորից, դրամի համար ծախել էր իր անունն ու փառքը վերածվելով վարձկան զորքի առաջնորդի: Նույնիսկ եթե ութսունից վեր տարիքում, վերքերի սպիներով պատված մարմնով, իա նորից, ինչպես անցյալում հանձն առնե՞ր հույների ազատագրման սյալբարի փառավոր ու հիանալի առաջնորդությունը ապա այդ դեպքում էլ չէր կարելի նրան շահնդիմանել ավելորդ փառասիրության համար: Չէ՞ որ փառավոր գործի համար էլ կա համապատասխան տարիք ու պատե՞՞ ժամանակ, և ընդհանրապես էլ փառավորը խայտառակից տարրերվում է ամենից առաջ պատշաճ միջոցներով: Բայց Ագեսիլայոսը բոլորովին չէր մտահոգվում դրանից և ոչ մի բան չէր համարում անարժան, եթե դա օգտակար էր պետությունը: Ընդհակառակը նրան անվայել բան էր թվում ապրել քաղաքում անզորք և հանգիստ սպասել մահվան: Ուստի նա Տաքոսի կողմից ուղարկված միջոցներով վարձկաններ հավաքեց, մի քանի նավ հանդերձավորեց և ճանապարհ ընկավ՝ հետք որսելս խորհրդակցաններ ինչպես նախկինում, վերցնելով երեսուն սուլարտացի:

Երբ Ագեսիլայոսը ժամանեց Եգիպտոս, նրա նավի մի տեղան թագավորի ամենանշանավոր զորավարներն ու մեծամեծերը, որպեսզի իրենց հարգանքը հավաստեին: Եվ մնացած եգիպտացիները, որոնք շատ էին լսել Ագեսիլայոսի մասին սպասում էին նրան անհամբերությամբ: Բոլորը վաղում գալիս էին որ նայեին նրան: Իսկ երբ նրանք փայլքի ու պերճաշուք արտաքինի փոխարեն տեսան ծովափի խոտին պառկած փոքրահասակ ու հասարակ արտաքինով էծանագին կոպիտ թիկնոց հագին մի ծերունու սկսեցին կատակել ու ծիծաղել նրա վրա: Ոմանք նույնիսկ ասում էին «Ի՞նչը ոնց որ առակում ասվածը լինի, «Լեռը երկնեց և մուկ ծնեց» Է՛լ ավելի դարձացան նրա տարօրինակ ճաշակից, երբ բերված ու մատուցված հյուրընկալության րնժաններից նա ընդունեց մի-

այն ցորենի ալյուր, հորթեր ու սագեր հրաժարվելով նրբին համեմունք-
ներից, թխվածքներից ու անուշահոտություններից, և ի պատասխան թա-
խանձագին խնդրանքների ընդունել նաև այդ ընծաները նա առաջար-
կից դրանք յաժանել իլոտներին: Սակայն, ինչպես թեոփրոսաստեան է
ասում, նրան՝ դուր եկավ եգիպտական եղեգը, որից հյուսում են սայլ
նրյ ազիլ պսակներ, և վերառառնալիս խնդրեց ու թագավորից մի քիչ
ուսուցավ այդ եղեգնից:

XXXVII. Տեղ հասնելով՝ նա միացավ Տաքոսի հետ որն ղբաղված
էլ այշավանքի նախապատրաստությամբ: Սակայն Ագեսիլայոսը ոչ թե
ղյտավոր հրամանատար նշանակվեց, ինչպես հույս ուներ, այլ միայն
վաթճկանների առաջնորդ նավատորմի հրամանատարն էր աթենացի
Քաբրիասը, իսկ ամբողջ զորքինը Տաքոսն ինքը: Սա առաջին բանն էր,
որ վշտացրեց Ագեսիլայոսին, բայց դրանից բացի մյուս բոլոր բանե-
րում էլ նա ստիպված էր սրտնեղությամբ տանել եգիպտացու պարծեն
կոտությունն ու սնափառությունը: Նա, հակառակ իր այժանապատվու-
թյանն ու փառքին, անառարկելիորեն ենթարկվելով Տաքոսին, նրան ծո-
վային արշավանքի էր ուղեկցում դեպի Փյունիկիա, մինչև որ, վերջապես,
հանգամանքներն ավելի բարենպաստ դարձան: Բանն այն է, որ Նեքտա
նեքիսը Տաքոսի հորեղբորորդին, որը նրա զորամասերից մեկը պետն էր
անչատվեց նրանից, եգիպտացիների կողմից հաշակվել է թագավոր և մարդ
ուղարկեց Ագեսիլայոսից օգնություն խնդրելու: Նույնը խնդրեց նաև Քար
բիասից՝ երկուսին էլ խոստանալով մեծամեծ ընծաներ նրբ Տաքոսն
իմացավ այդ բանը, սկսեց համոզել նրանց, որ շեռտանան իրենից, և
Քաբրիասը հորդորելով ու համոզելով փորձում էր պահպանել բարեկա-
մական հարաբերությունները Ագեսիլայոսի և Տաքոսի միջև: Բայց Ագե-
սիլայոսը պատասխանեց. «Քաբրիա՛ս, դու այստեղ ես եկել քո ցանկու-
թյամբ, ուստի կարող ես վարվել ուղածիդ պես իսկ ինձ եգիպտացին՝
րի մոտ որպես զորավար ուղարկել է իմ հայրենիքը Հեռեաբար, ես չեմ
կարող կովել նրանց ղեմ, ում մոտ ուղարկված էմ որպես դաշնակից,
եթե Սպարտայից նոր հրաման լստանամ»: Այս խոսակցությունից հե-
տո նա մի քանի հոգու ուղարկեց Սպարտա որոնք պետք է այնտեղ մե-
ղս դրեին Տաքոսին, իսկ Նեքտանեքիսին ամեն կերպ գովաբանեին: Տա
քոսն ու Քաբրիասն էլ իրենց կողմից լիազորներ ուղարկեցին Սպարտա,
բնդ որում առաջինը վկայակոչում էր վաղեմի բարեկամությունն ու դա-
շինքը, իսկ երկրորդը խոստանում էր է՛լ ավելի նվիրված բարեկամ լի-
նել Սպարտային, քան եղել էր մինչև այժմ: Կակեդեմոնացիք լսելով դես-
պաններին՝ եգիպտացիներին պատասխանեցին, որ դործը թողնում են

Սգեսիլայոսի լայն հայեցողությւնը ի կ'իրեն Սգեսիլայ սին էլ հյաման ուղարկեցին, թէ պետք է նայել լոկ այն բանին, որ իր արարքնէլը օգուտ բերեն Սպարտային: Ահս այսկերպ Սգեսիլայոսը իր լարձկան ներով անցավ նեքտանեքիսի կողմը հայրենի, ի շահի պատրվակի տակ կատարելով անտեղի ու անվայել մի արարք: Քանզի եթէ մի կողմ թողնենք այդ պատրվակը ապա նրա արարքի արդարացի անվանումը կլինի գավաճանություն: Բայց լակեղեմնացիները որոնք բարիքի գլխավոր նշանը համարում են հայրենիքին բերվող օգուտը լին ճանաչում արդարացի որևէ այլ բան, քան այն ինչը, իրենց կարծիքով մեծացնում է Սպարտայի հզորությունը

XXXVIII Տաքոսը կրք վարձկաննէլը լքեցին նրան փախուստի ղմեց բայց Մենդեսո մ նեքտանեքիսի դեմ ապստամբեց նույնպես թագավոր հռչակված մի ուրիշ մարդ և, հավաքելով հարյուր հազարանոց մի բանակ՝ շարժվեց նրա վրա: Յանկանալով քաջալերել Ագեսիլայոսին՝ նեքտանեքիսը նրան ասում է, թէ չնայած թշնամին մեծաքանակ է, սակայն սաղմական գործում անփորձ արհեստալորների մի անկարգ ամ լոխ է, ուստի կարելի է բանի տեղ շոնել: Ագեսիլայոսը պատասխանում է դրան «Բայց ևս լախենում եմ ոչ թէ յրանց քստակից այլ հենց անփորձությունից ու տգիտությունից այդպիսիք դժվար կխաբւեն: Քանզի անսպասելիորեն խաբել կարելի է միայն նրանց, ովքեր կասկաստում են, թէ կխաբւեն, սպասում են դրան և փորձում են պաշտպանվել դրանից Իսկ նա, ով ոչինչ չի կասկածում և չի սպասում ոչ մի առիթ չի տալիս իրեն խաբել ցանկացողին, ինչպես որ անշարժ կանգնած ըմբշամարտիկը հակառակորդին հնարավորություն չի տալիս իրեն այդ գիրքից հանել: Գրանից քիչ անց մենդացին, նրա մոտ ուղարկելով իր մարդկանց փորձեց Սգեսիլայոսին իր կողմը գրավել: Դա էրկյուղ ներշնչեց նեքտանեքիսին: Իսկ երբ Ագեսիլայոսն սկսեց նրան համոզել ճակատալայտ տալ որքան հնարավոր է շուտ և շփոթել գատերագմը այն մարդկանց հետ ովքեր թեև ասփորձ են գինւորական գործում բայց կարող են իրենց մեծալանակության շնորհիվ հեշտորեն շրջապատել նրան, ճամբարը փոսով շրջախակել և ընդհանրապէս շատ բաներում կանխել նրա քայլերը, նեքտանեքիսն սկսեց էլ ավելի կասկածել ու վախենալ իր գաշնակցից և նահանջեց դեպի մեծ, լավ ամրացված քաղաքը: Ագեսիլայոսը շատ վիրավորված էր այդ անվստահությունից սակայն ամառելով երկրորդ անգամ անցնել հակառակորդի կողմը և գործն անալատ թողնել, հետևեց նեքտանեքիսին և նրա հետ մտով ամրոցը:

XXXIX. Քշնամին հետևից եկավ և սկսեց քաղաքը շրջապատել հո-
լապատնեշով ու փոսով: Եզիպտացիին նորից սարսափով համակվեց նա
փախնում էր շրջապատումից և լղում էր մարտի բռնվել, հույները
ջորմորեն պաշտպանում էին նրան, քանի որ ամբողջում հացի պաշարներ
չկային: Բայց Ազիպտացուսը վճռականորեն խոչընդոտում էր այդ մտա-
դրությունը և Էզիպտացիները առաջվանից ավելի էին վատարանում
նրան ու՛ վառելով արքայադավ Սակայն նա հիմա շատ ավելի հանգիստ
էր տանում գլխարուտանքը և սպասում էր հարմար առիթի, որպեսզի ի
կատար ամեր այն ռազմական խորամանկությունը, որ ինքը մտածել էր:
Իսկ այդ խորամանկությունը հետևյալն էր Քշնամին խոր փոս էր փո-
րել քաղաքի պարիսպների շուրջը, որպեսզի վերջնականապես փակե-
ր պաշարվածներին: Երբ ամբողջ քաղաքը շրջապատող փախ երկու ծալ-
րերը մտակցան իրար, Ազիպտացուսը սպասելով մութն ընկնելուն՝ հույ-
ներին հրամայեց զինվել ներկայացավ թագավորին և ասաց հետևյալը
«Պատանի, փրկություն ժամը հասել է Ես այդ մասին շտտեցի ավելի
խել, քան դրա գալը, որպեսզի դա գալուն շխանդարեի: Քշնամին ինքն
ի սեփական ձեռքով սրիվ տվեց մեզ սպանուացող լտանգը՝ փորելով
այսպիսի լի փոս, որի պատրաստի մասը խոչընդոտ է ներկայացնում
հենց իր համար իրեն զրկելով թվական գերազանցությունից, իսկ փո-
սի ծալրերի միջև եղած տարածությունն էլ մեզ թույլ է առելիս նրա դեմ
նարտնչել հավասար պայմաններում: Համարձակ եղիր: Աշխատի՛ր քեզ
դրսևորել որպես քաջ ազամարդ մեզ հետ միասին առաջ նետվիր և
փրկի՛ր քեզ ու թո՛ւ ամբողջ գործը: Չէ՛ ու մեր դեմ կանգնած թշնամին լի
գիմանա մեր գրոհին իսկ մնացածները մեզնից բաժանված են խրամա-
տով և շնն կարողանա մեզ վնաս պատճառել: Ներտաներիսն ապշեց
Ազիպտացուսի հնարամտությունից, կանգնեց հունական շարքի մեջտե
գում և զլոհեցելով թշնամ լլա նրան հեշտությունը փախուստի մատ
ն էր


Հենց որ Ազիպտացուսը շահեց ներտաներիսի վատահույությունը, նո-
րից գիմեց նույն ռազմական խորամանկությանը մերթ նահանջելով
մերթ մոտենալով, մերթ շրջանցում կատարելով՝ Ազիպտացուսը թշնամու
մեծ մասին բշեց մայրից այնպիսի մի տեղ որը երկու կողմից լղերված
էր խորը ջրով լեցուն փոսերով: Երկու փոսերի արանքը նա շտտեհեց
այնտեղ շարելով իր փաղանդի մարտական դիժը և զբանով հասավ այն
բանին, որ թշնամին կարողանում էր նրա դեմ գորսա գալ հավասար
թխով մարտիկներով և միևնույն ժամանակ լ վիճակի շեր թևանցել կամ
դուրս դալ նրա փաղանդի թիկունքը: Ուստի մի կարճ ժամանակ գիմադ

րելուց հետո փախուստի դիմեցի: Նրանցից շատերն սպանվեցին՝ մնացածներն էլ ցրիվ էկան:

XI Իրանից հետո եգիպտացին ամրապնդեց ու կայունացրեց իր իշխանութիւնը Յանկանալով արտահայտել իր սերն ու համակրանքը Ագեսիլայոսի նկատմամբ, Նեքտանեբիսն սկսեց խնդրել նրան մնալ իր հետ և ձմեռն անցկացնել Եգիպտոսում: Բայց Ագեսիլայոսը, գիտենալով, որ Սպարտան պատերազմ է մղում վարձկաններ է պահում և դրա համար էլ դրամի կարիք ունի տուն էր շտապում: Նեքտանեբիսը նրան մեծամեծ պատիվներով առատ ընծաներով և, ի թիվս պատվաւոր աչլ նվերների պատերազմը վարելու համար տալով երկու հարյուր երեսուն տաղանդ ճանապարհեց: Արդեն ձմեռն եկել էր, և Ագեսիլայոսը իր նավերով ընթանում էր ցամաքից շատ շեռտանալով նա ափ իջավ Աֆրիկայում, մի անմարտաբնակ վայրում, որը կրում է Մենելավոսի նավահանգիստ անունը, և այստեղ մեռավ ութսունչորս սարեկան հասակում՝ Պլալ տալում քառասուն մեկ տարուց ավելի թագավորելուց հետո, որից ավելի քան երեսուն տարին ընդհուպ մինչև Լեկտրաչի ճակատամարտը, առավել ազդեցիկ ու սեծազոր մարդն էր Լակեդեմոնում և համարվում էր ասես թե առաջնորդս ու արքան համայն Հունաստասի:

Լակեդեմոնացիները այսպիսի սովորութիւն ունեն. ովքեր մեռնում են, օտարութեան մեջ նրանց ժարմինները թաղում են տեղում իսկ թագավորներինը տանում են հայրենիք: Ուստի Ագեսիլայոսին ուղեկցող սպարաացիները նրա Դարմինը, մեղր շինելու պատճառով պատեցին հալած մոմով ապա հասցրին Լակեդեմոն: Թագավորական իշխանութիւնն անցավ Ագեսիլայոսի որդի Արքիլամոսին և նրա սոհմի ձեռքին մնաց մինչև Ագիսը, որը Ագեսիլայոսից հետո եղավ հինգերորդ արքան և հինավուրց պետական կառուցվածքի վերականգնման փորձ անելիս ընկավ Լեոնիդասի ձեռքով:





Պ ու մ ա կ ե ո ս

1 Պոմպեոսի հանդեպ հռոմեացի ժողովուրդը, ըստ երևույթին, կգրում աածում էր ճիշտ այնպիսի ղգացումներ, ինչպիսիք էսբիլեսի Պրոմիթեոսը Հերակլեսի իր փրկարարի հանդեպ որին նս ողջունում է հն սեյալ խոսքերով

Թշնամյ հո իրև ի որդ

Իրոք, հռոմեացիները ոչ մի լորավարի այնպես ուժգին և այնպես դախանորեն չէին առում, ինչպես Պոմպեոսի հորը՝ Ստրաբոնին: Վերջինիս կենդանության օրոք վախենում էին նրա ղենքից (նա նշանավոր պարական էր), իսկ երբ Ստրաբոնը մեռավ կայծակի հարվածից, նրա մեյմինը հուզարկավորության ժամանակ թաղման մահճից ցած նետեցին և անարգեցին: Մյուս կողմից, հռոմեացիներից ոչ ոք, Պոմպեոսից բացի ի արժանաղել ժողովրդի կողմից այնպիսի սիրո— սեր, որը ծագիր այդ ղ վաղ այդքան սրընթաց աճեր երջանկության մեջ և այդքան հուսալի պ պս պար գծրախառությունների ժամանակ: Պոմպեոսի հոր ղ կառամամբ աակաթյան պատճառը միայն նրա անհագ շահասիրությունն էր նրա որդու հանդեպ սիրո համար, բնոհակառակը շատ հիմքեր կալին: շափավոր տարերակերպը սերը սաղմական վարժությունների նկատմամբ, խոսքի համոզակամությունը, աղնիվ բնավորությունը, սիրալիր վարվեցողությունը ախլա սր ոչ ոք իր նկրտումներով նրանից ավելի սակավապետ չէր, ոչ ոք ղր կարողանում առավել հաճելիորեն ծառայություն մատուցել կարիքավորներին: Դրան ավելացրած, երբ նա որևէ

րան էր տալիս, ապա տալիս էր անբռնազբոսիկորեն իսկ ընծաներ ընդունում էր արժանապատվությամբ

II. Պատանության շրջանում Պոմպեոսն ունեցել է բավականին գրավիչ արտաքին որը մարդկանց նրա օգտին էր տրամադրում ավելի վաղ քան նա կսկսեր խոսել Հաճելի արտաքինը միանում էր վեհության ու մարդասիրության հետ և նրա ծաղկուն սլատանության տարիներին արդեն ղգաց լում էր դալիք հասունության ուժը և արքայական բարքը: Փափուկ, հետ տված մաղերը և աշխույժ փայլվումն աչքերը նրան տալիս էին Ալեքսանդր արքայի պատկերների նմանությունը (ասենք ոչ այնքան իսկական նմանություն կար, որքան խոսակցություն կար այդ մասին): Ուստի սկզբում, երբ Պոմպեոսին տալիս էին այդ հերոսի անունը նա չէր հրաժարվում դրանից այնպես որ ոմանք նույնիսկ ծաղրով սկսեցին Ալեքսանդր անվանել նրան Այսպես, Լուցիոս Փիլիպոսը նախկին կոնսուլը, դատարանում Պոմպեոսին պաշտպանելիս, ասել է «Անպասելի ոչինչ չկա որ Փիլիպոսը սիրում է Ալեքսանդրին»: Պատմում են, որ Ֆլորա սնունդով հետերան արդեն պառաված տարիքում բավակա նությամբ էր հիշում Պոմպեոսի հետ ունեցած իր կապը ասելով, թե երբեք նրա անկողնուց ի բաժանվել առանց ափսոսանքի Ֆլորան պատմում էր նաև, թե իրեն սիրահարված է եղել Պոմպեոսի մտերիմներից մեկը ոմն Գեմինիոս, որն իրեն Ֆլորային շատ գլխացավանք է պատճառել իր սիրահետումներով: Վերջապես ինքը հայտնել է որ չի կարող նրա ձգտումները բավարարել Պոմպեոսի պատճառով: Այնժամ Գեմինիոսը դիմել է հենց Պոմպեոսին, և սա հետերային զիջել է ընկարոջը: Այդ ժամանակվանից Պոմպեոսը բաժանվել է Ֆլորայից և նույնիսկ այլևս չի հանդիպել նրան, թեև, ըստ երևույթին շարունակում էր սիրել նրան: Ֆլորան սակայն, Պոմպեոսի հետ խղումն այնպես չի տարել ինչպես սովորաբար հետերաներն էն տանում, այլ երկար ժամանակ տանջվել է թախծից ու կարոտից: Մինչդեռ ինչպես ատում են, Ֆլորան այդ ժամանակ իր գեղեցկության ծաղկուն շրջանում է եղել և այնպիսի համբավ է ունեցել, որ Ցեցիլիոս Մետելլոսը, Դիոսկուրյանների տաճարը նկարներով ու քանդակներով զարդարելիս պատվիրել է նրա պատկերը նկարել և նվիրել է աստվածներին: Պոմպեոսի ազատ արձակած ստրուկներից մեկը, որն օգտվում էր Պոմպեոսի վիթխարի ազդեցությունից և թողել էր շորս հազար տաղանդի ունեցվածք, ուներ հմայիչ գեղեցկության տեր մի կին: Պոմպեոսն այդ կնոջ հետ վարվում էր, ճակատս կ իր սովորության, բավականին կոպիտ ու շոր՝ վախենալով, որ չլիսի թե մարդիկ հանկարծ մտածեն թե ինքը գերված է նրա փառսրանված գեղեց

կառնում: Չնայած յդքսս հեռուն գիացող զգուշութեանն ու շրջահայե-
սութեանը նման գործերում, Պոմպեոսին այնուամենայնիվ չհաջողվեց
յուստափել թշնամիների պարսավանքներից Վերջիններս նրան մեղադր-
ում էին անուանացած կանանց հետ ունեցած կապի մեջ, պնդելով, թե
| հաճույս նրանց Պոմպեոսը հաճախ հաշվի չի առնում հասարակս կան-
սրքերը և արհամարհում է դրանք:

Պոմպեոսի ապրելակերպի շամեստութեան ու պարզութեան վերա-
բերյալ այսպիսի բան են պատմում: Հիվանդութեան ժամանակ, երբ նա
տխորժակը կորցրել է բժիշկը պատվիրել է կեռուեխի միս տալ հիվան-
դին: Ծառաները որքան փնտրել են չեն կարողացել գտնել վաճառվել
կեռուեխ, քանի որ սեզոնն անցել էր, և ծառաներից մեկն ասել է, թե
կեռուեխներ կարելի է գտնել Լուկուլլոսի մոտ որը գրանցից պահում է
կյոթ տարին: Հիվանդը դրան պատասխանել է «Մի՞թե Պոմպեոսի կյան-
քը կալ ող է կախված լինել Լուկուլլոսի պերճապի քմայքներից»: Եվ
արհամարհելով բժշկի խորհուրդները՝ ևս իսկ որ բան է կերել ամենա-
լատչելի կերակուրներից: Այս դեպքը վերաբերում է սակայն, նրա կյան-
քի առաջին ու շրջանին:

III Երբ Պոմպեոսը հոր հետ դեռ շատ էրիտաս սյգ ժամանակ ալ
շավանքի էր ելել Ցիննայի դեմ, միևնույն վրանում էր ապրում իր մտե-
րիմ ընկերոջ՝ ոմն Լուցիոս Տերենցիոսի հետ: Այս Տերենցիոսը կաշառ-
ված էր եղել Ցիննայի կողմից և պատրաստվում էր սպանել Պոմպեո-
սին, իսկ նրա հանցակիցներն էլ պետք է հրդեհեին գորավարի վրանը:
Պոմպեոսին զավագրութեան մասին հայտնեցին լաշի ժամանակ: Երի-
տասարդը բնավ չկորցրեց իրեն, ընդհակառակը, գինի խմեց ավելի
անձ բավականութամբ, քան սովորաբար, և սիրալիր էր խոսում Տերեն-
ցիոսի հետ քսկ երբ քնելու ժամանակն եկավ նա թաքուն դուրս ելավ
իր վրանից և հոր վրանի մոտ պահապաններ կարգեց ընդ որում պահ-
անելով լիակատար հանգստութեան: Մինչդեռ Տերենցիոսը, հենց որ
որոշեց, թե ժամն է գործնելու, վեր թռավ, դուրս քաշեց սուրը, մոտեցավ
Պոմպեոսը մահին և ենթադրելով, թե նա պառկած է անկողնում, սկսեց
խորվածներ տեղալ: Հենց այդ պահին ճամբարում իրարանցում սկսվեց,
և զորականները, այրվելով իրենց գորավարի հանդեպ ունեցած ատե-
լութունից և խռովութեան հրահրելով մեկը մյուսին՝ սկսեցին քանդել
վրանները ու զինքի գիմել: Զորավարն ինքը, աղմուկից վախեցած, դուրս
էր գալիս վրանից: Պոմպեոսը ընդհակառակը նետվել էր զորականնե-
րի մեջ, լալով նրանց խնդրում էր լքել իր հորը և, վերջապես, բերանք-
սիվայր ընկավ դետնիս ճամբարի դռան առաջ Այնտեղ նա սլառկել էր

և, արցունք թափելով, խնդրում էր հեռացող զինվորներին կոխկրտել իրեն և նոր անցնել: Զինվորները, ամոթահար եղած, վերադառնում էին, և այսպիսով բուրբը, ութ հաբչուր հոգուց բացի, փոխեցին իրենց մտադրությունը և հաշտվեցին զորավարի հետ:

IV Մտրաբոնի վախճանից անմիջապես հետո Պոմպեոսը, մեռածի փոխարեն, դատի տրվեց պետական դրամները հափշտակելու գործով: Մերկացնելով ազատարձակյալներից մեկին Ալեքսանդրին Պոմպեոսն ապացուցեց, որ դրամների մեծ մասը հափշտակված է այդ ազատարձակյալի կողմից Այնուամենայնիվ իրեն Պոմպեոսին մեղադրեցին, որ նա յուրացրել է որսորդական ուռկաններն ու գրքերը այն ուղղմամբ, որ խլված էր եղել Ասկուլոսում Այդ իրերը նա իսկապես ստացել էր հորից Ասկուլոսի գրավումից հետո բայց դրանք կորցրել էր երբ Յիննայի Հոռոմ վերադառնալուց հետո նրա թիկնապահները ներխուժել էին Պոմպեոսի տունը և կողոպտել: Այս դատավարության ընթացքում Պոմպեոսը մի քանի անգամ նախնական ընդհարումներ ունեցավ մեղադրողի հետ Իրանցում ևրիտասարդը դրսևորեց արագ ըմբռնողություն և իր տարիքին անհարիր հաստատուն միտք և դրանով քիչ փառք ու համակրանք չվաստակեց համաքաղաքացիների մոտ, այնպես որ պրեստոր Անտիստիոսը որը դատավոր էր դատավարության ժամանակ սիրուց Պոմպեոսին և նրան կնության առաջարկեց իր գտերը: Այս կասկածությունը նա բանակցություններ վարեց Պոմպեոսի բարեկամների հետ: Պոմպեոսն ընդունեց առաջարկը, և նրանց միջև գաղտնի համաձայնություն կայացավ, սակայն Պոմպեոսի օգտին Անտիստիոսի արած բարեխոսություններից այդ գործարքը հայտնի զարձավ ժողովրդին: Վերջապես, էրբ Անտիստիոսը հրապարակեց դատավորների արձակած ալգարացուցիչ դատավճիռը ապա ժողովուրդը միաբերան, ըստ հարսանյաց հինավուրց սովորության, բացականչեց Տալասիոսի նա: Այս սովորույթի ծագումը ինչպես ասում են, հետևյալն է էրբ ամենախիզախ հռոմեացիները փախցնում էին սաբինացիների դուստրերին, որոնք գալիս էին Հոռոմ խաղեր գիտելու, մի քանի անհայտ օրամշակներ ու հովիվներ բռնել են գեղեցիկ ու բարձրահասակ մի աղջկա և, պցելով ուսներին, տարել: Որպեսզի սրեկ անվանի մարդ հանդիպելիս լիւեր ավարը նրանք վաղել էն ձան տալով «Տալասիոսի՛ն»: Տալասիոսը բուրբի կողմից սիրված ու հայտնի բաղաբացիներից մեկն էր, ուստի և լսելով այդ անունը՝ հանդիպողները ծափ են զարկել իբր ի նշան ուրախության ու հավանության Քանի որ Տալասիոսի ամուսնությունը երջանիկ էր ստացվել, այս բացականչությունը, ինչպես ասում են, սկսել է կասա

կով օլտադորժեւ հարսանիքներում: Այս բացատրութիւնը առավել ճշմարտանման է մյուս բոլորից Մի քանի օր անց Պոմպեոսն ամուսնադավ Անսիտորյայի հետ

V Մեկնած լինելով Յիննայի ճամբարը Պոմպեոսը այնուհետև վախեցավ ինչ որ կեղծ մեղադրանքներից ու շարախոսութիւններից և խսուշն թաքուն հեռացավ ճամբարից: Քանի որ Պոմպեոսը ոչ մի տեղ չէր լլկում ապա շամբարում լուր տարածվեց, թե, իբր, Յիննան հրամայել է սպանել պատանուն: Այնժամ Յիննայի հին թշնամիները և ատողները նրա դեմ ապստամբութիւն բարձրացրին: Յիննան փախավ, բայց բռնվեց մի ցենտուրիոնի կողմից, որը նրան հետապնդելիս էր եղել մերկ յուրը ձեռքին ընկնելով թշնամու ոտքերը Յիննան նրան մեկնեց իր թանկագին մատանին՝ կնիքը վրան, խկ սա դաժան ծաղրով սլատասխանեց «Ես այստեղ եկա ոչ թե կնիքով ամրապնդելու պայմանագիրը այլ պատժելու անարդ ու անօրին բռնապետին»: Այս ասելով նա սպանեց Յիննային Յիննայի մահից հետո նրան փոխարինեց, սնցնելով կառավարութեան գլուխ, Կարբոնը մի բռնապետ, որն ավելի խելացիոր էր, քան Յիննան: Սակայն արդեն մոտ էր Սուլլան որին անհամբեր սպասում էր քաղաքացիների մեծ մասը, որն իրեն բաժին հասած զժրախոսութիւնների պատճառով արդեն տիրակալի փոփոխութիւնն իսկ մեծ բարիք էր համարում: Գժրախոսութիւնները պետութեանը հասցրել էին սյս վիճակին, որ մարտիկ, այլևս սղատութեան հույս շունենալով, երալամ էլ ն սոսկ քիչ լի շատ սերողամիտ սեր ունենար:

VI Պոմպեոսն այն ժամանակ գտնվում էր իտալական Պիցլենոն մարզում, ուր մեկնել էր մասամբ նրա համար, որ այնտեղ էին նրա հողացին տիրույթները բայց զլխավորապես այն պատճառով, որ նրան հաճելի էին սիրո ու նվիրվածութեան զգացումները որոնք ի հիշատակ իր հոր նրա հանդեպ տաժում էին այնտեղի քաղաքները Պոմպեոսը տեսնում էլ, որ ամենաանվանի ու լավագուշն քաղաքացիները թողնում են իրենց ունեցվածքը և ամեն կողմից, ինչպես նավերը՝ դեպի հուսալի նախահանգիստ, հոսում գալիս էն դեպի Սուլլայի ճամբարը՝ ապաստան փնտրելով նրա մոտ: Նա ինքն իր արժանապատիւթիւնից ցածր համարեց ներկայանալ Սուլլային որպես անդոր փախստական օգնութիւն աղերսելու, այլ գերադասեց նյա մոտ դնալ՝ մատուցելու կարևոր ծաւայութիւն պատվով, դորքի գլուխն անշած: Ուստի նա ձեռնարկեց խոնվութեան մղել պիցլենոնցիներին, որոնք սիրով հնազանդվեցին նրան և շէին լսում Կարբոնի պատվիրակների հորդորները: Երբ ոմն կեղիսս պիցլենոնցիներին ասաց թե նրանց առաջնորդը Պոմպեոսն է որ հենց

նոր է վեր կացել դարոցական նւտարանից նրանք կատաղեցին և, հարձակվելով Վեդիոսի վրա սպանեցին դրան: Քսաներկքամյա Պոմպեոսը ոչ ոքի կողմից նշանակված չլինելով, սևփական նախաձեռնությամբ իրեն օժտեց զորավարի լիազորութուններով: Աուքսիմոս մեծ քաղաքի հրապարակում նա կանգնեցրեց դատավորական բարձունք և հատուկ էդիկտով հրամայեց Կարբոնի Լրկու կողմնակիցներին՝ քաղաքում հույժ ազդեցիկ Վենտիդիոս եղբայրներին թողնել հետասալ Աուքսիմոսից: Այա Պոմպեոսը սկսեց զինվորներ հավաքել և, ինչպես կարգն է, նրանց վրա ցենսուրիոններ նշանակեց: Նույն բանը նա արեց՝ շրջագայելով հարևան քաղաքները: Կարբոնի բոլոր կողմնակիցները փախան, մնացածներն էլ ուրախությամբ իրենց հանձնեցին Պոմպեոսի տնօրինությանը: Այսպիսով, կարճ ժամանակում նա հավաքեց երեք լրիվ լեգեոն և ջթերքների, լծկանների, սայլերի ու մնացած այլ բաների պաշարներ տեսնելով՝ շարժվեց դեպի Մուլլան, շտապելով և շցանկանալով թաքնվել, այլ հապաղելով ճանապարհին, որպեսզի տագնապահար աներ թըշտամուն, և Իտալիայի բոլոր այն մարզերում որոնց միջով անցնում էր նա ձգտելով ապստամբություն բարձրացնել ընդդեմ Կորբոնի:

VII Ընդդեմ Պոմպեոսի հանդես եկան միանգամից երկ ք թշնամական զորավարներ Կարրինասը, Ցելիոսը և Բրուտուսը, բայց սրանք հարվածեցին նրան ոչ միաժամանակ և ոչ ճակատից, այլ՝ շրջանցիկ շարժումներ էին կատարում երեք ջոկատներով՝ նպատակ ունենալով շրջապատել և ոչնչացնել հակառակորդին: Պոմպեոսը, սակայն չվախեցավ, այլ՝ հավաքելով իր ուժերը մի կետում հեծելազորի գլուխն անցած, հարձակվեց Բրուտոսի զորքի վրա Հակառակորդի կողմից հանդես եկավ դալլական հեծելազորը և Պոմպեոսը նետելով տեղը՝ խոցեց զորապետին, որն ալքի էր ընկնում անսովոր ուժով: Դրանից հետո մնացած ձիավորները հետ դարձան ու խախտեցին հետևակի շարքերը, այնպես որ սկսվեց ընդհանուր փախուստ: Այնուհետև հակառակորդի զորապետների մեջ գծտություն ընկավ և յուրաքանչյուրն ինքնազույս, անկանոն, նահանջեց: Քաղաքներն սկսեցին անցնել Պոմպեոսի կողմը, համարելով որ թշնամիներն արգեն ահից բոլորովին ցրիվ են էկել: Շուտով նրա վրա հարձակվեց կոնսուլ Սկիպիոնը: Մակայն հակառակորդ զորքերը լեռ շէին հասցրել միմյանց վրա տեղեր նետել մեկ էլ Սկիպիոնի զինվորները, ողջունելով Պոմպեոսի զինվորներին՝ անցան նրանց կողմը: Սկիպիոնն էլ ստիպված Լղավ փախչել: Վերջապես Կարբոնն ինքը էզիա գետի մոտ ուղարկեց ձիավորների մի ջոկատ բայց այս հարձակմանն էլ Պոմպեոսը վճռական դիմադրություն ցույց տվեց թշնամին դիմեց փա

խուստի և հետապնդման ժամանակ քաշվեց մտավ անհարմար ու հեծե-
լազորի լամար անանյանելի մի տեղ: Թշնամու զորականները տեսնե-
լով, որ փրկություն հույս չիաւ ւտիպված եղան հանձնվել իրենց զեն-
յւրով ու ձեռքով հանգրծ:

VIII Սուլթան զլա ոչինչ շփտեր այս իրադարձութիւնների մասին: Աւազին յուրերն ու տեղեկութիւնները ստանալիս, երբ իմացավ, որ Պոմ-
պեոսը պետք է գործի թշնամու այդքան զորավարների դեմ, որոնց տրա-
մադրութեան տակ այդքան մեծ ուժեր կան, Սուլթան վախեցավ Պոմպեո-
սի համար և անհապաղ նրան օգնութեան գնաց: Երբ Պոմպեոսն իմացավ
որ Սուլթան արդեն մոտերքում է հրամանատարներին կարգադրեց զի
նեւ զինվորներին և շարել մարտակարգով՝ ստուգատեսի համար, որպես
զի նրանք գլխավոր հրամանատարի վրա ամենալավ փայլուն տպավո-
րութիւն թողնեին: Պոմպեոսը հույս ուներ մեծամեծ պատիւներ ստա-
նալ Սուլթանից, սակայն ստացավ նույնիսկ ավելին քան սպասում էլ:
Ճաննելով Պոմպեոսի մոտենալն իր զորքի հետ որը բաղկացած էր ուժեղ
և առողջ, իրենց հաղթանակներով հպարտ մարդկանցից, Սուլթան ձիուց
ցած թռավ: Հենց որ Պոմպեոսը ողջունեց նրան ըստ սովորութեան, ան-
վանելով իմպերատոր (գլխավոր հրամանատար), Սուլթան էլ իր հերթին
նրան այդ անունով կոչեց, ընդ որում ոչ ոք չէր սպասում որ Սուլթան
երիտասարդին, որը դեռ նույնիսկ սենատոր էլ չէ, կշնորհի մի տիտղոս
որի համար ինքը մարտնչել է Սկիպիոնների ու Մարիոսների դեմ: Եվ
Սուլթանի հետագա վարքագիծն էլ համապատասխանում էր սիրալիրու-
թեան այս առաջին դրսևորման հետ այսպես, երբ Պոմպեոսը գալիս էր,
Սուլթան ոտքի էր կանգնում և գլխարկը հանում, մի սրտիվ, որ նա այն
քան էլ հաճախ չէր մատուցում ուրիշ փրկէ մեկին, թեև նրա շրջապատում
շատ կալին հարգարժան մարդիկ: Սակայն այդ մեծարանքից Պոմպեոսը
չգոռոզացավ: Ընդհակառակը, երբ Սուլթան յտազրվեց նրան անհապաղ
Գալլիա ուղարկել, որտեղ Մլտելլոսն իր կառավարման ժամանակ, ըստ
երևույթին, չէր կատարել ոչ մի արժանավոր բան այն վիթխարի ուժերով,
որ կային նրա արամադրութեան տակ, Պոմպեոսը հայտարարեց, թե ան-
տղնիվ բան կլիներ հրամանատարութիւնից զրկել ՚ի մարդու, որը տա-
րիքով ավելի մեծ է և պերազանցում է իր փառքով: Սակայն եթէ Մետել-
լոսն ինքը ցանկանաւ և ինքը պահանջի ասլա Պոմպեոսը պատրաստ է
օգնելու նրան պատերազմում և մնացած բոլոր բաներում կաջակցի Մե-
տելլոսն ընդունեց առաջարկը և Պոմպեոսին գրեց, ոչ գնա Գրանից հե-
տո Պոմպեոսը ներխուժեց Գալլիա և ոչ միայն ինքը կատարեց զարմա-
նալի սլ բանքներ այլև կարողացավ տաքացնել ու բոլբոքել Մլտելլո

սի ծերութիւնից արդեն համարյա մարած մարտական ավյունն ու խիզախութիւնը: Այսպես կրակի վրա հալված պղինձը եթէ մեջը գցում ես պինդ ու սառը մետաղի կտորներ ինչպես ասում են, փափկացնում ու հալեցնում է դրանք կրակից իսկ ավելի արագ Բայց ախր, ինչպես որ հաշվի չեն առնում և ցուցակի մեջ չեն մտցնում պատանեկան հաղթանակներն այն ըմբիշի որը հետագայում լափահասները մեջ գրավում է առաջին տեղը և ամենուրեք պատվով հաղթանակում է մրցումներում, այդպես էլ այն ժամանակ Գալլիայում Պոմպեոսի կատարած սիրանքները, թեև ինքնին դարմանալի են, այնուամենայնիվ խամբում են հետագա ժամանակների մեծ ճակատամարտերի ու պատերազմների հանդեպ: Սուտի ես որոշեցի բոլոր մանրամասնութիւններով շնկարագրել Պոմպեոսի գործերը Գալլիայում որպեսզի բաց շթողնեմ նրա առավել նշանակալից գործերը և իրադարձութիւնները որոնց մեջ է հենց դրսևորվում այդ մաքուր բնավորութիւնը

IX Գառնալով Իտալիայի տիրակալը և դիկտատոր հռչակվելով Սուլլան վարձահատույց եղավ իր զորավարներին ու բոլոր պետերին: Նա հարստացնում էր սրանց, պետական բարձր պաշտոնների նշանակում և առատաձեռնորեն ու սիրով բավարարում նրանց բոլոր ցանկութիւնները: Պոմպեոսը Սուլլայի հիացմունքն էր հարուցում իր ղինվորական արիութեամբ: Վերջինս ուզում էր բարեկամանալ Պոմպեոսի հետ, համարելով որ դա հույժ օգտակար կլինի իր իշխանութեան համար: Սուլլայի կին Մետելլան խրախուսում էր ամուսնու մտադրութիւնները եվ ահա նրանք երկուսով հորգորում են Պոմպեոսին բաժանվել Անտիստայից և կնութեան առնել Սուլլայի խորթ աղջկան՝ Մետելլայի և Սկավրոսի դուստր Էմիլյային, որն այդ ժամանակ արդեն սմուսնացած և հզի էր: Այս ամուսնութիւնը կնքելու եղանակը, իհարկե, բնականապէս էր և ավելի շուտ Սուլլայի ժամանակների սգով, քան թէ Պոմպեոսի բնավորութիւնից բխող հզի Էմիլյային իր ամուսնու մոտից բերում են Պոմպեոսի մոտ, իսկ Անտիստային դուրս են անում ամոթալի և ամենախղճալի ձևով, թիւ նա վերջերս իր ամուսնու պատճառով կորցրել էր հորը Անտիստիոսն սպանվել էր կուրիայում, քանի որ Պոմպեոսի պատճառով նրան համարում էին Սուլլայի կողմնակից Անտիստայի մայրը լտարավ բոլոր այս դժբախտութիւնները և ինքն իր վրա ձեռք բարձրացրեց, այնպես որ Պոմպեոսի ամուսնութեան ոգբերգութեանը միացավ և այդ ոգբալի հանգամանքը ու, երգվում եմ Զևսով, մի բան ևս Էմիլյան իսկույն մեռավ ծննդաբերութիւնից, նոր ամուսնու տանը:

Ն Որոշ ժամանակ անց լուր Լկավ, թե Պերպերնան ամրանում է Սիցիլիայում, ձգակելով կղզին հենակետ դարձնել Մարիոսի կողմնակից ներքի՝ թշնամական բանակի մնացորդների համար, Հենց այստեղ՝ Սիցիլիայի մոտ էր գտնվում նաև Կարբոնը նավատորմով իսկ Ղոմիցիոսը ներթուծել էր Աֆրիկա, և ուրիշ բազմաթիվ մեծամեծ լտարանդիներ, որոնք հասցրել էին խույս տալ կործանումից գալիս հավաքվում էին հենց այստեղ: Մրանց դեմ էր ուղարկված Պոմպեոսը մեծ զորքով: Պերպերնան անհապաղ կղզին ղիջեց նրան, և նա սկսեց վերականգնել կործանված քաղաքները՝ ողորմաժաբար վերաբերվելով բոլորի հետ, բացի Մեսսենեի մամերտինացիներից Մամերտինացիները չցանկացան ներկայանալ նրա դատավորական բազկաթռոին և ճանաչել նրա իշխանութունը, միայակոչելով որ իրենք՝ դրանից ազատված են էղել հինավուրց հռոմեական օրենքով Այնժամ Պոմպեոսը հայտարարեց. «Ղազարեցե՛ք արևնքի հողվածնէր մեջքերել նրա մոտ, ում գոտուց սուր է կախված»: Եվ Պոմպեոսի վերաբերմունքը Կարբոնի նկատմամբ պատկերանում է որպես անմարդկային ծաղրուծանակ վերջինիս դժբախտությունների վրա: Ախր ևթէ Կարբոնի սպանությունն անհրաժեշտություն էր (ինչպես, գուցե և, այն եղավ), ապա դա պետք էր անել գերելուց անմիջապես հետո և այնժամ պատասխանատվությունը կրնկներ նրա վրա ով որ հրամանը տվել էր: Սակայն գրա փոխարէն Պոմպեոսը հրամայեց իր մոտ բերել ու՛ հռոմեացուն որը երեք անգամ կոնսուլ էր եղել, և շլթայակապ արած ստիպեց կանգնել իր դատավորական աթոռի առաջ իսկ ինքը Երկաների վրդովմո նքն ու զայրույթը հարուցելով՝ հարցաքննությունը վարում էր նստած: Ապա հետևեց հրամանը՝ տանել ու սպանել Կարբոնին: Երբ դատապարտյալն բերեցին մահապատժի վայրը, նա աժանելով մերկ սուրը, խնդրէլ է ինչպես պատմում են իրեն տեղ տալ և մի փոքր ժամանակ բնական պահանջը կատարելու համար: Գայոս Օպպիոսը Կեսարի բարեկամներից մեկը պատմում է Քվինտոս Վալերիոսի նկատմամբ Պոմպեոսի անմարդկային վարմունքի մասին Պոմպեոսը պիտեր որ Վալերիոսը մեծ գիտելիքների տեր մարչ է և բացառապես նվիրված է պիտությանը: Երբ Վալերիոսին որպես գերի բերել են Պոմպեոսի մոտ, սա նրան բնդունել է բարեկամաբար Համատեղ զբոսանելից հետո, նրանից խնդրելով ու իմանալով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, Պոմպեոսը ծառաներին հրամայել է դժբախտին անհապաղ տանել գլխատել: Սակայն Կեսարի թշնամիների ու բարեկամների մասին Օպպիոսի պատմածներին պէտք է վերաբերվել մեծ զգուշությամբ

Պոմպեոսը պատժում էր և այն էլ՝ ըստ անհրաժեշտության միայն,

Սուլլայի առավել նշանավոր և ակնհայտ թշնամիներին, որոնք գերի էին բռնված իսկ մնացածներին, որքան հնարավոր էր, թույլ էր տալիս հեռանալ ոմանց էլ նույնիսկ ինքն էր օգնում փախչելու: Պոմպեոսը որոշել էր պատժել հիմերցիների քաղաքը որովհետև դրա բնակիչները թըշնամու կողմն էին բռնում: Ժողովրդական առաջնորդ Մթենիսը խոսք էր խնդրել ու ասել, թե Պոմպեոսը անարդար կվարվի եթե, բաց թողնելով հանցավորին, կործալի ոչնչով մեզք շունեցող մարդկանց: Պոմպեոսի անհարցին թե նա ո՞ւմ է հատկապես մեղավոր համարում Մթենիսը պատասխանել է. «Ինձ. իմ բարեկամներին ես համոզել էմ միանալ քո հակառակորդներին, իսկ թշնամիներին ուժով եմ ստիպել»: Պոմպեոսը հիացել է այս համարձակության՝ ազնվության վրա և սկզբում ներում է շնորհել նրան իսկ ապա ներել է նաև մյուսներին: Զեկուցագրերից իմանալով, որ իր ղինվորները արշավանքի ժամանակ թույլ են տալիս ամեն տեսակի անկարգություն՝ Պոմպեոսը կնքել էր նրանց սրերը, և կնիքը կոտրելու գեպրում մեղավորը (նթարկվում էր գատալխանատվության):

XI Մինչ Պոմպեոսն զբաղված էր այս գործերով և կառավարում էր Սիցիլիան ստացավ սենատի որոշումը և Սուլլայի համակը որով հրամայվում էր բոլոր ուժերն առած նավել անցնել Աֆրիկա՝ Դոմիցիոսի դեմ պատերազմելու: Վերջինս հավաքել էր մի քանի անգամ ավելի զորք, քան այն ինչ դրանից ոչ շատ առաջ Մարիոսը որն Աֆրիկայից Իտալիա էր ասցել, գրավել հռոմեացիների գերագույն իշխանությունը և լտարանդիից վերածվել բռնապետի: Շտապ ավարտելով բոլոր նախապարաստությունները, Պոմպեոսը Սիցիլիայի կառավարիչ թողեց Մեմիոսին՝ իր քրոջ ամուսնուն, իսկ ինքը ճանապարհ ընկավ հարյուր քսան մարտանավով և մթեղքով, ղեկքով, զենքով, զբամով ու ռազմական մեքենաներով բարձաված ութ բեռնատարի ավերով: Հենց որ նավատորմն մի մասը կանգ առավ Ուտիկեի ափին, իսկ մյուսը՝ Կարթագենում: Պոմպեոսի կողմն անցան թշնամու յոթ հազար ղինվորներ ինքն էլ իր հ'տ բերել էր վեց լրիվ լեգեոն: Աֆրիկա հասնելիս նրա հետ ասում են, մի զվարճալի դեպք պատահեց: Նրա զորականներից ոմանք, ըստ երևույթին, պատուհարար հանդիպելով գանձի, ձեռք էին բերել շատ դրամ: Երբ այ գյոսը հայտնե դարձավ մյուս զորականների մաքով էլ անցավ, թե այդ տեղանքում լիքը գանձեր կան, որ թաքցրել են կարթագենցիները իրենց դժբախտությունների օրերին: Պոմպեոսը օրերով շեր կարողանում գրասպել իր ղինվորներին որոնք գանձ էին որոնում: Նա ման էր գալիս շրջակայքում ու շուրջն էր ի այում ծիծաղելով ետ տեսնո ՚ էր թե ինչպես

11 մայրիկ իտրում հողի շերտերը շուռ տալիս հայթափացրում վեր սպեռ գորականնելը հոգնեցին այդ աշխատանքից և Պոմպեոսին առաջարկեցին իրենց տանել ուր ուզում է, քանի ոչ իրենք բավականաչափ պատժված 11 իրենց հիմարություն համար:

XII Գոմիցիոսն իր գորքը շարեց մայրտի պաւրաստ, բայց քանի որ նրան թշնամուց բաժանում 1ր գիրթ լանջերով դժվարանցանելի ձորը, իսկ անձրևախառն ուժգին քամին, որ սակվել էր առավոտից, ոչ մի կերպ չէր դադարում Գոմիցիոսը որոշեց այդ օրը հրաժարվել ճակատամարտից 1 տվեց նահանջի ազդանշան Իսկ Պոմպեոսն էլ, թշնամու հետքաշնան մեջ հարմար առիթ տեսնելով հարձակման համար հանկարծակի առաջ շարժվելով անցավ ձորը: Թշնամիներն արդեն խախտել էին շարքերը, նրանց մեջ անկարգություն էր տիրում, միայն սռանձին գորականներ այլտեղ ու այնտեղ կարողացան դիմադրություն ցույց տալ: Բացի այդ, քամին փոխվեց և անձրևը մտրակում էր նրանց գեմքերին ճիշտ է հոռմեացիներին էլ փոթորիկը շատ դժվարություններ էր պատճառում, քանի որ նրանք չէին կարողանում պարզ տեսնել միմյանց: Պոմպեոսն ինքը վտանգի ենթարկվեց և քիչ էր մնում սպանվեր ինչ որ զինվորի ձեռքով, որը, շճանաչելով նրան՝ հարցրել էր նշանաբանը և պատասխանը միանգամից չէր ստացել: Դաժան ճակատամարտում (Գոմիցիոսի քսան հազար կողմնակիցներից ինչպես հաղորդում են, կենդանի էր մնացել միայն երեք հազարը) թշնամին ջախջախվեց: Զինվորները ողջունեցին Պոմպեոսին՝ նրան անվանելով իմպերատոր: Պոմպեոսը սակայն, հրաժարվեց այդ պատվավոր կոչումից քանի դեռ թշնամիների ճամբարը գրավված չէր: Իսկ եթե, ասաց նա, գորականներն իրեն արժանի են համարում այս պատվավոր տիտղոսին նրանք պետք է նախ կործանեն ճամբարը: Զորականներն իսկույնսեթ նետվեցին թշնամու ցցապատնեղի վրա: Պոմպեոսն ինքը կռվում էր առանց սաղավարտի կրկնուղելով վերջերս տեղի ունեցած դեպքի կրկնությունից: Ճամբարը գրավվեց, և Գոմիցիոսն ընկավ: Այնուհետև քաղաքներից մի քանիսը իսկույն կամավորապես հնազանդվեցին Պոմպեոսին, մյուսները գրավվեցին դրոհով: Տեղի թագավորներից մեկը՝ Յարբասը՝ Գոմիցիոսի դաշնակիցը, գերի ընկավ, իսկ թագավորական իշխանությունը հանձնվեց Հիեմպոստին: Օգտագործելով իր հաջողությունը և գորքի մարտական ավյունը Պոմպեոսը ներխուժեց նումիդիա: Բաղձօրյա ճամփա անցավ նա այդ երկրով և հազթեց բոլորին ուրբեր ելնում էին նրա հանդիման: Հոռմեացիների հանդեպ սարսափը ոչն արդեն թուլացել էր բարբարոսների հոգում Պոմպեոսը վերականգնեց Գալիկին ուժով, նա աս մ էր թե

նույնիսկ գազանները, որոնք բնակվում են Աֆրիկայում պետք է իմանան հոռմեացիների հզորութունն ու խիզախութունը, դրա համար էլ մի քանի օր անցկացրեց առյուծներ ու փղեր որսալով: Ինչպես պատմում են, նա հաղթահարեց թշնամիներին, ենթարկեց Աֆրիկան և վերացրեց թագավորների տարածայնությունները ընդամենը քառասուն օրվա ընթացքում: Այդ ժամանակ էա քո անշուրտ տարեկան էր

XIII Ուտիկե վերաբառնալուն պես Պոմպեոսը Սուլլայից գլավոր կարգադրություն ստացավ զորքը ցրել և մեկ լեգեոնով սպասել հրամանատարության գծով իրեն փոխարինողին Այս հրամանը Պոմպեոսի մեջ թաքուն տհաճություն ու վրդովմունք առաջացրեց և զորքի մեջ՝ բացահայտ զայրույթ: Երբ Պոմպեոսը զորականներին համոզում էր վերադառնալ հայրենիք, նրանք սկսեցին հայհոյել Սուլլային, հայտարարեցին թե ոչ մի դեպքում չեն թողնի իրենց զորավարին, և Պոմպեոսին խնդրում էին շվատահել բռնապետին: Սկզբում Պոմպեոսը փորձում էր զորականներին հանգստացնել համոզելով, իսկ երբ դա չհաջողվեց, նա բարձունքից իջավ և արցունքն աչքերին հեռացավ իր վրանր: Զայականները նրան դուրս բերեցին և նորից նստեցրին բարձունքի վրա: Այդ օրվա մեծ մասն անցավ բանակցությունների մեջ զինվորները Պոմպեոսին առաջարկում էին մնալ և լինել իրենց զորավարը, իսկ նա սրանց թախանձում էր ենթարկվել ու շրմբոտանալ: Դա շարունակվեց այնչափ ժամանակ մինչև որ Պոմպեոսը նրանց համառ ազազակներին ի պատասխան երգվեց, թե ինքն իր վրա ձեռք կբարձրացնի, էթե նրանց մըտքով անցնի բռնություն դորձագրել, և միայն այս սպառնալիքը զինվորներին ստիպեց հրաժարվել իրենց մտադրությունից:

Այնինչ Սուլլան սկզբում լուր ստացավ Պոմպեոսի անջատման մասին: Այնժամ նա իր բարեկամներին ասաց, թե, ըստ երևույթին, իրեն վիճակված է օր-օրյություն կովել երեխաների հետ, որովհետև Մարիոսն էլ, լինելով դեռ բուրբուլին էրիտասարգ՝ շատ գլխացավանք պատճառեց նրան և մահացու վտանգի լնթարկեց: Իսկ երբ պարզվեց գործերի իսկական դրությունը և Սուլլան տեսավ, որ բուրբ հոռմեացիները պատրաստ են դիմավորել և ընդունել Պոմպեոսին, այնժամ դիկտատորն շտապեց գերազանցել բուրբին: Նա Պոմպեոսին դիմավորեց քաղաքից հեռու նրան ողջունեց որքան կարելի էր սովելի ջերմ և ոչ միայն ինքը նրան բարձրաձայն գոչեց «Մագնոս», այլև բուրբ ներկաներին հլամայեց Պոմպեոսին կոչել այդ անունով: «Մագնոս» բառը նշանակում է «մեծ»: Որոշ գրողների հաղորդման համաձայն, սկզբում այդ մականունը Պոմպեոսն ստացել է իր զորքից Աֆրիկայում, բայց դա լիվ ուժի մեջ է մտել այն բանից հետո

տո, երբ Ասուրյան հաստատել է: Պոմպեոսն ինքը բուրբից ուշ և շատ ծա-
մանակ անցնելուց հետո միայն, երբ արդեն որպես պրոկոնսուլ ուզարկ
լուծ էր Իսպանիա Սերատորիոսի դեմ, սկսեց իր նամակներում և կարգա-
յր վիճումներում իրեն անվանել Պոմպեոս Մագնոս այդ ժամանակնե-
րում այդ անունն արդեն դարձել էր այնքան սովորական, որ այլևս նա
լուծ չէր հարուցում ես չեմ կարող առիթը բաց թողնել ու շարտահայ-
տել քմ հիացմունքը հին հռոմեացիների նկատմամբ, որոնք այդպիսի
ունուններ ու մականուններ էին տալիս ի պարզև ոչ միայն դիվերական
ժխտանքների դիմաց, այլև քաղաքացիական կյանքում կատարած ծառա-
յությունների և արիության Այսպես օրինակ՝ ժողովուրդը «Մագնիմոս»
մականունը, որը նշանակում է «մեծագույն» ընծայեց Վալերիոսին
պատամբած ժողովրդին սենատի հետ հաշտեցնելու համար ինչպես և
Լալիոս Հոուլլոսին ի պարզև այն բանի, որ նա սենատից հեռացրեց
սղատարձակալների՝ այնտեղ տեղ գտած մի քանի հալստացած զս-
լակների

XIV Որոշ ժամանակ անց Պոմպեոսն սկսեց ձգտել հաղթահան
դեսի: Իսկ Սուլլան չէր համաձայնում, որովհետև օրենքն իբր թե հալ-
թահանդես անել չի թույլատրում ոչ որի բացի կոնսուլից ու պրետորից
Ջլ՝ որ Սկիպիոն ավագն էլ առավել մեծ ու առավել կարևոր հաղթա-
յակներ տանելով կարթագենցիների դեմ Լուպանիայում հաղթահանդես
չէր պահանջում իր համար, քանի որ նա ոչ կոնսուլ էր ո՛չ պրետոր
Իսկ եթե Պոմպեոսը որը դեռ կարգին բեղ-մորուք էլ չունի որն իր տա-
րիքի պատճառով չի կարող սենատի նիստին մասնակցել հաղթահան
վեասյին մուտք կատարի դեպի Հոռոմ դա համբնդհանուր ատելություն
կհարուցի և իր Սուլլայի իշխանության և Պոմպեոսի հանդեպ ցուցա-
լիքված մեծարանքների դեմ: Այսպիսիք էին Սուլլայի փաստարկները
որոնցով նա ուզում էր ցույց տալ, թե չի թույլատրի որ Պոմպեոսն իրա-
զործի իր մտադրությունը, իսկ եթե չանսա, ապա ինքը կընդդիմանա և
նրան կպատժի այդ կամակորության համար: Սակայն Պոմպեոսը չզիոթ-
վեց, այլ մուլտային ասաց թե մարդկանց ավելի մեծ մուտք երկրպագում
և ձուլող արևին, քան թե մայր մտնողին, ակնարկելով այն թե Պոմպեո-
սի հպարտությունն անում է, իսկ դիկտատորի ուժերը թուլանում են ու
պատվում: Պոմպեոսի խոսքը Սուլլան չսկեց, բայց սերկանների դեմքերի
տրտահալսությունից ու շարժումներից տեսնելով որ նրանք դարձացած
են, հարցրեց, թե ինչ տապ Պոմպեոսը երբ կրկնեցին նրա ասածը, Սուլ-
լան, Պոմպեոսի համարձակությունից ապշած երկու անգամ գոչեց,
«Թ դ տոն ի՛ հաղթս հանվոք Ծատերը զայրացած ու վրդովված էին,

և ցանկանալով է՛լ ավելի վշտացնել նրանց՝ Պոմպեոսը ինչպես հաղորդում էն որոշեց անցնել շորս փիղ լծած հաղթակառքով քանի որ նա Աֆրիկայից շատ էր բերել այդ կենդանիներից, որոնք տեղացի թագավորներից էր խլել: Բայց քանի որ դարպասները չափազանց նեղ դուրս եկան, ապա ի ա ստիպված էղավ հրաժարվել իր այս մտադրությունից և փղերը փոխարինեց ձիերով: Նրա զորականները, ստանալով ավելի պակաս, քան սպասում էին մտադիր էին աղմուկով և իրարանցումով խանգարել հաղթական երթը: Պոմպեոսը հայտարարեց, թե ինքն անտարբեր է այդ պառնալիքների հանդեպ և որ ինքը ավելի շուտ պատրաստ է հրաժարվել հաղթահանողեսից քան շողոքորթել զինվորներին: Ընդ որում Սերվիլիուսը որը նշանավոր մարտ էր և առանձնապես ընդդիմանում էր Պոմպեոսի հաղթահանողեսին, ասաց թե այժմ տեսնում է, որ Պոմպեոսը մեծ է և հաղթահանողեսի արժանի: Անկասկած էթե Պոմպեոսը ցանկանար այն ժամանակ հեշտությունք սենատի մեջ կմտներ: Սակայն նա այդ նպատակով ոչ մի ցանք չէր թափում՝ չձգտելով փառքի հասնել անսովոր ուղիով: Չէ՞ որ դարմանալի ոչինչ չէր լինի, ևթե Պոմպեոսը սնատոր դառնար սահմանված տարիքից շուտ սակայն միանգամայն առանձնահատուկ պատիվ էր հաղթահանողեսը որ թույլատրված էր մեկին, որը դեռևս սենատոր լէր: Այս հանգամանքը բավականին օգնեց Պոմպեոսին ժողովրդի համակրանքը շահելու համար ժողովուրդը զվարճանում էր, երբ հաղթահանողեսից հետո, ուրիշ հեծյալների հետ միասին, Պոմպեոսին էլ վիճակվեց մասնակցել հանդիսավոր զորատեսին:

XV Մուլլան, տեսնելով, թե ինչպիսի փառքի ու հզորության է հասել Պոմպեոսը, սրտնեղած էր, սակայն, անհարմար զգալով խոչընդոտների հարուցել երիտասարդի դեմ՝ ոչինչ չէր նախաձեռնում: Բացառությույն կազմեց միայն այն դեպքը, երբ Պոմպեոսը ուժով և ղիկտատորի կամքին հակառակ կեպիդոսին կոնսուլ դարձրեց պաշտպանելով նրա թեկնածությունը և իր ազդեցության շնորհիվ նրա համար ձեռք բերելով ժողովրդի բարեհաճությունը: Տեսնելով, թե Պոմպեոսն ինչպես է ժողովրդի բառմունքյան ուղեկցությունք տուն վերադառնում ֆորումի միջով, Մուլլան ասաց «Ես տեսնում եմ, երիտասարդ, որ դու ուրախ ես քո հաջողությունք: Ինչ ազնիվ ու դեղեցիկ բան է քո կույմից, որ կեպիդոսը՝ այդ գերազույն սրիկան ժողովրդի մոտ քո միջնորդությունք ընտրված է կոնսուլ և նույնիսկ ավելի հաջողությունք քան Կատուլոսը՝ ամենաօրինավոր մարդկանցից մեկը: Եկել է ժամանակը որ դու շնիրհես և աշալուրջ լինես չէ՞ որ դու ձեռք բերեցիր մի թշնամի, որը շատ ավելի ուժեղ է քան դու ինքդ»: Իր անբարեհաճ վերաբերմունքը Պոմպեոսի նկատ-

մամբ Սուլլան շատ պարզ արտահայտել է իր թողած կտակի մեջ, քանի որ իր բոլոր բարեկամներին նշանակելով իր փոքրահասակ որդու խնամակալն էլ՝ նա կտակով նվերներ էր հատկացրել, իսկ Պոմպեոսին ընդհանրապէ՛ շրջանցել էր։ Վերջինս այդ վիրավորանքը տարավ շատ հանգիստ և արժանապատվութեամբ։ Ուստի, երբ Լեպիդոսը և ուրիշ մի քանիսը փորձում էին ընդդիմանալ Պաշտում Սուլլայի դիակը կիզելուն և թաղումը պետութեան հաշվին կատարելուն, Պոմպեոսը միջամտելով, խաշողեցրեց, որ և թաղման մեծարանքներ տրվեին հանգուցյալին, և՛ անվտանգութեան միջոցներ ձեռք առնվեին թաղման ժամանակ։

XVI Սուլլայի վախճանվելուց հետո, նրա կանխագուշակո թյուն էլ ըն իրականացան Լեպիդոսը, ցանկանալով տիրանալ մեռած դիկտատորի իշխանութեանը սկսեց գործել ուղղակի, բացեիբաց նա իսկույն-նեթ զենքի դիմեց իր շուրջը հավաքեց և շարժման մեջ դրեց Մարիոսի կողմնակիցների մնացորդներին, որոնց հաշողվել էր փրկվել հետապըն գումներից Լեպիդոսի պաշտոնակից ընկեր Կատուլոսը որին միացել էլ սենատի և ժողովրդի բարեմիտ ու ողջամիտ մասը առանձին հարգանք էր վաշելո մ իր խելամտութեան ու արդարացիութեան համար և այն ժամանակվա առավել նշանավոր Լարդկանցից մեկն էր Հոտմում սակայն նա ըստ երևույթին, հակում ուներ ավելի շուտ պետական գործունեութեան, քան զինվորական ավելեաթի նկատմամբ։ Հանգամանքների այս պիսի գուգորդման պատճառով հարկ եղավ դիմել Պոմպեոսին։ Վերջինս շտատանվեց թե որ կողմին հարի նա միացավ լավագույն քաղաքացիներին և իսկույնեթ գլխավոր հրամանատար նշանակվեց Լեպիդոսի դեմ մղվելիք պատերազմում, Լեպիդոսի, որն արդեն իրեն էր ենթարկել Իտալիայի մեծ մասը և Բրուտոսի գործերի օգնութեամբ տիրել էր Գալլիային Ալպելի այս կողմում։ Սկսելով պայքարը՝ Պոմպեոսն ամենուրեք հեշտութեամբ հաղթում էր իր թշնամիներին, և միայն Մուտինեի մոտ Գալլիայում, նրան հարկ եղավ երկար ժամանակ կանգ առնել՝ շրջապատելով Իրուտոսին։ Այ՛իհնլ Լեպիդոսը սլանում էր դեպի Հոտմ, և ճամբար դնելով դրա պարիսպների տակ, իր համար երկրորդ կոնսուլութեուն էր պահանջում բնակիչներին սարսափեցնելով բազմամարդ զորքով Պոմպեոսի նամակը, որը ավետում էր պատերազմի հաջող և անարյուն ավարտը ցրեց բոլոր սարսափները Քանզի Բրուտոսը կամ ինքն էր հանձնվել զորքի հետ միասին, կամ էլ զորքը դավաճանելով զորավարին՝ լքել էր նրան։ Բրուտոսն ստիպված է եղել հանձնվել Պոմպեոսի ձեռքը։ Որպես ուղեկցորդներ ստանալով մի քանի ձիավոր նա հեռացել էր Պաշտո գետի ափին գտնվող ինչ որ գյուղաքաղաք որտեղ հաջորդ օրը սպանվել

էր Պոմպեոսի կողմից ուղարկված Գեմինիոսի ձեռքով Պոմպեոսի այս արարքը շատ հանդիմանանքների տեղիք տվեց: Իսկապես Բրուտոսի ղորքի նրա կողմն անցնելուց հետո Պոմպեոսը գրել էր սենատին, թե Բրուտոսը իբր հանձնվել է կամավոր իսկ այնուհետև, Բրուտոսի սպանությունից հետո, ուղարկեց երկրորդ նամակը՝ մեղադրանքներով ընդ դեմ նրա: Այս Բրուտոսի որդին Կասսիոսի հետ սպանեց Կեսարին: Սակայն որդին նման չէր հորը՝ ոչ նրա նման պատերազմ վարելով ո՛չ իր վախճանով, ինչպես պատմվում է նրա կենսագրության մեջ:

Այդ միջոցին Լեպիդոսն իսկույնեթ փախավ Իտալիայից և նավեց անցավ Սարդինիա: Այնտեղ նա հիվանդացավ ու մեռավ ոգով բոլորովին ընկճված բայց ոչ թե իր ձեռնարկման խորտակման պատճառով ինչպես ասում են ոմանք, այլ այն պատճառով, որ պատահաբար նրա ձեռքն էր ընկել մի նամակ որից իմացել էր իր կնոջ անհավատարմությունը:

XVII Այդ ժամանակ Սերտորիոսը մի զորավար որը ոչնչով նման չէր Լեպիդոսին, տիրեց Իսպանիային և սարսափ էր ներշնչում հռոմեացիներին, քանի որ նրա մոտ, ասես թե բորբոքման վերջին օջախի գալիս կուտակվում էին քաղաքացիական պատերազմների բոլոր գարշելի հյուսիսը: Նա արդեն ջարդել էր երկրորդական շատ զորավարների և այդ ժամանակ կռվում էր Մետելլոս Պիոսի դեմ: Մետելլոսը նշանավոր ու բարձրակարգ էր բայց, ըստ երևույթին, ծերության պատճառով արդեն այնքան էր թոշնել, որ պատերազմում չէր կարողանում օգտվել հարմար առիթից զրկվել էր բարդ իրադրություններում արագ կողմնորոշվելու ունակությունից Սերտորիոսն էլ հանդգնորեն, ավազակի պես, հարձակվում էր նրա վրա: Նա դարանումներով և շրջանցիկ շարժումներով մըշտապես անհանդստացնում էր ծեր զորավարին, որը փորձված էր ծանր ու անդյուրաշարժ մարտակարգի բոլոր կանոններով շարված մարտընչող զորքի ղեկավարման մեջ Պոմպեոսը, որի զորքը կազմուպատրաստ էր, հասավ այն բանին, որ իրեն օգնության ուղարկեցին Մետելլոսին: Չնայած Կատուլոսի հրամանին Պոմպեոսը չէր ցրում իր զորքը, այլ գանազան պատրվակներով ամբողջ ժամանակ նրան պահում էր զենքի տակ, Հռոմի մոտ մինչև որ Լոցիոս Փիլիպոսի հրամանով իրեն շնորհեցին զլիսավոր հրամանատարի պաշտոն Սերտորիոսի դեմ մղվող պատերազմում: Պատմում են, որ երբ ինչ-որ մեկը սենատում զարմանքով հարցրել է Փիլիպոսին մի՞թե նա անհրաժեշտ է համարում Պոմպեոսին օժտել կոնսուլի լիազորություններով, կամ, ինչպես Հռոմում են ասում, նրան ուղարկել կոնսուլի փոխարեն Փիլիպոսը պատասխանել է. «Ոչ,

երկու կոնսուլների փոխարեն», — դրանով ցանկանալով հասկացնել տալ, որ յն ժամանակվա երկու կոնսուլները լիակատար ոչնչութիւն ներ լինու

XVIII Լուստնիա հասնելով (ինչպես դա սովորաբար լինում է նոր փոփոխում փած զորավարի հայտնվելուն պես) Պոմպեոսը շատերի մեջ նոր հուշեր արթնացրեց: Որոշ ցեղեր, որոնք դեռ շատ ամուր չէին կապ փած Սերտորիոսի հետ, շարժման մեջ մտան և սեսեցին անցնել Պոմպեոսի կողմը: Սերտորիոսն էլ արհամարհանքով էր խոսում Պոմպեոսի մա ին. այսպես օրինակ, նա կատակով ասում էր, թե իրեն, այլ զենք պետք չէր լինի, քան ճիպտան ու մտրակը այդ լակոտի դեմ կովելու համար Լթե ինքը վախենար այն պառավից (նկատի ուներ Մետելլոսին): Իսկ իրականում նա խիստ զգուշանում էր Պոմպեոսից և նրա ահից սկսել էր պատերազմը վարել ավելի մեծ զգուշութեամբ քան նախկինում: Իսկ Մետելլոսը, հակառակ բոլոր սպասելիքների, ամբողջովին տրվեց ասա- ոսակ կշանքի և հաճույքների, նրա բնավորութիւնը հանկարծակի փոխվեց, նա դարձավ սնափառ ու վատնող և այս հանգամանքը միայն ավելաց- նում էր Պոմպեոսի մեծ համբավը, նրան բերելով համաքաղաքացիների համակրանքը, քանի որ նա ձգտում էր ցույց տալ իր ապրելակերպի պարզութիւնը, ինչը, իհարկե նրանից մեծ ջանքեր չէր պահանջում: Չէ՞ սր ի բնե Պոմպեոսը աչքի էր ընկնում շափավորութեամբ և ցանկութիւն- ները զսպելու կարողութեամբ

Պատերազմի զանազան իլադսոճո թշուների և անակնկալների մեջ Պոմպեոսին առանձնապէ վշտացրեց Լավրոնի գրավումը Սերտորիոսի կողմից: Վատահ լինելով թե ինքը շրջապատել է Սերտորիոսին՝ Պոմպեո- սը նույնիսկ պարծենում էր դրանով, բայց հանկարծ պարզվեց որ ինքն է շրջապատված թշնամիներով: Չհամարձակվելով տեղից շարժվել՝ նա ստիպված էր սայել, թե ինչպես են թշնամիները իր ներկայութեամբ աչ- րում քաղաքը մինչև վերջ: Սակայն Պոմպեոսը Վալենտիայի մոտ ջախ- ջախեց հերենիոսին ու Պերպերնային՝ զորավարների որոնք փախել լին Սերտորիոսի մոտ և ղեկավարում էին նրա զորքերը ընդ որում այդտեղ տասը հազարից ավելի մարդ ջարդեց:

XIX. Իր հաջողութեամբ հպարտ և մեծ հուշերով թեկավորված Պոմ- պեոսը շտապ շարժվեց ուղիղ Սերտորիոսի դեմ, որպեսզի Մետելլոսի հետ չկիսեր հաղթանակի փառքը: Սուկրոն գետի մոտ երբ իջնում էր երեկոն, զորքերը ճակատամարտի մտան, ընդ որում երկու զորավարներն էլ վախենում էին Մետելլոսի գալուց, քանի որ Պոմպեոսն ուզում էր մե- նակ մարտնչել, իսկ Սերտորիոսը՝ միայն մեկ հակառակորդի դեմ: Սար-

տի էլքը, սակայն՝ անորոշ եղավ քանի որ յուրաքանչյուր կողմից հաղթանակ տարավ մեկ թևը: Բայց երկու զորավարներից ավելի մեծ փառքի արժանացավ Սերտորիոսը, քանի որ նա փախուստի մատնեց իր դիմաց կանգնած թշնամական բանակի թևը: Ինչ վերաբերո մ է Պոմպեոսին, որը ձիով էր կռվում ապա նրա վրա նետվեց թշնամո մի վիթխարահասակ հետևակաչին: Նրանք միմյանց հետ ձեռնամարտի մտան ընդ որում յուրաքանչյուրը սրի մի հարված հասցրեց դիմացինի՝ ձեռքին, բայց արդյունքը տարբեր եղավ Պոմպեոսը միայն վիրավորվեց իսկ հակառակորդի ձեռքը կտրվեց: Աչնուհետև թշնամու մի քանի զինվորներ ևս նետվեցին Պոմպեոսի վրա, հռոմեացիները փախուստ տվեցին, բայց Պոմպեոսին այնուամենայնիվ հաջողվեց, հակառակ յայս սածին, դուրս պրծնել՝ թշնամիներին թողնելով իր ձին, ուր զարդալված էր ոսկե սանձով ու խանկազին ձրաւարքով: Թշնամիներն սկսեցին բաժանել ավարը և դրա համար վիճելով՝ ձեռքից բաց թողեցին Պոմպեոսին: Հաջորդ օրը բացվելուն պես երկու զորավարները նորից զորքը շարեցին մարտակարգով, սրպեսզի գործն ավարտեին, բայց Մետելլոսի ժամանումից հետո Սերտորիոսը սահանջեց՝ իլ զորքին հրամայելով ցլիվ գալ: Սովորաբար այդ պես նրա զորքը ցրիվ էր գալիս, իսկ հետո մարդիկ նուրից էին հավաքվում: Այդ պատճառով էլ Սերտորիոսը, հաճախ էր պատահում որ շրջում էր մենակ, բայց հաճախ էլ, հանկարծակի վարարած լեռնաչին հեղեղի նման, նետվում էր թշնամու վրա՝ հարյուր հիսուն հազարանոց բանակի գլուխն անցած:

Ճակատամարտից հետո Պոմպեոսը ընդառաջ ելավ Մետելլոսին և, էլլ նրանք միմյանց մոտ էին հասել լիկտորներին հրամայեց ճիպտախորձը խոնարհել ի նշան Մետելլոսի հանդեպ հարգանքի որպես մի մարդու, որն առավել բարձր կոչման տեր է Մետելլոսը, սակայն, չընդունեց այդ պատիվը և թեև նախկինում կոնսուլի պաշտոն էր զբաղեցրել ու տարիքով շատ ավելի մեծ էր, ամեն ինչում իր երիտասարդ ընկերոջ նկատմամբ դուստրում էր բարչս ցակամություն ու պատրաստակամություն՝ իր համար շտահանջելով ոչ մի առավելության բացառություն մը լոկ այն բանի որ համատեղ ճամբար դնելիս երկու զորքի համար էլ նշանաւանը Մետելլոսն էր տալիս: Սակայն մեծ մասամբ նրանք միմյանցից առանձնացած էին լինում, քանի որ խորամանկ թշնամին, սրընթաց առաջ շարժվելով և մարտի մեջ ներքաշելով մերթ մեկ, մերթ մի այլ տեղում, միշտ հնար էր գտնում բաժանել նրանց և իրարից հեռացնել: Վերջիվերջո Սերտորիոսը երկու զորավարներին էլ դուրս մղեց իրեն ենթակա Իսպանիայից նա կտրում էր պարսնամթերթ լեղապիտիս

Լ սն համասպարհները, ամայացնում էր երկիրն ու իշխում ծովի վրա և տեղերի պաշարների անբավարարութեան պատճառով նրանք ստիպված էլ լինում նահանջել այլ պրովինցիաներ:

XX. Պոմպեոսն արդեն իր ունեցվածքի մեծ մասը ծախսել էր սյուսպատերապոսի վրա և սկսեց դրամ խնդրել սենատից՝ նա հայտարարեց, թե մերժման դեպքում, զորքով կվերադառնա Իտալիա դրամ պահանջելու: Այդ ժամանակ կոնսուլը Լուկուլլոսն էր, որը թշնամի էր Պոմպեոսին: Սակայն Լուկուլլոսն շտապեցրեց դրամի առաքումը Պոմպեոսին, լանի որ ձգտելով ձեռք բերել Միհրդատի դեմ մղվող պատերազմում լուսավորության արժանատարի պաշտոնը, նա վախենում էր Պոմպեոսին առիթ տալ լուսավորվելու Սերտորիոսի դեմ կռվելուց և դառնալ Միհրդատի կողմը: Ինչպես ակադեմիկոսի որի դեմ պայքարելը, թ լու էր խոստանալ էր վառք է միշտ հաղթանակ:

Այդ միջոցին Սերտորիոսը դավաճանաբար սպանվեց իր բարեկամ Նելլի ձեռքով: Դրանցից ամենագլխավորը՝ Պերպերնան, փորձում էր շարունակել Սերտորիոսի գործը՝ Պերպերնան էլ ուներ այն ուժերը և միջոցները, բայց շուներ այնքան ընդունակություններ ու խելք դրանք նույնպիսի հաջողությամբ զարժագրելու համար: Պոմպեոսն իսկույն ելավ Նյապոլիս և նկատելով Պերպերնայի անվճարականությունը, առաջ ուղարկեց լուսավոր կոնսուլոս՝ որպես խաչ, հրամայելով նրան, ջրով պալ հարթախաչում: Հենց որ Պերպերնան հարձակվեց նրանց վրա և սկսեց հետապնդել, Պոմպեոսը հայտնվեց ամբողջ զորքով և տեղի ունեցած ճակատամարտում գլխավոր ջախջախեց թշնամուն: Պերպերնան ինքը գերի լեցվեց ու բերվեց Պոմպեոսի մոտ՝ ուր հրամայեց մահատուտի ենթարկել նրան: Պոմպեոսին շպեռք է մեղադրել ապերախտության կամ այն ծառայությունը մոռանալու մեջ, որ իրեն ցույց էր տրվել Միցիլիալում (ինչպես դա անում են ոմանք)՝ նա գործում էր մեծ իմաստնությունը՝ էլ ինչով համընդհանուր բարոսության նկատառումներից: Չէ՞ որ Պերպերնան գրավելով Սերտորիոսի նամակագրությունը, Պոմպեոսին ցույց էր տվել մի բանի հայտնագրելի հոտմեացիների կողմից Սերտորիոսին գրված նամակներ սրտնցում նրանք ցանկություն էին հայտնում հուզումներ առաջացնելով պետություն մեջ փոփոխել այն ժամանակվա կառավարման ձևը և Սերտորիոսին հրապարակել էին Իտալիա երկշուղ կրելով, որ չլինի թե այդ նամակները գտնված լինեին էլ ավելի սարսափելի պատերազմների, քան հենց Նյուր փերջացածները, Պոմպեոսը հրամայել է սպանել Պերպերնային իսկ նամակներն աչրել՝ նույնիսկ սուանց կարգալու:

XXI Սրանից հետո Պոմպեոսը Իսպանիայում մնաց որոշ ժամանակ ևս որպեսզի հանդարտեցնեն առավել ուժգին հուզումները: Կարգ ու կանոն հաստատելով և վերջ տալով խառնաշփոթությանը, նա իր զորքը ստրուկների պատերազմի հենց ամենաթունդ օրերին նավերով անցկացրեց Իտալիա Ուստի գլխավոր հրամանատար Կրասոսը շտապեց խենթ համարձակությամբ ճակատամարտ տալ ստրուկների դեմ: Հաջողությունն այս ճակատամարտում ուղեկցեց Կրասոսին, և նա ոչնչացրեց տասներկու հազար երեք հարյուր թշնամական զինվոր Այնուամենայնիվ ճակատագիրը Պոմպեոսին ինչ-որ չափով մասնակից դարձրեց այս հաղթանակին ևս քանի որ ճակատամարտի դաշտից փսխած հինգ հազար հոգի նրա ձեռքն ընկան Մահապատժի ենթարկելով բոլոր գերիներին, Պոմպեոսը շատ պ սենատին գրեց թե Կրասոսը գլադիատորներին ջախջախել է բաց մարտում, իսկ ինքը Պոմպեոսը, պատերազմն արմատախիլ է արել: Պոմպեոսի նկատմամբ ունեցած համակրանքից հոռմեացիները բարհաճորեն էին ունկնդրում ու կրկնում այս խոսքերը և ոչ ոք նույնիսկ կատակով չէր համարձակվում պնդել թե Իսպանիայում Սերտորիոսի դեմ տարած աղթանակը պատկանում է ինչ որ մի ուրիշին, այլ ոչ թե ամբողջովին հանդիսանում է Պոմպեոսի գործը: Մակայն այդքան մեծ հարգանքն ու հույսերը, որոնք դրված էին Պոմպեոսի վրա ինչ որ չափով միանում էին կասկածանքի ու սարսափի հետ թե նա լի արձակր իր զորքը այլ գինված ուժերի օգնությամբ անմիջապես մենիշխանության ճանապարհը կբռնի և կգնա Սուլլայի հետքերով: Ուստի կային համարյա նույնքան մարդիկ, որոնք նրան ընդառաջ էին ելնում բարեկամական ողջույններով որքան որ նրանք, սվքեր դա անում էին վախից: Երբ Պոմպեոսը այս կասկածն էլ ցրեց հայտարարելով, թե զորքն արձակելու է հաղթահանդեպից անմիջապես հետո նրա նկատմամբ անբարյացակամ մտողանց համար մնաց մեղադրելու միայն սր պատրվակ, այն է նրանք կշտամբում էին Պոմպեոսին որ նա ալեկի շուտ բռնում է ժողովրդի կողմը քան սենատի և քոշել՝ վերականգնելով ժողովրդական տրիբունների իշխանությունը, ոչը վերացրել էր Սուլլան, ժողովրդի համակրանքը ձեռք բերել Սվ դա ճշմարիտ էր, որովհետև ուրիշ ոչ մի բանի հոռմեացի ժողովուրդը չէր ձգտում այնքան մոլեգնության, ոչինչ չէր ցանկանում առավել կրքոտությամբ, քան վերականգնված տեսնել ժողովրդական տրիբունների իշխանությունը: Ուստի Պոմպեոսը մեծ հաջողություն էր համարում, որ իրեն հարմար առիթ է ներկայանում այդ միջոցառումը կենսագործելու համար: Նա ենթադրում էր, թե չի գտնի քաղաքացիներին իր հանդեպ տածած սիրո գիմաց երախ-

աճատուչդ լինելու որևէ աչյ բան էթե իրենից առաջ որևէ մէկն օգտվի
յլ միջօցից:

XXIV Այնուհետև Պ մայեսոսի համալ նշանակվեց Երկրորդ հազթա
ձանդեսը և նա կանսուլ ընտրվեց: Այնուամենայնիվ այդ մեծարանքնե
րը չէին, որ նրա հանդեպ զարմանք էին հարուցում և նրան մեծ դարձ
նում Լոգովրդի աշքին: Նրա փառքի ապացույցն այն էր, որ Կրասոսը
Դիոնալի մի հոետոր, այն ժամանակվա առավել ազդեցիկ պետական
գործիչներից և ամենահարուստ մարդկանցից մեկը, Կրասոսը որը վե
րևից էր նայում հենց նրա՝ Պոմպեոսի և մնացած բոլորի վրա, այնուա
մենայնիվ սիրտ չէր անում կոնսուլության հետամտել շխնդրելով Պոմ
պեոսի համաձայնությունը: Պոմպեոսը, սակայն բավականությամբ
ընդունեց Կրասոսի խնդրանքը, քանի որ վաղուց արդեն ուզում էր նրան
որևէ մի ծառայություն ու սիրալիրություն անել, և դիմեց ժողովրդին՝
ձամառորեն երաշխավորելով Կրասոսին: Նա բացեիրաց հայտարարեց,
թե ինքը քաղաքացիներին նույնքան երախտապարա կլինի պաշտոնա
կից ընկերոջ համար, որքան և հենց այդ պաշտոնի համար Սակայն
կոնսուլ ընտրվելուց հետո նրանք բոլորովին հեռացան իրարից և սկսե
ցին միմյանց հետ թշնամանալ: Կրասոսն ավելի շատ ազդեցություն
ունեք սենատում իսկ Պոմպեոսի ուժը ժողովրդի բացառիկ սիրո մեջ
էր: Քանզի Պոմպեոսը վերականգնեց ժողովրդական տրիբունների իշ
խանությունը և թույլատրեց առաջարկել մի օրենք որով դատարանն է
րը նորից հեծյալների տնօրինո թյանն էին հանձնվում

Բայց ժողովուրդն ամենից շատ ուրախացավ, տեսնելով, թե ինչ
պես Պոմպեոսը խնդրում է ազատել իրեն զինվորական ծառայությու
նից: Բանն այն է որ հռոմեական հեծյալները մի սովորություն ունեն,
րսս որի օրենքով սահմանված ռազմական ծառայության ժամկետը
լրանալիս հեծյալն իր ձին բերում է ֆորում, որպեսզի դրան զննեն եր
կու պաշտոնատար անձինք՝ այսպես կոչված ցենզորներ: Ընդամին յու
րարանլյուրը պետք է թվարկի այն զորավարներին, որոնց հրամատա
տարությամբ ինքը ծառայել է հաշիվ ներկայացնի իր սխրանքների
լուսին և պաշտոնաթող լինի: Յուրաքանչյուրը, կախված նրա վարքից,
արժանանում է դովեստի կամ հանդիմանանքի: Յենզորներ Հելիոսը և
Լենտուլոսը այն ժամանակ նստում էին իրենց բազկաթոռներին լրիվ
հանդերձանքով, և նրանց առջևով անցնում էին ցենզի ենթարկված հեծ
յալները: Այդ հեծյալների մեջ երևաց նաև Պոմպեոսը նա ֆորում էր
իջնում՝ իր հետ ունենալով իր պաշտոնի տարբերանշանները և ստուձից
բռնած տանելով իր ձին: Նրբ Պոմպեոսը մոտեցավ այ՛քան որ զեն

զորները կարող էին տեսնել իրեն լիկտորներին հրամայեց մաւրել ճա-
նապարհը և ձին տարավ դեպի այն բարձունքը, որի վրա նստած էին
իշխանավորները Զմայլված ժողովրդի մեջ լուսթյուն տիրեց իսկ ցնն
զորների մեջ այդ տեսարանը հարգանքի ու բերկրանքի խառն զգացում
ծնեց: Այնուհետև նրանցից ավազը հարցրեց «Պոմպեո՛ւ Մագնոս, հարց-
նում եմ ես քեզ՝ արդյոք օրենքով սահմանված բոլո՞ր արշավանքներն
ես դու կատարել» Պոմպեոսը պատասխանեց բարձրաձայն «Ես կատա-
րել եմ բոլոր արշավանքները, և բոլորն էլ՝ իմ գլխավորութեամբ»: Այս
խոսքերից հետո թնդացին ժողովրդի հրճվագին կանչերը որոնք արդեն
անհնար էր լռեցնել Ցենզորները տեղներից վեր կացան և Պոմպեոսին
ուղեկցեցին տուն ի հաճույս համաքաղաքացիների որովք ծափս հարե-
լով հետևում էին նրանց:

XXIII Արդեն ավարտին էր մտանում Պոմպեոսի կոնսուլութեան
ժամկետը, մինչդեռ Կրասոսի հետ նրա անհամաձայնութիւնները ուժե-
ղանում էին Այդ ժամանակ ոմն Գայոս Ավրելիոս, հեծյալների դասին
պատկանող, բայց հասարակական կյանքից իրեն հեռու պահող մի մարդ
ժողովրդական ժողովում բարձրացավ հեկտորների բարձունքը և ճա-
ռով դիմեց ժողովրդին: Նա պատմեց, թե երազում իրեն հայտնվել է
Յուպիտերը և պատվիրել է ասել կոնսուլներին, որ նրանք շահեճեն
իրենց պաշտոնները, մինչև որ շահալուին միմյանց հետ: Այս հայտա-
բարութիւնից հետո Պոմպեոսը շարունակում էր անշարժ մնալ, իսկ
Կրասոսը, ողջունելով Պոմպեոսին, սկսեց խոսել նրա հետ: Ապա, դառ-
նալով ժողովրդին նա ասաց «Կարծում եմ, քաղաքացիներ՝ ես ոչ մի
անարժան կամ ստոր բան արած չեմ լինի, եթե առաջինը ընդառաջ
դնամ Պոմպեոսին որին դուք դեռևս անմորուս պատանեկան տարի-
քում «Մեծն» պատվավոր կոչմանն էք արժանացրել և, երբ նա դեռ սե-
լատոր չէր, մեծարել էք երկու հազթահանգեսով»: Այսպիսով կոնսու-
լները հաշտվեցին և վայր դրեցին իրենց լիազորութիւնները:

Դրանից հետո Կրասոսը շփոխեց իր նախկին ապրելակերպը իսկ
ինչ վերաբերում է Պոմպեոսին ապա նա հիմա խուսափում էր հանձն
առնել քաղաքացիների պաշտպանութիւնը դատարանում, քիչ-քիչ թողեց
Ֆորումը և հազվադեպ էր հաճախում հասարակահան վայրերը, այն էլ՝
միշտ իր կողմնակիցների մեծ շքախմբի ուղեկցութեամբ: Հեշտ չէր հիմա
նրան հանդիպել մեռակ, բազմութեամբ շրջապատված, և նույնիսկ ընդ
հանրապես տեսնել նրան: Պոմպեոսն ամենից հաճույքով երևում էր տյ-
ցելո՞ների բազմամարդ ամբոխի ուղեկցութեամբ, մտածելով թե դրա-
նով իրեն վեհակերպութիւն ու վսեմութիւն կտա: Նա համոզված էր, որ

Լուսավորչի ճեռ շափուպուսոց հաճախակի շփումը կարող է նսեմացնել իր սրբանապատվութիւնը Երոզ, այն մարգիկ, որոնց մեծութիւնը ծնունդ է առել սազմի գաշտում և որոնք շեն կարողանում հարմարվել քաղաքային կառուցմանը, հասարակ թշնար, զգեստաւորվելով տոգայով՝ իրենց փառքը կորցնել և վտանգի են ենթարկվում: Չէ՞ որ ով առաջինն է եղել պատերազմում քաղաքացիական կյանքում էլ է ուզում առաջինը լինել իսկ նրանք, ովքեր պատերազմում ստիպված են եղել բավարարվել երկրորդ տեղերով անտանելի են համարում որևէ մեկի գերազանցութիւնը քաղաքացիական կյանքում: Դրա համար էլ, երբ նրանք ֆորումում տեսնում են ի մարդու, որը պսակված է հաղթանակի փառքով ու հաղթահանողներով, ջանում են ենթարկեցնել ու ստորացնել նրան: Իսկ ով որ իր հպարտութիւնը կտրելով՝ նահանջում է նրանց առջև նրանք մի կողմ են թողնում պատերազմում այս մարդու ձեռք բերած պատիվներն ու հզորութիւնը շնախանձելով սրան Այս բանի ապացույցը կլինեն այն իրադարձութիւնները որոնք շուտով մեր պատմելիքի առարկան են դառնալու:

XXIV. Ծովահենների հզորութիւնը ծնունդ առավ նախ և առաջ Կիւլիկիայում: Սկզբում նրանք գործում էին խիզախորեն և իրենց վտանգի ենթարկելով, բայց լրիվ թաքուն: Նրանք ինքնավստահ ու հանդուգն դարձան միայն Միհրդատյան պատերազմի ժամանակվասից քանի որ որպես նավաստիներ ծառայում էին թագավորին: Երբ հռոմեացիները քաղաքացիական պատերազմների ժամանակ մարտնչում էին հենց Հռոմի դարպասների մոտ ծովը, որն առանց պաշտպանութիւն էր մնացել, սկսել էր քիչ առ քիչ հրապուրել ծովահեններին և քաջալերում էր նրանց հետագա ձեռնարկումները, այնպես որ նրանք ոչ միայն սկսեցին հարձակվել ծովազնացների վրա, այլև նույնիսկ ավերում էին կղզիներն ու մերձափնյա քաղաքները: Սրդեն շատերը՝ սնևոր, անվանի, և ընդհանուր կարծիքի համաձայն ողջամիտ մարդիկ սկսել էին ոտք դնել ավազակային հավերի տախտակամածին և մասնակցութիւն ունենալ ծովահենային արհեստին, ասես թե դա կարող էր փառք ու պատրվ բերել իրենց: Շատ տեղերում ծովահեններն ունեին խարսխակայաններ և ամուր գիտաշարակներ: Նավատորմիկը, որ նրանք ծով էին ուղարկում, աչքի էր ընկնում ոչ միայն ղեղակազմ, ասես ընտրյալ, նավաստիներով այլև՝ նավավարների արվեստով, նավերի արագաշարժութեամբ ու թլթելութեամբ, որոնք հատուկ նախատեսված էին այդ զբաղմունքի համար: Ծովահենների զազրելի պերճանքը ավելի շուտ զգվանք էր հարուցում, քան սալ սափ, ի ցույց դնելով նավերի ոսկեզօծ և ավախելային կաշմերը:

ծիրանագուշն վարագուշրներն ու ալ ծաթով ագուշված թիակները ծովա-
հեններն ասես ծաղրում էին իրենց զոհերին և գոռոզանում իրենց շարա-
գործութիւններով: Երգ ու նվագով գինարբուքներ՝ յուրաքանչյուր ափում,
բարձր պաշտոնյաների գերեմարում, ռազմատուղանքներ գրաված քա-
ղաքների վրա — այս ամենը խաչատանակութիւնն էր հոռմեական տիրա-
պետութեան համար: Ավագակաշին նավերի թիվն անցնում էր հազարից,
և ծովահեններին հաջողվել էր գրավել մինչև շոյս հարչուր քաղաք նրանք
կողոպտել էին մինչ այդ անձեռնմխելի մնացած շատ սաճարներ՝ Կլա-
րոնինը Դիդիմոնինը Սամոթրակեինը, Քթոնիայի տաճարը՝ Հերմիո-
նում, Ասկլեպիոսի տաճարը Էպիդաւրոսում Պոսեյդոնի տաճարները
Հիսթմոսում, Տենարոսի հրվանդանում ու Կալարրիայում, Ապոլլոնի տա-
ճարները Աքաիումում ու Լեկադեում, Հերայի տաճարները Սամոսում, Ար-
գոսում ու Լակիինիոս հրվանդանում: Ծովահեններն իրենք Օլիմպոսում
տարօրինակ անհասկանալի տոնակատարութիւններ էին կազմակեր-
պում և ինչ որ խորհուրդներ կատարում: Դրանցից մինչև հիմա դեռևս
տարածում ունեն Միթրայի խորհուրդները և որ սուաջիմ անգամ նրանք են
մտցրել:

Ծովահեններն ամենից հաճախ շարագործութիւններ էին կատարում
ընդդեմ հոռմեացիների: Ափ իջնելով՝ նրանք կողոպուտներ էին անում
մեծ ճանապարհներին և ավերում ծովամերձ կալվածքները: Մի անգամ
նրանք առևանգել և իրենց հետ տարել էին նույնիսկ երկու պրետորի
Սեքստիլիոսին ու Բելլինոսին եզրագարդված ծիրանի տոգաները հազ-
ներին, ծառաներով ու լիկտորներով: Նրանք խլել տարել էին նաև տրիում-
ֆատոր Անտոնիոսի դատերը, երբ նա մեկնելիս էր եղլլ քաղաքամերձ
առ նր: Անտոնիոսն ստիպված եղավ Լրան հետ գնել մեծ գումարով: Սա-
կս չն նրանց ամենալկտի շարագործութիւնը հետեյալն էր: Երբ որևէ գե-
րի գոչում էր թե ինքը հոռմեացի է և տալիս էր իր անունը, նրանք վա-
խեցած ու շփոթահար ձեռնալով շրմփացնում էին իրենց ազդրերին և
ծնլադրելով, ներումն էին աղերսում: Դժբախտ գերին հավատում էր՝
անսնելով նրանց խեղճ ու նվաստ խնդրանքները: Այնուհետև նրանցից
ոմանք հազցնում էին նրա կոշիկները, մշուտները՝ տոգան, իբբ, որպես-
զի նորից շտալվէին: Այդպես մի կուշտ ձեռ աննելով նրան և հրձվելով
նրա տանջանքներով, վէրջապես ծովի մեջ կամրջակ էին կախում և հրա-
մայում իջնել՝ բարի ճանապարհ մաղթելով, իսկ եթե դժբախտը հրա-
մարվում էր, ապա բոթում գցում էին նավակողից ու խեղդում:

XXV Ծովահենների հզորութիւնը տարածվել էր համարչա Միջեր-
կրրական ծովով մեկ, այնպես որ ծովը միանգամայն անմատչելի էր

րոյ ձեզ ծովագնացության և առևտրի համար: Հենց այս հանգամանքն էլ յրդեք հոռմեացիներին, որոնք արդեն պարենի պակասութիւնն էին զգում և վախենում էին դաժան սովից, ուղարկել Պոմպեոսին ծովը մաքրելու ծովահեններից: Պոմպեոսի բարեկամներից մեկը Գաբինիոսը օրինապիժ մտքրեց, որով Պոմպեոսին էր տրամադրվում ոչ միայն նավատորմի գեկավարումը այլև ուղղակի միահեծանութիւնն և անսահմանափակ լիազորութիւններ բոլոր պրովինցիաներում: Իրոք, այդ օրինագիծը զորավորին իշխանութիւնն էր տալիս ծովի վրա՝ Հերկուլեսյան սյուններից այս կողմը և ցամաքում՝ ծովից շորս հարչուր ասպարեզ հեռավորութեան վրա ամենուրեք: Այն շրջանից, որի վրա տարածվում էր զորավարի իշխանութիւնը, դուրս էին մնում հոռմեացիների տիրապետութեան տակ եղածներից քչերը միայն: Իրա մեջ մտնում էին առավել նշանավոր բարբարոս գեղերը և ամենահզոր թագավորների տերութիւնները: Բացի այդ Պոմպեոսը լիազորված էր սենատորների թվից ընտրելու տասնհինգ լեզատ որպես տեղերում իրեն ենթակա պետեր գանձարանից և կապալառուներից վերցնելու որքան դրամ որ ուզենա և հանդերձավորելու երկու հարչուր նավից բաղկացած տորմիդ ընդ որում նրան իրավունք էր վերապահվում հավաքելու ինչպես զորականներ այնպես էլ թիավարների անձնակազմ

Օրենքի ընթերցումից հետո ժողովուրդն այն ընդունելց արտակարգ լավականութեամբ, բայց անվանի և առավել ազդեցիկ սենատորները այն կարծիքին էին, թե այդպիսի անսահմանափակ և անորոշ բնույթի իշխանութիւնը պիտի ավելի շուտ սարսափ հարուցի, քան նախանձ: Ուստի նրանք բոլորը դեմ էին օրենքին, բացառութեամբ Կեսարի որը լաշտպանում էր օրենքը, իհարկե, ամենից քիչ ի սեր Պոմպեոսի, այլ ամենից առաջ հաճոյանալով ժողովրդին և ձգտելով ձեռք բերել նրա համակրանքը: Մյուս սենատորներն ուժգին հարձակվեցին Պոմպեոսի վրա: Կոնսուլներից մեկն ասաց, որ եթե Պոմպեոսը ցանկանում է նմանվել Հոռմուլոսին, ապա նա չի խուսափի վերջինիս բախտին արժանանալուց: Այս խոսքի համար կոնսուլին սպառնում էր ժողովրդի կողմից բզկտվելու վտանգը Երբ օրենքի դեմ հանդես եկավ Կատուլոսը, ապա ժողովուրդը, նրա հանդէպ ունեցած հարգանքից, լսում էր լիակատար հանգրստութեամբ: Միանգամայն անաչառ բազում գովեստներից հետո, նա խորհուրդ տվեց պահպանել այդպիսի մարդուն այլ ոչ թե վտանգի ենթարկել պատերազմներում, որոնք հաջորդում են մեկը մյուսին: «Ուրիշ է) ո՞ւմ կգտնեք,— ասաց նա,— եթե կորցնեք Պոմպեոսին»:— «Քե՞զ»,— գոչեցին բոլորը միաբերան: Այսպես, Կատուլոսն ստիպված եղավ հեռա-

նալ՝ առանց ժողովրդին համոզելու: Ապա խոսել սկսեց Հոռոսցիոսը, բայց քանի որ ոչ ոք չէր լսում նրան, ապա նա մատներով ցույց տվեց, որ Պոմպեոսին պետք է ընտրել ոչ թե մեն մենակ այլ՝ նրան մի ընկեր տալ Այս առաջարկությունը, ինչպես հաղորդում են, զայրացած ժողովրդից այնպիսի ուժգնություն մի ճիշ կորզեց որ Ֆորումի վրայով թռչող ազուավը անշնչացած ընկավ ամբոխի մեջ: Թուշունների անկումը, ըստ իս, տեղի է ունենում ոչ նրանից որ օդում, սրա սրայթման կամ ցրման պատճառով առաջանում է մեծ ու դատարկ տարածություն այլ՝ ավելի շուտ նրանից, որ ձայնը փևտրավորներին խփվում է հարվածի նման, երբ այն հնչելով այդպիսի բարձրությամբ առաջացնո մ է օդի հուժկու տատանում և ալեկոծում:

XXVI Այս անգամ ժողովը ցրվեց շքուններով ոչ մի որոշում: Իսկ այն օրը, երբ պետք էր հաստատել օրենքը, Պոմպեոսը գաղտնի մեկնեց իր կալվածքը: Իսկ իմանալով օրենքի ընդունման լուրը նա գիշերը վերադարձավ Հոռոմ, որպեսզի խուսափեր նախանձից, որ կարող էր առաջացնել իր հանդիպումը ժողովրդի բազմության հետ Հաջորդ առավոտյան Պոմպեոսը բացեիբաց երևաց մարդկանց և զոհեր մատուցեց աստվածներին: Նորից ժողովրդական ժողով հրավիրվեց, և Պոմպեոսն ընդունել տվեց, արդեն հաստատված օրենքից բացի, ուրիշ շատ որոշումներ, այնպես որ կրկնապատկեց իր ռազմական ուժերը: Եվ իրոք, նա հանդերձավորեց հինգ հարյուր նավ հավաքեց հարյուր քսան հազար ծանրազեն հետևակ և հինգ հազար հեծյալ Պոմպեոսն ընտրեց քսանչորս ենատոր՝ ու պես իրեն ենթակա պետեր: Բացի այդ նրան տրված էր երկու քվեստոր: Իսկուլնևեթ մթերքների գներն ընկան և այս հանգամանքը ուրախացած ժողովրդին առիթ տվեց խոսելու, թե Պոմպեոսի անունն իսկ վերջ դրեց պատերազմին: Պոմպեոսն ամբողջ Միջերկրական ծովը բաժանեց տասներեք մասի: Ծուրաքանչյուր մասում նա կենտրոնացրեց սրոշակի թվով նավեր պետի գլխավորությամբ: Այսպիսով, իր ուժերը բաշխելով ամենուրեք Պոմպեոսն իսկուլն ասես թե ուռկանի մեջ առավ մեծ թվով ծովահենային նավեր և դրանք տարավ իր նավահանգիստները: Այն նավերը որոնք հասցրել էին փրկվել հալածվելով բոլոր կողմերից՝ սկսեցին թաքնվել Կիլիկիայում, ինչպես մեղունները՝ փեթակում: Նրանց դեմ ելավ Պոմպեոսն ինքը վաթսուն նավով Մինչև այս արշավանքը, նա քառասուն օրում, շնորհիվ իր անխոնջ գործունեության և պետերի եռանդի ծովահենական նավերից կատարելապես մաքրել էր Տիրենյան ու Լիբիական ծովերը ինչպես և Միջերկրականը՝ Սարդինիայի Կորսիկայի և Սիցիլիայի շուրջը:

ԱՎՄԻ Միևչդիո Հոռմ ւմ կոնսուլ Պիզունը ատելով Պոմպեոսին և յախանձելով նրան, ասես ամեն կարգի խոչընդոտներ էր սարքում նրա Առնարկումների գեմ և նույնիսկ հրամայեց արձակել նավերի անձնակազմերը Այնժամ Պոմպեոսը նավատորմն ողարկեց Բրունդիզիոն, իսկ ինքը Էպորիսովի միջով ուղևորվեց դեպի Հոռմ: Հենց որ Հոռմում իմացան այդ լուրը բոլորը թափվեցին ճանապարհին, որ դիմավորեին զորավորին ասես թե նրանք հենց նոր շէին ճանապարհել նրան: Փոփոխությունների արագությունն ու հանկարծակիությունը հոռմեացիներին բերկրանք էր պատճառում քանի որ շուկան առատորեն լցվել էր մթերքներով: Ուստի Պիզոնին սպառնում էր պաշտոնից զրկվելու վտանգը, և Գալինիոսն արդեն այդ նպատակի համար օրինագիծ էր կազմել, Պոմպեոսը, սակայն, հակառակեց դրան և մնացած դործերում էլ հանդես գալով ժողովրդական ժողովում, ներողամտություն դրսևորեց վերջացնելով բոլոր անհրաժեշտ գործերը, Պոմպեոսը ճանապարհ ընկավ դեպի Բրունդիզիոն և այդտեղից ծով դուրս եկավ ժամանակի սղության պատճառով Պոմպեոսը շտապ նավում անցնում էր շատ քաղաքների մոտով ակայն Աթենքի մոտով նա շանցավ գնացա Իջնելով այնտեղ, ի ա զոհեր մատոցեց աստվածներին և ժողովրդին դիմեց ճառով, ապա իսկույն վերադարձավ նախ: Վերադառնալով, նա կարգաց իրեն ուղղված երկու մակագրություն, ամեն մեկը կազմված մեկ շախատուից Մեկը՝ դալ պաւի ներսի կոչմում ա ո մ էր

Սարդ ևս հլշր ա գ Նո նշափ էլ աստլած և դո

Իււկ գրափ կոչմում կար այսպիսի մակագրություն

Սասոմ էինք իոնարհում էինք տեսանք Բսրի ճանսպլհ

Մի քանիսը նրանցից ուղքեր դեռ ծովում էին գտնվում և բռնված էին ծովահենների նավերի հետ միասին, Պոմպեոսին իրենց հնազանդությունը հայտնեցին: Վերջինս նրանց հետ ողորմաժաբար վարվեց նա նավերը վերցրեց՝ անձնախմբին շարիք շպատճառելով: Այնժամ մնացած ծովահենները գթության հույս ունենալով՝ իրենց կանանց ու երեխաների հետ սկսեցին հանձնվել անձամբ Պոմպեոսին, խուսափելով գործ ունենալ նրան Լնթակա պետերի հետ Պոմպեոսը իրանց բոլորի հանդես գթարարություն ցուցաբերեց և նրանց օգնությամբ գտնում էր հետքը այն մարդկանց, ուղքեր դեռևս թաքնվում էին՝ գիտակցելով իրենց ահավոր հանցագործությունները: Եսկ երբ վերջիններս ընկնում էին նրա ձեռքը, Պոմպեոսը պատժում էր

XXVIII. Ամենահզոր ծովահենների մեծ մասը սակայն, իրենց ընտանիքներն զանձերը, ինչպես և նրանց ովքեր ընդունակ չէին զենք կրելու, տեղավորել էր Տավրոսի բերդերում և ամրացված քաղաքներում, իսկ իրենք, հանգերձավորելով նավերը, Կիլիկիայում՝ Կորակեսոսի մոտ, սպասում էին իրենց դեմ եկող Պոմպեոսին: Տեղի ունեցած ճակատամարտում ծովահենները ջախջախվեցին և պաշարված մնացին իրենց բերդերում: Վերջիվերջո ավազակները Պոմպեոսի մոտ պատվիրակներ ուղարկեցին գթություն հայցելով և հանձնվեցին այն քաղաքների ու կղզիների հետ միասին, որոնց տիրում էին, իսկ այնուհետև այնքան ամրացրին դրանք, որ ոչ միայն ուժով վերցնելը այլև նույնիսկ դրանց մոտենալը հեշտ բան չէր

Այսպիսով, պատերազմն ավարտված էր, և ոչ ավելի քան երեք ամսվա ընթացքում ծովային ավազակությանը վերջ էր տրված ամենուրեք

Բազմաթիվ այլ նավերից բացի Պոմպեոսը գրավեց իննսուն նավ՝ պղնձով ազուցված ցուղիներով ինչ վերաբերում է ծովահեններին իրենց (իսկ նրանցից քսան հազարից սվելին գերի էր վերցված), ապա Պոմպեոսը շհամարձակվեց բոլորին մահապատժի ենթարկել: Մյուս կողմից էլ իա անխոհեմ բան էր համարում ավազակներին ազատ բաց թողնել և թույլ տալ: Որ ցրիվ գան կամ նորից հավաքվեն նշանակալի բանակով, քանի որ նրանք մեծ մասամբ աղքատացած մարդիկ էին և դրս հետ միասին՝ պատերազմներում կոխված: Պոմպեոսը ելնում էր այն համոզմունքից որ մարդս ի բնե երբեք վայրենի, անզսպելի արարած չի եղել և չէ այլ որ նա փշանում է տրվելով արատին՝ հակառակ իր բնությանը, իսկ խաղաղ սովորույթները և ապրելակերպի ու բնակավայրի փոփոխությունն էլ ազնվացնում են նրան: Նույնիսկ կատաղի գազանները, երբ դրանց հետ ավելի մոզմ են վերաբերվում, կորցնում են իրենց լարությունն ու լատաղիությունը: Ուստի Պոմպեոսը որոշեց այդ մարդկանց տեղափոխել ծովից հեռու ընկած վայրեր, նրանց հնարավորություն տալ ճաշակելու առարինի կյանքի գեղեցկությունը և սովորեցնել ապրել քաղաքներում ու հող սշակել: Ծովահենների մի մասին Պոմպեոսի հրամանով ընդունեցին Կիլիկիայի փոքր ու անմարդաբնակ քաղաքները, որոնց բնակչությունն ստացավ լրացուցիչ հողաբաժին և խառնվեց նորաբնակների հետ: Սուրբ, որը դրանից պռաջ ավերվել էր հայոց արքա Տիգրանի կողմից, Պոմպեոսը հրամայեց վերականգնել և այնտեղ բնակեցրեց շատ ավազակների: Նրանց մեծ մասի համար էլ բնակավայր նշանակեց Դի-

11և) Արայիայում յսնի որ այդ քաղաքը լինելով բոլ ըովին ամայի,
չէր մեծ քանակութեամբ բերրի հողեր:

XXIX Պոմպեոսի այս գործողութեանները տեղիք տվեցին նախանձ-
չերի կ'տարածորներին, իսկ նրա վարմունքը Մետելլոսի հետ հավանու-
թյան շարժանայտով նույնիսկ մոտիկ բարեկամների կողմից Բանն այն
1 11 Մետելլոսը ազգականն այն Մետելլոսի, որը Պոմպեոսի ընկերն էր
եղի է սօրանխայտ մ հրամանատար եղած ժամանակ, ուղարկվել էր Կրե-
տե գետ Պոմպեոսի գլխավոր հրամանատար ընտրվելուց առաջ Կրետե
կղզին այն ժամանակ Կիլիկիայից հետո ծովահենների երկրորդ կեսորո-
նագեան էր: Մետելլոսը բազմաթիվ ծովահենների գերի էր վերցրել, կոր-
չանել նրանց բները և նրանց իրենց էլ սպանել էր տվել: Կենդանի մնա-
ցածները պաշարված էին Մետելլոսի կողմից: Նրանք բանագնացներ էին
ուղարկել Պոմպեոսի մոտ ազերսելով, որ նա կղզի ժամանի, քանի որ
այն իբր նրա հպատակ երկրի մի մասն է և բոլոր առումներով մտնում է
արևքով սահմանված ծովափնյա դատու մեջ Պոմպեոսը բարեհաճորեն
էր լսել ծովահենների խնդրանքը և գրավոր հրամայել էր Մետելլոսին
զազարեցնել պատերազմը: Դրա հետ միասին նա Կրետեի քաղաքներին
կարգադրել էր շենթարկվել Մետելլոսին և այնտեղ որպես պրետոր ուղա-
կել էր իրեն ենթակա պետերից մեկին՝ Լուցիոս Օկտավիոսին: Վերջիսս
միացել էր պաշարված ծովահեններին և, նրանց հետ միասին մարտնչե-
լով՝ ոչ միայն Պոմպեոսին անախորժութեաններ էր բերել այլև նրան
լրել էր ծիծաղելի վիճակի մեջ Մետելլոսի նկատմամբ նախանձից ու հա-
կարանքից Պոմպեոսն ասես թե փոխ էր տվել իր անունը այդ անօրեն
ու անաստված մարդկանց իսկ իր փառքով նրանց թույլ էր սվել ծածկ-
վել՝ պաշտպանվելու համար և դրանից օգտվելու իբրև թախամանից:
Աքիլենսն իսկ ասում են փառքի ծարավով տոշորված, վարվում էր տղա-
մարդուն ոչ վայել ձևով, այլ՝ անխոհեմ պատանու պես, ուրիշներին ար-
դելելով նետեր արձակել Հեկտորի վրա

Որ փառքը շխեր մեկ ո իշը իսկ ինքը երկրորդ շանդիսանար

Իսկ Պոմպեոսը նույնիսկ պաշտպանութեան տակ էր առել ընդհանուր
թշնամուն, նրա կողմը պահել, որպեսզի հաղթահանողներից զրկեր զորա-
վարին, որն այդքան ջանք էր թափել ավազակների դեմ պայքարելիս:
Մետելլոսը սակայն, հրամանատարութեանը չէր հանձնել: Նա ծովահեն-
ներին գերի էր վերցրել ու պատժել: Օկտավիոսին էլ վիրավորելով ու հայ-
հոյելով բաց էր թողել ճամբարից

XXX Երբ Հոռոմ եկավ ան լուրը, թե ծովահենների դեմ մղվող պ -

տերազմն ավարտվել է, իսկ Պոմպեոսն ազատ ժամանակ շրջագայում է քաղաքներում՝ ժողովրդական տրիբուններից մեկը Մանիլիոսը, օրենք առաջարկեց Պոմպեոսին հանձնել բոլոր պրովինցիաները և այն դորքերը որոնց գլուխ կանգնած էր Լուկուլլոսը, հավելելով և Բութանիան (որ տեղ իոսարքան Գլաբրիոնն էր), Միհրդատա և Տիգրան արքաների դեմ պատերազմելու համար։ Պոմպեոսի ձեռքին պետք է մնային նաև ծովային ուժերն ու ծովային հրամանատարությունը նախկին պայմաններով։ Այս միջոցառումն այլ բան էր, քան սղջ հռոմեական տերությունը ենթարկել մեկ սարդու կամայականությունը Հիրավի այն պրովինցիաներից, որոնք նախկին օրենքի հիման վրա նա դեռ չէր ստացել ի տնօրինություն, այժմ նրա իշխանություն տակ էին անցնում Փոլյուգիան Լակոնիան, Գալաթիան, Կասպադովկիաս, Կիլիկիան, Վերին Կողքիսը և Հայաստանը՝ ճամբարներով ու զորքերով, որոնք Լուկուլլոսի ձեռքին էին եղել Միհրդատի ու Տիգրանի դեմ պատերազմելիս։ Այս օրենքը Լուկուլլոսին զրկում էր իր կատարած սխրանքների դիմաց սպասվելիք փառքից ու պարգևներից, և նա իոսարքնուղ էր ստանում ավելի շուտ հաղթահանողների համար, քան թե պատերազմը վարելու։ Սակայն ավագանին դրան մեծ նշանակություն չէր տալիս, թեև հասկանում էր, որ Լուկուլլոսը անիրավացիորեն վիրավորանք է կրում, — հռոմեացի ազնվականների համար ճնշիչ էր Պոմպեոսի իշխանությունը։ Համարելով դա իսկական բռնապետություն՝ նրանք գաղտնորեն միմյանց զրգոում ու քաջալերում էին ընդդիմասալ օրենքին, սուլեպի չորրցնեին աշատությունը, բայց հյրեկավ ժամանակը, ժողովրդի ահից բոլորը խույս տվեցին քննարկումից ու լսում էին և միայն Կատուլոսը հանդես եկավ՝ բազմաթիվ իտաստարկներով ընդդեմ օրենքի և մի զաղբանքնորով ընդդեմ Մանիլիոսի։ Բայց քանի որ ժողովրդական ժողովում նրան շահջողվեց ոչ ոքի համոզել, ապա նա դիմեց սենատին և հռետորական բարձունքից շատ անգամ բղավեց, թե նախնայաց օրինակով սենատը պետք է որոնի այն լեռը կամ ժայռը, ուր հեռանալով՝ կփրկի ազատությունը։ Օրինագիծն, այնուամենայնիվ հաստատվեց, ինչպես Վաղորդում են, բոլոր տրիբների կողմից, և Պոմպեոսը իր բացակայության ժամանակ օժտվեց համարյա լիակատար իշխանությամբ, այն, ինչը Սուլլան պետք թյունից ձեռք բերեց պատերազմով ու բռնությամբ։

Ստանալով ժողովրդական ժողովի որոշման մասին տեղեկացնող նամակը բարեկամների ներկայությամբ, որոնք եկել էին շնորհավորելուն, Պոմպեոսը, ասում են, հոնքերը կիտելով և խփելով ազդրերին, ասաց նարձես թե հշխատություն նից արդեն հոգնած ու դժգոհ «Ավա՛լ

ույսի ոչ անվերջանալի պայքար է: Որքան ավելի լա վ կլիներ մնալ ան-
տույտ մտորկանցից մեկը, ախր ես հիմա երբեք չեմ ազատվի պատե-
լազմներից, ոչ մի տեղ չեմ փրկվի նախանձից չեմ կարողանա կնոջս
հետ խաղաղ ապրել գյուղում»: Նույնիսկ Պոմպեոսի ամենամոտիկ մարդ
կանց ամառ այդ Լուկերեսանի խոտքերը տհաճ էին, քանի որ բարեկամ
ներք լանալի հասկանում էին, որ Լուկուլլոսի հետ գծաուձյունները,
որոնք չ բրտում էին նրա բաժին փառասիրությունը և իշխելու ձգտու-
լը նրան բերկրանք էին պատճառում

XXXI Եվ իրոք, նրա արարքները շուտով դա ցույց տվեցին: Պոմ
եոսն ամենուրեք հրաման էր արձակում կանչում զորականներին, իր
մոտ էր հրավիրում հոռմեացիներին ենթակա ետառվարիչներին ու թա-
պավորներին և, անցնելով պրովինցիաների միջով անձեռնմխելի չէր
թողնում Լուկուլլոսի ոչ մի հրամանը. նա վերացնում էր տրված պատիժ
ները, հետ էլ առնում տրված պարգևները և ընդհանրապես նախանձա-
խնդրորեն ջանում էր ամեն ինչով ցույց տալ Լուկուլլոսի կողմնակից-
ներին թե նա արդեն ոչ մի իշխանություն չունի: Իսկ քանի որ Լուկուլ-
լոսն իր բարեկամների միջոցով բողոք ներկայացրեց Պոմպեոսի գոր-
ծողությունների վերաբերյալ, ապա որոշվեց որ զորավարները հանդի-
պեն: Հանդիպումը տեղի ունեցավ Գալաթիայում: Քանի որ նրանք երկու-
սըն էլ փալլուն հաղթանակներով հռչակված մեծ զորավարներ էին, ապա
նրանց ուղեկցում էին լիկտորները՝ ձեռքներին՝ ճիպոտների տրցակներ,
որոնք պատված էին դափնու ճյուղերով: Լուկուլլոսն եկել էր բուսակա-
նությամբ և տվերախիտ ծառերով հարուստ երկրներից: Պոմպեոսն էլ
անցել էր հենց անտառազուրկ ու չոր մարզով: Երբ Լուկուլլոսի լիկտոր-
ները տեսան Պոմպեոսի շորացած ու բոլորովին թառամած դափնիները,
իրենց թարմ դափնեճյուղերից բաժին հանեցին Պոմպեոսի լիկտորներին
և դրանցով պսակեցին Պոմպեոսի ճիպոտների կապոցները: Այս իրա լար
ձությունը համարեցին նախանշանակն այն բանի թե Պոմպեոսը ներ-
կայացել է որ հափշտակի Լուկուլլոսի փառք՝ ու հաղթանակների պտուղ
ները:

Լուկուլլոսը կոնսուլությամբ ու տարիքով ավելի ավագ էր, բայց
Պոմպեոսն ավելի բարձր էր իր տիտղոսով, քանի որ երկու հաղթահան
լիս էր ունեցել: Ասենք, առաջին հանդիպման ժամանակ նրանք իրար
հետ վարվեցին որքան հնարավոր է ավելի քաղաքավարի ու սիրալիր,
փառաբանեցին միմյանց սխրանքները և շնորհավորեցին հաղթանակ-
ների առթիվ: Սակայն հետագա բանակցությունների ժամանակ, չհանգե-
լով ոչ մի արդարացի ու չափավոր համաձայնության՝ նրանք սկսեցին

հանդիմանել միմյանց Պոմպեոսը Լուկուլլոսին հանդիմանում էր ազատության համար, իսկ Լուկուլլոսը նրան իշխելասիրության, և միայն մեծ զօվարությամբ բարեկամներին հաջողվեց վերջ տալ վեճին: Լուկուլլոսը Գալաթիայում կրաված հողերի մի մասը և այլ պարգևներ բաշխել էր ըստ իր հայեցողության: Պոմպեոսն էլ, ճամբար դնելով մի փոքր հեռվում, արգելել էր հնազանդվել Լուկուլլոսին և սրանից վերջրել էր բոլոր զորականներին, հազար վեց հարյուրից բացի, որոնց՝ անսաստ բնավորության պատճառով, համարում էր իր համար ահագոտակար, իսկ Լուկուլլոսի համար՝ վտանգավոր: Բացի այդ, բացահայտորեն ծիծաղելով Լուկուլլոսի սխրանքների վրա, ասում էր թե նա մարտնչել է թատերական ու երեակայական թագավորների դեմ, իսկ իրեն սպասվում է պայքար ընդդեմ իսկական զորքի որը անհաջողությունների վրա է կազմել սովորել, քանի որ Միհրդատն այժմ դիմել է հեծելազորի, սրբի ու մեծ վահանների: Իրան ի պատասխան Լուկուլլոսն ասում էր թե Պոմպեոսն այստեղ ներկայացել է պատերազմի սովերի հետ մարտնչելու, նա, իբր, սովոր է զիշակեր թաշունի պես նետվել ուրիշի ձեռքով սպանվածների վրա և ծվեն-ծվեն անել պատերազմի աճյունները: Արապես, Պոմպեոսն իրեն է վերագրել Մերտորիոսի, Հեպիդոսի և Սպարտակի դեմ տարած հազթասակները, որոնք պատկանել են, ըստ էության, Կրասսոսին, Մետելլոսին և Կատո Լոսին: Ուստի դարձանալի է, որ մի մարդ, որը կարողացել է միանալ փախստական աբուլկների դեմ տեղի ունեցող հազթահանդեսին այժմ ամեն կերպ ջանք է չսրացնել հայկական ու պանտական պատերազմներ ի փառքը:

XXXII Իրանից հետո Լուկուլլոսը մեկնեց, իսկ Պոմպեոսը ծովը պահպանելու համար իր ամբողջ նավատորմը բաժանելով Փյունիկիայի և Բոսպորոսի միջև, ինքն էլ գուրս եկավ Միհրդատի դեմ: Թեև թաղավորը երեսուն հազար հետեակային ուներ և երկու հազար հեծելազորային այնուամենայնիվ չէր համարձակվում ճակատամարտ տալ Պոմպեոսի դեմ: Սկզբում Միհրդատը ճամբարը դրել էր ուժեղ ամրացված և անմատչելի լեռան վրա, բայց այդ դիրքը չքեց ջրի պակասության պատճառով: Ապա լեռն գրաչեցրեց Պոմպեոսը: Բուսականության տեսակից և լեռնային կիրճերի բնույթից եկեղծորելով, թե այդ տեղում պետք է որ աղբյուրներ լինեն, նա հրամայեց ամենուրեք ջրհորներ փորել, և իսկույն ճամբարում առատ ջուր հղավ: Պոմպեոսը զարմանում էր, թե ինչպես Միհրդատը այստեղ կաշանելու ամբողջ խամանակամիջոցում այդ բանը գլխի չէր ըստել: Սպա Պոմպեոսը շրջապատեց թշնամական ճամբարը և սկսեց հողաթրմբով պատել: Միհրդատը շլչապատման մեջ դիմացավ քաղաքունհինգ օր,

իսկ ապա, կոտորելով զենք կրելու անընդունակներին ու հիվանդներին, իր զորքի լավագույն մասն առած՝ աննկատ փախավ: Պոմպեոսը, սակայն, թաղավորին հասավ Եփրատի մոտ և ճամբար դրեց նրա կողքին: Վախենալով, որ Ղինի թե Միհրդատն իրենից առաջ հասցնի Եփրատն անցնել Պոմպեոսը կեսգիշերին իր զորքը շարեց մարտակարգով և հարձակման անցավ: Այդ ժամանակ Միհրդատին ինչպես պատմում են, «... ի իլք է եկել, որը ցույց է տվել նրա ապագան թաղավորին թվացել է, թե իբր ինքը համընթաց քամու հետ յավում է Եվբսինյան Պոնտոսի ջրերում և դտնվելով արդեն Էոսպորոսի դիմաց՝ ողջունում է իր ուղեկիցներին որպես մի մարդ որն ուրախանում է իր հուսալի ու հաստատ փրկուկո թշան համար Բայց արքան հանկարծ տեսել է, որ ինքը, բոլոր կողմից լքված, քշվում է ալիքների վրայով՝ կառչած նավի մի խղճուկ բեկորի: Միհրդատը դու երազի տպավորության տակ էր, երբ նրա մոտ եկան լարեկամները վեր կացնելով ն, ան՝ հսյտնեցին Պոմպեոսի մոտենալը: Անհրաժեշտ էր միջոցներ ձևոք առնել ճամբարը պաշտպանելու համար, և զհտերը զորքը դուրս բերեցին շարեցին մարտակարգով: Պոմպեոսն էլ, նկատելով թշնամու նախապատրաստությունը վախեցավ դիմել այնպիսի գործողության, ինչպիսին ճակատամարտն է մթնության մեջ և բավարար համարեց միայն թշնամուն շրջապատել բոլոր կողմերից որպեսզի նա փախչել չկարողանա: Իսկ ցերեկը նա հույս ուներ, շնայած թշնամու ուժերի գերազանցությունը, անսպասելիորեն հարձակվել թաղավորի վրա: Իայց Պոմպեոսի զորքի ավագ սեփերը եկան նրա մոտ թախանձազին խնդրելով ու խորհուրդ տալով անհույսադ սկսել գրոհը: Իրոք խավալն անթափանց լէր, քանի որ նվազող լուսինը գեոես բավարար չափով լույս էր տալիս՝ առարկաները տարբերելու համար: Այս հանգամանքն էլ հենց կործանեց թաղավորական զորքին: Լուսինը հարձակվող հռոմեացիների թիկունքից էր, և, քանի որ արդեն մայր էր մտնում առարկաների ստվերներն առաջ ձգվելով հասնում էին մինչև թշնամիները որոնք չէին կարողանում ճշգրիտ որոշել հեռավորությունը: Թշնամիները կարծում էին, թե հռոմեացիները բավականին մոտ են իրենց, և տեղերը դուր տեղը շարտում էին՝ ոչ որի շխոցելով: Երբ հռոմեացիները դա նկատեցին գոչունով նետվեցին թշնամու վրա: Վերջիններս արդեն սիրտ չէին անում դիմադրել, և հռոմեացիներն սկսեցին սպանել սարսափով բռնված ո փախչող զորականներին: Տասը հազարից ավելի թշնամիներ ընկան, նրանց ճամբարը գրավվեց Միհրդատն ինքը ճակատամարտի սկզբում ութհարյուր հոգանոց հեծյալ ջոկատի հետ ճեղքեց հռոմեացիների շարքերը, տակայն այս ջոկատը ցրվել եկավ և

Թագավորը մնաց սոսկ երեք ուզեկիցսերով Դրանց մեջ էր նրա հարձ
Գիպսիկրատիան, որը միշտ արիություն ու համարձակություն էր դրսև
րում, այնպես որ արքան նրան Գիպսիկրատես էր անվանում: Հարձը հա
գած էր պարսկական տղամարդ: շորեր և ձիով էր: Նա հոգնածություն
չէր զգում երկար ճանապարհից և չէր դադարում հողալ արքայի ու նրա
ձիու մասին մինչև որ, վերջապես նրանք հասան Սինորա ամրոցը որ
տեղ կային Թագավորական շատ գանձեր ու թանկագին իրեր: Միհրդատն
այդտեղից վերցրեց թանկարժեք զգեստները և դրանք բաժանեց նրանց,
ովքեր փախուստից հետո նորից նրա շուրջն էին հավաքվել Իր բարե
կամներից յուրաքանչյուրին արքան տվեց մահաբեր թույն որպեսզի ոչ
ոք իր կամքին հակառակ չընկներ թշնամու ձեռքը: Այստեղից Միհրդատը
ճանապարհ ընկավ դեպի Հայաստան՝ Տիգրանի մոտ: Բայց երբ Տիգրանը
հրաժարվեց ապաստան տալ նրան և նույնիսկ հարչուր տաղանդ պար
զև խոստացավ նրա գլխի համար, Միհրդատը անցնելով Եփրատի
աջունքները շարունակեց իր փախուստը հողօրիսով

XXXIII Այլ միջոցին Պոմպեոսը ներխուժեց Հայաստան ու նրան
հավիրում էր Երիտասարդ Տիգրանը Վերջին արդեն ապստամբել էր իր
հոր դեմ և Պոմպեոսին դիմալորեց Արարս գետի մոտ Այս գետն սկզբ
վում է հեց այնտեղից, որտեղից Եփրատը բաց շուր Կալով դեպր
արևելք թափվում է Կասպից ծովը: Պոմպեոսն ու երիտասարդ Տիգրանը
սուաջ անցան, գրավելով ճանապարհին հանդիպած քաղաքները: Սակայն
Տիգրան արքան որ հենց վաղեքս ջարդվել էր Լուկուլլոսից իմանալով
Պոմպեոսի մեղմ ու բարի բնավորությունը հոռմեական պահակային
ջոկատը ներս թողեց իր սրալատը իսկ ինքը բարեկամների և ազգական
ների ուղեկցությամբ մեկնեց Պոմպեոսի մոտ, որպեսզի նրա ձեռքը հանձ
նրվեր Երբ արքան ձիով եկավ հասավ ճամբարի մոտ Պոմպեոսի երկու
լիկտորներ մոտենալով նրան հրամայեցին ձիուց իջնել ու սաքով գնալ
բանի որ երբեք հոռմեական ճամբարում ձիավոր չէին տեսել: Տիգրանը
հնազանդվեց և նույնիսկ սուրն արձակելով հանձնեց նրանց: Վերջապես,
երբ արքան կանգնեց Պոմպեոսի առաջ, հանեց իր խուլը՝ մտադիր լի
նելով դնել զորավարի ոտքելի մոտ և, որ ամենաամոթալին է, ծունկի
դալ նրա առաջ Պոմպեոսը, սակայն հասցրեց բռնել արքայի աջ ձեռքը
և իր կողմը քաշել: Ապա նրան նստեցրեց իր կողքին, իսկ նրա որդուն
մյուս կողմում նստեցրեց Պոմպեոսն արքային հայտնեց, թե նյա նախ
կին բոլոր դժբախտությունների համար մեղավորը Լուկուլլոսն է եղել,
որը նրանից խլել է Ասորիքը Փյունիկիան, Կիլիկիան, Գալաթիան և Սո
փենեն: Այն հողերն էլ, որոնք դեռ մնացել են նրան թող տիրի՝ հոռմեա

ցիւ երին հս սցլ ած վիրա լորանքի համար վճարելով յոթ հազար տա-
զանդ, իսկ Սոփենեւում թագավոր կլինի նրա որդին: Այս պայմանները
Նիգրանը սիրով ընչս նեց և այնժամ հռոմեացիք ողջունեցին նրան, ինչ
պես արբավն է վայել իսկ Տիգրանը արտակարգ ուրախացած, խոստա-
նում է յուր արանշտոյր զորականին տալ կես մինա արծաթ ցենտուրիո-
ւին՝ տասը մինա տրիբունին՝ մեկ տաղանդ: Որդին ընդհակառակը,
աստիկ նեղացավ և, էրբ նրան հրավիրեցին հյուրասիրութեան, աչտա-
լարեց, թե կարիք չի զգում Պոմպեոսի կողմից այդպիսի պատիվների,
լանդի կարող է իր համար մի այլ հռոմեացի ճարել: Այնժամ Պոմպեոսը
կարգադրեց շղթայել նրան և բանտում պահել հաղթահանդեսի հա-
ճար: Որոշ ժամանակ անց, Փրատեսը՝ պարթևների արքան, Պոմպեոսի
մոտ դեսպաններ ուղարկեց, պահանջելով հանձնել երիտասարդ Տիգ-
լանին որպես իր փեսայի, առաջարկելով երկու տերութիւնների սահ-
մանը համարել Եփրատը: Պոմպեոսը պատասխանեց, թե Տիգրանն ավե-
լի շատ ազգական է իր հորը, բան աներոջը իսկ ինչ վերաբերում է սահ-
մանին, ապա այն կսահմանվի ըստ արդարութեան:

XXVIV Այնուհետև Պոմպեոսը Ափրանիոսին թողեց Հայաստանը
պահպանելու, իսկ ինքը, այլ ելք չտեսնելով, ճանապարհ ընկավ հետա-
պնդելու Միհրդատին կովկասյան ցեղերով բնակեցված երկրամասերում:
Այդ ցեղերից ամենամեծաթիվները աղվաններն ու իբերներն են: Իբեր-
ների մարզը տարածվում է մինչև Մոսքերի լեռները և Եվբսինյան Պոն-
տոսը, իսկ աղվաններն ապրում են արևելյան կողմում մինչև Կասպից
ծովը: Աղվաններն սկզբում համաձայնեցին թույլ տալ Պոմպեոսին անց-
նելու իրենց երկրի միջով: Բայց երբ ձմեռը հռոմեական զորքին վրա հա-
սավ այդ հողում և հռոմեացիները Սատուռնալիայի տոնն էին կատա-
լում, աղվանները, հավաքվելով թվով քառասուն հազարից ոչ պակաս,
անցան Կիրնոս գետը և հարձակվեցին նրանց վրա: Կիրնոս գետն սկիզբ
է առնում Իբերական լեռներից, իր մեջ է ընդունում Արաքս գետը, որը
հոսում է Հայաստանից, և ապա տասներկու դետաբերաններով թափվում
է Կասպից ծովը: Ոմանք սակայն, պնդում են, թե Կիրնոսը չի խառնվում
Արաքսին, այլ ինքն իրեն թեկուզև Արաքսին շատ մոտիկ թափվում է
նույն այդ ծովը:

Պոմպեոսը բարբարոսներին հանգիստ թույլ տվեց որ անցնեն գե-
տը թեև կարող էր արգելել նրանց: Ապա հարձակվեց թշնամիների վրա
և փախուստի մատնեց շատերին կոտորելով: Երբ աղվանների թագավո-
րը դեսպանների միջոցով գթութիւն հայցեց, Պոմպեոսը նրան ներեց վի-
րավորանքի համար և, խաղաղութիւն կնքելով՝ շարժվեց իլերների դեմ:

Վերջիններս իրենց թվով չէին գիշում աղվաններին, բայց ալիի ուղ
մատենչ էին: Նրանք այրվում էին Միհրդատին իրենց նվիրվածութունը
ցույց տալու և Պոմպեոսին դուրս թշելու ցանկությամբ: Իրերները ենթա
կա չէին եղել ոչ միդիացիների, ոչ պարսիկների իշխանությանը Նրանց
հաջողվել էր խույս տալ նույնիսկ մակեդոնացիների իշխանությունից,
բանի որ Ալեքսանդրը պետք է շափազանց արագ հետ քաշվեր Հիրկանիա-
յից: Սակայն Պոմպեոսը սրանց էլ ջախջախեց մեծ ճակատամարտում
կոտորելով ինք հազարին և առավել քան տասը հազարին գերի վերցնե-
լով: Դրանից հետո նա ներխուժեց Կողքիս Այստեղ Փասիս գետի մոտ
նրան դիմավորեց Սերվիլիոսը՝ նավատորմի գլուխն անդամ, որը պահ-
պանում էր Եվքսինյան Պոնտոսը:

XXXV Միհրդատի հետապնդումը, որը թաքնվել էր Բոսսյուրսում և
Մեոտիսի շուրջն ապրող ցեղերի մարդում մեծ դժվարություն էր ներ
լայացնում: Բացի այդ Պոմպեոսն ստացավ աղվանների նոր խռովու
թյան լուրը: Վրդովված ու զայրագնած Պոմպեոսը հետ դարձավ՝ ընդ
դեմ նրանց նա նորից անցավ Կիրնոս գետը՝ դժվարությամբ ու զորքը
վտանգի ենթարկելով քանզի բարբարոսները գետափին երկար ցցապատ
նեշներ էին բաշել: Քանի որ նրան վիճակված էր երկար ու տանջալի ճա
նապարհ անցնել ջրազուրկ տեղերով էա հրամայեց ջրով լցնել տաւը
հազար տիկ Գալով թշնամիների դեմ Պոմպեոսը նրանց դտավ Արան-
տոս գետի մոտ՝ արդեն մալ տակարգով շարված: Բարբարոսների զորքը
բաղկացած էր վաթսուն հազար հեռեակայիններից և տասներկու հա
զար հեծյալներից: Սակայն ուղեմիկների մեծ մասը վատ էր զինված և
հագել էին շուռ սված մորթիներ: Զորքի գլուխն էր կանգնած արքայի եղ-
բայրը՝ Կոսիս անունով Սա հենց որ բանը հստով ձեռնամարտի, հալ-
ձակվելով Պոմպեոսի վրա նետեց տեղը և տեղը դիպավ նրա զրահի
փեղկին: Պոմպեոսն էլ սրան նիզակով խոցելով՝ սպանեց տեղնուտեղը
Այս ճակատամարտում ինչպես հաղորդում են բարբարոսների կողմում
կովում էին նաև ամազոնուհիներ, որոնք եկել էին Թերմոզոն գետի մոտ
գանվող լեռներից: Իսկապես, ճակատամարտից հետո, երբ հռոմեացի
ներն սկսեցին կողոպտել սպանված բարբարոսների դիակները հանդի
պում էին ամազոնուհիների վահաններ ու կոշիկներ, սակայն ոչ մի կնոջ
դիակ չեն նկատել Ամազոնուհիներն ապրում են Կովկասի այն մասում,
որը տարածվում է մինչև Հիրկանյան ծովը, սակայն նրանք աղվանների
հետ անմիջականորեն սահմանակից չեն, այլ նրանց միջև բնակվում են
գեղերը և լեզերը: Այս ցեղերի հետ նրանք ամեն տարի հանդիպում են
Թերմոզոն գետի մոտ և նրանց հետ անց են կացնում երկու ամիս, իսկ

տպա հետանում են իրենց երկիրը և այնտեղ ապրում են իրենք իրենց
սմար, առանց տպամարդկանց

XXXVI. Այս հակատամարտից հետո Պոմպեոսը մտադրվեց անցնել
միջև Կոստայից ծովը, բայց ստիպված եղավ հետ վերադառնալ բազմա-
թիվ թուսավոր սողունների պատճառով, թեև ծովից ընդամենը Լրեք օր
վա համար էր մնում: Այնուհետև իսկ հետ քաշվեց դեպի Փոքր Հայք:
Էյիմլ չների ու միդիացիների թագավորներին, ի պատասխան նրանց դե-
պանաթյունների, Պոմպեոսը բարեկամական ուղերձներ հղեց: Պարթևաց
արքայի դեմ, որը ներխուժել էր Գորդիենա և սևանկացրել Տիգրանին
ևնթակա ցեղերին, Պոմպեոսը զորք ուղարկեց Ափրանիոսի գլխավորու-
թյամբ: Վերջինս պարթևներին քշեց և հալածեց ընդհուպ մինչև Արբելի
խսերը:

Միհրդատի բոլոր գեղը ընկած հարձերից ոչ մեկի հետ Պոմպեոսը
չկենակցեց, այլ նրանց բոլորին ուղարկեց իրենց ծնողների և ազգական
ների մոտ Չէ՞ որ նրանց մեծ մասը զորավարների ու կառավարիչների
աղջիկներ էին: Միայն Ստրատոնիկեն, որն ամենամեծ ազգեցությունն
ունեւ արքայի վրա և որը կառավարում էր ամենահարուստ դանձերով
լեցուն բերդերից մեկը, ըստ երևույթին, դուստրն էր ինչ-որ ծեր ու ազ-
բատ տավղահարի Միանդամ ընթրիքի ժամանակ տալիզ նվազելիս ազ-
ջիկը միանգամից այնքան ուժգին տպավորություն է գործել Միհրդատի
վրա, որ նրան իսկույն առել տարել է ննջասենյակ, իսկ ծերուկին տուն
է ուղարկել, որը զայրացած է հղել իրենից քաղաքավարի կերպով թույլ-
տվություն հարցնելու համար: Սակայն հաջորդ առավոտյան արթնանա-
լով հայրն իր սենյակում տեսել է արծաթե ու ոսկե զավաթներով ծան-
րաբեռնված սեղաններ և ծառաների, ներքինիների ու սղանների մի բազ-
մություն, որոնք նրան մատուցելիս են եղել զգեստներ դրան առաջ
կանգնած է եղել մի ձի՞ զարդարված շքեղ ձիասարքով, նման այն ձի-
ւին, որոնք արքայի բարեկամներն են ունեցել: Ենթադրելով թե սա
կատակ է, թե իրեն ձեռ են առնում, ծերունին պատրաստվել է արդեն
դուրս փախչել դռնից, բայց ծառաները նրան բռնել են հայտնել, որ
թագավորը նրան է նվիրել վերջերս մահացած մի հարուստ մարդու մեծ
տունը և այս ընծաները միայն սկիզբն են և փոքրիկ նմուշը մնացած այլ
բարիքների ու գանձերի, որոնք սպասվում են նրան: Վերջիվերջո զոռով
հավատալով իր երջանկությանը և հազնելով ծիրանի զգեստը, ծերուկը
թռել նստել է ձիւն, քշել անցել քաղաքով մեկ, կանչելով «Այս բոլորը
ի մն են»: Այն մարդկանց ովքեր ծիծաղել են նրա վրա ասել է, որ ոչ
թե սրա վրա պետք է զարմանան այլ այն բանի վրա որ ինքը, ուրա-

խոթչս ՚ից խել թացա՝ քար շի նետում նլանց լրա Ահա թե ինչ ցեղից և արյունից է եղել Ստրատոնիկեն։ Նա ոչ միայն բերդը հանձնեց Պոմպեոսին, այլև բազում նվերներ մատուցեց դրանցից Պոմպեոսն ընդունել ց միայն այն բաները, որոնք կարող էին ծառայել տաճարների վարդարման համար կամ պետք կգային իր հազթահանդեսներում, իսկ մնացած բոլորը հրամայեց թողնել նրան ի վայելումն։ Քվեստորներին էլ պետական դանձարանի հախար նա հանձնեց մահիճ սեզան ու գահ բուրը՝ ոսկուց որոնք սրան ուղարկել էր իբերների թագավորը՝ խնդրելով ընդունել իբրև բնծա

XXXVII Պոմպեոսը Նոր բերդում գտավ Միհրդատի գաղան ի գրու թյունները և կալուսց ոչ առանց բավականության քանի որ դրանցում այդ թագավորի բնավորությունը բացահայտող շատ տեղեկություններ էին պարունակվում։ Գրանք հուշեր էին, որոնցից պարզվում էր որ թագավորը մյուս շատերի հետ միասին թունավորել էր և հարազատ որդոն Արիարաթեսին, ինչպես և սարգլսցի Ալկեոսին այն բանի համար, որ սա նրան հաղթել էր ձիարշավում։ Բացի այդ այնտեղ կային մեկնություններն այն երազների, որ թագավորն ինքն էր տեսել և նրա կա անցից մի քանիսը։ Այնուհետև՝ անպարկեշտ նամակագրություն նրա և Մոնիմեի միջև։ Թեոփանեսի ասելով, թղթերի միջից գտնվել է Հոուտիլիոսի մի գրությունը, որը թագավորին հրահրում էր ջարդել Ասիայում ապրող հոմեացիներին։ Գրողների մեծ մասը դա իելամտորեն համարում է Թեոփանեսի շարանենգ հորինվածքը, որն ասում էր Հոուտիլիոսին գուցե այն պատճառով, որ սա իր բնավորությամբ նրա լլիվ հակապատկերն է եղել։ Հնալավոր է նաև, ով Թեոփանեսն ուզում էր օտոացություն մատուցել Պոմպեոսին որի հարը Հոուտիլիոսն իր պատմության մեջ պատկերել է ոչ պէս մեծագույն սրիկայի։

XXXVIII Պոմպեոսը Նոր բերդից մեկնեց Ամլսոն Ալատեղ իր աշափ փառասիրո թյան ազդեցության տակ նա թույլ տվեց ալարքներ որոնք կշտամբանքի ես արժանի։ Չէ՞ որ նախկինում նա ինքն էր ծիծաղել Լուկուլլոսի վրա այն բանի համար ով սա — թեև թշնամին դեռ ջարդված չէր մինչև վերջը — պարզենել ո պատիվներ էր բաժանում, ինչպես սովորաբար անում են հազթողները պատերազմը վերջանալուց հետո։ Իսկ հիմա, — թեև Միհրդատը դեռ Բոսպորոսի տերն էր և ուղմունակ զորք ուներ իր ձեռքին, — Պոմպեոսն ինքն էր վարվում ճիշտ այդպես պրովինցիալներն էր տնօրինում (իբր թե թշնամիների վերջը տվել էր) և պարզենել էր խոստանում, երբ նրան ներկայանում էին բազմաթիվ զորավարներ ու տիրակալներ։ Նա պարզեցատլեց նաև տասներկու

լարրու լ ար, այլինլրի Լ հաճույս վերջինների Պոմպեոսը չցանկացավ պարթևական խաղաղորին ուղղված պատասխան ուղերձում նրան գիմել՝ մեծարկով լարրայից ալքա» տիողոս վ ինչպես որ մյուսներն էին անում նրան գիմելիս

Այժմ Պոմպեոսը բուն ձգտումով էր հասակված գրավելու Ասորիքը Լ Արարիայի միջով թափանցելու Կարմիր ծով որպեսզի հաղթականորեն ասաներ Օվկիանոսին, որը բոլոր հողմերից շրջապատում է բնակելի աշխարհը: Չէ՞ որ Աֆրիկայում էլ նա առաջինը հաղթանակով գնաց հասավ մինչև Արաաքին ծով և Իբերիայում էլ Ատլանտյան օվկիանոսը հոսմեա կրան տերության սահմանը դարձրեց, իսկ զրանից ոչ շատ առաջ հալածելով աղվաններին՝ քիչ մնաց հասնել Հիրկանյան ծով Այսպես ուրեմն Պոմպեոսը որոշել էր նորից առաջ շարժվել իր զորքերով որպեսզի Կարմիր ծովով փակեր իր արշավանքների շրջանը: Բացի այդ, նա տեսնում էր, որ Միհրդատին գժվար Լ մերձենալ գենքով և իր փախուստի մեջ նա ավելի վտանգավոր է քան ճակատամարտում (XXXIX) Հայտարարելով թե ինքը թաղավորին դատապարտում է զո՛հ դառնալ առավել վտանգավոր մի թշնամու, քան ինքն է՝ սովին, Պոմպեոսն իր նավատորմով փակեց առևտրական նավերի մուտքը դեպի Բոսպորոս: Նրանց, ովքեր նորձ կանեին ճեղքել արգելապատնեշը, հայտարարված էր մահապատիժ:

Այնուհետև զորքի մեծ մասի զուխն անցած՝ Պոմպեոսը ելավ արշավանքի: Գտնելով դեռևս անթաղ մարմինները նրանց ովքեր ընկել էին Տրիարիոսի գլխավորությամբ Միհրդատի դեմ տրված գծրախտ ճակատամարտում, Պոմպեոսը հրամայեց նրանց բոլորին թաղել պատվով ու շքեղությամբ (Լուկուլլոսի այդ բացթողումը, ըստ եսեույթին, առանձնապես հարուցել է ղինվորների ատելությունը նրա դեմ): Ատրանիոսը հպատակեցրել էր Ամանոսի ստորոտում ապրող ալաբներին, իսկ Պոմպեոսն ինքը իջավ Ասորիք Լ այնտեղ օրինական թագավորների բազակայությաւ պատրվակի տակ այդ երկիրը հայտարարեց հռոմեական ժողովրդի պրովինցիա ու սկիականություն: Պոմպեոսը հպատակեցրեց նաև Հրեաստանը և գերի վերցրեց արջա Ալիստորուլոսին: Ինչ վերաբերում է բաղարներին, ապա շատերը հիմնադրեց իսկ շատերն էլ ազատեց՝ պատժելով զրանք զավթած բռնապետներին: Ամենից շատ ժամանակ նա նվիրում էր դատական գործերի քննությանը՝ հարթելով քաղաքների և թագավորների վեճերը: Որտեղ որ նա անձամբ չէր կարող գնալ ուղարկում էր իր բարեկամներին: Այսպես, նա երեք միջնորդներ ու միջնորդ դատավորներ ուղարկեց հայերի ու պարթևների մոտ որոնք նրան խնդրել էին լուծել իրենց վեճը մի մարզի վերաբերյալ: Հիրավի նրա հղո-

րության համբավը մեծ էր, բայց փոքր չէր նաև նրա արդարացի թյան ու ոգորմածության համբավը: Նրա այդ համբավը ծածկում էր նրա բարեկամների և հավատարմատարների զանցանքների մեծ մասը, քանի որ նա բնավորությամբ ընդունակ չէր սանձահարելու կամ պատժելու մեղանշածներին: Նա ինքն էլ այնպիսի սիրալիր ընդունելություն էր ցույց տալիս բոլորին, ովքեր նրա հետ գործ էին ունենում, որ վիրավորվածները հեշտությամբ մտաւոր մ էին ու ներում նրա օշնականների ազատությունն ու կոպտությունը:

ՄԼ Առաջին և ամենաազդեցիկ սիրելի, այլ մարդը Պոմպեոսի համար եղել է ազատագիր Դեմետրիոսը, մի երիտասարդ որը բավականին խելացի է եղել, սակայն շափազանց շարաշահել է իր երջանիկ վիճակը: Նրա մասին այսպիսի բաներ են պատմում: Փիլիսոփա Կատոնը, լինելով դեռ պատանի բայց արդեն մեծ հարգանք վայելելով իր արիության և հոգու բարձր հատկանիշների համար, Պոմպեոսի բացակայության ժամանակ եկել էր Անտիոք՝ քաղաքը տեսնելու: Նա ինքը սովորականի պես ոտքով քայլում էր իսկ նրան ուղեկցող ընկերները ձիով էին գնում Քաղաքացին դարպասների առաջ Կատոնը նկատեց մարդկանց բազմություն՝ բոլորն սպիտակ հագած: Ճանապարհի երկարությամբ մի կողմում շարքով կանգնած էին պատանիներ մյուս կողմում՝ երեխաներ: Այս հանդամանքը սաստիկ սրտնեղություն պատճառեց Կատոնին քանի որ նա որոշեց, որ այս բոլորը կազմակերպված է ի պատիվ իրեն, իր նկատմամբ ունեցած հարգանքի թեև ինքը բոլորովին կարիք չէր պահում նման բաների նա, այնուամենայնիվ, ընկերներին առջարկեց, որ շտապեն և իր հետ միասին գնան: Երբ նրանք ավելի մոտեցան, նրանց դիմավորեց այլ արողության կարգադրիչը՝ պսակը գլխին ու մականը ձեռքին և նրանցից հարցրեց, թե որտե՞ղ են թողել Դեմետրիոսին և նա լ՞որ կրալեհաճի ժամանել: Կատոնի ընկերների ծիծաղը բռնեց Կատոնին ինքն էլ բացականչեց. «Օ՛, դժբախտ քաղաք», և անցավ գնաց ոչինչ չպատասխանելով հարցին: Այնուամենայնիվ, Պոմպեոսը մեղմացնում էր շրջապատողների ատելությունը Դեմետրիոսի նկատմամբ նրանով, որ ինքն էլ անտրտուն չտանում էր իր ազատագիրի հանդեպությունները: Իսկապես, ինչպես պատմում են, Պոմպեոսի մոտ խնջույքների ժամանակ, երբ տանտերը դեռ սպասում էլ և ընդունում մյուս հյուրերին, Դեմետրիոսը հաճախ արդեն ընկողմանած էր լինում սեղանի մոտ՝ տոգայի մեջ վաթաթված մինչև ականջները: Դեռ մինչև իր՝ Իտալիա վերադառնալը նա ձեռք էր բերել հոյակապ սնեռ Հոմերի մերձակայքում հաղվադյուտ գեղեցկությամբ զրոսանքի ու զվալճանքի վայրեր և թանկարժեք այգիներ

սյուր սովորաբար անվանում էին Դեմետրիյան: Պոմպեոսն ինքը ընդհակառակը, բնոհույ մինչև իր երրորդ հաղթահանդեսը ապրում էր շափավոր և անպահանջկոտ: Հետագայում, երբ նա հոռմեացիների համար կառուցել սվյո պղեցիկ ու նշանավոր թատրոնը, կարգադրեց դրան կից մի սոսկ կառուցել իր համար՝ ասես թե ի լրացումն թատրոնի: Այս սոսկը Նոթիկիից ավելի լավն էր բայց էլի այնքան համեստ էր, որ նա, ով Պոմպեոսից հետո դրա տերը դարձավ, տուն մտնելիս առաջինը հարցնէր՝ «Հասցա որս ե՞զ է ճաշել Պոմպեոս Մագնոսը»: Այսպես են պատմում Նոթիկի մասին:

Վ 1. Պետրացի արարների թագավորը սկզբում բանի տեղ չէր դնում հոռմեացիներին, իսկ հիմա սարսափահար Եղած, Պոմպեոսին հղեց մի լուր՝ «Երձ՝ տեղեկացնելով ամեն ինչում նրան ենթարկվելու իր պատրաստակամության մասին: Յանկանալով թագավորի այդ տրամադրությունն աճրապնդել՝ Պոմպեոսը շարժվեց դեպի Պետրա: Շատերը պարսավում էին Պոմպեոսի այդ արշավանքը՝ դա սոսկ պատրվակ համարելով Միհրդատին հետապնդելուց հրաժարվելու համար, և պահանջում էին, որ Պոմպեոսը հիմա շուտ գա դեպի այդ վաղեմի թշնամին՝ որը նորից էր ոսկի առել և ուժեր հավաքել: Ինչպես տեղեկացնում էին, Միհրդատը պատրաստվում էր իր զորքերը Իտալիա տանել սկյութների և պեոնացիների հողով Սակայն Պոմպեոսը ենթադրում էր, թե իր համար ավելի հեշտ կլինի Միհրդատի զորքը ջախջախել բաց մարտում, քան նրան բռնել յախուստի ժամանակ: Ուստի Պոմպեոսը չէր ուզում զուր տեղը ուժեր վատնել թշնամուն հետապնդելու վրա և ուրիշ ռազմական ձեռնարկում ներ էլ կատարում՝ դիտմամբ կասեցնելով իրադարձությունների ընթացքը: Բախտն ինքը երջանիկ կերպով լուծեց այդ դժվարությունը: Երբ Պոմպեոսի համար մինչև Պետրա ճանապարհի սոսկ մի փոքր մասն էր մնուցել և այդ օրվա ճամբարն արդեն դրված էր իսկ Պոմպեոսը դրա մաս ձիավարժություն էր անում Պոնտոսից սուրհանդակներ եկան ուրախ լուրով: Այդ մասին կարելի էր դատել նրանց նիզակների ծալրակայնության սրտեր պատած էին դափնիներով: Հենց որ զորականները նկատեցին գոփնիները, սկսեցին հավաքվել Պոմպեոսի մոտ: Վերջինս ուզում էլ նախ ավարտել իր մարզանքը բայց զորականներն սկսեցին կանչել և այնպես թախանձագին էին պահանջում կարգալ գեկուցագիրը, որ նա, Նրուց վար ցատկելով, նրանց հետ գնաց դեպի ճամբար: Ծամբարում պատրաստի բարձունք շխար զորավարի համար, և չէին հասցրել նույնիսկ երթաչինը կառուցել (դա սովորաբար շարում են պինդ ձիմեր կտորներով) բայց զորականներն շտապ, շափազանց եռանդագին քարշ

ավին բերին բևեռակիր ձիերի թամբերը և դրանցից բարձունք շիւնցին: Պոմպեոսը բարձրացավ դրա վրա և զինվորներին հայտնեց Միհրդատի մահվան լուրը, որը վերջ էր տվել իր կյանքին այն բանից հետո, երբ նրա հարազատ որդի Փառնակը նրա դեմ ապստամբություն էր բարձրացրել: Փառնակը տիրել էր այն ամենին ինչ պատկանել էր իր հորը, և Պոմպեոսին գրել էր թե ինքը գա արել է հանուն նրա և հռոմեական ժողովրդի:

XI II Այս լուրը ինչպես և պետք էր սպասել, արտակարգ ուրախացրեց զորքին: Զորականները դոճեր էին մատուցում և հյուրասիրություն անում, ասես թե ի դեմս Միհրդատի ընկել էին տասնյակ հազարավոր թշնամիներ: Պոմպեոսը հիմա բարեհաջող ավարտել էր իր բոլոր զործերը և արշավանքները, թեև հույս էլ չուներ, թէ չա տեղի կունենար այդքան հեշտ, և իսկույնեթ վերա լարձավ Արաբիայից Այնուհետև արագ անցնելով ճանապարհին ընկած պրովինցիաների միջով նա եկավ հասավ Ամիսոն որտեղ գտավ Փառնակի կողմից ուղարկված շատ ընծաներ և թագալուրսական ընտանիքի բազմաթիվ անդամների սիակներ: Դրանց մեջ էր և Միհրդատի դիակը որը դժվար էր ճանաչել (որովհետև ծառաները զմուսելիս մոռացել էին հանել ուղեղը): Սակայն նրանք, ովքեր հսկեցին ճանապարհություն էին ստացել զննում կատարել թագավորին ճանաչեցին սպիներից: Ինչ վերաբերում է Պոմպեոսին, ապա նա սիրաշարքեց նայել Միհրդատի դիակին, բայց, որպեսզի մեղմացնել, պատժիչ աստվածության զայրույթը, իսկույն հրամայեց դիակն ուղարկել Մինոս Այնուամենայնիվ Պոմպեոսը զարմանքով դիտում էր այն զգեստները, որ հագել էր արքան և նրա հոյակապ թանկագին զենքը: Միհրդատի սրի պատյանը գողացավ ամեն Պուրբիսս ու շորս հարյուր տաղանդ արծողությամբ ծախեց Արիարաթեսին, իսկ հիասքանչ կերտվածքի թագը Գայոսը որը Միհրդատի հետ էր մեծացել, գաղտնի հանձնեց Սուլլայի որդի Փավստոսին, որը նրանից խնդրել էր այդ բանը: Բայց Պոմպեոսն այն ժամանակ ոչինչ չգիտեր իսկ Փառնակը բացահայտեց կոլոսսը և գառմեց հափշտակիչներին:

Դասավորելով ու կարգի բերելով ասիական զործերը Պոմպեոսն անսովոր շքեղությամբ բռնեց վերադարձի ճանապարհը: Ժամանելով Միտիլենե նա քաղաքն ազատ հայտարարեց ի սեր Թեոփանեսի և այնտեղ ներկա եղավ ավանդական բանաստեղծական մրցությանը ոլի միակ բեման այս անգամ նրա սխրանքների փառաբանումն էր: Միտիլենեի թատրոնն անպես դուր եկավ Պոմպեոսին, ոչ նա պատվիրեց վերցնել դրա գծագիրը, որպեսզի Հռոմում կառուցեին նույնպիսի մի շենք:

բայ ավելի մեծ շափոխ և ավելի հոյակապ: Հոուդոսում նա լսեց բոլոր սովետականների ելույթները և ամեն մեկին նվիրեց մեկական տաղանդա Պոմպեոսի սուր դրի և ասել իր այն գասախոսութիւնը հայտնագործութեան մասին բնականապէս, որ ինքը կարգացել է Պոմպեոսի ներկայութեամբ և սպասել է իր հոկոսի Հերմադորասի դեմ: Աթենքում Պոմպեոսը յայտարարեց աստուածներուն ցույց տվեց փիլիսոփաներին: Քաղաքի վերականգնման համար նվիրաբերեց հիսուն տաղանդ: Նա հույս ուներ իրա լուսավորութեամբ Բաբելոն անկախ փառքով որ իրենից առաջ չէր վաստակել ոչ մի մարդ և բուն կերպով ցանկանում էր, որ իր ընտանիքը իրեն յայտնի նույնպիսի զգացմունքներով, որպիսիք ինքն ուներ նրա նկատմամբ: Սակայն աստիճանութիւնը միշտ նախանձախնդրորեն ջանում է անկախագրի փայլուն ու մեծ ընծաներին խառնել ձախորդութիւնների մի որոշ մասնիկ: Այն վաղուց արդեն դարանակալում էր Պոմպեոսին, պատրաստվելով փշաջնել նրա երջանիկ վերագարձը: Պոմպեոսի կինը՝ Մուցիան նրա բացակայութեան ժամանակ խախտել էր ամուսնական հարաբերութիւնը: Քանի զեռ Պոմպեոսը հեռվում էր գտնվում, ուղարկութիւն չէր դարձնում իրեն հասնող լուրերին, բայց հիմա, Բաբելոնի մտերմում, ըստ երևույթին, ժամանակ ունենալով գործն ավելի մանրակրկին ծանրութեթե անելու, նա Մուցիային ուղարկեց ապաստարանի կամակ: Ոչ այն ժամանակ, ոչ էլ հետագայում նա չբացատրեց ամուսնալուծութեան պատճառները Այդ պատճառները բատնայ շել և Յիսէրոս իր նամակներում:

XLIII. Հոռմում Պոմպեոսի մասին ամեն կարգի լուրեր էին պարտաւորում, և զեռ նրա ժամանումից առաջ սաստիկ իրարանցում սկսվեց, քանի որ վախենում էին, թե նա իսկույնեթ իր զորքը կբերի Հոռմ և ուժեղ կհանձնանութիւն կհաստատի: Կրասոսը, հետը վերցնելով իր երեխաներին ու դրամները, մեկնեց Հոռմից, արդյոք այն պատճառով որ իրոք խախտեցավ թե՛ ավելի շուտ, ցանկանալով սնունդ տալ զբաղարարութեամբ յո որակեղի սաստիկացներ նախանձը Պոմպեոսի հանդեպ: Պոմպեոսն էլ, տալիս հոռմելուն պէս ժողովի հավաքեց իր զորականներին: Տվյալ պահի համար պատշաճ ճառով նա շնորհակալութիւն հայտնեց նրանց հովատարիմ ծառայութեան համար և հրամայեց ցրվել տները, հիշեցնելով, ոչ պետք կլինի նորից հավաքվել իր հաղթահանողեսի համար: Երբ զորքերն այսպէս ցրվեցին և բոլորն իմացան այս մասին, կատարվեց լուրովին անսպասելի մի բան: Քաղաքների բնակիչները տեսնում էին, թէ ինչպէս Պոմպեոս Մուցիոսը առանց զենքի փոքրիկ մի շքախմբի լեկցո թշամբ, վերագառնում է ասես թե սովորական ճանապարհոր-

գությունից: Եվ ահա նրա հանդեպ ունեցած սիրուց սրանք բազմություններով նետովում էին նրան ընդառաջ և ուղեկցում դեպի Հոռոմ, այնպես որ նա գնում էր ավելի մեծ ուժի գլուխ անցած, քան այն, որը հենց նոր էր արձակել: Եթե նա մտածեր պետական հեղաշրջում կատարել գրա համար նրան զորք բնավ էլ պետք չէր լինի:

XLIV Քանի որ օրենքը տրիումֆատորներին չէր թույլատրում հազ թահան երթով մտնել քաղաք ապա Պոմպեոսը սենատին խնդրանք ուղարկեց, որ իրեն ծառայություն չմատուցեն և կունսուլների ընտրությունները հետաձգեն, որպեսզի ինքը կարողանա իր ներկայությամբ աջակցել Պիզոնի ընտրությանը: Կատոնը հանդես եկավ դրա դեմ և Պոմպեոսի ծրագիրն այս անգամ շահողվեց: Պոմպեոսը զարմանում էր այն համարձակության ու համառության վրա, որով այդ մարդը մեկնեմնակ, բացեիբաց ելույթ ունեցավ ի պաշտպանություն իրավունքի, և ցանկացավ ամեն մի միջոցով նրան իր կողմը գրավել: Կատոնը երկու ազգականուհի ուներ, և Պոմպեոսը մտքում դրեց ամուսնանալ դրանցից մեկի հետ, իսկ մյուսին կնություն տալ իր որդուն: Կատոնը, սակայն, այստեղ կասկածի տակ առավ այս խորամանկությունը, հասկանալով, որ իրեն ուզում են ինչ որ կերպ կաշառել: Բայց նրա քույրն ու կինը վերդովվում էին, որ նա շկամեցավ Պոմպեոս Մագնոսի հետ խնամություն անել: Մինչդեռ Պոմպեոսը ցանկանալով կոնսուլ դարձնել Ափրանիոսին, նրա համար շատ դրամ բաժանեց ըստ ցենսուրիաների, քաղաքացիներն էլ դրամի համար Պոմպեոսի այգիներն էին գալիս: Սա հայտնի դարձավ, և Պոմպեոսի վրա սկսեցին հարձակումներ գործել այն բանի համար, որ մեծամեծ գործերի շնորհիվ իլ ձեռք բերած բարձրագույն պաշտոնը նա առուծախի առարկա է դարձրել նրանց համար, ովքեր այն չէին կարող նվաճել իրենց արիությամբ: Այնժամ Կատոնն իր կանանց առաջ «Այս խայտառակությունից բաժին պիտի հասնի նաև նրանց, ովքեր ազգացական կապի մեջ կմտնեն Պոմպեոսի հետ»: Եվ կանայք համաձայնեցին, որ Կատոնն ավելի լավ է դատում թե ինչն է պատշաճ և ինչն՝ անվայել:

XLV Պոմպեոսի հաղթահանդեսն այնքան մեծ եզավ որ թեև բաշխված էր երկու օրվա վրա բայց ժամանակը շքավարարեց և շատ նախապատրաստություններ, որոնք ցանկացած այլ հռչակապ հաղթահանդեսի զարդարանքը կդառնային, դուրս ընկան հանդեսի ծրագրից: Աղյուսակների վրա, որոնք տանում էին առջևից, նշված էին այն երկրներն ու ժողովուրդները, որոնց նկատմամբ ի կատար էր ածվում հաղթահանդեսը: Պոնտոս, Հայաստան, Կապադովկիա Պափլագոնիա Միզիա, Կողքիս,

իրկրներ, աղվաննել Ասորիք Կիլիկիա, Միջագետք, Փյունիկիայի ու Պաղեստինի ցեղեր, Հրեաւտան, Արաբիա, Ինչպես և ծովահեններ, որոնք վերջնապահապես ոչնչացված էին ցամաքում ու ծովում: Այդ երկրներում գրավված էին ոչ պակաս քան հազար բերդ և համարյա ինը հարյուր քաղաք ծովահեններից խլված էր ութ հարյուր նավ, երեսունինը ամալայած յաղաչ նորից էր բնակեցվել: Բացի այդ, հատուկ աղյուսակների վրա ցույց էր տրվում, որ հարկերից ստացվող եկամուտները մինչև այժմ կապում էին հիսուն միլիոն դրամ, մինչդեռ իրենց նվաճած երկրները կրեբեն ութսունհինգ միլիոն Պոմպեոսը պետական գանձարանն էր մուծել հատած դրամի և արծաթե ու ոսկե ամանեղենի տեսքով բան հազար տաղանդ, շահված այն, ինչը բաժանել էր զորականներին, բնդ որում ամենաքիչ բաժին ստացողին հասել էր հազար հինգ հարյուր դրամ: Հաղթական թափոքի մեջ շահված ծովահենների պարագլուխներին, որպես գերի տանում էին Տիգրանի Հայոց թագավորի որդուն, կնոջ ու դստեր հետ, հենց իր Տիգրանի կնոջը՝ Զոսիմեին, հրեաների թագավոր Արիստոբուլոսին, Միհրդատի քրոջը, Միհրդատի հինգ երեխաներին և սկյութացի կանանց: Այնուհետև տանում էին պատանդներին, որոնց վերցրել էին աղվաններից իրերներից և Կոմագենեի թագավորից ծուցադրված էին մեծաքանակ հաղթանշանները ամբողջությամբ հավասար այն հաղթանակների թվին, որոնք տարել էին Պոմպեոսն ինքը և նրա զորավարները Բայց ինչը ամենից շատ փառք բերեց Պոմպեոսին, ինչը դեռ ոչ մի հռոմեացու չէր վիճակվել, գա այն էր, որ իր երրորդ հաղթանակները նա տոնում էր երեք աշխարհամասերի նկատմամբ տարած հաղթանակի կապակցությամբ: Նրանից առաջ ուրիշներն էլ էին եռակի հաղթահանդես արել, բայց Պոմպեոսն առաջին հաղթահանդեսն ստացավ Սֆրիկայի դեմ տարած հաղթանակի համար, երկրորդը՝ Եվրոպայի, իսկ այս վերջինը՝ Ասիայի դեմ տարած հաղթանակի համար այնպես որ նրա երեք հաղթահանդեսներից հետո այն տպավորությունն էր ստացվում, որ ասես թե նա ինչ-որ չափով հպատակեցրել է ողջ բնակելի աշխարհը

XI VI. Պոմպեոսն այն ժամանակ ինչպես պնդում են նրան ամեն ինչով Ալեքսանդրի հետ համեմատող և մոտեցնող գրողները, դեռևս երեսունչորս տարեկան էլ չկար իսկ իրականում նրա տարիքը քառասունին էր մոտենում: Ինչպիսի՜ երջանկություն կլիներ նրա համար, որ հենց այդ ժամանակ էլ ավարտեր իր կյանքը, երբ նրան դեռ ուղեկցում էր Ալեքսանդրի հաջողությունը, Մնացած ողջ կյանքը նրան բերել է կամ հաջողություններ, որոնք նրա նկատմամբ նախանձ և ատելություն են դրդուել, կամ անուղղելի դժբախտություններ: Հիրավի, այն ազդեցությունը

պետութեան մեջ որ նա ձեռք էր բերել իր ծառայութիւններէ շնորհիւ, գտագործում էր ի շահ ուրիշների և օգտագործում էր անվայել ձևով: Այսպես նպաստելով ուրիշների ուժեղացմանը, ինչպէս հասցրեց իր բարի անվանը և աննկատելիորեն ընկալ ուժից ու մեծութիւնից: Երբ թշնամու ձեռքն են ընկնում վճռական դիրքերը բազմաբուն, դրանք բազմապատկան թշնամու հզորութիւնը — այդպէս և Կեսարը, որը պետութեան մեջ իր բարձրացմամբ պարտական էր Պոմպեոսի ազդեցութեանը, միանգամայն ոչնչացրեց այն մարդուն, որի շնորհիւ աղթել էր մեծ ցածներին: Դա տեղի ունեցավ հետեւյալ կերպ:

Ասիայից Լուկուլլոսի վերադարձից հետո, իր մահացու կերպով վիճակով լի էր Պոմպեոսից սենատը Լուկուլլոսի համար ոչ միայն հանդիսավոր ընդունելութիւն կազմակերպէց այլև սկսեց նրան դրդել պետական գործունեութեան որպէսզի նրա օգնութեամբ սահմանափակէր Պոմպեոսի ազդեցութիւնը որը նույնպէս արդեն Հռոմում էր: Լուկուլլոսը, ճիշտ է կորցրել էր իր ավյունը և ստուի պետական գործունեութեան հանդէպ՝ տրված լինելով հաճույքներին և պարագութեան ու հարստութեան վարձանքներին: Չնայած դրան՝ ինչպէս հարձակվեց Պոմպեոսի վրա և սկսեց այնպէս համառօրէն պաշտպանել իր կարգադրութիւնները Ասիայում, որոնք Պոմպեոսը վերացրել էր, որ Կատոնի աջակցութեամբ սենատուս հասավ լիակատար հաղթանակի: Պարտութիւն կրելով ու ճնշվելով սենատում Պոմպեոսն ստիպված եղավ դիմել ժողովրդական սրիքունների օգնութեանը և կապվել ջահել-ջուհուլների հետ: Դրանցից ամենաազդեկին ու լիտին՝ Կլոդիոսը, սիրով ընդառաջելով Պոմպեոսին՝ նրան լրիվ կախման մեջ դրեց ժողովրդից: Կլոդիոսը Պոմպեոսին ստիպում էր, հակառակ նրա արժանապատւութեանը վաղել իր հետեւից ֆորումում և օգտվել իր աջակցութիւնից, որպէսզի կշիռ տալ այն օրինակներին որ ինքն առաջարկում էր, և այն ձառներին որոնք ինքն արտասանում էր՝ ցանկանալով շողոքորթութեամբ շահել ամբոխի բարեհաճութիւնը: Բացի այդ ասես թե իր ընկերակցութեամբ նա չէր անարգում, այլ բարեգործութիւն էր անում Պոմպեոսին, Կլոդիոսը պահանջում էր իրեն պարզե, որը և հետագայում ստացավ, — Պոմպեոսը նրա համար դոհաբերեց Յիցերոնին որը Պոմպեոսի բարեկամն էր և շատ հաճախ էր նրան ծառայութիւն մատուցում պետական ասպարեզում: Երբ Յիցերոնը վտանգի պահին դիմեց Պոմպեոսի օգնութեանը, վերջինս նույնիսկ շնորհունեց իրան, այլ, հրամայելով փակել դռները ամեն մեկի առաջ, ով ու իր մոտ կգար ինքն էլ հետաքսով մյուս մուտքից: Յիցերոնն այնժամ ստիպված եղավ դատի տակ ընկնելու ահից գաղտնի լքել Հռոմը:

ԱՆՎԻՄ ՍՅԷ ԺԱՌԱՆԱՂ ԿԵՍԱՐԸ պրեստորայից հետո վերադառնալով
 Հոռով՝ արեց աչնայիսի մի լաշը, որը ավելի պահին համաքաղաքացիների
 չերս սիրուն արժանացրեց նրան իսկ հետագայում նրան ընձեռեց վիթխա-
 րի իշխանություն և Պոմպեոսին ու հենց պետությունն էլ ծանրագույն վնաս
 հասցրեց է՛լ արն սկսեց ձգտել, որ հասնի իր առաջին կոնսուլությանը։
 Պոմպեոս ի ու Կրասոսի միջև եղած սնհամաձայնությունները էթլ Կեսարը
 միանար սրանցից որևէ մեկին, իսկույն նրան դարձնում էին մյու ի թշնա
 մին։ Դա ի նկատի ունենալով՝ Կեսարը փորձեց հաշտեցնել երկու պետա-
 կան գործիչներին — ինքնին՝ Հիանալի խնկացի և պետ թյա՛ շահերին
 համապատասխանող մի գործ, լաշը ձեռնարկված վատ մտադրությամբ
 և նրբին խարզավանքով իրագործված։ Մինչև հիմա երկու մասի բաժա՛ն
 ված հզորությունը, ինչպե՛ս բեռը Նավի վրա, հավասարեցնում էր կողա-
 թեքվածքը և հավասարակշռությունն պահպանում պետություն մեջ Իսկ
 հիմա հզորությունը կենտոնացել էր մի կետում ։ այնքան անհաղթա-
 հարելի դարձավ, որը շուտ ավեց ու կորժանեց գոյություն ունեցող ամ
 բոլոր իրակարգը։ Ուստի Կատոնը ի պատասխան այն պնդման թե Կլ
 արի ու Պոմպեոսի միջև ետադաշտման ծագած թշնամությունը տապա-
 լեց հանրապետությունը, հաշտարարեց, թե սխալվում էն նրանք, ովքեր
 հանրապետության կործանման պատճառ համարում են վերջին հան-
 դամանքը։ Հիրավի, ոչ թե երկպառակությունները, ոչ թե թշնամանքը
 աչդ պետական գործիչների աչ նրանց միավորումն ու բարեկամությու-
 նը հանրապետությանը բերեցին ամենաառաջին և ամենամեծ դժբախ-
 տությունը։

Կեսարը կոնսուլ ընտրվեց և իսկույն ի հաճույս ալքասների ու շու-
 Նևոքների օրինագիծ մտցրեց զաղութներ հիմնելու և հողեր բաժանելու
 մասին։ Դրանով իսկ նա խախտեց իր աստիճանի արժանապատվությու-
 ր՝ կոնսուլությունը վերածելով յուրատեսակ տրիբունատի։ Երբ Կեսարի
 լաշտոնակիցը՝ Բիրուլսը ընդդիմացավ նրա մտադրություններին, իսկ
 Կատոնը ջանում էր ամեն կերպ օգնել Բիրուլոսին, Կեսարը պարզապես
 հետտորական բարձունք բաց թողեց Պոմպեոսին և դիմելով նրան՝ հարց-
 լեց, թե հավանություն տալի՞ս է իր մտքած օրինագծին։ Երբ հաջո-
 գեց հաստատական պատասխանը Կեսարը շարունակեց. «Աչնայիսով
 էթե որևէ մեկը մտքով ասցկացնի բնությունմբ խանդարել օրինագիծը, դու
 լղնություն կզա՞ս ժողովրդին»։ — «Իհարկե, — պատասխանեց Պոմպեո-
 սը, — ընդդիմ նրանց, ովքեր սւլառնում էն սրով, ես հանդես կգամ սրով
 ։ վահանով» Դրանից ավելի կոպիտ բան Պ մպե սը թվում է մինչ

այդ օրը դեռ չէր ասել ու չէր արել: Ուստի ի արդարացումն Պոմպեոսի՝ ասում էին, թե այս խոսքը լեզվից թռել է տաքացած ժամանակ: Սա կայն հետագա իրադարձությունները պարզ ցույց տվեցին թե Պոմպեոսը միանգամայն ենթարկվել էր Կեսարին եվ իսկապես, հակառակ բոլոր սպասելիքների Պոմպեոսն ամուսնացավ Հուլյայի Կեսարի դստեր հետ, որն արդեն նշանված էր Յեպիոնի հետ և պատրաստվում էր մարդու գնալ մի քանի օր հետո: Որպեսզի մեղմացնել Յեպիոնի զայրույթը, Պոմպեոսը խոստացավ նրան կնութլան տալ իր ազդեկան թեև նա էլ մինչ այդ նշանված էր Փավստոսի՝ Սուլլայի որդու հետ: Կեսայն լիքն ամուսնացավ Պիզոնի դստեր՝ Կալպուրնյայի հետ:

XLVIII Գրանից հետո Պոմպեոսը Հումբ լցրեց իր զինվորներով և բոլոր դործերը կատարում էր քացահայտ բռնության միջոցով: Այսպես, նրա զինվորները հարձակվեցին Բիբուլոսի վրա, երբ սա ֆորում էր իջնում Լուկուլլոսի ու Կատոնի հետ և կոտորատեցին նրա լիկտորների ճի պոտները: Նրանցից ինչ որ մեկը Բիբուլոսի զլխին զամբյուղով գոմազր թափեց: Երկու ժողովրդական տրիբուններ, որոնք ուղեկցում էին նրան, լիքավորվեցին Այսկերպ ֆորումը մարբելով իրենց հակառակորդներից Կեսարը և Պոմպեոսը հաստատեցին հողարածանության օրենքը: Այդ օրենքով պայթակղված՝ ժողովուրդը համաձայնողական դարձավ և հակված էր ընդունելու նրանց ամեն մի առաջարկությունը: Հիմա նա բուրովին խորամուխ չէր լինում ոչ մի բանի մեջ, այլ լսին հավանություն էր տալիս նրանց օրինազծերին: Այս ձևով են հաստատվել Պոմպեոսի կարգադրությունները, որոնց պատճառով վեճ էր ընթանում նրա և Լուկուլլոսի միջև: Կեսարին էլ տրամադրել էին Գալլիան՝ Ալպերի այս ու այն կողմերում, և Իլլիրիան ինչպես և լորս լեզևոն՝ հինգ սարի ժամկետով: Հաջորդ տարվա համար կոնսուլներ էին ընտրված Պիզոնը՝ Կեսարի աները և Գաբինիոսը՝ Պոմպեոսին ամենազզվելի կերպով քծնողներից մեկը: Այս դեպքերի ժամանակ Բիբուլոսը փակված նստած էր տանը: Ութ ամիս էր չէր ներկայանում իր կոնսուլական պարտականությունները կատարելու, այլ սոսկ հրամանագրեր էր արձակում իր հակառակորդներ Պոմպեոսի և Կեսարի հանդեպ կատաղի մեղադրանքներով լեցուն: Ինչ վերաբերում է Կատոնին ապա նա ասեա թե մարդարեական ներշնչանքով բռնված սենատում կանխագուշակում էր հանրապետության և հենց Պոմպեոսի մատալուտ ճակատագիրը: Լուկուլլոսն էլ, պայքարից հոգնած, ապրում էր հանգիստ, որպես մի մարդ որն արգեն անընդունակ է պետական գործունեության համար: Այս առթիվ Պոմպեոսը նկատել է, թե՛ ծերունո՝ համար ներճանքին՝ տրվելը ավելի քիչ է սազական, քան պետա-

կան գործերով զբաղվելը: Չնայած դրան Պոլպեոսն ինքն էլ արագորին կորցրեց էներգիան՝ փայփայելով ջահել կնոջը: Նա կնոջն էր նվիրում իր ժամանակի մեծ մասը՝ սրա հետ ամբողջ օրել անցկացնելով մերձրա զարային կալվածքներում ու այգիներում և բույրովին ուշադրաթյուն չդարձնելով թե ինչ է տեղի ունենում ֆորոմում: Կլոդիոսը, որն այն ժամանակ ժողովրդական տրիբուն էր սկսել էր նրան վերաբերվել ար համարհանքով և իրեն թույլ էր տալիս խիստ լկտի արարքներ: Այսպես, նա Հռոմից արտաքսեց Ցիցերոնին և Կատոնին ուղարկեց Կիպրոս՝ այդ կղզում պատերազմ վարելու պատրվակով: Տեսնելով որ ժողովուրդն ամ բողջությամբ նվիրված է իրեն, որովհետև ինքն ամեն ինչում սիրաշահում է ժողովրդին, Կլոդիոսը կեսարի՝ Գալլիա մեկնելուց անմիջապես հետո փորձ արեց վերացնել Պոմպեոսի մի քանի կալ զազրությունները: Նա գերի Տիզլանին բռնել պահո մ էր լլ տանը լսկ ասլա գատ բացեց Պոմպեոսի բարեկամների դեմ, որպեսզի փորձեր, թե ինչպիսի՞ն է Պոմպեոսի ազդեցության ուժը: Վերջիվերջո երբ Պոմպեոսն անձաճբ հանդես էկավ այդ դատավարություններից մեկում Կլոդիոսը սրիկաների ամբոխով շրջապատված էլավ բարձունքը և այսպիսի հարցեր տվեց. «Ո՞վ է անսանձ բռնակալը: Ո՞վ է այն մարդը, որը մտոգ է փնտրում: Ո՞վ է մեկ մատով իր գլուխը քորում» Ամեն հարցի հետ ամբոխը՝ լավ վար ժեցված երզախմբի սկս՝ հենց էր Կլոդիոսը թափահարում էր ստղայի ձայլը, բարձրաձայն ու միաբերան գոռում էր Պոմպեոսը»:

ՄԼԻՄ Այս հարձակումներն, իհարկե, սասաիկ վշտացնում էին Պոմպեոսին, որը սովոր չէր ենթարկվել անվանաբեման և միանշամայ՝ ան փորձ էր նման կարգի պայքարի մեջ Սակայն էլ աղնչի տերեց նա, իմանալով որ սենատը շարախնդում է իրեն շասցված վիրավորանքների առթիվ՝ իրեն պատժված համարելով Ցիցերոնի հանդեպ արած դավաճանության համար: Մինչդեռ ֆորումում գործը հասավ Նեժկոտուքի, ընդ որում մի քանի մարդ վիրավորվեց իսկ Կլոդիոսի սարուկներից մեկին բռնեցին, մերկ սուրը ձեռքին՝ նրա կողմնակիցների ս մբոխի միջով դեպի Պոմպեոսը մոտենալու փորձ անելիս Պոմպեոսը, վախենալով Կլոդիոսի լկտի արարքներից և շարախոսություններից՝ օգտվեց այս պատրվակից որպեսզի այլևս չերևա ֆրումում, քանի դեռ Կլոդիոսը մնում էր իր պաշտոնում: Ամբողջ այդ ժամանակամիջոցում Պոմպեոսն իր տնից դուրս չէր գալիս բարեկամների հետ քննարկելով թե ինչպես մեղմացնի սե նատի և լավագույն լազարացիների զայրույթն իր հանդեպ: Կուլլոնը նրան խորհուրդ էր տալիս բաժանվել Հուլյայից և, հարաբերությունները խզելով Կեոարի հետ, անցնել սենատի կողմը: Պոմպեոսը մերժեց ս լլ

խորհուրդը, իսկ ընդունեց նրանց առաջարկությունը, ովքեր Յիցերոսի՝
Կլոդիոսի երգվյալ թշնամու վերադարձն էին ցանկանում, մի մարդու
որը սենատի մեծագույն բարեհաճությանն էր վայելում: Ուժեղ ջոկատի
զլուխ անցած Պոմպեոսը Յիցերոսի եղբորն ուղեկցեց դեպի Ֆորում, և
սա ժողովրդին դիմեց արաւաքովածի վերաբերյալ խնդրանքով Ընդհա
րումից հետո որտեղ եղան բազմաթիվ վիրավորներ և նույնիսկ մի քա
նի սպանված Պոմպեոսին հաջողվեց հաղթել Կլոդիոսին: Օրինական կար
գով վերադառնալով ալ տաքսումից՝ Յիցերոսը ոչ միայն իսկույնեկեթ հաշ
տեցրեց Պոմպեոսին սենատի հետ այլև, ելույթ ունենալով հօգուտ հա
ցի օրենքի, նորից Պոմպեոսին պարձրեց բոռշ շափով տիրակալը բոլոյ
այն երկրների ու ծովերի, որոնք հռոմեացիներին էին պատկանում: Քան
զի Պոմպեոսի իշխանության ու հսկողության տակ էին նավահանգիստ
ները առևտրական կենտրոնները հացահատիկի վաճառքը, մի խոսքով
ծովագնացների ու հողագործների ողջ գործունեությունը: Կլոդիոսը Պոմ
պեոսին մեղադրում էր, ապացուցելով, որ այդ օրենքը մտցված է ոչ
թե հացի պահասությունից այլ ընդհակառակը՝ հացի պակասութունն
արհեստականորեն է առաջացված քուհազի օրենք անցկացվի և որպես
զի նոր լիազորությունները դարձյալ կենդանություն տան Պոմպեոսի
ասես թե կաթվածահար ուժերին: Ուրիշներն այլ բնույթի մեջ տասնում
էին կոնսուլ Սպինթերոսի խորամանկ հնարանքը, որը ցանկանում էր
Պոմպեոսին բարձրագույն իշխանությամբ օժտել, որպեսզի հենց իրեն
օգնության ուղարկեն Պտղոմեոս թագավորին Սակայն ժողովրդական
տրիբուն Կանինիոսը օրինադիժ առաջարկեց, ըստ որի Պոմպեոսը սեպ
է լիներ առանց ռազմական ուժի միայն երկու լիկտորներով պետք է
հաշտեցներ ալեքսանդրիացիներին իրենց թագավորի հետ Պոմպեոսը,
երևի զոհ էր այդ առաջարկությունից իսկ սենատը դու մեկ ժեց այն
պատշաճ պատրվակի տակ թէ ինքը վախենում է Պոմպեոսի կյանքի
համար: Ծորումում և սենատի կուրիայի մոտ գտել էին ցրիվ տրված
զրույթուններ, թե Պտղոմեոսը խնդրում է իրեն օգնելու համար ու պես
զորավար նշանակել Պոմպեոսին այլ ոչ թե Սպինթերոսին: Տիմազենե
սըն ասում է թե Պտղոմեոսը եզրիպտոսը լքեց առանց հրատապ անհրա
ժեշտության, այլ սակ Քեոփանեսի խորհուրդով որը ջանում էր Պոմ
պեոսին անձնական հարստացման նոր աղբյուր տրասադրել և պատրը
վակ ստեղծել նոր արշավանքի համար Քեոփանեսի ստոր հաճկատա
րությունը, իհարկե այս պատմությանը համազգականություն է հալոթ
դում, բայց մյուս կողմից հենց Պոմպեոսի բնավորությունը, մի մայր

ոյն անընդունակ էլ ի սուա իրո թլունից դիմելու այդքան ստոր խար լավանքի, միանդամայն անհավանական է դարձնում այն:

Կ նշանակիլած լինելով հացի մատակարարման գործի գլուխ Պամպեսոսն սկսեց զանազան մարդեր ուղարկել իր լեզա ոնէրին ու բա լեկամներին ինքն էլ նավելով դեպի Սիցիլիա, Սարդինիա և Աֆրիկա այդ տեղերից մեծ քանակութեամբ հաց հավաքեց: Երբ նա պատրաստ լուծ էր ծով դուրս գալ փոթորիկ բարձրացավ, և նավավարները սիրտ չարեցին նավն արձակել խարսխից Այնժամ Պամպեսոսն առաջինը բարձրացավ յավակողին և, հրամայելով խարսխը տալ՝ գոչեց «Ինձ նա վե՛լ է պետք իսկ ապրել բոլորովի՛ն անհրաժեշտ չէ»: Այսպիսի խիզախութեան ու բուռն եռանդի դեպքում Պամպեսոսին հաջողութունն էր ուղեկցում և նրան հաջողվեց շուկաները հացահատիկով լցնել, իսկ ծովը ծածկել պարենով լի բեռնանավերով Ուստի օգնութունն էր ցուցնալիս նույնիսկ օտարերկրացիներին և առատութունը հարուստ աղբյուրից հեղեղի նման հոսում գնում էր դեպի բոլոր երկրները:

Ը Այդ ժամանակ Կեսարը, գալլական պատերազմի շնորհիվ, մեծ շոքութեամբ էր հասել: Ո թեև նա Հռոմից այդքան հեռու էր գտնվում և ըստ երևույթին զբաղված էր բելգերի, սվենների ու բրիտանացիների դեմ պատերազմելով այնուամենայնիվ, իր ի որամանկութեան շնորհիվ կարողանում էր ամենակարևոր գործերում աննկատելիբերեն դիմադրութուն ցույց տալ Պամպեսոսին ժողովրդական ժողովում: Իր լսրբի հետ յա վարվում էր որպես կենդանի մարմնի հետ, ոչ միայն պարզապես բարբարոսների դեմ ուղղելով դրան, այլև թշնամու դեմ մարտեր մղելով ասեա թե որսորդութեամբ կամ գազանների հալածելով՝ կռիվում էր իր զույլին և դարձնում անպարտելի ու ահեղ Ոսկին արծաթը և այլ հարուստ ավարը որ նա գրավում էր անթիվ արշավանքների բնթացքում, ուղարկում էր Հռոմ: Այդ միջոցները Կեսարն օգտագործում էր էդիլների, պրետորների կոնսուլների ու զրանց կանանց համար նվերների ձևով բերելու վրա ինչով և նվաճել էր շատերի բարեհաճութունը Գրա համար էլ, էրբ նա անցնելով Ալպերը՝ ձմեռում էր Լուկայում իրար առաջ կարելով լայան եկան այնտեղ բազում տղամարդիկ ու կանայք, և ի թիվս այսոց նաև՝ երկու հարյուր սենատորներ (սրանց մեջ ՚աև Պամպեսոսն ու Կրասոսը), այնպես որ Կեսարի տան դռների մոտ կարելի էր տեսնել հարյուր քսան լիկտորական ճիպոտների որցակներ կարելի էր տեսնել կոնսուլական ու պրետորական աստիճանի զանազան անձանց: Ը ոլոր եկածներին Կեսարը բաց թողեց շոալորեն բաշխելով դրամներ ու խոստումներ ի կ Պամպեսոսի ու Կրասոսի հետ ՚ա համա

ճայնագիր կնքեց: Վերջիններս պետք է ձգտեին հասնել կոնսուլության, իսկ Կեսարը նրանց խոստանում էր իբրև օգնություն զինվորների մի մեծ ջոկատ ուղարկել քվեարկության համար Հենց որ զլուխ զա նրանց ընտրությունը, նրանք միմյանց միջև կբաժանեն պրովինցիաներն ու զորքի հրամանատարությունը, իսկ հօգուտ Կեսարի պետք է հաստատվեն նրա պրովինցիաները հաջորդ հնգամյա ժամանակամիջոցի համար:

Այս համաձայնագիրը ուր հայտնի էր դարձել ժողովրդին, պետության առաջին դեմքերը դիմավորեցին մեծ տհաճությամբ: Մարցելլինոսը, հանդես գալով հակաբաժան ժողովրդի առաջ հարցրեց երկու հավակնորդներին, թե՛ նյանք արդյոք հետամտելո՞ւ են կոնսուլության: Երբ ժողովուրդը պահանջեց, որ նյանք պատասխան տան, առաջինը Պոմպեոսը պատասխանեց, ասելով, որ գուցե թե՛ ինքը հետամտի հասնելու կոնսուլության, բայց դուցե և՛ ոչ: Կրասոսն էլ տվեց ավելի համեստ մի պատասխան, հայտարարելով թե՛ կվարվի այնպես, ինչպես հարմար կհամարի ընդհանուր բարօրությանը: Երբ, վերջապես, Մարցելլինոսը հանդես եկավ Պոմպեոսի դեմ և ըստ երևույթին, իր ճստում թույլ տվեց սուր արտահայտություններ Պոմպեոսը հայտարարեց թե՛ Մարցելլինոսը ամենաանարդար մարդն է աշխարհում երախտագիտություն բուրրովին չճանաչող. չե՞ որ Պոմպեոսն ինքը նրան համրից պերճախոսի վերածեց սովահարից՝ կշտացած շատակերի:

LII Կոնսուլության բուր ալլ հավակնորդները նահանջեցին իրենց նկրտումներից, և միայն Լուցիոս Դոմիցիոսին Կատոնը համոզեց չհրաժարվել՝ ամեն կերպ նրան քաջալերելով և ասելով թե՛ պայքարը բռնակալների դեմ ընթանում է ոչ թե հանուն կոնսուլական պաշտոնի, այլ՝ հանուն ազատության: Պոմպեոսը վախենալով Կատոնի համառությունից, երկյուղելով որ լինի թե՛ նա, ով առանց այդ էլ իր հետևից տանում է ամբողջ սենատը, իր կողմը գրավի ժողովրդի ողջամիա մասին, թույլ շտվեց Դոմիցիոսին ֆորում մտնել նա զինված մարդիկ ուղարկեց, որոնք սպանեցին Դոմիցիոսին ուղեկցող ջահակրին, իսկ մնացածներին փախուստի մատնեցին: Վերջինը Կատոնը նահանջեց պաշտպանելով Դոմիցիոսին՝ նա վիրավորվեց աջ արմունկից:

Ահա այսպիսի միջոցներով Պոմպեոսը և Կրասոսը հասան կոնսուլության: Բայց պաշտոնակատարության ժամանակ իրենց ալլ գործողություններում էլ նրանք ավելի համեստություն չդրսևորեցին: Ամենից առաջ, երբ ժողովուրդն ուզում էր Կատոնին պրետոր ընտրել և արդեն անցել էր քվեարկության, Պոմպեոսը ժողովն արձակեց՝ անբարենպաստ նախանշանների պատրվակի տակ: Կատոնի փոխարեն կաշառված ցեն-

տուրիաները պրետոր ընտրեցին Վիտանիոսին: Այնուհետև ժողովրդական արիքուն Տրեբոնիոսի միջոցով Պոմպեոսը և Կրասոսը օրինագիծ մտցրին, ըստ որի, — ինչպես նախապես պայմանավորված էր եղել, — Կեսարի լիազորութունները երկարացվում էին երկրորդ հնգամյա ժամանակաշրջանի համար: Կրասոսին տրամադրվում էր Ասորիքը և պարթևների դեմ պատերազմի վարումը իսկ իրեն՝ Պոմպեոսին, ամբողջ Աֆրիկան և երկու Իսպանիաները՝ շորս լեզեոններով, որոնցից երկուսը Պոմպեոսը Կեսարի խնդրանքով ժամանակավորապես փոխանցել էր նրան հալլիական պատերազմի ժամանակ: Կոնսուլության ժամկետը լրանալուն պես Կրասոսը մեկնեց իր սիրովինցիան, Պոմպեոսն էլ, օժելով իբրևաուցած թատրոնը կազմակերպեց մարմնամարզական և մուսիկական մրցումներ, ինչպես և վայրի գազանների հալածում որի ընթացքում սպանվեց հինգ հարյուր առյուծ: Վերջում Պոմպեոսը ցույց ավեց նաև փղերով մարտի տեսարան որն ամենից շատ զարմացրեց հոմեացիներին:

LVIII Այս տեսարանները ժողովրդի մեջ հիացմունք հարուցեցին Պոմպեոսի նկատմամբ և սեր նրա հանդեպ, բայց մյուս կողմից էլ ոչ պակաս նախանձի տեղիք տվին: Պոմպեոսը զորքը և պրովինցիաների կառավարումը հանձնեց իր վստահելի լեզատներին, իսկ ինքը կնոջ հետ ժամանակ էր անցկացնում Իտալիայում՝ իր կալվածքներում, մեկից մյուսը տեղափոխվելով, սիրտ շանելով մենակ թողնել կնոջը՝ կամ նրա հանդեպ ունեցած իր սիրուց, կամ էլ իր հանդեպ կնոջ կապվածությունից: Քանզի այս վերջին հիմնավորումն էլ են բերում: Բոլորին հայտնի է եղել Պոմպեոսի հանդեպ երիտասարդ կնոջ գորովանքը, կին որը կրքոտ կերպով սիրում էր ամուսնուն՝ չնայած նրա տարիքին: Դրա պատճառով մասամբ եղել է, ըստ երևույթին, ամուսնու ժուժկալութունը, որ բավարարվում էր միայն իր կնոջով, մասամբ էլ նրա բնածին վեհապանծ արտաքինը՝ միացած հաճելի ու գրավիչ վարվեցողության հետ, որը գայթակղող է մանավանդ կանանց համար եթե իբրև ճշմարտութուն ընդունենք հետերա Ֆլորայի վկայութունը:

Էգիլների ընտրության ժամանակ բանը հասավ ձեռնամարտի և շատ մարդիկ սպանվեցին Պոմպեոսի շուրջը, այնպես որ նա ստիպված եղավ փոխել արյունոտված զգեստը: Ծառաները, որոնք բերեցին Պոմպեոսի շորերը իրենց վաղվզուքով ուժգին ազմուկ զցեցին տանը: Արյունոտ տողան տեսնելով, երիտասարդ կինը, որն այդ ժամանակ հղի էր, ուշաթափվեց և զժվարությամբ ուշքի եկավ: Այգպիսի ուժգին վախից և հուզումից վաղաժամ ծննդաբերության ցավեր սկսվեցին: Դրա համար էլ

նույնիսկ նրանք ովքեր սուր կերպ լ հանդիմանո մ էին Պոմպեոսին Կեսարի հետ ունեցած բարեկամության համար չէին կարող ոչ մի վտարան ասել այդ կնոջ սիրո մասին: Նա նորից հզիացավ և ծնելով մի աղջիկ, վախճանվեց ծննդաբերության ժամանակ, երեխան էլ մորից միայն մի քանի օր ավել ապրեց Պոմպեոսն արդեն բոլոր նախապատրաստությունները տեսել էր կնոջն իր արանական կալվածքում թաղելու համար սակայն ժողովուրդը զոռով ստիպեց զիակը տեղափոխել Մարսյան դաշտը ավելի շուտ երիտասարդ կնոջ հանդեպ ունեցած կարեկցանքից, քան թե ի հաճույս Պոմպեոսի և Կեսարի: Դրանց երկուսից, սակայն ժողովուրդը ավելի շատ հարգանք էր տածում, ըստ երևույթին, բացակա Կեսարի նկատմամբ քան Պոմպեոսի որը Հռոմում էր Հուլյայի մահից անմիջապես հետո քաղաքում խլրտում ընկավ, ամենուրեք անհանգստություն էր տիրում և լսվում էրն խառնակչո թյուն սերմանող խոսքեր: Ազգակցական կապը, որն առաջ ավելի շուտ թաքցնում էր, քան թե զրսպո մ այդ երկու մարդու իշխելասիրությունը այժմ կտրված էր: Շուտով լուր էկավ պարթևական պատերազմում Կրասոսի զոհվելու մասին: Նրա մահը վերացրեց ևս մի կարևոր խոչընդոտ՝ քաղաքացիական պատերազմի ծագման համար Հիրավի, Կրասոսի հանդեպ ունեցած վախից երկու ախոյաններն այսպես թե այնպես միմյանց հանդեպ երևնց պահում էին օրինականության սահմաններում Բայց երբ բախաը խլեց տարավ ժըրցության երրորդ մասնակցին կարելի էր կատակերգակ բանաստեղծի հետ ասել թե մի ըմբիշը մյուսի հետ պայքարի դուրս գալով:

Ճ զ լ օ ժ մ է լ լ են և Նեօերբր վազավ տր ր ւ ճ

Ոչ մարդկային բնություն հաւար ցանկացած լրջանկությունն էլ քիչ է Հաղեցնել ու բավարարել դրան անհնար է քանի որ նույնիսկ այդպիսի վիթխարի իշխանությունը, որն սփռված էր այդքան ընդարձակ տարածության վրա, չէր կարողանում հանդարտեցնել այդ երկու մարդու փառասիրությունը Թեև նրանց վիճակվում էլ էր լ էլ ու կալ լալ այն, ու սույնիսկ աս ովածների հաւալ

երեք Իսալ Է ամեն ինչ բաժանված և ամեն մեկին մի թ գավոր թյուն է հատել

Իր նք համարում էին, թէ իւճնց երկո լն շի բա լալ ալ ո մ հոռմեական ամբողջ տերությունը:

Վ IV Մի անգամ Ելույթ ունենալով ժողովրդական ժողովում Պոմպեոսը նկատեց որ ամեն մի պատվավոր պաշտոն իրեն ավելի շուտ էին տալիս քան ինքը դրան սպասում էր և ինքը հրաժարվում լր այդ պաշ

տոնից ավելի վաղ, քան ուրիշներն սպասում էին Այս դիտողութեան ար-
դարացիութեան ասպացուցն է այն, որ նա միշտ արշավանքից հետո
արձակում էր իր զորքերը Քալց այն ժամանակ, ենթադրելով, թէ կը-
տարք գորրր ՚ի արձակելու, Պոմպեոսը ջանում էր ի հակակշիռ դրա ամ-
րապնդել իր զիւրքը՝ իր համախոհների համար ասպահովելով բարձրա-
դասի տեսական սաշտոններ: Ասենք նա ոչ մի նորութեան չէր մտցը
նում և չէր ցանկանում դրսևորել իր անվստահութեանը Կեսարի հանդեպ,
ընդհակառակը՝ աշխատում էր ցուցնու թէ արհամարհում է նրան և
բոլորովին բանի տեղ չի գնում:

Իսկ երբ Պոմպեոսն սկսեց նկատել, որ բարձրագույն պետական
պաշտոնները բաշխվում են ոչ ըստ իր ցանկութեան, քանի որ քաղաքա-
ցիները կաշառված են, որոշեց շխտընդոտել խառնակութեանը Իւլիոյն
և թէ լուրեր տարածվեցին դիկտատորի մասին: Առաջինը ժողովրդական
տրիբուն Լուցիլիոսը համարձակվեց բացի՛րաց հայտարարել այդ մասին՝
ժողովրդին համոզելով Պոմպեոսին ընտրել դիկտատոր: Կատոնն այն-
պես կարուկ առարկեց որ Լուցիլիոսին վաճաճ էր սպառնում կորցնել
սրիբունի պաշտոնը: Պոմպեոսի շատ բարեկամներ հանդես եկան նրա
պաշտպանութեամբ, պնդելով, թե նա չի ձգտում և չի ցանկանում այդ
պաշտոնն ունենալ: Կատոնը դա համար գովեց Պոմպեոսին և նրան
համոզում էր օրինական կարգի վերականգնման հոգսը հողալ Այնժամ
Պոմպեոսը, ամաշելով, կարգը վերականգնելու միջոցներ ձեռք առավ, և
կոնսուլներ ընտրվեցին Դոմիցիոսն ու Մեսսալան: Հետո, սակայն, նո-
րից իրարանցում սկսվեց, և շատերն արդեն ավելի վճռականորեն էին
խոսում դիկտատորի մասին: Կատոնը վախենալով, որ իրեն կստիպեն
ենթարկվել բռնութեանը, որոշեց, որ ավելի լավ է Պոմպեոսին որևէ օրի-
նական պաշտոն տրամադրել և դրանով խել նրան հետ սլահել այս ան-
սահմանափակ ու բռնակալական իշխանութեանից: Նույնիսկ Բիբուլոսը,
թէ և Պոմպեոսի թշնամին էլ էր, առաջինը սենատում տվեց իր կարծիքը
Պոմպեոսին միակ կոնսուլ ընտրելու մասին որովհետև այդկերպ հան-
րապետութեանը կամ կազատվի այժմյան անկարգութեաններից, կամ
կստրկացվի ամենաարժանավոր մարդու կողմից: Այդ առաջարկութեանը
տարօրինակ թվաց, նկատի ունենալով, թէ ումից է դա գալիս: Այնժամ
տեղից վեր կազավ Կատոնը: Բոլորն սպասում էին թէ նա կառարկի նր
օրինագծին, բայց էրբ սենատում լոտ թեյուն տիրեց, նա հայտարարեց,
թէ ինքն այդպիսի առաջարկութեան չէր մտցնի սակայն, քանի որ այն
արդեն մտցված է ուրիշի կողմից, ինքը խորհուրդ է տալիս ընդունել ան-
դերազասելով ցանկացած իշխանութեանը և նիշխանութեանից: Եացի այդ

ինքը կարծում է, թե Պոմպեոսից ավելի լավ ոչ ոք չի կարողանա կառավարել պետությունը այսպիսի անկարգության պայմաններում: Մենատն ընդունեց առաջարկությունը և որոշեց որ Պոմպեոսը, կոնսուլ ընտրվելով, կառավարի միայնակ: Իսկ եթե նա ինքը ընկեր պահանջի, թող բնորի նրան ոչ ավելի վաղ քան երկու ամիս հետո Այսպիսով, ինտերբեքս Սուլպիցիոսը Պոմպեոսին կոնսուլ նշանակեց, և Պոմպեոսը բարեկամաբար որոշունեց Կատոնին նրան իր խորին երախտագիտությունը հայտնելով և խնդրելով, որ պաշտոնը կատարելիս նա մասնավոր կարգով իրեն օգնի խորհուրդներով: Կատոնն էլ պատասխանեց, թե, իր կարծիքով, Պոմպեոսը բոլորովին պարտավոր չէ իրեն՝ Կատոնին շնորհակալություն հայտնել, քանի որ այն ամենը, ինչ ինքն ասել է սենատում, ասել է ոչ թե ի սեր նրա Պոմպեոսի, այլ՝ ի սեր պետության Պոմպեոսին ինքը մասնավոր կարգով խորհուրդներ կտա ավելացրեց Կատոնը, եթե իրեն դիմեն, իսկ էթե չգիմեն, հրապարակորեն կասի այն, ինչը կհամարի օգտակար և անհրաժեշտ: Այսպիսին էր Կատոնն ամեն ինչում:

LV Քաղաք գալուց հետո Պոմպեոսն ամուսնացավ Կոռնելյայի հետ Մետելլոս Սկիպիոնի դստեր և պարթևական պատերազմում զոհված Պոլբիոսի՝ Կրասոսի որդու աչքու, որի հետ Պուբլիոսն ամուսնացել էր, երբ նա դեռ աղջիկ էր եղել: Այդ երիտասարդ կինը, բացի շահելությունից ու գեղեցկությունից, ուներ ուրիշ շատ արժանիքներ: Եվ իրոք, նա հիանալի կրթություն էր ստացել, գիտեր երաժշտություն ու երկրաչափություն և սովոր էր շահեկանորեն լսել փիլիսոփաների դատողությունները: Նրա այս հատկանիշները միանում էին մի բնավորության հետ, որը զուրկ էր անտանելի սնափառությունից, մի թերություն, որը երիտասարդ կանանց մեջ առաջանում է գիտություններով զբաղվելուց: Նրա հոր ծագումն ու բարի անունը անբասիր էին: Չնայած գրան, այս ամուսնությունը հավանության չարժանացավ փեսացուի և հարսնացուի տարիքների մեծ տարբերության պատճառով: Չէ՞ որ այդ տարիքում Կոռնելյային ավելի շուտ կսազեր Պոմպեոսի որդու կինը լինել Ավելի խորաթափանց մարդիկ ենթադրում էին, թե Պոմպեոսը արհամարհում է պետության շահերը քունվելով գովարին գրության մեջ՝ պետությունը նրան ընտրել է որպես իր բժշկի և իրեն ամբողջովին վստահել է նրան միայն, իսկ նա այդ ժամանակ իրեն զարդարում է պսակներով ու հարսանեկան հանդեսներ է անում, այնինչ պետք է գծրախտություն համարեր իր այս կոնսուլությունը, քանզի, իհարկե, դա նրան չէր տրվի հակառակ սահմանված սովորության, եթե հայրենիքում ամեն բան բարեհաջող լիներ:

Երբ Պոմպեոսը դատավարութիւն սկսեց կաշառքի ու վաշխառու-
 թյան դիմ և օրենքներ հրատարակեց, որոնց հիման վրա դատական հե-
 տապնդումներ էին հարուցվել բոլոր գործերը նա վարում էր խստագույն
 անաշատութեամբ ապահովում էր անվտանգութիւն կարգուկանոն և
 հանդատութիւն, դատարաններում՝ նախագահելով այնտեղ զինված ուժե-
 րի պահպանութեան ներքո Այնուամենայնիվ այդպիսի դատաւարու-
 թյաններից մեկին պարզվեց, որ խառն է նրա անէր Սկիպիոնը, և այն-
 ժամ Պոմպեոսն իր մոտ հրավիրեց երեք հարյուր վաթսուն դատավորնե-
 լի և նրանց խնդրեց օգնել իր աներոջը: Մեղադրողը հրաժարվեց դատա-
 վարութիւնից, տեսնելով որ դատավորները Սկիպիոնին ուղեկցում են
 Կորումից: Դրա համար էլ Պոմպեոսի մասին նորից սկսեցին վատ խոսել:
 Եւ այց էլ ավելի սուր պարսավանքի ենթարկվեց նա, Երբ ի խախտումն
 Լիւսիան օրենքի, որն արգելում էր գովասանական ճառերն այն ան-
Մարդասպանները կտրեցին Պոմպեոսի գլուխը, իսկ մերկ մարմինը նետեցին նավակի մեջ, թողնելով այդտեղ փռված՝ ի ակն նման տեսարանների սիրահարներին: Փիլիպոսը սպանվածից չհեռացավ, մինչև որ ժողովուրդը մի կուշտ նայեց պրծավ: Հետո նա մարմինը լվաց ծովի ջրով ու փաթաթեց իր շորերից մեկի մեջ Քանի որ ուրիշ ոչ մի բան չունեի ձեռքի տակ, նա շուրջը նայեց և ափին տեսավ մի փոքրիկ նավակի հին ու փռած բեկորներ: Համենայն դեպս դրանք բավական թվացին, որպեսզի դիակիզման խարույկ սարքեր մերկ և բացի այդ այլանդակված դիակի համար երբ Փիլիպոսը տեղափոխեց ու դարսեց բեկորները, նրան մոտեցավ արդեն զառամյալ մի հոռմեացի որը դեռ երիտասարդ ժամաչակ մասնակցել էր Պոմպեոսի առաջին արշավանքներին: «Ո՞վ ես դու, բարեկամ — հարցրեց նա Փիլիպոսին — որ պատրաստվում ես թաղել Պոմպեոս Մագնոսին»: Երբ սա պատասխանեց, թե՛ Պոմպեոսի ազատաւձակյալն եմ, ծերունին շարունակեց «Այս պատիվը չպետք է միմիայն քեզ պատկանի: Ինձ էլ ընդունիր իբրև մասնակից բարեպաշտական գտածոյի որպեսզի ես ամեն բանում շտրտնչամ օտարության մեջ գտնվե լուս համար, որն այսբան ծանր փորձանքներից հետո ինձ առիթ է տալիս կատարելու համենայն դեպս գոնե մի ազնիվ գործ սեփական ձեռքերով դիպչել և վերջին պարտքը հատուցել հոռմեացիների մեծ զուրավարին»: Այսպես կատարվեց Պոմպեոսի թաղումը:


Հաջորդ օրը Կիպրոսից եկավ Լուցիոս Լենտուլոսը: Ոչինչ չիմանալով տեղի ունեցածից, նա նավում էր Եգիպտոսի ափերի մոտով: Տեսնելով թաղման խարույկը և կողքին կանգնած մարդուն, բաց հեռվից լճանաչելով Փիլիպոսին նա ձայն տվեց «Այդ ո՞վ է բոլորել ճակատագրի կող-

ից սահմանված իր ժամկետը և հանգստանում է այդտեղ», — իսկ սպա
հառաչելով ավելացրեց Շուշի աչդ դո՛ւ ես, Պոմպեո՛ւ Մազնոս» Շու-
տով, ասի դուրս դալիս նրան էլ բռնեցին ու գլխատեցին Այսպես եղավ
Պոմպեոսի վախճանը:

Կարճ ժամանակ անց, Կեսարը ժամանեց Եգիպտոս այն երկիրը,
որն իրեն արատավորեց այսպիսի անլուր շարագործությամբ: Նա, ինչ-
պես մարդասպանից, երեսը շուռ տվեց այն մարդուց, որը բերեց Պոմպեո-
սի գլուխը, և, վերցնելով Պոմպեոսի մատանին, լաց եղավ: Կնիբի վրա
սույուծ էր դրոշմված, ձեռքին՝ սուր: Աքիլլասին և Փոթինոսին Կեսարը
հրամայեց մահու տալ: Թագավորն ինքը ճակատամարտում ջսխջախ-
վեց և խեղդվեց գետում: Իսկ սուփեստ Թեոդոտոսին հաջողվեց խույս թալ
այն պատժից, որ նշանակել էր Կեսարը, քանի որ Նա փախավ Եգիպտո-
սից և թափառում էր՝ խղճուկ կյանք վարելով և ամենքից արհամարհ-
ված էր Երբ Մարկոս Բրուտոսը Կեսարի սպանությունից հետո տիրեց
Ասիային, նա այնտեղ փնտրեց գտավ Թեոդոտոսին և հրամայեց տան-
ջալի մահվան ենթարկել նրան:

Պոմպեոսի աճյունը հանձնեցին Կոռնելյային որն այն թաղեց Ալ-
բանական կալվածքում:





Զ ու զ ա դ ը ու մ

LXXXI(I) Քանի որ այս և կու մարդկանց կենսագրութիւնները մեր աշխ առաջ են այժմ համառոտակի քննարկենք և համադրենք նրանց տարրերիչ առանձնահատկութիւնները Առաջին առանձնահատկութիւնն այն է որ Պոմպեոսը հզորութեան հասավ և փառաբանվեց բացառապէս օրինական ճանապարհներով սեփական նախաձեռնութեամբ բազում ծառայութիւններ մատուցելով Սուլլային, երբ սա Իտալիան աղատագրում էր բռնապետներով: Իսկ ինչ վերաբերում է Ագեսիլայոսին, ապա նա, ընդհակառակը ինչպէս թվում է, թագավորական իշխանութեան ասավ ոչ անբաւոր — և աստվածացին, և մարդկային օրենքների տեսակետից, — միջոցներով Ալսպես, նա ապօրինաժին հայտարարեց Լեոտիքիոսին, որին հենց իր եղբայրը օրինական ժառանգ էր նահաշէլ և ծիծաղելի դուրս բերեց կազ թագավորելու վերաբերյալ գուշակութիւնը Երկրորդ Պոմպեոսը և Սուլլայի կենդանութեան օրոք մշտապէս պատշաճ պատիվներ էր տալիս դիկտատորին, և նրա լախճանից հետո, հակառակ Լեպիդոսի դիմադրութեանը, հոգայ հանգուցյալի թաղման մասին և նուցնիսկ իր դատերը կնութեան տվեց Սուլլայի որդի Փալսատոսին: Իսկ Ագեսիլայոսը օլտիւլիով պատահական առիթից՝ իրենից հեռացրեց Լիսանդրոսին և նրան կոպիտ վիրավորանքներ հասցրեց: Այն ժառայութիւնները, որ Սուլլային մատուցեց Պոմպեոսը, պակաս չէին նրանցից, ինչպիսիք Սուլլան էր նրան մատուցել, այնինչ Ագեսիլայոսին Լիսանդրոսը դարձրէջ Սպարտայի թագավոր և համայն Հունաստանի գորավար: Երրորդ տարրերութիւնն այս է, որ պետական գործելում և ռատարաններում Պոմպեոսի թուլ

ոված անարդարությունները ծագել էին ազգակցական կապերից: Իրոք, Պոմպեոսն ստիպված էր լինում Կեսարի և Սկիպիոնի պարսավելի արարքների մեծամասնությունը գործակիցը դառնալ, որոնցից յուրաքանչյուրը նրա աներն է եղել: Մյուս կողմից, Սիպոդրիասը որին պետք է մահադատվի ենթարկելին օթենացիների հետ անարդարացի վարվելու համար Ազեսիլացոնն ազատեց արժանի պատժից՝ իր որդու սիրտ պատճառով իսկ Փերիգասին՝ թեթեացիների հետ կնքված խաղաղության դաշնագիրը խախտողին, նա լճական աջակցություն ցույց տվեց, անկասկած ծածկելով բուն հանցագործությունը: Ընդհանրապես Պոմպեոսը որքան վնաս է պատճառել հռոմեացիներին՝ գիշելով բարեկամներին կամ գործելով անգիտություններ, նույնքան դժբախտություններ էլ Ազեսիլացոնն է բերել լակեդեմոնացիներին՝ բորբոքելով Բեովտակսի դատերազմի բոցը՝ ի հաճույս իր բուռն փառասիրության:

LXXXII(II) Եթե աս էրկու մարդկանց անհաջողություններում պատասխանել նաև ճակատագրի անբարեհաճությունը, ապա Պոմպեոսի բախտը հռոմեացիների համար միանգամայն անսպասելի դուրս եկավ, լակեդեմոնացիներն էլ նախապես դիտեին Ազեսիլացոսի ճակատագիրը բայց նա սրանց չթողց որ գերծ մնան կազ թագավորությունից Եվ իրոք, եթե Լեոտիքիդասը նույնիսկ հաղար տնդամ մերկացված լիներ այն օանում, թե նա օտարերկրացի է և սպորինաձին, ապա իհարկե, եվրիպոնսիդների համար դժվար չէր լինի Սպարտայի համար գտնել օրինական թագավոր՝ առողջ ստեբրով, և թե միայն Լիսանդրոսը նրանց շատ պեր մտանալ լատգամախոսություն մասին: Այն բուժիչ միջոցը, ու է Լեկտ ափ մոտ տեղի ունեցած դժբախտ ճակատամարտից հետո առաջացած դժվարին պայմաններում Ազեսիլացոսը կիրառեց «լեղաճարճներ» նկատմամբ, առաջարկելով մեկ օրով օրենքներին թույլ տալ քնելու և հայտ է բերում իրա երեկելի պետական իմաստությունը, և Պոմպեոսի կյանքը է լի կարելի նման որեէ բան գտնել: Վերջինս իրեն պարտաւէր չէր համարում իր իսկ կողմից սահմանված օրենքները պահպանել, որպեսզի բարեկամներին ցույց տար իր հզորությունը: Ազեսիլացոսն էլ կանգնած լինելով հանուն ամաքաղաքացիների փրկության օրենքները վերացնելու անհրաժեշտություն առաջ՝ գտավ այն միջոցը, որի շնորհիվ օրենքները և՛ չկործանեցին քաղաքացիներին, և միաժամանակ չվերացվեցին, որպեսզի չկործանեին նրանց: Ինձ համար որպես Ազեսիլացոսի պետական իմաստության անլուրդական օրինակ է պատկերանում նաև իրա այն հայտնի արարքը, երբ նա սկիտալաներն ստանալուց անմիջապես հետո, դա դարեցրեց Սսիական իր արշավանքը: Ազեսիլացոսը օգ

տրվում էր պետական հզորութունից այն շափով, ինչ Պոմպեոսն էր օգտվում, և իր մեծությամբ նա պաշտական է հենց իրեն, բայց հանուն հայրենիքի բարօրության նա հրաժարվեց այսպիսի հզորութունից ու փառքից որպիսին ոչ ոք չէր ունեցել ո՛չ անցյալում ո՛չ էլ նրանից հետո Ալեքսանդրից բացի

LXXXIII(III) Մյուս կողմից ինչ վերաբերում է այլազանքներին ու ռազմական սիրահիքներին ապա Քեկնոփոնեն ինքը, կասծում էմ, Սդե սիլալոսի հաղթանակները չէր համեմատի Պոմպեոսի հաղթանշանների քանակի հետ այն բանակների մեծության հետ, որոնք ևս էլ էին նրա հրամանատարության տակ ճակատամարտերի քանակի և նրա սարած հաղթանակների հետ, թեև այդ գրողին հանուն նրա այնպիսի արևանիքների ասես թե առանձնապես իրավունք է վերապահված գրել ու խոսել Ազեսիլալոսի մասին, ինչ որ ուզենա

Թվում է նաև թե Պոմպեոսը թշնամիներ է հանդեպ իր գթասիրտ վեպերմունքով շահեկանորեն տարբերվում է Սզեսիլալոսից: Վերջինս ուզում էր սարկացնել Թերեն 1 անսպասուի վերածել Մեսսենան (թեև Մեսսենան ու Սպարտան ընդհանուր ժուռանդության մեջ հավասար բաժիններ ունեին, իսկ Թերեն մի քաղաք էր, որտեղից նրա տոհմն էր ծագում) և սրա սլատեառով քիչ մնաց հենց Սպարտալից էլ գրկվեք և կորցնեք Հունաստանի վրա ունեցած գերիշխանությունը: Պոմպեոսն էլ ոչ միայն քաղաքներում բնակեցրեց ծովահեններին, որոնք փոխելով իրենց արհեստը՝ անցան նոր ապրելակերպի այն էր դաշնակիցը դարձրեց պարտված Հարց թագավոր Տիդրանին, որին կարող էր որպես գերու անցկացնել էր հաղթահանողի թափոթի հետ, հայտարարելով թե հավերժությանն իր համար ավելի թանկ է, քան մի չր

Բայց էթե պատեհալմում պետք է նախատեսվածը լուր միայն կարևորագույն դարձերին ու ծրագրերին, որոնք վճռական հաջողություն էին ունենում, ապա լակեղեմոնացին գորավարի տաղանդով հոռմեացուց ավելի հեռուն գնաց: Հիրավի, առաջին՝ նա չքեց և թշնամիներին շովեց բաղարներ, թեև նրանք երկիրն էին խուճել յոթանասուն հազարանոց զորքով, իսկ ինքը միայն մի բուռ զորականներ ուներ, այն էլ՝ կեկորս լի մուս պարտութուն կրած Պոմպեոսը, ընդհակառակը, սարսափով փախավ Հոռմից, հենց որ կեկորը հինգ հազար երեք հարյուր հարյուր հրավեց Իտալիայի մեն մի քաղաքը, նա կամ փոքրոգարար նահանջեց սակավաթիվ հակառակորդի առաջ, կամ սխալմամբ թշնամիներին սշանա կալիորեն ավելի ուժեղ համարեց Բացի այդ Պոմպեոսը ետևապարհ ընկավ կնոջ ու երեխայի հետ իսկ մնացած լաղալացիներն էլ ընտանիքն

ըր թողեց անպաշտպան, այնինչ նա պետք է կամ հաղթեր՝ մարտնչելով հայրենիքի համար, կամ էլ ընդուներ ուժեղագույն հակառակորդի խաղաղության առաջարկները, մանավանդ որ նա իր համաքաղաքացիին էր և ազգականը: Իսկ արդյունքը էղավ այն, որ հենց այդ մարզուն, որի հրամանատարության ժամկետը երկարացնելը և կամ որին կոնսուլութուն տալը համարում էր վտանգավոր, նա հնարավորութուն տվեց Հոսոյր գրավելու և Մետելլոսին հայտարարելու, թե ինքը նրան իսկ և մնացած բոլորին իլ գերիներն է համարում:


LXXXIV (IV) Գործելով լավ զորավարի համար անխախտելի ու կալ և լագույն կանոնով — լինելով ուժեղ՝ թշնամուն ստիպել ճակատամարտ տալ, իսկ թուլութուն դգալով՝ խուսափել մարտից Ագեսիլայոսը միշտ մնում էր անպարտելի նեսարը երբ ավելի թույլ էր, իույս էր տալիս, ճողոպրում Պոմպեոսից որպեսզի պարտութուն չկրեր, իսկ հենց որ ուժեղացավ, ապա նրան ստիպեց մեկ ցամաքային ճակատամարտում վտանգի ենթարկել այն ամենը, ինչ ուներ ձեռքին, և միանգամից տեք դարձավ հարստութունների պարենի ու ծովի վրա գերիշխանության: Եթե այս բոլորն առաջվա պես մնար թշնամու ձեռքը, ապա վերջինս կարող էր կեսարին վերջ տալ առանց որևէ ճակատամարտի Այն, ինչն այս դեպքում բերում են իբրև լավագույն արդարացում ամենաուժգին կրշտամբանք է հանդիսանում փորձված զորավարի համար: Հիրավի, երկտասարդ զորավարի համար (բացի դա նաև իր զորքերի կանչերից ու ազմուկից շփոթահար և ոչ այնքան ուժեղ մեկը որ դիմադրեր նրանց պահանջներին) բնական ու ներելի կլիներ հրաժարվել իր ամենահուսալի հաշվարկներից: Բայց ո՞վ կարող է արդարացում գտնել այն բանի համար որ Պոմպեոս Մագնոսը, որի ճամբարը հռոմեացիներն անվանում էին հայրենիք իսկ վրանը՝ սենատ ուրացող ու դավաճան համարելով նրանց, ովքեր պետական գործերն էին տնօրինում Հռոմում ում մասին հայտնի էր, թե երբեք չի ենթարկվել ոչ մի պետի այլ իր բոլոր արշավանքները մեծ վառքով կատարել է որպես գլխավոր հրամանատար, — ո՞վ արդարացում կգտնի, կրկնում եմ որ այդպիսի մարդը դատարկ ու փուչ պատճառներով Փավոնիոսի ու Դոմիցիոսի կատակների պատճառով այն պատճառով որ իրեն չէին անվանում Ագամեմնոն, նետվեց ահավոր մի ճակատամարտի մեջ՝ վտանգի ենթարկելով գերագույն իշխանութունն ու ազատութունը: Եթե նա հաշվի էր առնում սոսկ մեկ օրվա փառքն ու խայտառակութունը պետք է իսկույն սկսեր դիմադրութուն ցույց տալ թշնամուն և պաշտպաներ Հոսոյր իսկ իր վախուստը թե՛ միտոկլեսյան


նազմական խորամանկութիւնն ներկայացնելով շարտք է հետազայում
ամոթալի համարեր հապաղումը Թեսալիայի ճակատամարտից առաջ
Չէ՞ որ աստվածութիւնը Վատկապետ Փարսալիայի հովիտը շէր մատ
նանշել որպէս աշխարհը տիրելու համար մղվող ճակատամարտի ասպա
րեզ և մոնեախիկը ախոջաններին կոչ շէր անում այլ հովիտն իջնել և
նրանցից ոչ մեկի գլխին պսակ շէր դրել: Ընդհակառակը, իշխելով ծովի
վրա Պոմպեոսը հնարավորութիւն ուներ ընտրելու բազմաթիւ այլ դաշ
տավայրեր հազարավոր քաղաքներ: Վերջապէս, նրա տրամադրութեան
տակ էր ողջ աշխարհը, եթէ միայն ցանկանար նմանվել Փաբիոս Մաք
սիմոսին, Մարիոսին, Իուկուլլոսին և նույնիսկ Ագեսիլայոսին: Վերջինիս
ոչ միայն Սպարտայում վիճակվեց տանել հենց այդպիսի խոովարարա
կան դժգոհութիւն համաքաղաքացիների կողմից, որոնք ուզում էին թե
բեացիներից պաշտպանել իրենց հողը այլև եգիպտոսում համբերու
թյամբ տանել կասկածանքներ ու զրպարտչական մեղադրանքներ թա
գավորի կողմից, որին նա խորհուրդ էր տալիս հանգստութիւն պահպա
նել: Ագեսիլայոսը կարողանալով հաստատակամ լինել իր ճրագործի
կատարման մեջ, եթէ նա դրանք ճանաչել էր որպէս լավադուլնները, ոչ
միայն եգիպտացիներին փրկեց՝ հակառակ նրանց կամքի և մշտապէս
պահպանեց Սպարտան այդքան ուժգին ցնցումների ժամանակ, այլև հենց
լաղաքում բարձրացրեց թեբեացիների դեմ տարած հաղթանակի հուշար
ձան՝ համաքաղաքացիներին հնարավորութիւն տալով նորից հաղթանակ
տանել, շնորհիւ այն բանի, որ դրանից առաջ շէր թողել, որ նրանք սե
փական քմահաճութեան գոհ դառնալին Ռեստի Ագեսիլայոսին՝ հետազա
յում գովարանում էին նրանք, ում քմահաճութեանը սա հակադրվել էր:
Պոմպեոսին, որը սխալներ էր թույլ տալիս ուրիշների մեղքով ընդհա
կառակը, անդիմանում էրն սույն աչն մարդիկ ովքէլ նրան դրել էին
կատարել դրանք

Ոմանք պնդում են սակայն թէ նլան խաբեց իր անել Սկիպիոնը
հափշտակելով ու թաքցնելով Ասիայից բերած դրամների մեծ մասը, այն
նայատակով, որ Պոմպեոսին ստիպեր ճակատամարտ տալ, բանի որ այ
լապէս իբր թէ, դրամները շնն բավարարի: Եթէ դա նույնիսկ ճիշտ էլ
լինի, այնուամենայնիւ զորավարը նման հանգամանքների մեջ ընկնե
լիս շարտք է այդքան հեշտուն թույլ տա, որ իրեն խաբեն, շարտք է
հապճեպորեն վճռական ճակատամարտ տալու ոխակի գիմի: Ահա թէ ին
չո մն ենք մենք տեսնում այդ երկու մարդկանց տարբերութիւնը:

LXXXV(V). Պոմպեոսը անհրաժեշտութիւնից դրսևում, որպէս ար
տաքսյալ նավեց գնաց Եգրպոս Սգեսիլայոսն էլ այնտեղ մեկնեց ոչ

անհրաժեշտությունից, բայց և ոչ ազնիվ դրդո մներկց մղված այլ՝ ի սեր լրամի, որպեսզի բարբարոսներից ստանալիք միջոցներով կովեր հույ ների դեմ: Այնուհետև նույն այն բանում ինչում մեղադրում ենք եգիպ տացիներին որոսք կործանեցին Պոմպեոսին Եգիպտացիները Իեղադը- րում ևն Ագեսիլաչոսին Հիրավի Պոմպեոսը վստահեց օրանց և դրա դիմաց կյանքով հատուցեց: Ագեսիլաչոսն էլ եգիպտացիների կողմից լիակատա : վստահություն էր վաչելում, բայց բախտի քմահաճույքին թո դեց նրանց ում որ ինքը օգնության էր եկել անցնելով նրանց թշնամի ների կողմը





Դ Ե Մ Ո Ս Թ Ե Ն Ե Ն

1 Օլիմպիայում կառավարչի մրցումներում սարած հարժանակի առթիվ Ալքիբիադեսին գովերգ ձոնած բանաստեղծը — լինի դա Եվրիպիդեսը, ինչպես մեծամասնությունն է կարծում, թե ուրիշ որևէ մեկը, — պնդում է, որ լիակատար երջանկության համար անհրաժեշտ է ամենից առաջ որպես հայրենիք ունենալ «նշանավոր ու փառավոր մի քաղաք»։ Իսկ ես կարծում եմ, Սոսսի՛ե որ նրա համար ով ձգտում է իսկական երջանկության, ինչը հիմնականում կախված է հոգեկան խառնվածքից ու մտածելակերպից, այն, որ նա ծնվել է աննշան ու փոքրիկ քաղաքում, նույնքան ոչ էական բան է որքան ոչ ասենք, կարճատև ու տղիվ լինելը նրա մայրը։ Իրոք, ծիծաղելի է մտածել, թե Հուլիոսն՝ Քևոս ոչ մեծ կղզու մի պատլիկ մասը, կամ էգլնան որը աթենացիներից ինչ-որ մեկը պահանջում էր հեռացնել իբրև «սպիտակ հատ Պիրեոսի աչքից», լավ դելասաններ ու բանաստեղծներ է ծնում, չի կարող աշխարհ բերել արդարամիտ քչով բավարարվող, խելացի ու մեծահոգի մարդիկ։ Մյն արվեստները որոնք ծագել են որպես միջոց հարստություն ու փառք վաստակելու համար աննշան փոքրիկ քաղաքներում դուրս ե ուղղակի նվազում են, բայց առաքինությունը, սիմացկուն ոչ քմահաճ բույսի նման արմատներ է ձգում ամենուրեք, որտեղ բնածին օրինավորություն և աշխատասիրո թյան սգի է դտնում։ Ուստի եթե մեր մտքերն ու արարքները ինչ-որ բանում այնքան էլ անբասիր չեն, այդ դրա համար արդարացի կլինի, որ ինքներս մեզ մեղատրեներ, այլ ոչ թե մեր հայրենիքի համեսու չափերը։

II Ճիշտ է ով որ հանձն է առել կատարելու պատմական հետազոտումներ, որոնց համար պահանջվում է կարգալ ոչ միայն դյուրամաս լիկի, հայրենական, այլև արտասահմանյան, օտար երկրներում ցրված րազում երկիր, նրան իրոք ամենից առաջ «նշանավոր ու փառավոր քաղաք» և անհրաժեշտ լուսավորչալ ու բազմամարդ միայն անտեղ, առատորեն և նենալով ամեն կարգի գրքեր, իսկ այն, ինչը սպրդել է մատենադիւնների ուշադրութլունից, բայց ակնհայտորեն հաստատվում է բարոյաբար ավանդութլամբ հավաքելով լսածը և որոնելով գտնելով հարցուփորձի միջոցով և ակարողանա իր աշխատութլունը հրատարակել նվազագույն թվով մեղանշումներով ու բացթողումներով Ինչ վերաբերում է ինձ ապա ես ապրում եմ մի ոչ մեծ քաղաքում և, որպէսզի այն էլ ավելի չփոքրացնեմ, պատրաստվում եմ անտեղ ապրել հետագայում ևս իսկ երբ Հռոմում և Իտալիայի այլ վայրերում էի լինում ապա պետական գործերս ու աշակերտներս, որոնք ինձ մոտ էին գալիս փիլիսոփայութլուն պարապելու, ինձ ազատ ժամանակ շէին թողնում որպեսզի լարժվելի հոռմեացիների լեզվի մեջ, ուստի և շատ ուշացած արդեն կյանքիս մայրամուտին, ես սկսեցի հոռմեական գրքեր կարդալ Եվ, զարմանալի բան է, բայց ճշմարտութլուն է սա — ինձ հետ ահա թե ինչ պատահեց. ոչ այնքան բառերից էր ինձ հարկ լինում իմանալ զրանց լովան դակութլունը, որքան, բնդհակառակը բովանդակութլունից որի մասին էս այսպես թե այնպես արդեն որոշ պատկերացում ունեի, որսալ հենց այդ բառերի նշանակութլունը: Իհարկէ, զգալ հոռմեական սճի գեղեցկութլունը, սեղմութլունը, փոխաբերութլունների առատութլունը և կանոնավորութլունը — մի խոսքով այն ամենը ինչով զարդարվում է խոսէր, — ինձ թվում է հետաքրքիր է և զուրկ չէ հաճելիութլունից, բայց դա պահանջում է ոչ հեշտ աշխատանք և համառ սլախապնդումներ, ու միայն նրանք են ի զորու դա անել, ովքեր ավելի շա և ազատ ժամանակ ունեն և ում տարիքը դէռ չի խոչընդոտում այդ կալդ ձգտումները իրագործմար

III Ահա թէ ինչու համեմատական կենսագրութլունների այս, ըստ հաշվի, հինգերորդ գրքում, պատմելով Գեմոսթենեսի ու Յիցերոնի մասին, նրանց բնավորութլունն ու մտածլակերպի մասին, մենք ուսումնասիրելու և համադրելու էնր նրանց ըստ նրանց արարքների ո պետական գործունեութլան, բայց համեմատել նրանց ճառերը՝ որոշելու համար, թե նրանցից որն էր ատուլի ազդու և հաճելի խոսում մենք հանձրն չենք առնում: Թե չէ մէնք էլ կրնկենք այն դրութլան մեջ ու ի վերաբերչալ Հոնն ասել է. «Գլխինն անհոռնի է ցամաքում» — մի խոսք որ

անձնապաստան Յեցիլիոսը չգիտեր այլապես սիրտ չէր անի լույս ըն ծայել Դեմոսթենեսի և Յիցերոնի համեմատությունը Ասենք, էթե «Ճա նաչիր ինքդ քեզ» և սույթով դեկավարվէր ամեն ոք, այն այլևս չէր թվա աստվածային պատգամ:

Դեմոսթենեսին ու Յիցերոնին աստվածությունը ասես թե, հենց էն գլխից կերտել է ըստ միևնույն տիպարի նա ոչ միայն նրանց բնավո րությանը տվել է բազում նման գծեր, ինչպիսիք են, օրինակ փառասի րությունը և նվիրվածությունը քաղաքացիական ազատությո նեկերին, փոքրոգությունը պատերազմների ու վտանգների ժամանակ այլև այդ ամենին խառնել է և ոչ քիչ պատահական զուգահիշյություններ: Ինձ թվում է դժվար է գտնել երկու այլ հոևտոր, որոնք լինելով հասարակ և ոչ աղնվաղարմ մարդիկ, հասել են փառքի ու հզորության, պայքարի մեջ մտել արքաների ու բռնակալների հետ, գրկվել դուստրերից, արտաքսվել հայրենիքից բայց պատիվներով վերադարձել, նորից են փախել, բայց բռավել թշնամիների կողմից և կյան քին հրաժեշտ տվել հենց այն ժամա նակ, երբ մարել է իրենց համաքուպացիների ազատությունը եվ էթե բնավորությունն : պատահականությունը՝ կարրչների պես, միմյանց հետ մրցության մեջ մտնելին, դժվար կլիներ դատել, թե այդ երկու այ րերին ով է ավելի նմանություն տվել. բնավորության գծերով՝ «ա՞ թե՞» կենսական հանգամանքներով՝ մյուսը՝ բայց նախ լեւոք է պատմել նրա մասին ով որ ավելի վաղ է ապրել:

IV Դեմոսթենեսի հայրը՝ Դեմոսթենեսը իսլպես թեոպոմպոսն է սեղեկացնում պատկանում էր հարգարժան և ունեւոր քաղաքացիների թվին, իսկ «Դանակագործ» մականունը կրում էր նրա համար, սր ունեւր մե մեծ արհեստանոց, որտեղ հատուկ սովորեցված սարուկները սրեր ու դանակներ էին շինում Իսկ ինչ վերաբերում է նրա մորը, ապա հոևտոր էսքինեսը հավատացնում է թե սրա հայրը եղել է ոմն Գիլոնե ու Աթենքից փախել էր՝ փրկվելով պետությանը դավաճանելու մեջ մեղադրվե ւուց, իսկ մայրը նույնիսկ հույն չէ, բայց նա ճի՞շտ է ասում, թե՞ չարա խասում է ու գրպարտում — դա մենք չենք կարող որոշել: Յոթ տարեկա նում Դեմոսթենեսը կորցրել է հորը՝ ժառանգելով մեծ հարստություն (նրա ունեցվածքի ըն չհանուր արժեքը հասնում էր տասնհինգ տաղանգի), բայց խնամակալները նրա հետ անազնվորեն են վարվել. հարբս տության մի մասը նրանք յուրացրել են, մնացածն էլ բոլորովին անտեւր թողել, այնպես որ նույնիսկ նրա ուսուցիչների ոտնիկը լրիվ չէր վճար վում: Հատկապես դրա համար նա թվում է, շատացավ այնպիսի դաս տիարակություն, որպիսին վայել էր ազնվազարմ տղայի համար, ենչ

լիս և փիրուն, նուրբ կազմվածքի պատճառով, քանի որ մայրը նյան հոու էր պահում ֆիզիկական վարժություններից իսկ դայակ-դաստիարակները լին հարկադրում դրանցով զբաղվել Մանկությունից ի վեր նա տկայ ու հիվանդոտ էր, որի համար իր հասակակիցներից, որոնք ծայրում էին նրա արտաքինը նա ստացել էր «Բատալոս» ամսթալի մականունը: Բատալոսը ինչպես ոմանք հավատացնում են, եղել է կնանք ման ֆլեյտահար, իսկ Անտիփանեսը այդ մասին նույնիսկ մի փոքրիկ պիլոս է գրել, որի մեջ շարախնդորեն ծաղրել է նրան: Ուրիշները Բատալոսին հիշատակում են որպես բանաստեղծի՝ անպատշաճ բովանդակությամբ խնջույքի երգեր հորինողի: Գոյություն ունի, վերջապես, մի կարծիք, թե այն ժամանակվա ատտիկյան բարբառով բատալոս» էր կոչվում մարմնի ոչ բուրրովին դյուրին արտասանվող լաւը: «Արգաս» էլ,— նա ունեք, ասում են, նաև այսպիսի մի մականուն,— Գեմոսթենեսին կոչում էին կամ նրա բնավորության համար՝ մոայլ ու մաղձոտ (չէ՞ որ որոշ բանաստեղծներ «արգաս» բառով են անվանում օձին), կամ այն բանի համար, որ նրա խոսքը աչքի էր ընկնում անբարեհնչունությամբ ախր գոյություն է ունեցել և Արգաս անունով մի բանաստեղծ՝ անպետք ու խրթին ոտանավորներ հորինող: Սսենք, բավական է, այդ մասին:

V Ասում են Գեմոսթենեսը պերճախոսությամբ է հրապուրվել ասա թե ինչից Հոեատր Կալլիստրատոսը պարբաստվում էօ հանդես գալ դատարանում Օրոպոսի վերաբերյալ դործով, և աքլ էլուլ թին բուրրն սպասում էին մեծ անհամբերությամբ, որովհետև նա շատ ուժեղ հոեատր էր, բացի գա՛ ուժերի ծաղկման շրջանում, գործն ինքն էլ շատ էր աղմկալի: Կսելով թե ինչպես իր ուսուցիչներն ու դոյակները պայմանավորվում են գնալ դատի ունկնդրման Գեմոսթենեսը խնդրանքով ու աղերսանքով հասավ այն բանին, որ դայակն իր հետ վերցրեց նրան Իսկ սա մտերիմ հարաբերության մեջ էր այն սպասավորների հետ, որոնք պահում էին դատական շինությունների բանալիները և ճարեց մի տեղ, որտեղից տղան ոչ որից շնկատվելով՝ կարող էր լսել էլուլ թ ունեցողներին: Կալլիստրատեսը փայլուն կերպով շահեց գործը՝ համբեշահուր հիացմունք վաստակելով, և Գեմոսթենեսը նախանձեց նրա փառքին, տեսնելով, թե ինչպես է ամբոխը հիացական բացականչություններով հաղթողին սուն ուղեկցում բայց էլ ավելի դարմացավ ու ապշեց խոսքի ուժի վրա, որը, ինչպես նա պարզ հասկացավ, ընդունակ է գերել ու հնազանդեցնել բացարձակապես բուրրին Այդ պահից սկսած թողնելով մնացած բուրր պարապմունքները և մանկական խաղերը նա սկսեց ջանասիրաբար մարդվել ճառասացության մեջ՝ հուսալով ժամանակի ըն-

Թացքում դառնալ իսկական հոետոր: Նա իրեն որպես դաստիարակ ընտրեց Իսեոսին, թեև այդ ժամանակ դեռ դասավանդում էր Իսոկրատեսը, — կամ նրա համար, ինչպես ոմանք կարծում են որ որբության պատճառով նա ի վիճակի չէր Իսոկրատեսին վճարելու սահմանված տասը մինան կամ էլ, հավանական է, նրա համար, որ գործնական նպատակներով առավել պիտանի էր համարում Իսեոսի ճարտասանությունը ներգործուն ու նրբագեղ: Իսկ Հերմիպոսը պնդում է որ գտել է անհայտ մի հեղինակի գրառումներ, որտեղ գրված է, թե Դեմոսթենեսը եղել է Պլատոնի ունկնդիրը և իր պերճախոսությամբ գլխավորապես նրան է պարտական: Նույն այդ Հերմիպոսը մեջբերելով Կեսսիբոսից հավատացնում է, թե Դեմոսթենեսը հիմնավորապես ուսումնասիրել է Իսոկրատեսի և Ալքիդամանտոսի ձեռնարկները՝ դրանք թաքուն ճանապարհով ստանալով սիրակուզացի Կալլիասից և ուրիշ մի քանի հոգուց:

VI Ինչպես էլ եղած լինի, շափահասության հազիվ հասած Դեմոսթենեսը իր խնամակալներին դատի տվեց, իսկ քանի որ հազար ու մի խորամանկություններով նրանք ամեն անգամ կարողանում էին ճար պրտնել բողոքարկելու դատավճիռը ու տի Դեմոսթենեսը նրանց դեմ մեկը մյուսի հետևից ճառեր էր գրում, մինչև որ կոփվելով, ինչպես Թուկիդիդեսն է արտահայտվել, շարշարանքների ու վտանգների մեջ, շահեց դատը Եվ թեև չհաջողվեց բռնագանձել հայրական ժառանգության մի շնչին բաժինն անգամ, սակայն նա ճանելու մեջ համարձակություն ու բավականին փորձ ձևք բերեց, իսկ գլխավորը ճաշակելով փառք ու հզորոթյուն, որ ձևք էր բերում հրապարակային բանավեճերում հաստատ որոշում ընդունեց հանդես գալ ժողովրդական ժողովում և զբաղվել պետական գործունեությամբ Պատմում են, թե օրքոմենցի Լաոմեդոնեսը որպեսզի բուժեր հիվանդ փայծաղը, ստիպված է եղել շապվագել՝ հետևելով բժիշկների խորհրդին և այնքան է մարզել այդ ընդունակությունն իր մեջ, որ սկսել է մասնակցել նույնիսկ այնպիսի մրրցումների, որոնց համալ ստացած պարգևը պսակն է լինում միայն և, այդպիսով, դարձել մեծագույն վագորդներից մեկը: Այդպես էլ Դեմոսթենեսն ստիպված եղավ պերճախոսությանը ձևք զարկել պատահաբար, միայն այն բանի համար, որ վերագարձներ իր ունեցվածքը, բայց ժամանակի ընթացքում այնպիսի վարպետության և ուժի հասավ դրանում որ արդեն պետական հարցերի շուրջ ընթացող բանավեճերում, ասես թե գափնե պսակի համար տեղի ունեցող մրցումներում, նա գերազանցեց բոլոր այն համաքաղաքացիներին, որոնք գործում էին հոետորական բարձունքներում: Եվ չնայած դրան, նրա առաջին ելույթը ժողովուրդն

րնդունեց զժողովոյն բացականչութիւններով ու խոսքի անփութ կասուցվածքը ծաղրելով. նրա պարբերութիւնները թվում էին խճճված, իսկ ապացուցիկները՝ շափազանց անբնական ու բռնագրոսիկ: Դէպն, ասում են, ամիսներում էր ճանի որոշ թուլութիւնը, ոչ հստակ արտասանութիւնը և ընդհատուն շնչառութիւնը, որը պարբերութիւնների միջև դադարներ էր ստեղծում ու մթագնում ասվող խոսքի միտքը: Ավարավեյ նրանով որ Դեմոսթենեսը լքեց ժողովը, և երբ ընկճված շրջում էր Պիրեոսում նրան նկատեց թրիացի Եվնոմոսը, որն այն ժամանակ արդեն բոլորովին դատամշտ էր, և նրան նախատեց այն բանի հաւար, որ պերճախոսութեամբ համարյա չգիշերով Պերիկլեսին փոքրագութիւնից ու թուլակամութիւնից կործանում է իրեն, նրանով, որ երկնչում է ալբոսի առաջ և փոխանակ իր մարմինը սախապատրաստի մրցումների՝ թույլ է տալիս, որ այն թոշնի անգործութիւնից:

VII. Պատմում են, թե մի անգամ հերթական ձախողումից հետո նա տուն էր վերադառնում խորապես ընկճված իր անհաջողութիւնից ամոթից դեմքը օծիքի մեջ թաքցրած, և հանգիպել է դերասան Սատիրոսին՝ իր մտերիմ ընկերոջը, իսկ սա ցանկութեան է հայտնել ուղեկցել սրան: Դեմոսթենեսն սկսել է տրանջալ, թի բլար հռետորներից ինքն ամենից աշխատասերն է, թե դրա վրա համատշախտ, ոչ անողջութիւնն է վատնել և շնայած այդ բոլորին, ժողովուրդը չի խղճում իրեն՝ Դեմոսթենեսին Այնինչ հարբէցողներին հավաստիներին ու տգետներին հաճութեամբ են լսում, բարձունքից ցած չբշելով, իսկ իրեն նանաչել էլ չեն ուզում: «Այդ ամենը ճիշտ է, Դեմոսթենէ՛ս, — պատասխանել է Սատիրոսը: — Բայց ես շտապ կօգնեմ քեզ այդ դժբախտութեան մեջ, եթե չհրաժարվես ինձ համար որևէ բան անգիր ասել Եվրիպիդեսից կամ Սոփոկլեսից»: Երբ Դեմոսթենեսը կարդացել վերջացրել է, Սատիրոսն արտասանել է նույն այդ հատվածը, բայց այնպես արտահայտիչ ու կենդանի, որ Դեմոսթենեսին այն բոլորովին այլ բան է թվացել: Համոզվելով, թե խոսքին որքան գեղեցկութիւն ու նրբագեղութիւն է տալիս այդպիսի խաղը, նա հասկացել է, որ վարժութիւնները քիչ բան են տալիս կամ նույնիսկ բոլորովին անօգուտ են նրա համար, ով արհամարհում է արտասանութիւնը և կատարման վաղախոսութիւնը: Այն ժամանակ նա մե գետնափոր հատուկ շինութիւն է սարքել, որը ի դեպ, պահպանված է մինչև մեր օրերը և ամեն օր անշեղ կերպով, իջնում էր այնտեղ բնական հնարքները մշակելու և ձայնը կոփելու համար, իսկ երբեմն երկուերեք ամիս շարունակ այնտեղ էր անցկացնում զոխի կեսը սափրելով:

որպեսզի ամոթից անհանար լիներ մարդկանց աչքին երևալ նույնիսկ եթե ուժգին ցանկություն էլ ունենար

VIII Բացի այդ, նույնիսկ պատահական հանդիպումները, զրույց-նէրը գործնական խոսակցությունները նա օգտագործում էր որպես առիթ ու պատրվակ որ մի լավ աշխատեր: Մնալով մենակ՝ նա իսկույնեեթ իջնում էր իր գետնահարկը և կրկնում ամբողջ խոսակցությունը սկզբից միևչև վերջ՝ գործին վերաբերող բոլոր փաստարկումներով: Այն ճառերը որ սրան վիճակվում էր լսել, նա լանրագնին ւտամնասիրում էր հիշողությունը վերականգնելով դատողությունների ընթացքը և պարբերությունները: Որևէ մեկի կողմից նրան ասված կամ իր իսկ բառերի համար չա մտմտում էր բազմապիսի շտկումներ և նույն մտքերն ուրիշ կերպ արտահայտելու եղանակներ: Այստեղից ծագել է այն կարծիքը թե Դեմոսթենեսը բնությունից քիչ է օժտված եղել, այլ իր ողջ վարպետությունն ու հմտությունը ձեռք է բերել ծանր աշխատանքով: Ա՛հ թե ինչը, թվում է թե կհաստատեր այդ բանը ողջ ակներևությամբ. դժվար էր Դեմոսթենեսին լսել առանց նախապատյա տության ելույթ ունենալիս, և նույնիսկ երբ ժողովո ըզը ժողովում նստած, նրան հրավիրում էր անունով՝ պահանջելով ելույթ ունենալ, նա տեղից վեր շէր կենում, լիքն ճառը լէր մտածել ու պատրաստել նախապես: Դրա համար շատ հոեատորներ ծիծաղում էին նրա վրա, իսկ Պիթեասը մի անգամ սրամտել է, թե Դեմոսթենեսի մտահանդումներից պատրույզի հստ է գալիս, ինչին Դեմոսթենեսը թունալից պատասխան է տվել «Այնուամենայնիվ, տարբերում էն իմ ու քո կանթեղները» Ուրիշների հետ զրուցելիս, սակայն, նա լիովին շէր ժխտում դա խոստովանելով որ թէև շի էլ գրում բոլոր ճառերը ամբողջությամբ չայց բոլորովին առանց նախնական նշումների համենայն դեպս ելույթ շի ունենում: Ընդ որում նա հայտարարում էր, թե ով որ ճառերը նախապես է պատրաստում իրոք որ նվիրված է ժողովրդին թե հենց դրանում էլ կայանում է նրան ծառայելը, իսկ անտարբերությունը նրան կրակորել այն բանի հանդեպ թե մեծամասնությունը ճառն ինչպես կընդունի, սշանակում է համակրել օլրգարխիային և հույսը դնել ավելի շատ բնություն, քան համոզման վրա: Այն որ առանց նախապատրաստության Դեմոսթենեսը շէր համարձակվում ելույթ ունենալ, ապացուցում են նաև նրանով, որ երբ ունկնդիրների կանչերը նյան շփոթմունքի մեջ էին գցում, Դեմոսթեսը հաճախ էր խոսք վերցնում որ պեսզի նեղ տեղից փրկեր նրան իսկ, այ նա Դեմոսթեսին շի օգնել ոչ մի անգամ

IX Բայց այդ դեպքում ինչո՞ւ, — կարող եմ հարցնել — նույնիսկ էսքինեսը, ծաղրելով Դեմոսթենեսին, այնուամենայնիվ նրան անվանում էլ «հազվագյուտ խիզախ հեռուոր»։ Ինչո՞ւ միայն նա ելավ որպեսզի հակահարված տար Պիթոն Բյուզանդացուն, երբ սա «աթենացիների վրա սպասնայիրների ու վիրավորանքների հեղեղ էր ժայթքում»։ Կամ թե Լամարտո Միրինեացին Օլիմպիայում գովասանական ճառ արտասանեց Ալեքսանդր և Փիլիպոս արքաների հասցեին, որի մեջ դաժանորեն պախարակեց Թեբեի և Օլիմպոսի քաղաքացիներին, մի՞թե նա չէր, որ բարձրանալով տեղից մանրամասն, բազմաթիվ օրինակներով ցույց տվեց, թե որքան գեղեցիկ բաներ են արել Հելլադայի համար թեբեացիներն ու քաղկիսցիները և ընդհակառակը՝ որքան լարիք էն պատճառել նրան մակեդոնացի ստորաբարձները ընդ որում այնպես բորբոքեց ներկաներին որ, վախենալով ամբոխի գոռում-գոչումներից սոփեսոսն աշխատեց աննկատ շքվել։ Հավանաբար, Դեմոսթենեսը ենթադրում էր թե Պերիկլոսի այլ արժանիքներն իրեն այնքան էլ պետք չեն, բայց նրա վեհակերպութունը, անխռով հանդարտությոնը, ամեն առիթով շարտահայտվելու սովորությունը, կամաց-կամաց և ու ամբողջովին ջանում էր ընդօրինակել համարելով որ հենց դա էր Պերիկլեսին վեհություն սալիս, դրա համար էլ, թեև բոլորովին չէր արհամարհում փութանցիկ ճառերի փառքը, համենայն դեպս այնքան էլ հաճությամբ ու հաճախ հույս չէր դնում պատահականության բերմունքի վրա Չնայած դրան՝ և արիությունը և հանդգնությունը հատուկ են եղել Նրա ճառերին, բայց ոչ այնքան գրավոր խոսքում, որքան կատարման ժամանակ, էթե, իհարկե, հավատանք էրատոսթենեսին, Դեմետրիոս Փալերացուն և կատակերգություններ հորինողներին։ էրատոսթենեսը, օրինակ պնդում է թե ելույթների ժամանակ նա հաճախ կարծես թե բռնվում էր բարոսական մոլեգ նությամբ։ Դեմետրիոսը պատմում է, թե ինչպես մի անգամ դիմելով ժողովրդին՝ նա ասես թե աստվածությամբ համակված էրդումի սովորական խոսքերն արտասանեց շափածո

Երվո մ եմ հոլով երդո մ եմ գետերի ջրերով —

ի կ կատակերգակներից մեկը յրան անլանում է «առձեռնախոս» մի ուրիշն էլ ծաղրելով նրա մոլությունը հակադրությունի հանդեպ այսպես է ասում

Նա «չէր սուսցել դա իբրև ընծա» այլ «իբենը ՚եռ վերադարձրեց Դեմոսթենեսին այս խոսքը անշուշտ դուր կգար անշափ»

Ասենք, երգվում եմ Զևսով, Անտիփանեսի այս կատակը, ըստ երևույթին, վերաբերում է միայն Հալոննեսի մասին ասված ճառին, որտեղ Դեմոսթենեսը Լաթենացիներին խորհուրդ է տալիս կղզին «չընդունել» որպես Իվեր Փիլիպոսից, այլ «վերադարձնել» այն որպես իրենց սեփականը

X Եվ այնուամենայնիվ, Դեմադեսը հենվելով միայն քանքարի ուժի լրա ըստ ընդհանուր գնահատության, անպարտելի է եղել և հանդես գալով առանց նախապատրաստության, ակնհայտորեն գերազանցել է Դեմոսթենեսին՝ նրա լավ մտածված ու սերտած ճառերով հանդերձ Այսպես, Արիստոն Քիոսացին բերում է Թեոփրաստեսի ասույթները այդ հռետորների մասին: Այն հարցին, թե նրա կարծիքով ինչպիսի՞ն է Իեմոսթենեսը որպես հռետոր, նա պատասխանել է «Արժանի է իր քաղաքին», իսկ Դեմադեսը՝ «Գերազանցում է իր քաղաքին»: Նույն այս փիլիսոփան հազորդում է որ Պոլիեքստես Սփետտիացին՝ Աթենքի այն ժամանակվա նշանավոր պետական գործիչներից մեկը մեծադույն հռետոր էր համարում Դեմոսթենեսին, բայց ամենահզորը նրա կարծիքով Փոկիոնն էր որովհետև նվազագույն քանակի բառերով սա արտահայտում էր մտքի առավելագույն հարստություն: Դեմոսթենեսն ինքն էլ ամեն անգամ, երբ Փոկիոնը հռետորական բարձունքն էր ելնում, որպիսով հանդես գար առարկություններով, դիմելով բարեկամներին՝ ասում էր «Ահա այն՝ իմ ճառերի սարսափը»: Ծիշտն ասած այնքան էլ պարզ չէ ինչի՞ց էր, իսկապես, երկյուղում Դեմոսթենեսը նրա պերճախոսության ուժի՞ց, թե՞ ապրելակերպից ու անրասիր հեղինակությունից հասկանալով, որ վստահություն վայելող այդ մարդու մի բառը գլխի մի շարժումն իսկ աղվելի կշիռ ունի, քան մեծաքանակ ընդարձակ պարբերությունները:

XI Իլ ֆիզիկական թերությունները իա ջանում էր հաղթահարել վարժություններով որոնց մասին պատմում է Դեմետրիոս Փալերացին, հավատացնելով, թե այդ մասին լսել է իրենից Դեմոսթենեսից, որն արդեն զառամյալ ծերունի է եղել: Անպարզահունչ, շշախոս արտասանությունը Դեմոսթենեսը փորձում էր ուղղել նրանով որ բերանը մանր քաբեր զցած՝ ջանում էր պարզ ու որոշակի կարգալ հատվածներ բանաստեղծներից ձայնն ամրացնում էր նրանով, որ խոսում էր վազելիս կամ, սար բարձրանալիս, առանց շունչ առնելու, արտասանում էր ոտանավորների կամ ինչ-որ երկար դարձվածքներ: Տանը նա մեծ հայելի ուներ որի առաջ կանգնած՝ վարժվում էր արտասանության մեջ: Պատմում են որ մի անգամ Դեմոսթենեսի մոտ է եկել մի մարդ և խնդրել դատարանում հանդես գալ իր պաշտպանությամբ, պատմելով, թե ինչպես թունդ ծեծել էն իրեն: «Թույց դո սխալ ոչնչով չես տուժել դրանից», ասել է

նրան Դեմոսթենեսը «Այդ ե՞ս ոչնչով չեմ տուժել», — բղավել է այդ մար-
 դը ձայնով մեկ: «Ա՛յ հիմա, — պատասխանել է նա, — երդվում եմ Զե-
 սով, ես լսում եմ վիրավորվածի և տուժածի ձայն»: Ահա թե բառերին
 որքան համողչականություն են տալիս մտածում էր նա, կատարման
 տոնն ու եղանակը: Նրա կատարումը ունկնդիրների մեծ մասին հիաց
 մունք էր պատճառո մ բայց նրբին գիտակները, ի թիվս դրանց և՛ Դե
 մետրիոս Փալերացին դա համարում էին խղճուկ, տափակ և անարտա
 հայտիչ, էսիոնն էլ, ինչպես հաղորդում է Հերմիպոսը, երբ նրան հարց
 րել են հին և իրեն ժամանակակից հետաորների մասին պատասխանել
 է որ եթե հաջողվեր լսել հներին, անհնար կլիներ շղարմանալ-չապշել,
 թե ինչպե՞ս ճարտար ու հանդիսավոր էին նրանք խոսում ժողովրդի հետ,
 բայց Դեմոսթենեսի ճառերը էթե դրանք կարգանք, անհամեմատ ավելի
 լավ են հարդարված և աչքի են ընկնում առավել մեծ ուժով նրա ճառե
 րը գրավոր տեսքով ի նչ ասել կուզի, խիստ շոր են ու կտրուկ, բայց
 պատահական պատասխաններում էլ նա կարողանում էր թունդ խայթել:
 Դեմադեսը մի անգամ բացականշել է. «Ինձ ուսուցանում է, և ո՞վ, Դե-
 մոսթենե՛սը խոզը Աթենասի՛ն»: «Հենց այդ Աթենասին — պատասխա
 նել է նա, — երեկ չէ մյուս օրը Կոլլիտոնում բռնել են անառակ դործի վրա»: Սրբ
 Պղնձագրամ (Քալքոս) մականունով հայտնի գողն էլ էր փորձում
 ինչ-որ սրամտել նրա անքուն գիշերների ո լամպի լույսի տակ կատար-
 վող աշխատանքի վերաբերյալ — «Գիտե մ գիտե՛մ — ասաց Դեմոսթե
 նեսը, — քեզ վշտացնում է, որ իմ լուսատուն վառվում է գիշերները: Բայց
 դո՛ւք, Աթենքի՛ քաղաքացիներ, մի՛ զարմացեք այստեղ տեղի ունեցող
 գողութունների վրա մեր գողերն ախր, պղնձից են, իսկ պատերը՝ կա-
 վաշեն»: Այստեղ, թերևս մենք կանգ առնենք, թեև դեռ շատ այս կար
 դի բաներ կարելի էր պատմել: Հիմա նրա բարքն ու բնավորության գծե
 րը կարելի է քննարկել մյուս կողմից նրա արարքների ու պետական գոր-
 ծունեության

XII Ես պետական գործերին սկսեց մասնակցել Փոկիսյան պատե
 րազմն սկսվելուց անմիջապես հետո ինչպես որ ինքն է հաստատում և
 ինչպես կարելի է էգրակացնել Փիլիպոսի դեմ արտասանած նրա ճառե
 րից, որոնցից մի քանիսն արդին գրված են այն բանից հետո, երբ փո
 կեյացիների հաշիվը մաքրված էր, մյուսներն էլ՝ ամենավաղերը, վերա
 բերում են անմիջականորեն դրա հետ կապված իրադարձություններին
 Բացի այդ, երբ նա պատրաստվում էր մեղադրանքով հանդես գալ ընդ
 գեմ Միդիոսի նա ընդամենը երեսուներկու տարեկան էր, և պարզ է, որ
 որպես պետական գործիչ այն ժամանակ նա դեռ չէր կշիռ ուներ, ու

ազդեցութիւն: Հենց դրանից էլ ինձ թվում է, երկյուզում էր նա ուստի
և որոշեց այդ մարդուց դրամ ընդունել և վերջ տալ նրա հետ թշնա
մանքին

բանդի հելաբարո մարդ չէր նա և ոչ էլ փափկասիրո

այլ վճռական և իրեն պաշտպանել կարողացող Տեսնելով ոչ տապա
լել Միդիոսին մի մարդու, որը հուսալիորեն սյաշտպանված է հարստու
թյամբ, պերճախոսությամբ, մեծ կապերով — հասարակ բան չէ և ուժից
վեր է նույնիսկ — նա դիջեց նրանց, ովքեր խնդրում էին Միդիոսի հա
մար իսկ երեք հաշար դրախմր ինքնին, ինձ թվում է, չէր մեղմի Դե
մոսթենեսի զայրույթը, եթե սա հույս ունենար և կարողանար շահել գոր
ծը: Իր պետական գործունեության առարկան ընտրելով գեղեցիկ մի
գործ հելլենների պաշտպանութիւնն ընդդէմ Փիլիպոսի, և պատվով գոր
ծելով այդ ասպարեզում՝ նա արագորեն փառք վաստակեց և այնքան
մեծ հռչակ ձեռք բերեց իր պերճախոսությամբ ու ուղղամտությամբ որ
ողջ Հելլադան հիանում էր նրանով՝ նրա բարյացակամութիւնն էր հայ
ցում մեծ արքան, իսկ Փիլիպոս ի արքունիքում հետտորներից չ մեկի
հետ այսպես հաշվի չէին նսւում, ինչպես նրա, և նույնիսկ նրա թշնա
միները խոստովանում էին, որ գործ ունեն արժանավոր հակառակորդը
հետ: Գոնե այգպես են խոստ մ նրա մասին իրենց մեղազական ճառերում
է քիւնեսն ու Հիպերիդեսը

XIII Եվ ես չեմ հասկանում այդ ինչի՞ց է որ Թեոպոմպոսի խել
քին փշլլ էր պւղկու թե նա, լբլ աչքի էր ընկնում իր անկայունու
թյամբ և ընդունակ չէլ երկար ժամանակ պահպանել հավատարմութիւ
նը միևնույն գործին միևնույն մարդկանց հանդեպ: Ախր միանգամայն
պարզ է որ նա մինչև վերջ հավատարիմ մտայ քաղաքական այն ուղ
ղությանը, որն ընտրել էր սկզբում, որ նա ոչ միայն չէր փոփոխում իր
համոզմունքները ողջ կյանքի ընթացքո մ այլև հէնց կյանքը ղոհաբե
րեց, որպեսզի լղավաճաներ դրանց: Նա այնպիսին չի եղել, ինչպիսին
Դեմադեսն էր, որը արդարացնելով իր կարծիքների փոփոխութիւնները
ասում էր, թե ինքն իրեն հակասում է, իսկ պետութեանը՝ երբեք, կամ
ինչպես Մելանոպոսը որը հանդես էր գալիս ընդդէմ Կալլիստրատեսի
բայց մի քանի անգամ կաշառվելով նրանից՝ հրաժարվել է իր առաջար
կութիւններից և նման դեպքերում սովորաբար ասում էր ժողովրդին
«Այս մարդն իմ թշնամին է՝ բայց թող հաղթանակի պետութեան բարո
րութիւնը, կամ թե ինչպես մեաննացի Եկոդեմոսը որն սկզբում պաշտ
պանում էր Կասսանդրոսի շահերը իսկ սպա չեովէց Դեմետրիոսի կող

Լը, ասելով, թե գրանով ինքը դավաճանութիւն չի կատարում, որովհետեւ միշտ օգտակար է ծառայել ո ժեղագույնին՝ Ո՛չ, երբեք ո՛չ խորով, ո ՛չ գործով Դեմոսթենեսը իր ասածը շուտ չի տվել և չի շեղվել նըշված ուղուց ոչ, ընդհակառակը ասեա թե մեկ, անփոփոխ երաժշտական բանասիր էլ Ենչում նրա պետական ողջ գործունեութիւնը մշտականութեւն լարված միեւնույն տոնացնության վրա Փիլիսոփա Պանետիոսը կարոտում է, թե նրա ճառերն էլ մեծ մասամբ սերթափանցված են այն մըտլով թե բարոյապես գեղեցիկը, — և միայն դա — արժանի է գերադասության: Այդպիսիք են «Պսակի մասին» (Ընդդեմ Արիստոկրատեսի», Լանուն Վեղադրանքներից ազատագրման», Փիլիպիկներ» ճառերը, որոնցում նա համարադարացիներին եոչ է անում ոչ թէ այն բանին, ինչը ամենից հաճելի է, կամ ավելի հեշտ կամ շահավետ, այլ, ընդհակառակը՝ բազմիցս արտահայտվում է ան խմաստով, որ նույնիսկ սեփական անլտանգութիւնն ու բարեկեցութիւնը նրանք պետք է Լրկրորդ տեղը դնեն՝ լարոյապես գեղեցիկից և արժանավորից հետո: Ել եթե իր մտադրութիւնների բարձրովմասը ու ճառերի ազնվությանը նա հավելէր նաև սազմական արիութիւնն ու լիակատար անշահախնդրութիւնն, ապա պատիվ կունենար զրվելու միեւնույն շարքում ոչ թե իրեն ժամանակակից հետորներ Մերոկեսի, Պոլիեկտեսի ու Հիպերիդիսի Ըտ ալև առավել հների՝ Կիմոնի Թուկիդիդեսի և Պերիկլեսի:

XIV Եվ իրօք, նրա ժամանակակիցներից Լոկիոնը, թեև կշոամբանք էլ էր հարուցում որպես պետական գործիչ, որովհետև համարվում էր Մակեդոնիայի կողմնակից սակայն արիությամբ ու արդարամտությամբ ըստ ընդհանուր գնահատության, ոչնչով չէր գիջում էֆիալտեսին, Արիստիդեսին ու Կիմոնին: Դեմոսթենեսն էլ որը ռազմական գէնքուզրահով աչքի էր ընկնում), բնապես Դեմետրիոսն է արտահայտվում և կաշառքի նկատմամբ էլ լիովին անբասիր չէր (Մակեդոնիայի Փիլիպոսի կողմից եկող հնչուն դրամի հասցեպ նա անմատչելի էր բայց ահա արևելյան ոսկու Եկբատանից ու Սուդայից Եկող հեղեղին նա չէր դիմանում թույլ տալով որ այն ամբողջովին խեղդի իրեն), հույժ ճարտարորեն կարողանում էր գովաբանել նախնիների առաքինութիւնները բայց ինքը նրանց այնքան էլ լավ չէր նմանվում Եվ այնուամենայնիվ, իրեն ժամանակակից հետորներին — միայն Փոկիոնին եմ բացառութիւն անում, — նույնիսկ մասնավոր կյանքում նա շատ էր հետ թողնում Պարզ է և այն որ ժողովրդի հետ նա խոսում էր ավելի համարձակ ու անկեղծ քան ուրիշ որևէ մեկը, դիմազրելով ամբոխի քմահաճույքներին և ուղղակի պինդ կառչելով նրա վրիպումներից ու մոլութիւններից զա

նրա ճառերից է երևում: Թեոպոմպոսը պատմում է թե ինչպես մի անգամ աթենացիները պահանջում էին, որ նա իր վրա վերցնեք ինչ-որ գատական գործի մեղադրողի դերը, բայց նա հրաժարվեց, իսկ երբ նրանք վրդովված ազմկեցին, վեր կացավ ու արտասանեց այսպիսի խոսքեր. «Ձեզ համար քաղաքացի աթենացիներ, ես միջոտ խորհրդատու կլինեմ, նույնիսկ եթե դուք ու շուղենար էլ բայց ամբաստանել՝ ոչ մի դեպքում, նույնիսկ եթե դուք դա ուղենար»։ Նա իրեն որպես ազնվականության ծայրահեղ կողմնակից ցույց տվեց նաև Անտիփոնտեսի գործում թևե ժողովը Անտիփոնտեսին արդարացրեց, սակայն Դեմոսթենեսը նրան կալանքի վերցրեց, դատի տվեց Արեոպագոսին և հաշվի շառնելով, որ ժողովրդին վիրավորանք է հասցնում ապացուցեց որ ամբաստանյալը Փիլիպոսին խոստացել է հրկիզել նավաշինարանները, որից հետո մեղադրյալը Արեոպագոսի որոշմամբ մահապատժի ենթարկվեց: Նա դատի տվեց նաև քրմուհի Թեորիդեին նրան մեղադրելով, բազում պիղծ գործողությունների հետ միասին, նաև այն բանում որ ստրուկներին սովորեցնում էր տերերին խաբելու արվեստը և նրա համալ պահանջելով մահվան դատավճիռ՝ հասավ դրան

XV. Ասում են, Տիմոթևոսը զորավարի դեմ արտասանած ճառն էլ որքի շնորհիվ Ապոլլոգորոսը դատարանի միջոցով զանձեց իր պարտքը Դեմոսթենեսին էք գրել Ապոլլոգորոսի համար, ինչպես և Փորմիոնի ու Ստեփաննոսի դեմ գրված ճառերը, որոնց համար արժանացավ տեղին հանդիմանությունների: Չէ՞ որ Փորմիոնն էլ էր Ապոլլոգորոսի դեմ հանգես գալիս Դեմոսթենեսի կողմից կազմված ճառով, որն ուղղակի ճալ պիկ շարչու նման զենքի միևնույն կրպակից դաշույններ էր վաճառում երկու թշնամական կողմերի համար Պետական գործերին վերաբերող ճառերից Անդրոտիոնի, Տիմոկրատեսի և Արիստոկրատեսի դեմ եղած ճառերը նա գրել է ուրիշների համար, որովհետև այն Լամանակ Գա դե շէր սկսել պետական գործունեությունը: Ենթադրում են թե նա դեռ քսանյոթ կամ քսանութ տարեկան է եղել, երբ հրապարակել է դրանք: Իսկ ահա Արիստոգիտոսի դեմ գրածը նա ինքն է արտասանել այնպես ինչպես նաև «Պարհակից ազատվելու մասին» ճառը, որով հանդես եկավ հանուն Քաբրիս Կտեսիպպոսի որդու, ինչպես նա ինքն է հավատացնում կամ, ինչպես ոմանք ենթադրում են, նրա համար, որ սիրահատում էր այդ երիտասարդի մորը Ասենք, նրանց ամուսնությունը այդպես էլ չկայացավ այլ նա ամուսնացավ սամոսացի մի կնոջ հետ, ինչպես հաղորդում է Դեմետրիոս Մագնեսիացին «Անվանակիցների մասին» երկում: Ինչ վերաբերում է էսքիսեսի դեմ գրված «Հանցալի դեսպանության մա

ոին» ճատին, տպա անհայտ է, արտասանված է դա ընդհանրապես, թե՛
ուչ Իդոմենևսը պնդում է, թե էսքինեսն արդարացվել է ընդամենը երե-
սուն ձայնի առավելությամբ բայց դժվար թե դա այդպես եղած լինի,
եթե դատելու լինենք, քոտ «Պսակի մասին» երկու հակառակորդների ճա-
ռերի լ՛ սր ս լ մեկը, ոչ էլ մյուսը չի հիշատակում իր գծությունը
այնպիսի արտահայտություններով, որոնցից պարզ լիներ, թե գործը հա-
սել է միևնույն գատարան: Սակայն այդ մասին որիշներն ինձնից ավելի
լավ կգտան:

XVI Դեմոսթենեսի քաղաքական համոզմունքները լրիվ հատակու-
թյամբ դիտարկեցին դեռ խաղաղ ժամանակ, որովհետև մակեդոնացի
խուզավորի ոչ մի գործողություն նա չէր թողնում առանց հարձակում-
ների, այլ, ընդհակառակը, նրա յուրաքանչյուր քայլը օգտագործում էր,
ուրպեսզի վրդովեցնէր աթենացիներին և նրանց մեջ առելություն բոր-
բորքեր այդ մարդու նկատմամբ: Դրա համար էլ Փիլիպոսի արքունիքում
ուչ սքի հետ այնպես հաշվի չէին նստում, ինչպես նրա հետ և երբ տաս-
հոգանոց դեսպանության կազմում նա ժամանեց Մակեդոնիա, Փիլիպո-
սը ունկնդրեց նրանց բոլորին բայց պատասխանելիս առարկում էր ամե-
նից առաջ Դեմոսթենեսին: Ճիշտ է, մնացած ղեպքերում նա Դեմոսթենե-
սի հանդեպ իրեն նվաճում էր ավելի պակաս քաղաքավարի, իսկ ուշա-
դրության նշաններ էր ցուցաբերում գլխավորապես էսքինեսի և Փիլոկրա-
տեսի նկատմամբ: Ուստի երբ նրանք գովեստներ էին շուսյում Փիլիպո-
սի հասցեին, որ նա իբր թե, և խոսելու վարպետ է, և՛ ինքն է լավը,
և — տեսնում է Ջևսը — բարեկամների հետ խմելու մեջ էլ՝ հմուտ Դե-
մոսթենեսը նախանձից դրդված՝ խայթեց թե, իբր, առաջինը լավ է սո-
փեստի համար, երկրորդը՝ կանանց երրորդը՝ սպունգի համար, բայց
պրքայի համար գովելի չէ գրանցից ոչ մեկը:

XVII. Երբ պատերազմն անխուսափելի էր դարձել, երբ Փիլիպոսն
էլ այլևս չէր կարող շարժել և աթենացիները, Դեմոսթենեսի հրահրմամբ,
ավելի էին գազազել, նա իբրև սկիզբ համաքաղաքացիներին կոչ արեց
արշավանրի ելնել էվրեայի դեմ, որը Փիլիպոսն ստրկացրել էր իր բարե-
կամ բռնապետների միջոցով: Հենց նա առաջարկություն մտցրեց, որին
հետևելով՝ աթենացիները նավեցին անցան կղզին և այն մաքրեցին մա-
կեդոնացիներից: Այնուհետև երբ Մակեդոնիայի արքան պատերազմ
կսեց Բյուզանդիոնի և Պերինթոսի դեմ, Դեմոսթենեսը հանդես եկավ
ի պաշտպանություն նրանց, ժողովրդին համոզելով թշնամանք լտածել
նրանց նկատմամբ, մոռանալ Դաշնակցային պատերազմի հետ կապ
լ լծ նրանց հանցանքը և զորք ուղարկել օգնության, որի շնորհիվ երկու

քաղաքներն էլ ազատվեցին Այնուհետև, որպես դեսպան շրջազայելով քաղաքից քաղաք և բոցավառ ճառեր արտասանելով՝ համարյա բոլոր հելլեններին նա ներգրավեց դաշինքի մեջ ընդդեմ Փիլիպոսի, այնպես որ քաղաքացիական աշխարհագորից զատ, հաջողվեց հավաքագրել տասներհինգ հազար հեծյալ, ընդ որում այդ վարձկաններին վճարելու դրամը մուծեցին հաճությամբ և անառարկելիորեն: Հենց այդ ժամանակ տեղի ունեցավ մի դեպք, որի մասին պատմում է Թեոփրաստեսը դաշնակիցները պահանջեցին սահմանել իրենց մուծումների ճշգրիտ շափերը, ինչին Կրոբիլոսը՝ աթենացի հռետորը պատասխանեց «Մթերաբաժնով պատերազմին չես կերակրի»: Ամբողջ Հելլադան, շունչը պահած հետևում էր, թե ինչպես են ծավալվելու իրադարձությունները, ու թեև դաշինքին արդեն միացել էին շատ ժողովուրդներ և քաղաքներ՝ Էվբեացիները, աքայացիները կորնթացիները մեգարացիները, լևկադիացիներն ու կերկիրացիները Դեմոսթենեսի համար ամենադժվարին փորձությունն առջևում էր նա դեռ պիտի պաշինքի մեջ ներգրավել թեբեսցիներին, որոնք բնակվում էին այն երկրում որն անմիջականորեն սահմանակից էր Ատտիկային և իրապետում էին վիթխարի ուղղմական հզորության և ուղղմական առումով այն ժամանակ շունչին իրենց հավասարը հելլենների մեջ: Հեշտ չէր փոխել թեբեսցիների տրամադրությունը, որոնց վերջերս Փիլիպոսն իր կողմն էր տրամադրել Փոկիդյան պատերազմի ընթացքում ցուցաբերած իր ծառայություններով, բայց դրան ամենից շատ խոչընդոտում էին սահմանային վեճերը որոնք մշտապես ուղղմական բախումների էին հանգեցնում երկու քաղաքներին:

XVIII Զնայած դրան երբ Փիլիպոսը, Ամփիսի մոտ ունեցած իր հաջողությամբ հպարտ, հանկարծակի հարվածով զավթեց էլատեան ու գրավեց Փոկիդեն երբ աթենացիներն այնքան էին գլուխները կորցրել և ընկճվել վախից, որ նրանցից ոչ ոք սիրտ չէր անում ելնել հռետորական րարձունքը շփոթենալով թե ինչ առաջարկեր, — Համբողջանուր այդ խառնակության ու լռության մեջ միայն Դեմոսթենեսը հասցես եկավ առաջարկելով կանխապես թեբեսցիների կողմից իրենց պաշտպանությունն ապահովել: Քաջալերելով ինչպես նա սովորաբար անում էր և հույսով ոգևորելով ժողովրդին՝ ինքն էլ սյուսների հետ ուղարկվեց Թեբե որպես դեսպան: Բայց Փիլիպոսն էլ, որպեսզի իրանզարեթ աթենական գեսպանությանը, այնտեղ ուղարկեց, ինչպես Մարսիասն է հազորդում, մակեդոնացի Ամինտասին և Կլեարքոսին, թեսալացի Դաոքոսին ու Թրասիդեոսին: Թե ինչու՞մ էր կայանում նրանց շահը, իրենց՝ թեբեսցիների համար պարզ էր բայց նրանցից յուրաքանչյուրի մեջ թարմ էր պատե-

ր, և նրա սարսափների հիշողությունը, և դեռ բուժված չէին փոկիզա
պիւնների վերքերը: Մակայն Դեմոսթենեսի ճարտարախոսություն ուժը, Թեո-
պոմպոսի ասելով լոցավառեց նրանց ոգին, բորբոքեց փառասիրությու-
նը և մյուս բոլոր նկատառումները այնպես խամբեցրեց, որ նրանք մո-
ռանալով և վախ և՛ զգուշություն և երախտապարտություն, աստվա-
ծային մոլեգնության պոռթկումով նետվեցին՝ հանուն արիության ու
պատվի: Այնպիսի անզիմազրելի սպալորություն գործեց ամենքի վրա
հեռաորի այդ սխչանքը որ Փիլիպոսը տեղնուտեղը բանբիրներ ուղար-
կեց խաղաղության դաշինք կնքելու խնդրանքով, և ողջ Հելլադան միա-
համուռ սաքի կանգնեց՝ հույսով նայելով ապագային իսկ Դեմոսթենե-
սին հնազանդվեցին, կատարելով նրա ցուցումները, շ միայն ստրատ
դոսները, այլև բևոտարքոսները, իսկ թեբեացիների ժողովրդական ժողո-
վում նա այն ժամանակ գլխավորում էր ոչ պակաս շահով, քան ամենա
կանում և թե սրանց թե՛ նրանց սիրով շրջապատված՝ միանձնյա կս-
ռավարում էր նա՝ ոչնչով չխախտելով արդարությունը, շնայած իր բար-
ձր զիրքին, այլև, ընդհակառակը ինչպես Թեոպոմպոսն է վկայում, վե-
րի՛ս աստիճանի անբասիր կերպով:

XIX Բայց երևում է, անխուսափելի ճակատադիրը ինքն էր ընտ
լել այդ ակնթարթը իրադարձությունների շրջապատույտում, սրպեսզի
վերջ դներ Հելլադայի ազատությանը և դիմագրելով Դեմոսթենեսի
ջանքերին, բազում շարաքաստիկ նախանշաններով կանխագո շակում էր
ապագան սահմակեցուցիչ մարդարեություններ էր բարբառում Պիթյան,
և շատերն էին հիշում Սիբիլայի հին պատգամախոսո թյունը:

Երանլ թե կարողանայի խո սափել կոտորածից Թերմ գոնտեսլ ա իերլն՝
որպեսզի նայեի դրան, ինչպես արծիվը՝ ամպածրար բարձունքներից:
Ողբ ո հեկեկամք են սպասո ՚ պալ ովածներին բայց մահ՝ հաղթաներլ՛

Թերմոդոնտեսը, ինչպես հաստատում են մանք, մի փոքրիկ գ տակ է
մեզ մոտ Քերոնեսայի մոտերքո մ և Կեփիսոսի մեջ է թափվում Մենք,
սակայն, չպիտենք ոչ մի վտակ, ոյ հիմա այդպիսի անուն ունենա և այդ
պատճառով էլ ենթադրում ենք թե Թերմոդոնտես են անվանել այն ժա-
մանակ մի գետակի, որը հիմա կոչվում է Հեմոն շե՞ ոը սա հոսում է
Հերակլեսի տաճարի մոտով այն վայրով, որտեղ հելլեններն իրենց ճամ-
լարն էին դրել, և դրանից մենք եզրակացնում ենք, թե ճակատամար-
տից հետո գետն այնքան է լցված եղել արյունով ու դիակներով, որ նախ
կինի փոխարեն այս անունն է ստացել: Դուրիսը սակայն, հավատաց-
նում է թե Թերմոդոնտեսը ընդհանրապես գետ չէ այլ որ իբր, վրան

զարկելիս և դրա համար հող փորելիս՝ մեկը մի քաբե արձանիկ է հայտնարեբել, որը ինչպես ասված է եղել վրան արված մակագրութեան մեջ, պատկերել է Թերմոդոնտեսին՝ վիրավոր ամազոնուհուն ձեռքերի վրա պահած: Բայց այս կապակցութեամբ, ասում են, հիշել են մի այլ պատգամախոսութուն, որն ասում էր

Այստե՛ղ՝ Թերմոդոնտեսի ափերէն սպասիր ճակատամարտի շարագույժ թռչո՛ւն
Քեզ շատ ավար է հասնելու մարդկային մարմնի:

XX Այնպես որ, դատել, թե գործն ինչպես է եղել իրականում, հեշտ բան չէ: Այնինչ Դեմոսթենեսը հելլենական զենքի նկատմամբ հույսով լեցուն, ոգեշնչված թշնամուն համարձակորեն մարտակոչ նետող այգքան քաջերի խիզախութեամբ ու եռանդով, հորդորում էր ուշադրութուն շարձնել պատգամախոսների վրա և շանսալ գուշակութուն ներին, իսկ Պիթյային նույնիսկ մեղադրում էր Փիլիպոսի հետ խոսքը մեկ արած լինելու մեջ: Թեբեացիներին նա մատնացույց էր անում էպամինոնդասին և աթենացիներին՝ Պերիկլեսին, որոնք նման բաները համարում էին սոսկ որպես վախկոտութեան վայելուչ արգարացումներ իսկ միշտ ղեկավարվում էին միայն առողջ բանականութեամբ: Ընդհուպ այս ժամանակամիջոցը Դեմոսթենեսն իրեն պահում էր որպես քաջարի մարդ, իսկ ահա ճակատամարտում ոչ մի արիութուն, ո՛չ մի բան, որ համապատասխաներ իր ճառերին, նա շղթակորեց, այլ, ընդհակառակը ամոթալիորեն լքեց իր տեղը շարքում և փախավ՝ նետելով զենքը, նույնիսկ շամաչելով, Պիթեասի խոսքով աւած, իր վահասի մակագրութեանից որտեղ ոսկե տառերով գրված է եղել «Բարի հաջողութուն»: Իսկ Փիլիպոսն էլ դե, հաղթանակ տանելով, այնպիսի կատաղի հրճվանքի մեջ ընկավ, որ ուղղակի գինարբուքի տեղից մեկնեց ճակատամարտի գաշտ, որտեղ գնում-գալիս էր դիակների միջով՝ երգելով Դեմոսթենեսի օրինագծի սկզբնական բառերը դիանք տների վերածելով և ոտքը տակտով գետին խփելով

Դեմոսթենեսը որդին Դեմոսթենեսի հիմներգոն առաջարկեց

Սթափվելով, սակայն, և գիտակցելով իրեն սպառնացած վտանգի ամբողջ մեծութունը՝ Փիլիպոսը սարսափեց հռետորի ձիրքից ու զորութունից, որը իրեն՝ Փիլիպոսին ստիպել էր օրվա ինչ-որ մի շնչին մասում խաղաթղթի վրտ դնել ոչ միայն իր իշխանութունը, այլև կյանքն իսկ: Այդ մասին լուրերը հասան նաև պարսից արքային, և նա իր ծովամերձ մարզերի սատրապներին նամակ ուղարկեց՝ հրամայելով գրամ մատա-

կարարել Գեմոսթենեսին և բոլոր հեղինակներից ամենից շատ նրան ուշադրութեան արժանացնել որպէս մի մարդու, որն ընդունակ է շեղել Մակեդոնիայի արքայի ուշադրութիւնը արևելքից և նրան պահել Հելլադայում տեղի ունեցող հուզումների վրա: Այդ բոլորի մասին հայտնի դարձաւ հետագայում շնորհիւ Ալեքսանդրի, որը Սարդեսում հայանաբերեց Գեմոսթենեսի նամակները և արքայի զորավարների զեկուցագրերը, որ սկզբնապէս մատնանշված էին նրան հանձնված գումարները:

XXI Իսկ այն ժամանակ, օգտվելով հեղինակների գլխին եկած զրոյացումներից, Գեմոսթենեսին թշնամի հոգեւորները շտապեցին նրան ցելսը կոխել՝ մեղադրելով պետական հասցազորութիւնների և պաշտօնական պարտականութիւնների անբարեխիղճ կատարման մեջ: Ժողովուրդն էլ ոչ միայն ազատեց նրան այդ մեղադրանքներից, այլև շարունակեց այնուհետև ևս ամեն կարգի պատիվներ տալ նրան, հրավիրելով, որպէս հուսալի մարդու, բարձրագոյն պաշտոնների, և նույնիսկ հանձնարարեց նրան, երբ Քերոնեայի մոտից բերվեցին զոհվածների աճյունները, գովասանքի խոսք ասել այդ մարդկանց մասին: Ժողովուրդը ոչ թէ փոքրօգաբար և վհատութեամբ էր տանում տեղի ունեցածը, ինչպէս վերամբարձորեն պատմում է Թեոպոմպոսը այլ, ընդհակառակը՝ մեծարելով իր խորհրդատուին ցույց էր տալիս, որ չի ափսոսում ընդունված որոշման համար: Գովասանքի խոսքը Գեմոսթենեսին արտասանեց, բայց սարսափելով իր շարաքաստիկ ճակատագրից և շար սուր օրինագծերն այնուհետև մտցնում էր ոչ թէ իր անունից, այլ՝ այս կամ այն բարեկամի, մինչև որ վերջապէս նորից սրտապնդվեց Փիլիպոսի մահվան կապակցութեամբ: Իսկ Փիլիպոսը զոհվեց Քերոնեայի մոտ ունեցած իր հաջողութիւնից՝ անմիջապէս հետո, երկար շվայելելով այն: Հենց դա էլ ըստ երևույթին, կանխագուշակել պատգամախոսը վերջին տողում:

Ողբ ո հեկեկանք է սպասվում պարտվածներին բաց Լահ հաղթողներին

XVII Այն մասին, թէ վախճասվել է Փիլիպոսը, Գեմոսթենեսին լուր տվեցին դադտնարար, և որպէսզի առաջինը համաքաղաքացիներին հավատ ներշնչեր ապագայի նկատմամբ նա զվարթ դեմքով ներկայացավ Խորհուրդ և հաղորդեց, թէ տեսել է մի Լրագ, որը աթենացիներին ազատում է մեծ բարիք, իսկ շուտով ժամանեցին և սուրհանդակները՝ բերելով Փիլիպոսի մահվան լուրը: Բերկրալի լուրը ժողովուրդը որոշեց տուր և և հանդիսավոր զոհաբերութիւններով իսկ Պավսանիասին պարգևատրել պսակով Գեմոսթենեսի սեր այդ դեպքի, մարդկանց մեջ կրեվաց ձյունաձերմակ թիկնոցով, գլխին՝ պսակ, թեև լոթ օր էլ չէր անցել:

իս դատեր մահից, ինչպես էսքինեսն է ասում, դրա համար խիստ անարգանքի ենթարկելով նրան և նրա նկատմամբ մեղադրանք հարուցելով սեփական երեխային ատելու մեջ, բայց եթե վշտի ու ողբի մեջ էսքինեսը տեսնում է քնքշորեն սիրող ազնիվ հոգու հատկանիշներ, իսկ ինքնատիրապետումը և այդքան ծանր կորուստը զույգ կերպով տանելու կարողությունը մերժում որպես անպետք մի բան ապա դրանով ցույց է տալիս միայն, թե նա ինքը որքան է թույլ ու կամազուրկ ծն չէի ասի, թե լավ բան էր ասթենացիների կողմից իրենց վրա պսակներ առնելն ու զոհաբերություններ կատարելը արքայի մահվան առթիվ սրբ, հաղթանակ տանելով, նրանց պարտվածների հետ վարվել էր այնքան մեղմ ու մարդասիրաբար, դա դատապարտելի է և նույնիսկ ավելին ստոր մի բան կենդանի ժամանակ մեծարանքնիր տեղալ չաղաքացիություն ընծայել նրան, իսկ բռնի մահով զոհվելուց հետո շթաբցնելով ուրախությունը բացով տալ նրա մեռածին և երգել հաղթական հիմներ, այնպես ասես թե նրանք իրենց են կատարել սույն փառապանծ սիրանքը: Իսկ այն բանին որ Դեմոսթենեսը իր ընտանեկան վիշտը, արցունքները և լացուկոծը թողել է իբրև կանանց բաժին ինքն էլ վարվել է այնպես ինչպես օգտավետ է համարել պետությանը և հավանություն եմ տալիս և ենթադրում եմ որ իսկական մարդը առավել ևս պետական գործիչը պետք է միշտ ճշտի ընդհանուր բարօրությանը, իր անձնական հոգ սերից ու ապրումներից հրաժարվելով՝ հօգուտ հասարակականի, և իր ալ վարկը պետք է պահպանի շատ ավելի խստորեն, քան զերասանները արքաների ու բռնապետների դերերում, որոնք, ինչպես գիտենք, նույն պես ծիծաղում են ու լաց լինում բեմում ու թե ըստ իրենց տրամադրության այլ միայն այն դեպքերում, երբ դա պահանջում է թատերախաղի գործողությունը: Վերջապես, եթե մարդ գծրախտության մեջ ընդ հանրապես իրավունք ունի կարեկցության, էթի վշտակո՞ մարդուն և անմխիթարին անհրաժեշտ է հանգստացնել զրույցներով նրա մտքերը դարձնել ինչ-որ մի հաճելի բանի վրա այնպես ինչպես աչքի հիվանդությանը տառապողին խորհուրդ են տալիս հայացքը հեռացնել վառ, ճշացող բաներից, այլ նայել ավելի շատ դունատ, ազոտ ևրանգների վրա, ապա էլ ինչի՞ մեջ սլիտի ՚ա սփոփանք գտնի, եթե ոչ այն հաջողության, որը բաժին է հասել իր հայրենիքին, իր ընտանեկան հանգստանքները լուծելով համապետականների մեջ այնպես որ վատթարագույնը դառնա պակաս նկատելի՝ շնորհիվ լավագույնի Այս ամենը մեզ ասելու գրգեց ալն որ էսքինեսը որքան որ գիտենք իր խոսքերով շատերին է կարողացել սրտաշարժել ու հուզել լալու շափ

ԱՂԻՒՄ. Այլ միջոցին ինձոսթենեսի կողմից ոգևորված քաղաքները
 իր նորից համախմբվածի մեկ միություն մեջ: Նույնիսկ թեթևացիները
 Գեմոսթենեսի օգնությամբ զենք ճարելով, հարձակվեցին մակեդոնական
 կայսրի վրա և սշնչացրին դրա մեծ մասը, իսկ աթենացիները ցան
 կանալով հանդես գալ նրանց կողմում սկսեցին ռազմական պատրաս
 տություններ տեսնել Գեմոսթենեսը միանգամայն գերիշխում էլ հոս
 ս սրական լարձունքին: Նա նամականեր ուղարկեց Ասիա՝ արքայական
 պորտալտներին սաղրելով պատերազմ սկսել Ալեքսանդրի դեմ, որին
 արհամարհանքով երեխա էր անվանում և Մարգիտես: Բայց բավական էր,
 որ Ալեքսանդրը կարգի բերելով իր երկիրը՝ անձամբ գործով մտներ Բեով
 ախա, և ահա աթենացիների արիությունը ցնդեց ու Գեմոսթենեսի ավ
 յունը մարեց թեթևացիներն էլ նրանց կողմից դավաճանաբար լքված,
 առիպված Եզան մեն-մենապ մարտնչել և կործանեցին իրենց քաղաքը:
 Խուճապային սարսափը բռնեց աթենացիներին, և Գեմոսթենեսը ուրիշ-
 ների հետ միասին դեսպան ուղարկեց Ալեքսանդրի մոտ, բայց նրա
 դայրույթից վախենալով Կիթերոնից հետ դարձավ՝ այդպես էլ չկատա
 թելով իր դեսպանական պարտականությունները: Ալեքսանդրն այդ մի
 ջրցին անհապաղ սուրհանդակ ուղարկեց Սթենք պահանջելով հանձնել
 տասը պարագլուխների, ինչպես տեղեկացնում էն Իզոմեսը և Դուրի
 սը, կամ էլ, եթե հավատանք առավել բազմաթիվ և արժանահավատ հե
 գինականրի՝ ութին, որոնք էն՝ Գեմոսթենեսը, Պոլիսկիտասը Էֆիալտեսը
 Լիկուրգոսը Մերոկեսը, Գեմոնեսը, Եպրիսթենեսը և Քարիզիմոսը: Հենց
 այդ ժամանակ է, որ Գեմոսթենեսը մի առակ է պատմել ոչխարների
 մասին, որոնք շներին գայլերի ձեռքն են աալիս իրեն և իր կողմնակից
 ներին Լմանեցնելով շներին, որոնք պահպանում էն ժողովրդին, իսկ
 Ալեքսանդր Մակեդոնացուն անվանելով մայր գալլ: Եվ ավելացրել է
 «Մենք բոլորս գիտեինք թե ինչպես շարշիները սկուտղի վրա մի նմուշ
 ցորենի մի քանի հատիկ ցուցադրելով՝ գրանից վաճառում էն մի ամ
 բողջ լ՛ու սյդպես էլ դուք շք նկատում այն, որ հանձինս մեզ դուք
 ինքներդ ձեզ եք դավաճանում մենչև վերջին Լարդը»: Այսպես է պատ-
 ճում կատանդրիացի Արիստոբուլոսը: Եվ ահա աթենացիք սկսել են խոր
 հրդակցել շղիտենալով ինչ ձևնարկեն մինչև որ վերջապես Գեմադե
 սը հինգ տաղանդ ստանալով նրանցից որոնց հանձնմանն էր հետամը
 սում մակեդոնացի արքան համաձայնել է վերջինիս մոտ դեսպան գնալ
 րպեսզի խնդրեր այդ մարդկանց համար՝ կամ ի նկատի ունենալով իր
 լարեկամությունը նրա հետ, կամ էլ հույս ունենալով գտնել նրան, առ
 յուժի նման սպանություններից և արյունից հագեցած վիճակում: Ինչ

պես էլ Լզած լինի, Դեմագետն աղերսել է արքային ներել նրանց և սրան հաշտեցրել Բեմոսթենների հետ:

XXIV Ալեքսանդրի՝ Ասիա գնալուց հետո ամբողջ իշխանությունն անցավ Դեմագետի կողմնակիցների ձեռքը Դեմոսթենեսն էլ կորցրեց ամեն մի ազդեցություն, Հագիվ էր սկսվել Ագիսի շարժումը Սպարտայում, նա նորից ոտքի էր կանգնել, բայց շուտով ընկճվեց որովհետև Աթենքն Սպարտային շաջակցեց, Ագիսը զոհվեց, և լակեդեմոնացիներին գլխովին ջարդեցին: Վերջապես դատարանը քննեց Կտեսիփոնտոսի դեմ հարուցված մեղադրանքը դափնեպսակի գործով, որն առաջ էր քաշված գեռևս արխոնտ Քերոնդոսի օրոք Քերոնեայի ճակատամարտի նախօրյակին, և որն ամբողջ տասը տարի վճռի էր սպասում արխոնտ Արիստոփոնտոսի օրոք, և այս քաղաքական դատավարությունը նշանավոր դարձավ առավել քան ուրիշ որևէ մեկը՝ շնորհիվ և՛ հռետորների հռչակի, և դատավորների ազնվաբարոյության որոնք չհրաժարվեցին իրենց կարծիքից ի հաճույս Դեմոսթենեսին մեղադրողների, թեև նրանք այն ժամանակ օգտվում էին մակեդոնացիների վիթխարի ազդեցությունից, այլ, ընդ՝ակառակը նրան արդարացրին այնպես միահամուտ կերպով, որ Հսթինեսը չհավաքեց նույնիսկ ձայների մեկ հինգերորդը: Էսքինեսն իսկույննեթ հեռացավ քաղաքից և իր կյանքի մնացորդն անց կացրեց Հռոդոսում ու Հոնիայում այնտեղ դասավանդելով Լարտասանություն ու փիլիսոփայություն:

XXV. Իսկ շուտով Ասիայից Աթենք Լկավ Հարպալոսը որ փախչում էր Ալեքսանդրից գիտենալով, որ իր վրա ծանր մի հանցանք կա՝ խոշոր վատնումի ձևով և վախենալով արքայից ունգի բարեկամների հետ ավելի դաժան դատաստան էր տեսնում: Երբ Հարպալոսը գիմեց ժողովրդին՝ խնդրելով իրեն ապաստան տալ և հսնձնվեց նրա ողորմածությունը իր բոլոր գրամներով ու նավերով, շատ հռետորներ բաղձանքով նայելով այդ գանձերին՝ իրար խոսք կարելով սկսեցին պաշտպանել փախստականին Բեմոսթեններին հորդորելով օգնություն ցույց տալ նրան և ապաստան տրամադրել: Իսկ Դեմոսթենեսն սկզբում խորհուրդ էր տալիս դուրս քշել նրան որպեսզի անհրաժեշտությամբ շարդարացված, անօրինական գործողություններով առիթ տալով՝ պատերազմի մեջ շքաշեին Աթենքին: Բայց մի քանի օր անց, թանկագին իրերի ջուրջակը կազմելիս, Հարպալոսը, նկատելով որ Դեմոսթենեսը հետաքրքրվել է պարսկական նրբակերտ գավաթով և ուշագիր զննում է դրա դրվագազարդը, առաջարկեց, որ նա ձեռքն առ՝ ի գավաթը, տեսնի որքա՞ն կլինի ոսկին: Գավաթը, պարզվեց շատ ծանր էր, և Դեմոսթենեսը զմայլված

հայցրեց, թե ինչքա՞ն է կշռում, որին Հարպալոսը ժպտալով պատաս-
 լանեց. «Քեզ համար քսան տաղանդ», — և գիշերը վրա հասավ թե չէ,
 իրան ուղարկեց այլ գավաթը հետն էլ՝ տասը տաղանդ դրա՛ն Երևում
 է, Հարպալոսը մեծ վարպետ էր՝ մարդու աչքերի փայլից և դեմքի աշ-
 խուժությունից պուշակելու նրա կիրքը ոսկու հանդեպ, քանզի Դեմոսթե-
 նեսը, հիրտի անդրդվելի շմնաց կաշառքի նկատմամբ այլ, պարովե-
 լով դրանից, ասես թե ներս թողեց թշնամական կայազորը և անցալ
 Հարպալոսի կողմը: Հաշորդ օրը Դեմոսթենեսը ներկայացավ ժողով, գե-
 դեցիկ ու խնամքով փաթաթելով վիզը բրդե կապով, և երբ ներկաներն
 սկսեցին աղմկել՝ պահանջելով, որ նա ելույթ ունենա, նա նշաններով
 սկսեց ցույց տալ, որ իրր, ձայնը խզվել է: Կատակասերներն այս առի-
 թով սրա՛տում էին՝ թե, իբր, գիշերը հռետորը ցրտառություն է ունեցել,
 բայց ոչ թե ովորական այլ՝ ոսկյա: Որոշ մամանակ անց, կաշառքի
 մասին իմացավ ամբողջ ժողովուրդը և երբ Դեմոսթենեսը փորձ էր
 անում խոսք վերցնել, որպեսզի արդարասար, ամբոխը շցանկանալով
 լսել նրան՝ դայրազին աղմկեց իսկ մեկն էլ վեր թռչելով՝ բղավեց. «Քա-
 դաքացի աթենացիներ, մի՞թե դուք ականջ չեք դնում նրան, ում ձևօրին
 դավաթն է»: Բանը վերջացավ նրանով որ Հարպալոսին աթենացիներն
 արտաքսեցին քաղաքից և վախենալով, որ չլինի թե իրենց պատասխա-
 նատվության կանչեն հռետորների հափշտակած դրամների համար, խըս-
 սագույն հետաքննություն կատարեցին, մեկը մյուսի հետևից խուզար-
 կելով տները բացառությամբ Կալլիկոսի Արրենիսի որդու միայն նրա
 բնակարանը, ինչպես Թեոպոմպոսն է ասում, խուզարկությունից ազս
 սկսին այն հիման վրա, որ տանտերը հենց նոր էր իլ հարսանիքն արել
 և տանն էր դռնվում ջահել կինը:

XXVI Դեմոսթենեսը, վտանգին ընդառաջ դնալով պահանջեց, որ
 դրժը Արեոպագոսը քննի և բոլոր նրանց, ում մեղավոր կճանաչի, թող
 պատժի: Իսկ երբ Արեոպագոսը առաջինների մեջ իսկ պատժեց նրան,
 նա դատի առաջ կանգնեց և, դատապարտվելով հիսուն տաղանդ տուգան-
 քի, վերցվեց կալանքի, բայց, չկրելով իր խոսքերով ասած բանտար-
 կություն անարդանք ու շարչարանքներ փախավ բանտից, պահնորդնե-
 րից ոմանց խարկով, մյուսներին էլ կաշառելով: Պատմում են, թե նա
 գեռ չի հասցրել հեռանալ քաղաքից մեկ էլ նկատել է, որ իրեն հետա-
 պնդում են մի քանի քաղաքացիներ, որոնք միշտ իրեն վերաբերվել են
 Ոչնամաբար և ուղեցել է թաքնվել, բայց նրանք, իրեն անունով կան-
 ,կելով, մոտեցել են և դրամ առաջարկել ճամփի համար, բացատրելով,
 թե հանուն այդ բանի էին տանից մինչև այստեղ իր հետևից ընկել ինչ

ւ, հս և խորհուրդ են տվել շնուսահատվել և արիաբար կրել գլխին Եկա-
քը, բայց Դեմոսթենեսն ի պատասխան դառնորեն լացել է՝ ասելով «Կա-
րո՞ղ եմ շնուսահատվել՝ լքելով այն քաղաքը, որտեղ նույնիսկ թշնա-
միներս այնպիսիք են, ինչպիսիք մի այլ տեղում բարեկամներն իսկ չեն
լինի»։ Արտաքսոս մը նս ծանր էր տանում ժամանակի մեծ մասը նըս-
տած մնալով Էգինայի ու Տրեզենի ափին և Լարոտով արցունքն աչքի-
րին նայելով Ատտիկային, — այնքան ծանր, որ այ տահայտել է ինչպիս
հիշատակո մ են, անլայել մտքեր որոնք անհարիր են այն ավյունին,
որո՞ւ նա միշտ աչքի էր ընկնում պետական գործերում։ Այսպես, թողնե-
լով Աթենքը, նա, ասում են բաջականչել է՝ ձեռքերը տարածելով դեպի
միջնաբերդը «Օ՛, տիրուհի Պոլիս՛ դառ Ինչո՞ւ ես բարեհաճ լինում երեք
շարագույն արարածներին՝ օձին, բվին ու ժողովրդին»։ Իսկ ծանոթ պա-
տանիներին, որոնք նրա մոտ դալիս էին վստահալից զրույցի, նա խոր-
հուրդ էր տալիս հեռու մնալ հասարակական գործերից, հավատացնելով,
որ Էթե սկզբից և թ իր առջև ընկած լինելին երկու ճանապարհներ, մեկը
ժողովի հակառական բարձունքը տանող մյուսն է՝ դեպի կործանում,
և Էթե ինքը կանխատեսեր պետական գործունեության հետ կապված
դժբախտությունները, անվերջանալի շարշարանքները սարսափները, զըր-
պարտությունն ու նախանձը ասլա կընտրեր այն որը տանում է ուղիղ
դեպի մահ

XXVII Այդ միջոցին, երբ նա դեռևս արտաքսման մեջ էր Ալեք-
սանդրը վախճանվեց և հելլենները նորից սկսեցին միավորվել ընդդեմ
ընդհանուր թշնամու, մինչդեռ Լեոսթենեսը խիզախության հրաշքներ
գործելով, Անտիպատրոսին փակել էր սաշարված Լամիայում։ Եվ ահա
հակառակներ Պիթեասն ու Կալլիմեդոնը Խաշափա մականունով, փախ-
չելով Աթենքից՝ անցան Անտիպատրոսի կողմը և նրա բարեկամների ու
գեսպանների հետ միասին սկսեցին քաղաքից քաղաք անցնել՝ հելլեն-
ներին համոզելով խոտվություն չբարձրացնել և սթենացիներին լաջակ
ցել Դեմոսթենեսն էլ միացավ աթենական դեսպանությանը և ողջ ո ժե
րը ներդնելով՝ նրան օգնում էր քաղաքները համախմբել մակեդոնացի-
ների դեմ պայքարելու համար, որպեսզի դրանց դուրս շարտեին Հելլա-
դայից։ Արկադիայում, ինչպես պատմում է Փիլարքոսը, Պիթեասի և Դե-
մոսթենեսի միջև ժողովրդական ժողովում տուրուղմփոց տեղի ունե-
ցավ, երբ մեկը պաշտպանում էր մակեդոնացիների շահերը, մյուսը՝
հելլենների գործը։ Պիթեասը ասում են, ասել է, որ Էթե տուն են բե-
լում էշի կաթ, նշանակում է այնտեղ, հավանաբար մեկը հրվանդ է
Այդպես էլ քաղաքը բավական է որ այնտեղ դեսպանություն հայտնվի,

Ի ա անխուսափելիորեն հիլանդանում է Գեմոսթենեսան էլ այս համեմա-
 րությունը շուտ է տվել, ասելով, թե ինչպես Լշի կաթը հիվանդի հա-
 մար ապարհնում է այնպես էլ աթենական դեսպանությունը փրկություն
 և լադաքի համար: Աթենացիներն այնքան գոհ էին Գեմոսթենեսի գոր-
 ծողություններից որ ժողովրդական որոշմամբ նրան թույլ էր տրվել վե-
 յադատնալ Սթենք Այս մասին առաջարկություն էր մտցրել պեանիացի
 Գեմոնը՝ Գեմոսթենեսի հորեղբոր որդին, և նրա հետևից տրիելա ուղար-
 կեցին Էդինա: Երբ Պիրեոնից նա ուղղվեց դեպի քաղաք նրա հետևից
 բնիանում էին իշխանության ներկայացուցիչները և քրմերը իսկ նրան
 հրճվագին ողջուններով դիմավորելու էին զուրս եկել բոլոր քաղաքա-
 պիներն առանց բացառության: Հենց այդ ժամանակ է ըստ Դեմետրիոս
 Մագնեի իացու, որ Գեմոսթենեսը ձեռքերը երկինք կարկառած՝ բացա-
 կանչել է թե այս օրը իրեն բարձրացրեց Լրանո թյան գագաթը որով-
 հետև ինքը հայրանիք է վերադառնում առավել արժանավոր կերպով,
 յան թե Ալքիբիադեսը, քանզի ոչ թե ուժով է ստիպել, այլ գործերով է
 համոզել համաքաղաքացիներին, որ իրեն յետ ընդունեն: Բայց քանի որ
 տուգանքը դեռևս ծանրացած էր նրա ուսերին իսկ դատավճիռը չեղյալ
 համարել ի նշան երախտագիտության անհնար էր, ուստի որոշեցին
 օրենքը շրջանցել խորամանկ հնարքով Սովորույթի համաձայն, Ջես
 Փրկչին զոհաբերություն անելիս նրանց, ովքեր պատրաստում ու զար-
 դարում էին զոհասեղանը, դրամ էին վճարում և այս անգամ բոլոր ան-
 հրաժեշտ բաներն ապահովելը հանձնալարեցին Գեմոսթենեսին՝ որպես
 հ ստուցո մ նրան տալով հիսուն տաղանդ որը և կազմում էր տուգան-
 քի դումարը

XXVIII Բայց նրան լվիճակվեց երկար ժամանակով վաչելիլ հայ
 բնիք վերադառնալու հաճույքը, որովհետև շուտով հեղենների կողմը
 տանուլ տվեց վերջնականապես մետաղեյտնիոն ամսին ճակատամարտ
 տեղի ունեցավ Կրաննոնի մոտ, բոլորոմիոն ամսին մակեդոնական կա-
 յապորը գրավեց Մունիբիան, պիանեպսիոն ամսին զոհվեց Գեմոսթենեսը:
 Ահա թե ինչ հանցամանքներում է տեղի ունեցել այդ բանը: Հենց որ
 հայանի գործով, որ Անտիպատրոսն ու Կրատերոսը մոտենում են Աթեն-
 էին, Գեմոսթենեսան ու իր կողմնակիցներն շտապեցին շքվել քաղաքից, և
 ժողովուրդը Գեմոսթենեսի առաջարկությամբ նրանց դատապարտեց մահ-
 վան: Փախածները գրիտ Լիան ամեն մեկը մի կողմ և Անտիպատրոսը
 նրանց փնտրելու համար մարդիկ ուղարկեց, որոնց հրամանատարն Սլ-
 լիասն էր՝ Խուպարիս, Շուն մակա՝ ունալ: Այս Արգիասի մասին որը ծա-
 դամով թա լիացի էլ յաամս 11 թ՝ նա մի ժամանակ եղիլ էր ող

բերգու դերասան, և հազորդում են, իբր, նրա աշակերտը եղել է այդ արվեստում անգերազանցելի էգիմացի Պողոսը: Հերմիպոսը, սակայն, Արքիասին թվարկում է հռետոր Լակրիտոսի աշակերտների շարքում, իսկ Դեմետրիոսը պնդում է, թե նա պատկանում էր Անաքսիմենեսի դպրոցին: Այսպես ահա, այս Արքիասը հռետոր Հիպերիդեսին, մարաթոնցի Սրիստոնիկոսին և Հիմերեոսին՝ Դեմետրիոս Փալերացու եղբորը, որոնք թաքնվել էին էգիմացում՝ Լակոսի տաճարում, ուժով դուրս քաշեց այդ տեղից և ուղարկեց Կլեոն՝ Անտիպատրոսի մոտ այնտեղ սրանք մահապատժի ենթարկվեցին, ընդ որում ասում են մահվանից առաջ Հիպերիդեսի լեզուն էլ կտրեցին:

XXIX. Իմանալով որ Դեմոսթենեսը ապաստան է գտել Կալարրիայում՝ Պոսեյդոնի տաճարում Արքիասը թրակիացի նիզակավորների հետ խղճուկ նավերով անցավ այն կողմը և սկսեց նրան համոզել, որ տաճարը թողնի ու իր հետ ուղևորվի Անտիպատրոսի մոտ՝ հավատացնելով, որ նրան ոչ մի վատ բան չին անի: Իսկ Դեմոսթենեսը նախորդ գիշերը երազ էր տեսել, Տեսել էր որ, իբր, ինքը Արքիասի հետ մրցում է ողբերգական դերի կատարման մեջ և թեև հաշուդուխտուն իր կողմն էր թեև իր խաղով նա չվաճել էր ամբողջ թատրոնը սակայն խղճուկ ու ազրատիկ բեմադրություն պատճառով հաղթանակը տրվում է մրցակցին: Ուտի սրքան էլ նրա հետ բարեկամաբար էր խոսում Արքիասը, Դեմոսթենեսը տեղից մի քայլ իսկ շարժվելով՝ նայեց նրան և ասաց. «Արքիաս, ևս երբեք չեմ հավատացել քո խաղին, հիմա էլ չեմ հավատում քո խոստումներին»: Իսկ երբ Արքիասը կատարած սկսեց նրան սպառնալ, «Այս այս մարգարեությունները, — բացառիկանչեց Դեմոսթենեսը — արդեն անսխալ են մակեդոնական եռոտանուց են դալիս, իսկ այն ամենը, ինչ գուսում էիր բանից առաջ, միայն դերասանական խաղ էր: Դե, մի փոքր սպասիր, ես մի երկու խոսք գրեմ մեր տուն»: Այս ասելով՝ նա քաշվեց տաճարի խորքը ձեռքն առավ գրատախտակը, կարծես թե մտադրվելով գրել եղեգնյա գրիչը մոտեցրեց շրթունքներին և կծոտելով գրա պոչը որոշ ժամանակ անշարժ մնաց, ինչպես սովորաբար տնում էր՝ մտմտալով գրելիքը, ապա մինչև գլուխը փաթաթվեց թիկնոցի մեջ, և գլուխը ուժասպառ կախ ընկավ: Դռների մոտ կուտակված նիզակավորները ուշելով, որ նա փառքոգություն է անում, սկսեցին ձեռ առնել նրան՝ անվանելով վախկոտ ու կնիկ, իսկ Արքիասը մոտենալով խնդրում էր նրան վեր կենալ և սկսեց նորից նույն բաներն ասել՝ խոստանալով հաշտեցնել նրան Անտիպատրոսի հետ: Բայց Դեմոսթենեսը հենց զգաց, որ

Թույնն արդեն ներգործում է ու սաստկանում, թիկնոցը դեն նետեց և յայելով ուղիղ Արքիաօի դեմքին՝ ասաց «Թույլ տուր հիմա ողբերգության միջի Կրեոնուսարը խաղալ, բայց մի քիչ արագ և այս մարմինը անթագ նետել մի կողմ: Օ՛, Պոսեյդոն-հյուրընկալ Անտիպատրոսն ու մակեդոնացիք նույնիսկ քո տաճարը լթողեցին մնա շարժված, իսկ ես լքում Լմ էո տաճարը, քանի դեռ ողջ եմ»: Այս ասելուց հետո նա պահանջեց, որ իրեն օգնեն ոտքի կանգնելու, և միայն մի քանի քայլ արեց՝ օրորվելով ու դողդողալով ողջ մարմնով, բայց հենց որ հեռացավ զոհասեղանից փուլ եկավ ու թառանչով հոգին ավանդեց

XXX Ինչ վերաբերում է թույնին ապա Սրիստոնը պնդում է թե Դե մոսթենեսը դա հանել է եղբայրս գրչի միջից, ինչպես նկարագրված է վերևում: Բայց ոմն Պապուոս, որի պատմությունն է հետևում Հերմիպոսը, հաղորդում է, թե լոհասեղանի մոտ Դեմոսթենեսի անշունչ ընկնելուց հետո, պարզվել է որ նրա դրատախտակի վրա գրված է եղել միայն նամակի սկիզբը «Դեմոսթենեսը՝ Սնտիպատրոսին», և ուրիշ ոչինչ, իսկ ի պատասխան այդքան հանկարծակի մահվան պատճառի մասին տարակուսանքի, դուան մոտ կանգնած թրագացիները պատմել Լն թե ինչպես նա մի շորի կտորի միջից թույն է հանել, դրել ափի մեջ, գցել բերանը և կուլ տվել, ընդ որում իրանք իրենք որքան ևլ տարօրինակ լինի, որոշել են թե նա սակի է կուլ տալիս, բայց նրա աշխիհը՝ պատասխանելով Արքիաօի հարցուփորձին ասել է, թե նա վաղուց արդեն վզից թելով կախած ուներ այլ փոքրիկ կապոցը՝ հմայիլի փոխարեն: Էրատոսթենեսը իր հերթին հավատացնում է թե նա թույնը պահում էր սնամեջ ապարանջանում իսկ ապարանջանը մշտապես կրում էր դաստակին: Ինչ վերաբերում է մյուսներին, ովքեր գրել են Դեմոսթենեսի մասին, — իսկ դրանք մեծ բազմություն են — ասլա նրանց հակասական կարծիքները հազիվ թլ արժե թվարկել Կմատնանշեմ միայն հետոքի ազգականի՝ Դեմոքարոսի պատողությունը, որը, ինչպես ինքն է ասում կարծում է, ոչ թե թույնը, այլ աստվածներն իրենք են Դեմոսթենեսին աղատել մակեդոնացիների դաժանությունից՝ հարգանքից ու հոգածությունից նրան հղելով թեթև, ցավազուրկ մահ: Եւ մահացավ պիանեպսիոն ամսի տասնըվեցերորդ օրը՝ Թեմոսթոբիանների տոնի ամենամուսյլ օրը երբ կանայք ծամ են պահում ժամանակն անցկացնելով աստվածուհու տաճարում: Շատ շանցած, Աթենքի ժողովուրդը Դեմոսթենեսին արժանի պատիվներ

տլեց կանգնեցնելով նրա բրոնզե հուշարձանը իսկ նրա տոհմի ավագը պատվավոր իրավունք ստացավ Պրիտանիոնում ճաշին մասնակցելու։ Հուշարձանի պատվանդանին փորագրված է բուլոբին հայտնի մակագրությունը


Եթե ուժդ, Դեմոսթենես ս բանականությանդ հավասար լիներ
Մեզ հպատակեցնել շեր կարող մակեդոնացի Արեսն ինքն էլ

Նրանք ովքեր պնդում են թե սա իբլ Դեմոսթենեսն ինքն է հորինել Կալարիիայում թոյն ընդունելուց առաջ զուտ հլմալություն էն լուրս տալիս։

XXXI. Մեր Աթենք գալուց անմիջապես առաջ ասում են, տեղի է ունեցել այսպիսի մի դեպք Մի զինվոր որին դատարան է կանչած եղել Կուսակալը, իր բոլոր խղճուկ լրամները թաքցրել է Դեմոսթենեսի արձանի ամերում (նրա մի ձեռքը ծածկու էր մյուսին, — իսկ կողքին կամի ոչ յարձր սոսլ և տերևների շղջը — կամ քամին է պատահարար պոկել դրանք կամ էլ զինվորն ինքն է այդպես միմյանց վրա կուտակել, — իր տակ հուսալիորեն ծածկել է այդ դրամները բավականին երկար ժամանակ։ Իսկ երբ այդ մարդը վերադառնալով գտել է դրամներն իրենց տեղում, լուրը տարածվել է քաղաքով Լեկ, և սրամիտ շատերը, առիթից օգտվելով, աշխատել են միմյանց գերազանցել՝ էպիգրամներ հորինելով Դեմոսթենեսի անկաշառության մասին։ Իսկ ինչ վերաբերում է Դեմոսթենեսին ապա նրան լիճակվեց երկար ժամանակ օգուտ քաղել այն համբավից, որ ձեռք էր բերել Դեմոսթենեսի համար պատժող փոխհատուցումը նրան Մակեդոնիա ուղարկեց և որոնց առջև որ նա այնպես սուրբար հաճոյանում էր այժանի պատուի Լնթարկեցին նրան սրովհետև նա առաջ էլ էր անհաճո եղել նրանց համար իսկ այս անգամ այն նա տիճանի էր մեղանլլ, ու անհնար եղավ պատժից խուսափել Բանն այն է, որ հայտնի դարձավ նրա մի նամակը, որով Պերիկլեսին կոչ էր անում տիրել Մակեդոնիային և փրկել հելլեններին, որոնք կապկպված են փտած հին պալանով (այսպես էր նա կոչում Անտիպատրոսին) Մելագրական ճառից հետո, որ արտասանեց կորնթացի Դինարքոսը, մոլեզ նած Կատանդրոսը Դեմոսթենեսի որդուն սպանեց ու լղակի հոր գրկում, իսկ այս սպանեց և իրեն Դեմոսթենեսին, որը մեծագույն դժբախտության գնով վերջս պիտ հասկացով ոչ լալուճանները նախ և առաջ հենց իրենց են

դավաճանու Ն, ինչի մասին շատ անգամ էր խոսել Դե Նոսթրենեսը և ինչին
Նա համատարին լեր հավատում:

Ահապիտով, ով Սասիե՛, դու ստացար Դեմոսթենեսի կենսագրու
թյուր՝ կողմից այն ամենից ինչ մեզ վիճակվել է կարդալ կամ լսել
նրա Լուրն:





1 Յիցերոնի մայր Հելլոյան, ինչպես ասում են, երևելի տոհմից է եղել և ասաբինի կյանք է վարել: Իսկ հոր վերաբերյալ հնարավոր չեղավ որևէ հավաստի բան իմանալ, քանզի ոմանք ասում են, թե նա ծնվել ու մեծացել է ինչ որ մահուղալմարանում ուրիշներն էլ նրա տոհմը բխեցնում էն Տուլլիոս Ատտիոսից որը փառավորապես թագավորել է վոլսկների վրա: Ինչպես էլ եղած լինի, այս տոհմի մեջ առաջին Յիցերոն անվանվողը եղել է, ըստ երևույթին, հիշատակության արժանի մի անձ, որի համար էլ սերունդները ոչ միայն դեն չեն նետել այդ մականունը, այլև սիրել էն այն, թեկուզև դրա համար ծաղրի են ենթարկվել «ցիցեր» լատինացիները անվանում են սիսեոին, առաջին Յիցերոնի բթի ծայրին էլ ոչ խուլը մի փոսիկ է եղել՝ սիսեոահատի վրայի ակոսիկի նման, որից և նա ստացել է իր մականունը: Ասում են, Յիցերոնն ինքն էլ, որի մասին հիմա խոսվում է, զգա այն ժամանակ, նրբ նոր-նոր սկսել էր հետամտել իշխանության և ձեռք էր զալկել պետական գործերի պատանեկան մեծամտո թյամբ ասել է իր բարեկամներին, որոնց կար ծիրքով նա պետք է որ խուսափեր մականունից և փոխեր այն թե ինքը կհասնի իր ցանկացածին, և Յիցերոնը ավելի փառավոր մարդ կդառնա, բան Սկավրոսներն ու Կատուլոսները: Աստվածներին էլ Սիցիլիայում իր քվեստոր եղած ժամանակ, արժաթե մի իր նվիրելիս նա վրան գրել էր իր անուններից միայն երկուսը՝ Մարկոս և Տուլլիոս, իսկ երրորդի փոխարեն վարպետորեն պատվիրել էր, կատակի համար, մակագրության կողքին, փորագրել սիսեոի հատիկ: Ահա թե ինչ են պատմում նրա անվան մասին:

11 Յիցերոնի մայրը նրան ծնել է անցավ ու թեթև իսկ նա ծնվել է, ասում են, նոր կալենդներին երրորդ օրը: Հիմա այդ օրը մագիստրատները ծեսեր են անում ու զոհեր մատուցում հանուն կայսեր: Նրա ծծմորն էլ, պատմելով, հայտնվել է ուրվականը, որն ավեան է, թե նա սնուցանում է մի մանկան արը մեծ օգուտ է բերելու բոլոր հոռմեացիներին: Ու թեև այսպիսի դիպքերն ընդհանրապես պատկերանում են իբրև ոչ ավելի քան կրթագներ ու բարբաջանք, այնուամենայնիվ Յիցերոնը շուտով ապացուցեց որ կանխագուշակութունը ճիշտ է եղել: Հասնելով դպրոցական տարիքին և փայլուն ընդունակութուններ ցուցաբերելով՝ նա անուն հանեց և հայտնի դարձավ երեխաների մեջ, այնպես որ սրաչ հայրերն սկսեցին դասերին հաճախել՝ ցանկանալով սեփական աչքերով սեանել Յիցերոնին ու պատկերացում ստանալ այն փառաբանված արագության և ըմբռնողության մասին, որով նա յուրացնո մ էր գիտության ներքո: Իսկ նրանցից առավել կոպիտները բարկանում էին իրենց սրբիների վրա տեսնելով թե սրանք փուլոցում ինչպես են հարգանքով շքրչապատում Յիցերոնին: Լինելով ինչպես Պլատոնն է պահանջում հետաքրքրասեր և փիլիսոփայության հակված բնավորություններից, — երկրպագու ամեն մի գիտական իմացության, շարհամարհելով որևէ ուսմունք և հանրակրթական ա արկա՝ նա մի տեսակ առանձնահատուկ ջերմեռանդությամբ էր տրվում բանաստեղծական ստեղծագործությանը: Պահպանվել է նրա մի փոքրիկ պոեմը՝ «Պոնտիոս Գլավկոս», որը հորինված է դեռևս մանկական հաւակում և գրված է տեսրամետրով: Ժամանակի ընթացքում աիրապետելով այդ արվեստին և դրա առավել բազմազան տեսակներին՝ նա հռչակվեց ոչ միայն որպես հոեոոր, այլև որպես բանաստեղծ՝ ամենահրաշալիհ հոռմեացիների մեջ: Բայց ահա Յիցերոնի հոեոորական տաղանդի փառքն այժմ էլ կենդանի է ընայած այն ժամանակից մինչև այսօր լատինական խոսքում երևան եկած ոչ բիշ նորություններին, իսկ նրա բանաստեղծական ստեղծագործությունը, բազում բանքարավոր նոլ բանաստեղծների հանդես գալու հեաեանքով, միանգամայն կորցրել է իր փառքն ու պատիվը:

111 Ավարտելով տարրական դպրոցը Յիցերոնն ունկնդրել է ակադեմիկոս Փիլոնին արը կլիտոմաքոսի մյուս բոլոր աշակերտներից ու միայն ավելի էր հիացնում հոռմեացիներին իր ճարտասանությամբ, այլև նրանց սերն էր վալելում իր բնավորությամբ, իսկ միևնույն ժամանակ մտերմանալով Մուցիոսի ու նրա բարեկամների հետ, որոնք իրադեկ էին պետական գործերի կառավարմանը և գլխավորում էին սենաար, նրանց օգնությամբ փորձով ծանոթանում էր օրենքներին: Արոշ ժամանակ նա

մասնակցեց նաև արշավանքների Սո-ւլայի գլխավորութեամբ, մարտիական պատերազմի ժամանակ: Բայց հետո, տեսնելով, որ հանրապետությունը երկպառակության մեջ է ընկնում, իսկ երկպառակությունից գլորվում է դեպի միապետություն՝ նա անցավ հայեցողական կյանքի, մերձեցավ գիտնական հույների հետ և սկսեց գիտություններով զբաղվել ընդհուպ մինչև այն ժամանակը, երբ Սուլայն հազթանակ տարավ և ւլետությունը, ինչպես թվում էր, որոշ կայունություն ձեռք բերեց: Հենց այս տարիներին էր, որ Քրիստոգոնոսը՝ Սուլայի ազատարձակչալը, հայտարարեց մի յարդու, որպես սրբոսկրիպցիանների ժամանակ սպանվածի, ունեցվածքի վաճառքի մասին և ինքն էլ գնեց այդ ունեցվածքը 2000 դրախմով: Իսկ երբ Հոսոցիոսը սպանվածի որդին ու ժառանգը, դրանից վրդովված, սկսեց ապացուցել, թե ունեցվածքն արժե 250 տաղանգ, Սուլայն էլ, պատասխանողի դեր ստանձնելով զայրացավ և Հոսոցիոսի դեմ Քրիստոգոնոսի կողմից հրինված մի դատ բացեց՝ նրան մեղադրելով հայրասպանության մեջ, — ոչ միայն ոչ որ Հոսոցիոսին շօգնեց, այլև ամենքը նրանից երես թեքեցիս վախճալով Սուլայի պատանությունից: Այսպեսով, բոլորի կողմից լքված պատանին վաղից Ցիցերոնի մոտ, իսկ վերջինիս բարեկամները միաձայն սկսեցին դրդել նրան ասելով, թե դեպի փառք ստանող սրանից ավելի լավ ու փաշտուն սկիզբ չի կարող լինել: Եվ Ցիցերոնը հանձն առնելով Հոսոցիոսի պաշտպանությունը՝ հիացմունք հարուցող հաջողություն ունեցավ, բայց Սուլայի ահից մեկ նեց Հունաստան՝ լուր տարածելով թե իր մարմնական տկարությունները բուժում են պահանջում: Եվ իսկպես էլ, նա նիհար էր ու սմբած, իսկ ստամոքսի հիվանդության պատճառով անշափ քիչ էր ուտում և միայն ուշ ժամերին նրա ուժեղ ու լավ ձայնն էլ սուր էր ու անմշակ թփոն ու պաթետիկ ճառի ամենատաք տեղում միշտ հասնելով մինչև բարձր տոները՝ այն ստիպում էր երկյուղել հետտրի առողջության համար:

IV Գալով Աթենք՝ Ցիցերոնն ունկնդրել է Մնախորոս Ասկալոնացու դասախոսությունները և հմարվել նրա խոսքի շուրջությունը ու գեղեցկությունը, բայց այն նույնություններին, որոնք նա ներմուծում էր ուսմունքի մեջ, Ցիցերոնը հավանություն չէր տալիս: Քանզի Մնախորոսն արդեն հեռացել էր նոր ակադեմիայից և լքել Կարնեադոսի տեսակետը և դա Էրանից արդյոք որ իր մտածողությունը ենթարկել էր ակներև զգայական ըմբռնումներին, թե՛, ինչպես այժմ Լն ասում, նրանից, որ, փոփոխելով իր հայացքները փառասիրությունից մղված և Կլիտոմարոսի ո՞ճիլոնի հետևորդների հետ ունեցած տարածայնությունների պատճառով, սկսել էր հարցերի մեծ մասում դարգացնել ստոկների ուսմո նքը Ցի

դերսնն էլ իրոյս էր ահաղմիկոսներին և նրանց մեծ ուշադրութեան էր հասկացնում, անպես որ նույնիսկ ենթադրում էր, որ էթե իրեն հանկարծ լսարութիւն դուրս մղէ քաղաքական գործունեութեան ասպարեզից իր կյանքը ֆորումից ու ասարակական գործերից տեղափոխի այստեղ և անցկացնի խողաշութեան մեջ՝ գլաղվելով փիլիսոփայութեամբ

Բայց էլ էր նրան հասած Սուլայի մահվան լուրը, իսկ նույն ժամանակ մարմնամարդութեամբ ամբապնդլած նրա մարմինը դարձել էր պատանկ լին անողջ ձայնն էլ, հիմա արդեն մշակված դարգացել էր ձուր բերել լսողութեան համար հաճելի լեցունութեան և լիովին համապատասխանում էր ամբողջ օրգանիզմի ֆիզիկական վիճակին, էրբ, լրան ավելացրած և՛ հոռմեացի բարեկամները բողմաթիվ նամակներով խնդրում էին, և Անտիոքոսը համառորեն խորհուրդ էր տալիս վերադառնալ պետական գործերին, — Յիցերոնը նորից դբազվից իր ճարտասանութեան կատարելագործմամբ որպես անհրաժեշտ գործիքի. վարժվելով դրանում ինքնուրույնալար և հաճախելով փառաբանված հռետորներին մոտ նա զարգացնում էր պետական գործչի իր տաղասոզը: Գրա հար նա ձեռնարկեց ճանապարհորդութեան գեպի Ասիա և Հոողոս Ասիայի հռետորներից նա սովորեց աղբամիտտիացի Բսենոկլի յի մադնեսիացի Գիոնիսոսի և կալիացի Մենիպոսի մոտ իսկ Հուպսում Ապոլլոնիոս հռետորի մոտ՝ Միլոնի արդու, և փիլիսոփա Պատելյոնիոսի մոտ Պամմում են, թե Ապոլլոնիոսը, որը շէր հասկանում լատիներեն, խնդրել է Յիցերոնին իրենց պատասխաններին էամանակ խոսել հռմարեն: Սա հաճութեամբ ընդունել է առաջարկը ենթադրելով, թե այդպես ալէլի լավ կուղղեն իր սխալները Երբ նա արտասանել է իր ճառը, բոլորն ապշած են մնացել և սկսել են մրցել նրա հասցէին գովեստներ շոայլելու մեջ: Իսկ Ապոլլոնիոսը նրա լսել է բնավ էլ ոչ ուլալ տեսքով, և ճառն ալարտվելուց հետո, Երկար ժամանակ նստած է մնացել մտախոհ: Տե նելով Յիցերոնի նեղվածութեանը նրան ասու է «Ձեզ Յիցերոն, գովում եմ և զարմանում եմ քեզ վրա էայց խղճում էմ Հելլագայի բախտին՝ տկնրախորեն համոզվելով, որ գեղեցկից դէռ մեզ մոտ մնացած միակ բանը՝ կրթութեանն ու ճարտասանութեանը և այն էլ էո շնորհիվ դարձել է հոռմեացիների սեփականութեանը»

V Հուլյսերով լեցուն՝ Յիցերոնը բոլոր մտադրութեանները սկեռում էր գեպի քաղաքականութեանը, լայց իր նկրտումների թափը կտարեց մի կանխագուշակութեամբ: Քանզի հարցում անելով ասածուն Գելփիքում, թե ինչ ճանապարհով է իրեն հնարավոր առավել հուլակվելու, նա Պիթլայից ցուցում ստացալ որպէս ղկկավար ընդունել սեփական բնածին

հատկութիւնները այլ ոչ թե ամբոխի կարծիքը, եւ ա սկզբնական շըրջանում Հոռմում իրեն զգույշ էր պահում, հապաղում էր գրագեցնել հասարակական պաշտոններ և մնում էր սովորում՝ ընդ որում լսելով Հոռսի ժողովրդական ցածր խավերում սովորական դարձած հայհոյական «հույն» և «սխուլաստ» բառերը: Բայց Յիցերոնը որն ի բնե փառասեր էր, հոր և բարեկամների կողմից գրոված, երբ իրեն նվիրեց դատապաշտւանութեան գործին, առաջնակարգ տեղ գրավեց, ընդ որում ոչ թե քիչ առ քիչ, այլ միանգամից փայլուն փառքի հասավ և ֆորումում իրենից շատ ու շատ հետ թողեց մրցակից հոռտորներին: Ասում են, նա Գեմոսթենէսից ոչ պակաս էր տառապում արտասանութեան թերութիւններով իսկ ապա ջանասիրաբար ուսանում է ինչպես կատակերդու դերասան Բոսցիոսի այնպես էլ ողբերգու Եզոպոսի մոտ: Այդ Եզոպոսի մասին պատմում են, թե մի անգամ երբ իա թատրոնում կատարելիս է եղել Աթրևսի դերը ոչտեղ նա մտմտում է վրեժ յուծել Թրեստայից նրա մտտով անսպասելիորեն վաղէ է ծառաներից մեկը իսկ նա, բուն հափըշ տակութեան մէջ կուցնելով դատողութիւնը, որան հարվածել է գայի սոնով ու սպանել: Յիցերոնի արտասանութիւնն էլ հենց բավականին աջակցել է նրա խոսքի համազականութեանը: Եաղրելով այն հոռտորներին, որոնք դիմում են ուժգին բացականչութիւնների, նա ասում էր թե դրանք իրենց անդորութիւնից են անցնում ամ պրոպաճայնութեանը նման այն բանին, որ կաղերը ձի են նստում: Նուրբ ւրամտութիւնը, որ նա դնում էր այդպիսի կատակների ո ծաղրանքնելի մեջ, դատապաշտպանի համար, թվում է տեղին ու նուրբ հնարանք էր բայց դրանից շափազանց հաճախ օղտվելով՝ Յիցերոնը վիրավորում էր շատելին և շարմալ դու համբավ էր վաստակել:

VI Սովի տարին ընտրված լինելով որպես քվէտոր և վիճակահանութեամբ այդ պաշտոնն ստացած լինելով Սիցիլիայում իա սկըբ նական շըջանում բեռ էր բնակչութեան համար, քանի որ նրանց ստիպում էր հաց մատակարարել Հոռմին իսկ հետագայում, իրենց վրա զգալով նրա հոգածութիւնը արդարամտութիւնն ու համեստութիւնը մարդիկ սկսեցին հարգել նրան ինչպէս շէին հարգել մինչ այդ իրենց մոտ եղած ոչ մի պետի: Իսկ երբ Սիցիլիայի պրետորի մոտ ուղարկվեցին բազմաթիվ ազնվատոհմիկ պատանիներ, որոնք մեղադրվում էին կարգապահութեան խախտման և պատիրազմի ժամանակ անբավարար արիութիւն ցուցաբերելու մեջ Յիցերոնը հիանալիորեն անցկացրեց նրանց պաշտպանութիւնը և արդարացրեց նրանց: Այս հաջողութիւններով հպարտ՝ նա վերադարձավ Հոռմ բայց այնտեղ իր իսկ խոստո-

վանութեամբ, ը կալ ծիծաղելի վիճակի մեջ: Կամպանիայում պատահաբար հանդիպելով մի անձնավորութեան որը հայտնի մարդ էր և նրա բարեկամն էր համարվում, Յիցերոնը հարցրեց, թե հոռմեացիներն ի՞նչ են խոսում իր՝ Յիցերոնի մասին և իր գործերի մասին ի՞նչ են մտածում,— նա պատկերացնում էր, թե ամբողջ քաղաքը լեցուն է իր գործերի համլավի ու փառքի մասին խոսակցութիւններով: Իսկ սա նրան սրտաստխանեց հարցով «Դու այդ որտե՞ղ էիր, Յիցերոն, այս ամբողջ ժամանակը»: Այստեղ միանգամայն ընկալ Յիցերոնի տրամադրութիւնը հարցնելով ինքն իրեն, թե իր մասին լուրը արդո՞ք չի՞ հալվել-անհետացել քաղաքում, ինչպէս անհուն ծովի մէջ՝ ոչնչով շօտայնելով իր փառքի տարածմանը: Հետագայում նա ուշքի եկալ և բավազանին շատ չափավորեց իր փառասիրութիւնը, հակահալով, ու փառքը ինչին ձրգտել է ինքը, անորոշ ու հասանելի սահման շունկցուլ մի բան է: Բայցեւայնպէս, արտակարգ սերը գովեստների հանդեպ և փառքով շափազանց կրքոտ հրապուրվելը երբեք չթողեցին նրան և հաճախ հանում էին ճիշտ ճանապարհից՝ հակառակ բանականութեան:

VII Մեծ շերմեռանդութեամբ աշխատելով քաղաքական և պարեգոմ Յիցերոնը կարծում էր, որ լթ արհեստավորները գործ ունենալով իրենց վարպետութեան գործիքների և այլ անշունչ առարկանելի ու միջոցների հետ, լավ գիտեն և դրանց անունները, և տեղը, և՛ տխրասիրութիւնը աշխատանքին ապա պետական գործչի համար, որի հասարակական գործերին վերաբերող միջոցառումները իրագործվում են մարդկանց միջոցով, առավել ևս ամոթալի է լինել այնքան անփուլթ ու անտարբեր որպիսդի շփտենա իր համաքաղաքացիներին: Ուստի և նա իրեն ոչ միայն սովորեցնում էր հիշել նրանց անունները, այլև գիտեր յուրաքանչյուր քիչ թե շատ ականավոր մարդկանց բնակավայրի մասին, և՛ այն կալվածքների մասին, որոսց նրանք տիրում էին, և այն անձանց մասին, որոնց բարեկամութիւնից նրանք օգտվում էին, և նրանց հալեանների մասին այնպէս որ Յիցերոնը Իտալիայի որ ճանապարհով էլ անցնելիս լիներ, կարող էր հեշտորեն անվանել ու ցույց տալ իր բարեկամների հողերն ու դոյակները:

Ունենալով ոչ մեծ հարստութիւն գոնե բավալար իր օախսերը հոլալ ւ հումատ նա զարմանք էր հարուցում այն բանով, որ շէր ընդունում ոչ դրամական փոխհատուցում, ո՛չ էլ նվեր՝ դատապաշտպանութեան համար մանավանդ այն անգամ երբ հանձն էր առել վարելու դասն ընդդեմ վերրեսի: Այդ մարդուն որը բազում անվայել արարքներ էր կատարել Սիցիլիայում պրոպրետորի պաշտոն վարելիս և սիցիլիացիներին

կողմից դա ո՞ր էր տրված իս ստիպեց դատապարտել, և այն էլ՝ ոչ թե իր ճառերով, այլ՝ ասու թե հենց նրանով, որ ճառ շասաց: Քանզի երբ Վերրեսի նկատմամբ պրե-տորների կողմից թողալու-թյան պատճառով Եործի քննութիւնը մշտապես հետաձգվել հասել էր մինչև նիստի վերջին օրը պարզ դարձավ որ ճառեր արտասանելու համար այդ օրը լի բավարարի և որ դատաւարութիւնը մնալու է անավարտ — Յիցերոնը տեղից վեր կենալով և հաշտարարելով, որ ճառերի սնհրաժեշտութիւն չկա կանչեց ու հարցաքննեց վկաներին իսկ դրանից հետո դատաւարներին առաջարկեց քվեարկել: Հիշատակում են նաև այդ դատաւարութիւն ժամանակ Յիցերոնի կողմից ասված որոշ սրա ինտ խոսքեր: «Վերրես» բառով հոռմեացիներն անվանում են կրտած խոճկորին, իսկ ոմն աղատարձակչալ, Յեցիլիոս անունով, որն իրեն դրսևորում էր իբրև հրեական օրենքի կողմնակից ցանկացել է որպես մեղադրող ելույթ ունենալ ընդդէմ Վերրեսի մի կողմ հրելով սիցիլիացիներին «Հրեան — նկատել է Յիցերոնը, — ի՞նչ գոյ ունի խոճկարի հետ»

Այդ վերրում էլ օճեկ մեծահասակ մի սրբի լի Նատիս ս ում էին, թ արատավո՞ վարքով է անցկացնում իր երիտասարդութիւնը: Վերրեսից հանդիմանութիւններ լսելով անառակութիւն մասին, Յիցերոնը նրան պատասխանել է. «Որդիներին պետք է տանը կշտամբել»: Հորտենզիոս հռետորն էլ սիրտ շանելով բացա՞ւյտ պաշտպանել Վերրեսին բայց համենայն դեպս ենթարկվելով դրամական բռնագանձման քննարկմանը ներկա լինելու վերաբերյալ հորդորներին՝ դրա զիմաց որպէս կաշս ոք ստացել էլ փողոսկրյա սփինքս Յիցերոնը Հորտենզիոսին ինչ որ բան է ասել այլախանական ձևով իսկ երբ սա հայտարարել է, թե լի կարողանում հանելուկը գուշակել Յիցերոնը նկատել է «Իսկ չէ՞ որ տանը դու սփինքս ունես»

VIII Այսպես դատապարտվել է Վերրեսը Յիցերոնն էլ ու լըո նագանձման ենթակա գոմարը հաշվարկել էր 700 000 շարամտորեն մեղադրվել է, թե՛ կաշտոված լինելով, տուգանքը նվազեցրել է: Այնինչ, էդիլ եղած ժամանակ, սիցիլիացիները Լրախաագիտութիւն զգացմունքից դրդված իրան շատ բան էին բերում այն ամենից, ինչ ճարվում էր կղզում, իսկ Յիցերոնը, իր կողմից դրանցից ոչինչ իր օգտին լէր դորձագրում այլ՝ սիցիլիացիների առատաձեռնութիւնից օգտվում էր սոսկ նրա համար, որպէսզի իջեցներ որքան դա հնարավոր էր շուկայի գները:

Արալոսում նա գեղեցիկ դղյակ ուներ, նեապոլի շրջակայքում՝ կալվածք Պոմպեոսի մոտ՝ ուրիշ երկու փոքրերը: Իրան ավելացավ կնոջ՝ Տերենցյայի օժիտը հարյուր հազար և ինչ-որ մեկից ստացած ժառանգ

դս թյունը 90 հս զար պինար արժողությամբ: Այս միջոցներով նա ապ-
յում էր առանց կարիքի և դրա հետ միասին համեստ կյանքով՝ հույն և
հոմեոպաթի գիտնականների հասարակության մեջ: Հազվադեպ է պատա-
հել, որ նա ճաշեր արևի մայր մտնելուց առաջ, և ոչ այնքան ժամանա-
կի սղության պատճառով, որքան այն բանի որ նա տառապում էր սաա-
մսքսի թուլությամբ Եվ բնդհանրապէս էլ, նա իր մարմնի խնամքի վե-
րաբերյալ եղել է շատ փափկանկատ ու հոգատար այնպես որ շփումներ
էր կատարում և զբոսնում էր ճշգրիտ սահմանված լափով միայն: Այս-
պիսի սեփմով դաստիարակելով իր օրգանիզմը՝ նա այն պահպանում
էր առողջ ու տոկուն իր բազմաթիվ մեծ ու պայքարող լեցուն աշխա-
տանքներում

Եղբորը թողնելով ժառանգած հայրական տունը նա ինքը բնակու-
թյուն հաստատեց Պալատինի մ:տ որպէսզի շծանրաբեռներ իր հաճա-
խորդներին ճանապարհի հեռավորությամբ: 2 է՞ որ Յիցերոնի մոտ ամեն
օր ողջունելու էին գալիս ոչ քիչ թվով մարդիկ, քան Կրասսոսի կամ Պո՞
պեոսի, նրանց, ովքեր հոմեոպաթիկ մեջ մեծագույն զարմանք էին հա-
րուցում և ուժեղագույններն էին բոլորից, առաջինն՝ իր հարստությամբ,
Էրկրորդը շնորհիվ իր ուզմական փառքի: Բայց Յիցերոնին մեծարում
էր նույնիսկ Պոմպեոսը, իսկ նա իր քաղաքականությամբ նշանակաւո-
րեն աջակցում էր Պոմպեոսի հզորությանն ու փառքին:

IX Չնայած որ նրա հետ միասին պրետորության նկրտում էին
ուժեղ շատ մարդիկ: Յիցերոնը բոլորից առաջ ընտրվեց այդ պաշտոնում
և, ըստհանուր գնահատությամբ իր պարտապանությունները կատարում
էր որպէս անբասիր ու ազնիվ դատավոր: Պատմում են, որ Լիցինիոս
Մակրոսը, մի մարդ, որ ինքնին մեծ ուժ ուներ թաղաքում ընդ որո մ
նաև օգտվում էր Կրասսոսի աջակցությունից, հափշտակության համար
Յիցերոնի կողմից դատի տրվելով և հույսը գնելով իր ազդեցությանն ու
իր նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի վրա, այն ժամանակ, հրք դա-
տավորները դեռևս քվեարկելիս են եղել դուրս է եկել գնացել աուն
շաապ խուզէլ գլուխը, հագել սպիտակ տոգա՝ ի նշան այն բանի, թե դա-
տը շահել է և շարժվել է դեպի ֆորում: Իսկ շեմքին հանդիպելով Կրաս-
սոսին, որը լուր էր բերում, թե դատավորները միաձայն մեղադրական
եղրակացություն էն հանել Լիցինիոսը վերադարձել է տուն, անկողին
ընկել ու մեռել: Այս գործը Յիցերոնի համար օրենքի ջերմեռանդ պա-
հասանի համբավ ստեղծեց:

Վատինիոսը՝ ոչ բոլորովին հավասարակշռված մի մարդ որը լա-
տարանում իր ելույթների մեջ արհամարհական վերաբերմունք էր ցու-

ցաբերում մադիսարատների նկատմամբ, տառապում էր ուռուցքներով, որոնք պատել էին մինչև վիզը Մի անգամ գալով դատարան, նա Յիցերոնին ինչ որ բան խնդրեց, իսկ քանի որ վերջինս չէր համաձայնում և երկար ժամանակ մտորում էր, նա նկատեց, որ եթե Յիցերոնը պրետոր լիներ այդպիսի գործերում չէլ տատանվի Յիցերոնն էլ, դառնալով նրան, պատասխանեց «Բայց չէ՞ որ ես այլպիսի հասա վիզ չունեմ»:

Յիցերոնի լիազորությունը վերջանալուց երկու թե երեք օր առաջ ինչ որ մեկը Մանիլիոսին գատի սվեց հափշտակության մեղադրանքով: Այս Մանիլիոսն էլ հատուկ բարեհաճությունն էր վայելում ժողովրդի, որը ենթադրում էր թե իա հայածանքի է Եթարկվել Պոմպեոսի պատճառով քանզի վերջինս նրա բարեկամն էր եղել: Երբ նա խնդրեց իրեն ժամկետ տալ, Յիցերոնը նրան տրամադրեց հենց միայն հաջորդ օրը և դրանով ժողովրդի դժգոհությունը հարուցեց պրետորները սովորություն ունեին տալ ամբաստանյալներին ոչ պակաս լան տասն օր ժամկետ: Տրիբունները Յիցերոնին ստիպեցին հյապարակորեն ելույթ ունենալ և նրան մեղադրանք ներկայացրին: Խնդրելով, որ իրեն լսեն Յիցերոնը հիշեցրեց թե ամբաստանյալներին ինքը միշտ վերաբերվել է ներողամտաբար, որքանով որ դա թույլ են տալիս օրենքները. իր համար անթույլատրելի կհամարեր այդ նույնը մեղ ժեղ և Մանիլիոսին, որի համար էլ դիտմամբ նշանակել է այն միակ օրը, որը դեռ մնում է իր տրամադրություն տակ որպես պրետորի հորժը ուրիշ պրետորի ձեռք գցելը չէր նշանակի օգնել ցանկանալ Մանիլիոսին: Այս խոսքերը վարմանալի փոփոխություն առաջացրին մարդկանց տրամադրություն մեջ, և ժողովուրդը հավանություն միահամուռ կանչեց: Յիցերոնին խնդրեց իր վրա վերցնել Մանիլիոսի պաշտպանություն գործը ինչին նա սիրով ենթարկվեց, գլխավորապես հանուն Պոմպեոսի, որն այդ ժամանակ բացակայում էր: Երկրորդ անգամ ելույթ ունենալով իա նույն գիմեղ ժողովրդին և իր խոսքում պատանեկան արիությունը հանդիմանեց օրհպարիսիայի կողմնակիցներին և Պոմպեոսին նախանձողներին:

X Այնուամենայնիվ նա կոնսուլ ա աջադրվեց ի շապետության, ընդամենն արիստոկրատական կուսակցությունը նրան պակաս աջակցություն ցույց չտվեց, քան ժողովրդականը: Ահա թե ինչ պատճառով նրան առաջադրում էին և՛ սրանք և նրանք: Սուլլայի օրոք պետական կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները սկզբում անհեթեթ լինելով, իսկ հիմա որոշ ժամանակ անցնելուց հետո և սովորույթի պատճառով ժողովրդական զանգվածներին դրանք սկսեցին պատկերանալ ինչ-որ լափով ոչ վատ և բավականին հաստատուն բաներ: Բայց կային

մարդիկ, որոնք ձգտում էին խախտել ու փոփոխել գործերի ներկա վիճակը, ընդ որում հանուն սեփական շահի, այլ ոչ թե հանուն ընդհանուր բարօրության: Մինչ Պոմպեոսը դեռ էլի կուլում էր թագավորների դեմ Պոնտոսում ու Հայաստանում, Հռոմում շկար ոչ մի մարտունակ ուժ, որը կարողանար հակադրվել նորությունների այդ սիրահարներին Իսկ նրանց գլխավորում էր խիզախ, նախաձեռնող և իր բնավորությամբ ամեն ինչի պատրաստ մի մարդ Լուցիոս Կատիլինան: Ուրիշ բազմաթիվ ու կարևոր հանցագործություններից զատ, նա մի ժամանակ իր վլա էր հարուցել քրոջ հետ կենակցելու և ևղբորն սղանելու մեղադրանք Այդ բանի համար, վախենալով իր նկատմամբ դատ ու դատաստանից՝ նա Սուլլային համոզել էր սպանվածին գրանցել որպես դեռ կենդանի մարդ նրանց թվում, ովքեր պետք է մեռնեին Ընտրելով նրան որպես իրենց պետ՝ շարամիտները միմյանց հավատարմության երդում էին սլել ընդ ոչ ոս զոհասեղանի վրա մարդ էին դրել և կերել նրա միսը: Քաղաքային երիտասարդության նշանակալից մասը այլասերվել էր Կատիլինայի կողմից սրանցից յուրաքանչյուրին նա մշտապես սիրաշահում էր ամեն կարգի բավականություններով, գինարբուքներով, նույնիսկ սիրուհիներ էր ճարում Իրանց համար և, լինալով, անհրաժեշտ միջոցներ էր տլամադրում այդ բոլորի համար

Պառակավելու էր նախապատրաստված սլ ողջ Լորուիան և Նախաալպյան Փալլիայի Նշանակալի մատչ: Հռոմում էլ էր տրմադրությունների ծայրահեղ անկաշունությունս նկատվում հարստության բաշխման գործում ս ուղծված անկանոնության պատճառով ամենահայտնի և տոհմեկ մարդիկ աղքատանում էին՝ սնանկանալով հանդիսախաղերի, խնջույքների վրա իշխեչասիրական ձգտումների հետ կապված վատնումների և շինարարությունների վրա, իսկ սրանց հարստությունները հոսում էին ցածր կոշման ու ճազման տեր մարդկանց գրպանը: Պործերի աշախտի վիճակում շատ բան պետք էր որպեսդի խախտվեր հավասարակշռությունը, և յուրաքանչյուր խիզախ մարդ կարող էր քայքայել հասարակական կւ ղր, որն ինքնին տրդեն անտողջ էլ:

XI Սակայն Կատիլինան ցանկանալով նախապես գրավել ամուր հենակետ՝ սկսել հետամտել կոնսուլության, ընդ որոմ նս հատկապես հույսը դնում էր այն բանի վրա որ սլիտի կառավարեր Փայսս Անտոնիոսի հետ համատեղ որն ինքնին սղ պես կառավարող ընդունակ չէր ոչ շատ լավ ոչ էլ շատ վատ բանի բայց կարող էր ժառայել իրրև հավելուկ մի ուրիշ, ղեկավարող ուժի: Լավագույն քաղաքացիների մեծամասնությունը այդ բանը կանխատեսելով՝ առաջադրեց Յիցերոնի թեկ-

նածուծյունը, իսկ քահի որ ժողովուրդը իւան բարեհաճորեն էլ վերաբերվում, մեջտեղից գուրս եկալ Կատիլինայի թեկնածուծյունը, իսկ Յիցերոնն ու Գայոս Անտոնիոսը ընտրվեցին՝ ընալած, որ թեկնածուներից միայն Յիցերոնն էր սերս մ հեծլալ հորից ալ ոչ թե սենատորից:

XII Կատիլինայի մտադրությունները դեռևս գաղտնի էին մնոմ ժողովրդից Յիցերոնն էլ անցնելով իր պաշտոնին, հանդիպեց մեծ դրծւարություններին՝ գալիք պալքարի նախանշանակների: Քանզի մի կողմից, իրանք, ում համար Սուլլայի օրենքները խոչընդոտ էին հանդիսանաւ գրադեցնելու մագիստրատուան — իսկ այդպիսիք քիչ չէին և դրանք թուլ էլ չէին — գիմեցին դեմագոգիայի, հետամտելով պաշտոնների, ու թեև Սուլլայի բռնապետությանն ուղղված նրանց ճառերս մ շատ բան կար ճշմարիտ ու արդարացի, բայց նրանք սասանում էին պետական կարգը ոչ իր ժամանակին և չաշվի շահնելով հանգամանքները: Իսկ մյուս կողմից, նույն այդ հիմունքնելով օրինագծեր էին մտցնում նաև ժողովրդական արիքունները ստաշարկելով հիմնել դ'ցեմվիրատ ս' սահմանափակ լիադորություններով: Գեցեմվիրնէրին, իրալս սնսահմանափակ իշխանության սնեցողնէլի ամբողջ Բուալիայի, ամբողջ Մտորիքի և այն բոլոր երկրների վրա որոնք վերջին ժամանակներս Պոմպեոսի շնորհիվ միացված էին Հռոմին իրավունք էր բոճ'նելում վառել պետական ունեցվածքը դատավճիռնէր արձակել արտաքսման է'թարկել ում որ հսրկ համարվեր քաւաքները բնակեցնել գաղութաբնակներով, դրամ վերցնել գանձարանից, զորք պահել և զորք հավաքել ըստ անհրաժեշտության: Ուստի և այսպիսի օրենքին համակրում էին որոշ նշանավոր մարդիկ և առաջին հերթին՝ Գայոս Անտոնիոսը՝ Յիցերոնի իշխանակիցը որը հույս ուներ ընկնել տս սնյակի մեջ: Կարելի է ենթադրել, որ գիտնալով Կատիլինայի կողմից նախապատրաստվող հեղաշրջման մասին, Անտոնիոսը թշնամարար չէր տրամադրված նրա հանդեպ՝ ծանրաբեռնված լինելով պարտքերով: Ահա Վնցսա էլ ամենից շատ վախեցնում էր լավագույն քաղաքացիներին Ջանալով ամենից առաջ գրավել Անտոնիոսին Յիցերոնը որւշում կայացրից Մակդոնիա պրովինցիայի կառավարումը Անտոնիոսին փոխանցելու մասին, իսկ իրեն առաջարկվող Գալլիայից նա հրաժարվեց և այդքան կարևոր գիշում անելով Անտոնիոսին՝ նրան հակեց իր կողմը որպես յուրատեսակ վարձո դերասանի որը պետք է կրկներ նրան պետական բոլոր գործերում: Եվ ահա երբ Անտոնիոսը դարձավ հլու և հնազանդ Յիցերոնն արդեն ավելի մեծ համարձակությամբ սկսեց հակազդել խոճվարարների վրա, այն է սենատում լույթ ունենալով ընդդմ հենց այդ

օլենքի նա իր նառով այնպես ապշեցրեց այն մարդկանց ովքեր իրեն առաջադրել էին, ու նրանք ոչնչով չառարկեցին: Այնուհետև երբ նրանք կրկին ձեռնարկեցին նույն բանը և, նախապատրաստվելով կոնսուլներին կանչեցին կամիցիալի, Ցիցերոնը բոլորովին շվախեցավ այլ սենատին հրավիրեց հետևել իրեն և, հանդես գալով ժողովրդի առաջ, նրան ոչ միայն համառոտ մերժել օրենքը այլև ստիպեց արիքուններին, որոնք պարտված էին այդքան փայլուն պերճախոսության հանդեպ հրաժարվել այլ մտադրություններից ևս

XIII Հիրավի, այս մարդը բոլորից լավ կարուչացավ ցույց տալ հումակացիներին, թե ալոպար դործին որքան գրավչություն կարող է տալ ճարտասանությունը: Նա ցույց տվեց, որ ճշխարտությունն սնունդն է, էթոլ այն արտահայտում էն հմտորեն և որ լավ պետական գործչին փաստորեն պատշաճ է միշտ գերադասել ամբոխին հանո ւրդարացին, իսկ խոսքով զարգարել օգտակարի դատությունը: Նրա խոսքի հմայիչ գեղեցությունը օրինակ կարող է մտայնել նաև հետևյալ դեպքը, որը կատարվել է նրա կոնսուլության օրոք թատրոնի տեղերի պատճառով: Մինչ այդ հեծյալները թատրոնում սասում էին ամբոխի հետ մեջընդմեջ և նայում էին ներկայացումը ժողովրդի հետ միասին, բայց առաջինը արիքուն Մարկոս Օթոնի մտքով անցավ պատիվ տալ հեծյալներին՝ նրանց բաժանելով այլ քաղաքացիներից և նրանց հատկացնելով առանձին տեղ, որը մինչև այժմ էլ նրանք պահպանում են իսկ ժողովուրդը սա ընդունեց որպես անպատվություն իր նաշնին և երբ թատրոնում երևաց Օթոնը սկեց շվացնել հեծյալներն էլ ջերմորեն ողջունեցին նրան ծախահարություններով ժողովուրդն ավելացրեց իր շվոցը, նրանք էլ՝ ծախահարությունները իսկ առաջ կողմերը միմյանց դեմ շուտ գալով՝ առցան հայհոյանի այսպես որ թատրոնում անկալություն սկսվեց: Բայց երբ Ցիցերոնը տեղեկանալով այս մասին սերկայացավ թատրոն և, ժողովրդին կանչելով Բելլոնայի տաճարի մոտ, հանդիմանանքի և համադրան խոսքերով նրա վրա ներգուշություն ունեցալ այդ մարդիկ վերադառնալով թատրոն սկսեցին ուժգին ծափահարել Օթոնին և հեծյալների

Լու մրցել նյտ հանդեպ պատվի ու հարգանքի սշանների ցուցադրմամբ:

XIV Բայց Ատալիինայի շուրջը հավաքված դավադիրների խումբը, որ ահից թարնվել էր, նորից բաջալերվեց: Նրանք սկսեցին միասին հախարակել և միմյանց կոչ էին անուլ ավելի համարձակորեն գործի անցնել: սիրան կհայտնվեր Պոմպեոսը որը ինչպես լսել էին արդեն վերադառնում էր իր զորքով: Կատիլինային էլ սադրում էին գլխավորապես Ատալիին լեռերանները սրանք լեռակություն էին հաստատել ամբողջ

Իտալիայում, իսկ մեծ մասը այդ թվում և ամենամարտունակները, ցրել էին եկեղեցիներում և հարուստ կալվածքներում մեկ: Սրանք բոլորը նորից սկսել էին երազել պատրաստի հարստությունների կողոպուտի և հափըշտակության մասին Պարագուայի ունենալով Մանիլիոսին՝ նրանցից մեկին, ովքեր առանձնապես աչքի էին ընկել Սուլլայի գլխավորությամբ կատարված արշավանքներում, նրանք միացան Կատիլինային և եկան լցվեցին Հռոմ սրպեսզի պաշտպանեին նրա թեկնածությունը որովհետև Կատիլինան նորից էր նկրտում կոնսուլության՝ որոշելով խառնաշփոթության մեջ սպանել Յիցերոնին հենց կոմիցիանների ժամանակի թվում էր, թե աստվածությունն ինքն էլ նախադրուշացնում էր այն բանից, ինչ որ կատարվում էր. երկրաշարժելով, կայծակի հարվածներով և ուրվականների երևումով Իսկ մարդկանց ցուցմունքները թեկուզև արդարացի էին, դեռևս չէին կարող օգտագործվել որպես հանցանշաններ ընդհանրապես և այնքան ազդեցիկ մի մարդու, ինչպիսին Կատիլինան էր: Դրա համար էլ Յիցերոնը հետաձգելով ընտրությունների օրը՝ Կատիլինային կանչեց սենատ և հարցաքննեց այն ամենի վերաբերյալ ինչ որ խոսում էին նրա մասին: Իսկ վերջինս Լեթագրելով, իմ սենատում էլ կան մարդիկ, ովքեր ձգտում են նոր կարգերի, և դրա հետ միասին ցանկանալով իրենց ցույց տալ իր համախոհների առջև Յիցերոնին սովեց կտրուկ պատասխան: «Իսկ ի՞նչ սարսափելի բան եմ ասում ո՞ր,— ասաց նա,— էթե ունենալով իմ առաջ երկու մարմին, մեկը հյուծված ու կոր ծանվող, բայց գլխով, իսկ մյուսն առանց գլխի բայց ուժեղ և մեծ, ես ինքս ղլուխը վերցնում զնում եմ վերջինի վրա»: Այս խոսքերից հետո, որոնք ակնարկներ էին բովանդակում սենատի և ժողովրդի հասցեին, Յիցերոնն էլ ավելի ահաբեկվեց, այնպես որ նրան տանից մինչև Մարտիայի դաշտը զրահներ հագած ուղեկցում էին ազդեցիկ մարդիկ և երիտասարդությունից շատերը նա ինքը, առգան ուսերից ցած թողնելով՝ դիտավորյալ ցուցադրում էր զլահի մի մասը, որպեսզի ցույց տար, թե ինքն ինչպիսի վտանգի մեջ է: Ժողովուրդը, զայրացած, սկսեց հավաքվել նրա շուրջը և, վերջիվերջո անցնելով քվեարկության, երկրորդ անգամ մերժեց Կատիլինային, իսկ կոնսուլ ընտրեց Սիլանոսին և Մուրենային:

XV Դրանից շատ շանցած, երբ սկսեցին արդեն Կատիլինային միանալ ու ջոկաանել կազմել էտրուրիայում եղած նրա համախոհները և մոտ էր այն օրը որ նշանակված էր հարձակման համար Յիցերոնի օանը կեսգիշերին մոտ, հայտնվեցին ամենաառաջին հոռմեացիները և ամենատղեցիկ մարդիկ՝ Մարկոս Կրասոսը Մարկոս Մարցելլոսը և Սկի-

պիտն Մետելլոսը: Բախելով դուռը և դուրս կանչելով դռնապանին նրանք հրամայեցին արթնացնել Յիցերոնին և ասել իրենց գալստյան մասին: Բանն այն է, որ Կրասսոսին ընթրիքից հետո իր դռնապանը հանձնել էր ինչ-որ անհայտ մարդու կողմից բերված նամակներ նամակները, սրոնք հասցեագրված էին այլ անձանց, ստորագրված էին, և միայն մեկը, որն ուղղված էր Կրասսոսին անանուն էր: Կրասսոսը կարդացել էր միայն այդ նամակը և, քանի որ դրանում ասվում էր, թե Կատիլինան պատլաստում է մեծ արյունահեղություն ու խորհուրդ էր տրվում գաղտնի հեռանալ քաղաքից, նա մնացած նամակների կնիքները չէր քանդել, այլ իսկույննեթ եկել էր Յիցերոնի մոտ՝ սպառնացող լտանգից ցնցված, իսկ գուցեև ցանկանալով աղատվել մեղադրանքներից, որոնք նրա վրա էին դնում Կատիլինայի հետ բարեկամական կապերի պատճառով: Այսպիսով, խորհրդակցելով նրանց հետ՝ Յիցերոնը հաջորդ առավոտվա լուսաբացին հավաքեց սենատը, հանձնեց իր հետ բերած նամակները նրանց, ում անունով ուղարկված էին դրանք, և առաջարկեց կարդալ բարձրաձայն: Բոլորի մեջ առանց բացառության խոսվում էր դավադրության մասին: Իսկ երբ լուր եկավ նախկին պրետոր Կվինտոս Արրիոսից, որը աեղեկացնո մ էր էտրուրիայում ռադմական ջոկատների ձևավորման մասին, և մյուսը՝ այն մասին թե Մանլիոսը թափառում է էտրուսկական քաղաքների շրջակայքում՝ անրնդհատ լուրերի սպասելով Հոտմից, — սենատը որոշեց հանրապետությունը փտահել կոնսուլներին, այն առումով, որ նրանք վարվին ըստ իրենց հայեցողության պետությունը փրկելու նպատակներով: Հնուց ի վեր ընդունված էր, որ սենատն այդպես վարվում էր ոչ հաճախ այլ միայն մեծ վտանգի սպառնալիքի ներքո:

XVI Ստանալով այս իշխանությունը՝ Յիցերոնն արտաքին գործերն ամբողջովին վստահեց Կվինտոս Մետելլոսին քաղաքների կառավարումն էլ վերջրեց իր ձեռքը և ամեն ու դուրս էր գալիս՝ պաշտպանված մարդկանց այնպիսի բազմությամբ որ դբադեցնում էր Գորումի գղալի մասը, երբ իր հետևից այնտեղ էր մտցնում իր ուղեկցորդներին ըր կողմից էլ Կատիլինան ի վիճակի շինելով այլևս ասնել հետագա հապադումը՝ որոշեց, որ ինքը ծլկի Մանլիոսի ու նրա ջոկատի մոտ իսկ Մարցիոսին ու Յեթեգոսին հրաման տվեց՝ վերջնելով սրերը, առավոտյան ներկայանալ Յիցերոնի դասն մոտ ողջունելու պատրվակով և, հարձակվելով, սպանել նրան: Այս մասին Յիցերոնին լուր տվեց Փուլվյան՝ ազնրվատոհմիկ մի կին, որը իրա մոտ եկավ գիշերը և հորդորեց զգուշանալ Յեթեգոսից: Իսկ նրանք հայտնվեցին լուսաբացին և, էրբ ներս շթողեին սկսեցին վիճել և այնպիսի աղմուկ բարձրացին որ իրենց վրա էլ

ավելի մեծ կասկածանք հարուցեցին: Յիցերոնն էլ, տանից դուրս գալով, սենաա հրավիրեց Յուպիտեր-Կանգնեցնողի տաճարում, որին հռոմեացիները Ստատոր են անվանում: Այս տաճարը կառուցված է սրբազան ճանապարհի սկզբին այնտեղ, որտեղից բարձրանում են Պալատին: Երբ ուրիշների հետ այստեղ եկավ նաև Կատիլինան կարծես թե նրա համար, որ արդարանար, ապա սենատորներից ու մեկը շմնաց նրա հետ միասին նստելու նրանք բոլորը հետ քաշվեցին նրա ի ստարանից: Երբ նստակսեց խոսել, աղմուկով ընդհատում էին նրան և վերջապես Յիցերոնը աեղից ելնելով՝ նրան հրամայեց հեռանալ քաղաքից «Քանի որ — ասաց նա — ես գրծում եմ խոսքով, իսկ դու զենքով մեր միջև պետք է պարիսպ լինի» Կատիլինան իսկույննեթ 300 զինված մարդկանց գլուխ անցած քաղաքից դուրս գալով զորապետի պես շրջապատված սակրավոր լիկտորներով և ռազմական դրոշների ուղեկցությամբ շարժվեց դեպի Մանլիոսը: Այնուհետև հավաքելով մինչև քսան հազարանոց մի զորք՝ նա սկսեց շրջել քաղաքները՝ դրանց իր կողմն էր գրավում և ապստամբության կոչ անում: Եվ երբ լանն այսպիսով հասավ բացա՛ւյտ պատերազմի, Կատիլինայի գիտ կռվելու ուղարկվեց Անտոնիոսը:

XVII Կատիլինայի գայթակղած մարդկանցից նրանց, ովքեր մնացել էին քաղաքում, հավաքեց ու քաջալերեց Կոննելիոս Լենտուլոսը՝ Սուլա մականունով, ազ՛վատահմիկ բայց խոտելի կյանքով ապրող մի մալդ որն անցյալում փշագած վարքի համար սենատից վճնդվել էր խկ այժմ երկրորդ ասգամ պրետորի պաշտոն էր զբաղեցնում ինչը սովորական բան էր այն անձանց համար ովքեր ցանկանում էին վերադարձնել իրենց սենատուական կոչումը: Ստում ես Սուրա մականունը նրան տրված է հետևյալ առիթով՝ Սուլայի օլոր լվեստորի պաշտոն կատարելիս՝ նա սլետական դրամներից մեծ գումարներ է վատնելու իսկ երբ զայրագնած Սուլան սենատում նրանից հաշիվ է սլահսնջել, սա հանդես է եկել՝ ընդունելով ամենաասհոգ ու անփուլթ տեսք և հայտարարել, թե ինքը հաշիվ լի տա, այլ ցույց կտա իր սրնքամիսը. այսպես սովորաբար անում են երեխաները զնդակախաղի մեջ տարվելիս: Հենց դրա համար էլ նրան Սուրա անունն են կալցրել, քանի որ հռոմեացիները «սուրա» բառով անվանում են սրնքամիսը: Մլուս անգամ պատասխանատվության ենթարկվելիս նա կաշառել է դատավորներից մի քանի սին և արդարացված լինելով երկու ձայնի առավելությամբ, նկատել է, որ դատավորներից մեկին տված իր կաշառքը ավելորդ վատնում է եղել: Նրա համար բավական էր և այն, որ արդարացվեր միայն մեկ ձայնի առավելությամբ: Այս մարտն որը բնությունից արդեն այդպիսին էր

և դրա հետ միասին զրգոված էր Կատիլինայի հորդորներից վերջնակա-
նապես փշացրին կեղծ գուշակներն ու իտաբեբաները՝ դատարկ հույսեր
ի երջնչելով նրան, նրա համար կարգալով իրենց իսկ հորինած ոտանա-
վորներն ու մարդարևությունները, որոնք իբր թե վերցված էին սիրելի-
լիական գրքերից և կանխադո շահում էին, թե ճակատագրի կողմից նա-
խանշված է, որ երեք Կոոնելիոսներ միանձնյա կառավարելու են Հոու-
մում: Իրանցից երկուսն արդեն կատարել են ճակատագրի կամբը Յին
նան ու Սուլլան, և հիմա նրան՝ մնացած երրորդ Կոոնելիոսի համար
աստվածությունը նախապատրաստում է միապետություն, որը նա պետք
է ընդունի՝ Կատիլինայի նման հապաղման պատճառով ձեռքից բաց
լիթոնելով բարեպատհ առիթը:

XVIII Այսպիսով Լենտուլոսը կառուցել էր չ թե շնչին ու մանր
ինչ-որ ծրագրեր, ասլ ուզում էր ոչնչացնել ողջ սենատը և մնացած քա-
ղ սքացիներից, ու մ որ հնարավոր էր, իսկ քաղաքն էլ այրել և ոչ ոքի
լինալել բացի Պոմպեոսի երեխաներից, սրանցից նա մտադիր էր առե-
վանգել, պահել իր մոտ և պահպանել սրպես պատանդների, որոնք կա-
պահովեիս իր և Պոմպեոսի աշտեցումը ամենուրեք արդեն համառ լու-
լեր էին տարածվում ղեծ արշավանքից վերջինիս վերադառնալու մա-
սին: Հարձակման համար նշանակված էր Սուտուոնալիաների սունի գիշեր
ներից մեկը: Սրերը, խծուծը և ձյութը դավադիրները թարցլ էլ էին՝ այդ
բոլորը հավաքելով Յեթեգոսի տանը: Ընտրելով հարցուչ մարդ և քաղաքը
բաժանելով նույնքան մասերի նրանք դրանցից յուրաքանչյուրում վիճա-
կահանութչամբ նշանակել էին այդ մարդկանցից մեկին, որպեսզի միան
պամից շատերը հրդեհեին և քաղաքը միաժամանակ բոցավառվեր բոլոր
կողմերից: Մյուսներն էլ պետք է արգելափակեին ջրատարները և, լվ
որ ջրի գաո սպան էին:

Այս ժամանակ երբ այս նախապատրաստություններն էլն արվում
Հոումում էին գտնվում էրկու պեսպաններ ալլոբրոգների կողմից, մի ժո
պովուրդ, որն այն ժամանակ ծանր վիճակ էր ապրում և նեղվում էր
հոամեական տիրապետութչան տակ: Լենտուլոսն իր ընկերների հետ Են-
թադրելով, թե պեսպանները կարող են պետք գալ Գալլիային ապստամ-
բութչան դրգսելու և Հոամիո կողմից համար նրանց ներդրավեցին իրենց
լամախոհների թվա է և նամակներ ավեցին իրենց սենա-
տին և մյուսներն էլ հատիլինային հանձնելու համար, առաջին-
ներում անկախություն խոստանալով ալլոբրոգներին վերջիններում Կա-
տիլինային կոլ անելով սարուկներին ազատություն շնորհել և շտապել
Հոում Սրանց հետ նրանք Կատիլինայի մոտ ուղսլ կեցին ոմն Տիոոսի,

ծագումով կրոտոնցի, որին հանձնարարված էր տանել նամակները՝ Բայց այս կարգադրություններին, որոնք թեթևամիտ մարդկանցից էին գալիս և շատ անգամ՝ գինու սեղանի շուրջը հավաքված ու կանանց հասարակոթյան մեջ, անխոնջ կերպով հետևում էլ Ցիցերոնը և գոթում էր սթափ կշռադատվածությամբ և ամեն ինչ հիանալիորեն ըմբռնելով ու քննարկելով։ Գրանից լացի, իր տրամադրության տակ բազմաթիվ մարդիկ ունենալով, որոնք հետևում էին, թե շուրջն ինչ է տեղի ունենում և օգնում էին նրան հետախուզության մեջ, գաղտնի կապ ունենալով նաև բազմաթիվ վստահելի անձանց հետ, որոնք պավալրության մասնակիցներ էին համարվում Ցիցերոնը գիտեր այն պաշմանների մասին, որ կնքել էին դավադիրները Երուսաղեմի անցյալների հետ։ Գիշերը դարանա մուտ լինելով՝ նա բռնեց կրոտոնցուն իր նամակներով հանդերձ՝ նույն այդ ալլորբոզների հետ գաղտնի համագործակցելիս։

XIX. Հաջորդ օրը լուսաբացին սենատը հավաքելով Համաձայնության տաճարում՝ նա ներկաներին ծանոթացրեց սամակների բովանդակության հետ և ունկնդրեց իրադրվելներին։ Հաջորդամբ հանդես եկավ և Հունիոս Սիլանոսը որոշ մարդիկ լսել էին թե ինչպես է Ցիցերոնը տանել, թե սպասվում է երեք կոնսուլների և շուրս պրետորների սաանությունը։ Հենց այս կարգի լուրեր հաղորդեց նաև նախկին կոնսուլ Պիզոնը, իսկ Գայոս Սուլպիցիոսը՝ պրետորներից մեկը որն ուղարկված էր Ցեթեգոսի տունը, այնտեղ գտել էր նետողական և այլ բազմաթիվ զենքեր մանավանդ բազում նոր սրված սրեր ու դաշույններ՝ Վերջիվերջո, երբ սենատը որոշեց կրոտոնցուն անպատեհիություն խօստանալ այն դեպքում, եթե նա ամեն ինչ բացահայտի, Լենատուսը մերկացվեց և իշխանությունից զրկվելով (քանզի նա այն ժամանակ արեատոր էր), սենատում վրայից հանեց ծիրանիով եզրազարդված տոզան և փոխարինեց իր դժբախտությանը սազական զգեստով։ Ինչպես նա նույնպես և նրա համախոսները հանձնվեցին պրետորներին՝ տնային կալանքի տակ պահելու համար։

Արդեն երեկո էր և ժողովուրդը խռնված սպասում էր, երբ Ցիցերոնը դուրս եկալ սենատից։ Դիմելով քաղաքացիներին՝ նա բացատրեց թե բանն ինչ է և սպա, նրանց ուղեկցությամբ, մտավ իր հարեանությամբ ապրող մի բարեկամի տունը նրա սեփական տունն զբաղեցրել էին կանայք, որոնք այնտեղ խորհրդավոր կրոնածեսերով կատարում էին տունը այն աստվածուհու, որին հոռմեացիներն անվանում են Բարի, իսկ հույները կանանց աստվածուհու՝ Սրան յուրաքանչյուր տարի զոհեր են մատուցվում կոնսուլի տանը՝ վերջինիս կնոջ կամ մոր կողմից, վեստա-

լուհիներէ ներկայս իյամբ: Այսպիսով, մտնելով այդ տունը և ունենալով իր հետ միայն մի քանի անձ՝ Յիցերոնն սկսեց մտածել թե ինչպե՞ս վարվի այդ մարդկանց հետ: Երանց նկատմամբ այսքան մեծ հանցա գործութիւնը համապատասխան պատժի բարձրագոյն չափը կիրառելուց զգուշանում էր նա և չէր համարձակվում դա անել, մի կողմից բնածին մարդասիրական զգացմունքից դրդված, իսկ մյուս կողմից երկյուղելով որ հանկարծ չթվա, թե ինքը շարունակում է իր իշխանութիւնը՝ լաժան դատաստան տեսնելով աղնվազարմ և քաղաքում աղղկցիկ բարեկամներ ունեցող մարդկանց հետ: Մեղմ վարվելուն էլ խանգարում էր նրանց կողմից սպառնացող վտանգը: Որովհետև ենթարկվելով ավելի թեթև պատժի, քան մահապատիժն է, նրանք դա լին գնահատի, այլ, միավորելով իրենց բնածին արատավորութիւնը շարութեան նոր հորդացման հետ, կբռնկվեն, պատրաստ՝ ամեն ինչ անելու վճռականութեամբ, իսկ նա ինքը որ առանց այդ էլ ժողովրդի մեջ սրվասիրտ մարդու համբավ շուներ, կթվա թույլ ու փոքրոգի:

XX Մինչ Յիցերոնը տանջվում էր այդ երկմտանքների մեջ, զոհաբերութիւններ կատարող կանանց երևաց այսպիսի մի նախանշանակ երբ կրակը թվում էր, բոլորովին մարել էր արդեն, հանկարծ կրակարանը մոխրի և այրված կեղևի միջից դուրս նետեց մեծ ու վառ մի բոց: Մյուս կանայք վախեցան, իսկ վիստալուհին ըր պատվիրեցին Յիցերոնի կնոջը՝ Տերենցյային տաանց հապաղելու, գնալ ամուսնու մոտ և նրան ասել որ անի այն, ինչ անհրաժեշտ է համարել պետութեան բարօրութեան համար, քանի որ աստվածուհին պարգևել է վառ լույս, որը բարեբախտութիւնն ու վառք է նախագուշակում նրա համար: Տերենցյան (իսկ այս կինը այլ դեպքերում բնականից եղել է ոչ այնքան հեզ ու երկչոտ, այլ աշքի է ընկել փառասիրութեամբ և, հենց Յիցերոնի խոստովանութեամբ, ավելի շատ խառնվել է պետական գործերին վերաբերող իր հոգսերին, քան տնայինին) ոչ միայն հաղորդեց նրան այդ մասին, այլ լե ինքն էլ ջանաց գրգռել նրան ընդդեմ ձերբակալվածների: Նույնն անում էին և՛ Կվինտոսը՝ Յիցերոնի եղբայրը, և՛ նրա գիտական պարագմունքների գծով ընկերներից մեկը Պուբլիոս Նիգիդիոսը, որի աջակցութեամբ էր նա լուծում շատ ու շատ կարեւոր պետական գործեր: Հաջորդ օրը, երբ սենատում քննարկման էր դրված այդ մարդկանց պատժելու հարցը և Սիլանոսին առաջարկվեց առաջինը տալ իր կարծիքը, նա ասաց, որ դրանց պետք է բանտ տանել և բարձրագոյն պատժի ենթարկել: Բոլորքը մեկը մյուսի հետևից, միացան այս կարծիքին, մինչև որ հերթը հասավ Կեսարին, որը հետագայում դիկտատոր դարձավ: Այն

ժամանակ լինելով դեռ էլիտասարդ, թաքցնելով իր մեջ գալիք մեծու-
թյան տվյալներ, նա իր քաղաքականությամբ ու դիտավորություններով
արդեն ոտք էր դրել այն ուղին որին հետևելով՝ հռոմեական հանրապե-
տությունը միապետությամբ փոխարինեց: Ուրիշներին նա կարողանում
էր թաքցնել դա բայց Ցիցերոնի մեջ շատ անգամ էր կսուկածներ հա-
յուցել, թեև իրեն չէր մատնում որևէ բանով որը կալ ու էր իբրև հան-
ցանշան ծառայել: Ոմանք նույնիսկ ասում էին թե նա քիչ էր մնացել
մերկացվեր, բայց կարողացել էր ճողոպրել: Ուրիշներն էլ, սուում են, թե
Ցիցերոնը դիտավորյալ էր Կեսարի վրա եղած մատնագիրը անուշադրու-
թյան ու անհետևանք թողնում՝ վախենալով նրա ազդեցությունից ու բա-
րեկամներից որովհետև միանգամայն պարզ էր, որ ավելի շուտ ի սեր-
վերջիններիս Կեսարն էր ազատվելու հալածանքից քան Կեսարի պատ-
ճառով նրանք հալածանքի կենթարկվեին:

XXI Եվ ահա երբ հերթը Կեսարին հասավ նա տեղից վեր կենա-
լով արտահայտվեց հօգուտ այն բանի որ բանտարկվածներին շղիսա-
տեն, այլ, նրանց ունեցվածքը պետականացնելով՝ նրանց լլ հեռացնել
այն քաղաքները, որոնք Ցիցերոնը հուլիոս կհամարի, և, շղթայված,
կալանքի տակ պահեն մինչև որ պարտվի Կատիլինան: Այս կարծիքին,
որն աչքի էր ընկնում գթասրտությամբ և արտահայտողի մեծագույն հա-
մուզականությամբ քիչ կշիռ չավեց Ցիցերոնն ինքն էլ իր հերթին տե-
ղից վեր կենալով նա շարագրեց երկու տեսակետները մասամբ հա-
մաձայնելով դրանցից առաջինի հետ մասամբ էլ մյուսի, որ Կեսարն էր
ասել: Եվ բոլոր բարեկամներն էլ ենթադրելով, թե Կեսարի առաջարկը
համապատասխանում է Ցիցերոնի շահերին (յանզի նա ավելի քիչ կեն-
թարկվի մեղադրանքների եթե այդ մարդիկ մահվան շղատապարտվեն)
հակված էին ավելի շուտ այս երկրորդ կարծիքին, այնպես որ Սիլանոսն
էլ միտքը փոխեց ու հետ վերցրեց իր խոսքը, հայտարարելով, թե ինքը
մահապատիժը չէր նկատի ունեցել, քանզի հռոմեական սենատորի հա-
մար բարձրագույն պատիժը բանտն է: Երբ այս կարծիքն ալտահայտ-
վեց, առաջինը դրա դեմ ընթրոստացավ Լուտացիոս Կատուլոսը, իսկ ապա
նրան պաշտպանեց սուև Կատոնը իր ճարտասանության սղջ ուժն ուղ-
ղելով Կեսարի դեմ կասկածանքների ուժեղացմանը՝ նա սենատորների
սիրտը զայրույթով լցրեց և մեղադրյալների համար մահվան դատա-
վճիռ կայացվեց: Այնժամ Կեսարը հանդես եկավ ընդդեմ ունեցվածքի
բռնագրավման, անաբարացի համարելով որ սենատը մերժելով այն
ս.մենը, ինչ բարեգութ էր իր՝ Կեսարի առաջարկության մեջ, օգտագոր-
ծեց դրա միայն ամենադաժան մասը: Իսկ քանի որ շատերն էին ուժգին

պնդում նա դիմեց ժողովրդս կսն սրիբուններին վերջիններս շաշտապա-
նեցին բայց Յիցլ բոնն ինքը ղիջուա արեց և հրաժարվեց բռնագրավումից:

XXII. Դրանից հետո նա սենատորների հետ գնաց ձերբակալվածների
մաս, նրանք բոլորը միևնույն տեղում չէին այլ յուրաքանչյուրը մեկ
պրետորի հսկողութեան տակ էր: Առաջինը Լենտուլոսին վերցնելով Պա-
լատինից Յիցերոնը սրան տարավ Սրբազան ճանապարհով ու ֆորումի
միջով որը շրջապատված էր այն պահպանող բարձր պաշտոնյաների
օղակով, մինչդեռ ժողովուրդը հետևում էր նրան համր սարսափ զղու-
լվ կատարվածի հանդեպ: Զարմանքից ու վախից ապշած էր մանու-
վանդ երիտասարդությունը, որին պատկերանում էր թե ներկա է արիս-
տոկրատիայի մի ինչ-որ հին ծիսակատարությունը: Անցնելով ֆորումն
ու հասնելով բանտին՝ Յիցերոնը Լենտուլոսին հանձնեց դահձին՝ հրա-
մայելով զլիսատել նրան Դրանից հետո բերելով Յեթեզոսին, ինչպես և
յուրաքանչյուրին հերթականությամբ, նա մահու տվեց նրանց: Նկատելով
հանցակիցներից էլի շատերին, որոնք խոնվել էին ֆորումում՝ անտեղ
յակ տեղի ունեցածին և սպասելով գիշերվանը այն ենթադրությունը,
թե ձերբակալվածները դեռ կենդանի են և գոցտ ազատվեն, նա բարձ-
րաձայն գոչելով ասաց «Նրանք ապրեցին» Այսպես ևն այտահայ-
տում հոռմեացիները այն մարդկանց մասին ոչ նք ըսել ևն էր շն
ուզում շարագույժ բառեր արտասանել:

Արդեն երեկո էր, և Յիցերոնը հրապարակի միջով ուղղվեց դեպի
տուն, բայց արդեն ոչ թե շրջապատված լուռ ու կարգով ընթացող քա-
ղաքացիներով այլ կանչերով ու ծափահարություններով դիմադրող
մարդկանցով, որոնք նրան բարձրաձայն անվանում էին հալոսների վե-
րականգնիչ ու փրկիչ: Փողոցները լուսավորում էին բազմաթիվ կրակ-
ների գոների մոտ ամենքը կանթեղներ և ջահեր էին դրել: Իսկ կանաչք
կաուրներից լուսավորում էին նրա ուղին ի նշան հարգանքի տեսնելով,
թե ինչպես է նա մեծ հանդիսավորությամբ վերադառնում ամենաան-
վանի մարդկանցով շրջապատված: Նրանք համարյա բոլորը մեծամեծ
պատերազմներ էին ավարտել քաղաք էին մտել որպես տրիումֆատոր-
ներ, Հոմին միացրել էին ոչ թիչ հողել ու ծովեր, բայց ընթանալով Յի-
ցլ բոննի հետ՝ միաձայն ստում էին որ հոռմեացի ժողովուրդը շատ զու-
լավարներն երախտաբարտ է հարստության ռազմավարի և իր հզո-
րության համար, բայց անվտանգության ու փրկության համար միմիայն
Յիցերոնին, որը Դրանից հետո վանեց այդքան մեծ ու ահեղ վտանգը
Քանզի այն չէ զարմանքի արժանին, ոչ նա խանդարեց ծրարի իրա-
ւորմանն ու պատժեց կատարողներին այլ այն որ մինչ այդ երբևէ

եղած խոտվություններից իր դիտավորութայններով ամենաընդարձակը նրա կողմից ճնշվել էր նվազագույն աղետալի միջոցների օգնութայամբ, առանց հուզումների ու խառնակութայունների, Կատիլինայի մոտ հավաք ված մարդիկ հենց որ իմացան, թե ինչ է տեղի ունեցել Լենտուլոսի և Ցեթեգոսի հետ ահռելի մեծամասնութայամբ լքեցին նրան ու փախան իսկ նա ինքը, իր մոտ մնացածների գլուխն անցած, մարտի մեջ մտնելով Անտոնիոսի հետ, սպանվեց: Նրա ջոկատն էլ ոչնչացվեց:

XXIII Այնուամենայնիվ մարդիկ էլ կային, որոնք պատրաստ էին վատարանել Ցիցերոնի գործողութայունները և վնասել նրան: Սրանց առաջնորդում էին հաջորդ տարվա համար ընտրված մագիստրատների կողմից՝ պրետոր Կեսարը և ժողովրդական տրիբուններ Մետելլոսը և Բեստիասը Իշխանութայուն ընդունելով այն ժամանակ, երբ մինչև Ցիցերոնի լիազորութայան լրանալը մնում էր միայն մի քանի օր՝ նրանք թույլ չտվեցին, որ նա ելույթ ունենա ժողովրդի առաջ և, նստարաններ գնելով ճարտասանական ամբիոնների վրա նրան շէին թողնում այնտեղ մտնել ու հնարավորութայուն շէին տալիս խոսել: Միակ քանը, որ նրան առաջարկում էին — այն էր որ կարող էր ելույթ ունենալ միայն պաշտոնից երդմնավոր հրաժարականի համար, եթե նա ուզում էր այդ: Այս պայմանով էլ Ցիցերոնը ելույթ ունեցավ իբրև թե երգման համար, և երբ նրա շուրջը լոտութայուն տիրեց, նա արտասանեց երգումը բայց ոչ այն, որ սահմանել էին նախնիները, այլ՝ իրենը, առանձնահատուկը, դեռևս չսվածը նա երգվեց, որ հայրենիքը փրկել է ու պահպանել նրա տիրապետութայան լիակատար անձեռնմխելիութայունը: Եվ ողջ ժողովուրդը միաձայն նրա հետեից կրկնեց նրա երգումը: Իսկ Կեսարն ու ժողովրդական արիբուններն էլ, դրանից հետո առավել ևս գաղազած, Ցիցերոնի համար պատրաստում էին նոր տազնապներ նրանք օրենք հանեցին, որի համաձայն Պոմպեոսը զորքով կանչվում էր Հռոմ՝ Ցիցերոնի իշխանութայանը վերջ տալու նպատակով Բայց այդ ժամանակ Կատոնը մեծ օգուտ բերեց և՛ նրան և ամբողջ պետութայանը, նա այն ժամանակ ժողովրդը դական տրիբուն էր և ընդդիմացավ իր ընկերակիցների դեկրետներին լինելով նրանց հետ հավասար իշխանութայամբ օժտված բայց ունենա լով ավելի մեծ հռչակ, քան նրանք: Հեշտութայամբ լուծելով նաև այլ զրգվարութայուններ և ելույթ ունենալով ժողովրդի առաջ՝ նա իր ճառում այնպես մեծարեց Ցիցերոնի կոնսուլութայունը, որ ժողովուրդը որոշեց վերջինիս հանդեպ ցուցաբերել դեռևս չեղած պատիվներ ու ողջունել նրան որպես հայրենայաց հոր: Որքան հայտնի է, առաջինը Ցիցերոնին է

պատիվ վիճակվել այդ առունը կրելու որը Կատոնը նրան տվեց ժողովրդական ժողովում:

XXIV. Ես այն ժամանակ մեծ ուժ ձեռք բերեց քաղաքում բայց շատերին էլ ստիպեց որ ատեն իրեն, և այն էլ ոչ թե որևէ վատ արարչով այլ սոսկ նրա համար, որ ընդհանուր դժգոհություն էր հարուցում իր մշտական ինքնագովությամբ ու ինքնամեծարմամբ: Քանզի ո՛չ սե նատը, ոչ գատարանը շէին կարող հավաքվել առանց այն բանի, որ չլսեին նրա ճամարտակությունները Կատիլինայի ու Լենտուլոսի մասին: Նույնիսկ իր գրքերն ու գրվածքները սկսեց լցնել սեփական անձի գովեստներով: Այս տգեղ սովորությունը տիրել էր նրան, ասես աչքով տված լինեին, ուստի և նրա ճառն էլ որ լեցուն էր գրավչությամբ ու սրբագեղությամբ, դարձավ ծանր ու տհաճ նրանց համար, ովքեր լսում էին նրան: Միևնույն ժամանակ, շնայած իր այդքան ծայրահեղ փառամուտությանը նա հեռու էր այն բանից, որ նախանձեր ուրիշներին: Ինչպես երևում է նրա երկերից նա առանց նվազագույն նախանձի գովաբանում է այն մարդկանց, որոնք ապրել են ինչպես նրանից առաջ այն պես էլ նրա օրոք: Բայց նրա ասածներից շատ բան հաղորդվում է և հիշողությամբ օրինակ՝ Արիստոտելի մասին ասել է, թե նա ոսկեհասուն պետ է Պլատոնի երկխոսությունների մասին, թե՛ դրանք Զեսի ճառերն են, եթե Զեսին հասուկ է մարդկային լեզուն: Թեոփրաստեսին էլ անվանել է «իմ ուրախությունը» իսկ այն հարցին, թե Դեմոսթենեսի ճառելից ո՞րն է համարում ամենալավը նա պատասխանել է. «Ամենաերկարը»:

Որոշ անձինք որոնք իրենց ներկայացնում են որպես Դեմոսթենեսի Էրկպագուներ, մանրախնդրորեն կաշում Էն Տիցերոնի այն բառերից, որ հանդիպում են բարեկամներից մեկին գրած նամակում որտեղ ասված է, թե Դեմոսթենեսը երբեմն նիրհում է իր ճառերի վրա բայց Էրանք մոռանում են այն մեծ ու հիացական գովեստները, որ Տիցերոնը հաճախ ընծայում է այդ հոետորին, մոռանում են նաև, որ այն ճառերը որոնք վրա նա առավել ջանասիրությամբ է աշխատել մանավանդ ճասերն քնդդիմ Անտոնիոսի, նրա կողմից «Փիլիպիկներ» են անվանված: Նրա ժամանակակիցներից էլ, որոնք հուշակված են եղել խոսքի ձիրքով կամ իմաստությամբ, չկա մեկը որին նա էլ ավելի փառավոր դարձրած չլինի, բարեհաճորեն խոսելով յուրաքանչյուրի մասին և՛ իր ճառերում և՛ գրքերում: Պերիպատիստիկ Կրատիպպոսի համար նա հոռմեական քաղաքացիություն ձեռք բերեց Կեսարից, որն այն ժամանակ արդեն լիկատտոր էր, իսկ Արեոպագոսից՝ սրոշում այն մասին, որ խնդրեն հույն այդ Կրատիպպոսին մնալ Աթենքում, որպեսզի նա պատանեկու-

թյան հետ զրույցներ վարեր և քաղաքի գարգը դառնար: Կան և Յիցերոնի նամակները՝ ուղղված Հերովդեսին և այլ նամակներ իր որդուն, որոնց մեջ նա հորդորում է սովորել Կրատիպպոսի մոտ: Հետո Գորգիասին էլ մեղադրում է այն բանում որ խրախուսում է մի երիտասարդի զոչայական հաճույքների ու գինարբուքների համար իսկ որդուն պատվիրում է խուսափել Գորգիասի հետ շփում ունենալուց: Յիցերոնի հունական նամակներից սա համարյա միակն է, որ գրված է մի քիչ գրգռված տոնով, էթե հաշվի շանենք մի ուրիշն էլ՝ բյուզանդացի Պելոպոսին ուղղվածը Գորգիասի դեմ նա հարձակվում է ըստ արժանվույն, էթե սա իրոք այն վատ ու փշացած մարդն է եղել, ինչպիսին թվում էր: Պելոպոսի հետ էլ նա մանր հաշիվներ է մաքրում՝ վերջինիս հանդիմանելով, որ բյուզանդացիների մոտ չի ջանացել միջնորդությամբ հաջողեցնել իր համար ինչ-որ պատիվներ ու դեկրետներ:

XXXV. Ոչ միայն սա է խոսում նրա ամբարտավանության մասին, այլև այն, որ, հրապուրվելով իր պերճախոսությամբ նա հաճախ դուրս էր գալիս թուլլատրելիի սահմաններից: Այսպես, օրինակ, նա մի անգամ դատարանում պաշտպանել է Մունատիոսին և երբ սա իր արդարացու մից հետո գատական հետաքննություն է հարուցել ընդդեմ Սաբինոսի՝ Յիցերոնի բարեկամի, Յիցերոնը, ասում են վայրույթից այնքան է իրեն կորցրել որ ասել է «Մի՞թե, դու Մունատիոս, դու ինքզ էս ձեռք բերել քո արդարացումը այլ ոչ թե էս եմ թանձր խավարով պատել գատավարութունը, երբ ամեն ինչ պարզ է էղել»: Տրիբունայից գովարանելով Մարկոս Կրասսոսին՝ նա մեծ հաջողություն է ունեցել, իսկ ասլա մի քանի օր անց սկսել է ան որդել նրան: «Այդ դո՞ւ չէիր, որ հենց այստեղ դովում էիր ինձ վերջերս» — հարցրել է Կրասսոսը նրան: «Այո պրակ տիկայի՛ համար — պատասխանել է Յիցերոնը — էս վարժվում էի անշնորհակալ թեմայով ճառ ասելու մեջ»: Մի այլ անգամ Կրասսոսը հայտարարել է, թե Կրասսոսներից ոչ ոք Հռոմում չի ապրել վաթսուց տարուց ավելի, իսկ հետո հերքել է դա՝ ասելով «Ես ինչո՞ւ պիտի դա ասեի»: «Դու գիտեիր — պատասխանել է Յիցերոնը, — թե հռոմեացիներն ուրախությամբ կլսեն ատ դ մասին, և հաճույակատարութուններ էիր անում սրանց» Նույն այդ Կրասսոսը մի անգամ հավատացնում էր, որ, իբր, իրեն դուր են գալիս սատիկները, որոնք պնդում են թե նա է հարուստ ով որ առաքինի է: «Բայց արգո՞ք ավելի շուտ նրա համար չեն նրանք էեզ դուր գալիս — նկատել է Յիցերոնը, — որ, նրանց ուսմունքի համաձայն ամեն ինչ իմաստունին է պատկանում»: Կրասսոսն էլ հայտնի էր իր արծաթասիրությամբ: Իսկ երբ Կրասսոսի որդիներից մեկը:

ուր նման էլ թվում ս'ն Աբսիոսի և Լերջինիս նկատմամբ բամբասան-
քի պատճառով այդ նմանությամբ անարգանք էր բերում իր մորը, սե-
նատում հանդես է եկել ճառով, հաշոդություն ունեցել, և Յիցերոնին
հարցրել ձեռք ինչ կարծիք ունի նրա մասին, պատասխանել է «Կրաս-
ուսին է արժանի»:

XXVI Մտադիր լինելով Նավով մեկնել Ասուրիք Կրաս սար մտա-
ծել է, որ իր համար ավելի լավ է հանձին Յիցերոնի բարեկամ ունե-
սալ, քան թշնամի: Հավաստիացնելով նրան իր բարեկամության մեջ՝
Կրասսոսը ցանկություն է հայտնել ճաշել նրա մոտ, և Յիցերոնը սիրա-
լիր ընդունել է նրան: Մի քանի օր անց, բարեկամներից ոմանք նրա
մոտ բարեխոսել են Վիտանիոսի համար, որը ձգտում էր, նրանց առե-
լով, հաշտության և բարեկամական հարաբերությունների վերականգնե-
ման (Լիւասիոսը նրա թշնամին էր): «Հո Վիտանիոսն էլ չի՞ ողում ինձ
մոտ ճաշել» — հարցրել է Յիցերոնը: Հենց այդպիսին էր նա իր վերա-
բերմունքով դեպի Կրասսոսը Իսկ իրեն Վիտանիոսին, որը տառապում
էր վզի գեղձերի ուռուցքով, նա անվանել էր այն ժամանակ, երբ սա
պաշտպանում էր իր դորժը դատարանում, փքուն հռետոր: Իսկ երբ լսել
է, որ Վիտանիոսը մեռել է, բայց քիչ անց ստույգ իմանալով, որ նա կեն-
լանի է Յիցերոնն ասել է «Այդ դեպքում թող դադրելի մահով մեռնի
նա, ավ խաբել է այդպես դադրելիորեն» Երբ Կեսարը անց էր կացրել
հուլաբաժանության որոշումը Կամպանիայի զինվորականների միջև, սե-
նատում շատերն սկսել էին դժգոհություն արտահայտել: Կռեցիոս Հել-
լիոսն էլ՝ սենատորներից համարյա ամենաժերը, ասել էր, թե դա չի լի-
նի, քանի դեռ ինքը կենդանի է «Սպասենք, — այդ առթիվ նկատել է Յի-
ցերոնը, — քանզի մեծ չէ այն տարկետումը, որ պահանջում է Հելլիոսը»:
Հոմոսում կար սմն Օկտավիոս, որին գիտեին որպես ծագումով լիբիացի:
Ինչ որ դատավարության ժամանակ նրա այն գիտողությանը, թե ինքը
Յիցերոնին չի լսում, վերջինս պատասխանել է «Բայց ախր չի կարելի
ասել, թե քո ականջը ծակ չէ» Մետելլոս Եպոսը մի անգամ ասել է, թե
Յիցերոնը իր մեղադրական ճառերով ավելի շատ մարդ է կործանել, քան
պաշտպանականներով փրկել: «Լիովին համաձայն եմ, — պատասխանել
է Յիցերոնը — որ իմ մեջ ավելի շատ բարեխղճություն կա, քան խոսե-
լա կարողություն» Մի պատանի որը մեղադրվում էր այն բանում, թե
որը թույն է տվել՝ բլիթի մեջ դրած, իրեն հանդուգն էր պահում և ասում
էր, որ պատրաստվում է անվանարկել Յիցերոնին: Յիցերոնը դրա վրա
ուսել է «Ավելի հաճույքով քեզանից լա կընդունեմ քան թե բլիթ»:
Գուբլիոս Սեստիոսը ինչ-ոչ դատավարության ժամանակ Յիցերոնին և

մի քանի ուրիշների իրեն որպես պաշտպան բռնելով՝ ուզում էր ամբողջ ժամանակն ինքը խոսել և ոչ ոքի չէր թողնում զեթ մի խոսք ասել: Երբ պարզ դարձավ, որ դատավորները նրան արգարացնում են և նրանք արդեն անցել են քվեարկութայն Ցիցերոնն ասաց. «Այսօր օգտվիր հնարավորությունից, Սեստիո՛ս, քանզի վազը հռետոր լեւ լինելու»: Պուբլիոս Կոստասին՝ տղետ և ապաշնորհ մի մարդու որը, սակայն, իրավաբանի կոչման էր հավանում, մի անգամ նա վկա է կանչել ինչ-որ գործով, և երբ վերջինս հայտարարել է թե ոչինչ չգիտի, Ցիցերոնը նկատել է. «Դու, հավանաբար, ենթադրում ես, թե քեզ օրենքին վերաբերող որևէ բան են հարցնում»: Մետելլոս Սեպտոսը ինչ-որ վեճի ժամանակ անընդհաա կրրկնելիս է եղել. «Ո՞վ է քո հայրը, Ցիցերո՞ն»: «Այս հարցի պատասխանը, — ասել է Ցիցերոնը, — քեզ համալ առավել դժվարին է դարձրել քո մայրը»: Նեպոսի մայրը փշացած կնոջ համբավ ուներ, իսկ նա ինքը՝ խելառ մարդու: Մի անգամ նա, հանկարծակի լքելով ժողովրդական տրիբունի պաշտոնը, նա չէր նստել ու գնացել Պոմպեոսի մոտ՝ Ասորիք իսկ ապա վերադարձել, որն էլ ավելի անհեթեթ էր: Մեծ հոգատարութայամբ թաղելով իր դաստիարակ Փիլագրոսին՝ նրա գերեզմանին դրել էր քարե ազուավ: «Ծատ խելացի բան ես արել — նկատել էր Ցիցերոնը, — նա ավելի շուտ քեզ սովորեցրել է թռչել, քան խոսել»: Մարկոս Ապպիոսը մի դատավարութայն ժամանակ ելույթ ունենալիս՝ իբրև նախաբան հայտարարել է, թե բարեկամն իրեն խնդրել է հոգատարություն ցուցաբերել, առողջ բանականություն և բարեխղճություն: «Մի՞թե, — հարցրել է Ցիցերոնը, — դու այդքան դաժան սրտի տեր ես, որ ոչինչ չէս ուզում անել այն բազում բաներից, ինչ որ խնդրել է բարեկամդ»:

XXVII. Կարելի է խոստովանել, որ խայթող կատակների օգտագործումը ընդդեմ թշնամիների կամ դատվող կողմերի թուլատրելի է որպես հռետորական հնարք: Բայց Ցիցերոնը երբեմն վիրավորական կերպով էր կատակում մարդկանց հետ հանուն ծիծաղի, և դա հաճախ նրա նկատմամբ ատելություն էր հարուցում: Հիշատակեմ այդպիսի մի քանի դեպք: Մարկոս Ակվիլիոսին որի երկու փեսաներն արտաքսված էին, նա անվանել էր Անդրաստոս: Իսկ Լուցիոս Կոստասի ցենզորութայն ժամանակ, մի մարդու, որը շափից ավելի էր գինի սիրում, տեղի էին ունենում Ցիցերոնի կոնսուլական ընտրությունները: Ցիցերոնն ուզեցել է ջուր խմել: Մարավը հագեցնելով, նա իր բարեկամներին, որոնք շրջապատած են եղել շորս կողմից, ասել է. «Դուք իրավացի եք, վախենալով, որ ընդհի թե ցենզորը վրաս բարկանա, որ ես ջուր եմ խմում»: Վիկոնիոսին էլ հանդիպելիս, որն իր հետ տանելիս է եղել իր անշափ տղեղ երեք ազ-

շիկներին, նա բացականչել է «Առանց Փերոսի թուլլալության նա հրե-
խաներ է ծնել»:

Մարկոս Հելիոսը, որը ինչպես ենթադրում են, անազատ սծին ծնող
ներից էր սերել, մի անգամ սենատորների առջև նամակներ է կարդալիս
եղել գեղեցիկ և ուժգին ձայնով: «Մի՛ գարմալցեք, — ասել է Յիցիրոսը, —
սա էլ նրանցից մեկն է, որոնք հրապատակային ճղճղան են եղել»: Իսկ
երբ Փավստոսը՝ որդին Սուլլալի ոտն անսահմանափակորեն իշխել էր
Հռոմում և շատերին էր մահվան դատապարտել հրապարակային հայտա-
րարությունների՝ պրոսկրիպցիաների միջոցով, պարզվեց որ պարտքերի
մեջ է խրված և, մսխելով իր ունեցվածքի մեծ մասը՝ աճուրդ է հայտա-
լարել, Յիցերոսը նկատել է, թե ալդ հայտարարությունը իրեն ավելի է
յուր գալիս, քան հայրականը:

XXVIII. Այս պատճառով էլ նա շատերի համար անհաճո էր դար-
ձել ու նրա դեմ համախմբվել էր նաև Կլոդիոսի կուսակցությունը հետև-
յալ առիթով: Կլոդիոսը ազնվատոհմիկ մի մարդ, տարիքով երիտասարդ
էր, բնավորությամբ էլ՝ համարձակ ու քմահաճ: Սիրահարված լինելով
Պոմպեային՝ Կեսարի կնոջը նա թաքուն մուտք էր գործել Կեսարի տու-
նը՝ տավղահարուհու դգեստով ու պիտուլքներով կանայք Կեսարի տու-
նը գաղտնի, տղամարդկանց հալացքների համար անձառելի կրոնական
տրարողություններ են կատարելիս եղել և տղամարդկանցից ոչ ոք չի
եղել ալնտեղ: Բույց Կլոդիոսը, որն այն ժամանակ գեռ բուլբորովիս պա-
տանի է եղել և անմորուս, հույս է ունեցել կանանց հետ աննկատ ու
դոսկել Պոմպեայի մոտ: Նա գիշերով մտել է մեծ տունը և ձուլորվել ան-
ցումներում: Այն ժամանակ, երբ նա թափառելիս է եղել այնտեղ նուան
տեսել է Ավրելլայի Կեսարի մոր սպասուհին, և հարցրել նրա անունը
Ստիպված լինելով որևէ բան ասել, Կլոդիոսը պատասխանել է, թե փրնա-
լում է Պոմպեայի աղախնին՝ Աբրա անունով, իսկ սղախինը գլխի ընկ-
նելով, որ դա կա՞սցի ձայն չէ, սկսել է ճշալ ու կանչել կանանց Կա-
նայք էլ փակել են դռները և խուզարկելով ամբողջ շինությունը՝ բռնել
են Կլոդիոսին, որը թաքնված է եղել այն ստրկուհու ննջարանում, որի
հետ նա տան էր մտել: Այս գործը մեծ աղմուկ էր հանել, և Կեսարը բա-
ժանվել էր Պոմպեալից: Կլոդիոսին էլ դատե էլ տլել՝ Ինդագրելով պրզ-
ժության մեջ:

XXIX. Իսկ Յիցերոսը Կլոդիոսի բարեկամն էր և հանձին նրա ունի
ամենազերմեռանդ օգնականն ու թիկնապահը՝ այն իրադարձությունների
1 մանակ, որոնք կապված էին Կատիլինայի անվան հետ: Սակայն մինչ
Կլոդիոսը առարկելով մեզադրանքի դեմ՝ պնդել էր թե ինքն այդ ժա-

մանակ Հոռոմում չի եղել այլ՝ ապրում էր խուլ ու հեռավոր տեղերում, Յիցերոնը վկայել էր, թե նա իր տունն է եկել և գրուցել ինչ-որ գործերի մասին: Բայց Յիցերոնը, ըստ երևույթին, սրպես վկա հանդես է եկել ոչ թե հանո ն ճշմարտության, այլ, որպեսզի արգարահար իր կնոջ Տերենցյայի առաջ, վերջինս ասում էր Կլոդիոսին սրա քույր Կլոդյայի պատճառով որը, իր կարծիքով ուղեցել էր ամուսնանալ Յիցերոնի հետ և այդ գործը դատավորելիս է եղել ոմն Տուլլոսի միջոցով Վերջինս Յիցերոնի ընկերն ու ամենամոտ բարեկամներից մեկն էր, միևնույն ժամանակ մշտապես լինում էր Կլոդյայի մոտ և նրան ծառայություններ էր մատուցում որպես մոտիկ հարևանուհո ինչը և Տերենցյայի կասկածանքն էր հարուցել կինելով քմահաճ և ամուսնու վրա իշխող նա սոան դրդել էր հանդես գալ ընդդեմ Կլոդիոսի և իր ցուցմունքները տալու Իսկ Կլոդիոսի դեմ վկայություն էին տալիս բազում աղետիվ մարդիկ նրան մեղադրելով Էրդմնաշանցության մեջ, խաբեբայության, ամբոխին կաշառելու, կանանց գայթակղեցնելու մեջ: Լուկուլլոսն էլ մեջաեղ է բերել իր աղախիներին որպես այն բանի վկաների, թե Կլոդիոսը կայի մեջ է եղել ի կրտսեր քրոջ հետ Էրբ սա արդեն ամուսնացած է եղել նրա Լուկուլլոսի հետ: Շատերի կարծիքով Կլոդիոսը մոտիկ հարաբերությունների մեջ է Լղել նաև իր մյուս երկու քույրերի՝ Տերսյայի՝ Մարկոս Հոնքոսի կնոջ, և Կլոդյայի՝ Մետելլոս Յելերի կնոջ հետ Վերջինիս Կվադրանսարյա էին անվանում այն բանի համար, որ նրա սերեկաններից ինչ-որ մեկը, քսակը պղծե դրամներ լցնելով՝ ուղարկել էր նրա՝ արծաթի կվադրանտերու Հենց յ յս քրոջ պատճառով էլ ամենից շատ տուժեց Կլոդիոսի վարկը Բայց բանի ոչ, շնայած դրան, ժողովարդն սկսել էր այն ժամանակ թշնամաբար վերաբերել ի նրանց հետ, ովքեր վկայել էին և հանդես եկել ընդդեմ Կլոդիոսի դատավորները վսխեցել էին և դատարանի շուրջը պահակախումբ կարգել, իսկ իրենք մեծ մասամբ իրենց աղյուսակները շանձնել էին անքնթեռնելի գրոտումներով Այնտ ամենայնիվ նրանց մեծամասնությունը արտահայտվել էր, ըստ երևույթին՝ նրա արդարացման օգտին, իսկ ըստ լուրերի, կաշառքն էլ էր դեր խաղացելու Ուստի Կատուլոսը հանդիպելով ռատավորներին ասել էր. «Թուք ճիշտ եք վարվել՝ ձեր ասպահովության համար պահակախումբ պահանջելով, դուք վախեցել եք որ չլինի՞ թե սրե՞ մեկը ձեր փողերը խլի» Իսկ Յիցերոնն այսպես էր պատասխանել Կլոդիոսին որը նրան երևում էր սովել, թի դատավորները հավատ չեն ընծայել նրա Յիցերոնի ցուցմունքներին «Բայց չէ՞ յ ինձ հավատացին 25 դատավորներ, քանզի

սյդքան էին նրանք ուլքեր քեզ դատում էին, իսկ բեզ շհաժատացին 30 ք,
բանի որ նրանք բեզ շարդարացրին մինչև դրամ շվերցրին»։ Էայց Կե
արը, որ կանչված էր եղել դատարան Կլոդիոսի դեմ զուցմունք չէր
տվել, բնզ սրում շայտարարել էր, թե ինքը չի կասկածում իր կնոջը շնու-
թյան մեջ և նյասնից բաժանվել է, որովհետև Կեսարի ամուսնական կյան-
քը պետք է մաքուր լի՛ի շ միայն ամոթալի ալարքներից ալլև ալա
ուավորող լուրերից։

ԿԿԸ խույս տալով այս լուսնզից, Կլոդիոսը որն ընտրված էր ժո-
ղովրդական տրիբուն իսկուլնետի շուտ էր եկել Ցիցերոնի դեմ՝ հավա-
քելով և օգտագործելով ի վնաս իրա ամեն գործ և ամեն մարդու Միա-
ժամանակ ժողովրդի բարեհաճությունն էր վաստակում արտոնյալ օրենք-
ներով իսկ կոնսուլներից յուրաքանչյուրին տվել էր մի մի մեծ պրովին-
ցիա շամապատասխան օրենք ա՛ցկացնելով ժողովրդական ժողովում.
Պիզոնին Մակեդոնիան և Գաբիիսսին՝ Ատրիքը Ազքատներից շատե-
րին նա հաղորդակից էր դարձրել իր քաղաքականությանը և իյլն շրջա
պատել զինված ստրուկներով։

Այն ժամանակվա ամենաազդեցիկ երեք լարդկանցից մեկը՝ Կրա-
սոսը բացահայտորեն թշնամանք էր տածում Ցիցերոնի նկատմամբ,
Պոմպեոսը և սրա և նյա հետ կրկնակի խաղ էր խաղում, Կեսարը
պատրաստվում էր զորքով մտնել Գալլիա։ շենց վերջինիս հետ էլ Ցի-
ցերոնն սկսեց մերձեցում փնտրել, թեև ա ո միայն նրա բարեկամը
չէր, այլև նրա համար կասկածելի էր մնում Կատիլինայի դավադրու-
թյան ժամանակվանից Ցիցերոնը ցանկություն հայտնեց Կեսարին ուղեկ-
ցել արշավանքում որպես նրա լեզատը։ Իսկ երբ Կեսարը դրան համա-
ձայնեց, Կլոդիոսը, տեսնելով որ Ցիցերոնը դուրս է սպրդում իր որ-
պես ժողովրդական տրիբունի իշխանության տակից, ձևացրեց, թե պատ-
րաստ է հաշտվել Սեղքի մեծ մասը գնելով Տերենցյայի վրա, մշտա
պես հարգանքով հիշատակելով Ցիցերոնին արտաքուսս բարեհաճու-
թյամբ կրկնելով թե ինքը չի զգում ո՛չ ատելություն, ո չ թշնամանք, և
սահմանափակելով բարեկամական մեղմ հանդիմանանքներով՝ նա բո-
լորովին ցրեց Ցիցերոնի երկյուղը, և վերջինս հ, ասարվեց Կեսարի մտա-
լեղատի պաշտանից ու նորից գրազվեց շասարակական գործերով։ Զայ-
բացած այդ մերժումից՝ Կեսարը Կլոդիոսին բաջալերեց և Պոմպեոսին
ստիպեց բոլորովին երև թեքել Ցիցերոնից, իսկ ինքը նրա դեմ վկայու-
թյուն տվեց ժողովրդի առաջ, հայտարարելով, թե իրեն ա՛ն օրինական է
թվում Ցիցերոնի արարքը, որ առանց դատարանի դատապարտության մա
հապատժի էր ենթարկել մարլկանց՝ Լևիաուլոսին ու Ցեթեգոսին իրենց

ընկերների հետ Այսպիսին էր մեղադրանքը և այս մեղադրանքով Յիցերոնը դատի տրվեց: Ընկնելով, այսպիսով, ամբաստանյալի վտանգավոր դրուժյան մեջ՝ նա փոխեց զգեստը, մազերը ցած թողեց և, շրջելով քաղաքով մեկ, ժողովրդին աղերսում էր սլաշտպանել իրեն: Իսկ Կլոդիոսը փողոցներում ամենուրեք հանդիպում էր նրան՝ շրջապատված լքատի ու հանդուգն մարդկանց բաղձությամբ սրունք ամեն կերպ ծաղրում էին Յիցերոնի փոփոխված տեսքն ու զգեստը իսկ հաճախ էլ ցեխ ու քար նետելով վրան՝ նրան արգելում էին դիմել ժողովրդին:

XXXI Սակայն Յիցերոնի հետ միասին իրենց զգեստները փոխեցին և հեծյալները համարյա ամբողջ կազմով, և ոչ պակաս քան 20 000 պատանի հետևում էին նրան մազերը ցած կսխած և կրկնելով նրա աղերսանքները Այնուհետև սենատն էլ հավաքվեց որպեսզի որոշում կայացներ, որի համաձայն և ժողովարդը պետք է փոխեր, իբրև սզոնշան, իր զգեստը, իսկ երբ կոնսուլները դրան հակառակվեցին, Կլոդիոսն էլ շրջապատեց սենատը զինված մարդկանցով, սենատորներից շատերը դուրս փախան այդտեղից պատատոտելյով սունիկաները և բարձրաձայն սղաղակելով: Բայց քանի որ այս տեսառանը ոչ խղճահարություն հարուցեց, ո՛չ ամոթ, և Յիցերոնն ստիպված էր կամ փախչել, կամ գործը վճռել զինված պայքարով ընդդեմ Կլոդիոսի, և սօցնության խնդրանքով դիմեց Պոմպեոսին, որ կանխամտածվածորեն հեռացել և ապրում էր քաղաքից դուրս՝ իր ալբանական վիլլայում: Սկզբում նա այնտեղ ուզարկեց Պիզոնին՝ իր փեսային, որը պետք է խնդրանքը հաղորդեր, իսկ ապա նաև ի՛րը գնաց Բայց այդ մասին տեղեկացված Պոմպեոսը սիրտ շարեց նրա աչքին երևալ քանզի անհաղթահարելի ամոթ էր ղգում այն մարդու հանդեպ, որը շատ անգամ էր ի սեր նրա մեծ մարտերի մեջ մտել և իր քաղաքականությամբ շատ բան էր արել հօգուտ նրա: Իսկ հիմա, դառնալով Կեսարի փեսան նա, զերջինիս համառ պահանջով, մոռացության մատնեց այդ վաղեմի ծառայությունները և, դուրս ձլկելով մյուս դռնից տեսակցությունից խուսափեց Այսպիսով, Պոմպեոսից լքված ու մենակ մնալով՝ Յիցերոնը չիմեց կոնսուլներին Բայց Գաբինիոսը անմատչելի գտնվեց, Պիզոնն էլ բավարարվեց նրա հետ մեղմ զրույցով, խորհուրդ տալով հեռանալ, տեղի տալ Կլոդիոսի ճնշմանը, տանել ճակատագրի անակնկալները և նորից դառնալ հայրենիքի փրկիչ, հենց որի պատճառով էլ այսօր գտնվում է խառնաշփոթ վիճակում և դժբախտության մեջ է: Ստանալով այսպիսի պատասխան՝ Յիցերոնն սկսեց խորհուրդ անել բարեկամների հետ: Դրանցից Լուկուլլոսը նրան առաջարկեց մնալ, հաշվի առնելով, որ նա կհաղթի, մյուսներն էլ առաջարկեցին

փախել, ասելով, թե ժողովուրդը շուտով կկարոտի նրան կշտացած Կլո-
դիոսի խելահեղութուններից: Սրա հետ համաձայնեց և Յիցերոնը, Կա-
պիտոլիում տեղափոխելով իր առանձնապես պաշտելի Միներվայի ար-
ձանը, որը դրված էր տանը և երկար ժամանակ գտնվում էր իր մոտ՝ նա
ընծայաբերեց անելով հետևյալ մակտգրությունը Միներվային՝ Հոռմի
պահապան աստվածուհուն: Ապա բարեկամներից ուղեկցողներ վերցնե-
լով՝ նա աննկատելիորեն, ուշ գիշերով, դուրս եկավ քաղաքից և ցամա-
քով, լուկանիայով, ճանապարհ ընկավ, մտադիր լինելով իրեն գցել Սի-
ցիլիա:

XXXII Երբ պարզվեց, որ նա փախել է Կլոդիոսը որոշում կայաց-
րեց նրա արտաքսման մասին և հրապարակեց էդիկտ, որով հրամայվում
էր նրան շտալ կրակ ու ջուր և ապաստան շտալ ավելի մոտիկ, քան Իտա-
լիայից 500 մղոն հեռու: Համարյա բոլորը շատ քիչ նշանակություն էին
տալիս այս էդիկտին՝ հարգելով Յիցերոնին: Ամեն կերպ նրա հանգեպ սի-
րալիրություն ցուցաբերելով՝ նրան ուղեկցում էին ավելի հեռուն: Սա
կայն լուկանների Հիպոնիա քաղաքում, որն այժմ Վիբոնե է կոչվում
ոմն Վիբիոս, ծագումով սիցիլիացի, որը Յիցերոնի մեծ բարեհաճությու-
նից էր օգտվել և նրա կոնսուլության օրոք հղել էր շինարար բանվորնե-
լի պետը, լընդունեց Յիցերոնին իր տունը, այլ հայտարարեց, թե նրան
տեղ կտա քաղաքից գուրս: Այդպես և Փայոս Վերգիլիոսը՝ Սիցիլիայի
պրետորը Յիցերոնին առավել մոտիկ մարդկանցից մեկը, գրավոր խընդ-
րեց նրան խուսափել Սիցիլիա գալուց: Դրանից վշտաբեկ՝ նա մեկնեց
Իրունդիգիոն: Համընթաց քամու ժամանակ ճանապարհվելով դեպի Դիր-
ոաքիոն և ծովում դեմ առնելով հանդիպակաց քամու՝ նա հաշորդ օրը
վերադարձավ, բայց հետո նորից նավեց: Ասում են, երբ նա հասել է
Դիրրաքիոն և պատրաստվել է ամի իջնել երկրաշարժ է տեղի ունեցել և
նույն ժամանակ ծովում ալեկոծություն է սկսվել: Գուշակները դրանից
եզրակացրել են, թե նրա արտաքսումը երկարատև չի լինի, քանզի այդ
երևույթները փոփոխություն են նշանակում: Չնայած, որ շատերը բա-
րեկամարար այցելում էին նրան, իսկ հունական քաղաքներն անընդհատ
պատգամավորություն էին ուղարկում նրա մոտ, սակայն Յիցերոնը ժա-
մանակի մեծ մասս անց էր կացնում վհատության ու խորին տխրության
մեջ՝ իր հայացքը, սնհուսալի սիլահարվածի պես, ուղղելով դեպի Իտա-
լիա, իր դժբախտության մեջ շափից ավելի արվելով փոքրոգության,
ճնշված ու ստորացած, ինչը հսկիվ թե որևէ մեկն սպասեր այնպիսի
մարդուց, որն այդքան բարձր դիտունության դպրոց էր անցել: Նա ինքն
էլ հաճախ բարեկամներին խնդրում էր իրեն անվանել ոչ թե հսժատու այլ՝

փիլիսոփա փիլիսոփայությունն է ընտրել նա որպես հիմնական զբաղմունք, իսկ ճարտասանությունից օգտվում է միայն ըստ անհրաժեշտության՝ որպես հասարակական գործունեության միջոցից: Բայց փառասիրությունն ընդունակ է, ինչպէս ներկը, հոգուց սրբել տանել ամեն մի դիտություն և հասարակական գործով զբաղվող մարդկանց վրա դնել ամբոխին հատուկ կրքերի դրոշմ ամբոխի, որի հետ նրանք շփվում են և ընտելանում, եթե միայն դրանից իրենց չեն պահպանում անհրաժեշտ կերպով, ջանալով կողմնակի անձանց հետ հարաբերություններում հաղորդակից լինել միայն բուն գործերի, այլ ոչ թե դրանց զուգակցվող կրքերի հետ:

XXVIII Իսկ Կլոդիոսը արտաքսելով Յիցերոնին, այրեց նրա վիլաները, այրեց նրա տունը և դրա տեղում կառուցեց Ազատության տաճարը: Իսկ մնացած ունեցվածքն էլ կարգադրեց ծախսել և ամեն օր դրա մասին հայտարարում էր մունետիկի միջոցով, բայց ոչ ոք ոչինչ չէր պսում: Դրանով սարսափ ազդելով լավատեսներին վրա և իր հետևից սանձարձակված ժողովրդին տանելով դեպի ժայռահեղ, հանդուգն անարգությունը՝ նա սկսեց հարձակվել նաև Պոմպեոսի վրա և շեղյալ հայտարարել նրա որոշ կարգադրություններ, որոնք նա արել էր արշավանքի ժամանակ: Դրանից ստորացած՝ Պոմպեոսը հանդիմանում էր իրեն նրա համար, որ լքեց Յիցերոնին, և սկսեց ուժգին գործել հակառակ ուղղությամբ՝ բարեկամների օգնությամբ նախապատրաստելով նրա վերադարձը հայրենիք: Իսկ երբ Կլոդիոսն սկսեց դրան հակառակել, սենատն իր կողմից որոշեց շահաստատել ոչ իր որոշում և շղթադրել պետական գործերով, եթե Յիցերոսին հնարավորություն չարվի վերադառնալ: Բայց այն տարին, երբ իշխանության գլուխ էր կանգնել Լենտուլոսն իր կուսակցությամբ, երբ հուղումներն այնքան էին տարածվել, որ Գորումում խփել-վիլի ավորել էին ժողովրդապաս տրիբուններին, իսկ Կվինտոսը՝ Յիցերոնի հղբայրը, ստիպված էր եղել թաքնվել՝ իբրև մեռած պառկելով դիակների մեջ, — ժողովրդի տրամադրությունն սկսել էր փոխվել ժողովրդական տրիբուններից մեկը՝ Աննիոս Միլոնը, առաջինը համարձակվեց Կլոդիոսին դատի տալ բռնության համար: Պոմպեոսին էլ շատերը միացան ժողովրդից և շրջակա քաղաքներէ բնակիչներից: Երանց հետ հանդես գալով ու Կլոդիոսին դուրս քշելով Փորումից՝ նա քաղաքացիներին հրավիրեց անցնել քվեարկության: Դեռևս երբեք ասում են, ոչ մի գործով ժողովուրդը չի քվեարկել այդպես միահամուռ: Իսկ սենատը մերցելով ժողովրդի հետ առաջարկեց երախտագիտություն հայտնել բոլոր չաղաքներին որոնք Յիցելոնին նառայություն են մատուցել նրա ար

տաքսման ժամանակ և պետական միջոցներով վերականգնել նրա տու-
նըն ու վիլլաները, որոնք ոչնչացրել էր Կլոդիոսը:

Իսկ Յիցերոնն էլ վերադարձավ արտաքսումից հետո և սանվեցերորդ
ամսին: Եվ այնքան մեծ էր քաղաքների ուրախությունը, այնքան մեծ էր
նրան դիմավորող մարդկանց ջերմեռանդությունը, որ Նրա կողմից հե-
տագայում այդ առիթով ասված խոսքերն անգամ չեն արտահայտում ողջ
հշմարտությունը: Իսկ նա ասել է, թե ողջ Իտալիան նրան իր ուսերին
էր ասնում, և ալդպես նրան բերել հասցրել են Հոռոմ Նույնիսկ Կրասսոսը,
որը թշնամի էր նրան մինչև արտաքսումը, այն ժամանակ պատրաստա-
կամությունը դուրս է եկել ընդառաջ և հաշտվել նրա հետ, որպեսզի, ինչ-
պես նա էր ասում, բավականություն պատճառեր իր սրդի Պուբլիոսին՝
Յիցերոնին պաշտողին:

XXXIV Որ շ ժամանակ անց, Յիցերոնը և գա ելով Կլոդիոսի բա-
ցակայությունը և շատ քաղաքացիների ուղեկցությամբ ներկայանալով
Կապիտոլիում, պոկեց ու ոչնչացրեց տրիբունների ցուցանակները որոնք
պարունակում էին որոշումների դրառումները: Երբ Կլոդիոսն այդ առ-
թիվ մեղադրում էր Յիցերոնին, իսկ վերջինս մատնանշում էր, թե նա ան-
օրինականորեն է պատրիցիաներից ընկել ժողովրդական տրիբունների
մեջ և, հետևաբար նրա կողմից արվածից ոչ մի բան օրինական ուժ չու-
նի Կատոնը զայրացավ և հանդես եկավ առարկությունը: Կլոդիոսին նա
չ'ը գովաբանում, այլ, ընդհանրապես, վրդովված էր նրա գործունեու-
թյան վրա, բայց դրա հետ միասին վտանգավոր ու բռնի ակտ էր հա-
մարում սենատի վճիռը այդքան մեծ քանակությամբ որոշումների ու
գործերի ոչնչացման վերաբերյալ, որոնց թվում էին և Կիպրոսին ու Բյու-
զանդիային վերաբերող իր սեփական կարգադրությունները: Յիցերոնը
վիրավորվեց Կատոնի էլույթից, բայց դե այդ զգացումը չհասավ բա-
ցահայտ անբարյացակամության, և նրանք միայն զուսպ դարձան միմ-
յանց հանդես իրենց բարեհաճությունը արտահայտելու մեջ:

XXXV Այս իրադարձություններից հետո, Միլոնն սպանում է Կլո-
դիոսին: Սպանության համար դատի արված լինելով՝ նա Յիցերոնին իր
համար պաշտպան առաջադրեց: Սենատն էլ վախենալով որ չլինի թե
այս հետապնդումից սրին ենթարկվում է այդքան հայտնի և լրա հետ
միասին տաքարյուն մի մարդ, ինչպիսին Միլոնն է, քաղաքում հուզում-
ներ լինեն, Պոմպիոսին հանձնարարեց ղեկավարել ինչպես այս դատա-
վարությունը այնպես էլ մյուսները, որպեսզի ապահովվեր քաղաքի և
ատարանների անվտանգությունը: Պոմպիոսը դեռ գիշերվանից ֆորու-
սի շրջակա բարձունքները բռնեց ղինվորական ջոկատներով, և Միլոնը և

երկյուղելով որ չլինի թե Յիցերոնը շփոթահար լինելով իր համար այդ-
քան անսովոր տեսարանով, պաշտպանութունը կատարի սովորականից
վատ նրան հորդորեց գնալ ֆորում՝ պատգարակ նստած և հանգիստ
սպասել այնտեղ, մինչև որ դատավորները հավաքվեն և դատարանը
մարդկանցով լցվի Իսկ Յիցերոնը, ինչպես հայտնի է, ոչ միայն երկչու
էր պատերազմում այլև խոսելն սկսում էր վախվխելով շատ դատա-
վարութուններում նա Շաղիվհազ դադարում էր գողցողալ ու ցնցվել մի
այն այն ժամանակ երբ հասնում էր ճառի վերելքի բարձրակետին՝ դառ-
նալով արդեն ավելի ինքնավստահ։ Մի անգամ էլ հանձն առնելով Լի-
ցինիոս Մուրենայի պաշտպանութունը որը դատի էր տրված Կատոնի
կողմից և փառասիրութունից ջանալով գերադանցել հաջողութուն վա-
յելող Հորտենսիոսին, նա գիշերը մի ժամ իսկ դադար չառավ և, իբրև
արդյունք, մտավոր լարվածութունից ու արթնութունից հոգնատանջ
ավելի քիչ տպավորութուն գործեց, քան Հորտենսիոսը։

Այսպես ուրեմն պատգարակից իջնելով՝ Յիցերոնն ուղղվեց դեպի
այն տեղը ուր դատելու էին Միլոնին։ Բայց տեսնելով Պլեմպոսին՝ ասևս
ճամբար դրած բարձունքների վրա իսկ ամբուշ հրապարակի շուրջն էլ
վառ շողշողացող զենքեր նա այնպես կորցրեց իրևն որ դժվարությամբ
կարողացավ սկսել իր ճառը՝ ընդհատուն ձայնով և ամբողջ մարմնով
զողալով, մինչդեռ Միլոնն ինքը դատարանին ներկայացավ անհողողող
արիության տեսքով՝ Շարկ համարելով նույնիսկ ցած թողնել մազերը և
զգեստները փոխարինել սզո հանդերձներով։ Պետք է ենթադրել, որ հենց
այս հանգամանքը նշանակալի շափով նպաստեց նրա դատապարտմա-
նը։ Բայց Յիցերոնն այս դատավարության ժամանակ երևալ ավելի շատ
որպես իր բարեկամների շահերին նվիրված մայր, քան վախկոտ։

XXXVI. Յիցերոնն ընդունվեց բրմերի շարքը որոնց հոռմաղլներն
անվանում են ավգուրներ, Կրաստոս-կրասերի փոխարեն, երբ սա ղոհ
վեց պարթևների հողում։ Այնուհետև վիճակահանությամբ ստանալով
Կիլիկիա պրովինցիան և զորք՝ բաղկացած 12 000 ծանրազեններից ու
1600 ձիավորներից, նա նախով մեկնեց իր նշանակման վայրը։ Նրան
հանձնարարված էր նաև կարգավորել զորքերը Կապադովկիայում այն
բարեկամական ու հնազանդ դարձնելով Արիոբարդան թագավորին։ Նա
հպատակեցրեց ու ի ազդեցրեց այս մարզերը ոչ ոքի կողմից իր դե-
շհարուցելով հանդիմանանք և շղիմելով ռազմական գործողութունների։
Այնուհետև ուշադրութուն դարձնելով կիլիկիացիների մեջ, հոռմեացի-
ների պարթևական անհաջողության ազդեցությամբ, սկսվող հուզումնե-
րին և Ասորիքում տեղի ունեցող խռովութուններին, նա դրանց հան-

դրստացրեց հեզարարո կառավարմամբ: նա ընծաներ չէր ընդունում նույնիսկ այն դեպքերում երբ դրանք թագավորներն էին տալիս, իսկ պրովինցիալի բնակիչներին ազատել էր իր պատվին տրվող խնջույքնե-
րից, ինքն էլ ամեն օր իրեն հաճելի մարդկանց ճաշը էր հրավիրում, հյուրասիրելով ոչ այնքան ճոխ, բայց սրտաբացորեն: Տանը նա դռնա պան շուներ, իսկ նրան էլ ոչ ոք պառկած չէր գտնում. վաղ առավոտից նա իր մտ ողջունելու եկածներին ընդունում էր ննջարանի առաջ կանգ-
նած կամ զնալ-գալիս: Ասում են թե նա ոչ ոքի չի ճիպտահարել, չի անարգել խոսքով և տուլժի չի ենթարկել վիրավորական ձևով: Իսկ ժողովրդական դրամների հափշտակման բաղձաթիվ դեպքեր էլ բացահայտելով՝ նա դրանով բարձրացրել է քաղաքների յարեկեցությունը, ընդ որում մեղավորները վերադարձնելով հափշտակվածը այլևս ոչ մի պատիժ չեն կրել և պահպանել էն իրենց քաղաքացիական իրավունքները նա նաև պատերազմներ էր մղում փախուստի մատնելով Ամանոս լե-
ւան շրջակայքում ապրող ավաղակներին որի համար զինվորների կողմից իմպերատոր էր հորջորջվել: Իսկ երբ հռետոր Յելիոսը Ցիցերոնին խնդրել էր ինչ-որ հանդեսի համար Կիլիկիայից հովազներ ուղարկել Հռոմ, նրան գրել էր, ուրվագծվելով իր գործերով, թե Կիլիկիայում հովազներ չկան դրանք փսխել են Կարիա՝ բարկանալով որ միայն իրենց դեմ են կռվում, մինչդեռ ուրիշները խաղաղություն են վայելում

Իր պրովինցիալից նավելով՝ Ցիցերոնն սկզբում եկավ կանգ առավ Հռոդոսի մոտ, ապա հաճույքով որոշ ժամանակ անցկացրեց Աթենքում՝ կարոտած լինելով իր երբեմնի գրադմունքներին: Այստեղ տեսնվելով հունական դպրության ամենաականավոր ներկայացուցիչների հետ, սիրալիբ հանդիպումներ ունենալով իր նախկին բարեկամների ու ծանոթների հետ նա իրեն վայել կերպով մեծարած Հունաստանից վերագարձավ Հռոմ հենց այն ժամանակ, երբ հանրապետությունը ապրելով ասես թե բորբոքման պրոցես, ներքաշվում էր պառակտիչ պատերազմների մեջ:

XXVII. Եվ ահա երբ սենատում քվեարկության էր գրված նրան հաղթահանդեսոլ պարդեատրելու հարցը, նա հալտարարեց թե իրեն հաճելի կլիներ հաղթական երթով ուղեկցել Կեսարին, եթե վերջ տրվեր երկպառակությանը: Նույնը խորհուրդ էր տալիս նաև մասնավոր կարգով, շատ էր գրում Կեսարին, համառորեն խնդրում էր և Պոմպեոսին՝ հորդորելով ու համոզելով նրանցից յուրաքանչյուրին: Իսկ երբ գործն արդեն անուղղելի դարձավ և Կեսարն անցավ հարձակման, Պոմպեոսն էլ տեղում չմնաց, այլ լեքեց քաղաքը՝ բազում լավագույն մարդկանց ուղեկցությամբ, — Ցիցերոնը չմիացավ նրան այս փախուստի ժամանակ,

և կարելի էր կարծել, թե նա կանցներ Կեսարի կողմը Լիովին ակնհայտ է, որ նա որոշում ընդունելիս շատ է այս կողմից այն կողմը նետվել և դաժանորեն սառապել: Քանզի իր նամակներում նա ասում է, թե շգիտի ո՞ր կողմը թեքվի եթե Պոմպեոսն ունի պատերազմ Լարելու հիանալի, հարգանքի արժանի հիմունք, ապա Կեսարն ավելի հաջող է օգտվում հանգամանքներից ավելի լավ է կարողանում փրկել և իրեն, և իր բարեկամներին այս պայմաններում պարզ է թե ումից պետք է փախչել, բայց պարզ չէ, թե ում մոտ փախչել: Այդ ժամանակ Տրեբատիոսը՝ Կեսարի լնկերներից մեկը, Յիցերոնին նամակ էլ գրել որի մեջ ասլում էր, թե նրան՝ Յիցերոնին ավելի շուտ վայել էր ինչպես Կեսարն է կարծում, հարել վերջինիս կուսակցությունը և նյա հետ հույսեր կապել Իսկ եթե տա դրանից հրաժարվում է գառամյալ տարիքի պատճառով, ապա իր համար ավելի լավ կլիներ մեկնել Հունաստան և մնալով այնտեղ այդ երկու կուսակցություններից հեռու հանգիստ ապրել Զարմացած այն բանից, որ Կեսարն ինքն անձամբ չի գրել իրեն Յիցերոնը պայրույթով պատասխանեց, թե ինքը չի անի ոչինչ, որ այժանի շինի իր նախկին գործերին: Այսպես է ասվում այս մասին նրա նամակներում

XXXVIII. Հենց որ Կեսարը մեկնեց Իսպանիա, Յիցերոնը նավեց գնաց Պոմպեոսի մոտ որտեղ նրան ուրախությամբ դիմավորեցին ամենքը Կատոնից բացի: Վերջինս Յիցերոնին մեն մենակ տեսնելով՝ սաստիկ հանդիմանեց նրան, որ միացել է Պոմպեոսին, քանզի իրեն՝ Կատոնին վայել չէր դավաճանել այն ուղղությունը քաղաքականության մեջ որին ինքը հետևում է սկզբից եկթ, այնինչ Յիցերոնը մեծ օգուտ կբերեր, եթե մնար Հռոմում, չեզոք, իր գործողությունները համաձայնեցնելով իր լարձությունների ընթացքի հետ: Իսկ հիմա նա հայտնվել է այստեղ՝ խիստ անշրջահայեցորեն առանց որեէ կարիքի բունալով Կեսարի թշնամին, որպեսզի ուրիշների հետ միասին այդքան մեծ վտանգի ենթարկվի: Այս խոսքերը փոխեցին Յիցերոնի մտադրությունները: Նրա վրա աղղեց և այն հանգամանքը, որ Պոմպեոսը ոչ մի կարևոր գործ չէր հանձնարարում: Ե այց դրանում նա ինքն էր մեղավոր: Զթաքցնելով այն, որ ինքը զոչում է Յիցերոնը վատաբանում էր Պոմպեոսի նախապատրաստությունները, թաքնված անբարյացակամությամբ քննադատում էր նրա կարգադրությունները և չէր կարողանում զուպել իր ծաղրն ու սրա մտությունը՝ ուղղված նրա դինակիցների դեմ նա ինքը շրջում էր ճամբարում մոայլ ու տխուր, ուրիշներին էլ ծիծաղեցնում էր թեև նրանք բնավ էլ սիրտ չունեին ծիծաղելու: Բայց ավելի լավ է այստեղ բերեմ նման սրամտություններից մի քանիսը Այսպես ուրեմն Դոմիտիոսը

հրամանատարական պաշտոնի նշանակելով ռազմական զործում անընդունակ մի մարդու՝ Նրա մասին ասում էր, թե նա աչքի է ընկնում հիաւալի բնավորութեամբ և ողջամտութեամբ: «Էլ ինչո՞ւ,— հարցրել է Յիցերոնը,— նրան դու չես պահպանում քո երեխաների խնամակալը դարձնելու համար»: Ոմանք գովաբանում էին լեւքոսցի Թեոփանեսին՝ ճամբարային բանվորների պետին թե նա լավ հանգստացրեց հողոսցիներին որոնք կորցրել էին իրենց նավատորմի լը: «Տե՛ս է ի՛նչ մեծ բարիք է հույն պետ ունենալը» — բացականչել է Յիցերոնը: Իսկ այն ժամանակ, երբ Կեսարը համարյա ամեն ինչում հաջողութուն ուներ և կարծու Թե արդեն Պոմպեոսին շրջապատման մեջ էր պահում Յիցերոնն այսպես է պատասխանել Լեոտուլոսին, որն ասել է թե Կեսարի բարեկամները, ինչպես լսել եմ, մոռու են տրամադրված «Դո ուզում ես ասել թե նրանք ջղախնամ են Կեսարի վրա»: Ոմն Մարցիոս, որը հենց նոր էր ժամանած Եղել Հռոմից պատմել է, որ այնտեղ համառ լուրեր են շրջում, թե իբր Պոմպեոսը շրջապատված է: «Ուրեմն դո նրա համար ես նավել եկել աստեղ, որպեսզի դրանում սեփական աչքերով տեղեկանաս», — հարցրել է Յիցերոնը: Պարտութունից հետո Նոննիուսն ասել է թե պետք է հուսալ ավելի լավը, քանդի Պոմպեոսի ճամբարում յոթ արծիվ 1 մնացել: «Քո խորհուրդը հիանալի կլինի,— ասարկել է Յիցերոնը — Եթե մենք կովեինք ագուստինի դեմ»: Կարիենոսն էլ շուտը դնելով ինչ-որ կանխագուշակութեան վրա հավատացնում էր, թե Պոմպեոսին վիճակված է հաղթանակ տանել: «Այսպես ուրեմն — ասել է Յիցերոնը — խորամանկութուն է Եղել, որ մենք կորցրել ենք մեր ճամբարը»:

XXVI Փարսալիայի ճակատամարտից հետո, որին Նա յկարողացավ մասնակցել հիվանդութեան պատճառով երբ Պոմպեոսը փախաւ, Կատոնը որը տեղավորվել էր Դիրրաքիոնում՝ բազմաթիվ զորքով ու մեծ նավատորմով, Յիցերոնից սրահանջեց, սր ի վրա լիբյնի հրամանատարի պարտականութունը համաձայն օրհրդի և որպես մի անձ, որն անցյալում շտաբ է եղել կոնսուլի տիտղոսով: Յիցերոնը հրաժարվեց հրամանատարութեանից և ընդհանրապես պատերազմին մասնակցելուց: Այգուստե կրիտատարը Պոմպեոսն ու Նրա բարեկամները Յիցերոնին անվանելով դավաճան՝ տրդեն դուրս էին քաշում սրերը և Նա հազիվ թուահից սղտավեց, եթե Ներս շմաներ Կատոնը, որը գովաբանութեամբ պաշտպանեց նրան դրանցից և դուրս տարավ ճամբարից: Իսկ Բրունդիզիոն ժամանելով, նա այստեղ տպրեց որոշ ժամանակ՝ սպասելով Կեսարին, որին կասեցնում էին Ասիայում ու Եգիպտոսում Եղած դործերը: Իսկ երբ հայտնի դարձավ, որ Կեսարը կառանել է Տարենտոնում և այդտեղից

ցամաքով անցնում է Քրունդիզին, Յիցերոնն շտապեց նրան ընդառաջ՝ վերջնականապես չկորցնելով հույսը, բայց այնուամենայնիվ վախենալով շատերի ներկայութեամբ փորձել իր նկատմամբ թշնամանքով լցված և հաղթանակ տարած մարդու տրամադրութունը Սահայն նա ստիպված չեղավ ո՛չ անել, ո՛չ էլ ասել այնպիսի մի բան, ոյը հակառակ լիներ իր արժանապատվութեանը, Քանդի Կեսարը տեսնելով Յիցերոնին, որն ուրիշ-ներից շատ առաջ ընկած դալիս էր ռիմավորելու իրեն, բարեհամբույր ողջունեց նրան իջնելով ձիուց և շատ ասպարեզներ ճանապարհ անցավ նրա հետ մենակ գրուցելով: Այդ ժամանակվանից նա Յիցերոնի նկատմամբ շրջադարեց հարգանքի ու բարեհաճութեան նշաններ ցույց տալ և երբ նա գովասանքի խոսք գրեց ի պատիվ Կատունի, Կեսարը պատասխան խոսքում փառաբանեց Յիցերոնի սերճախոսութունը և նրա ողջ կյանքը՝ նրա մեջ մեծագույն նմանություն գտնելով Պերիկլեսի ու Թերամենոսի հետ: Յիցերոնի երկը կրում է «Կատուն» վերնագիրը Կեսարինն էլ՝ «Անտիկատուն» Պատմում են նաև, որ երբ Կվինտոս Լիզարիոսը մեզադրված է եղել այն բանում, որ դարձել էր Կեսարի թշնամիներից մեկը, և Յիցերոնը հանձն է առել նրա պաշտպանութունը, Կեսարն իր բարեկամներին ասել է. «Մեզ ի՞նչն է խանգարում երկարատև ընդմիջումից հետո լսել Յիցերոնի ճառը եթե Լիզարիոսը վաղուց է մեր կողմից ճանաչված որպես սինլքսր ու թշնամի: Բայց Յիցերոնը իր ճառի հենց սկզբից Կեսարին հուզել է անսովոր կերպով, իսկ հետագա զարգացման ընթացքում նրա ճառը զգացմունքների արտահայտմամբ այնքան բազմազան է գարձել և կատարվել է այնքան զարմանալի թովչանքով, որ Կեսարը շատ անգամ փոփոխել է դեմքի արտահայտութունը պարզ է եղել, որ նրա հոգեկան վիճակն էլ անընդհատ փոփոխվել է: Իսկ վերջին մասում երբ հոնտորը հիշատակել է Փարսալիայի ճակատամայտը Կեսարը հուզմունքով բռնված գոզացել է ամբողջ մարմնով և ցած գցել այն գրութունները որ բռնած է ունեցել ձեռքին: Այսպես հնազանդված, նա արդարացրել է Լիզարիոսին

XL Հետագայում էլ երբ հանրապետութունը վերածվել էր միապետութեան Յիցերոնը մի կողմ քաշվելով հասարակական գործերից իր ազատ ժամերը նվիրեց այն երիտասարդներին, ովքեր ցանկանում էին զբաղվել փիլիսոփայութեամբ: Իսկ քանի որ նրանք պատկանում էին ամենահայտնի ու տոհմիկ մարդկանց թվին, Յիցերոնը նորից, նրանց հետ ծանոթութեան շնորհիվ, մեծ ազդեցություն ձեռք բերեց քաղաքում: Նրա հիմնական գործն էլ փիլիսոփայական երկխոսութուններ կազմել ու թարգմանելն էր, ինչպես և առանձին տերմինների շատիներենի վերա-

ծելը, որոնք ընդունված էին դիալեկտիկայում ու ֆիզիկայում: Քանզի, ինչպես ասում են, նա առաջինը, կամ գերազանցապես նա էր, որ լատինական անվանումներ տվեց այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են՝ «պատկերացում», «համաձայնությունը», «ձեռնպահ մնալ դատողությունից», «ըմբռնում», ինչպես և՝ «անտրոհելի», «մասեր շունեցող», «դատարկություն» և այս իսկ կարգի ուրիշ շատերը, կարողանալով մասամբ փոխաբերությունների, մասամբ էլ բառերի իրական նշանակության օգնությամբ դրանք հասկանալի, հեշտ յուրացնելի դարձնել: Հեշտությամբ սաանավոր հորինելու իր ընդունակությունից էլ նա օգտվում էր զվարճության համար, և ամեն անգամ, երբ պատահում էր որ նա տարվում էր այս գրադմունքով, մի գիշերում, ասո մ են, հորինում էր 500 տող:

Այդ շրջանում իր ժամանակի մեծ մասն անցկացնելով իր տուսկոլյան կալվածքում Ցիցերոնը բարեկամներին գրում էր, թե ինքն ապրում է կաերտեսի կյանքով. գուցե նա կասակում էր, իր սովորության համաձայն, գուցե կրթությամբ կերպով ձգտում էր պետական գործունեության փոքրասիրությունից դրդված և վշտանալով այն ժամանակվա կարգերի համար: Մեկ-մեկ նա քաղաք էր գալիս, որպեսզի ողջուներ Կեսարին, ընդ որում նա առաջինն էր լինում այն մարդկանց մեջ, որոնք պատրաստ էին Կեսարին մեծարանքներ սահմանել և ձգտում էին միշտ մի ինչ որ նոր գովասանական բան ասել նրա ու սրա գործերի մասին: Այդպիսիք են օրինակ, նրա խոսքերը Պոմպեոսի արձանների մասին: Դրանք հանված-նետված էին գլանին, Կեսարն էլ հրամայեց դրանք իրենց տեղերը գնել, և դրեցին: Հենց այս առիթով էլ Ցիցերոնն ասել է, թե Կեսարը այդքան մեծահոգաբար վերականգնելով Պոմպեոսի արձանները, դրանով իր սեփականներն է կանգնեցնում:

XLV. Ասում են թե նա մտածել էր գրել ամբողջ հայրենական սլատմությունը դրա մեջ ներառնելով շատ բաներ Հունաստանի պատմությունից և ավելացնելով հունական ամբողջական պատմվածքներ ու առասպելներ բայց նրան դրանից հետ պահեցին ինչպես բազմաթիվ հասարակական գործերը, այնպես էլ անձնական բազմապիսի անախորժությունները և դժբախտությունները, որոնց մեծ մասը պատահեցին, ինչպես թվում է, նրա մեղքով: Նախ՝ նա բաժանվեց իր կնոջից՝ Տերենցյայից այն հիման վրա, որ սա ոչնչով չէր հոգացել իր մասին պատերազմի ժամանակ, այնպես որ ինքն ստիպված էլ եղել ճանապարհ ընկնել՝ կարիք ունենալով ճանապարհի անհրաժեշտ պիտույքների, իսկ Իտալիա վերադառնալուց հետո էլ կնոջ մեջ չգտավ իր հանդեպ որևէ բարյացակամություն: Քանզի կինը ոչ մի անգամ նրա մոտ չերեաց այն ամբողջ

երկար ժամանակվա ընթացքում երբ Յիցերոնն սնց էր կացրել Բրունդիզիոսում իսկ երբ դեռատի դուստրը ուղեորվել էր դէպի այնտեղ, կրտրելով այդ երկար ճանապարհը, մայրը իւան շէր տվել ո՛չ տվյալ դեպքի համար պատշաճ ուղեկցողներ, ոչ ճանապարհի պաշար։ Տունն էլ համուսնուն հանձնեց միանգամայն բարձիթողի տեսքով և աւայի, հետն էլ՝ մեծամեծ պատքերու Այսպիսիք էին, ասում են, ամուսնալուծության առաջնել պատշաճ պատրվակները։ Բայց սա խնքն էլ հենց փայլուն կերպով արդարացրեց այս բոլորը հերքող Տէրենցյային՝ շուտով ամուսնանալով մի աղջկա հետ որը նրան հմայել էր իր շահելությամբ ինչպես այդ մասին ամենուրեք ասում էր Տերտնցյան, իսկ ինչպես այդ նույն բանի մասին գրում է Տիրոնը՝ Յիցերոնի աղափարձակյալը, հանուն դրամի, ու պարտքերը վճարեր Աղջիկը շատ հաբուստ էր, Յիցերոնն էլ, որ, ըստ հավատարմագրի նշանակված էր նրան խնամակալ պահպանում էր նրա ունեցվածքը բայց քանի որ Յիցերոնը մի քանի տասնյակ հազարի պարտք ուներ տեղի տվեց բարեկամների ու տնեցիների հորդորանքին՝ ամուսնանալ այդ աղջկա հետ ընչամ տարիքի տարբերությանը և օգտվելով նրա փողերից՝ բավարարել պարտատէրերին։ Հիշելով այդ ամուսնության մասին մի ճառում ու գրված էր ի պատասխան «Փիլիպիկներին», Անտոսիոսն ապուլ է թե Յիցերոնը վաճառեց կնոջը, որի կողքին նա ծերացավ — սլամիտ ծաղր Յիցերոնի նստակեցության վերաբերյալ որպես անգործունյա ու ոչ աղմատէնչ մարդու։ Այս ամուսնությանից շատ շանշած՝ ծննդաբերության ժամանակ մահացավ նրա դուստրը՝ Լենտուլոսի տանը, որի հետ ամուսնացել էր իր առաջին ամուսնու՝ Պիզոնի մահվանից հետո Միսիթարության համար ամեն տեղից Յիցերոնի մոտ էին հավաքվել փիլիսոփաները, բայց սա այնքան ուժղին էր վշտացած որ յախանվեց իր շահէլ կնոջից այն պատճառով, որ սա ինչպես նրան թվացել էր ուրախ էր Տուլլյայի մահվան համար։

XLII Այդպիսիք էին Յիցերոնի տնային գործերը։ Իսկ Կեսարի դեմ տեղի ունեցած դավադրությանը նա մասնակցություն ունեցավ թեև չարեկամական ամենասուրտ կապերով կապված էր Բրուտոսի հետ և, ըստ երևույթի՝ նեղվելով գործերի ներկա վիճակից՝ կարոտում էր, ինչպես ուրիշ ոչ ոք, հին կալգերին Բայց դավադրության մասնակիցները վախենում էին նրա որպես ոչ բավականաչափ համարձակ մարդու, բնավորությունից ինչպես և նրա դառամյալ տարիքից, երբ ամենաուժեղ բնավորությունների մեջ անգամ ւպատվում է խիզախությունը։

Երբ Բրուտոսն ու Կասիոսը ընկերների հետ ի կատար ածեցին իրենց մահադրությունը Կեսարի բարեկամներն էլ միավորվեցին ընդդեմ սրանց

և նորից երկյուղ ծագեց որ շինի թե քաղաքն ընկնի երկպառակտա կան պատերազմի մեջ: Անտոնիոսը, որն այն ժամանակ կոնսուլ էր, հավարեց սենատը և կարճ ճառով կոչ արեց միաբանության, իսկ Յիցերոսը բազմաթիվ պատշաճ փաստարկներ բերելով՝ սենատին համոզեց, աթենացիների օրինակով, որոշում ընդունել Կեսարին վերաբերող գործերի ամնիստիայի մասին, իսկ Բրուտոսին ու Կասիոսին էլ պրովինցիալներ տալ: Բայց սրանից ոչինչ դուրս չեկավ: Քանզի ժողովուրդը, որն ինքնին ափսոսում էր Կեսարին, հենց որ տեսավ հանգուցյալին, որին տանում էին հրապարակի միջով, իսկ Անտոնիոսն էլ հավաքվածներին ցույց էր տալիս արնաթաթախ սրերով ծակծկված նրա զգեստը ղայրույթից իրեն կորցրած՝ նեովեց ֆորում գտնելու մարդասպաններին և կրակներ առած վազ տվեց դեպի նրանց տները, որպեսզի հրդեհներ դրանք: Իսկ նրանք նախօրոք նախազգուշական միջոցներ ձեռք առնելով խուսափեցին դրանից բայց կանխատեսելով ուրիշ շատ վտանգներ լքեցին քաղաքը:

XLIII. Անտոնիոսն էլ իսկույն գլուխ բարձրացրեց և, որպես մի մարդ որը մտադրություն ուներ միանձնյա կառավարելու, բոլորի հանդեպ դարձավ ահեղ, մանավանդ՝ Յիցերոնի: Քանզի տեսնելով վերջինիս նորից աճող ազդեցությունը հանրապետությունում և Բրուտոսի հետ նրա մտախնայունը Անտոնիոսը նեզվում էր նրա ներկայությունից: Պետք է ենթադրել, որ նրանք առաջ էլ միմյանց վերաբերվել էին կասկածամբ տությամբ՝ իրենց ամբողջ կենսակերպով միմյանց անհամապատասխան լինելու հետևանքով: Վախենալով այս ամենից՝ Յիցերոնն ուղեց մեկնել Սսորիք Դուլաբելլայի հետ, որպես նրա լեզատը բայց Հիրտիոսն ու Պանասսը, որոնք պետք է կոնսուլ դառնային Անտոնիոսից հետո ազնիվ ու Յիցերոնին նվիրված մարդիկ, նրան խնդրեցին չլքել իրենց, խոսսանալով, որ սլա ներկայությամբ իրենք իշխանությունից կզրկեն Անտոնիոսին: Իսկ Յիցերոսը նրանց անվստահությամբ չվերաբերվելով հանդերձ, այնուամենայնիվ շատ էլ չվստահեց: Նա հրամեշտ տվեց Դուլաբելլային, իսկ Հիրտիոսի հետ պայմանավորվեց, որ ամառը կանցկացնի Աթենքում ե կվերադառնա երբ նա կընդունի կոնսուլական պաշտոնը, որից հետո մեծակ նավեց գնաց: Բայց նրա նավարկությունը ձգձգվեց, իսկ Հռոմից, ինչպես հաճախ է լինում, սկսեցին անսպասելի լուրեր հասնել նրան, թե իբր Անտոնիոսի հետ զարմանալի փոփոխություններ են տղի ունեցել, թե նա ամեն ինչ անում ու վճռում է ի հաճույս սենատի: Ը որ պակաս է լուր նրա՝ Յիցերոսի ներկայությունը, որպեսզի գործերն ամենալավ ձևով ընթանան: Եշտ մեբելով իրեն շափազանց զգուշավորության համար Յիցերոնը լեւադարձավ Հռոմ Սկյբնակալ շրջանում

Հուլիսերը չխաբեցին նրան. նրան դիմաժորելու եկավ ժողովրդի ոչնպիսի մի բազմութուն, որ ձեռքսեղմումը և բարեկամական ողջունները պարպասների մոտ ու մուտք գործելը դրաղեցրին համարյա ամբողջ օրը: Բայց երբ հաջորդ օրը Անտոնիոսը սենատը հավաքեց և նրան հրավիրեց այնտեղ, Յիցերոնը չգնաց և պառկեց անկողնում պատճառ բանելով, թե հոգնածութունից իրեն թույլ է դգում Բայց, հավանաբար, դա վախն է եղել շար դիտավորութունների հանդեպ որ առաջացել էր նրա մեջ որոշ կասկածանքներից ու ճանապարհին ստացած նախազգուշացումներից: Սրանից զայրացած Անտոնիոսը ղորականներ ուղարկեց՝ հրամայելով Յիցերոնին բերել կամ այրել նրա տունը բայց ուշադրություն դարձնելով բազմաթիվ առարկութուններին ու խնդրանքներին՝ բավարարվեց նրանով որ Յիցերոնից գրավ վերցրեց: Այնուհետև նրանք հանդիպելիս շեին բարևում ու զգուշանում էին միմյանցից, և այսպիսի հարաբերությունների միջ էլ նրան գտավ Ապոլոնիայից վերադարձած երիտասարդ Կեսարը: Ես իրեն ժառանգորդը հայտարարեց մեռած Կեսարի և վեճի մեջ մտավ Անտոնիոսի հետ 25 միլիոնի պատճառով որ վերջինս իրեն էր վերցրել հանգուցյալի ունեցվածքից

XLIV Այս նկատառումով Փիլիպոսը որն ամուսնացել էր երիտասարդ Կեսարի մոր հետ, և Մարցելլոսը՝ նրա քրոջ ամուսինը, պատանու հետ միասին ներկայանալով Յիցերոնին՝ նրա հետ պայմանավորվեցին, որ նա զաջակցի Կեսարին և սենատում, և ժողովրդի առաջ իր ճարտասանության ուժով ու պետական կառավարման գործերում իր ունեցած ազդեցությամբ, իսկ երիտասարդ Կեսարը դրամի ու ղորքի օգնությամբ կապահովի Յիցերոնի անվտանգութունը երիտասարդն արգեն իր տրամադրության տակ ունեւ բավականին ղորականներ, որոնք ժառայել էին Հուլիոս Կեսարի հրամանատարության տակ: Կար, ըստ երևույթին, էլ ավելի կարևոր մի պատճառ, որից ելնելով Յիցերոնը սիրով համաձայնեց բարեկամութուն կնքել երիտասարդ Կեսարի հետ: Թվում է, ղեռես Պոսպետսի ու Կեսարի կենդանության օրոք նա երազոմ տեսել էր, որ, իբր, ինչ-որ մեկը Կապիտոլիում էր կանչել սենատորների ղավակներին, քանի որ Յուպիտերը պետք է դրանցից մեկին Հռոմի տիրակալ հայտարարեր: Հապճեպ, վազեվաղ եկած քաղաքացիները կանգնել էին տաճարի շուրջը, իսկ տղաները, լություն պահպանելով, քարացած-նստած էին՝ եզրագարդված ծիրանագույն տոգաները հագնեքին: Դռները հանկարծակի բացվեցին, և տղաները, մեկ առ մեկ կանգնելով, հանդիսավոր կերպով քայլում էին աստծու շուրջը: Նայելով յուրաքանչյուրին՝ աստված հետ էր ուղարկում, և նրանք հեռանում էին վշտացած: Բայց երբ մոտեցավ

Երիտասարդ Կեսարը, Յուպիտերը ձեռքերը ապրածեց և ասաց. «Հոռմհացիններ, կգա վերջը ձեր երկայառակութիւնների, երբ սա՛ դառնա տիրակալ: Այսպիսին է եղել, ասում են Յիցերոնի երազը, ընդ որում տղայի արտաքինը պարզ տպավորվել էր նրա հիշողութեան մեջ, բայց իրեն՝ տղային նա երալում չէր ճանաչել: Իսկ հաջորդ օրը, այն ժամանակ, երբ Յիցերոնը իջնում էր Մարսիան գաշտ, իսկ տղաները վերագառնում էին այգտեղ անցնացրած մարմնամարզական պարապմունքներից, նրանցից առաջինը Յիցերոնի աչքին ընկավ հենց նա՝ ում երազում տեսել էր: Դրանից ապշած՝ Յիցերոնը հարցրեց ովքե՛ր են նրա ծնողները: Պարզվեց, որ նա Օկտավիոսի որդին է՝ ոչ այնքան նշանավոր մի մարդու, և Ատտյւյի Կեսարի ազգականուհու, դրա համար էլ Կեսարը, որը շունչի սեփական երեխաներ, հենց նրան էլ կոտակել, թողել էր իր ունեցվածքն ու տունը: Այդ ժամանակից ասում են, Յիցերոնը տղային հանդիպելիս մեծ ուշադրութիւն էր դարձնում նրա վրա, իսկ տղան բարեկամորեն էր ընդունում նրա բարեհաճութիւնը: Բացի այդ, այնպես էր պատահել, որ նրա ծննդյան թիվը համընկել էր Յիցերոնի կոնսուլութեան տարվա հետ:

XLV Ահա նրանց բարեկամութեան այն տեսանելի պատճառները, ոչ ոսք սովորաբար մատնացույց են անում: Բայց Յիցերոնին Կեսարի հետ ամենից առաջ մերձեցրել էր Անտոնիոսի նկատմամբ տեսլութիւնը, ապա և նրա բնածին թուլութիւնը մեծարանքների հանդէպ նա հուշուներ իր քաղաքակա՛րութեան մեջ օգտադործել Կեսարի ուժերը, իսկ պատանին նրա աչքն էր մտնում՝ նրան անվանելով իր հայրը: Այդ առթիվ գալլրանալով՝ Բրուտոսը Ատտիկոսին ուղարկած իր նամակներում Յիցերոնին մեղադրում է այն բանում որ նա Անտոնիոսի վախից հաճոյա կատարութիւն անելով Կեսարին՝ ակնհայտորեն ոչ թե հայրենիքի համար ազատութիւն, այլ իր համար ողորմած տեր է փնտրում: Այնուամենայնիվ նրա սրտն, որն Աթենքում պալապում էր փիլիսոփաների մոտ Բրուտոսն իր մոտ ընդունեց, հրամանատարական պաշտոնի նշանակեց և շատ անգամ էր նրան հանձնարարութիւններ տալիս որ վերջին ՝ հաջողութեամբ էր կատարում:

Այդ ժամանակ Յիցերոնի հղորութիւնը քաղաքում հասել էր ամենաբարձր վերելքի: Տնօրինելով այն ամենին, ինչ որ կամենում էր, նա արտաքսեց Սնտոնիոսին, նրա դեմ ոտքի հանեց բոլորին և նրա հետ պատերազմելու ուղարկեց երկու կոնսուլներին՝ Հիրտիոսին և Պանսասին: Դրա հետ միասին նա սենատին համոզեց Կեսարին տալ լիկտորներ և պրետորական իշխանութեան նշաններ՝ որպէս հայրենիքի համար պայքարող մարտիկի: Բայց երբ Անտոնիոսը պարտված էր, իսկ երկու կոն-

սուլներն սպանված և նրանց զորքերը ճակատամարտի դաշտից վերա-
 գառնալով միացան Կեսարին սենատը վախենալով երիտասարդից, որին
 այնքան փոշուս կերպով նպաստ մ էր բախտը, փորձեց պատիվներով
 և ընծաներով զորքերին համոզել, որ հեռանան Կեսարից՝ այդպիսով նրան
 զրկելով ռազմական ուժերից պատրվակ ծառայեցնելով այն, թե Ան-
 տոնիոսի փախուստից հետո այլևս պաշտպանների կարիք չկա Կեսարն
 էլ իր կողմից ահաբեկվելով գործերի այսպիսի շլջալարձից Ցիցերոնի
 մոտ մարդիկ ուղարկեց, որ խնդրէին ու համոզեին նրան կոնսուլութուն
 ձեռք բերելու միաժամանակ իրենց էրկուսը համալ, իսկ հետո իշխա-
 նությանն ընդունելով գործերը թող Ցիցերոնն ինքը տնօրիներ, ինչպես
 կամենար ու ղեկավարեր պատանուն որը սոսկ այդ տիտղոսն ու փառքն
 է ձգտում ձեռք բերել Կեսարն ինքը խոստովանում է, որ ինքը վախե-
 նո մ էր զորքերի արձակումից և մենակ մնալու վտանգի տակ էր, որի
 պատճառով էլ օգտվում էր Ցիցերոնի իշխակասիրությունից՝ նրան դրդե-
 լով հետամտել կոնսուլութան և խոստանալով աշակցել ը՛ տրություննե-
 րի ժամանակ

XLVI Ցիցերոնը ծեր մարդ, միսչև վերջը դաշթակղված ու խաբ-
 ված արդ պատանու կողմից պաշտպանելով նրա թեկնածությունը և սե-
 նատը հնադանգ գալձնելով նրան,— հենց այդ ժամանակ դրա համար
 մեղադրանքի ենթարկվեց բարեկամների կողմից, իսկ քիչ անց ինքն էլ
 զպաց որ կործանել է իրեն և զոհարերել ժողովրդի ազատությունը: Քան
 զի Կեսարը ուժեղանալով և ընդունելով կոնսուլի պաշտոնը, հեռացավ
 Ցիցերոնից և դարձավ Անտոնիոսի ու Լեպիդոսի բարեկամը և նրանց
 զորքերը միացնելով իրենին՝ նրանց հետ մի ինչ որ մասնավոր սեփա-
 կանության պես բաժանեց գլխազույն կառավարումը: Նյանք պրոսկրիպ-
 ցիոն ցուցակի միջ մտցրին ավելի քան 200 մարդու որոնց որոշված էր
 սպանել: Բոլոր վիճելի շարքերից ամենից էրկար հակաճառություններ
 հարուցեց այդ ցուցակում Ցիցերոնին մտցնելու հայցը: Անտոնիոսը ոչ
 մի կերպ համաձայնության չէր գալիս, էթե Ցիցերոնը առաջինը ըսպան
 վեր, Լեպիդոսը պաշտպանում էր Անտոնիոսին Կեսարն էլ հակառակում
 էր այդ երկուսին: Երեք օր շարունակվեցին նրանց գազա՛ի բանակցու-
 թյունները ատանձնության մեջ Բոնոնիա քաղաքի մոտ, ընդ որում հան-
 դիպում էին նրանք մի վայրում, որը գտնվում էր ճամբարից մի քիչ հե-
 ոու և շրջապատված էր գետով Առաջին երկու օրերին Կեսարը ասում
 էն, պայքարում էր Ցիցերոնի համար, երրորդ օրը զիջեց ու զոհարեց
 նրան: Իսկ նրանք փոխանակությունը հետևյալ կերպ կատարեցին Կե-
 սարը զիջեց Ցիցերոնին, Լեպիդոսը՝ իր եղբայր Պղոսին և Անտոնիոսը

Լուցիոս Կեսարին, որը նրան քեռի էր գալիս Այսպես կա տաղի շարու-
թյունից նրանք դրավել էին մարդկայնորեն մտածելու ընդո նակությունից
կամ, ավելի լավ է ասել՝ ցույց տվեցին թե չկա ավելի շար գազան, քան
այս մարդը, որն իր մեջ համատեղում է հոռի կրքերն ու իշխանությունը

XLVII Այն ժամանակ, երբ տեղի էին ունենում այս բաները, Յի-
ցերոնը Էդբոր Հետ Տուսկուլոնի մասի իր կալվածքում էր գտնվում: Իսկ
իմանալով պրոսկրիպցիաների մասին՝ նրանք որոշեցին անցնել Աստո-
լա՝ Յիցերոնի ծովափնյա կալվածքը, իսկ այդտեղից նավել գնալ Մա-
կեդոնիա՝ Բրուտոսի մաս որովհետև արդեն լուրեր էին շրջում թե նա
իր տրամադրության տակ մեծ ուժեր ունի: Երանք վշտաբեկ ճանապարհ
ընկան պատգարակներով: Ճանապարհին կանգնելով և պատգարակները
կողք կողքի դնելով՝ նրանք դառնորեն տրանջում էին իրենց վիճակից:
Սոանձնապես կվիտոսն էր անհանդստանում՝ մտածելով իրենց անօգ-
նականության մասին, քանզի, ասում էլ Կվինտուսը ինքը ոչինչ չէր
վերցրել իր հետ, Յիցերոնի պաշարն էլ էր սուղ: Այսպես ուրեմն, ավելի
լավ կլինի, եթե Յիցերոնը կանխի նրան փախուստի մեջ իսկ եղբայրը
նրան կհասնի տանից անհրաժեշտ բաները հետը վերցնել վ նրանք
այդպես էլ պոշեցին, ապա ողջագուրվելով րածեշտ տվին և արցունքն
աչքներին բաժանվեցին: Եվ ասա, մի բանի օր անց, Կվինտուսը, ստրուկ-
ներից մասնավորով այն մարդկանց ձևաբար սրոնք փնտրում էին նրան
սպանվե՞ր որդո հետ միասին: Իսկ Յիցերոնը հասնելով Աստուրա և
այնտեղ նավ գտնելով իսկույննեթ նստեց ու ճամփա ընկավ, օգտվելով
համընթաց քամուց, գնաց մինչև Տիրցեոն: Եավավարներն ուզում էին
անհապաղ նավել հեռանալ այդտեղից, բայց Յիցերոնը, որն արդյոք ծո-
լի՞ց էր վախենում, թե՞ դեռ լրիվ չէր կորցրել հավատը Կեսարի հան-
դեպ, նավից իջավ ու ոտքով գնաց հարյուր ասպարեղ, կարծես թե գնա-
լով դեպի շոտմ իսկ ապա խուճապահար նորից փոխեց մտադրությու-
նը և իջավ դեպի ծովը Աստուլս: Այստեղ նա գլշերն անցկացրեց՝ իր
անելանելի գրության վերաբերյալ սարսափելի մտատանջությունների
մեջ ալուպես որ նրա մտքով անցնում էր թաքուն իրեն գցել Կեսարի
տուր և իր կյանքին վերջ տալ նրա օջախում նրա նկատմամբ հարու-
ղելով վրեժխնդրության ոգին: Եվ այս բայլից նրան շեղեց տանջանքնե-
րի հանդեպ ունեցած սարսափը: Իւ նորից կաշեկով իր մաւծած մյուս
անկանոն ծրագրերից, նա իր ստրուկներին պատվիրեց իրեն ծովով տա-
նել Կայեսա, որտեղ նա դաստակերտ ուներ՝ հաճելի մի ապաստան
ամառային ժամանակվա համար: Երբ այնպես անուշ փշում են պասսա-
տալին քամիները Այն տեղում է գտնվում սակ Ապոլլոնի ու Ի ծ աւր-


ճարը ծովն ի վեր խոյացած: Այն ժամանակ, երբ Յիցերոնի նավը թիւ-
վարութեամբ մոտենում էր ափին, նրան ընդառաջ թռավ, կռկռալով, տա-
ճարից բարձրացած ագռավների երամը: Յրիվ դալով գետի երկու կող-
մերում՝ դրանցից մի քանիսը շարունակում էին կռկռալ, մյուսները կըտ-
ցահարում էին նավի ամրակապերը և դա ամենքին մի վատ նախանշա-
նակ թվաց: Եվ այսպես, Յիցերոնը ափ իջավ ու մանելով իր ամառանո-
ցը՝ պառկեց հանգստանալու: Ագռավների թաղմությունը նստեց լուսա-
մուտին՝ ուժգին ճիչել արձակելով, իսկ դրանցից մեկը, նստելով անկող-
նի վրա, սկսեց Յիցերոսի դեմքից փոքր-ինչ ձգել թիկնոցը, որով նա
ծածկվել էր: Իսկ ստրուկները տեսնելով այդ, կշտամբանքով հարցնում
էին իրենց մի՞թե իրենք պիտի սպասեն, մինչև որ դառնան իրենց ափ
րոջ սպանութեան վկան և չպիտի՞ պաշտպանեն նրան մինչդեռ կենդա-
նիները նրան օգնություն են ցույց տալիս և հողում նրա մասին այս ան-
ոեղի դժբախտութեան պահին: Մերթ խնդրանքներով մերթ ստիպելով՝
րանք տատաղարակով նրան տարան դեպի ծովը:


XLVIII. Հենց այդ ժամանակ հայտնվեցին մարդասպանները ցնն
տուրիոն Հերեննիոսը և ռազմական տրիբուն Պոպիլիոսը, որին Յիցե-
րոնը երբեմնի պաշտպանել էր հայրասպանութեան մեղադրանքով նրա
դատավարութեան ժամանակ Սրանց հետ ծառաներ էլ կային: Գուները
փակ գտնելով՝ նրանք կոտրեցին Յիցերոսին տեղում չգտան իսկ տա-
նը պտնվող մարդիկ էլ պնդեցին, թե նրան չեն տեսել: Այնժամ, ասո մ
են, ոմն պատանի Կվինտոսի՝ Յիցերոնի եղբոր ազատարձակյալը Ֆի-
լոլոգոս անվամբ Յիցերոնի կողմից դաստիարակված գրականութեան և
գիտութեան պարապմունքներում, տրիբունին մատնացույց արեց պատ-
գարակավոր մարդկանց որոնք ծառաշատ, սովիերախիտ արահետներով
իջնում էին դեպի ծովը: Տրիբունը, մի քանի հոգի հետը վերցնելով այգու
եզրով վազեց դեպի ելքը: Յիցերոնն էլ տեսնելով արահետներով վազող
Հերեննիոսին՝ ստրուկներին հրամայեց պատգարակը հենց այդտեղ էլ
վայր դնել, իսկ ինքը, իր սովորութեամբ համաձայն, ձախ ձևոքով բռնե-
լով ծնուրը՝ սկեռուն նաչեց մարդասպանին: Նրա անխնամ տեսքը, եր-
կարած մազերը և հոգսերից տանջահար դեմքը խղճահարություն էին
ներշնչում, այնպես որ համարյա բոլոր ներկաները ծածկեցին իրենց
դեմքերն այն ժամանակ երբ նրան սպանում էր Հերեննիոսը: Յիցերոնը
վիզը պատգարակից դուրս հանեց, և Հերեննիոսը մորթեց նրան Մեռավ
նա վաթսունչորս տարեկան հասակում: Այնուհետև Հերեննիոսը, հետե-
վելով Անտոնիոսի հրամանին, կտրեց Յիցերոնի գլուխը և ձեռքերը,
որոնցով նա գրել էր «Փիլիպիկները»: Յիցերոնն ինքն էր Անտոնիոսի

դեմ : գրած իր ճ սուրն անվասլ Փիլիպիկներ» : Մինչև հիմա էլ դրանց «Փիլիպիկներ» են անվանում :

XLIX Անտոնիոսին վիճակվեց կոմիցիայում լինել հենց այն ժամանակ, երբ Հսոմ էին բերել Ցիցերոնի մարմնի կտրված մասերը : Լսելով այդ մասին և տեսնելով դրանք՝ նա գոչել է թե պրոսկրիպցիաներն այժմ վերացան Գլուխն ու ձեռքերն էլ նա հրամայեց ցուցադրել տրիբունայում ոստերերի վրա, մի տեսարան որից հոմեացիները ցնցվեցին, իրենք իրենց մեջ մտածելով, որ տեսնուա են ոչ թե Ցիցերոնի գեմքը այլ՝ Անտոնիոսի հոգու կերպարանքը : Միայն մի բանում նա իրեն ալ դարացի ցույց տվեց, ի տարբերութուն մնացած այլ բաների Ցիլոլոցոսին : Հանձնելով Կվինտոսի կնոջը՝ Պոմպոնյային : Իսկ սա, լիակատար իշխանութուն ստանալով այդ մարդու վրա, դրան ստիպեց սարսափելի ալլևայլ տաճանքների հետ միասին կտոր կտոր անել սեփական միսը տապակել և ուտել : Այսպես էն պատմում, համենայն դեպս, որսը պատմաբաններ : Բայց իլ Ցիցերոնի ազատարձակյալ Տիրոնը բոլորովին չի հիշատակում սույնիսկ Ցիլոլոցոսի զավաճանության մասին :

Ես լսել եմ, որ շատ տարիներ անց, Կեսարը մի անգամ մտել է իբր թոսնիկներից մեկի մոտ վերջինս ձեռքին բռնած է եղել Ցիցերոնի գիրչը և վախեց թաքցրել է իր զգեստի տակ : Կեսարը սկստել է, լերցրել է գիրքը և ոտքի վրա կարդացել պոա նշանակալի մասը : Եվ վերադարձնելով տղային՝ ասել է «Գիտուն մարդ էր նա և իր Վալրենիբլ սիրող» : Իսկ դրանից շատ շանցած՝ հաղթելով Անտոնիոսին և անցնելով կոնսուլական պաշտոնին, նա իրեն որպես ընկերակից է վերցրել Ցիցերոնի որդուն, որի կոնսուլության օրոք սենատը ոչնչացրեց Անտոնիոսի արձանները, վերացրեց նրան հատկացված պատիվները և որոշեց, որ այսուհետև Անտոնիոսներից ոչ ոք չկրի Մարկոս անունը : Այս ձևով աստվածութունը Ցիցերոնի տանը հնարավորութուն տլլեց ի կասար ածելու Անտոնիոսի պատվը :





Չ ու գ ա դ ռ ու մ

1 Այսպիսով, ուշադրության արժանի այն ամենը ինչ մեզ հաջողվեց գրված գանել Դեմոսթենեսի և Ցիցերոնի մասին, շարադրված է: Մի կողմ թողնելով նրանց Դոմոսթենեսի հատկանիշը՝ չեմ կարող այնուամենայնիվ, չնկատել որ Դեմոսթենեսը իր ողջ ձիրքը, ի՛նչ Նա ուներ բնականից կամ ձեռք էր բերել վարժություններով՝ նվիրել ց միայն ճարտասանությանը, բայց փխարենը պարզությամբ և ուժով գերազանցել ց բոլոր նրանց, ովքեր նրա հետ մրցում էին դատարաններում և ժողովներում ու՛ր հոյակապությամբ ու ճոխությամբ՝ հանդիսավոր ճարտասանության վարպետներին, ճշգրտությամբ ու հմտությամբ՝ սովետաներին: Ցիցերոնն էլ ջանասիրաբար աշխատելով իր վրա որպես հետադրա հետ, միասին յուրաքրից ընդարձակ բաղմազան գիտելիքներ և ոչ միայն թողեց բազմաթիվ սեփական փիլիսոփայական երկեր ակադեմիականների ուսմունքի ոգով, այլև իր ճառերում ինչպես դասական, այնպես էլ պետական ակնհայտ ձգտում է գրականում ցուցադրելու իր գիտունությունը: նրանց ճառերից երևում է նաև Էրիուսի բնավորությունը Դեմոսթենեսյան պերճախոսությունը, որին խորթ են կատակներն ու ծաղկեցումները, սեղմ է, զորեղ ու խիստ, ոչ թե պատրույզի հոտ է արձակում, ինչպես սրամտել է Պիթևաը, այլ ժուժկալ ապրելակերպով անդազրում խորհրդածություններով և իլ ծիծաղ հարուցող մտայլ, դառ բնավորությամբ: Ցիցերոնն էլ, սրամտությունների հետևից ընկած հաճախ խեղկասակություն էր անում և նույնիսկ շուրջ բաները, դատարանում ելույթ ունենալիս ծաղրում էր հոգուտ իրեն ընդ որում անցնելով թույլատրելի սահմանները: Այսպես Ցելիոսի համար սյուսասանած

ճառում նա հայտարարել է, ի տարօրինակ ոչինչ չկա նրանում, որ եթե այս դարում, որը հակված է շոայլության ու պերճանքի, իր պաշտպանյալը արևում է վայելքներին, քանզի շօգտվել նրանից ինչ մատչելի է, կարող է միայն խելատը մանավանդ որ ամենանշանավոր փիլիսոփաները հոսւ էրի սեջ տեսնում Ըն բարձրագույն բարիք: Պատմում են նաև, որ իր կոնսուլության օրոք պաշտպանելով Մուրենային, որը դատի էր արված Կատոնի կողմից, նա, որպէսզի խայթեր Կատոնին, երկար ծաղրեց ստոբիկների ուսմունքը այսպես կոչված «պարագոքսների» անհեթեթության համար, և ունկնդիրներն այնպես վարակիչ էին հոհում, որ նույնիսկ դատավորները շղիմացան, որի վրա Կատոնը թեթև ժպտալով՝ նկատեց իր կողքի նստածներին. «Ի նչ աստիճանի ծիծաղելի է մեր կոնսուլը» Սերը ծիծաղի ու կատակի հանդէպ ըստ էրևույթին ընդհանրապես չսորոշ է եղել Յիցերոնին, դրանից էլ սրա դեմքը միշտ սլայծած է եղել ու ժպտալից: Իսկ Գեմոսթենեսը մշտապես լուրջ է եղել, և մոայլ մտահոգության արտաշայտությունը համարյա չէր լքում նրան, որի համար թշնամիները, իր իսկ ասելով նրան անվանում էին ոչ այլ կերպ լսան «Նոթոս» ու «Հաստակող»:

II. Եվ էլի, որքանով որ կարելի է յասել Ը ու նրանց երկերի նրանյից մեկն իրեն գովում էր շափավոր կերպով, ու աներեսարար և ոչ էլ միայն հանուն գովեստների այլ՝ բացառապես ուրիշ, ստավել բարձր նպատակների համար՝ իսկ ընդհանրապես դուրս է աշել ու շրջահայաց մինչդեռ Յիցերոնի շափից դուրս ինքնագովությունները սերկացնում են նրա մէջ Լոյս՝ անդուսող սնափառությունը երբ, օրինակ նա բացակայում է թէ՛ գեղեցիկ պծալ է լսնարհվի սոգայի առաջ և հաղթահանդեռային դափնին՝ հոհտորագան խոսքի առաջ Վերջապես, ոչ միայն իր դործէրն ու աշտոքները, այլև նույնիսկ ճառերը՝ արտասանվածներն ու գրի առնվածները, նա գովաբանում է ինչպես կովարար մի սոլա ուրբ իործում է մրցել սոփեստներ Իսոկրատեսի և Անալսիժենոսի հետ, այլ ու թե մի այլ ուր կոչված է իր հետեից սանելո և խրատելո հո մեալինէրին

գոր մարտիկներին հ մաս սկ ըրի համար մա՛ս բեր

այս սարախոսությունը պատահան գրծչի համար, հասկանալի է անբաժեշտ է բայց ձգտել ու ծարավի լինել ճարտարախոսության միջոցով փառքի հասնելու, դա անվայել բան է: Այս առումով ասհամեմատովելի մեծ գովեստի է արժանի Գեմոսթենեսը, որն ասում է թե իր հոհտորակալ ընդունակությո նեկը ընդամենը սոսկ որոշ հմտություններ

են, և դրանք էլ մեծ ներողամտութիւնն են պահանջում ունկնդիրներէ կողմից, իսկ նրանց, ովքեր այդպիսի ընդունակութիւններով պարծենում են արդարացիորեն համարում էր բո՛ւ արհեստավորներ:


III Ժողովրդի առաջ ճառելիս և պետական գործերում երկուսն էլ այնքան ազդեցիկ են եղել, որ նույնիսկ նրանք, ովքեր իրենց հրամանատարութեան տակ զորքեր ու բանակներ են ունեցել, էլի սրանց աջակցութեանն են որոնել Դեմոսթենեսի դեպքում՝ Բարեաեսը, Դիոպիթեսը և Լեոսթենեսը, Յիցերոնի դեպքում՝ Պոմպեոսը և պատանի Կեսարը որի մասին Կեսարն ինքը վկայում է Ագրիպպասին և Միկենտսին նվիրված իր հուշագրութիւններում: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որտեղ, ըստ համընդհանուր համոզմունքի, մարդու բնավորութեանը Լնթարկվում է առավելագույն փորձութեան և դրսևորվում առավել պայծառորեն, այն է լիազորութեանն ու իշխանութեանը ինչը չուրաքանչյուր մարդու մեջ արթնացնում է թաքնված կրքերն և սուսահայտում բոլոր արատները, ապա Դեմոսթենեսի մոտ դա երբեք չի եղել և այդ առումով նա հնարավորութեանն չի թողել դատելու իր մասին քանզի ոչ մի աչքի ընկնող պաշտոն չէր դբադեցնում և նույնիսկ այն զորքելը որ հավաքել էր Փիլիպոսի գեմ կովելու համար նա ինքը չէր ղեկավարում: Յիցերոնն էլ, որին ուղարկում էին որպէս քվեստոր՝ Սիցիլիացում, պրոկոնսուլ՝ Կիլիկիայում ու Կապադովկիայում, այնպիսի մի ժամանակ, երբ շահասիրութեանը ծաղկում էր, երբ զորապետներն ու փոխարքաները ոչ թէ պարզապէս զոդանում էին, այլ հենց ուղղակի կողոպտում էին պրովինցիաները, Լրբ կաշառք վերցնելը չէր համարվում ամոթալի մի բան և արդեն նա էր սիրո ու հիացմունքի արժանանում, ով որ դա ս նո մ էր լափավոր — Յիցերոնը պարզ ապացուցներ տվեց շահի հանդուպ իր անտարբերութեան, իր մարդկայնութեան և օրինավորութեան: Իսկ բուն Հոմմում ձեռականորեն բնաւըր վելով կոնսուլ, բաց ըստ էութեան ստանալով անսահմանափակ, դիկտատորական լիազորութեաններ Կատիլինայի ու նրա հանցակիցների դեմ պայքարելու համար նա հաստատեց Պլատոնի մարդարեական խոսքերն այն մասին, թէ սոսկ այն ժամանակ պետութեանները կադատվեն շարիքից, երբ պատահականութեան բարի կասքով միավորվեն ուժեղ իշխանութեանը, իմաստութեանն ու այ դարութեանը: Դեմոսթենեսին հանդիմանում են, որ նա իր պերճախոսութեանը դարձրեց շահի աղբյուր, գաղտնորեն ճառեր հորինելով միմյանց դատի տված Փորմիոնի և Ապոլլոգորասի համար: այն բանի համար, որ նա իրայտառակեց իրեն՝ դրամ բնգունելով թագավորից, և, վերջապէս, դատապարտվեց Հարպալոսից կաշառք վերցնելու համար: Նույնիսկ եթէ սուտասաններ համարենք նրանց, ովքեր


գրում են դա — իսկ այդպիսիները քիչ չեն — անհնար է համենայն դեպս հերքել, որ Դեմոսթենեսը բավականաչափ արիություն չունէր անտարբեր նայելու արքայական նվերներին որոնք ուղարկվում էին ի նշան երախտագիտակցան ու արդանքի, դէ չէ որ էլ կարող այլ կերպ վարվել մի մարդ, որը փող էր պարտք տալիս՝ գրավ վերցնելով նավեր ու բեռներ: Իսկ Յիցերոսի անշահախնդրության մասին, որը, մերժելով թախանձագին խընդրանքները ոչ մի անգամ շուտ կարգներ չընդունեց ո՛չ սիցիլիացիներից ոչ անց մոտ էգիլ եղած ժամանակ, ո՛չ Կապադովիայի թագավորից՝ պրոկոսոս: Եղած ժամանակ, ոչ էլ Հոսմի իր բարեկամներից երբ նա թողնում էր քաղաքը՝ բանելով արտոյի համփան որի խոսին մենք արգեն լուսել ենք:

IV. Եվ նույնիսկ արտաքսո մը մեկի համար ուր մերկացվել էր կաշատկերություն մեջ վերածվեց խայտառակության իսկ մյուսին փառքի արժանացրեց՝ որպես մի մարդու որը տուժել էր սմենասքանչելի սըխրանքի՝ հայրենիքը շարազոտներից ազատելու համար: Ուստի Դեմոսթենեսի վախուստի համար ոչ ոք չէր ցավում, իսկ Յիցերոսի հանդեպ ունեցած համակրանքից նույնիսկ սենատն էր սզո զգեստ հագել և հրատարկեց որևէ հարց քննարկելուց մինչև որ Յիցերոսին լիսույլաարվեր ևս վերադառնալու Փոխարէնը Յիցերոսը արտաքսումն անցկացրեց անդործութեան մեջ, Մակեդոնիայում պարապ նստած մինչդեռ Դեմոսթենեսն իր արտաքսումը նշանավորեց երևելի գործերով: Մարտնչելով, ինչպես արդեն ասված է, հանուն հելլենների պործի, նա շրջում էր քաղաքեքաղաք, խնդրելով մակեդոնական դեսպաններին, և դրանում իրեն գրսևորեց որպես շտապվելի լավ քաղաքացի քան թե նույն անգամանքներում Թեմիստոկլեսն ու Ալկիբիադեսը: Բայց հայրենիք վերադառնալուց հետո էլ նա շարունակել է իր գործունեությունը և մինչև վերջը մարտնչել Անտիպատրոսի ու մակեդոնացիների դեմ: Իսկ Յիցերոսին Լելիոսը սենատում հանդիմանում էր, որ նա լուս նստած է մինչդեռ Կեսարը դեռ անբեղ անտրտւթ մի տղա, անօրինականորեն ձգտում է հասնել կոնսուլության նրան նամակներում նախատում է նաև Բրուտոսը, մեղադրելով, որ նա սնուցել մեծարքել է ինչ ավելի մեծ բանապետություն քան իր՝ Բրուտոսի տապալումը:


V. Եվ վերջապէս Լելիոս լ մահվան մասին Չի կարելի լիդճալ Յիցերոսին հիշելով թե ինչպես նրան՝ ծերունուն, սարսափից խելքը գցած, սարսկները պատգարակով մի տեղից մյուսն էին քարշ տալիս, թե ինչպես փորձելով խուսափել մահից՝ նա թաքնվում էր մարդասպաններից, որոնք վրա էին հասել ընտելյունից իշահակված ժամկեսից փոքր ինչ


շուտ, և այնուամենայնիվ, մորթվեց։ Իսկ ինչ վերաբերում է Դեմոսթենեսին, ապա, նա թեև դրսևորեց որոշ թուլություն ասլավինելով ապաստանին, սակայն հիացմունքի է արժանի այն որ նա խնամքով թույն էր պահում, և այն, թե նա ինչպես օգտագործեց դա քանի որ աստված ինքը շնորհաց նրա անձեռնմխելիության մասին, նա իբ փրկությունը գտավ մի ուրիշ, առավել վսեմ զոհասեղանի մոտ՝ խույս տալով վարձու նիզակակիրներին և հազթանս կ'ստնելով Անտիպատոսի դաժանության հանդեպ։





ՏՐԱԿՏԱՏՆԵՐ ԵՎ
ԵՐԿԻՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ





Պլո ս արքւ սը Պւլիսն ին ու Եվլիդիկեին հղո մ է լավագույն ցանկություննէրս

Հինավուրց օրհներգությունից հետո, որը ձեզ որպէս նորապսակների, ձոնեց Գեմետրայի քրմուհին, հուսով եմ, և իմ խոսքը որը ձեզ է վերաբերում ու միաձուլվում ամուսնական երգին օգտակար կլինի ձեզ և օրհներգության եղանակին՝ համահունչ: Շվիի եղանակներից մեկը մի ժամանակ երաժիշտները կոչում էին «ձիու», հավանաբար նրա համար որ այդ մեղեդին ձիերի մեջ սիրո կրակ է բորբոքում և սրանց զրգում գուդավորվել Իսկ փիլիսոփայությունը թեև բազում ղեղէցիկ խոսքեր ունի, գրանցից իր կարևորությամբ չի զիջի հատկապէս սա հարսանեկանը քանզի նրանք, ովքեր որոշէլ են իրենց կապել ամուսնական կապերով սա նրանց կախարդում է՝ դարձնելով միմյանց հանդիպ քնքուշ ու սիրալիր: Եվ ահա համառոտ համեմատություններով որպէսզի հիշելը հեշտ լինի, շարադրելով հիմնականը այն բանի, ինչը ձեզ փիլիսոփայությունից ճաշակելիս, արդէն շատ անգամ վիճակվել է լսելու, հղում եմ ձեզ երկուսիդ ընդհանուր ընծա՝ աղերսելով Մուսաներին օգնություն և աջակցություն ցուցաբերել Ափրոդիտեին չէ՞ որ ամուսնության և ընտանեկան օջախին շատ ավելի, քան որևէ մի քնարի կամ կիֆարայի, պատշաճում է համաձայնության բերել և իրար համահունչ գարձնիլ ճարտասանության արվեստի ու փիլիսոփայության օգնությամբ: Զուր չէ, որ հները Ափրոդիտեի արձանների կողքին կանգնեցնում էին Հերմեսի քանդակները, ակնարկելով այն որ ամուսնության հետ կապված հաճույքները ամէնից առաջ կարիք են ղգում առողջ ի որհրդածությունների, կանգնեցնում էին

նաև Պիթոյի ու Քարիտնէրի արձանները որպէսզի այն ամենը, ինչ ցանկանում են, ամուսինները միմյս նցից ձեռք բերեն ոչ թե վեճերով ու փոխադարձ հայհոյանքներով, այլ՝ համոզելով

(1.) Մուսնը նորա՝ արտին պատվիրում է նախքան ամուսնու հետ ննջարանում տանձնանալը, սերկեիլ ուտել, հավանաբար նրա համար, որ արտի դեմից ու ձայնից սասցվող առաջին սպալորությունը լինի քաղցր ու գլուխիչ:

(2.) Բնավորապէս նորահարսին ամբողջովին փաթաթում են իսկ գրուիսը դարդարում ծներեկի պակով ընդ որ խիստ կոշտ փշերով այս բույսը տալիս է նրբագույն համ ունեցող պտուղներ, այդպես էլ երիտասարդ կինը այն մարդու, ով որ չի փախչի նրանից՝ հուսահատվելով սկզբնական շրջանում նրա անհնազանդ, անտանելի բնավորությունից, հետո ամուսնական կյանքում կփոխհատուցի հեղությամբ ու հնազանդությամբ իսկ նրանք, ովքեր չեն կարողացել տանել ջահել կնոջ հետ մղվող սուաջին իսկ վեճերը, ոչնչով չեն տարրերվում այն մարդկանցից ովքեր խաղաղ թողնում են ուրիշին սոսկ նրա համար որ այն դէռ խակ է: Այդպես էլ՝ հարսները, որոնք դեռ նոր են հասցրել մարդու գնալ, արդեն զրժ գոհ են ամուսիններից նման այն մարդկանց ովքեր մեղվի խայթոցին դիմացել են, իսկ մեղրաբջիջը գին նետել:

(3.) Սկզբում նորապակները հատկապէս պետք է զգուշանան տալսածայնություններից և ընդհարումներից ու այելով այն բանին, թե ինչպէս նույնիսկ սոսնձված կճուճները նախ հեշտությամբ փշրվում են ամեն նախորդ հարվածից բայց փոխարենը ժամանակի ընթացքում, երբ կպցրված տեղերն ամրանում են, ո՛չ կրակը, ո՛չ երկաթը դրանց ոչ մի բան չեն անում:

(4.) Ինչպես կրակը որը եղեգնի ծղոտի ու փետրախոտի մեջ հաշտությամբ բռնկվում է, բայց արագ հանգչում, էթե լր համայ ուրիշ անունը չի գանում, սերը պայծառորէն բոցավառվում է ծաղկող երիտասարդության ու մարմնական գրավչության շնորհիվ, բայց շուտով կմարի, եթե գրան չսնեն երիտասարդ ամուսինների հոգեկան արժանիքներն ու լավ բնավորությունը:

(5.) Քույնի միջոցով սրտը որսը թ յի է ս սլիս հեշտ ու արագ ձուկ բռնել, բայց թույնը փշայնում է այն, դարձնում ոչ ուտելի: Այդպես էլ այն կանայք որոնք գլուխությամբ ու կախարդանան դեղերով ձգտում են իրենց մոտ պահել ամուսիններին, ղգայական հաճույքներով գերում են իրանց, բայց հետո տպրում են խելաղուրկ ու ցնորվածի նույնիսկ կիրկեն ոչ մի օգուտ չունեցավ իր կախարդած տղամարդկանցից, և նա շգի-

տեր, թե ինչ աներ նրանց, որոնք կերպարանափոխվել էին էշերի ու խոզերի, բայց փոխարենը Ոգիսևսին, որը մնում էր առողջ բանականու թյամբ և Կիրկեի հետ շրջահայացորեն էր վարվում, Կիրկեն սիրա՛արվեց խենթի պես:

(6) Այն կանայք որոնք գերադասում էն բռնադատել հիմար ամուսնուն, քան թե անսալ խելոքին հիշեցնում էն այն մարդկանց, որոնք ճանապարհին գերադասում են իրենց հետ վերցնել կուլը՝ քան թե՛ գժ սլ տեսունակի ու ճասապարհն իմացողի հետ:

(7.) Կանայք շնչ հավատում, թե Պասիփայան կարող էր սիրահարված լինել ցուլին լինելով թագավորի կին թեև տեսնում էլ են որ ուրիշ ամուսնացած կանայք նեղվում են իրենց խստաբարո ծուծկալ սուսիններից, բայց փոխարենը փշացած հեշտասերների հետ ոնց էր շների ու այծերի հետ կենակցում են մեծ հաճույքով:

(8) Ով որ հիվանդութլան կամ թուլութլան պատճառով չի կարող բալձրանալ ձիու վրա ձիուն իրեն է սովորեցնուա նստել՝ ծնկները ծալած Սյգպես էլ ոմանք ամուսնանալով հարուստի կամ աղնվահանի դրստեր հետ փոխանակ իրենք աղնվանան կնոջն էն ստորացնում որպեսզի հեշտ լինի բռնադատել նշան՝ հնազանդ ու երկչոտ կնոջը: Հետևաբար և, պետք է ինչպես որ ձիու դեպքում, պահպանել կնոջ պատիվն ու արժանապատվութլունը՝ դիմելով միայն ու միայն սանձին:

(9) Հեռանալով արեգակից՝ լուսինը շողում է վառ ու պարզորոշ, բայց խամրում է և դառնում անտեսանելի՝ նրա կողքին գտնվելիս: Ողջախոհ կինն էլ, ընդհակառակը պետք է մարդկանց մեջ երևա ոչ այլ կերպ, քան ամուսնու հետ, խակ կրք նստող է գնացել պէ՛տք է մնա անտեսանելի՝ նստելով տանը:

(10) Ճիշտ չէր Հերոդոտոսը ասելով, թե կինը զղեստի էտ ամսթն էլ է դեն նետում: Ընդհակառակը, ողջախոհ կինը զգեստը հանելով ամոթվ է զգեստավորվում և որքան ամոթխածութլունն ամոսինների միջև շատ լինի նշանակում է այնքան ավելի մեծ է սերը:

(11) Երբ երկու ձայն ներդաշնակութլուն են կազմում, մեղեդուելանգը դրանցից որոշում է նա որն ավելի ցածր է: Յուրաքանչյուր դործ խելացի ամուսինն էլի մոտ որոշվում է երկկողմանի համաձայնութլամբ, բայց այնպես, որ սմոսնո գերիշխող դիրքը ակնհայտ լինի ու վերջին խոսքը նրան մնա:

(12) Արևը հաղթանակ տարավ բորեոսի դեմ: Երբ սրբնթաց քամին փորձում էր դոռով պոկել մարդու թիկնոցը, նա թիկնոցի փեշերն ավելի պինդ քաշեց և թույլ չսլեց որ վրայից հանի: Իսկ երբ բաճուց հետո

արես սկսեց կիզել և մայրը աաքացալ հետո էլ շոգւց նա ոչ միայն թիկնոցը, այլև խիտոնը հանեց: Այսպէս է վարվում և կանանց մեծամասնութիւնը, երբ ամուսինները փորձում են զոռով սահմանափակել նրանց ծախսերը պերճանքի վրա նրանք դժգոհում են ու կատաղի դիմադրո մ, լայց եթէ նրանց համոզում էն խելամիտ փաստաւկներով հեշտութեամբ էն համաձայնում ու խնայող դառնում:

(13) Կատոնը ինչ որ մէկին սենատից դուրս է վոնդել նրա համար ր սոս դասեր ներկայութեամբ համբուրել էր իր կնոջը: Գուցե և դա չա փառանց խիտտ է եղել, բայց եթէ անհարմար է (իսկ դա այդպես էլ է) արիշների ներկայութեամբ հաճոյախոսել, համբուրվել ու գրկախառնվել, ոտպա մի՞թէ ավելի ամոթ չէ կողմնակի մարդկանց մոտ իրար նախատել ու միմյանց հետ վիճել, կնոջ նկատմամբ քնքշանք ու փաղաքշանք դրո տեսրել դադանաբար, փոխարէնը լացեիբաց և ի լուր ամենքի խրատ կար դալ նրան և դիտողութիւն անել:

(14) Հայելին որը նույնիսկ զարգարված է ոսկով ու թանկագին էարերով, բոլորովին անօգտակար է, եթէ չի տալիս նման արտապատ կեր Այդպէս էլ հարուստ կնոջից ի՞նչ օգուտ, եթէ իր վարքով ու տրամագրութեամբ նա ամուսնու հետ միաբանութիւն ու նմանութիւն չի դրո սնորում Չէ՞ որ ս նախի հայելին, րբի մեջ ուրախ դեմքը մոայլ է երե վում, իսկ մոայլն ու խոժուր երևում է ուրախ ու շողշողուն, փշացած է և անպէտք Ուրմն անտանելի է այնպիսի կինն էլ, ոյը մոայլվում է էր ամուսինը գեմ չէ նրա հետ խաղալ ու հաճոյախոսել իսկ երբ մարուն գլ աղված է լուրջ գործով, թուշոտում է ու քրքրում առաջինը նշանակում է որ ամուսինը նրա համար զգվելի է, երկրորդը սր կինը նրա հանդեպ անտարբեր է: Երկրաչափները պնդում են, որ գծէրն ու հարթութիւններն ինքնին անշարժ են, այլ շարժվում են մարմինների հետ միասին: Այդպէս էլ կինը պետք է իր գդացմունքները շանենա, այլ՝ ամուսնու հետ միաս լին և՛ ախրի, և՛ ուրախանա և՛ տաղնուպի և՛ ծիծաղի:

(15) Այն ամուսինները, որոնք շին սիրում, որ կանայք իլ ենց հետ միեկնույն սեղանի շուրջը ճաշեն, նրանց սովորեցնում են քաղցը հազեց նել միայնակի ճիշտ աչգովս էլ ով որ իր կնոջ հանդեպ խիտտ է շափից ավելի շարժան աջնել յով նրան կատակների ու ծիծաղի նա իր կնոջն ստի գում է հաճույքներ սրունել գրտում:

(16.) Պարսից թագաւորների ճաշկերույթի ժամանակ նրանց օրի նական կանայք նստում են նրանց կողքին և ուտում են նրանց հետ միա ին իսկ երբ թագաւորներն ուզում են խմել և ուրախանալ, այնժամ լուրս ուղարկելով իրենց օրինական կանանց՝ սեյս են կոնշում ելս ժլշտ

կանանց ու հարձերին և ճիշտ էլ անում են որ կանանց չեն թողնում մասնակցելու իրենց անառակ գինարբուքներին: Բայց եթե սովորական ամուսինը, ինքն էլ վավաշտ ու փշացած, ալ գեպքերում մեղանչում էլ է ազախնի կամ հետերայի հետ, թող որ կինը նրան չհայհոյի ու չվրդովվի, համարելով, որ հենց իր նկատմամբ ունեցած հարգանքից է, որ անվայելուչ, անսանձ կոնծարանությանը մասնակից է դարձնում մի ալ կնոջ

(17) Եթե թագավորները սիրո մ են երաժշտություն, նրանց թագավորելու շրջանում շատ երաժիշտներ են առաջ գալիս, եթե նրանք սիրում են գիտունություն՝ գիտություններն են ծաղկում, եթե սիրում են ըմբշամարտի մրցումներ, բաղմապատկվում է առլիտների թիվը: Այդպես էլ ամուսինը, իր շափից ավելի է հոգում իր արտաքինի մասին, կնոջը գլխատներ: Հարցում ընտելացնում է անչափավորության շեշտասեր ամուսինը կնոջը փշացած ու ցանկասեր է դարձնում: Կանոնավոր և առաքինի մարդու կինը դառնում է համեստ ու ողջախոհ

(18) Սպարտացի մի շահել աղջկա մի անգամ մեկը հարցրել է թե իրեն վիճակվե՞լ է քնել տղամարդու հետ: «Օ, ո չ, — պատասխանել է նա — Այդ նրան է վիճակվել»: Այ այսպե՛ս պետք է իրեն սրահի, իմ կարծիքով, ամուսնացած կինը խույս չտալ, գժպոհություն շարտահայտել, երբ ամուսինը նման մի բան է ուզում անել, քանզի դա խոսում է մեծամտության ու սառնության մասին, բայց և կինն ինքն էլ չպետք է երեսի զոռով այդ բանն անել տա քանզի այդպես վարվում են միայն լիրբ ու փշացած կայսր:

(19) Կինը սեփական բարեկամներ չպետք է ունենա նրա համար բավական են նաև ամուսնու բարեկամները: Բայց նրանցից ամենագրվա՞վորները աստվածներն են, այդ պատճառով էլ կինը պետք է պաշտի ու ճանաչի այն աստվածներին, որոնց իր ամուսինն է պաշտում, իսկ անօգուտ ծեսերի և օտարերկրյա սնահավատությունների առջև նա տան գրոները պետք է փակ պահի: Աստվածներից ոչ մեկի համար չեն կարող հաճելի լինել այն ծեսերը ու կինը կատարում է թաքուն ու զաղտնաբար:

(20) Պլատոնն ասում է թե էրանելի ու երջանիկ է այն պետությունը որտեղ «իմը» և «ոչ իմը» համարվում են ամենավատ բաները և բոլոր նկրտումները, որպիսիք որ կան, քաղաքացիներն օգտագործում են ընդհանուր գործի վրա: Բայց նման բաները շատ ավելի անհրաժեշտ է դուրս բերել ընտանեկան կյանքից: Ինչպես ձախ կողմի վնասվածքի դեպքում, բժիշկների աւելով, աջ կողն է ցավում, այդպես էլ կինը պետք է ցավի մարդու համար ամուսինն էլ՝ կնոջ դործերի, և ինչպես կապանք

ները իրար հյուսվելով դառնում են ավելի ամուր, այդպես էլ ամուսիններն ավելի ամուր են կապվում միմյանց, հիմն հոգատարություն հանդես բերելիս՝ նրանցից յուրաքանչյուրը մյուսին պատասխանում է նույնկերպ: Բնությունն ինքը, մարմնագես միացնելով մեզ ամեն մեկիցս մի բաժին է վերցնում ու խառնում իրար, այնպես որ աշխարհ հեղուր ստացվում է երկուսի համար ընդհանուր, և ոչ ոք ի վիճակի չէ նրա մեջ առանձնացնել ու տարրերի իր սեփական գծերը մյուսի գծերից: Ունեցվածքի հենց այսպի ի ընդհանրությունն էլ դարգարում է ամուսիններին որոնք ամեն ինչ միաձուլում են ու վերաձուլում մի ընդհանուր սեփականության մեջ, որպեսզի շտաբբերվի իրենը և ուրիշինը, այլ, ընդհակառակը իրենը համարվի բոլորը, ուրիշինը՝ ոչինչ: Ինչպես ջրով բացած գինին մենք անվանում ենք գինի, թեև ջուրը դրա մեծ մասն է կաղմում այդպես էլ տունը ամեն ինչով հանդերձ պետք է համարել ամուսնու սեփականությունը, նույնիսկ Լթե մեծ մասը կինն օժիտ բերած լինի:

(21) Ազահ է հզել Հեղինեն, հեշտասեր է հզել Պարիսը Ողիսևսը՝ ի Լբամիա Պենելոպեն՝ հավատարիմ: Դրա համար էլ մի ամուսնությունը երջանիկ է դուրս էկել և ընդօրինակման արժանի լսկ մյուսն Իլիոնին պժբախտություններ է բերել ինչպէս հելլենների այնպես էլ յարբարոսների համար:

(22) Մի հոտմեացու, որին բարեկամները նախատում էին որ բաժանվել է ողջամիտ, հարուստ ու գեղեցիկ կնոջից, ոտքն առաջ է գրել և առել «Արտաքուստ այս կոշիկը նույնպես գեղեցիկ է և բոլորովին մաշված լի, բայց ոչ ոք չգիտի, թե սա իմ որ տեղն է սեղմում»: Ուրեմն կի ՚ր ոչ օժիտի վրա, ո՛չ ազնվազարմության, ոչ իր գեղեցիկության վրա շպետք է հուշը դնի, այլ այն բանի վրա, ինչով իսկապես կարելի է իրեն կապել ամուսնուն սիրալիրության, հեղարարոյության ու վիշտակահանության և այս հատկանիշները պետք է գրսեորի յուրաքանչյուր օր ոչ թե պսոփ ասես թե շուղենալով, այլ՝ պատրաստակամությամբ, ուրախությամբ ու հաճույքով: Այն տեղը, որը ծագում է աննկատելիոլ են և աստիճանորար է ուժեղանում, բժիշկները համարում են առավել վտանգավոր քան թե այն, որի պատճառները պարզ են ու ակնհայտ: Այդպես էլ շլրապատից թարուն, կնոջ մանր, անրնդհատ, ամենօրյա վեճերն ամուսնու հետ, ավելի քան ընկ ուղ լան, հանգեցնո մ են ապահարգանի ու համատեղ կյանքի քայլ այնտեղ:

(23) Փիլիպոս Ռագաօրը սիրահարված էր մի թեսալուհու, որը, ինչպես ասում էին, դյութել էր նրան կախարդական դեղով: Օլիմպիական բույսը ջանքերն ի գործ էր դնում որպիսզի այդ կնոջն իր ձեռքը պցեր: Երբ

նրան բերեցին կանգնեցրին թագուհու ալբի առաջ և պարզվեց, որ նա ոչ միայն արտակարգ գեղեցիկ է, այլև խոսակցութեան ժամանակ էլ իրեն պահում է խելամիտ և արժանապատվորեն: «Ի՞նչո՞ւ գնա, դա զբոս պարտութիւնն է, — բացականչեց Օլիմպիադան: — Քո կախարդական դեղը հենց քո՛ մեջ է որ կա»: Այսպիսով, օրինական կնոջ համար սարսափելի չէ մրցակցութիւնը, եթե նա իր ամուսնուն գերում է բնավորութեամբ ու առաքինութեամբ՝ հենց իր մեջ միավորելով ամէն ինչը՝ և՛ օժիտը, և՛ աղնավաղարմութիւնը և՛ կախարդական դեղը, և իհնչև իսկ Ափրոդիտեի դոտին:

(24.) Այդ նույն Օլիմպիադան ինչ-որ մի ջահել սրնգա՛ւայի վելաբերյալ, որն ամուսնացել էր գեղեցիկ, բայց վատ համբավի տեր կնոջ հետ, ասել է «նա խելքը կորցրել է, թե չէ աչքերով չէր ամուսնանա»: Եվ իրոք, չպետք է ամուսնանալ աչքերով ու մատներով, ինչպես անում են ոմանք, հաշվարկելով, թե հարսնացուն որքան օժիտ ունի փոխանակ պարդելու թե նա ինչպիսին կլինի համատեղ կյանքում:

(25.) Սոկրատեսը խորհուրդ էր տալիս երիտասարդներին ավելի հաճախ նայել հայելու մեջ, տգեղներին՝ որպեսզի տգեղութիւնը ախորժելի դարձնեն առաքինութեամբ, գեղեցիկներին՝ որպեսզի գեղեցկութիւնը չազարտեն վատաբարոյութեամբ: Լավ կլինի նաև որ ամուսնացած կինը հայելին ձեռքն առնելիս՝ ասի ինքն իրեն, եթե գեղեցիկ չէ «Իսկ ինչպիսի՞ն կլինեմ եթե նաև անհամեստ գառնամ», — իսկ եթե գեղեցիկ է «Իսկ ինչպիսի՞ն կլինեմ, եթե դառնամ նաև համեստ»: Տգեղ կնոջը պատիւ է բերում, եթե բարեբարոյութեան համար նրան ավելի են սիրում քան թե սիրեն ղեղեցկութեան համար:

(26.) Լիսանդրոսի գուտտերին Սիցիլիայի բռնապետն ուղարկել էլ թանկագին թիկնոցներ ու մանյակներ բայց Լիսանդրոսն այդ բնձանները մերժել էր, ասելով. «Այդպիսի դարդերն ավելի շուտ կխայտառակեն, քան թե կգեղեցկացնեն իմ գուտտերին»: Բայց Լիսանդրոսից էլ առաջ Սոփոկլեսն է այդ բանն ասել:

Օ, ոչ, դա ոչ թե զարդ կլինեք,

Այլ ընդհակառակը սոսկ անարդանք ո խենթութիւն

Չէ՞ որ զարդարանքը, ինչպես ասում է Կրատետեսը, այն է ինչը դար դարում է» իսկ կնոջը զարդարում է այն, ինչը նրան ավելի գեղեցիկ է դարձնում բայց նրան այդպիսին է դարձնում ոչ թե սակին, զմբուխան ու ծիրանին, այլ՝ համեստութիւնը, պարկեշտութիւնն ու ամոթխածութիւնը:

(27) Հերային Ամուսնութեան Հովանավորուհուն զո՞հ մատուցելիս լեղին առանձնացնո՞մ են մնացած փորձաքիջից և թաղում են զո՞հասեղանի կողքին: Գրանով իսկ օրենսդիրն ակնարկում է այն, որ շարութեանը և տաքարյունութեանը տեղ չպետք է ունենան ամուսնական կյանքում: Ամուսնացած կնոջը վայել է խստութեանը, բայց թող այդ շարութեանը օգտակար ու քաղցր լինի, ինչպես գինու մեջ ալլ ոչ թէ փառք ինչպես հալ լի մեջ, և տհաճ, ինչպես դեղք:

(28.) Քսենոկրատեսին, որն աչքի էր բնկնում մի քիչ մտայլ բնավորութեամբ, բայց մնացած բաներում անբասիր էր Պլատոնը խորհուրդ էր տալիս զ՞հ մատուցել Քարիաներին Ողջախո՞հ կնոջ համար էլ, կարծում եմ, շատ կարևոր է, որ ամուսնու հետ լինի սիրալիր, որպեսզի ինչպես Մնարոզորոտն էր ասում, նրա համար հաճելի կողակցուհի լինի և «ոչ թե արանկություն պատճառի իր առաքինութեամբ»: Համեստ կինը չպետք է արհամարհի մաքրակեցութեանը, իսկ սիրող ամուսինը քնքշանք դրսեփուլը Չէ՞ որ շարութեանը վանող է դարձնում կնոջ ողջախոհութեանը, ինչպես որ փնթիութեանը՝ նրա պարզութեանը:

(29) Մի կին, որը չի համարձակվում ամուսնու ներկայությամբ ծիծաղել ու կատակել՝ վախենալով հանդուգն ու սանձարձակ երևալուց, նման է այն կնոջը, որը նույնիսկ ձեռքով չի օծում իր գլուխը, որպեսզի չթվա, թե ինքն օծվել է անուշահոտութեաններով և երեսը չի լվանում, որպեսզի չթվա թե երեսը կարմրացրել է: Բանաստեղծներն ու հոեատրները խուսափելով ոամկական, կոպիտ ու ցածր բառերից՝ ջանում են ունկրդորին գրավել ու հուզել շարադրանքի ներդաշնակությամբ ու բովանդակության բարոյախոսությամբ: Ամուսնացած կինն էլ խելացի կվարմի, եթե հրաժարվի անառակ, անպարկեշտ, փողոցային շարժումներից և մտանուն գերի կենցաղային ու բարոյական արժանիքներով, ձգտելով բան արամագրել իր նկատմամբ հաճելիության հետ զուգակցված առաջնություն: Իսկ եթե սա բնականից գոտոզ է և անսիրալիր ամուսինը գրան պետք է վերաբերվի ներողամտությամբ և, Փոկիոնի նման որն Անտիպոտոսին, երբ սա նրանից պահանջել էր կատարել տգեղ, անարժան իր արարք տակ էր. «Չի կարելի ի դեմս ինձ ունենալ և բարեկամ, և՛ շոտորթիկով պետք է իր սղջախոհ, բայց խիստ կնոջ մասին ալսպէս դատարի «Չի կարելի անձին միեկույն կնոջ ունենալ և օրինական կին, և՛ շեռերա»:

(30) Հին սովորության ամուսնային կանայք Եգիպտոսում կոշիկ չէին սղնում, որպեսզի ավելի շատ նստեին տանը: Եթե մեր կանանցից խլենք նրանց ոսկեթիվ սան գալները մանչուկները և ապալանջանները, ծիրանի

զգեստներն ու մարգարիտները նյանց մի ծ մասը կդաբայի հյւ գեա-
լուց:

(31) Փեանոն թիկնոցը վրան պցելիս ակամա մերկացրել է ձեռքը
մինչև արմունկը: «Ի՛նչ գեղեցիկ ձեռք է», — բացականչել է ինչ-որ մեկը:
«Բայց ո՛չ մատչելի ամենքին», — պատասխանել է նա: Կարգին կինը ոչ
միայն իր ձեռքը, այլև նույնիսկ խոսակցությունները շպտաբ է ցուցադրի
և ուրիշների ներկայությամբ ձայն տալն էլ պետք է ամոթ լինի նրա հա-
մար, ինչպես որ նրանց ներկայությամբ հանվելը, քանզի ձայսը մաս-
նում է և խոսողի բնավորոթյունը և նրա հոգու հատկությունները և
տրամադրությունը:

(32) Փիղիասը էլեացիների համար Ափրոդիտեի արձանը քանդակե-
լիս նրա պատկերել էր կրիային հենված ի նշան այն բանի, թե կանանց
վայել է տնակեցությունն ու լուությունը: Կինը պետք է խոսի միայն
ամուսնու հետ, իսկ ուրիշ մարդկանց հետ ամուսնու միջոցով, և թող
դրանից շվշտանա, քանզի Գլեյտահարի նման, նա թեև հնչյուններ ար-
ձակում է ոչ իր շուրթերով, բայց փոխալ՝ նրանք առավել տպավո-
րիչ են լինում:

(33) Հարուստներն ու թագավորները փիլիսոփաների պատիվ մա-
տուցելիս չբանով պատիվ են անում և՛ նրանց և՛ իրենց, բայց փիլիսո-
փաները հաճույանալով հարուստներին՝ նրանց փառքը չեն ավելացնում
այլ իրենց են պատվազրկում: Նույնը կարելի է ասել նաև կանանց մա-
սին. հնադանավելով ամուսիններին, նրանք գովեստ ու հարշանք են վաս-
տակում, իսկ ամուսինների վրա իշխանություն ձեռք բերելով՝ անարգում
են ոչ միայն նրանց, այլև ավելի շատ հենց իրենց: Արդարացի ամուսինն
էլ կնոջը տնօրինում է ոչ թե ինչպես տերը՝ սեփականությունը, այլ ինչ-
պես հոգին՝ մարմնին, հաշվի առնելով նրա զգացմունքները և միշտ լինե-
լով բարյացակամ: Մարմնի մասին կարելի է ինչպես հարկն է հոգալ սա-
պան առանց խրախուսելու սրա տենչանքներն ու քմահաճույքները: Կնոջն
էլ կարելի է կառավարել այնպես որ դա նրան յերկրանք ու բավականու-
թյուն պատճառի:

(34.) Մարմինները ինչպես պնդում են փիլիսոփաները լինում են
երեք տեսակի՝ ոմանք բաղկացած են առանձնացած մասերից, ինչպես
օրինակ՝ նավատորմը կամ ճամբար դրած զորքը ուրիշները՝ կցորդված
մասերից, ինչպես տունը կամ նավը. երրորդները կազմում են միասնա-
կան, սերտաձած ամբողջություն, ինչպես ամեն մի կենդանի: Մոտավո-
րապես հենց այսպիսին է նաև ամուսնական միությունը. եթե այն հիմ-
նըված է փոխադարձ սիրո վրա կազմում է միասնական, սերտաձած

ամբողջությունն եթէ այս կնքված է անուր օժիտով կամ ցեղը շարունակելու, ապա բաղկացած է փոխակերպված մասերից: Իսկ եթէ միայն նրա համար, որպեսզի միասին քնեն, ապա բաղկացած է առանձնացված մասերից, իսկ այդպիսի ամուսնությունը ավելի ճիշտ կլինի հասարակ ոչ թե համատեղ կյանք այլ մի ծածկի տակ ապրելու: Հեղուկների նման, սրունք, ըստ բնախույզների, խառնվելով լուծվում են միմյանց մեջ առանց մնացորդի, ամուսնացողները պետք է միացնեն և՛ մարմինները և՛ ունեցվածքը և բարեկամներին, և ծանոթներին: Իզուր չէ, որ հոսմեական օրենսդիրն արգելել է ամուսխններին նվերներ փոխանակել. նրա համար, որ չկարողանան ունենալ իրենց անձնակառու ունեցվածքը և ամեն ինչ համարեն ընդհանուր:

(35) Կիրիական Լեպտա քաղաքում կա մի վաղեմի սովորություն, ըստ որի ջահել կիւր արասնիքի հաջորդ օրը Վարդ է ուղարկում ամուսնու մոր սոտ խոհանոցի կճուճ ուղելու, իսկ սա չի տալիս, պատասխանելով, թե ինքը կճուճ չունի և դա արվում է այն նպատակով որպեսզի հարսը խեղճ խմանա որ կեսուրը սիրալիր չի լինում և հետո, եթե իրենց միջև ավելի լուրջ բան պատահի, հարսը դա սանի հանդիստ ու սուսպ Հիշելով այդ՝ կինը պետք է խուսափի ընդհարվել կեսուրի հետ. չէ՞ որ մայրերին միշտ հատուկ է խանդել որդուն հարսի ամուսնությունը, և այստեղ կարող է օգնել միայն սի բան. ձգտել ամուսնու համակրանքը Վեռք բերել այնպես, որ նրա սերը իր մոր հանդեպ ընվազի ու լիովանա:

(36) Սայրերը, թվում է ավելի շատ են սիրում որդիներին սրա հար, որ սրանք ընդունակ են լինել իրենց սայրերի օգնականներն ու լաշտպանները, հայրերն էլ՝ դուստրերին, նրա համար որ աղջիկներն իրենք են կարիք զգում նրանց պաշտպանությունն ու հովանավորությունը, և եթե ամուսինները հավասարապես արգում են միմյանց, ապա նրանցից մեկը ուրախությունը ու բավականությունը նախապատվություն կտամյուսի համակրանքին: Սակնք դա այնքան էլ կարևոր չէ, բայց զրա փոխարեն շատ լավ բան է Լրք կինը ջանում է ամուսնու ծնողներին ավելի շատ հարգանք ցույց տալ, քան իր հարազատ ծնողներին, և թե որևէ ահաճություն է ծագում, զրա մասին պատմում է ամուսնու ծնողներին, իսկ իր ծնողներից խարցնում: Չէ՞ որ վստահության նշանները ծնունդ են տալիս փոխադարձ վստա ուխտան և սիրո գրսևորումները՝ ճիշտ նույնպիսի սիրո:

(37.) Հելլեններին, սրունք ծառայում էին Կյուրոսի զորքում, զորպետները հրամայել էին թշնամուն դիմավորել լուծյամբ, եթե նա հարձակվում է գոչյունով և, ընդհակառակը, նետվել նրա վրա գուլյուններով:

եթե թշնամին լռում է: Խելացի կինը, քանի դեռ զայրացած ամուսինը գոռոգոռում է և հայհոյում, լռություն է պահպանում, և ամուսնու լռելուց հետո միայն խոսել է սկսում, որպեսզի մեղմացնի նրան ու հանգստացնի:

(38) Ճիշտ է Եվրիպիդեսը, հանդիմանելով նրանց ովքեր քնար են նվագում կերուխումի ժամանակ: Լրաժշտությունը նրա համար չէ, որ թուլացնի նրանց ովքեր առանց դրա էլ բավականություն են ստանում այլ ավելի շուտ այն բանի համար, որ սանձահարի զայրույթը ու մեղմացնի վիշտը Դև, ուրեմն համարեք, որ ճիշտ չեն վարվում այն ամուսինները, որոնք ցանկանալով բավականություն ստանալ, միասին են քնում, բայց բավական է ու կովշտեն ու վիճեն իրար հետ կպառկեն առանձին-առանձին: Զէ՞ որ հենց այդ ժամանակ է նրանց պետք օգնության կանչել Ափրոդիտեին՝ նման կարգի դառնությունների լավագույն բուժարարին: Նույնիսկ բանաստեղծը մեզ դա է սովորեցնում՝ ինչ-որ տեղ հանդես բերելով լուսող Հերային:

և վերջ կտամ նրանց լսելի գծությունը
նրանով, որ նրանց մահին կգնեմ, որպեսզի նորից
միման սիրով

(39) Մայրը կուշ հետ և կինը մարդու հետ: Եվ շտ և ամենուրեք պետք է խուսափի բախումից բայց ամենից շատ պետք է դրանից զգուշանա՛ն ամուսնական անկողնում նա, ով ծնելիս ւնդում էր ու տանջվում իրեն անկողին շնողներին ասում էր «Մի՞թե անկողինը կօգնի այն դժբախտության ժամանակ, որին ինքն է ծնունդ տվել»: Հեճերին, փոխադարձ հայհոյանքներին ու զայրույթին, եթե դրանք սկսվել են անկողնում հեշտ չէ վերջ առլ այլ ժամանակ և այլ տեղում:

(40) Հերմիոնէս, կարծես, ճիշտ էլ, երբ ասում էլ

Ինձ կործանեց վատ բնկերո հինկի շլշապատը

րիոսին արստրեց ու քաղաքացիական պատերազմն ավարտեց լոկ այն
ժամանակ երբ Հոստը կանդնել էր կործանման եզրին:

Նույն այդ Սուլլան ընդհակառակը, ամեն կերպ ձգտում էր բալձ
րացնել և Պոմպեոսին սկսած վերջինիս պատանեկան հասակից, այն-
պես որ մի անգամ, երբ Պոմպեոսը մոսեսալիս է եղել, նա նույնիսկ
վեր է կացել ու գլուխը բացել, և՛ ուրիշ երիտասարդների սույնպես
առիթ էր տալիս աչքի ընկնել կալևոսը տեղերում՝ ոմանց խրախուսելով
մինչև իսկ հակառակ նրանց կամքի ու իր ամբողջ զորքին համակելով
փառասիրական ավյունով: Այդպես նա իր իշխանութեւնը հաստատեց՝
գերադասելով լինել առաջինը, այլ ոչ թե միակը, մեծագույնը բազում
մեծերի մեջ նման մարդկանց պետք է կպչել ու նրանց հետ իլ բախտը

կապել շնամանվելով Եզոպոսի առակի այն ցախասարյակին որն արծվին թույլ է տվել մեջքին դրած տանել իրեն, իսկ ապա վեր է ճախրել ու արծվից առաջ անցել, և շհափշտակելով ավազների փառքը, այլ նրանցից դա ստանալով իբրև բարեկամական ընծա. շէ՞ որ, Պլատոնի խոսքով ասած, չի կարող լավ հրամայել նա ով նախապես չի սովորել հնազանդվել ինչպես որ հարկն է:

13 Այժմ ասենք բարեկամների ընտրության մասին հավանությունն չտալով ո՛չ Կլեոնի, ո՛չ էլ Թեմիստոկլեսի մտածելակերպին

Կլեոնը դեռ նոր էր որոշել նետվել քաղաքականության մեջ կանչեց բարեկամներին ու հայտարարեց, թե թող նրանք այլևս իրենց բարեկամը չհամարեն իրեն, որովհետև բարեկամությունը սպառնում է մեղմացնել արգարացի որոշումների խստությունը և շեղել ուղիղ ճանապարհից: Նա ավելի լավ կաներ որ իր հոգուց դուրս վաներ արծաթափրությունն ու վիճամուլությունը մեկ էլ իրեն մաքրեր նախանձից ու շարությունից: Պետական կյանքը մարդուց պահանջում է ոչ թե մենափրություն ու մարդախուսություն, այլ՝ ազնվություն ու ողջամտություն: Բարեկամներին նա վռնդեց ի՞նչ միտք ունեք դա: Նրանց յոխարեն, ինչպես կատակերգության մեջ է ասվում

Նրա շո բջը հարյո ր գլո ի նրա շո բջը հարյուր քծնող ունում
էին ու մոնչում ոտքը լիզում —

Եվ էթե հեզ ու հանդարտ մարդկանց նկատմամբ նա խիստ ու դաժան է եղել ապա ամբոխի համար նա պատրաստ է եղել անել ամեն ինչ միայն թե դուր գար նրան

Իրեն մասնելով տղիական ծա սյո թյան

աջակցելով ժողովրդի ամենավատ բարոյապես անհուսալի մասին ընդդեմ լավագույն քաղաքացիների:

Ինչ վերաբերում է Թեմիստոկլեսին ապա նա ընդհակառակը, ի պատասխան ինչ-որ մեկի հորդորանքին լավ կառավարելու ու բոլորի հանդեպ հավասարապես անաշտ լինելու վերաբերյալ ասել է «Թող ինձ չվիճակվի նստել աջնալի ի նստելատեղի վրա որի դեպքում իմ բարեկամներն ավելիս շտտանան, քան իմ ստոխները» Սա էլ մի բան շէ՞ր, բարեկամությունն ավելի վեր դասել պետական պարտականությունից և հասարակական կարիքները ենթարկել մասնավոր կողմնակալություններին ու համակրություններին: Երբ, ակայն Սիմոնիդեսը նրան խընդ-

111 Է արդարացիո թյանը հակառակ ինչ որ մի բան, նա պատասխանել է «Ինչպես գործիմաց բանաստեղծը չի կարող խախտել բանաստեղծության շափը, այդպես էլ լավ կառավարողը չպետք է սիրալիրությունից 111 լավ նահանջի օրէնքից»: Եվ հիրավի, էթե նավատերը այնպիսի նախափայ է ընտրում իսկ նա լավարը՝ այնպիսի նավաստիներ որոնք

կարողանում են վարել նավադեկը և կարողանում են ճարակորեն
Խոստատ բարձրացնել երբ քամի է բորբոքվում ծովի վրա

Եթե ճարտարապետը փնտրում է այնպիսի ենթավարպետներ ու սեռ ոտք բանվորներ, որոնք ոչ թե իր շանքերն ի դերն կհանեն, այլ ամեն րտ, կկատարեն լավագույն կերպով իսկապես սարսափելի ու ցավալի 111 մ կլինի, էթե պետական գործիչը, Պիեղարոսի խոսքով ասած այդ բարեհամտ մարդը՝ օրինականության և արդարադատության այդ շխարարը սկզբից ևեթ իրեն բարեկամ ընտրեր ոչ թե համամիտ օգնականները, որոնք ոգեշնչված լինեին բարու հանդեպ միևնույն սիրով, այլ այնպիսի մարդկանց որոնք յուրաքանչյուր քայլափոխի նրանից կորդեին նորասոր ծառայություններ՝ ընդդեմ ճշմարտության: Նա չէ՞ր նման 111 այն ճարտարապետին կամ ատաղձագործին, որը անխելքությունից կամ անփութությունից սկսեր օգտագործել այնպիսի անկյունաշափեր 111 դղալարեր ու շափեր որոնցից Իրա շինությունը պիտի ծուռ ստաց վեր: Չէ՞ որ պետական գործչի համար բարեկամները նույն սյդ գործիրներն են, բայց՝ կենդանի ու մտածող նա պարտավոր է ոչ միայն 111 տափել նրանց արարքների հանդեպ թողալությունից, ոչ մի դեպ 111 սում չգայթելով նրանց հետ, այլև պետք է հետևի այն բանին որ չլինի 111 հանկարծ նրանք որեէ վատ բան անեն իր թիկունքում

Հատկապես վերջին հանգամանւր սովեր գցլց Սոլոնի վլս և հա 111 սողաքացիների աչքին նոկմացրեց նրան երբ նա մտածեց թլթկաց 111 մարդկանց պարտքերը և հայտարարել այսպես կոչված սեյսախֆիա ինչը պարտքերի վերացման վայելուչ անվանումն էր, իր մտադրությանը պորթակից դարձրեց բարեկամներին իսկ նրանք ամենաանխիղճ պորթը թույլ տվին շտապեցին ավելի շատ պարտք վերցնել, և երբ 111 օրենքը հրապարակվեց, պարզվեց, որ նրանք արդեն տեր են 111 գձեյ թանկ աների ու մեծ հողամասերի գնված նույն այդ դրամ: Ե 111 եվ Սոլոնին համարոմ էին խարեության մասնակից էլբ որ նա 111 գոհն էր հենց

Սկեպլալոսը երբ բարեկամները նրան ձանձլացնում էլլ 111 ընդ

րանքներով, հանդես էր բերում իրեն ոչ հատուկ թուլություն ու հաճոյակատարություն, ինչպես Պեղասոսը՝ Եվրիպիդեսի մոտ.

Ուզենաս ավելի ներքև խկո յնեթ ավելի նեւ քև կի սնարհվի

Նա ոչ միայն շափից ավելի ջերմեռանդորեն էր օգնում բարեկամներին նրանց անհաջողությունների ժամանակ, այլև թվում էր նրանց օրինազանցությունների խրախուսողը: Սյուպես նա փրկեց Փեբիդասին, որը դատի էր տրվել Կադմեայի ինքնագլուխ գրավման համար, հայտարարելով թե այդպիսի գործողություններ կատարելիս հրաման ստանալ պետք չէ: Նա փրկեց Սփոդրիասին՝ ենթարկվելով իր որդու սիրազեղ խնդրանքներին, երբ պահանջում էին նրան դատի տալ ապօրինի ու վտանգավոր մի գործի համար՝ աթենացիների հողի վրա հարձակվելու, նրանց, որոնք Սւլարաայի հետ այն ժամանակ բարեկամ էին ու դաշնակից: Վերջապես պատմում են նրա այս գլուխյան մասին՝ ուղղված ինչ-որ մի արքայիկի (եթե Նիկիասը անմեղ է բաց թող նրան, եթե մեղավոր է բաց թող իմ խաթեր, բաց թող ամեն ղեպքում):

Փոկիոնը, ընդհակառակը նույնիսկ դատարան չգնաց երբ նրա փեսա Հարիկլեսը մեղադրվում էր Հարպալոսի դրամի գործով այլ նրան, բաժանվելիս, ասաց միայն «Ես քեզ հետ բարեկամության մեջ մտալով ազնիվ գործերի համար»: Իսկ կորնթացի Տիմոյեոնը ո՛չ հորդորանք ներով ոչ աղերսանքներով չկարողանալով եղբորը համոզել, որ հրաժարվի բռնապետի իշխանությունից, դավադրության մեջ մտավ, որը նյութված էր նրան սպանելու նպատակով:

Միայն զոհ սսեղանի մոտ չէ, որ վերջանում են բարեկամության իրավունքները, ինչպես Պերիկլեսն է ասել՝ հրաժարվելով մասնակցել կեղծ երգմանը դրանք պետք է որ վերջանան այնտեղ, որտեղ գրված է լինում օրենքի արդարության և պետության շահի հարցը, այլապես աղետը մեծ ու ընդհանուր կլինի: Դրա օրինակն է դատից ազատված Սփոդրիասի ու Փեբիդասի գործը: Քիչ դեր շխաղացին նրանք Լևկոդուրի մոտ Սպարտային սպարտության մատենելու գործում:

Մյուս կողմից պետական իմաստությունը բնավ չի պահանջում, որ մենք խւտորեն հալածենք սեր բարեկամներին մանր արարքների համար և հնարավորություն է թողնում, պետության լուրջ կարիքներն սկզբում ապահովելով օսնել բարեկամին, հոգալ նրա մասին և ուշադրություն ցուցաբերել նրա հանդեպ: Կան բարեկամության այնպիսի դրսևորումներ, որոնք մեծ նախանձ չեն հարուցում դու ազատ ես գերազասել բարեկամիդ պաշտոններ որոշելիս նրան պատվավոր հանձ-

նարարություն տալ կամ գլուխ նշանակել անվնաս մի դեռպանության,
որն ուղարկված է պրովինցիայի կառավարչին հարգանքդ հավաստելու,
կամ թե մի այլ քաղաք բարեկամության ու համախոհության կոչ անե-
լու Իսկ Լթե պահանջվում է ինչ որ աշխատատար բայց կարևոր ու
նկատելի մի բան կատարել, պետք է սկզբում դա վերցնես քեզ վրա իսկ
ուպա բարեկամիդ ներգրավես այդ գործում որպես քեզ օգնական ինչ
պէս անում էր Դիոմեդեսը

Եթե հենց ինձ եք պատվիրո մ ընտրել մի ընկեր

Ես ինչպե՞ս մոռանամ աստվածների սիրելիին հերոս Ողիսեսին,—
որին ի պատասխան Ողիսեսը հարգալից գովեստ է վերագարձնում

Իսկ սրանք, հարգարժան ձերուկ թրակական զորքը նոր համալրած
Թրակացիների ձիերն են, Դրանց և թագավորին մահու ավեց
Գլոմեդեսը մեր հզոր և սասնակու քաջ զինակիցներին, բոլորն էլ անվանի

Բարեկամների հանդեպ սիրալիրության այսպիսի նշանները գովողին
դարձարում են ոչ պակաս քան նրան, ում գովում են: Իսկ գոռողությու-
նը, ինչպես Պլատոնն է ասել, միայնության ընկերուհին է: Բարեկամին
կարելի է նաև հնարավորություն տալ մասնակցելու շնորհակալ գործերի
և բարերարության արժանացածներին դրդել, որ նրան գովաբանեն ու
սիրեն՝ նրան ներկայացնելով որպես բարերարության պատճառի ու խոր-
րդատուի

Իսկ բարեկամները դիմում են գեշ ու անմիտ խնդրանքներով, նրանց
լ՛ որ է մերժել ոչ վիրավորական ձևով այլ՝ մեղմորեն հորդորելով և
յուրյ տալով թե նման խնդրանքները անհամատեղելի են իրենց իսկ
սաքինության և ազնիվ անվան հետ: Սյատել բոլոր մարդկանցից ամե-
նաչափ գովեստի արժանի է էպամինոնդոսը, որը մերժեց Պելոպիդի ի
խնդրանքը՝ բանտից բաց թողնել մի գինեպանի, բայց իսկույննեթ բաց
թողեց նրան հետերայի խնդրանքով, միաժամանակ ասելով «Կան ծա-
րայություններ, Պելոպի՛դես, որոնք ամոթ չէ, որ ընկերուհիները խընդ-
րեն: Բայց զորականների համար դա ամոթ է»: Կատոնը, ընդհակառակը,
կտրուկ ու վիրավորական ձևով է պատասխանել, երբ ցենզոր Կատուլու-
սը նրա լավագույն ընկերն ու բառեկամը, նրան խնդրել է մի մարդու
ամար որը դատի էր տրվել Կատոնի կողմից՝ որպես քվեստորի: «Տգեղ
լ՛ ինչի,— ասել է նա,— եթե քեզ, որ կոչված էս մեզ՝ երիտասարդ-
Ն՛կի», խելք սովորեցնելու, այստեղից դուրս հանեն իմ սպասավորնե-
լու Ն՛կիովին կարող էր ինչպիսիանքն իսկապես մերժելով իր խոսքե-

րից դուրս նետել կոպտութիւնն ու դառնութիւնը, որպէսզի պարզ դառնար, որ ինքը մերժում է ոչ թե նրան ցավ պատճառելու ցանկութիւնից այլ՝ անհրաժեշտութիւնից, ղեկավարվելով օրենքի և իրավունքի թելադրանքով

Պետական գործիչը նաև լիովին պատշաճ հնարավորութիւններ տնի կարիքի մեջ եղող բարեկամին դրամական օգնութիւն ցույց տալ՝ վարվելով Թեմիստոկլեսի նման որը կովի դաշտում նկատելով թշնամու դիակը ուկն շղթան վրան, ոսկե մանյակը վղին, մոտով անցել գնացել է, բայց շրջվել է բարեկամի կողմը և ասել «Վերցրու, դու էլ հո Թեմիստոկլեսը չե՞ս»: Քիչ առիթներ չեն ներկայանում բնկերներին օգուտ տալու համար ախր ամենքն էլ հո Մենեմաքոսներ չե՞ն: Սրան վարելով՝ տուր արգարացի, բայց միաժամանակ լավ վարձատրվող դատական մի գործ, այն մեկին ծանոթացրով մի հարուստի հետ որը կառավարիչ է փնտրում կամ հավատարմատար երրորդի համար շահավետ կապալ կամ մի այլ գործարք դասավորի՛ր

Մի անգամ էպամինոնդասը իր բարեկամին ուղարկել է մի հարուստի մոտ պատվիրելով նրանից վերցնել մեկ տաղանդ դրամ Երբ հարուստը բացատրութիւն է պահանջել, էպամինոնդասը պատասխանել է. «Որովհետև նա ազնիվ է, բայց աղքատ, իսկ դու ապրում ես հարստութեան մեջ գոհելով քաղաքի ունեցվածքը»: Իսկ Ազեսիլայոսի մասին Քսենոփոնը պատմում է, թե նրա սիրած գործը եղել է բարեկամներին հարստացնելը, թեև նա ինքը հարստութեան նկատմամբ անտարբեր էր:

14 Այնուամենայնիվ, «չկա արտույտ առանց փոմփոլի» ինչպես Սիմոնիդեսն է ասում անտական գործունեութիւն էլ չկա սռանց գծտութիւնների ու երկուցառակութիւնների, ս յդ պատճառով էլ քաղաքագետը պարտավոր է մտածել, թե ինչպես պետք է իրեն պահի թշնամիների հանդեպ

Թեմիստոկլեսը և Արիստիդեսը ժողովրդի կողմից զովասանքի են արժանացել նրա համար որ ամեն անգամ որպես դեսպաններ կամ զորավարներ պետութեան սահմաններից դուրս գալիս՝ իրենց փոխադարձ թշնամանքը թողնում էին սահմանի վրա որպէսզի դրան անդրադառնային միայն վերադառնալուց հետո: Իսկ ոմանց ավելի դուր է գալիս Կրետինայի Մագնեսիայի մի քաղաքացու վարմունքը: Նրա քաղաքական հակառակորդն էր Հերմիոսը ոչ ազդեցիկ, բայց փառասեր ու բարձրը հոգու տեր մի մարդ: Եվ ահա երբ Միհրդատյան պատերազմի ժամանակ տեսել է, որ հայրենիքին վտանգ է սպառնում, Հերմիոսին առաջարկել է բնդունել իշխանութիւնը իսկ ինքը պատրաստակամութիւն է

հայտնել աքսոր գնալ, կամ եթե Հերմիոսը կարծում է թե ավելի լավ է, որ ստրատեղոս լինի Կրետինան, հարկ կլինի, որ Հերմիոսն ինքը աքսոր գնա որպեսզի իրենց փառասիրական գծաությունները չկործանեն յաղաքը Հերմիոսն ընդունել է առաջարկը, հայտարարել թե Կրետինան իրենից ուժեղ է որպես զորավար և քաղաքից հեռացել է կնոջ ու երեխաների հետ: Կրետինան էլ թույլ է տվել, որ ուղեկցեն նրան և դրանից զատ իր ունեցվածքից նրան պարգևել է այն ամենը, ինչն արտաքսյալի համար ավելի օգտակար էր, քան շրջապատվածի, իսկ ապա լավագույն ձևով կատարել է ստրատեղոսի իր պարտականությունները, և հակառակ ամեն սոլասելիքի, փրկել է հայրենի քաղաքը կործանման եզրից Եթե լինի և արժանավայել կերպով է հնչում այս խոսքը

Սիրելի են յնձ համար զավակներս բայց հայրենիքս ավելի է սիրելի —

ապա նրանցից յուրաքանչյուրի համար որքան ավելի հեշտ կլիներ սսել «Ատում եմ այս մարդուն և ուրախ կլինեի սրան վնաս հասցնել, այց հայրենիքս ինձ համար ավելի է սիրելի» Քանզի թշնամու հետ աշտվել շցանկանալ հանուն այն բանի, հանուն որի անհրաժեշտ է զոարբերել բարեկամին դա սարսափելի զազանալին դաժանութլան վալել գործ է:

էլ ավելի լավ էին վարվում Փոկիոնն ու Կա ոնը ընդհանրապես ւտելութլուն շներդնելով քաղաքական տարակարծութլունների մեջ ուրանք ահեղ ու անողոք էին լինում սոսկ ընդհանուր բարօրութլան վերարերյալ քաղաքացիական վեճերում, բայց մասնավոր կյանքում իրենց հակառակորդների հետ վերաբերվում էին մարդասիրաբար և անզայրույթ: Քանզի համաքաղաքացիներից ոչ մեկի մեջ չպետք է թշնամութլաննել, բացի միայն նրանցից ովքեր Արիստիոսի նաբխի կամ Կատիլինայի նման, ժանտախտ ու խոց են դառնում հայրենիքի համար: Եւայց նրանք, ովքեր հնչում են ոչ համահունչ, նրանց պետք է ներդաշնակութլան բերել մեղմորեն մերթ ձգելով, մերթ թուլացնելով լարերը, ինչպիս երաժիշտը և հանդիմանելով սրանց իրենց սխալների համար՝ սոսանց կատազութլան ու ծաղրանքի, այլ տակտի զգացումով ինչպես Կոմոսի մոտ

Օ բարեկա մա ևս ինչև հիմա կարծո մ էի թե բանականութլամբ բոլորին զերազանցում ես,—

լարձյալ

Դ մեր մեջ ամենարարերարդ կարող էիր մի այլ խորհո րդ խորհել:

Իսկ եթե նրանք որևէ բարի բան են ցուցաբերում խոսքով կամ գործով չի կարելի նախանձել այն մեծարանքներին, որ նրանց են մատուցվում կամ զլանալ գովաբանել նրանց վաստակը: Այդ դեպքում հանդիմանան քրն էլ, երբ որ դրա կարիքը լինի ավելի համոզիչ կդառնա, և մենք ավելի ուժգին կդիմակայենք նրանց արատներին եթե մեջտեղ բերենք նրանց իսկ առաքինությունը և ցույց տանք, որ բարի լինելն է իրենց վայել իսկ վատությունը սաղական չէ

Ես համենայն դեպս, կարծում եմ, որ պետական գործիչը պարտավոր է վկայել հօգուտ իր հակառակորդի, երբ որ նա արդարացի է նրան պաշտպանել դատարանում ընդդեմ բանսարկուների ու հերքել այն զրպարտությունները որոնք հակասոմ են նրա մեզ համար հայտնի մտածելակերպին: Չէ՞ որ նույնիսկ տխրահուշակ ներոնը որն արդեն լիովին պատրաստվելով կյանքից զրկել Տրազեյային, ում ատում էր նա և ումից վախենում էր այնուամենայնիվ մի բողոքարկուի, որը պարտավորում էր այդ մարդու վերաբերյալ հանված դատավճիռը, որպես վատ և անարդարացի պատասխանել է «Ես կուզենայի, որ Տրազեյայի սերնիմ հանդեպ այնպես անվիճելիորեն հատտատ լիներ, ինչպես նրա հավատարմությունը դատավորի պարտկանությունը»: Ընդամին վատ չէ երբեմն հարվածել նրանց ովքեր արատավոր են ի բնե և դրա համար էլ հաճախ են մեղանշում, նրանց մատնանշելով իր իսկ թշնամու առավել գեղեցիկ վարքը «Ա՛յ, նա երբեք նման բան չէր ասի կամ չէր անի»:

Ուրիշներին, երբ նրանք իրենց լավ չեն պահում պետք է հիշեցնել նրանց իսկ նախնիներին, ինչպես Հոմերոսի մոտ է ասված

Ոչ Տլզեսն իլ նևան լավակ շի ձնե —

կամ ինչպես Ապպիոսն է հանդիմանել Սկիպիոն Աֆրիկացուն երբ նրանք ընտրություններում հանդես էին գալիս որպես մրցակիցներ «Օ հ ինչպե՛ս կհեծե՞ծալիր հողի տակ դո՛ւ, Պողո՛ս, տեսնելով, որ որդիդ ցենզորի պաշտոն ձեռք բերելու է գնում կապալառու Փիլոնիկոսի ուղեկցությամբ»: Այսպիսի հանդիմանությունը կնպաստի ոչ միայն մեղանշածին խելքի բերելուն այլև՝ խելքի բերողի պատվին:

Պետական գործչի համար օրինակ է և նեստորի պատասխանը Այաքսի հայհոյանքին՝ Սոփոկլեսի մոտ

Քո գործեր՝ գեղեցիկ են միայն խոսքերդ են դեշ —

և կատոնի ասույթը որն առաջ գործում էր ընդդեմ Պոմպեոսի, քանի գեո սա միանում էր Կեսարին՝ պետության մեջ անօրինական գործողու-

Բյուռներ կատարելու համար, բայց հետո երբ այդ դաշինքը փոխարինվեց սլատերագմով, Կատոնը կոչ էր անում իշխանությունը տալ Պոմպեյոսին՝ միաժամանակ ասելով, թե մեծ աղետների մեղավորներին է տրված նաև դրանցից մարդկանց փրկողի դերը

Այո եթե հանդիմանությունը շաղախված է գովեստի հետ և ասլում է անկեղծորեն ու առանց վիրավորականության, ոչ թե դայրույթ է հարուցում, այլ՝ վիշտ ու զղջում, ներկայանալով անչար ու բարերար տեսքով: Իսկ շարախոսությունը ամենից քիչ է սազական պետական գործչին: Հապա ինքդ դատիր. կարո՞ղ էին Սուլոնը կամ Պերիկլեսը, Լիկուրգոս Սպարտացին կամ Պիտտակոս Լեսբոսացին ասել իրենց սրտում եղածն այնպես, ինչպես ասում էին Դեմոսթենեսը Հսքինեսի մասին և Հսքինեսը Դեմոսթենեսի, ինչպես Հիպերիդեսը գրում էր Դեմադեսի մասին: Այն էլ պետք է ասել, որ նույնիսկ Դեմոսթենեսը վիրավորական բառերի դիմում էր միայն դատական կարգի ճարտասանության մեջ մինչդեռ նրա «Փիլիպիկները» կատարելապես մաքուր են նման արարք ներից ու խեղկատակություններից Անվայել խոսքերը խայտառակում են ավելի շատ նրան, ով որ դրանք ասում է, քան նրան, ում դրանք ուղղված են: Ընդ որում գործը դրանցից ավելի է խճճվում, իսկ կարգուկանոնը խորհրդում կամ ժողովրդական ժողովում խանդարվում է: Կավ է վարվել Փոկիոնը, սրն իրեն ուղղված հայհոյանքներին լռությամբ է պատասխանել, իսկ երբ դադրախոսությունը դադարել է, տեղնուտեղը շարունակել է իր խոսքը. «Այսպիսով հեծյալների ու հոպլիտների մասին դուք արդեն լսեցիք, և չնայես որ ինձ մնում է խոսել թեթևազեններին մասին»

Սակայն շատերի համար այդ գիսի դր վժյան մեջ դժվար է իրեն դսպել, բայց դե, երբեմն անօգտակար շի լինում վիրավորողի բերանը փակել մի սրամիտ շշպոանքով: Այդպիսի շշպոանքը պետք է լինի հակիրճ և չպետք է դրսևորի ո՞չ գրգռվածություն, ոչ մուկեղնություն, այլ թող սր կարողանա հանդարտ ժպիտով մի քիչ խայթել՝ հետ դարձնելով հարվածը ինչպես նետերն են պինդ առարկայից հետ թռչում դեպի նետաձիգը, այդպես էլ վիրավորանքը ասես թե թռչում է խելացի և իրեն տիրապետող հսկողից դեպի հետ ո դիպչում վիրավորողին:

Այսպես է պատասխանել Հայամինոնդասը Կալլիստրատեսին՝ որը թերեացիներին երեսով էր տալիս հղիպի հայրասպանությունը, արգիվիացիներին՝ Օրեստեսի մաշրասպանությունը «Մենք այլ հանցագործներին դուրս ենք վռնդել, իսկ դուք ընդունել եք նրանց»: Մի ավելնացի պարծենում էր սպարտացի Անտակլիդեսի մոտ «Հաճախ էր պատաս-

հում, որ մենք ձեզ քշում էինք Քեփիսոսից : Սա առարկեց նրան «Իսկ ձեզ չի վիճակվել ձեզ քշելու Եվրոտասից» : Դեմադեսը գոչել ասել է Փոկիոնին «Աթենացիք քեզ կզլխատե՞ն» — դրա դիմաց գերազանց պատասխան է ստացել «Եթե խելքները կորցնեն՝ ինձ կզլխատեն, եթե խելքի դան քեզ» : Դոմիտիոսի այն կշտամբանքին «Հո լաց չե՞ս եղել մուրենայի վրա, որ սատկել է քո ձկնարուծարանում», — հռետոր Կրասոսը պատասխանել է հարցով «Իսկ դու, երեխ, երեք կին ես թաղել, և էլի՞ լաց չես եղել» Այս կարգի պատասխանը կարող է պետք գալ և սոլորական կենցաղային դեպքերի համար :

15 Ինչ վերաբերում է պետական գործերին, ոմանք անձամբ պատրաստ են դրանց ամեն մի մասի մեջ մտնել, ենթադրելով ինչպես Կատոնը, թե չկա այնպիսի մի գործ և այնպիսի մի հոգս, որն իր վրա չվերցնի լավ քաղաքացին : Գովում են նաև էպամինոնդասին այն բանի համար, որ երբ թեբևացիները նախանձից ու ծաղրելու նպատակով նրան ընտրել էին տալստարբոս նա այդ բանը իր արժանապատվությունից ցածր չհամարեց այլ ասաց «Ոչ միայն պաշտոնն է պատիվ բերում յարդուն, այլև յարդը՝ պաշտոնին» : Եվ այդ ծառայությունը, որը մինչև նա սահմանափակվում էր աղբահավաքման գործի և ջրի հոսքի հսկողությունամբ նա կարողացավ կարևորություն ու արժանապատվություն տալ : Հենց ինձ վրա էլ, հավանաբար, ժնջալում են մեր քաղաքն այցելող մարդիկ, երբ ինձ տեսնում են փողոցում այդպիսի գարծով զբաղված Բայց այստեղ ի դեպ իմ միտքն է գալիս Անտիսթենեսի ասույթը. երբ իսչ որ մեկը պարմացել է, որ նա անձամբ աղ դրած միս է տանելիս եղել շուկայից Անտիսթենեսը պատասխանել է «Ախր ի՞նձ համար է» : Ես էլ ընդհանրապես, եթե ինձ հանդիմանեն ոչ ստիպված եմ լինում հոգալ կղմինդրների շափսերի և կրի ու քարի հայթայթման մասին, այսպես կպատասխանեմ «Ախր ինձ համար չէ այլ՝ իմ քաղաք» : Հիրավի, այդպիսի գործերի մեջ մասնադր ծիծաղելի մանրություն է դրսևորում սոսկ այն դեպքում երբ դրան դիմում է հանուն իր շահի, իսկ եթե նա հոգում է հասարակական օդտի և իր քաղաքի կարիքների մասին, դա գովելի փութաջանություն է և այստեղ ավելի լավ է շնորհակալ նույնիսկ մանրուքների մասին :

Ուրիշներն ավելի արժանապատվություն ու վեհություն էն տեսնում այն գործելակերպի մեջ, որը ներհատուկ է եղել Պերիկլեսին նրանց հետ համաձայն է պերիպատիկ Կրիտոլայոսը որը ենթադրում էր, թե ինչպե՞ս որ «Սալամինիա» և «Պարալ» աթենական նավերը ծով են դուրս ելել ոչ ամեն մի սոփիստով այլ միայն հասարակ կարևորության ու հան

այն որ ամեն ինչ ուզում էր ինքն անձամբ անել, իր նկատմամբ շարություն և նույնիսկ նախանձ է հարուցել, ինչի մասին շէր կասկածում մինչև որ մի դեպք բաց արեց նրա աչքերը: Մի անգամ, երբ նա անցնում էր փողոցով երեխաները փորձում էին վեզը դուրս հանել ինչ-որ փոսից, և մի քանիսը գոչում էին թե՛ վեզը, իբր, դուրս չի գա, իսկ նա ով որ խփում էր բղավում էր «Երանի այնպե՛ս հաստատ լիներ որ ես պիտի խփեմ դուրս թափեմ Տիմեսիոսի ուղեղը, ինչպես հաստատ է այն, որ հիմա պիտի խփեմ հանեմ այս վեզը».: Մրանից հասկանալով, որ անբարյացակամությունն իր նկատմամբ համակել է բոլորին Տիմեսիոսը իսկույնեթ տուն դարձավ ամեն ինչ պատմեց կնոջը և կարգադրեց որ պատրաստվի ճամփա ընկնելու, որից հետո անհապազ լքեց Կլազոմեն քը՝ այլևս ոտք չդնելով իր տան շեմը: Երբ Թեմիստոկլեսը իր նկատմամբ նման մի բան է զգացել աթենացիների կողմից, ասել է սոսկ «Ձեզ ինչո՞ւ է այդպես շուտ ձանձրացնում բարերարություններ սառնալը»:

Բայց այս ամենը միայն մասամբ է ճիշտ, մասամբ էլ սխալ է: Պետական գործչի բարի կամքն ու խնամատարությունը չպետք է խուսափեն քաղաքի գործերի ոչ մի ասպարեզից այլ պետք է պատկանեն դրանց բոլորին և յուրաքանչյուր գործ առանձին տնօրինեն Եվ բնավ հարկ չկա, որ ինքն իրեն հանի գործածությունից, ինչպես նավի սրբազան խարիսխ, պահպանելով իրեն լոկ հայրենիքի արտակարգ կարիքների ու դժբախտությունների համար: Ոչ ինչպես որ նավաւարները ինչ-որ բան անում են իրենց ձեռքով, ինչ որ բան էլ կատարում են օգնականների ու գործիքների միջոցով՝ իրենք նստելով վերևում, և նավաստիների, դեկահալների, թրավարների ու կառի համադրածանցությանն են դիմում՝ երբեմն նրանցից մերթ մեկին մերթ մյուսին նավախել կանչելու ու ժամանակավորապես նրան վստահելով դեկը — այդպես էլ պետական գործչին վայել է, որ ուրիշներին նույնպես տեղ տա կառավարմանը մասնակցելու գործում, սիրալիր ու բարեհաճորեն նրանց հրավիրելով հոետորների համար հատկացվող տեղը և ջանք շթափի քաղաքի բոլոր գործերը սկիսկան ճատերով, որոշումներով ու վճիռներով կարգավորելու այլ, ջոկելով հուսալի և արժանավոր մարդիկ նրանցից յուրաքանչյուրին հանձնարարություն տա ամեն մեկի ընդունակությանը համապատասխան: Օրինակ՝ Մենիպոսին Պերիկլեսն ուղարկեց արշավանքի որպես ստրատեգոսի, Լիխալտեսի միջոցով կոտրեց Արեոպագոսի հզորությունը, Քարիևոս և միջոցով որոշում անցկացրեց ընդդեմ մեզարացիների, Լամպոնի միջոցով Ֆուրբաս տարավ զաղութարանակներին: Այս-

տեղ օգուտը երկակի է. թվում է թե իշխանությունը բաժանված է շա-
տերի միջև, և դա թեթևացնում է նախանձի բեռը մինչդեռ գործերն
ավելի լավ են ընթանում: Ինչպես ձեռքերը մատների բաժանվելով՝ բնավ
չեն թուլացել, այլ, ընդհակառակը, դա նրանց դարձրել է ավելի ճարպիկ
և օգտագործման համար ավելի պիտանի, այդպես էլ այն կառավարի-
չը, որ պետական գործերին մասնակից է դարձնում ուրիշներին ևս
չանքերի համատեղմամբ ավելի մեծ հաջողության է հասնում:

Իսկ ով էլ որ, ընդհակառակը, փառքի կամ իշխանության անհագ
ծարավից, կառավարման բոլոր գործերը թողնում է միմիայն իրեն և
ձեռք է դարկում անելու այն, ինչի համար ինքը ո՛չ ընդունակություն
ունի, ո՛չ հմտություն, ինչպես որ Կլեոնն էր հանձն առնում վարել զոր
քը, Փիլոպեմենոսը ղեկավարել նավատորմը, Հաննիբալը ելույթ ունե
նալ ժողովում, այսպիսի անձնապաստան մարդուն չեն ների ոչ մի վրի
պում, և դեռ հետև էլ կնախ տան նվիրյալիդեսի խոսքերով

Իս ատաղձագործ ես իսկ ատաղձագործո թյո նից բան չես հասկանում

դու դեսպան ես, իսկ խոսել չես կարողանում դու ինամակալ ես իսկ
անփուլթ ես գործերի նկատմամբ, դու գանձապետ ևս իսկ հաշվել ան-
կարող ես, դու զորավար ևս իսկ մարմնով ակար ես:

Պերիկլեսը, ընդհակառակը, կարողացավ իշխանությունը կիսել
նույնիսկ Կլեոնի հետ, ընդ որում այնպես որ սուաջինը կառավարում
էր քաղաքում, իսկ երկրորդը հավաքում էր նավատորմն ու տանում
բարբարոսների դեմ Քանզի իրանց Լրկուսից Պերիկլեսն ավելի ընդու-
նակ էր պետական գործերում, իսկ Կլեոնը ռազմական արվեստում:
Գովում են նաև անախիլատացի եմբուլոսին այն բանի համար, որ նա
օգտվելով այդպիսի վստահությունից և ազդեցությունից երբեք իրեն
չէր պցում հելլենների գործերի մեջ ու չէր ընդունում ստրատեգոսի պաշ-
տոնը, այլ ինքն իրեն սահմանափակում էր գանձարանի հոգացողությամբ
և այդ սուպարեզում մեծ օգոտ բերեյ՝ բարձրացնելով պետական էկա-
նոսները

Սինչդեռ երբ Իփիկրատեսը ռազմություն էր հավաքում իր տանը,
որպեսզի ճարտարանար պերճախոսություն ասպարեզում, նրան ծաղ-
րում էին. չէ՞ որ եթե նա նույնիսկ գործիմաց ճարտարախոս էլ լիներ,
այլ ոչ թե վատը ինչպիսին կար իրականում պետք է բավարարվեր
ազմական փառքով դպրոցական փառքը սոփեստներին թողնելով:

16. Այնուհետև պետք է ի նկատի ունենալ որ ամեն մի գեմո-
կլրատիա պետական գործիչներին վերաբերվում է անվստահորեն և

կանխակարծորեն, ուստի և եթե օգտակար որոշումներն ընդունված են լինում առանց վեճերի ու պայքարի, կասկած է ծագում, թե նախնական համաձայնության են եկած եղել: Այդպիսի զազրախոսությունը ամենից ծանր հարվածում է բնկերակցությանն ու բարեկամական շրջանակին: Չպետք է սեփական միջավայրում տեղիք ունի իսկակա՞ն հրկայառակության ու գծություն: Ճիշտ է Քիոսի ժողովրդական առաջնորդ Օնոմադեմեսը իշխանության գլուխ անցնելով խառնակության ժամանակ՝ թույլ չի տվել անխտիր կերպով արտաքսել բոլոր հակառակորդներին, որպեսզի, ինչպես ինքն է ասել, «թշնամիների սակավության պատճառով չվիճեր բարեկամների հետ» — բայց դրանք անմիտ խոսքեր են եղել: Եթե ամբոխն արդեն, այնուամենայնիվ, անվստահությամբ է դիմավորում որևէ մեծ և օգտակար բանի, նախաձեռնության էողմնակիցները պետք է հանդես գան ոչ այնքան համերաշխորեն, ոչ այնքան արագ իրար հետ լեզու գտնելով: Կամ կլինի, որ համախոհներից երկուսը կամ երեքը հանգիստ առարկեն իրենց բարեկամներին, իսկ հետո իբրև թե տարհամոզվել են փաստարկների մեջ, իրենց հետևից բերեն ժողովրդին համոզված, որ իրենք ղեկավարվում են ընդհանուր բարօրության նկատառումներով: Իսկ ավելի նվազ կարևոր, գլխավորին շվերարերող գործերում, բարեկամների համար վատ չէ՞ր լինի իսկապես վիճաբանել՝ յուրաքանչյուրը պաշտպանելով իր կարծիքը, որպեսզի պարզ լիներ, որ իրենց համամտությունը ամենակարևոր հարցերի առնչությամբ սարքովի չէ ասլ՝ իսկական:

17 Բնության դրվածքի համաձայն պլտական գործիչը համաքաղաքացիների համար կառավարիչ է, ինչպես մայր մեղուն մեղունների համար: Այս բանը հիշելով՝ նա չպետք է քաղաքի գործերը երեսի վրա թողնի: Բայց ինչ վերաբերում է այսպես կոչված աստիճաններին և ընտրովի պաշտոններին ապա չպետք է դրանց ձգտել շափազանց եռանդուն կերպով կամ հաճախակիորեն, քանզի շատ պաշտոնների կենտրոնացումը մեկ մարդու ձեռքում՝ տղեղ բան է և ժողովրդին զազուր չի գալիս: Ասենք, չպետք է նաև հրաժարվել պաշտոնից, եթե ժողովուրդը օրինական կարգով կանչում է դա զբաղեցնելու: նույնիսկ երբ այն ցածր է հրավիրվածի հասարակական դիրքից և միաժամանակ ստիպված է մրցակցության մեջ մտնել: Չէ՞ որ արդարացի բան է որ նա ում յատիվ են բերել առավել բարձր պաշտոնները նա էլ իր հերթին պատիվ բերի առավել ցածրերին: Եվ եթե հատուկ կարևորության ստիճանով օժտվածը ինչպիսիք են ստրատեգոսի սլաշտոնը՝ Աթենքում պրիտանոսինը՝ Հոդոսում և բևոտսլքոսինը՝ մեղ իոտ պետք է որ համես-

աություն դրսևորի և ամեն կերպ նվազեցնի իր տոնը ապա ավելի նվազ նշանակութեան պաշտոններ ունեցողների համար լավ է կշիռն ավելացնել, որպեսզի առաջինները շափազանց շատ նախանձ շտածեն, իսկ 1 ըկրորդները՝ արհամարհանք:

Բայց ով ինչ պաշտոնի էլ անցնելիս լինի, նրան հարկ կլինի գրել խում պահել ոչ միայն այն մտքերը, որ Պերիկլեսը հիշեցնում էր ինքն իրեն՝ քղամիզը հազնելիս «Հիշի՛ր, Պերիկլէ՛ս դու ազատ մրդկանց ես կառավարում, հելլեններին ես կառավարում, կառավարում ես աթենքի քաղաքացիներին»: Նա պետք է իրեն ինչ-որ մի այլ բան էլ ասի. «Դու կառավարում ես, բայց քեզ էլ են կառավարում, և քո քաղաքը ենթակա է պրոկոնսուլներին, Կեսարի փոխարքաներին»: Այստեղ քո ձեռքին չէ «աշխարհակալ նիզակը», քոնք չէ հին Սարդեսը, ոչ էլ լիզիացոց տերութիւնը: Ավելի հասարակ քղամիզ պետք է կարել տաս հոնտորներ թեղում կանգնելիս շմոռանաւ պրետորին, շափից ավելի ամբարտաւժան հույսեր չգնես պսակիդ վրա գլխիդ վերևում տեսնելով հոռմեական մուշկը: Ավելի լավ է նմանվես դերասաններին, որոնք ներկայացման մեջ կիրք են ներդնում ներդնում են իրենց բնավորութիւնը, իրենց արժանապատվութիւնը, բայց չեն մոռանում ականջ դնել հուշարարին, որպեսզի դուրս չգան լափից ու սահմանից այն ազատութեան, որն իրենց արված է խաղերի ղեկավարների կողմից: Եթէ դու շփոթվես քեզ ո՛չ շվոց է սպասվում, ո՛չ ծիծաղ ոչ էլ լեզու չպպացնել Շատերին արլեն լաժին է հասել

Գլխաս Եան կացինը դատավ ըն ան ող ք —

Ինչպես օրինակ քո հայրենակից Պարդալոսին, որը մոռացել էր թե ինչ սահման է նախատեսված իր համար: Իսկ ինչ որ մեկը ձեռնում էր կյուպիների վրա՝ ճիշտ Սուլոնի ասածի պէս:

Աթենքի քաղաքացոց դարձած
Փոլեզանդը կամ սիկինացի՝
Փոխած եզերքը հայրենի:

Եւք մենք փոքր երեխաներ էնլ ասանում, ոչ ոնք ղ լարճութեան հա
ւել հազնո մ-փորճում են իրենց հայրերի կոշիկներն ու պսակները, մեզ
համար ծիծաղելի է լինում, բայց երբ մեր քաղաքների կառավարիչները
անմտաօված կերպով ամբոխին գրգռում են՝ կոշ անելով գործկրով,
Կարերով ու սխրանքներով նմանվել սախնիներին որոնք անհամապա
խան էլ մեր ժամանակներին և ներկա հանգամանքներին, ծիծա

դելի է նրանց այդ արարքը, սակայն սպասվելիք վիճակը կարող է բնավ էլ ծիծաղելի չլինել, եթե դրանց վերաբերվեն արդեն լիակատար արճամարհանքով: Չէ՞ որ հելեններն ունեցել են անցած-գնացած ժամանակներ և լուրորովին այլ գործեր, որոնք որպես օրինակներ պիտանի են այժմյան մարդկանց խրատելու համար. օրինակ աթենացիներին արժե հիշեցնել ոչ թե ռազսական սխրանքները այլ թեկուզ հենց Երեսունի տապալումից հետո հայտարարված ներումը կամ այն տուգանքը, որ դրված է եղել Փրինիքսի վրա Միլեթի գրավմանը վերաբերող սղըհրգության համար, այն, թե ինչպես Կասսանդրոսի կողմից Թեբեի վերականգնման լուրն առնելիս աթենացիք իրենց զարդարել են պսակներով իսկ լսելով կոտորածի բոթը, որի ժամանակ արգոսցիք մահակներով ջարդել էին մեկուկես հազար համաքաղաքացիների, ընդհակառակը՝ ժողովրդական ժողովում որոշում են կայացրել քաղության զոհ մատուցել, վերջապես, այն, որ հենց նրանք Հարպալոսի գործով տներում խուզարկություն կատարելիս հրաժարվել են մտնել նորապսակների տունը: Ընդօրինակելով այսպիսի արարքները՝ կարելի այժմ էլ նմանվել նախնիներին: Իսկ ինչ վերաբերում է Մարսթոնին, Եվրիմեդոնտոսին, Պլատեային և ճարտասանության այլ թեմաներին, որոնք հուզում են ամբոխին ու դրդում զուր տեղն աքլորանալ, թող դրանցով սոփեստներն զբաղվեն իրենց զպրոցներում:

18 Բայց դեռ քիչ է իրեն և իր քաղաքը բայ՝ ձրագույն իշխանության առաջ անմեղ ներկայացնելը միշտ օգտակար է, որ վերևում բարեկամ կամ հուսալի մի հենարան ունենաս դործողություններիդ համար, մանավանդ որ հոռմեացիք իրենք հակություն ունենում իրենց բարեկամների քաղաքական ցանկություններին Ով որ քաղի բարձր բարեկամության պտուղները ինչպես բաղել են Պոլիբիոսն ու Պանեատիոսը, որոնք, շնորհիվ նրանց հանդեպ Սկիպիոնի անձնական բարյացակամության, շատ բարիք են գործել իրենց հայրենի քաղաքների համար նա ի հատուցում քիչ պատվի չի արժանանա: Երբ Օգոստոսը գրավեց Ալեքսանդրիան քաղաք մտավ Արիոսի ձեռքը բռնած և բոլոր ներկաներից միայն նրա հետ զրուցելով: Այդ տեսնելով, ալեքսանդրիացիք իրենց համար սպասում էին ամեն տեսակի շարիքներ րայց կայսրը անսալով նրանց աղերսանքներին՝ հայտարարեց, թե գթություն է պարգևում նրանց նախ և առաջ հանոն քաղաքի վսեմության, երկրորդը՝ Ալեքսանդրի քաղաքի հիմնադրի հանդեպ ունեցած հարգանքից, իսկ երրորդը, — ասաց նա — որպեսզի ընծա մատուցեմ իմ այս բարեկամին»:

Հնարավոր է արդյոք այսպիսի բնծայի հետ համեմատել փոխար-
քայությունից ու պրովինցիայի կառավարումից առատ առատ եկող
դրամները, ինչին տենչում են այնքան շատերը՝ հարազատ քաղաքի
գործերը թողնելով և մինչև ձերություն ապրելով օտարների դռներին:
Հո մենք չե՞նք ուղղելու Եվրիպիդեսին, որը և՛ ճառերում, և երգերում
կրկնել է, որ եթե բնդհանրապես արժե անքուն գիշերներ անցկացնել,
մեծատան շէմք մաշել և ժամանակ անցկացնել նրա շրջապատում, ավե-
լի ազնիվ բան կլինի դա հանձն առնել հանուն հայրենիքի, իսկ մնա-
ցած բաներում էլ պետք է նախապատվությունը տալ և արդարացի բա-
րեկամություն պահպանել հավասարների միջև:

19. Բայց սրբան էլ հարկ լինի հոգալ, որպեսզի մեր հայրենիքը
հնազանդ լինի բարձրագույն իշխանությանը այնուամենայնիվ կարիք
չկա դրան ավելացնել նաև ստորացումը: Երբ ոտքերը կապանքների մեջ
են, հարկ չկա վզին էլ շվթա գցել: Բայց հենց այդպես են վարվում
ոմանք՝ ամեն առիթով և առանց առիթի դիմելով կուսակալներին և մեր
անազատությունը դարձնելով ամոթալի, ավելի ճիշտ կլինի ասել՝ ամեն
մի քաղաքացիական կյանք ոչնչացնելով իրենց ահաբեկվածությամբ,
երկշտությամբ և լիակատար անկարողությամբ: Կան մարդիկ, որոնք
իրենց վարժեցրել էն առանց բժշկի ցուցումի շուտել ու շվացվել, և
նրանք իրենց թույլ շին տալիս օղտվել գոնև ասուղջության այն շափա-
նիշից, որ բնությունն է իրենց բաժին հանել: Այդպես էլ նրանք, սվքեր
ամեն մի որոշման կամ նիստի համալ կամ սղորմություն ցուցաբե-
րելու կս է նտեսական կարգադրության համար ձգտում են յախապես
համաձայնություն ստանալ կուսակալից, նրան ստիպում են, որ իրենց
հանդեպ լինի ավելի մեծ բռնակալ, քան նա ինքը կցանկանար

Դա ամենից ալելի մեծամեծների ազահությունից և գթություններից
է դալիս: Վնա պատճառելով ամենաթույլերին՝ նրանք պատճառ են
դառնում, որ մարդիկ փախուստ տան քաղաքից, իսկ երբ վեճ է մղվում
իրենց՝ մեծամեծների միջև նրանցից ոչ ոք չի ուզում զիջել համաքա-
ղաքացուն, այլ գործի մեջ է ներքաշում վերադաս իշխանություններին,
որից և՛ Խորհուրդը, և ժողովուրդը և դատավորական կոլեգիաները, և՛
բնդհանրապես բոլոր քաղաքային լյաշտոնները կորցնում են իրենց
նշանակությունը:

Այդ իսկ պատճառով պետք է հանդատացնել հասարակ բաղադա-
յինություն ամեն առումով հավասարասյես, իսկ ազդեցիկ մարդկանց՝ փո-
խարդարձ զիջողականությամբ, բոլորին հավատարիմ պահելով բաղաքի
անդեպ և առանց մեծ աղուկի վճռելով խճճլած լեճերը լյշտելու այն

բժիշկը որ բուժում է գաղտնի հիվանդությունները Պետական գործիչը պարտավոր է ինքն իր համար գերադասելի համարել պարտությունը համաքաղաքացիներից, քան հաղթանակը՝ բռնության ու քաղաքային մարմիններին վնաս պատճառելու գնով, իսկ ինչ վերաբերում է մյուսներին, ասպա նրանցից յուրաքանչյուրին պետք է թախանձելով համոզել, հորդորել՝ մատնանշելով երկպառակության հետևանքները Իսկ հիմա այն մարդիկ ովքեր պատկանելությանը կապված են քաղաքին, Ֆիլային, կապված են հարևանությանը, ազգակցությանը՝ վոխանակ այն բանի, որ հենց ի բարօրություն և ի պատիվ իրենց իսկ փոխադայձ գիշողականություն դրսևորեն խոնվում են հոետորների գոների մոտ և իրենց տարածայնությունները փաստաբանների ձեռքն են տալիս իրենց համար և՛ վնաս, և՛ խայտառակություն սարքելով:

Եթե բժիշկն անզոր է լինում ցավը մինչև վերջ արմատախիլ անել, ձգտում է ցավը զուրս հանել և հնարավորություն ռալ որ դրսևորվի արտաքուստ: Քաղաքագետն, ընդհակառակը եթե չի կարող կատարել լապես պահպանել իր քաղաքը պայքարից ու տազնապներից կփորձի կատարել բուժման աշխատանք և անհանգստացնող հարցերը հարթել համաքաղաքացիների շրջանակում միայն թե շղիմի արտաքին բժիշկների ու գեղերի: Նրա նպատակը թող որ լինի քաղաքի անվտանգության պահպանումը և հրաժարումը սնափառության փոթորիկներից ու խելահեղություններից, ինչպես որ լուսարանված է վերևում: Թայց այդպիսի մտածելակերպի հետ անհրաժեշտ է ունենալ նաև համարձակ վճռակունություն —

Այրերին հսմակող մի ոգի այրերին որ հանուն մայր հողի

Թշնամյաց դեմ դառնում են պա վալ ո դսժան մարտեր են մղում —

ու պատրաստակամություն՝ մրցման մտնելու և պայքարելու անլարենը պաստ վիճակների ու հանդամանքների հետ Չպետք է ինքդ քո դշխին փոթորիկ բերես բայց եթե այն պոսթկացել է չի կարելի նահանջել: Չպետք է քաղաքը մղել դեպի անկում, բայց եթե այն ընկնում է և վտանգի մեջ է արդեն, անհրաժեշտ է օգնության հասնել, ինչպես ի վերջո, նետված սրբադան խարխիսը, և ամենամեծ վտանգների մեջ էլ պետք է ցուցարերել խոսքի աճվեհերություն Այդպիսիք են եղել, օրինակ այն դժբախտությունները որ եղել էին Պերգամի բնակիչների գլխին Ներոնի օրոք, հոտոսցիներինը վերջերս, Դոմիցիանոսի օրոք, իսկ թեսալացիներինը՝ ալևելի վաղ Օգոստոսի օրոք, երբ նրանք ողջակիզեցին Պետ-

րևոսին: Նման հանգամանքներում իսկական պետական գործչին «չէիք տեսնի ննջելիս», նրան չէիք տեսնի նաև երկնչելիս կամ մեղքն ուրիշների վրա գցելիս, իսկ իրեն վտանգից զերծ պահելիս: Ընդհակառակը, նա իր վրա է վերցնում դեսպանությունը ծովով ճամփա է ընկնում և չմիայն առաջինն է ասում

Մենք եկել ենք որպես մարդասպաններ Խափանի ր-Ապոլլոն կործանումը —

այլև իրեն է ներկայացնում պատժելու ժողովրդի այն մեղքերի համար որոնց ինքը չի էլ մասնակցել:

Այսպիսի վարքն ազնիվ է և ոչ միայն ազնիվ Հաճախ է եղել, որ Իեկ մարդու հոգու վսեմությունը զարմանալի կերպով մեղմացրել է սիրակալի գայրույթը ամբողջ ժողովրդի հանդեպ և սպառնացող մեծագույն վտանգից հեռացրել է ամենայն ահալորն ու անհաշտելին: Պարսից արքան այդկերպ թույլ է սվել ազդել իր վրա սպարտացիներ թուլիսոսին ու Սպերքիոսին, իսկ Պոմպեոսը՝ Ստեննիոնին: Երբ հռոմեացի զորավարը ուզում էր պատժել մամերտացիներին պառակտվելու համար, Սաեննոնը նրան ասաց, թե անարդար բան է շատերին կործանել մեկի մեղքի պատճառով, և իրեն ներկայացրից որպես անջատման համար միակ մեղավորի, հայտարարելով, թե ընկերներին համոզել է իսկ թշնամիներին ստիպել Դա Պոմպեոսին հողեկան այնպիսի վիճակի մեջ դրեց, որ նա ներեց քաղաքին իսկ Սոլեննիոնի հետ շաս մեղմ վարվեց:

Մի մարդ ուր Սուլլայի հետ կապված էր հյո ըրնկալություն կսպերով, հենց այդպիսի արիություն ցուցաբերեց, բայց շահնդիպեց նույն պիսի ըմբռնման ու մեռավ ազնիվ մահով: Պրենեստեն գրավելիս, Լրբ Սուլլան մտադրվել էր կոտորել բոլորին, իսկ նրան բաց էր թողնում հանուն հյուրընկալության նա առարկեց թե չի ցանկանում իր կյանքով պարտական լինել հարազատ քաղաքը սպանողին և խառնվեց մյուս յաղաքացիներին ու սպանվեց նրանց հետ: Մնում է սղոթել աստված ուրին, որպեսզի մենք շտեսնենք այդպիսի օրեր և կարողանանք ավելի լավ ժամանակների հույսով ապրել:

20 Հարկ է որ յուրաքանչյուր պաշտոն ինչ-որ բանով սրբազան մեծ լինի և պատիվ բերի այն կտտարող անձին: Բայց այս պատիվը ասիլի շատ պաշտոնակից ընկերների համախոհ բարեկամության մեջ Լրան թե պսակների ու ծիրանագույն եզրազարդերով քղամիդի: Նրանք ում ամար համատեղ զինվորական ծառայությունը և պատանեկան դվարձություններին մասնակցելը սկիզբ է դառնում ցկյանս բայեկա

մության, բայց ստրատեգոսի կամ կառավարչակցի պարտականությունները կատարումը պատճառ է դառնում թշնամանքի, այդպիսիք անպայման տառապում են երեք ախտերից մեկով նրանք կամ իրենց ընկերներին իրենց հավասար են համարում և այնժամ մրցակցում են դրանց հետ, կամ՝ իրենցից բարձր և այնժամ նախանձում են նրանց, կամ իրենցից ցածր և այս դեպքում արհամարհում են նրանց: Բայց անհրաժեշտ է և իրենից բարձրին մեծարել, և իրենից ցածրին բարձրացնել, և իրեն հավասարին հարգել՝ ամենքի հանդեպ դրսևորելով բարեհաճություն և բարեկամություն որոնք ծնված լինեն «ո՛չ թե սեղանի մոտ», ոչ թե խնջույքի գավաթի առաջ, «ո՛չ թե օջախի կրակի կողքին»: Ա՛յ, ձեզ բարեկամներ և բարձրել օրինական ու համաժողովրդական ընտրությունը, և հայրենի քաղաքն ինքն է ձեզ հայրաքար խրատել, որ միմյանց հանդեպ բարի զղացմունքներ ունենաք: Իսկ Սկիպիոնին Հուսում հայհոյում էին այն բանի համար որ նա Հերակլեսի տաճարի օժման առթիվ տրված խնջույքին չէր հրավիրել Մումմիոսին՝ իր պաշտոնակից ընկերոջը թեկուզև մնացած բաներում նրանք միմյանց բարեկամ չէին համարում, այնուամենայնիվ այդպիսի հանգամանքներում պարտավոր էին ի նկատի ունենալ իրենց ընդհանուր աստիճանը և միմյանց նկատմամբ հարգանք ու բարյացակամություն դրսևորել:

Եթե նույնիսկ այնպիսի մարդու հանդեպ ինչպիսին Սկիպիոնն էր որը մնացած բոլոր այլ բաներում հիացմունքի էր արժանի, քաղաքափարություն դեմ թույլ տված այդքան փոքր զանցանքի համար մեծամրտություն մեզ մեղադրվեց, — մի՞թե նա, ով որ նվազեցնում է իր աստիճանակից ընկերոջ արժանիքները նսեմացնում է նրա վաստակը և լկտիորեն նրա ձեռքից լուրմ չորաքահաշյուր գործ, ամեն ինչ իրեն վերցնելով, կարո՞ղ է կարգին ու բարեքարո մարդ համարվել: Հիշում եմ, թե ինչպես ինքս, դեռ պատանի որպես պատվիրակ ուղարկվեցի պրոկոնսուլի մոտ մի այլ մարդու հետ որը սակայն, չգիտես ինչու, մնաց սանել, այնպես, որ ստիպված եղա ճանապարհ ընկնել և ամեն ինչ մենակ կատարել: Իսկ երբ վերադառնալուց հետո պատրաստվում էի հաշիվ տալ, հայրս տեղից վեր կենալով ու մի կողմ կանչելով ինձ, խորհուրդ ավեց շատել՝ «ես մեկնեցի», այլ «մենք մեկնեցինք», ոչ թե՛ «ես ասացի», այլ՝ «մենք ասացինք» և այլն, որպեսզի հաշվետվությանս մեջ ընկերս ներկայացվեր իբրև լմ բոլոր գործողությունների մասնակիցը:

Այդպես վարվելը ոչ միայն օրինավոր ու մարդասիրական է այլև դրանով փառքից դուրս է նկատվում նախանձի դառը խառնուրդը: Հենց այս նպատակով էլ մեծ մարդիկ իրենց սիրանքները մասամբ վերագրել

19 աստվածութեանը կամ ճակատագրին, ինչպես վարվեց Տիմուշենտո
ր, որը սիցիլական բռնապետութեան տապալումից հետո կառուցեց
Վիսվածի աստվածուհու տաճարը, կամ ինչպես Պիթոնը որը ամենա
յիներին, երբ սրանք նրան մեծարում էին ու գովաբանում Կոսիտոսին
սպանելու համար, առարկելով ասաց «Ռա ինչ-որ մի աստված է կա
ուսրել, իսկ իմ ձեռքը միայն գործիք է եղել նրա համար»: Իսկ Սպար
այի թագավոր Թեոպոմպոսը երբ ինչ-որ մեկը մատնանշել էր, թե
կալեդոնի բարորութեան պատճառն այն է, որ դրա թագավորները կա
րողանում են կառավարել, պատասխանել էր «Ավելի շուտ՝ այն է որ
ու, ա ժողովուրդը կարողանում է հնազանդվել»

21 Իսկ կառավարել կարողանալն ու հնազանդվել կարողանալը
իրոք կապված են միմյանց հետ: Շատերն ասում ու կարծում են թե
«Ենց դրանում էլ կայանում է քաղաքական դաստիարակութեան էություն
ը. այսինքն՝ նախապատրաստել լավ անսալու սովոր քաղաքացիներու
Այն էլ պետք է ասել որ ցանկացած քաղաքում նրանք, ում գործն ան
ալն է ավելին են, քան նրանք ում գործը հրամայելն է իսկ դեմոկր
ատական կարգերի դեպքում մարդ կարճ ժամանակով հրամայում է
իսկ մնացած ամբողջ կյանքում լսում:

Ուստի ամենաաղնիվ ու ամենաօգտակար արվեստը հնազանդվելն
ու նրան, ով որ օրենքով կարգ լած է քո գլխին, նույնիսկ եթե նա պա
տահմունքի բերումով նվազ դսրութեան ու փառքի տէր է Բեմում էլ
րսդունված է որ առաջին դերեր կատարող դերասանը, լինի դա թեկուզև
Թեոդորոսն ինքը կամ Պոզոսը, Երրորդական դեր կատարողի առաջ
կանգնի ու պես սպասավոր և հարգանքով վերաբերվի նրան էթե պսակ
ունի նա և դաշխոն: Եվ կյանքում՝ քաղաքի գործերում էլ անթույլա
տրելի է, երբ հարուստ ու նշանավոր քաղաքացին արհամարհում ու
լանի սեղ շի դնում համեստ է աղքատ հայրենակցին, որը պետական
պաշտոն ունի այգպիսով իր կշիռն օգտագործելով պետութեան հեղ
նակութունը նսեմացնելու համար, այնինչ նա պետք է դա օգտագոր
յի ր հօգուտ քաղաքի և առանձնապես այդ պաշտոնի արժեքի բարձրաց
ման: Սպարտայում էֆորոսների առաջ ոտքի էին կանգնում նույնիսկ թա
գավորները իսկ եթե մյուս քաղաքացիներից որևէ մեկը կանչվում էր
նրանց մոտ, սա ոչ թե օրորվելով էր գնում այլ՝ արագ, ոչքան որ ուժ
ո ներ, վազում էր հրապարակով, որպեսզի համաքաղաքացիների առջև
լի փութաջանութունը ցուցաբերեր ուրախանալով, որ պատիվ է մա
ուցում իր կառավարիչներին, այլ ոչ թե այնպես, ինչպես ուրջ վատ

դաստիարակված տգետներ՝ պարծենալով իրենց չափից ավելի զորությամբ, որոնք վիրավորում են դատավորներին մրցումների ժամանակ, շարախոսում են խորեզուսներին Դիոնիսոսյան հանդեսներում և ծաղրում են ստրատեգոսներին ու գիմնասարքոսներին՝ շքմբռնելով և շքանկանալով շքմբռնել այն, որ երբեմն պատիվ մատուցելն սովելի պատվավոր բան է քան ստանալը: Քաղաքում կշիռ ու ազդեցութուն ունեցող մարդուն շատ սովելի դարգարում է, երբ նա ինքն է ուղեկցում պաշտոնատար անձին քան ընդհակառակը, երբ պաշտոնատար անձն է հանդես գալիս որպես նրան ուղեկցող: Վերջին հանգամանքը նրա նկատմամբ ահբարյացակամութուն ու նախանձ է հարուցում, բայց առաջինը՝ այն իսկական փառքը, որը ծագում է աներեսապաշտ հավանութունից: Եթե նրան երբեմն տեսնեն պետական պաշտոն կատարողի դռների մոտ, եթե նա առաջինը ողջունի պաշտոնյային ու փողոցում ճամփա տասրան, ու լինել լի կորցնի իր պատվից այլ իր քաղաքի պատիլը կավելացնի:

22. Նա է բնավորության դեմոկրատական հակվածութուն ցուցաբերում, ով կարողանում է պաշտոնատար անձից հեռու վանել և հանդիմանանքը և՛ զայրույթի բռնկումը ինքնիրեն կրկնելով կամ Դիոմես դեսի խոսքը

Փառքը նրան թող ուղեկցի նաև այս բանում —

կամ Դեմոսթենեսի ասույթը որը նկատել էր թե ինքը հիմա չէ՞ որ պարզապես ոչ թե Դեմոսթենեսն է, այլև օրենսդիր, խաղեր կազմակերպող, պակով զարդարված հոկտոր: Հատուցումն ավելի լավ է հետաձգել դրա համար հարմար մի ժամանակվա և այնժամ մեզ հարկ կլինի նրան հետապնդել դատարանի միջոցով ևրբ նա արդեն պաշտոնը վար դրած կլինի կամ էլ ի շահ հենց մեզ մարած կլինի մեր բարկութունը

23. Ինչ վերաբերում է սակայն, եռանիւն շրջահայեցությանը ընդհանուր բարօրության հոգացողությանը ապա այդ հարցում պետք է անընդհատ մրցման մեջ մտնել իշխանության բոլոր ներկայացուցիչների հետ և եթե նրանք բարյացակամորեն են տրամադրված, պետք է կարիքի դեպքում նրանց օգնել խորհուրդով, նրանց հնարավորութուն տալով իրագործել ճիշտ մտադրութունը և բոլորի համալ օգտակար որևէ բան անելով բարի անուն վաստակել Իսկ եթե մենք նրանց մեջ նկատում ենք ծուլութուն, անվճռականութուն կամ շարակամութուն ան

րաժեշտ է, որ առաջ ընկենք և անձամբ դիմենք ժողովրդին, որպեսզի շեղվենք ընդհանուր գործի հանդեպ մեր պարտականությունից այն հիման վրա, որ, իբր, անհարմար է խառնվել ուրիշների պարտականություններին ու մրցակցել գոյություն ունեցող կարգերի հետ Զէ՞ որ բները պետական գործերում միշտ առաջին տեղը տալիս է նրան ում սրարքներն արդարացի են, իսկ միտքը՝ հեռատես: Հիշենք այս ի սրբի վրա «Զորքի մեջ կար Քսենոփոն անունով մեկը, ոչ ստրատեգոս էր ո՛չ լոխագոս» բայց ճիշտ էր հասկանում հանգամանքները և խիզախ էր գործում այդ պատճառով էլ նա ինքը զարձավ զորքի գլխավոր ու փրկեց հելլեններին Եվ Փիլոպեմենոսի գործերի մեջ ահա թե որն է հատկապես փառավորը երբ Նաբիսոսը գրավեց Մեսսենյան աշայացիների սայատեգոսը փոքրագությունից շցանկացավ օգնել նրան, նա ինքը, սյզպիսի հրաման շունենալով կամավորների գլուխ անցած՝ առաջ արժվեց ու գրավեց քաղաքը

Զպետք է սակայն խախտել սահմանված կարգը շնչին կամ պարտական առիթներով այլ՝ միայն այն ժամանակ երբ հանգամանքները կամ հուսահատական են, ինչպես Փիլոպեմենոսի դեպքում էր կա՛մ բարենպաստ, ինչպես էպամինոնդասի որը շորս ամսո՛ւ անօրինականորեն երկարաձգեց բեռտարքոսի իր լիազորումը լույնելը և այդ ընթացքում հասցրեց հարձակվել Լակոնիկայի վրա ու հիմնադրել Մեսսենյան: Թող մեզ էլ մեղադրեն կամ վտապահեն ինքնակամ արարքի համար մենք մեզ կկարողանանք արդարացնել կա՛մ նրանով, թե ալ էլք լի եղել կա՛մ մխիթարել նրանով, թե կատարել ենք մեծ ու գեղեցիկ մի գործ

24 Ինչպես պատմում են, թե սալլիայի լուգալոր Յասոնը հպատակներին բռնություն ու վիրավորանքներ պատճառելով, միշտ կրկնում էր, թե, իբր հարկ է լինում արդարությունը խախտել փոքր բաներում, է՛յտ ուզում ես այն պահպանել մեծ բաներում: Դա ինչպես ամեն ոք խելոյն կտեսնի, մի ասույթ է որով կարող է դեկավարվել միայն ինք իշխան տիրակալը, իսկ պետական գործչի՝ համար, սրը գործում է ազատ քաղաքացիների մեջ, մենք խորհուրդ կտանք փոքր բաների վրա Լատների արանքով նայել՝ ի գոհացում ժողովրդի, որպեսզի մեծ բաներում խստություն դրսևորի ու դասի օրինազանցներին: Զէ՞ որ ով ամեն մանրուքի մեջ շափից ավելի խստապահանջ է և կտրուկ ով որ ո՛չ բարություն է գր կորում ու չի դիշում, այլ միշտ իրեն պահում է շոր տնդրգվելի ժողովրդին էլ է սովորեցնում ամեն ինչին ընդդեմ գնալ,

մրցակցելով թե ով ում կգերազանցի իր համառությամբ: Երբեմն հարկավոր է, որ

Մեր առաջատը իջեցնենք մի թղաշախ
Սլիքները մեծ ո՞՞ր դիմաց —

մերթ ժողովրդին ազատությւն տալով և բոլորի հետ զվարթ կատակելով օրինակ՝ զոհաբերության, խաղերի ու ներկայացումների ժամանակ, մերթ ձևացնելով, թե ինչ-որ բան շեռ տեսնում ու շեռ լսում, ինչպես վարվում ենք ռանը՝ երեսաների հետ, որպեսզի վճռական խրատի ուժը ինչպես դեղի ուժն է լինում, շվատնվի ու չբթանա, այլ պահպանելով իր սրությունն ու համազրահանությունը դրանով ավելի գործուն կերպով համակի ու խոցի հոգիները լուրջ դեսպերում

Ուրիշ բան է երբ Ալեքսանդրը, լսելով որ իր քույրը կենակցել է մի գեղեցիկ պատանու հետ՝ բուրբովին չի վրդովվել և նույնիսկ ասել է, իբր դե, ախր, քույրս էլ պետք է օգուտ քաղեր արքայական աստիճանից: Այսպիսի թողտվությունը անհարկի և անվայել էր նրան, քանզի աստիճանին անպատվություն բերելը նշանակում է վերացնել այն, այլ ոչ թե դրանից օգուտ քաղել: Այդպես էլ պետական գործիչը, որքանով որ դա նրանից կախված լինի, ժողովրդին թույլ չի տա ոչ մի անարդ բռնություն գործադրել համաքաղաքացիների հանդեպ թույլ չի տա մասնավոր ունեցվածքի կամ հասարակական գույքի ոչ մի օտարում: Իր հորդորի, սպառնական, խրատական խոսքով նա կդիմակալի այնպիսի կրքերի, ինչպիսիք երբևէ Կլեոնը չեղա էր թողնում քաղաք՝ առաստոքն աճեցնելով դրանք, Պլատոնի խոսքով ասած, ինչպես խայթոցավոր բռնու: Բայց էթե ժողովուրդը պատրվակ բռնելով հնուց ի վեր սահմանված տոնը և աստվածության մեծարումը՝ խնդի կազմակերպել որևէ խաղ կամ դրամի բաշխում, կամ մի այլ հաճելի ու պատվավոր ընծա, թող թույլ տան նրան օգուտ քաղել իր ազատությունից և ընդհանուր լարօրությունից: Այդպես էին վարվում և Պերիկլեսը և Դեմետրիոսը, իսկ Կլեոնը Աթենքի քաղաքային հրապարակը զարդարել էր սոսիների տըն կիներով՝ քաղաքացիների դբոսանքի համար: Կատիլինայի դավադրության ժամանակ, երբ Կատոն Կրտսերը տեսավ, որ Կեսարը ժողովրդին վրդովեցնում է և պետությունը հեռու չէ կործանումից սենատին դրդեց դրամի բաշխում կազմակերպել աղքատների համար, և այդ դիջումը հանդարտեցրեց տագնապը ու կանխեց հեղաշրջումը: Ինչպես բժիշկը, որը փչացած շատ արյուն բաց թողնելով՝ հիվանդին մի քիչ ան լնաս սնունդ է տալիս այդպես էլ պետական գործիչը կտրելով, դեն

նետելով ինչ-որ մեծ անպատվութիւն կամ մեծ մի այլասերում՝ անհապաղ ձգտում է դառնութիւնն ու տրտունջը մեղմացնել փոքր, բայց սիրալիր մի դիջումով:

25 Ընդ որում երբեմն վատ չի լինում ամբոխի ձգտումները շեղել մի այլ, անվտանգ կողմ, այնպես ինչպես արեց Դեմադեսը պետական եկամուտների կառավարիչ եղած ժամանակ:

Երբ աթենացիք ձգտում էին հանդերձավորել ռազմասավերը՝ Ալեքսանդրից անջատվածներին օգնութեան հասնելու համար և պահանջում էին, որ Դեմադեսը տար անհրաժեշտ միջոցներ, նա պատասխանեց «Դրամ դոք արդեն ունեք Սո դա խնայել էի Քոյոսի տոնի համար, որպեսզի ձեզանից յուրաքանչյուրին տրվեր կես մինա բայց եթե ձեզ համար գերադասելի է մի այլ բան ապա տնօրինե՛ք ձեր ունեցվածքը, ինչպես ուզում եք»: Որպեսզի չզրկվէին դամաբաշխումից, նրանք հրաժարվեցին նավեր ուղարկելու մտքից և այդ հնարքով Դեմադեսը յուզովորդին ի անգարեց, որ նա մեղավոր դուրս գա Ալեքսանդրի հանդէպ: Ուրիշ անխոհեմ ձեռնարկներ չեն կարող կանխվել պարզ և ուղղակի ձեւով, այլ՝ միայն ինչ-որ խորամանկութեամբ, օրինակ այնպիսի, ինչ պիսի միջոցի դիմեց Փոկիոնը երբ մի անպատեհ ժամանակ հրաման ստացավ ներխուժել Բեովտիա նա կարգադրեց կանչել բոլոր քաղաքացիներին՝ էֆեբոսներից մինչև վաթսուամյանները, իսկ երբ ծերունիները ազմուկ բարձրացրին, ասաց «Այստեղ ի՞նչ կա սարսափելի: Սո էլ եմ ձեզ հետ արշավանքի դուրս գալիս որպես ստրատեգոս իսկ ես արդեն ութսուն տարեկան եմ»: Հենց այս եղանակով էլ կարելի է խափանել և՛ տարածամ դեսպանութիւնները և անօգտակար շինարարական ձեռնարկումները, և՛ ամոթալի դատավարութիւնները՝ առաջին դեպքում նշանակելով ակնհայտորեն ոչ համապատասխան մարդկանց, երկրորդում՝ սահմանելով բարձր հարկեր երրորդում՝ հրամայելով, որ հակառակորդները միաժամանակ դատարանի առաջ կանգնեն քաղաքում կամ դրա սահմաններից դուրս: Բոլոր այսպիսի գործերի սադրիչներին ու ոգեշնչողներին պետք է խոսքից բռնել և առաջինը ներգրավել մասնակցելու դրան. նրանք կամ կնահանջեն և դրանով իսկ կմերկացնեն իրենց ձեռնարկումը, կամ հարկ կլինի որ իրենց վրա վերցնեն հետևանքների իրենց բաժինը:

26 Բայց եթե արդեն անհրաժեշտ է ձեռնարկել կարևոր և օգտակար, բայց որոշ պայքարի ու դժվարութիւնների հետ կապված որևէ բան, այդ դեպքում քո բոլոր բարեկամներից աշխատիք ընտրել ամենաընդունակներին, իսկ ամենաընդունակներից՝ ամենախաղաղասերներն

յին: Այդպիսիք կկարողանան ամենից շատ օգնել քեզ և ամենից ավելի սլառլատատակամորեն կընդառաջեն քեզ քանզի գործերին գիտակ են՝ սխաժամանակ շինելով փառամուլ:

